**«ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**
Պրոֆ. դր. Ա. Մութաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Հոֆրիխթեր (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Մ. Բունեման-Հախնազարյան (Աախեն), պրոֆ. դր. Հ. Սուրուզյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Ջեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Պ. Չոբանյան (Երևան), պրոֆ. դր. Ա. Ղազարյան (Մոսկվա), պրոֆ. դր. Ն. Սարգսյան (Երևան), պրոֆ. դր. Ռ. Գալչյան (Լոնդոն), Մ. Լալայան (Երևան), Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Մ. Բալայան (Ստեփանակերտ)

Աշխատությունը հրատարակվում է ՀՃՈՒ գիտական խորհրդի երաշխավորությամբ

RAA ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք ԺԵ

# ԱՐՏԱԶԻ ԵՐԵՔ ՎԱՆՔԵՐԸ

Արմեն Հախնազարյան

# THREE MONASTERIES OF ARTAZ

Armen Hakhnazaryan

# ТРИ МОНАСТЫРЯ АРТАЗА

Армен Ахназарян

ՀՃՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 72(479.25):941(479.25)
ԳՄԴ 85.11.(2Հ)+83.3(2Հ)
Հ165

Հախնազարյան Արմեն
Հ165 **Արտազի երեք վանքերը** / Արմեն Հախնազարյան.- Եր.: ՀՃՈՒ հրատ., 2012
Գիրք Ժե: Հուշագրական ժառանգություն.-368 էջ

Նախահրատարակչական աշխատանքների հովանավոր
**ՀՀ Մշակույթի նախարարություն**

Տպագրության հովանավոր
**Գալուստ Գյուլբենկյան հաստատություն**

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

ՀՏԴ 72(479.25):941(479.25)
ԳՄԴ 85.11.(2Հ)+83.3(2Հ)

ISBN 978-99941-875-8-4 © Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2012

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երկու խոսք....................5

ԱՐՏԱԶ ԳԱՎԱՌ....................9
Գավառի աշխարհագրական դիրքը....................9
Այլ անվանումներ....................9
Արտազը մ. թ. ա. Է - մ. թ. Դ դարերում....................10
Արտազը Ե դարում....................10
Արտազը Զ-Է դարերում....................11
Արտազը Ը-Ժ դարերում....................11
Արտազ-Մակվի հայկական իշխանությունը ԺԳ-ԺԵ դարերում....................12
Արտազ-Մակվի հայ-կաթողիկե իշխանության բռնի մահմեդականացումն ու դարձը....................12
Արտազ-Մակուն ԺԶ դարում....................12
Մակվի խանությունը ԺԸ-ԺԹ դարերում....................13
Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը....................13
Թուրքմենչայի պայմանագիրը....................14
Մակվահայության գաղթը....................14
Մակվի խանությունը ԺԹ դարի վերջին քառորդում....................16
Մակվի խանությունը Ի դարի առաջին քառորդում....................17
Արտազ-Մակու գավառի վարչական կարգավիճակը....................24
Մակու գավառի բնակչությունը....................25
Մակու գավառի վանքերը....................26

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ....................27
Թադեոս առաքյալի քարոզչությունը և նահատակությունը Հայաստանում....................27
Թադեոս առաքյալի կանոնները....................31
Թադեոս առաքյալի ավանդության արձագանքները հետագա դարերում....................32
Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի «Գիւտ նշխարաց»-ը....................33
Թադեոս առաքյալը հայ ժողովրդական բանահյուսության մեջ....................36
Սանդուխտ կույսի նահատակության արձագանքները....................38
Թադեոս առաքյալի նահատակավայրը....................38
Թադեոս առաքյալի նահատակության ավանդությունը հաստատող միջադեպ....................39
Թադեոս առաքյալի վանքի աշխարհագրական դիրքը....................39
Ղարաքիլիսա անվան ստուգաբանությունը....................40
Թադեոս առաքյալի վանքի հիմնադրումն ու առաջնորդության հաստատումը....................40
Թադեոս առաքյալի վանքն ու Ամենայն Հայոց կաթողիկոսությունը....................42
Թադեոս առաքյալի վանքը ԺԳ դարում....................42
Թադեոս առաքյալի վանքը ԺԴ դարում....................44
Թադեոս առաքյալի վանքը ԺԵ դարում....................45
Թադեոս առաքյալի վանքը ԺԶ դարում....................45
1605 թ. բռնագաղթը....................46
Թադեոս առաքյալի վանքը ԺԷ դարի երկրորդ կեսին....................46
Թադեոս առաքյալի վանքը ԺԸ դարում....................48
Թադեոս առաքյալի վանքը ԺԹ դարում....................51
Թադեոս առաքյալի վանքը ԺԹ դարի երկրորդ կեսին....................54
Թադեոս առաքյալի վանքը Ի դարի սկզբին....................57
Թադեոս առաքյալի վանքը Երկիր տանող դարպաս....................60
Թադեոս առաքյալի վանքը Եղեռնից մազապուրծ հայերի պատսպարան....................61
Թադեոս առաքյալի վանքի ինքնապաշտպանությունը....................61
Թադեոս առաքյալի վանքը 1918-1946 թթ.....................63
Թադեոս առաքյալի վանքը Ի դարի երկրորդ կեսից ի վեր....................64
Թադեոս առաքյալի վանքի ուխտագնացությունները 1954 թ.-ից ի վեր....................65
Մահմեդական բնակչության վերաբերմունքը....................65
Թադեոս առաքյալի վանքի կալվածքներն ու տնտեսությունը....................66
Թադեոս առաքյալի վանքը գրչօջախ....................75
Թադեոս առաքյալի նվիրաբերված ձեռագրեր....................77
Թադեոս առաքյալի վանքի ձեռագրերի հավաքածուն....................78
Թադեոս առաքյալի վանքի շարժական կայքը....................78
Հայ կաթողիկե թեմի հաստատումը և հայ առաքելական թեմի վերստեղծումը Թադեոս առաքյալի վանքում....................79
Առաջնորդանիստը Թադեոս առաքյալի վանքից Թավրիզ փոխադրելու փորձ....................81
Ատրպատականի հայոց միացյալ թեմի կազմավորումը....................81
Արտազի թեմի առաջնորդների և Թադեոս առաքյալի վանքի վանահայրերի գավազանագիրք....................83

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ԻՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....................103

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔՈՒՄ ՅԱՐԴ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....................109

Տեղում իրականացված մեր ուսումնասիրությունները ....111
Վանքի վերանորոգման աշխատանքները 1960-ական թվականներից ի վեր....111

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ....113
Հին կամ Մայր եկեղեցի ....113
Ճերմակ կամ Նոր եկեղեցի....124
Շրջապարիսպ....152
Մուտքեր....153

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ....157
Հին եկեղեցու ներսում ....157
Նոր եկեղեցու ներսում....160
Նոր եկեղեցու հյուսիսային ճակատին....162
Նոր եկեղեցու հարավային ճակատին ....165
Նոր եկեղեցու արևմտյան ճակատին ....168
Զանգակատուն ....170
Առաջնորդարան ....171
Շրջապարիսպ....171
Փայտյա դուռ....172
Վանքի գերեզմանոց....172
Անորոշ տեղադրությամբ վիմագրեր....172

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՏՈՒՌՆԵՐԸ....175
Սանդուխտ կույսի մատուռ....175
Սբ. Նահատակ մատուռ....178
Սբ. Աստվածածին կամ Նահատակության տեղի փոքր մատուռ....183
Սբ. Աստվածածին մատուռ-եկեղեցի....184
Վանքի հարավարևմտյան կողմում գտնվող մատուռ ....186

ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆՔ....187
Տեղադրություն ....187
Անվան ստուգաբանություն....188
Այլ անվանում....188
Պատմություն ....188
Ծործորի դպրոցը....196
Ճարտարապետություն....199
Վանքի տեղափոխման և վերականգնման աշխատանքները 1985-2001 թթ.....199

ՄԱՂԱՐԴԱ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ....206
Տեղադրություն ....206
Այլ անվանումներ և դրանց ծագումը....206
Վանք տանող ճանապարհներ....206
Պատմություն ....207
Վանքի հիմնադրումը....207
Մաղարդավանքը Է դարում ....211
Մաղարդավանքը Ժ դարում ....211
Մաղարդավանքը ԺԲ դարում....211
Մաղարդավանքը ԺԳ դարում....212
Մաղարդավանքը ԺԴ դարում....212
Մաղարդավանքը ԺԵ դարում ....212
Մաղարդավանքը ԺԶ դարում ....213
Մաղարդավանքը ԺԷ դարում....213
Սուրբ Կարապետի ճշխարների գյուտը....213
Մաղարդավանքը ԺԸ դարում....218
Մաղարդավանքը ԺԹ դարում....220
Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը և Թուրքմենչայի պայմանագիրը....221
Մաղարդավանքը 1830-1890-ական թվականներին....221
Մաղարդավանքը Ի դարասկզբին....223
Մաղարդավանքը 1914-1921 թվականներին....224
Մաղարդավանքը 1941 թվականից ի վեր....225
Մաղարդավանքի ունտագնացությունները....228
Մաղարդավանքի կալվածքներն ու տնտեսությունը....228
Մաղարդավանքի ձեռագրերի հավաքածուն....237
Մաղարդավանքը գրչօջախ....238
Ձեռագրերի նվիրատվություններ....241
Մասունքներ....242
Մաղարդավանքի շարժական կայքը....242
Մաղարդավանքի թեմի առաջնորդների և վանահայրերի գավազանագիրք....244
Միաբանություն....253

ՄԱՂԱՐԴԱՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ....255
Վանքի ճարտարապետության առաջին անդրադարձները ....255
Մաղարդավանքի ճարտարապետությունը....256
Եկեղեցիներ....256
Սբ. Ստեփանոս եկեղեցի ....258
Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի ....268
Զանգակատուն ....276
Եկեղեցական մասի օժանդակ կառույցներ....276
Օժանդակ շինություններ ....276
Պարիսպ....283
Աղբյուր....284
Մաղարդավանքի վերականգնման աշխատանքները....284

ՄԱՂԱՐԴԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ....285
Սբ. Ստեփանոս նախավկա եկեղեցու ներսում 285
Սբ. Ստեփանոս նախավկա եկեղեցու հյուսիսային ճակատին ....287
Հարավային ճակատին....288
Արևելյան ճակատին....293
Արևմտյան ճակատին ....294
Գմբեթին....309
Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու ներսում ....313
Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան ճակատին....314
Զանգակատանը ....315
Հարավային բակի մեծ սրահի ներսում....319
Վանքի գերեզմանոց (շրջապարսպից դուրս՝ հյուսիսարևելյան կողմում)....320

Աշխատության մեջ հանդիպող օտար բառերի և տերմինների բառարան ....321
Գունավոր նկարների ցանկ....324
Անձնանունների ցանկ....325
Տեղանունների ցանկ ....339
Օգտագործված գրականության ցանկ....345

# Երկու խոսք

Կինս՝ կյանքիս անբաժան ընկեր Մարգրիթ Բյունեման-Հախնազարյանը, տարիներ շարունակ մշտապես մասնակցել և հովանավորել է հայ ճարտարապետության ուղղությամբ տարվող գործունեությունս և աջակցել ՀՃՈՒ (RAA) կազմակերպության հիմնադրմանը: Երբ ինձ՝ որպես «անցանկալի անձի», Թուրքիա ճամփորդելն արգելվեց, նա մասնակցեց չորս գիտարշավի՝ լինելով Ծապին Գարահիսարից մինչև Համշեն ու Խոտորջուր, փնտրելով հայ անցյալին կապող հետքերը: Ես երախտապարտ եմ նրան:

Իմ շնորհակալության խոսքն ունեմ բոլոր նրանց, մասնավորապես ՀՃՈՒ գրասենյակի գործակիցներին, ովքեր օգնել են լրացնելու այս հատորում եղած նյութերը:

Երախտագիտությամբ շնորհակալություն եմ հայտնում Սամվել և Էմմա Կարապետյաններին, որ լրացրել, համադրել են նոր տվյալներն ու խմբագրել հավաքված նյութերը:

1919-1920 թվականների ընթացքում Նախիջևանի Գողթան գավառի հայաբնակ քաղաքները, ավաններն ու գյուղերը ենթարկվեցին թաթար-ադրբեջանցիների ավերին, թալանին ու ցեղասպանությանը:

Նշանավոր Ագուլիսն իր պատմական դարավոր անցյալով, գեղատեսիլ շենքերով, վանքերով ու եկեղեցիներով ավերվեց, ժողովուրդը կոտորվեց: Հայրս ջարդի հազվագյուտ վերապրողներից էր և որպես Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ընթացավարտ՝ իր ուսումը շարունակեց Պրահայի Կարլովի համալսարանում՝ ստանալով լեզվաբանության դոկտորի կոչում:

Փոխադրվելով Պարսկաստան՝ նա հաստատվեց Թեհրանում և Արուսյակ Մելիք-Մարգարյանի հետ ընտանիք կազմելով՝ իրեն նվիրեց կրթադաստիարակչական աշխատանքին:

Հայրս Թեհրանի պետական համալսարանի գրականության ֆակուլտետի ամբիոնի վարիչն էր: Նույն ժամանակ հայոց լեզու էր դասավանդում Քուշեշ-Դավթյան դպրոցում՝ որպես հայոց լեզվի ուսուցիչ: 1945 թվականից այդ դպրոցի տեսուչն էր:

Տասնյակ տարիներ ծառայել է հայոց դպրոցին (տարրական և միջնակարգ բազմաթիվ դպրոցների տեսուչն էր), որտեղ մինչև 1978 թվականը տարին շուրջ 7000 աշակերտ հայեցի դաստիարակություն էր ստանում:

1978 թ., երբ հանգստի էր կոչվել, ավարտեց իր հոգու պարտք «Գողթան գավառ» պատմաազգագրական ուսումնասիրությունը և հաջորդ օրը վախճանվեց:

Այս գիրքը ձոնում եմ հորս՝ Հովհաննես Հախնազարյանի անմոռաց հիշատակին:

Այս ուսումնասիրության նյութը միայն Պարսկաստանի Ատրպատական նահանգում գտնվող հայկական երեք վանքերն են: Այդ տարածքում, որը համընկնում է պատմական Արտազ գավառին, կային բազմաթիվ հայաբնակ գյուղեր, եկեղեցիներ, գերեզմանատներ, բերդեր, կամուրջներ, որոնք տակավին ուսումնասիրված չեն և մնում են հետազոտության կարոտ՝ սկսած Մակվի ժայռի հայերեն արձանագրությունից մինչև Սամբատի ընդարձակ ավերակներն ու հայ թագավորների ամառանոց Ծավարշանը:

1967 թ. ուսանել եմ Գերմանիայի Աախեն (Aachen) քաղաքի համալսարանում (Technische Hochschule Aachen) RWTH ճարտարապետություն, ապա ուսումս շարունակելով Քաղաքաշինության (Urbanism) ֆակուլտետում՝ այն ավարտել եմ 1973 թ.:

Իմ բուն նպատակն էր հնարավորինս ավելի խորանալ հայկական ճարտարապետության ուսումնասիրության մեջ, որն այդ ժամանակաշրջանի մասնագիտական գրականության մեջ մասնակիորեն հաճախ հիշվում էր որպես բյուզանդական ճարտարապետության ինչ-որ մի մաս: Այլ խոսքով, պետք եղած ճանաչողությունը չկար դարերով զարգացած և հաճախ հարևան և այլ երկրների շինարվեստի վրա ազդած հայ ճարտարապետության ուղղությամբ:

Նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանի՝ տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ հավաքագրած ուսումնասիրությունների արդյունքը՝ “Die Baukunst der Armenier und

Europa” երկհատոր աշխատությունը, հրատարակվեց 1918 թ. Վիեննայում Ժ. Ստրժիգովսկու շնորհիվ: Սակայն այս և մի քանի այլ հրատարակություններ բավարար չէին հայ կառուցողական արվեստին հարկավոր ճանաչողություն ստեղծելու և արդար գնահատական տալու համար:

Առաջին աշխարհամարտը և հայոց ցեղասպանությունը մասնագետներին զրկել էր Արևմտյան Հայաստանում ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից, իսկ բոլշևիկյան քաղաքականությամբ մի քանի անգամ փոքրացված Հայաստանը, մեկուսացած խորհրդային պարսպով, կտրվել էր արտասահմանից:

Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող հայկական մի քանի վանքեր, ինչպես՝ Սբ. Թադեոս առաքյալը և Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկան, աշխարհից կտրված են և ծվարած լեռների մեջ: Բացի մի քանի եվրոպացի ճանապարհորդների նկարագրություններից՝ դրանք զրկված են եղել գիտական ճանաչողությունից: Աախենի համալսարանի ճարտարապետության պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. դր. Վայրեսի հետ քննարկելով և հաստատումը ստանալով՝ 1968 թ. գարնանը ես և ճարտ. Հ. Հոֆրիխտերը մեկնեցինք Թավրիզ, այնտեղից էլ Թեհրան:

Իմ դոկտորականի թեզն էր լինելու Թադեոս առաքյալի վանքը, իսկ Հ. Հոֆրիխտերինը՝ Ստեփանոս նախավկան:

Նշյալ թվականի ապրիլին դեռ մասամբ ձյունապատ դաշտերում դեգերելով և մի քանի անգամ ճիշտ ուղղությունը կորցնելով՝ վերջապես կարողացանք գտնել վանքը:

Սարերով շրջապատված Չալդորան կոչվող բարձրավանդակի հյուսիսային անկյունում է նստած Թադեոս առաքյալի վանական համալիրը, որտեղից իշխում է ընդարձակ դաշտին:

Վանքի տարեց երկու պահապանները՝ ազգությամբ հայ Վասիլը և թուրք Նաղդալին, մեծ զարմանքով, բայց սիրալիր ընդունեցին և մեզ տեղավորեցին պարսպի հարավարևելյան բաժնում գտնվող միակ և մասամբ նորոգված սենյակում:

Վանքի քարաշեն պարսիսպները որոշ ապահովություն էին ներշնչում, սակայն մեր քունը գիշերները հաճախ ընդհատվում էր, երբ քրդերի շների հաչոցին հաջորդում էր գայլերի ոռնոցը:

Արևի լույսով սկսվում և ավարտվում էր մեր երկուսի աշխատանքը: Մենք նկարում էինք մեծ ժապավեններով օժտված հատուկ լուսանկարչական ապարատով և քար առ քար չափագրում վանքի պարիսպները, խցերը, տնտեսական բաժնում ձիթհանն ու խոհանոցը, կիսավեր պատերը և վերջապես Մայր տաճարը, որը բաղկացած էր երկու մասից: Արևելքում հին կառույցն էր՝ մուգ մոխրագույն բազալտե քարերի շարվածքով և հետագայում կցված և ճերմակ կրաքարով կառուցված մեծ եկեղեցին: Էջմիածնի Մայր տաճարը օրինակ ծառայելով՝ կառուցվել է ճերմակ եկեղեցին, որի արտաքին պատերը ծածկված են ճոխ զարդաքանդակներով՝ նմանվելով Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցուն:

Վանքի հյուսիսում՝ բլրակների մեջ, գտնվում են փոքր չորս մատուռներ, որոնցից միայն մեկն է տեսանելի վանքից, իսկ մյուսները թաքնված են բլրալանջի հետևում: Մատուռներց համեմատաբար մեծը, որն ունի կիսակլոր գմբեթ, ըստ ավանդության, կառուցված է Թադեոս առաքյալի նահատակավայր ժայռին կից:

Վանքից շուրջ 1,5 կմ հարավ՝ դաշտի մեջ, առանձնացած է արհեստականի նմանվող մի բլուր, որի վրա է գտնվում առաջին հայ կին քրիստոնյա նահատակի՝ Սանդուխտ կույսի դամբարան-մատուռը:

Դեպի վանք տանող ճամփան անցնում է վերոհիշյալ բլրի մոտից, որ այդ օրերին՝ 1968-1970 թվականների ընթացքում, իրար կպած մի քանի կավաշեն տներում իրենց ոչխարի հոտերով և գայլխեղդ շներով քրդեր էին բնակվում: Քուրդ կանայք՝ իրենց ավանդական գունավոր տարազով, գարնանը, երբ տարածքը կանաչով էր ծփում, ուտելի բույսեր էին հավաքում, սակայն քրդերի ապրուստի երաշխիքն իրենց ոչխարի հոտն էր, որոնց արագ բազմանալու հնարավորությունն էին ստեղծում վանքի լավագույն մարգագետինները: Խաշնարածությամբ ապրող և արագ աճող ժողովրդի գլխավոր սնունդը ոչխարի կաթից ստացած մածուն-պանիրն էր չոր գարեհացի հետ:

Այն օրերին մի քանի տուն-գոմերն այսօր վերածվել են Ղարաքիլիսա անվամբ ընդարձակ գյուղի և խիստ մոտեցել վանքին՝ գրավելով նույնիսկ երբեմնի հայաբնակ գյուղի եկեղեցին...

Երկուսուկես ամսից աշխատանքն ավարտելով, լի անմոռանալի հուշերով՝ վանքից մեկնեցի Թավրիզ՝ լրացնելու մեր սննդամթերքի պաշարն այլուրով ու մի քանի պահածոներով և ստանալու Սբ. Ստեփանոս նախավկայի վանքը հասնելու համար հարկավոր թղթերը:

Ատրպատականի թեմական խորհրդի անդամները, հանձինս պրն. Հայկ Ստեփանյանի և գնդապետ Էմիլ Հակոբյանի, Գերմանիայի պարսկական դեսպանատան նամակին ավելացրին իրենց հովանավորության գրությունը, առանց որի հնարավոր չէր ստանալ Ջուլֆայի սահմանապահության արտոնագիրը և անցնել

զինվորական փակ գոտի՝ Մարաղա, որտեղ և գտնվում է Սբ. Ստեփանոս նախավկայի կամ Դարաշամբի վանքը: Ջուլֆայից վանք տանող ճանապարհն այն օրերին կածան էր, այսօր այն վերածվել է Արաքս գետին գրեթե զուգահեռ շուրջ 21 կմ երկարությամբ ավտոճանապարհի:

Այս վանքում էլ երկու ծերուկ պահակները՝ Ղազարն ու Սարգիսը, մեզ սիրալիր ընդունեցին և տեղավորեցին պարսպի հյուսիսարևմտյան անկյունում գտնվող սենյակում:

Մոտ երկուսուկես ամիս աշխատելով՝ հնարավոր եղավ դարերից մեզ հասած հսկայական և բարդ կառույցը չափագրել:

Մաղարթա լեռան ձորերի մեջ թաքնված, Նախիջևանի լերկ լեռների առջևում գտնվող վանքը ժամանակին ունեցել է պտղատու ծառերի մեծ այգի, որը սնվում էր կից աղբյուրի ջրով: Չոր տարածքում՝ ժայռերի մեջ, կենդանություն բուրող մի կանաչ օազիս էր:

Կարելի է ասել, որ արտաքին աշխարհից լրիվ կտրված, բայց մայր բնության մեջ ծով ապրումների անմոռանալի շրջանում հետևողական աշխատանքով ավարտեցինք ծրագրվածը, ինչպես նաև վանքից մի քանի կմ հեռու՝ Արաքս-Տղմուտ գետերի անկյունում գտնվող և մինչև Առաջին աշխարհամարտը հայաբնակ շեն գյուղի՝ դեռևս կանգուն եկեղեցու չափագրումը:

Հետագա տարիներին բազմիցս առիթ եմ ունեցել հաճախ ճարտարապետ անձանց ընկերակցությամբ կտրել նույն ճամփան: Միշտ հանգստանալու պատրվակով կանգնել ենք և մեր հայացքը երկար ուղղել Արաքս գետի հյուսիսում՝ Հին Ջուղա քաղաքի պատմական գերեզմանատան մարդահասակ քարե «անտառ» խաչքարերին, որոնք սկսվում էին Նախիջևանի սահմանային փշալարերից և տարածվում երեք իրարահաջորդ բլուրների վրա: Միջնադարից մեզ հասած հազարավոր գեղաքանդակ խաչքարեր. ամեն մեկն առանձին հուշարձան և ամբողջը միասին համայն աշխարհում իր նմանը չունեցող հայության քարե մշակույթը ներկայացնող անկրկնելի մի կողող:

Ինչպես Նախիջևանի, այնպես էլ Ադրբեջանի տարածքում 1990-ական թվականներին հիմնահատակ կործանվեցին հայկական անհամար հուշարձաններ, սա ևս, այն էլ, կարելի է ասել, մի քանի փուլով: Օրը ցերեկով և բոլորին տեսանելի զինվորների վաշտերը մուրճ ու քլունգով ջարդուփշուր անելուց հետո Արաքս գետը թափեցին... Ադրբեջանը, իր ունեցած հանքերի եկամուտով հղփացած, աշխատում է սուտը նշանաքան դարձրած ստեղծել արհեստական կեղծ պատմություն՝ հերքելով իրականն ու հայոց ցեղասպանությունը շարունակել որպես մշակույթի ջարդ, շարունակվող թալիբանություն...

Խորհրդային Հայաստանն այդ օրերին ինձ համար փակ էր որպես իրանահպատակի: Այնպես որ գերմանացի զբոսաշրջիկների փոքր խմբով առաջին անգամ 1969 թ. մոտ երեք շաբաթ տևողությամբ եղա Արևմտյան Հայաստանում (Սամսոն, Տրապիզոն, Կարին, Կարս, Անի, Վան, Բաղեշ և այլն): Դոկտորականս շարունակելու համար անհրաժեշտ էր եղած մասնագիտական գրքերից բացի ուղղակի առնչվել, տեսնել ու ընկալել հայ ճարտարապետությունը: Հաջորդ տարի Կիլիկիա ճամփորդելուց հետո հնարավորություն ունեցա Ամերիկայի մի քանի հայ համայնքներում լուսապատկերներով ներկայացնել հայ ճարտարապետական կոթողները: Ինձ համար բարենպաստ առիթ էր, երբ Նյու Յորքում ծանոթացա ֆիզիկոս, պրոֆ. Վազգեն Բարսեղյանի հետ, որը հանձն առավ օժանդակելու մեր հաջորդ ճամփորդությունները: Սա նաև անկյունադարձային առիթ էր Գերմանիայում պաշտոնապես գրանցելու «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» (RAA՝ “Research on Armenian architecture”) կազմակերպությունը որպես ոչ շահադիտական միավոր և ընդլայնել սկսած գործունեությունը:

Ինձ թվում էր, թե մի քանի ճամփորդություն բավարար կլիներ հավաքագրելու եղածը: Ի՜նչ միամիտ մոտեցում...: Այն օրերին Թուրքիայում ճամփորդելու դժվարությունների ցանկը շատ երկար էր. նախ չունեինք հարկավոր գրականություն և քարտեզներ, չունեինք գործին ծանոթ ճարտարապետ-կամավորներ, որոնք նախ պետք է հայ չլինեին և պատրաստ լինեին ամսից ավել սար ու ձորերում վտանգավոր պայմաններում ինչ-որ կիսավեր շենքերի պատկերները բերել, դասավորել և հանձնել ինձ: Ես էլ այդ երեք օրինակներից մեկը հանձնում էի պրոֆ. Վ. Բարսեղյանին:

Սառը պատերազմի տարիներին ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքը գտնվում էր ՆԱՏՕ-ի զինվորական փակ գոտում, և մեզ համար շատ վայրեր ուղղակի անհասանելի էին:

1980 թ. զարնանն առաջին անգամ առիթ ունեցա ճամփորդել Խորհրդային Հայաստանում, որտեղ, ըստ պայմանավորվածության, եկել էր նաև պրոֆ. Վ. Բարսեղյանը: Հաջորդ օրն իսկ Հայաստանի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչության պետ պրն. Գրիգոր Հասրաթյանի և նրա երկու գործակիցների հետ օրեր տևող ժողովներում որոշեցինք մաս առ մաս սկսել հայ ճարտարապետության միկրոֆիլմերի հատորների հրատարակությունը, ընդ որում, յու-

քաքանչյուր հատոր պետք է պարունակեր շուրջ 4000 պատկեր, որոնց տպագրական ծախսը ստանձնում էր պրոֆ. Վ. Բարսեղյանը: Հայաստանը պիտի տրամադրեր իր սահմաններում եղած հուշարձանների տվյալները, իսկ ես պետք է մշակեի 18 գիտարշավների նյութերը:

Ինձ համար շատ դժվար էր «օրվա հացը» վաստակելուն զուգահեռ հոգալ ՀՃՈՒ-ի ծախսերը և առանց հարկավոր փորձառության ու գրականության կատարել այս ծանր աշխատանքը, որը տարիների ընթացքում հրատարակվեց միկրոֆիլմերի 7 հատորներում Հոլանդիայի Լայդն (Leiden) քաղաքում IDC հրատարակչության միջոցով:

Ատրպատականի վանքերի ուսումնասիրությունը, թվում է, թե ուղղակիորեն չի առնչվում այս տողերի հետ, ինձ համար եղավ անկյունադարձային, որի տրամաբանական շարունակությունը ՀՃՈՒ (RAA) կազմակերպության ստեղծումն էր:

1989 թ. Հայաստանում ծանոթացա պրն. Սամվել Կարապետյանի հետ, որը նման հարկավոր և անհետաձգելի գործունեություն էր ծավալում Հայաստանի հարևան երկրներում՝ Ադրբեջանում և Վրաստանում՝ հավաքագրելով և չափագրելով հայկական հուշարձանները:

1996 թ. Լոս Անջելես քաղաքում գրանցվեց ՀՃՈՒ կազմակերպությունը, որի վարչական սրտացավ և գիտակից անդամները տարիներ շարունակ կատարել են իրենց կարողացածից ավելին՝ հովանավորելու սկսված գործունեությունը և բազմաթիվ դասախոսություններով, ցուցահանդեսներով և հանդեսներով դրամահավաքներ կազմակերպել՝ օժանդակելու այսօր Երևանում հաստատված կենտրոնական գրասենյակին:

Տարիներ ԱՄՆ-ի ՀՃՈՒ-ի նախագահն էր պրն. Շահեն Հարությունյանը, իսկ ներկայիս նախագահն է ակտիվ և ամենուրեք հասնող պրն. Ժորա Մանուչարյանը:

1998 թ. ՀՃՈՒ կազմակերպությունը գրանցվեց Երևանում որպես բարեգործական և ոչ շահադիտական կազմակերպություն, ուր այսօր աշխատում են երկու տասնյակից ավելի մասնագետներ:

ՀՃՈՒ-ի Հայաստանյան գրասենյակում պրն. Սամվել Կարապետյանի տնօրինությամբ խիստ կարևոր աշխատանք է կատարվում գիտական, նաև քաղաքական իմաստով:

Գրասենյակն ունի տարբեր ոլորտների մասնագետներ. մշակվում են գիտարշավներից և գրադարանաարխիվային հետազոտությունների ընթացքում հավաքագրված նյութերը, թվայնացվում են պատկերներ:

ՀՃՈՒ կազմակերպությունը հրատարակել է բազմաթիվ աշխատություններ հայերենով, երբեմն նաև անգլերենով և ռուսերենով:

Գրասենյակն ունի ֆիլմ-ժապավեններ պատրաստելու առանձին բաժին, որը մեծ հաջողությամբ ղեկավարում է պրն. Տիրան Կարապետյանը:

Տարիների ընթացքում ՀՃՈՒ կազմակերպությունը հաճախ իր նախաձեռնությամբ մասնակցել և ղեկավարել է 16 եկեղեցիների ու վանքերի վերականգնման աշխատանքները, ինչպես՝ Սաղմոսավանքն ու Դադի վանքը և այլն:

*Արմեն Հախնազարյան*
*22.12.2008*

Ամուսինս՝ Արմենը, ամբողջ հոգով կապված էր Ատրպատականի հայկական հուշարձաններին և հատկապես Սբ. Թադեոս առաքյալի վանքին: Վերջինս 1973 թ. նրա դոկտորական ատենախոսության նյութն էր: 2008 թ.՝ ներկա հատորը շարադրելիս, ամուսինս ցանկություն ուներ մեկ անգամ ևս այցելելու շրջան ու լուսանկարելու հարազատ վանքերն ու հուշարձանները, սակայն հիվանդությունը զրկեց նրան այդ հնարավորությունից: Նա առանց այդ իղձն իրագործելու կյանքից հեռացավ 2009 թ. փետրվարի 19-ին՝ Վարդանանց տոնի օրը:

Ուրախ եմ, որ 2009-2011 թվականների ընթացքում կարողացա այցելել և լուսանկարել վանքերի ներկա վիճակը: Ուրախությամբ ցանկանում եմ նաև նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետության իշխանությունները հոգատարությամբ նորոգում, խնամում և պահպանում են մեր մշակութային սրբություններն ու կոթողները:

Շնորհակալ եմ Սամվելին, Էմմային և ՀՃՈՒ հիմնադրամի բոլոր աշխատակիցներին, որ լրացնելով ամբողջացրին և հրատարակության պատրաստեցին Արմենի այս աշխատանքն ու շարունակում են նրա առաքելությունը:

*Մարգրիթ Հախնազարյան*
*20.10.2011*

# ԱՐՏԱԶ ԳԱՎԱՌ

**Գավառի աշխարհագրական դիրքը.** Արտազը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի 35 գավառներից է[1]: Տարածվում է Մասիս լեռան հարավարևելյան կողմում: Հյուսիսում հասնում է մինչև Մասյացոտն և Կոգովիտ գավառներ, արևմուտքում՝ Մարդաստան, իսկ արևելքում՝ Արաքս գետ: Հարավից Արտազին սահմանակցում է Ճուաշռոտ գավառը: Զբաղեցնում է 2.225 քկմ տարածք[2]:

Ներկայումս մեծագույն մասով համապատասխանում է Իրանի Ատրպատական նահանգի հյուսիս-արևմուտքում գտնվող Մակվի շրջանին:

**Այլ անվանումներ.** գավառը Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու) սեպագիր արձանագրություններում հիշատակված է Ուլթուզա (Ultuza) ձևով[3]: Այն վկայված է Բիայնիլիի հզոր տիրակալներից մեկի՝ Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. 786-764) Խոռխոռյան տարեգրության մեջ, որն արձանագրված է Վանի քարաժայռի արևմտյան մասում: Արգիշտին՝ Մենուայի որդին, կառավարման երկրորդ (երրո՞րդ) տարում արշավում է Անիշթերգայա (Անիշթեիրգա) երկիրը, Աբելիանեխե ցեղի երկիրը, Կուառզանե ցեղի երկիրը և Ուլթուզա ցեղի երկիրը ու հպատակեցնում դրանք[4]: Նվաճված այս չորս երկրները[5] տեղադրվում են Արաքս գետի վերին հոսանքի շրջանից (Աբելիանեխե=հայկական Աբեղյանք) հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ ընկած տարածքներում: Տարեգրության մեջ հիշատակվող վերջին երկրանունը Ուլթուզան[6] է, որն էլ նույնացվել է Արտազ գավառանվան հետ. «...անհրաժեշտ է փնտրել Արտազ (Մակու) գավառի սահմաններում»[7]:

Գավառանվան առաջին հիշատակությունը Շավարշան ձևով կապված է մ. թ. ա. Բ դարի դեպքերի հետ (այն է՝ Արտաշես Ա-ի (մ. թ. ա. 189-160) կողմից հյուսիսկովկասյան արտազեցի լեռնականներին գերելն ու Շավարշանում բնակեցնելը). «...Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շավարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի»[8]: Կամ «Բնակեցուցանէ զգերեալսն ի գաւառին Շաւարշան, որ է Արտազ գաւառ»[9]:

Հավանական է համարվել, որ գավառն այդպես է կոչվել «...գուցէ անուամբ Հայկազն պայազատաց մէկուն, որ կոչուէր Շաւարշ»[10]: Կամ «...գաւառը առաջ Շաւարշական կամ Շաւարշան կ՚ըսուէր իրեն Շաւարշան գիւղաքաղաքին անունովը, ուր թագաւորաց ամարանոց կար. բայց ետքէն մեր Արտաշէս երկրորդին ատեն Ալանաց երկրին Արտազ գաւառէն հոս գերի գալով, այս գաւառին առջի անունը

1 **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 295:

2 **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 40, 117: Տե՛ս նաև **Տէմիրճեան Վարդան ծ. վրդ.**, Ատրպատական, «Հասկ», 1969, յունուար-փետրուար, էջ 33: Նույնի՝ Ատրպատական. աշխարհագրական ծանօթութիւններ, Դիւան Ատրպատականի հայոց պատմութեան (այսուհետև՝ ԴԱՀՊ, համապատասխան հատորներով և էջերով), հ. Բ, Պէյրութ, 1974, էջ 23:

3 **Երեմյան Ս. Տ.**, նշվ. աշխ., էջ 40:

4 **Меликишвили Г. А.**, Урартские клинообразные надписи, М., 1960, № 127.

5 Բնագրի հայերեն թարգմանությունը կատարել է սեպագրագետ Հովհ. Կարագյոզյանը. «Խալդեն արշավեց, սեփական զենքին (՞) ենթարկեց Աբելիանեխե (ցեղի) երկիրը, Անիշթերգայան (երկիրը), Կուառզանե (ցեղի) (երկիրը), Ուլթուզայան (ցեղի) երկիրը, զգետնեց նրանց Արգիշթեի առջև: Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն (՞) իմ զորեղ (է): Խալդյան մեծությամբ արշավեց Արգիշթե Մինուայորդին: Խալդեն առաջնորդում էր (՞) (նրան)...» (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, կազմեցին **Հովհաննիսյան Պ. Հ.**, **Աբրահամյան Ա. Գ.**, Երևան, 1981, էջ 59): Հմմտ. նաև **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն. ակունքները (X-VI դդ. մ թ. ա.), Երևան, 1972, էջ 165:

6 Այս տեղանունն ընկալվել է նաև իբրև անձնանուն (**Ղափանցյան Գր.**, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 158): Որոշ ուսումնասիրողներ Ուլթուզա երկրի տեղադրության հարցն առհասարակ թողել են առկախ (**Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 173, с. 156):

7 **Հմայակյան Ս. Գ.**, Կուեռա-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1990, № 1, էջ 164: Նույնի՝ Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 53:

8 **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ **Մովսէս Խորենացի**, համապատասխան էջերով), քննական բնագիրը, ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 182:

9 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ **Մովսէս Կաղանկատուացի**, համապատասխան էջերով), քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 13:

10 **Ալիշան Ղ.**, Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 62:

փոխեցին ու Արտազ դրին»[11]: «...ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտազ...»[12]:

1656 թ. Աշխարհացույցի հիշատակարանում նշվել է, որ «...Արտազ-Մակու է, ուր կա ս. առաքեալն Թադէոս...»[13]:

Արտազը «...հնում կոչուել է Շաւարշաւան գաւառ, իսկ միջնադարում՝ Մակու կամ Առաքելոց երկիր...»[14]:

**Արտազը մ. թ. ա. Է - մ. թ. Դ դարերում.** Մակու գավառը նույնացվել է Բիայնիլիի թագավոր Ռուսա Բ-ի (Ք. ա. 685-645) կառուցած Ռուսախինիլի քաղաքի («Ռուսայի քաղաք փոքր») շրջակայքի հետ[15]: Վանի թագավորության և հետագա ժամանակաշրջանում Ռուսախինիլի փոքր քաղաքը եղել է Ուրմիա լճից հյուսիս ընկած երկրամասի կարևորագույն ռազմական կենտրոնը: Ավերակները գտնվում են ներկայիս Բաստամ գյուղի տարածքում՝ Մակվից շուրջ 85 կմ հարավ-արևելք, որտեղ 1970-ական թվականներին հնագիտական պեղումներ է կատարել Իրանում Գերմանական հնագիտական ընկերության տնօրեն դր. Վոլֆրամ Քլայսը[16]: Նշյալ ժամանակաշրջանի բերդեր, տաճարներ և այլ հուշարձաններ են հայտնաբերվել նաև Սանգար գյուղում, Ղարազիաեդինի Թախթա ավանում և այլուր[17]:

Արտազ գավառանունը հայ մատենագրության մեջ առաջին անգամ վկայված է Արտաշես Ա-ի (մ. թ. ա. 189-160 թթ.) օրոք ալանների դեմ տարած հաղթանակի առնչությամբ, երբ Համշենից գաղթած լեռնական ցեղերը վերաբնակեցվում են Մասիս լեռան հարավարևելյան կողմում՝ Շավարշանում, և իրենց անունը տարածում գավառի վրա. «Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գավառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի»[18]: Լեռնականների դեմ տարած հաղթական պատերազմի, գերիների և վերջիններիս Շավարշանում բնակեցնելու մասին վկայված է. «Բնակեցուցանէ զգերեալսն ի գաւառին Շաւարշան, որ է Արտազ գավառ»[19]:

**Արտազը Ե դարում.** վաղ միջնադարում գավառն Ամատունի հայ նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր: Այստեղով էր անցնում Մեծ Հայքի հինգ գլխավոր ճանապարհներից մեկը՝ Արտաշատ-Էկբատան (այժմ՝ Համադան) ճանապարհը, որը նշված էր Հին հռոմեական Պևտինգերյան քարտեզի (Tabula Peutingeriana, Դ դար) վրա:

428 թ. հայոց Արշակունիների թագավորության անկումից հետո Ամատունիները պահում են իրենց իշխանությունն Արտազի նկատմամբ:

451 թ. մայիսի 26-ին Արտազ գավառի Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի ափին, հայոց բանակը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ըմբոստանում է պարսից գերակշիռ ուժերի դեմ. «Սոքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու եւ լինէր հանդէս համարուն վաթսուն եւ վեց հազար այր ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ»[20]: Ավարայրի դաշտից բացի՝ հիշվում է նաև համանուն գյուղը[21]: Ճակատամարտից հետո նահատակների արյամբ սրբացված մարտադաշտի մասին նշվել է. «Նովաւ և դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանճրեւաբեր ամպոց, այլ ի սուրբ և յարիւնաբուխ վկայից ցանեալ և ցրուեալ սպիտակութիւն սուրբ ոսկերացն»[22]:

482 թ. Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի (478-490) օրհնությամբ սպարապետ Վահան Մամիկոնյանը, հայոց բանակի գլուխ անցած, ջախջախում է Հայաստան ներխուժած պարսից բանակին:

---

11 **Քաջունի Մ.**, Աշխարհագրութիւն Հին և Նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար, Վենետիկ, 1857, էջ 96-97:

12 **Մովսէս Խորենացի,** էջ 157: Տե՛ս նաև **Ինճիճեան Ղ.,** Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 201-203:

13 **Թօփճեան Յ**, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 77:

14 **Խաչիկեան Լ.**, Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը, Աշխատութիւններ, h. Բ, Երևան, 1999, էջ 43:

15 **Աղոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 165, 208, 212: Ի դեպ, Ռուսա Բ-ի 16 տողանի արձանագրությունը Ի դարի առաջին տասնամյակներին պահվել է Մակու քաղաքում՝ խաներից մեկի ապարանքի բակում, որտեղ փոխադրվել է հին քաղաքատեղիի ավերակներից: Այդ արձանագրությունը քաղաքի և տաճարի կառուցման մասին է (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, h. 1, էջ 88-89: Հմմտ. **Ղափանցյան Գր.**, նշվ. աշխ., էջ 211: **Меликишвили Г. А.**, նշվ. աշխ., № 280. **Арутюнян Н. В.**, նշվ. աշխ., № 419, էջ 342-343: **Աղոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 182):

16 **Kleiss W.,** Die Ausgrabungen in der Urartäischen Burg und Siedlung in Bastam 1977. Տե՛ս Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկ. ժող., h. I, Երևան, 1978, էջ 152-161: Հայկական ճարտարապետության պատմություն, h. I, Երևան, 1996, էջ 116-118:
«Երկիր և մշակույթ» կազմակերպության նախագահ Գեղամ Գևոնյանի բանավոր հաղորդմամբ (2000 թ.)՝ Բաստամ գյուղին մերձ քաղաքատեղիի ձորակներից մեկում իրականացված պեղումների ղեկավար Համիդ Խաթիպշահիտը հայտնաբերել է փոքր եկեղեցու մնացորդներ, խաչքարի բեկորներ և վերջիններս տեղափոխել Ուրմիայի թանգարան:

17 **Յակոբեան Է.**, Ատրպատականի հայկական յուշարձանները (անտիպ), էջ 4:

18 **Մովսէս Խորենացի**, էջ 182: Թվում է, թե Արևելյան Վրաստանում գտնվող Արտոզան գյուղանունն աղերս ունի Արտազ տեղանվան հետ (Արտոզան գյուղի մասին տե՛ս **Կարապետյան Ս.**, Հայերը Կախեթում, Երևան, 2004, էջ 92):

19 **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 10:

20 **Եղիշէի** վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (այսուհետև՝ **Եղիշէ**, համապատասխան էջերով), ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 100:

21 **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան (այսուհետև՝ **Ղազար Փարպեցի**, համապատասխան էջերով), քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 162:

22 **Եղիշէ**, էջ 188-189: Տե՛ս նաև **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 205:

Հաղթական ճակատամարտը տեղի է ունենում «...ի գաւառն յԱրտազ...»՝ Ներսեհապատ գյուղի մոտ[23]:

Արտազ գավառի հիշատակությանը հանդիպում ենք 484 թ. Հեր (Խոյ) գավառի Նվարսակ (այժմ՝ Նիսակ) գյուղում կնքված հայ-պարսկական դաշնագրի կապակցությամբ, երբ պարսից զորապետ Նիխորին հանդիպելու նպատակով Վահան Մամիկոնյանը, դուրս գալով Դվինից, ճանապարհին կանգ է առնում Եղինդ գյուղում, որը գտնվում էր «...ի գաւառն որ կոչի Արտազ...»[24]:

**Արտազը Զ-Է դարերում.** 564 թ. Հայաստանի մարզպան է նշանակվում Սուրեն Ճիհովր-Վշնասպ պարսիկը: Նրա օրոք հայերի նկատմամբ սաստկանում են հարստահարությունները ու կամայականությունները, ծանրանում են բնակչությունից գանձվող հարկերն ու տուրքերը, ուժեղանում են կրոնական հալածանքները: Պարսից արքունիքը ձգտում է վերացնել Հայաստանի ներքին ինքնավարությունը: Հարկային, վարչական և կրոնական ճնշումներն առաջ են բերում հայ ժողովրդի բոլոր խավերի դժգոհությունը և նրանց մղում ապստամբության (571-572 թթ.), որը կազմակերպում ու գլխավորում են Հովհաննես Բ Գաբեղյան կաթողիկոսը (557-574) և սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Ապստամբությունը վերածվում է պարսկա-բյուզանդական պատերազմի, որում հայերը հանդես են գալիս իբրև բյուզանդացիների դաշնակիցներ: Պատերազմը փոփոխական հաջողություններով և կարճատև ընդհատումներով շարունակվում է 20 տարի: Պարսկական զորքերի մի քանի անհաջող ճակատամարտերից հետո՝ 576 թ., մեծաքանակ բանակով և փղերի գնդով Հայաստան է արշավում պարսից Խոսրով Ա Անուշիրվան թագավորը (531-579) և Արտազի ու Բագրևանդի վրայով շարժվում Հայաստանի բյուզանդական հատված: Հետապնդելով Վարդանի գլխավորած հայոց զորաբանակին՝ պարսիկները շրջանցում են Կարին քաղաքը, շարժվում Մելիտինե (Մալաթիա) և այնտեղ ճամբար դնում: Վճռական ճակատամարտում հայերը հաղթանակ են տանում և փախուստի մատնում պարսկական զորքին. «Այս այն Վարդան է, յորոյ վերայ եկն ինքն արքայն Պարսից, կոչեցեալ Անուշ Ըռուան Խոսրով, հանդերձ բազմութեամբ սպառազէն զաւրացն և փղաւք բազմաւք, և ճանապարհ կալեալ ընդ գաւառն Արտազու՝ գնաց ընդ Բագրևանդ, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ: Եւ կալեալ ճանապարհ գնաց ի Մեղիտինէ և բանակեցաւ դէմ յանդիման նորա»[25]:

Է դարի 30-ական թվականներին Մերձավոր Արևելքում իսլամի դրոշի ներքո հանդես է գալիս քաղաքական նոր ու հզոր ուժ՝ Արաբական խալիֆայությունը: Որդեգրելով նվաճողական քաղաքականություն՝ արաբները կարճ ժամանակում գրավում են հարևան երկրները և շարժվելով հյուսիս՝ առաջին անգամ մոտենում են Հայաստանի սահմաններին: 639-641 թթ. նրանք գրավում են Ատրպատականը, 643 թ.՝ մարզպանական Հայաստանի մաս կազմող Մարաց աշխարհը, ապա անցնելով Արաքս գետը՝ ասպատակում են Նախիջևան և Գողթան գավառները: Այստեղ նրանք բաժանվում են երկու մասի: Զորքի մի մասն ավարով ու գերիներով վերադառնում է Ատրպատական, մյուս մասն ավերում է Արտազը և հարձակվում հույն զորավար Պրոկոպիոսի վրա, որը բանակել էր Կոգովիտում. «Եւ մեծ մասն զօրուն հատեալ ասպատակէին յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից. և առնուին ի գերութիւն զաւանս Մարաց և զգաւառն Գողթն և զդաստակերտն Նախջաւանու. և զբազումս յարանց ընդ սուր անցուցանէին, և զայլս գերի վարեալ կանամբք և մանկտեաւ՝ անցուցանէին ընդ գետն Երասխ ընդ հունն Ջուղայոյ: Եւ ընդ երկուս բաժանեալ զօրքն՝ ոմանք զգերեալսն դարձուցանէին յաշխարհն իւրեանց: Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պռոկոպ, որ էր բանակեալ ի գաւառին Կոգովտի...»[26]: Ապա արաբները Կոգովիտի և Մարդաստանի սահմանի վրա (Արտազից արևմուտք) ջախջախում են հունական (բյուզանդական) զորքի մեծ մասը և հարուստ ավարով վերադառնում իրենց բանակատեղին[27]:

**Արտազը Ը-Ժ դարերում.** Ը դարի երկրորդ կեսին գավառն ընկնում է հետզհետե հզորացող սահմանակից Վասպուրականի Արծրունիների գերիշխանության տակ:

Ժ դարասկզբին՝ Վասպուրականի գահերեց իշխան Աշոտ Արծրունու մահից (904 թ.) հետո, երբ երկրամասը մասնատվում է նրա երկու եղբայրների՝ Գագիկի և Գուրգենի միջև, Արտազը տասնչորս այլ գավառների (Ճուաշ, Մարդաստան, Գառնի, Տոսպ-Ռշտունիք և այլն) հետ բաժին է ընկնում Գագիկին[28]: Վերջինս, լուրջ հակամարտության մեջ գտնվելով Բագրատունյաց Սմբատ Ա հայոց թագավորի (890-914) հետ, 908 թ. արքայական թագ է ստանում Ատրպատականի Սաջյան Յուսուֆ ամիրայից և հիմնադրում Վասպուրականի Արծրունյաց թագա-

---

23 **Ղազար Փարպեցի**, էջ 312:

24 Նույն տեղում, էջ 398: Հայ ժողովրդի Ե դարի ազատագրական պայքարի մասին տե՛ս **Յուզբաշյան Կ. Ն.**, Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Երևան, 1989:

25 Պատմութիւն **Սեբէոսի** (այսուհետև՝ **Սեբէոս**, համապատասխան էջերով), աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 68:

26 Պատմութիւն **Ղեւոնդեայ** մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ **Ղեւոնդ**, համապատասխան էջերով), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 7:

27 Նշվ. աշխ., էջ 8:

28 **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ **Թովմա Արծրունի և Անանուն**, համապատասխան էջերով), Երևան, 1985, էջ 388-389: Տե՛ս նաև **Վարդանյան Վ. Մ.**, Վասպուրականի թագավորության սահմանները IX-XI դարերում, «ՊԲՀ», 1969, № 4, էջ 230:

վորությունը (908-1021 թթ.): Այդ ժամանակաշրջանում Արտազը մտնում է հայոց Բագրատունիների պետության կազմի մեջ: Յուսուֆի կողմից Սմբատ արքայի եղերական սպանությունից հետո Գագիկ Արծրունին, օգտվելով Բագրատունիների թուլությունից, Վասպուրականին է միացնում Արտազ, Կոգովիտ, Մասյացոտն և Բագրևանդ գավառները[29]:

Ժ դարում գավառն Արդոզական անվամբ հիշատակվում է Ամատունյաց տան Գրիգոր եպիսկոպոսի կողմից Թադեոս առաքյալի նահատակավայրգերեզմանն աթոռանիստ դարձնելու առնչությամբ. «...նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդոզական գաւառի»[30]: Սա ուղղակի վկայություն է այն մասին, որ Արծրունի իշխանների ժամանակ Արտազի եպիսկոպոսությունը գտնվում էր Ամատունյաց տոհմի ձեռքում:

**Արտազ-Մակվի հայկական իշխանությունը ԺԳ-ԺԵ դարերում.** հավանաբար ԺԳ դարից սկսած՝ Մակու բերդանունը հետզհետե տարածվում է գավառի վրա, և Արտազ տեղանվանը զուգահեռ գործածվում է նաև Մակու գավառանունը. «Արտազ Մակու է, ուր կայ սուրբ առաքեալն Թադէոս»[31] կամ՝ «Արտազ գաւառն Մակու է, ուր կայ սուրբ առաքեալն Թադէոս»[32]:

Արտազը Վասպուրականի նահանգների շարքում հիշատակվում է նաև ԺԴ դարում[33]:

1315 թ. Թադեոս առաքյալի վանքում ստեղծված «Ներսիսի Շնորհալոյ մեկնութիւն սաղմոսաց» ձեռագրում նշվել է. «...եղև սկիզբն այսմիկ սրբոյ գծագրութեանս ի գաւառիս կոչեցելումն Արտազ...»[34]:

ԺԳ դարի կեսերից Արտազի տարածքում հիմնվում է հայկական իշխանություն (1247) Մակու կենտրոնով: Այն գոյատևում է մինչև 1426 թ., երբ բերդին տիրում է կարա-կոյունլու (սև ոչխար) թուրքմեն տիրակալ Սքանդարը (Իսկանդար, 1420-1437), և գավառն անցնում է մահմեդական իշխողների տիրապետության տակ: Այս առիթով ԺԵ դարի նշանավոր գրիչ Թովմա Մինասենցը ցավով նշել է. «Անմխիթար կըսկիծ եհաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռն քրիստոնէից, և այն ևս առաւ ի մէնջ»[35]:

1467 թ. վերջերին Մակվի բանտից ազատվելով՝ գավառին և Հայոց աշխարհին ութ ամիս իշխում է Իսկանդարի եղբոր՝ կարա-կոյունլու թուրքմեն Ջհանշահի (1437-1467) որդին՝ Հասան Ալին: Սակայն շուտով՝ 1468 թ. հուլիսի 2-ին, Մարանդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ակ-կոյունլու (սպիտակ ոչխար) թուրքմեն տիրակալ Ուզուն Հասանի երեսունհազարանոց զորաբանակը պարտությամբ է մատնում կարա-կոյունլու վերջին փադիշահին (իմա՛ թագավորին, Ա. Հ.): Հայաստանը, այդ թվում և Արտազի շրջանն անցնում են ակ-կոյունլուների տիրապետության տակ: Այս դեպքերն իրենց արձագանքն են գտել ոչ միայն հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և մանր ժամանակագրություններում, այլև հայ միաբարական (ունիթորական) գրականության մեջ:

**Արտազ-Մակվի հայ կաթողիկե իշխանության բռնի մահմեդականացումն ու դարձը.** Լենկ Թեմուրի թոռ Օմարի բռնություններին տեղի տված և մահմեդականություն ընդունած երեք հայ իշխանների թվում էր նաև Մակվի հայ կաթողիկե իշխանը. «...Գ (3) իշխան յազգէս մեր, որ իբրեւ զճիռ մի ի մէջ ողկուզաց մնացեալ էր ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն. զորդի Իւանէին զթոռն Բուրթէլին՝ զԲուրթէլ անուն, յազգէ Օրբէլեանց զտէրն Որոտան եւ զեղբայր նորին Սմբատ անուն տարան ի Սմրղանդ, ընտանեօք իւրովք, զոր յետոյ ...դարձան ի հայրենիս իւրեանց: Եւ զտէրն Եղեգաց Տարսայիճ անուն՝ զորդի Գօրգունին ուրացողին. եւ զտէրն Մակուայ հանին՝ ի սուտ եւ յերկաբնակ ազգէն աղթարմայիցն. եւ ազատ որդի մի Աղիղան անուն՝ ի յԱյրարատեան գաւառէ, ի գեղջէն Աղցուց. զոր եւ յետոյ զղջացան եւ եղեն ճշմարիտ հաւատացեալք Քրիստոսի եւ ծառանք արքայութեանն»[36]:

Մեկ այլ տեղ պատմիչը նշում է Մակուի մահմեդականացած իշխանի անունը՝ «...Սօղըաթմիշն Մակուայն...», որը վերստին քրիստոնեություն է ընդունել[37]:

**Արտազ-Մակուն ԺԶ դարում.** դարասկզբից Մակվի գավառը, որ մտնում էր Ատրպատականի (Ադրբայջանի) կամ Թավրիզի նահանգի (վիլայեթ-

29 **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 444-445: Տե՛ս նաև **Վարդանյան Վ. Մ.**, նշվ. հոդվ., էջ 232: Նույնի՝ Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 92:

30 **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 400:

31 Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, քննական հրատարակութիւն **Հայկ Պէրպէրեանի**, Բարիզ, 1960, էջ 16 (այս երկը մեզ է հասել երկու խմբագրությամբ՝ համառոտ և ընդարձակ: Դրանցում Արտազ և Մակու տեղանունները ներկայացված են միասնաբար և հավասարազոր):

32 Նշվ. աշխ., էջ 32:

33 **Անասյան Ա.**, Թովմաս Կիլիկեցու աշխարհագրությունը, «Բանբեր Մատենադարանի» (այսուհետև՝ «ԲՄ»), № 8, 1967, էջ 282 (ի դեպ, «Տեսակք աշխարհաց և հանգամանք երկրի» անունը կրող աշխարհագրական փոքրածավալ երկի հեղինակ Թովմաս Կիլիկեցին Ասիայի և Մեծ Հայքի աշխարհագրության գլուխները գրելիս օգտվել է Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ից):

34 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (այսուհետև՝ ԺԴ, համապատասխան էջերով), կազմեց **Լ. Ս. Խաչիկյան**, Երևան, 1950, էջ 114:

35 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ (այսուհետև՝ ԺԵԲ, համապատասխան էջերով), կազմեց **Լ. Ս. Խաչիկյան**, Երևան, 1958, էջ 376:

36 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն (այսուհետև՝ **Թովմա Մեծոփեցի**, համապատասխան էջերով), աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 108-109:

37 Նշվ. աշխ., էջ 120:

38 Ատրպատականի (Ադրբայջանի) կամ Թավրիզի նահանգի (վիլայեթի) մեջ, Արտազ (Մակու) գավառից բացի, մտնում էին

քի)[38] մեջ, հիշվում է նաև պարսկերեն կալվածագրերում ու Իրանի շահերի հրովարտակներում:

Իսմայիլ Ա-ի շահի (1502-1524) կառավարման առաջին տարիներին երկրում անցկացվում է հողերի և եկամտաբեր այլ միջոցների ընդհանուր հաշվառում: 1504 թ. «Մակվի վիլայեթի մուլքերի և այլ ստացվածքների ստուգման և քննության [ժամանակ]» վերստին ստուգվում և հաստատվում են, որ «...այն կալվածները, որոնք գտնվում են ազնիվ քրիստոնյա Մանվելի որդի Թադեոսի և սրա որդի Միրիջանի ձեռքում, համաձայն շարիաթական փաստաթղթերի, ամբողջությամբ նրանց սեփականությունն ու մուլքն են, և նրանց տիրապետությունը այդ կալվածների ու մուլքերի նկատմամբ իրավացի տիրապետություն է, և ոչ ոք... այդ կալվածների նկատմամբ ոչ մի իրավունք և հավակնություն չեն կարող ունենալ»[39]:

ԺԶ դարի սկզբից Հայաստանը և Ատրպատականը դառնում են պարսկա-օսմանյան պատերազմների թատերաբեմ: Ռազմական գործողությունները կարճատև ընդմիջումներով և փոփոխական հաջողություններով տևում են մինչև 1639 թ. և ավարտվում Իրանի ու Թուրքիայի միջև Հայաստանի երկրորդ բաժանմամբ և պետական սահմանի վերջնական հաստատմամբ (երկու տերությունների միջև հայկական հողերի առաջին բաժանումը տեղի է ունեցել 1555 թ.): Այս ընթացքում Արտազ-Մակուն շարունակում էր մնալ Սեֆյան Իրանի կազմում և լինել պատերազմական գործողությունների թատերաբեմ: Մասնավորապես 1514 թ. Չալդորանի (Չալդրան) դաշտում տեղի է ունենում նշանավոր ճակատամարտ Իսմայիլ Ա շահի և օսմանյան սուլթան Սելիմ Ա Ահեղի (1512-1520) զորքերի միջև, որն ավարտվում է պարսիկների պարտությամբ ու Թավրիզի գրավմամբ: Սակայն շուտով շահը կարողանում է համախմբել իր ուժերը և հարկադրում թուրքերին նահանջել:

**Մակվի խանությունը ԺԸ-ԺԹ դարերում.** ԺԸ դարի վերջերին Մակու գավառի տարածքում ստեղծվում է նույնանուն խանությունը՝ վարչական կենտրոն ունենալով Մակու քաղաքը: Իր գոյությունը պահպանում է մինչև Ի դարի առաջին քառորդը:

Ըստ Իսքանդար Մունշիի կազմած «Թազքիրաք-ալ-Մուլյուք» աշխատության՝ ԺԸ դարի առաջին քառորդին Մակուն Նախիջևանի, Զարզբիլի (Ծար), Սադարակի, Մաղասբերդի, Բայազետի և քրդական Շաղիլու, Դումբուլի ցեղախմբերի երկու համայնքների հետ մտնում էր Երևանի խանության կազմի մեջ[40]:

Հայտնի է, որ բայաթ քոչվոր ցեղից Ահմադ սուլթանը, որ մեծ ծառայություն էր մատուցել Նադիր շահին (1735-1747) և փոխարենը նվեր ստացել Մակու քաղաքը, Խորասանում շահի սպանությունից (1747 թ.) հետո հաստատվում է Արտազում՝ իր հետ տանելով արքունական գանձերի մի մասը, ինչն էլ դառնում է խաների հարստության և իշխանության հիմքը[41]: Դրանով իսկ ստեղծվում է Մակվի խանությունը: Ահմադ սուլթանի որդին՝ Հյուսեին խանը, կառավարման ընթացքում ոչնչով աչքի չի ընկնում, սակայն 1819 թ. նպաստում է Թադեոս առաքյալի վանքի շրջապարսպի վերաշինությանը[42]:

**Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը.** 1826 թ. ամռանը սկսված ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում ռուսական զորքերը, մի շարք վճռական ճակատամարտերում (Շամքորի, Գանձակի և այլն) պարտության մատնելով Իրանի թագաժառանգ Աբաս-Միրզայի ընդհանուր հրամանատարությամբ գործող պարսից հիմնական ուժերին, գրավում են Շուշին, Երևանը և շարժվում հարավ, անցնում Արաքս գետն ու մտնում Ատրպատականի տարածք:

1827 թ. դեկտեմբերի 24-ին գեներալ-լեյտենանտ Ա. Ի. Կրասովսկու զեկուցագրում նշվել է, որ իրեն հասած լուրերի համաձայն՝ հաշտության պայմանագիր կնքելիս Մակվի խանությունը պետք է մնա Պարսկաստանի տարածքում, սակայն «Մակվի շրջանը Երևանի նահանգի մաս է կազմում: Բնությունը նրան շրջափակել է սարսափելի լեռներով և ձորերով, որոնք ծառայում են ձմեռային և ամառային անասնապահության համար: Ունի քշնամու համար անցանելի ջուր: Տեղադրությունն ասիական ամենազորեղ ուժերի համար անմատչելի է և աhարկու: Անցումը դեպի այս երկիր այնքան անհարմար է, որ 10 մարդ կարող է այն պաշտպանել՝ առանց վախենալու ասիական որևէ անքիվ զորքից: Այս երկիրն ունի 31 գյուղ, որոնցից 8-ը՝ հայկական, որոնցում հաշվվում է 500 տուն հայ: Մնացածում կա շուրջ 3000 տուն քուրդ...: Մակվի երկիրը մշտապես գտնվել է Երևանի խանի անմիջական ենթակայության ներքո...: ...1824 թ. Աբաս-Միրզան ողջ զորքով շարժվել է դեպի Մակվի շրջան՝ այն գրավելու նպատակով, սակայն նրա

---

նաև Վասպուրականի նահանգի Ճուաշ-ռոտ (Չորս), Մարակերտ (Մարանդ), Պարսպատունիք (Արասբար) գավառները և Պարսկահայք նահանգն ամբողջությամբ (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ, համապատասխան հատորներով և էջերով), հ. IV, Երևան, 1972, էջ 251):

39 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Կալվածագրեր, պրակ I, կազմեց **Հ. Դ. Փափազյան** (այսուհետև՝ **Փափազյան Հ.**, Կալվածագրեր, պրակ I, համապատասխան էջերով), Երևան, 1968, էջ 94: Վավերագրում Մակվի գավառի այս կալվածքների անունները չեն մասնավորեցվում: Կազմողի կարծիքով հետագայում սրանք նվիրատվություն են կատարել Թադեոս առաքյալի վանքին, իսկ մահմեդական կրոնական օրենքներին վերաբերող փաստաթղթերն էլ հանձնվել են վանքի դիվանին (տե՛ս նույն տեղում, էջ 160-162):

40 **Չոբանյան Պ.**, Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 46-47:

41 **Минорский В.**, Древности Маку (путевые заметки), Петроград, 1916, с. 26.

42 **Մինասեան Լ.**, Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 16-17 (արձանագրությունը տե՛ս սույն աշխ., էջ 171, արձ. ՀԹ):

կառավարիչը բացահայտ դիմադրություն ցույց տվեց և թույլ չտվեց նրան մոտենալ...: Եթե այս երկիրը մնա Պարսկաստանին, ապա այն կծառայի որպես անվտանգ բույն չար մարդկանց համար, որոնք կսպառնան Արաքսի երկու ափերին փռված Երևանի նահանգին: Իսկ եթե առաջվա պես մնա Երևանի կառավարչության կազմում, ապա այս երկիրը կծառայի խոչընդոտ պարսիկների և թուրքերի չարամիտ շարժումների համար»[43]:

**Թուրքմենչայի պայմանագիրը.** ռուս-պարսկական պատերազմն ավարտվում է Պարսկաստանի պարտությամբ, և Թուրքմենչայ գյուղում 1828 թ. փետրվարի 10-ին կնքվում է հաշտության պայմանագիր, ըստ որի՝ Արևելյան (Կովկասյան) Հայաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության ներքո: Արաքս գետը ճանաչվում է երկու պետությունների նոր սահման: Մակվի խանությունը մնում է Իրանի կազմում:

Պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն՝ պարսկական կառավարությունն իր հպատակներին իրավունք է վերապահում մեկ տարվա ընթացքում գաղթել ռուսական տիրապետության սահմանները, ընդ որում, ներգաղթողներին իրավունք է տալիս առանց որևէ մաքսի կամ հարկի տանել իրենց շարժական գույքը. «Ադրբեջան կոչվող մարզի (իմա՛ Ատրպատական, Ա. Հ.) բոլոր բնակիչներին և ասիճանավորներին... կտրվի, այսօրվանից հաշված, միամյա ժամանակամիջոց, որպեսզի նրանք իրենց ընտանիքներով հանդերձ կարողանան պարսկական մարզից ազատ անցնել ռուսական մարզերը, որպեսզի կարողանան դուրս կրել և վաճառել (իրենց) շարժական գույքը, առանց հանդիպելու կառավարության կամ տեղական իշխանությունների կողմից հարուցված որևէ արգելքի: Այդ անձանց կողմից վաճառվող կամ դուրս տարվող գույքն ու իրերը չպետք է ենթարկվեն որևէ մաքսի կամ հարկի: Իսկ անշարժ գույքի նկատմամբ սահմանվում է հինգամյա ժամանակամիջոց՝ այն վաճառելու կամ նրա վերաբերյալ կամայական կարգադրություն անելու համար»[44]:

Տվյալներից մեկի համաձայն՝ «Դաշնագրի մանրամասնութիւնները Ներսէսը ուշ իմացաւ և նորա սրտին ցաւ պատճառեց, նախ՝ որ Հայոց անունը յատկապէս չէ յիշուած մէջը, և երկրորդ՝ որ Մաքուի խանութիւնը պէտք է մնայ պարսից ձեռքում: Ներսէսը համարձակ ոճով մի նամակ գրեց Պասկևիչին, ցոյց տալով թէ որքան սխալ է գործել նա Մաքուն պարսից վերադարձնելով: Հպարտ Պասկևիչը շատ վիրաւորուեց Աշտարակցու գրութիւնից...»[45]:

Թուրքմենչայի պայմանագիրը մեծ նշանակություն է ունենում Արևելյան Հայաստանում հայ բնակչության ավելացման համար, բայց դրա փոխարեն հիմնովին փոխվում է Ատրպատականի, այդ թվում նաև Արտազ գավառի ազգագրական պատկերը:

**Մակվահայության գաղթը.** գաղթի իրականացման հետևանքով կարող էր խախտվել Ատրպատականի տնտեսական և քաղաքական վիճակը, ուստի պարսիկ իշխանավորները տեղի հայ հոգևորականության աջակցությամբ ամեն կերպ աշխատում էին խանգարել գործընթացը[46]: Սակայն Ներսես Աշտարակեցի արքեպիսկոպոսը, գնդապետ Հ. Լազարյանը (Լազարևը), Իրանում Ռուսաստանի դեսպան, գրող Ալ. Գրիբոյեդովը և այլք կազմակերպում ու խումբ առ խումբ Պարսկաստանից Արևելյան Հայաստան են գաղթեցնում հազարավոր հայերի: Արդյունքում 40.000 անձ[47] ներգաղթում է նորաստեղծ Հայկական մարզ:

Պարսկահայերի գաղթին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հանձնարարությամբ մեծապես օժանդակել է Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը. «...Մինչ ես նուաստ Բարսեղ եպիսկոպոսս սրբազան Առաքէլոյն Թադդէոսի և վիճակաց նորին առաջնորդ լինէի ի Խոյ քաղաքի ի վիճակս իմ ի թուականութեան և ի 5

43 “Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828 гг.”, сост.: **Эвоян В., Казарян Э., Мирзоян С., Оганесян Дж.,** «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ «ԲՀԱ»), 1978, № 2, էջ 207 (բնագրում՝ “Макинский округ есть часть Эриванской провинции, природа окружила его ужасными горами и ущельями, служащими для скотоводства зимой и летом, имеет воду, непривлекаемую неприятелем. Местоположение оного неприступное и страшное для самой сильнейшей азиатской силы. Проход в страну сию так неудобен, что 10 человек может безопасно сохранить оный, не опасаясь никакого бесчисленного азиатского войска. В стране сей состоит 31 деревня, из них 8 армянских, в коих считается 500 дворов армян. В оных вмещается около 3000 дымов куртинцев... Страна макинская состояла всегда под непосредственным влиянием эриванского хана... В 1824 году Аббас-Мирза со всем войском своим двинулся к Макинскому округу, с намерением вступить в оный, но правитель оного явно воспрепятствовал ему в том, и недоступил его приблизиться... Если страна сия останется за Персиею, то послужит она безопасным гнездом злых людей, угрожающих части Эриванской провниции, по обеим сторонам Аракса лежащей, ежели же будет состоять по прежнему в ведомстве эриванского правления, то страна сия послужит преградою всех злонамеренных движений персиян и турок”).

44 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 71-72:

45 **Երիցեանց Ա.**, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX-րորդ դարում, մասն Ա (1800-1832 թթ.), Թիֆլիզ, 1894, էջ 323:

46 **Դեմիրջեան Վարդան**, Հայ գաղթականական հոսանքներ Ատրպատականից դուրս եւ բռնի տեղափոխումը դէպի Ատրպատական, ԴԱՀՊ, հ. Բ, էջ 156:

47 **Աճառյան Հր.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 241:

դեկտ. ամսոյ յայնժամ ընկալայ ի Ներսէս սրբազան արքեպիսկոպոսէ և ի ծայրագոյն հոգևորական կառավարչէ դասուցս հոգևորականաց նամակ իմն, յորում գրէր յԵրևանայ իմոյ նուաստութեամբ նաև այնու, հարցումն ցիս հարցանէր այսպէս՝ թէ հնարաւոր իցէ արդեօք զամենայն Ատրպատակային Հայազնեայսն մեր անցուցանել յայնկուսէ յայսկոյս Երասխ գետոյն, ի ներքոյ հովանաւորութիւն ողորմածագունեղի կայսերն Ռուսաց և յատկացեալ թագաւորի Հայոց, զի սիրելի ազգն մեր Հայոց, ազատս կացցէն ի հարիւրաւոր ամեայ պարսկային անըմբերելի բռնութեանցն:

Ապա յ7 ի նոյն յիշեալ ամսոյ, զկնի երկուց աւուրց այլ իմն գիր ևս ժամանեաց առ մեզ ի գերապատիւ պօլկօվնիկ Աղայ Եղազարէն Լազարովեանց Մօսկովեցւոյ, մինչ էր սա ինքն ի գիւղաքաղաքն Տուխարզան, որ հեռի է ի Դաւրիժու 40 վերստ ճանապարհաւ: Սոյն քարտէն ևս համաձայն գտանիւր սրբազան Ներսէս արքեպիսկոպոսի գրութեան, զի գրեր յորդորմամբ սիրելի բազմավիատ ազգն իմ հայոց բացցեն զհոգւոյս զաչս իւրեանց և տեսցէն քրիստոսապսակեալ կայսրն ամէնողորմած և եկեսցէն ընդ հովանեաւ խնամատարած թևոց նորա և կեցցէն ի յանդորրու վիճակ ցհաւիտեան զերծեալք ի հեթանոսական հարստահարութեանց:

...Եւ ապա յօր իններորդի դեկտեմբերի բազումս ստիպելով զխօջէցի Մարգար աղայն մահտեսի Եղիազարեան առեալ զնա ընդ իմ դիմեալ գնացաք ի Դաւրէժ և ի 12 նոյն ամսոյ մուտ գործեցաք ի նմին քաղաք և մինչ ոչ էր անդանօր գերաստիճան Պասկովիչ կուսակալին, ելաք այտի գնալ ի Տուխարզան գիւղաքաղաքն և ուր ժամանեալ մեր և անդ գտաք զյիշեալ կուսակալն, ընդ նմին անդ էր և Աղայ Եղազարն, ընդ որս և մեծ շահզատայն մեծ քաղաքին Դաւրիժու, Նայիպի սուլթանայն անդ ևս էր, այն, որ վարէր զիշխանութիւնն իւր ի Դաւրէժ քաղաք, Ապպազմիրզայ կոչեցեալ արքաորդին և ուր անդ միաբանեալ ընդ միմեանս կամէին արկանել զհիմն հաշտութիւն և մնացեալ մեր յայն գիւղաքաղաք յութն օր յաւուր տօնի ծննդեան ըստ ռուսաց, այս է 25 դեկտ. ի 1827 ամին այժմ տեսաւորեցաք ընդ բարձր գերապատիւ Պասկովիչ կուսակալին և ապա բացածանուցաք նմա զմիտս. և զառիթ առ նա դիմելոյն մերոյ, յայտնելով նմին նաև՝ զմիտս գրութեանցսն սրբազան Ներսէսի արհեպիսկոպոսոյն և Աղայ Եղազարին, և ապա խօստացաք նորին բարձր մեծութեան այսպէս ասելով՝ թէ ախորժիք և լինիք մեզ ձեռնտու: Մեք կարող եմք սիրայորդոր քարոզութեամբ մերով զմիտս ազգին մերոյ Հայոց գալ և չուել զամենեսին և վերաբնակել նոցա յայնկոյս Երասխայ գետոյն, օրհնեցեալ տէրութեան Ռուսիոյ մեծի: ...Յաւարտ այսոցիկ ամենայնի որպէս պայմանադրեալ էր մեզ Բարձր կուսակալ Պասկովիչն, եկն յ8 յունվարի ի Տուխարզանայ ի քաղաքն Դաւրէժ և մեր զկնի երից աւուրց տեսեալ զմեծութիւն նորին, ընկալաք ի նմանէ զնոր խոստացեալ հրամանագիրս ի վերա կողմնական և քաղաքական նաչալնիկացն, որք ի Մարաղա, յՈրմի, ի Սալմաստ և ի Խօյ ի վերայ Մարաղայու Բաքրանտիւ դեներալին, Սալմաստու և Որմիայ Լափթիւ դեներալին, և քաղաքին Խոյա Նիկոլայ Վասիլիչ Վիսոցկի պօլկօվնիկին, որ ինքն գրեաց իւրաքանչիւրոցն այսպէս թէ՝ սոյն գրաբեր Բարսեղ արքեպիսկոպոսն և առաջնորդն Թադդէոս Առաքելոյ վանաց և վիճակացն, յորժամ քարոզէ յերկիրն Սալմաստու, յՈրմիայ և ի Խօյ առ ի չուեցուցանելոյ զժողովուրդս իւր, զազգն հայոց, դուք ևս գտջիք սմա ձեռնտու և սատար, զի ահա ճշմարիտ յանձնառու եղև առ ի քարոզութեամբ զամենայն հայազնեայց չուեցուցանել յայնկոյս Երասխայ գետոյն ի վերաբնակեցուցանել զնոսին յերկիր օրհնաբանեալ կայսերական ի Նախիջևան, ի յԵրևան, ի Շարուր, Ագուլիս և ի Տերելեկեզ և յայլ գաւառս մեծին Ռուսիոյ, մանաւանդ թոյլ տայցէմ սոցա իշխանաւորքն պարսից գնալ յայնկոյս գետոյն անվնաս:

Ի կուսակալ Պասկովիչէն զամենայն ազգային խնդիրս մեր ելս առեալ ի քաղաքէն Դաւրիժու, դիմեցաք նախ ի գաւառն Սալմաստայ և անդէն սկիզբն արարաք քարոզութեամբ յորդոր լինելոյ Ազգին հայոց և ապա դիպեցաւ մեզ Նախավկայի սուրբ վանաց Սարգիս վարդապետ, որ և աջակցեալ ընդ մեզ, գտաւ մեզ ձեռնտու յորդորմամբ զժողովուրդս, այսպիսի անձնադիր բարեփոյթ քարոզութեամբ ի միջոցի 8 ամսոց, ի քաղաքաց, ի գիւղից գաւառացն Դաւրիժու, Մարաղայու, Խոյա, Սալմաստու, Որմիայ, Մակուայ, Սէօքմէնաւայու, Չալտրանայ, Աւաճուղայ և յայլոց նահանգաց, յորս գտանիւր յազգէն մերմէ Հայոց, ի տումար արկանելով, մետասան հազար տունս հանաք և չուեցուցաք զնոսին յայսկոյս Երասխ գետոյ, ի միշտ օրհնեցեալ երկիրս ողորմածագոյն կայսերն ամենայն Ռուսաց և յատկական թագաւորի Հայոց մերոց Նիկօլայ Պաւլօվիչին: Եւ արդէն իսկ կան վերաբնակեալք յԵրևան, ի Նախիջևան, յԱգուլիս, ի Շարուր, ի Տերելեկեզ և այլ և այլ քաղաքս և ի գաւառս ըստ հաւանութեան իւրեանց և զերծ յամենայնէ բարբարոսական բռնութեանց գտեալ անլսելի գոհունակութեամբ տեառն Աստուծոյ, օրհնեալ են, օրհնէին և միշտ ունին օրհնել զանգին կեանս ամենաբարեպաշտ կայսրութեան Մեծին Ռուսիոյ: ...Ես նուաստ Բարսեղ եպիսկոպոս զայսոսիկ զամենայն գործսն իմ բարձր հրամանաւ սրբազան Ներսէս հօրս յաւուրդ բերեալ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչի յօր ելմանն ի վիրապէն, ես ևս անձամբ անձին ելեալ ի Խօյ քաղաքէն, ի վիճակէն սրբազան առաքելոյն իմոյ Թադդէոսի, ահա ես և մանկունք իմ ասելով դիմեալ գնացի յԵրևան, ի Մայր սուրբ Աթոռն մեր Էջմիածին:

Յայս գնալն իմ յԱքոռն տարայ ընդ իս զամենայն զկայս և զգոյս վանաց իմոց սրբազան առաքելոյն Թադդէոսի, զեկեղեցական զսրբազան անօթս որպէս և իցէ, նաև զամենայն զարտաքսական և զներքսական կայսն՝ զգրքեղէնս, զպղինձեղէնս, զհարկաւոր հանդերձեղէնս, զպաշարեղէնս և զոչխարեղէնս և զայլսն զամենայն գոյիւ չափ զբովանդակ ինչս, վանացն սրբազան առաքելոյն Թադդէոսի հասուցի յԱքոռն Սուրբ Էջմիածին և մի առ մի ընդ տումարաւ արկեալ յանձնեցի զամենայն սրբազնագոյն սուրբ վեհապետին Եփրեմայ Առաջնոյ և նորին հոգևորական սրբազան կառավարութեան, սրբազան հարցն, նաև՝ ըստ մասնեայ յամենայն տեսակացն գոյից, թողաք ի նոյն սուրբ վանս ըստ կարևորեալ պիտոյիցն»[48]:

1828 թ. հունիսի 13-ին Մաղարդավանքի առաջնորդ Սարգիս վարդապետ Դավքյանը նամակ է հղում հասարակական գործիչ Խոյեցի Մարգար Եղիազարյանին գաղթն արագացնելու խնդրանքով. «...դուք մի մոռանայք ջանադիր լերուք ձեր յառաջադրեալ բանիցն վասն ազգին, որ օր յառաջ անցուցանեք ի սահմանս ռուսաց և հայոց այս կողմն Երասխին...»[49]:

Գաղթի հետևանքով դատարկվում են Արտազի հայկական 80 գյուղերը: Դրանցից շուրջ 10-12 գյուղեր Թադեոս առաքյալի վանքին ենթակա բնակավայրեր էին: Վանքին մոտ գտնվող միայն մի քանի գյուղերում սակավաթիվ ընտանիքներ են կառչած մնում հայրենի օջախներին[50]:

Մակվահայերը գաղթել են երկու անգամ. «...1827-29 թ. ռուս-պարսկական և ռուս-տաճկական, ինչպէս 1853-56 թ. Ղրիմի պատերազմների ժամանակ, երբ Մակւայ խանութեան մէջ ապրող հայերը գաղթեցին դէպի Արարատեան դաշտը...»[51]:

Անդրադառնալով գաղթին՝ 90 տարի անց գրվել է. «Մակուայ գաւառ (Արտազ)... Գաւառի ո՞ր կողմն անցնես հայկական յիշատակի բեկորների չը հանդիպես: Գաւառի թրքաբնակ գիւղերի մեծամասնութիւնը հայանուն է կրում, գաղթել է արտազցին շաբունակ, իսկ 28 թուին մի մասը, անցնելով սահմանակից Մայր Արաքսը հիմնեց այժմեան Դաւալու մեծ գիւղը, իսկ մեծամասնութիւն կազմողը՝ այլ և այլ տեղեր: Պատմական մեծ գաւառի յայտնի ս. Թադէի վանքը, ճիշտ դէմ առ դէմ կանգնած Սանդուխտ կուսի փոքրիկ մենաստանը, իրենց ծաղկեալ վիճակումն էին գտնուում...

Ուրմի, Սալմաստ, Խոյ և Մակուայ գաղթականութեան մեծամասնութիւնը բռնեց Արարատեան դաշտի այն մասերը, որոնք մօտ էին Էջմիածնին ու Արաքսին...

Ատրպատականի հայոց գաղթականութեան այն խոշորագոյն մասը, որոնք բնակավայր ընտրեցին Գառնի, Ծաղկաձոր (Դարաչիչակ), Նախիջևան, Սուրմալու, Կարբի, Զանգի, Աբարան գաւառները, կարճ ժամանակամիջոցում կարողացան փոքրիշատէ նոր, աւելի հիմնական օջախ ստեղծել...»[52]:

**Մակվի խանությունը ԺԹ դարի վերջին քառորդում.** Հյուսեին խանին հաջորդած Ալի խանը համեմատաբար ավելի ուժեղ տիրակալ Ահմադ սուլթանի թոռն էր և Հյուսեին խանի որդին: Ալի խանը կառավարել է շուրջ 30 տարի և վախճանվել մոտ 90 տարեկանում (հավանաբար 1865 թ.)[53]:

Ավելի մեծ ճանաչման է հասնում վերջինիս հաջորդած որդին՝ Թեյմուր խանը: Նա կամքի մեծ ուժ ուներ, անսպառ եռանդ, զբաղվում էր ավարառությամբ ու թալանով և իրեն անկախ էր պահում կենտրոնական իշխանությունից: Նրա կառավարման տարիներին մեկ անգամ չէ, որ մայրաքաղաքից ժամանած պետական պաշտոնյաները հեռացվել են Մակվից: Թեյմուր խանը հնազանդեցնում և իր իշխանությանն է միավորում տարածաշրջանի անհնազանդ բոլոր տարրերին, հատկապես քրդերին՝ նրանց ևս մասնակից դարձնելով անօրինակ թալանին:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Թեյմուր խանը զենքի ու զինամթերքի մեծ պաշարներ է կուտակում:

1881 թ. սարդարի (Էդբալ-օլ-սալթանե) կազմակերպած արշավանքը դեպի Ուրմիա, որտեղ տեր ու տիրական էին թուրքահպատակ շեյխ Ուբեյդուլլայի (Իբայդուլլահ) քուրդ հրոսակները, էՙլ ավելի է մեծացնում խանի հեղինակությունը: Ի դեպ, այդ ար-

48 Մատենադարան, ֆ. 49բ, թղթ. 152, գ. 118:

49 “Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828 гг.”, «ԲՀԱ», 1978, № 2, էջ 236:

50 Իրանի թագաժառանգ Աբաս-Միրզայի ձեռնարկած որոշ զիջումների շնորհիվ պարսկահայության մի մասը հրաժարվում է գաղթելուց: Հավանաբար այս շրջանին է վերաբերում Հաթեմ Խան Սուլեյմանի հրամանագիրը (անթվակիր), որտեղ կարդում ենք. «Որովհետև Իսրայել *խալիֆայի* մահվան պատճառով Հիսուսի ժողովրդի օրինական գործերը հետաձգվել ու բարձիթողի վիճակում էին հայտնվել, անհրաժեշտ էր, որ որևէ մեկը նրա տեղը զբաղեցնի և հետևի *վիլայեթի* հայերի գործերին: Ուստի Աստծո հովանու ներքո գտնվող բարձրաստիճան Ամիր Նեզամի *թալիղեով* կարգադրվեց, որպեսզի Ուչքիլիսայի օջախից ժամանած խորամիտ Պողոս խալիֆան Մակվի վանքում մնա և զբաղվի վիլայեթի հայերի հավատի գործերով, որպեսզի հետագայում նրա կապակցությամբ բարձրագույն սարքարից ստացվելիք հրամանագրին համապատասխան գործադրվի»: Վավերագիրը պահվում է Մելիք-Թանգյան թանգարանի արխիվում, 44 թվահամարի տակ: Տե՛ս **Haghnazarian A.**, Das Armenische Thaddдus Kloster in der Provinz West Aserbaidjan in Iran (Doktor-Ingenieurs genehmigte Dissertation), Aachen, 1973, էջ 232, № 6: Նյութի բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

51 «Դրօշակ», 1902, № 9, էջ 130:

52 **Օհանեան Ե.**, Ինճուտն ամեակ, «Զանգ», 1919, № 5, էջ 4:

53 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, “Материалы по изучению Востока”, вып. 1, С.Петербург, 1909, с. 6.

շավանքից հետո Թեյմուր խանին շնորհվում է Մակվի տիրակալ անվանումը[54]:

1890 թ. նշվել է, որ «Մակու կիսանկախ մի գաւառի կեդրոնն է, Թէմուր աղա կոչուած ցեղապետի կառավարութեան տակ, որին, ինչպէս և իր ցեղակիցներին կը պատկանին գաւառին բոլոր հողերը, իսկ երկրագործ գիւղացիք վարձկաններ են աւատական դրութեամբ: Այդ իշխանն իր վիճակ խաղաղ դրութեան մէջ պահած է, աւազակութիւնները զսպելով արևելեան խստութեամբ»[55]:

Թեյմուր խանը վախճանվել է մոտ 70 տարեկանում՝ 1895 թ.[56]: Նրան հաջորդում է որդին՝ Մակվի վերջին սարդար Ալի Ղուլի Մուրթուզա խանը (ծնվել է 1863 թ.), որը «...իր հօր հակապատկերն է - հիւանդոտ, վերին աստիճանի կասկածոտ ու փոփոխական մէկն է. ամեն տարի ճանապարհորդում է Կովկաս ու հեռու է մնում տեղական ղալմաղալից, իրան վէքիլ դնելով մէկ ուրիշի»[57]:

Ի դեպ, խանի՝ իշխանության գլուխ անցնելու առնչությամբ Ամենայն Հայոց Մկրտիչ Ա կաթողիկոսն ուղարկել է շնորհավորական ուղերձ, որտեղ մասնավորապես նշվել է. «Ձեր բարեյիշատակ և արդարասէր հօր մահը մեծ վիշտ պատճառեց մեզ, այն Մեծ խանին, որ երկար տարիներ իբրև ժողովրդի հայր արդարութեամբ և խաղաղութեամբ խնամում էր իւր ժողովուրդը, մանաւանդ մեր փոքրաթիւ հայ ժողովուրդը, որոնց վրայ ունեցած հայրական խնամք և հոգածութիւն շատ շատ է և որոնց սրտի մէջ միշտ անմոռաց պիտի մնայ հանգուցելոյ յիշատակը. այս մասին մեք ևս ցաւակից լինելով Մակուայ ժողովրդին աղօթում ենք Ձեր հօր հանգստութեան համար:

Լսելով ձեր բարեմասնութիւնները և առ ժողովուրդն ունեցած խնամքը, որ սիրում էք հետևել Ձեր Հօր ուղղութեան և արդարութեան ամէնքին վրայ հաւասար խնամք ունենալով, մանաւանդ Վեհափառ Շահի կողմիցն ևս գնահատուած լինելով Ձեր բարեմասնութիւններ իբրև արժանաւոր հօր արժանի ժառանգի, որ Ձեզ է յանձներ նորա իշխանութիւնը: Մենք անհունս ուրախ եմք այդ մասին և առ այդ իսկ կը յայտնեմք մեր շնորհաւորութիւնը և ուրախութիւնը...

Մեք կը յուսամք որ՝ մեր ժողովուրդ ինչ երջանկութեամբ և ինչ խաղաղութեամբ որ ապրում էր Ձեր Հօր հզօր հովանեաց տակը, վայելելով ամէն բարիքներ և երջանկութիւնը: ...Յանձնում եմք Ձեզ Աստուածային պաշտպանութեան և մեր ժողովուրդն Ձեր խնամոյ»[58]:

**Մակվի խանությունը Ի դարի առաջին քառորդում.** 1903 թ. դեկտեմբերի 20-ի լրատվություններից մեկի համաձայն՝ «...Մակուայ Թէմուր խանի որդին խորամանկութեամբ թալանեց պարսկահպատակ մի քիւրդ ցեղապետի և քշեց նրան իր տուն-տեղից: Դրա պատճառով աշիրէթները միացած տաճկասահմանաբնակ զօրքերի ու քրդերի հետ՝ յարձակւեցին Մակուայ Չալդերանի մասի վրա, բերին մեծ քանակութեամբ թալան - ոչխար, տաւար ևն, աւերեցին գիւղեր և սպանեցին 30-ից աւելի մարդ, որոնց մէջ կային մի քանի սէյիդներ ու վաճառականներ: Այս դէպքից յետոյ պարսկասահմանաբնակ քիւրդեր՝ հէյտարանցի, բռուկցի, մօտկցի ևլ ցեղերից՝ 750 տունից աւելի գաղթեցին դէպի Յապաղայի ու Բայազէդի շրջանում, իրենց ցեղապետների մօտ»[59]:

Մուրթուզա խանը ստացել է «Իկբալուս-սլաթանե» կոչումը (1905 թ. դրությամբ ուներ երկու որդի՝ տասնամյա Աբաս փաշա խանը և երեքամյա Ռիզա Ղուլի խանը, և մեկ դուստր):

Գահընկեց է արվել 1925 թ.[60]: Դրանով իսկ վերացել է Մակվի խանությունը:

Մակվի սարդարն ուներ իր բանակը, անկախ էր կենտրոնական իշխանությունից և Իրանի շահին տարեկան միայն մի փոքր գումար տուրք էր վճարում: Պաստոր Հանս Ֆիշերը, որը ԺԹ դարի վերջին քարոզչական գործունեություն էր ծավալել Ատրպատականում, նշել է, որ խանի իշխանության տակ էին գտնվում մոտ 600 թաթար (թուրք) և ավելի քան 1000 քրդական գյուղ[61]: Մեկ այլ տվյալով՝ բնակչության աճի և ըստ այդմ գյուղերի ավելացման հետևանքով խանության ենթակայության ներքո գտնվող գյուղերի քանակը շուրջ 50 տարվա՝ 1852-1905 թվականների ընթացքում 60-70-ից հասել է 300-ի[62]:

Հարկ է նշել, որ կար տեսակետ, թե՝ «...կարելի է դրամով գնել Մակուայ խանութիւնը, հաստատուել այնտեղ եւ՝ աստիճանաբար լայնացնելով այդ շրջանը՝ թափանցել Թուրքահայաստան»[63]: Այդ

54 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 5.

55 «Մշակ», 1890, № 147, էջ 3:

56 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, էջ 6:

57 **Նժդեհ,** Մակու, «Մուրճ», 1903, № 4, էջ 134-137: Մակվի խանության քաղաքական պատմության ընդհանուր ուրվագիծը տե՛ս նաև **Ֆրանգեան Ե.,** Մակուի խանութիւնը, «Տարազ», 1904, № 9, էջ 72-75 (խանության մասին հոդվածաշարը շարունակվում է № 10, էջ 89-91; № 12, էջ 113-115; № 15, էջ 144-147): **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 4-6, 54.

58 Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. 56, ց. 14, գ. 43, թ. 41:

59 «Դրօշակ», 1904, № 2, էջ 22-23:

60 Ալի Ղուլի Մուրթուզա խանի կառավարման վերջին օրերի ականատեսը գրել է. «[1925 թ. ամռանը Մակու] ... քաղաքում զինուորական շարժում և իրարանցում կար: Ատրպատականի Զինուորական Ընդհանուր Հրամանատար Արդըլլահ Խան Թահմասբին իր զօրաբանակով Մակու եկաւ և առանց ընդդիմութեան հանդիպելու վերջ տուեց Ալի Ղուլի Մորթուզա Խանի սարդարական ինքնիշխանութեան...» (**Ամէնեան Հ.**, Ս. Թադէի վանքը, մասն I, Թեհրան, 1959, էջ 15): Տե՛ս նաև **Բայբուրդյան Վ.**, Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 599:

61 **Pastor Hans Fischer,** Das Kloster des hl. Thaddäus, Der Christliche Orient, Hheft XI, Nov. 1897, s. 510-511.

62 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 4.

63 **Գիլխանդեան Ա.**, Յեղափոխական շարժումը Վանի մէջ, «Հայրենիք», 1939, № 7, էջ 142:

տեսակետի հեղինակն էր Արսեն վարդապետ Թոխմախյանը:

Ի դարասկզբին, երբ ռուսական կառավարության հրամանով բռնագրավվում էր եկեղեցապատկան գույքը, 1903 թ. սեպտեմբերի 16-ին Թադեոս առաքյալի, Խոյի և Մակվի առաջնորդ Գևորգ ծ. վարդապետ Նալբանդյանը գրություն է հղում Պարսից արքայից արքային ռուսական իշխանություններից այն պաշտպանելու խնդրանքով. «Ս. Էջմիածնայ և հետևորդ եկեղեցեաց շարժական և անշարժ կալուածներն մեծ մասամբ մեր Արեգնակափայլ Շահերու և մեր նախնեաց նուիրատուութիւնքն եղած են, զորս այժմ ռուս կառավարութիւնը գրաւել կուզէ. այս մասին թէմիս Մակու և Խոյ իրենց շրջակայ բոլոր գիւղերու ազգայինքն իմ միջոցաւս կը խնդրեն Տէրութենէդ, որ բարեհաճիք հարկ եղած բոլոր միջոցներով մեր ժառանգական և այս սուրբ իրաւունքին պաշտպան կանգնել»[64]:

Երկու օր անց «...վանահայր և առաջնորդ Ս. Թադէի, Խոյի և Մակուի» Գևորգ ծ. վարդապետը գրում է Ամենայն Հայոց Մկրտիչ Ա կաթողիկոսին ռուս կառավարության եկեղեցապատկան կալվածքների բռնագրավման վճռի դեմ հանրության բարձրացրած բողոքների մասին. «Արարատեան մեր Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի և տեղւոյն համօրէն վանօրէից և եկեղեցեաց շարժական և անշարժ կալուածոց անարդար բռնաբարութեանց դժբաղդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ս. Թադէի Առաքելոյ վանուցս թեմի ազգայնոց մէջ, սրտերնին համակ խոցուած դիմեցին նուաստիս հանրագրութիւններով՝ միահաղոյն կը բողոքեն ռուս կառավարութեան բռնակալութեանց դէմ... Թէմիս հանրագրութիւններն ներփակած եմ, որք են Մակուէն, Քիշմիշթէփէէն, ս. Թադէի վանքի գիւղէն, Խոյէն, Սէյդավայէն, Տիզէ, և Շուաւ, և Մահլազան և այլն գիւղերէն»[65]:

Ըստ 1907 թ. ապրիլի 21-ի տեղեկատվություններից մեկի՝ «Իսխանի և Մակուայ մէջ, ինչպէս նաև Երևանեան նահանգի սահմանագլխի վրայ խառնակութիւններ ծագեցան: Մակուայ խանը Էնջիւմէնի կուսակցութեան հնազանդիլ չուզելուն համար վռնդուած է: Խանը յաջողեցաւ Նախիջևան փախչիլ և անկէ Երևան հասնիլ: Իր ապարանքը և գանձերը թալանուած են»[66]:

Ի դեպ, Մակվի Ալի Ղուլի Մուրթուզա խանը, որն ապստամբության ժամանակ փախել էր Մակվից, մայիսի 23-ի լրատվությամբ գաղտնի վերադառնում է Մակու՝ իշխանությունը վերստին զավթելու նպատակով[67]:

1907 թ. հունիսին Մակվի խանության գյուղացիները «...ռուսական առաջին հեղափոխության հուժկու ազդեցությամբ արթնացել ու գլուխ էին բարձրացրել իրենց շահագործողների դեմ և տեղերում իրենց խորհուրդները՝ անջումանները հաստատելուց հետո եկել-շրջապատել էին խանական որջը, որպեսզի գրավեն այն ու ոչնչացնեն խանական հողատիրությունը, ֆեոդալական իրավակարգը»[68]:

Ի դարի սկզբներին Մակվի սարդարի՝ կենտրոնախույս քաղաքականություն վարելու հետևանքով բավական աշխուժացած քրդերի ասպատակություններից ծանր դրության մեջ էր հայտնվել Մակվի թեմը: Մտահոգված նման վիճակով՝ Ատրպատականի թեմի առաջնորդ, անվանի հայագետ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը 1909 թ. դեկտեմբերի 12-ին Մատթեոս Բ կաթողիկոսին գրում է. «...ի վիճակին Մակուայ, որոյ տէր և դատաւոր սարդարն ո՛չ իմիք հպատակի իշխանութեան, ազատօրէն ասպատակեն քուրդք և քանի մի անաւրէնք յառաջ քան զայս սպանին զերիս հայս, որք յուղի անկեալ գային ի փոքրիկ գեղջէ ի վանս ս. Առաքելոյն Թադէոսի»[69]:

1911 թ. մայիսի 5-ին Տեր-Մկրտչյանը զեկուցագիր է հղում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին. «Մակուի վիճակը իւր պատմական նշանակութեամբ ու աշխարհագրական դիրքով այնպիսի կարևորութիւն ունի հայութեան համար, որ ամէն ջանք գործ պէտք էր դնել, եթէ հնար էր, այդտեղի հայերի թիւը բազմացնելու և երկու հոյակապ վանքերը շատ աւելի բարեզարդ վիճակի մէջ դնելու, ոչ թէ եղած իսկ աւերակի մատնելու: Ես ամէն կերպ կը ջանամ իմ պարտքը կատարել այս նկատմամբ...»[70]:

1911 թ. հունիսի 29-ին կաթողիկոսական տեղապահ Գևորգ Ե Տփղիսեցու (Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1911-1930 թթ.) կարգադրությամբ կազմակերպվում է ավերված հայ գյուղերի կարոտյալ բնակիչներին օգնություն բաշխելու գործը[71], ինչպես նաև Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանին հանձնարարվում է այցելել վանք՝ վանահոր սպանության և ավերածության հանգամանքները քննելու համար: Բացի այդ՝ Կովկասի փոխարքայի պաշտոնակատարից խնդրում է, որ Թավրիզի ռուսական գեներալ-հյուպատոսը պահակախմբով ապահովի թեմական առաջնորդի անվտանգությունը տեղում, ինչպես նաև հարկավոր ցուցումներ տա Մակվի և Ղարադաղի խանությունների հայ բնակ-

64 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է. Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907), կազմ.՝ Բէհբուդեան Ս., Երեւան, 2000, էջ 149:

65 Նշվ. աշխ., էջ 151:

66 «Դրօշակ», 1907, № 4, էջ 64:

67 “Русское слово”, 06 июня (24 мая) 1907 года.

68 **Ավդալբեգյան Խ. Հ.**, Գյուղացիական շարժումը Իրանական Ադրբեջանի Մակվա մարզում 1907 թ., «ՊԲՀ», 1968, № 2, էջ 181:

69 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ. **Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան** (1866-1915), կազմ.՝ Ավագյան Գ., Երևան, 2006, էջ 158:

70 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 231:

71 «Արարատ», 1911, էջ 619:

չությանն ու Թադեոս առաքյալի վանքը պաշտպանելու համար[72]:

Այնուհետև Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը հուլիսի 2-ին հատուկ հեռագրով դիմում է Պարսից պետության խնամակալ Աբուլ Կասեմին՝ խնդրելով «...յարգանօք պաշտպանել Ղարադաղի հայերին և Մակուայ Կարավանքը (Ս. Թադէոս առաքեալի վանք), որոնք ենթարկուած են խաների աւերածութեանց»[73]: Մի քանի օր անց՝ հուլիսի 6-ին, Աբուլ Կասեմը պատասխանում է. «Ղարադաղի և Մակուի հայ ժողովրդեան ապահովութիւնը շատ մոտ է իմ սրտին: Հրաման է արձակուած նրանց բնակավայրերում վերականգնել խաղաղութիւնը և պատժել յանցաւորներին: Հաւաստի եղէք իմ սրտանց բարեացակամութեան»[74]:

Ղարադաղի և Մակվի խանությունների հայկական գյուղերի թալանի ու ավերի, մարդկային կորուստների ու Թադեոս առաքյալի վանքի վանահայր Թադիկ աբեղայի սպանության կապակցությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսը 1911 թ. հունիսի 29-ին կարգադրում է Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիայի[75] նախագահ Եփրեմ եպիսկոպոսին և Բաքվի գործակալ Եղիշե ավագ քահանա Գեղամյանցին «ստանալ բարեսէր անձանց ամեն տեսակ նուէրները և ուղարկել Ատրպատականի Հայոց Թեմական Խորհրդին Ղարադաղի և Մակուայ խանութեան աւերուած հայ գիւղերի կարօտ բնակիչներին բաշխելու համար»[76]:

1911 թ. հուլիսի 15-ին Սբ. Էջմիածնի սինոդը[77], Մայր Աթոռի կողմից իբրև նպաստ, Ատրպատականի հայոց թեմական խորհրդին ուղարկում է 200 ռուբլի՝ «բաշխելու Ղարադաղի և Մակուայ արկածեալներին ...յանձնարարելով բաժանել դրամը համեմատ իւրաքանչիւր ընտանիքի կարիքին»[78]: Հուլիսի 23-ին Գևորգ արքեպիսկոպոսը դիմում է Մակվի սարդար Թեյմուր խանին՝ խնդրելով նրան «խնամք ունենալ իւր իշխանութեան մէջ եղած հայերի և վանքերի վերայ և Ս. Թադէոս առաքեալի վանքի պատճառով ամբաստանուած բանտարկեալներին արձակել, որ կարողանան երկրային բերքերը հաւաքել»: Այդ գրության մասին տեղեկացնում է Ատրպատականի առաջնորդարանին[79]: Հուլիսի 30-ին Գևորգ արքեպիսկոպոսը պատվիրում է Կարապետ Տեր-Մկրտչյանին «յորդոր կարդալ իրանց հօտին սիրով և խաղաղութեամբ վարուել պարսիկ ժողովրդի հետ, հեռի մնալ քաղաքական հոսանքից և հավատարիմ հպատակութիւն ցոյց տալ պարսից պետութեանը»[80]:

Օգոստոսի 27-ին կազմված գրություններից մեկից պարզ է դառնում, որ Մայր Աթոռից 200 ռուբլի նպաստ է ուղարկվել Ղարադաղի և Մակվի հայերին[81]:

1913 թ. սեպտեմբերի 7-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանը զեկուցագիր է հղում Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին պարսկահայերին նյութական աջակցություն ցույց տալու խնդրանքով. «Թէ ինչ սոսկալի խաւարի մէջ են խարխափում պարսկահայերը, Ուրմիոյ, Խոյի, Մակուի, Ղարադաղի շրջաններով, Ձերդ Վեհափառութեան քաջ յայտնի է, գիւղերում կարևոր են դպրոցներ, քահանաներ, տգիտութեան ձեռքից կրօնափոխութեան դէպքերը անհատնելի են... հարկաւոր է դպրոց և քահանայ, դժբախտաբար չկան ո՛չ մեկը և ո՛չ միւսը նիւթականի սղութեան պատճառով»[82]:

1914 թ. աշնանը, երբ թուրքական զորքը ներխուժում է Ատրպատական, հայ բնակչության հիմնական մասի փախուստից հետո տեղում մնացել էին Սբ. Թադեոսի վանքապատկան երեք գյուղերի

72 Նշվ. հանդեսը, էջ 523, 525:

73 Նշվ. հանդեսը, էջ 521:

74 Նույն տեղում:

75 Կոնսիստորիան (< լատ. consistorium- ժողովատեղի) նախահեղափոխական Ռուսաստանում թեմակալ առաջնորդին ենթակա կոլեգիալ մարմին էր՝ օժտված եկեղեցավարչական և եկեղեցադատական որոշակի գործառություններով (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ, համապատասխան հատորներով և էջերով), հ. 5, Երևան, 1979, էջ 574: "Словарь иностранных слов", под ред. **И. В. Лехина** и проф. **Ф. Н. Петрова**, М., 1955, с. 351): Հայոց եկեղեցու ռուսահպատակ վեց (Երևանի, Վրաստանի, Ղարաբաղի, Շամախու կամ Շիրվանի, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, Աստրախանի) թեմերում կոնսիստորիաները ստեղծվել են 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությամբ («Պոլոժենիե»): Իրենց թեմերում կոնսիստորիաներն իրականացնում էին եկեղեցու սպասավորների գործունեության վերահսկողությունը, եկեղեցական ծեսերի կատարումը, ամուսնության և ամուսնալուծության ակտերի գրանցումը, դրամական տուրքերի հավաքումը վանքերից, եկեղեցիներից ու դպրոցներից և այլն (ՀԺՊ, հ. V, Երևան, 1974, էջ 212-214): Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիան կամ Թիֆլիսի կոնսիստորիան ստեղծվել է 1837 թ. օգոստոսի 6-ին: Նրա իրավասությունները տարածվում էին բուն Վրաստանի, Գանձակի, Ղազախի, Շամշադինի և Լոռվա հայոց եկեղեցիների ու ծխերի վրա: Կոնսիստորիայի կազմը բաղկացած էր թեմի բարձրաստիճան հոգևորականներից թեմական առաջնորդի գլխավորությամբ: Լուծարվել է 1922 թ. (ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, առաջաբան):

76 «Արարատ», 1911, էջ 524: Դեպքերի շարադրանքը մանրամասն տե՛ս Սբ. Թադեոս առաքյալի վանքի պատմության մեջ:

77 Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդը՝ եկեղեցական բարձրագույն խորհուրդը, ստեղծվել է 1837 թ. փետրվարի 22-ին հայոց եկեղեցու կանոնադրությամբ («Պոլոժենիե», 1836 թ. մարտի 11): Նրա ստեղծումով փաստորեն սահմանափակվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի իշխանությունը: Թեև Սինոդի նախագահը կաթողիկոսն էր, բայց այն գրեթե կիսաանկախ հիմնարկություն էր և գտնվում էր ցարական կառավարության կողմից նշանակված պաշտոնյայի (պրոկուրոր) հսկողության տակ (ՀԺՊ, հ. V, էջ 212-214): Լուծարվել է 1924 թ. հունվարի 1-ին՝ իր տեղը զիջելով նորաստեղծ Գերագույն հոգևոր խորհրդին (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, առաջաբան):

78 «Արարատ», 1911, էջ 619, 627:

79 «Արարատ», 1911, էջ 620-621:

80 «Արարատ», 1911, էջ 621:

81 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 236:

82 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1931, թ. 31:

բնակիչները, ինչպես նաև Թավրիզի և շրջակայքի 200 ընտանիքներ[83]:

1915 թ. սկզբին Ռուսաստանի կողմն անցնող «Մակուի հայ ազգաբնակչութենէն մեծ թուով կամաւոր գրուողներ եղած են»[84]:

Նույն թվականին Ներսես եպիսկոպոսին Կաթողիկոսական դիվանից հրահանգ է տրվում Մակվի եկեղեցապատկան հողերի խնդիրը կարգավորելու նպատակով մեկնել Մակու: Սակայն քաղաքական դրությունը նկատի ունենալով՝ հրաժարվում է՝ այդ մասին մարտի 9-ին Գևորգ Ե կաթողիկոսին հղած գրության մեջ նշելով. «...Թաւրիզ գնալ Մակուի վրայով, նշանակում է գնալ սպանուելու համար, որովհետև Մակուից Թաւրիզ անցնել այժմ անհնար է: Իսկ գնալ Մակու այժմ հողային հարցերով, նշանակում է խաներին գրգռել, որ երեք փոքր գիւղերին կոտորեն և կօնսուլին վշտացնել զուր տեղից այս խառն ժամանակ զանազան հողային հարցերով, երբ սովից, ցրտից կոտորւում են ամեն տեղ, աւելացնելով և հիւանդութիւնները: Թադեոս առաքելոց գիւղերի խնդիրը արծարծելը և յաջողութեամբ վերջացնելը և վանքին յանձնելը եղել է իմ ջանքերով և աշխատանքով...»[85]:

Նույն թվականի ապրիլի 6-ին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը դիմում է Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին արևմտահայ գաղթականներին օգնություն ցույց տալու հետ կապված որոշ հարցերի առնչությամբ. «Ի նկատի ունենալով Մակուի քահանայ տէր Արսէնի գրութիւնը, որով հաղորդում է, թէ Թադէոս Առաքելոյ եւ Քիշմիշթափայի հայերը երկիւղից պատրաստւում են գաղթել, որոշեցինք՝ խմբի հետ միասին, ապրիլ ամիսը սկզբից, այստեղի գաղթականներին ապահովեցնելուց յետոյ, գնալ Մակուի շրջանը թէ՛ ապահովելու այնտեղի գաղթականներին ապրիլի 15-ից սկսած եւ թէ՛ միջոցներ ձեռք առնելու՝ գաղթի առաջն առնելու համար: Այս մտքով հեռագրուեց Մակուի հիւպատոսին եւ Տէր Արսէն քահանային: ...Մակուեցոց օգնութիւն կտրուի Ձերդ Վեհափառութեան պատուէրի համաձայն ուղարկուած 5000 ռուբլուց...»[86]:

1915 թ. ապրիլի 13-ին Ներսես եպիսկոպոսը հեռագիր է հղում Գևորգ Ե կաթողիկոսին՝ ծանուցելով Արևմտյան Հայաստանում սկսված հայկական կոտորածների և Թադեոս առաքյալի վանքում ապաստանած Վանի, Բերկրիի, Աբաղայի ջարդերից մազապուրծ 160 հայերի մասին[87]:

Հաջորդ օրը թեմի առաջնորդի հեռագիրն ուղարկվում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին[88]:

Ապրիլի 17-ին Ատրպատականի թեմի առաջնորդը Գևորգ Ե կաթողիկոսին տեղեկություններ է հաղորդում Թադեոս առաքյալի վանքում և Արևմտյան Հայաստանում սկսված կոտորածների, Վանի ինքնապաշտպանության մասին. «Ապրիլի 8-ին սանիտարական խմբով գնացինք Մակու-Քիշմիշ Թափա Ս. Թադեոս առաքելոյ գիւղ, ապահովեցինք բոլոր գաղթականներին Բագուից ստացած գումարով մինչև յուլիսի 1-ը: Նոյն օրը եկան Աբաղայից 60 հոգի, Նզարաւանից 20 հոգի, Մանտանից 20 հոգի և ապա 60 հոգի, բոլորը փախել են մահից՝ թողնելով երախաներ, կանայք տաճիկ-քրդերի ձեռքին: Ամսիս 5-ին պահանջել են Վան քաղաքից 6000 լիրա տաճկական և 6000 հրացան: Հայերը ժամանակ են խնդրել, նրանք չեն տուել: Ամսիս 8-ին սկսել են՝ խաբելով զենքերը գիւղերից ժողովել և տղամարդկանց հաւաքել ճանապարհների կարգաւորման համար և տանելով միւս գաւառ բոլորին կոտորել են, և շարունակել Վանի, Արճեշի, Բերկրու, Աբաղայի բոլոր գիւղերում կոտորածներ. տղամարդիկ թողնում են տուն տեղ քրդերի ձեռքին և փախչում ով որտեղ կարող է. սոսկալի-սրտաճմլիկ տեսարան էր, երբ 100-ով մտան Թադեոս առաքեալ և քարերը լիզելով աստծուն շնորհակալութիւն արին մահուանից ազատուելու համար»[89]:

1915 թ. ապրիլի 17-ին Ջուլֆայում գտնվող Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը Գևորգ Ե կաթողիկոսին հղած զեկուցագրում նշում է, որ Ջուլֆայում են գտնվում նաև մազապուրծ մակվեցիներ[90]:

Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան ճակատում գործող ռուսական բանակի որոշ զորամիավորումներ մտնում են Ատրպատական և Մակվի գավառ, սակայն Ռուսաստանում հեղափոխության հաղթանակից հետո՝ 1917 թ. դեկտեմբեր-1918 թ. հունվար ամիսներին, հեռանում են Ատրպատականից:

1918 թ. հունվարի 26-ին Մակվի Ալի Ղուլի Մուրթուզա խանը քաղաքի հայ քահանայի և վարպետ Հայրո Բարեյանի միջոցով Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին հղում է մի գրություն, որով կաթողիկոսից պահանջում է ամեն ինչ անել արգելելու ռուսական զորքի և կամավորների մուտքը ոչ միայն Մակվի խանություն, այլև այն սահմանանցային կետ օգտագործելու առումով[91]:

Կարճ ժամանակ անց Թավրիզից գուժում են, որ «Մակվի խանության հայությունը ենթարկվեց աղետի: Թուրք ասկյարները և տեղի ավազակախմբերը հարձակվեցին հայկական խաղաղ գյուղերի վրա»[92]:

83 **Ստեփան Կերտող**, Հայ եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Ս. Էջմիածին, 2003, էջ 103-104:

84 «Կոչնակ», 1915, № 4, էջ 89:

85 ՀԱԴ, ֆ. 57, ց. 5, գ. 95, թ. 10-11:

86 Նշվ. վավ., թ. 15 և շրջ.: Տե՛ս նաև Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ. **Գևորգ Ե Սուրենեանց** (1847-1930), Երևան, 2005, էջ 313:

87 ՀԱԴ, ֆ. 57, ց. 5, գ. 81, թ. 75:

88 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, էջ 318:

89 ՀԱԴ, ֆ. 57, ց. 5, գ. 29, թ. 126 և շրջ.:

90 **Ստեփան Կերտող**, նշվ. աշխ., էջ 104:

91 Նշվ. աշխ., էջ 272:

92 Նշվ. աշխ., էջ 273:

1918 թ. ապրիլին տարածաշրջան են ներխուժում թուրքական բանակները և տեղի թուրք ու քուրդ բնակչության մի մասի աջակցությամբ պաշարում Թադեոս առաքյալի վանքը, որտեղ պատսպարվել էին շրջակայքի, հատկապես Վանք (Ղարաքիլիսա) գյուղի հայերը: Սկսվում է անհավասար պայքար մեծաքանակ հակառակորդի և մի բուռ հայերի միջև: Պաշտպանության 33-րդ օրը՝ հուլիսի 2-ին, թուրքերին հաջողվում է ներխուժել վանք: Նրանք կոտորում են ծերերին, վիրավորներին ու հիվանդներին, կողոպտում եկեղեցական սպասքն ու հանդերձանքը[93]:

Կոտորվում է նաև Քիշմիշքափա գյուղի բնակչությունը: Ապա հաջորդում են Մակվի հայոց ջարդերը[94], որոնց վերաբերյալ գրվել է, որ «...կովկասեան թուրքերի միջոցով տաճիկները, տեղական վատ տարրերի և քրդերի հետ յունիս մինչ 10-ը կոտորում են ...Մակու, Քիշմիշքափա և Թադէոս Առաքեալի վանքի գիւղը, մօտ 500 հոգի՝ նոյնպէս տղամարդիկ»[95]:

1918 թ. հունիսի սկզբներին, երբ Անդրանիկ Օզանյանը, իր 2000 զինակիցներով անցնելով Ջուլֆայով, օգնության է հասնում Խոյի և Սալմաստի հայերին և մի քանի օր տևած կռվից հետո «...յետ է գնում դէպի Նախիջեւան, ի վրէժ որի Ալի-Իհսան փաշայի հրամանով կոտորած է առաջ գալիս Մակւայ շրջանում և Խոյում»[96]:

1919 թ. հունվարի 18-ին մի անանուն հեղինակի՝ «400 հայեր իսլամացուած, ահաբեկուած և հարեմներում» խորագրով նամակը կարևոր տվյալներ է պարունակում մահմեդականացած մակվահայերի վերաբերյալ. «Մեծ յուսով եկայ Մակու, որ մնացած ժողովրդին օգտակար լինիմ, բայց իմ Մակու գալով նրանց դրութիւնն աւելի ծանրացաւ: Նրանց բռնութեամբ իսլամացրել են: ...Մէկ անգամ գնացել եմ մեր քաղը՝ քաղին և եկեղեցուն նայելու: Եկեղեցին և քաղի մեծ մասը քար ու քանդ են արուած: Նոյն վիճակին է ենթարկուել և վանքի եկեղեցին: Վանքի եկեղեցու դռները և խորանի դռները տարել են, իսկ սենեակներն էլ նոյնպէս քար ու քանդ են: Վանքի հայերից մէկը Մակու էր եկել ինձ մօտ, այս գրում եմ նրա պատմելով: ...բռնի իսլամացուածները սոսկալի սպառնալիքի տակ են պահուում:

Ցուցակագրել եմ բոլորին, 132 հոգի Մակուի հայերից են մնացել, 132 հոգի էլ Քիշմիշ Թափի հայերից, մօտ 90 հոգի էլ՝ Վանքի հայերից: Մեծ մասը՝ կին և երեխայ, մերկ և բոբիկ են, բոլորն էլ սոված: Քիչ թէ շատ տանելի դրութիւն ունին արհեստաւորները, կամ խաների տներում ապրողները: Մեծ մասը, թէև իսլամացրուած, սովամահ վիճակումն են: Մահացածներին էլ թաղում են իսլամական ծէսով, իսլամական գերեզմանատնում և թաղի մէջ: Երիտասարդ հարսաղջիկներին տարել են զանազան գիւղեր:

Գալիս են ինձ մօտ բարեկամ թուրքեր և խորհուրդ են տալիս, որ հայերի իսլամացուելու մասին ոչ մի առարկութիւն չանեմ: ...իմ գալով աւելի են գրգռուել իսլամացուածների դէմ:

Ինչ վերաբերում է հայերի թալանի մասին՝ յայտնում եմ, որ նրանց գլխովին թալանել են»[97]:

Նույն թվականի փետրվարի 8-ին նշվել է, թե Մակվի Արսեն քահանան թեմակալ առաջնորդին հայտնել է, որ Մակվի շրջանում մահմեդականացած հայերի թիվը կազմում է շուրջ 400 անձ, հիմնականում կանայք և երեխաներ[98]:

Նույն օրը Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոսը գրություն է հղում Պարսկաստանում Մեծ Բրիտանիայի հյուպատոս պ. Բրիստովին՝ անդրադառնալով 1918 թ. հունիս-հուլիս ամիսների թուրքական զորքի հարձակումներին, սպանություններին, ավեր ու թալանին, խնդրում է օգնել տուժածներին և պատժել հանցավորներին. «...կոտորել են ...Մակուում 500 հոգի, իսկ կանանց բռնաբարել և իսլամացրել են: Խնդրում եմ մնացորդներին, իսլամացածներին ազատելու համար Պարսից կառավարութեան կողմից ուղարկուելիք յանձնախմբի հետ բարի լինէք դնելու Ձեր կողմից մի ներկայացուցիչ թէ՛ Խօյ և թէ՛ Մակու, ազատելու նրանց և յետ պահանջելու կողոպտուած և ի պահ

---

93 Նազլու Հակոբյան-Թադևոսյանը, որ վանքի հունիսյան գոյամարտի ականատեսն ու մասնակիցն էր, դեպքերից շուրջ 40 տարի անց՝ 1959 թ. նոյեմբերի 10-ին, իրանահայ բանասեր Հայկ Աճեմյանին մանրամասնորեն պատմել է իր հուշերի ծալքերում թաքցրած դեպքերի, վանքը գրավելուց հետո թուրք զինվորների գործած դաժանությունների, հայերի բռնի իսլամացման մասին (ինքնապաշտպանական կռիվների մասին մանրամասն տե՛ս Թադեոս առաքյալի վանքի պատմության մեջ):

94 Մակվի գավառի 1914-1918 թթ. դեպքերը նկարագրելիս, ի թիվս այլ նյութերի, օգտվել ենք նաև Հայկ Աճեմյանի անտիպ օրագրից (էջ 131, 134-140):

95 **Յարութիւնեան Առ.**, Անցքերը Ատրպատականում 1918 թւին. Սահմանամերձ գաւառները 1918 թւին, Թաւրիզ, 1919, էջ 77-78: Մեկ այլ աղբյուր ևս վկայում է, որ «Խոյ եւ Մաքու կոտորուել էին 3000 ասորիներ եւ 1000 հայեր, իսկ Քիշմիշ թափա եւ Թադէոս Առաքեալ վանքի գիւղից կոտորւում են 500 հայեր» (**Սարօ Յ.** (**Սարգսյան Հարություն**), Ատրպատականի գոյամարտը, Թեհրան, 1964, էջ 77):

96 **Յարութիւնեան Առ.**, նշվ. աշխ., էջ 78: Ի դեպ, Ալի Իհսան փաշան Թավրիզի հայերին այդ դեպքերի մասին ասել է. «...Անդրանիկը կոտորեց Նախիջևանի թուրքերին, ես էլ հրամայեցի կոտորել Խոյի և Մակվի հայերին» (նույն տեղում, էջ 79):

97 «Ձանգ», 1919, № 6, էջ 3:

98 «Ձանգ», 1919, № 6, էջ 4: 1919 թ. հունվարի 25-ին գրած նամակում Արսեն քահանան նշել է. «Այնպիսի սոսկալի աւերումներ, բարբարոսութիւններ, մանուկների սրախողխող լինել, ալան-թալան, բռնաբարում, որպիսին տեղի է ունեցել Մաքւում հազիւ թէ ուրիշ տեղ պատահած լինի: Մաքւում և շրջապատի գիւղերում հազիւ 300 հոգի կանայք և երեխաներ են մնացել, որոնք բոլորն էլ իսլամացած և անելանելի դրութեան մէջ են գտնւում, մերկ, բոկոտն և մատնուած սովի ճիրաններին, հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն, այլապէս բոլորն էլ կը կոտորուեն: Մեռնում են տասնեակներով և թաղւում որպէս իսլամներ: ...Օգնութեան հասէք ազատելու այդ բեկորները, որոնք տառապում են իսլամի հարեմներում» («Ձանգ», 1919, № 10, էջ 6):

տրուած իրերը և յանձնելու տէրերին, իսկ յանցաւոր չարագործներին, որոնց ցուցակը Այալաթ է ուղարկուած, բանտարկելու և պատժելու»[99]:

1919 թ. փետրվարի 14-ին Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը գրություն է հղում ՀՀ Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին՝ տեղեկացնելով նաև Մակվի բռնի մահմեդականացրած հայերի և թուրքերի յուրացրած ցորենի մասին. «Մակուի Սարդարից անգլիական հիւպատոսի միջոցով պահանջուեց, որ երեք հայ գիւղերի կենդանի մնացած և բռնի մահմեդականացած հայերին ազատեն և բնակեցնեն իրանց տեղերում: Մակուի երեք հայ գիւղերի ցորենները 300 խալվար պետք է պահանջել Սարդարից, որպիսի պահանջին նա պատասխանել է, որ տաճիկներն են տարել: Ես խնդրեցի պ. Հարրիսոն Մէյնարտից, որ նա անգլիական հրամանատարութեան հասցնի մեր պահանջները, նաև Նախիջևանի գաւառի հայերից գրաւուած 300.000 փութ ցորենը և Մակուի Սարդարից 300 խալվարը յօգուտ Երևանի սովեալների»[100]:

1919 թ. հունիսի 11-ին Գևորգ Ե կաթողիկոսը գրություն է հղում Ներսես եպիսկոպոսին՝ Մակվում հայերի նկատմամբ կատարվող բռնությունների մասին անցկացնել քննություն. «Մակուից ստացած վերջին տեղեկութիւնները շատ մռայլ պատկերով են ներկայացնում տեղական հայերի դրութիւնը: Այնտեղի հայութիւնը, դեռևս տաճիկների այնտեղ գտնուած ժամանակ, հալածանքի եւ սպանութիւնների ենթարկուելով տեղական խանի կողմից մեծամեծ վնասներ է կրել, աւերուելով տնտեսապէս եւ զոհեր տալով մարդկային՝ բաւական մեծ թուով, իսկ այն հայերը, որոնք այս ու այն պատահարով ազատուած են կոտորածից՝ իսլամացրած են բռնի եւ այսօր իսկ հնարաւորութիւն չունեն ազատակամ վերադառնալ ո՛չ իրենց բնակավայրերը եւ ո՛չ իրենց եկեղեցու ծոցը:

...Թէեւ Մակուի սարդարը Ձեզ տեղեկագրել է, որ տեղական հայերը յանձնուած են տեղական քահանային, սակայն այդ եւս ճիշտ չէ, որովհետեւ մինչեւ այժմ ոչ մի քայլ չէ արուած սարդարի կողմից այդ նկատմամբ: Միայն այրիներն ու որբերն են, որ ամենայն օր դիմում են քահանաներին եւ իրենց այրերի ու հայրերի ազատագրութիւնը հայցում եւ քաղցից փրկել աղաչում»[101]:

Ատրպատականի առաջնորդ եպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանի՝ ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը 1919 թ. հունիսի 12-ին հղած գրությունից հայտնի է դառնում, որ «Մակվում մնում են 350 թուրքացած (մահմեդականություն ընդունած) հայեր, որոնց համար ուղարկված է Պետրոս վարդապետը (իմա´ Թադեոս առաքյալի վանքի առաջնորդը, Ա. Հ.)՝ խնամելու եւ 500 թուման բաժանելու համար, Սարդարը ակնածելով հանրապետությունից իրավունք էր տվել մեր պահանջի հիման վրա նրանց հայ համարել եւ ժողովել հայոց վանքում եւ Քիշմիշ-թափա գյուղում: Շշուկները, թե տաճիկները էլի գալիս են Մակու, վախեցնում է հայերին, չեն կամենում հեռանալ Մակուից, ուր վարում են ստրկական կյանք»[102]:

Ներսես եպիսկոպոսը 1919 թ. մայիսի 15-ին Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին Ատրպատականի դրության վերաբերյալ հղած զեկուցագրում նշում է. «...կոտորուեցին Մակուի երեք գիւղերը մօտ 500 շունչ, մնացին կանայք և երեխայք, որոնք իսլամացան...: ...Մակու, Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Սուլդուզ, Միանտաբ, Ղարադաղի շատ գիւղեր, Աղբակ աւերուած են բոլոր եկեղեցիները, թալանուած են ամէն ինչ: ...Մնացորդ հայութիւնը ...հետևեալն է... Մակուի երեք գիւղի մնացորդ՝ 350» շունչ[103]:

1919 թ. հունիսի 11-ին Կաթողիկոսական դիվանի կողմից գրություն է հղվում Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանին և լուսաբանվում Մակվի հայերի դրությունը. «Մակուից ստացած վերջին տեղեկութիւնները շատ մռայլ պատկերով են ներկայացնում տեղական հայերի դրութիւնը: Այնտեղի հայութիւնը, դեռեւս տաճիկների այնտեղ գտնուած ժամանակ, հալածանքի եւ սպանութիւնների ենթարկուելով տեղական խանի կողմից մեծամեծ վնասներ է կրել, աւերուելով տնտեսապէս եւ զոհեր տալով մարդկային՝ բաւական մեծ թուով, իսկ այն հայերը, որոնք այս ու այն պատահարով ազատուած են կոտորածից, իսլամացրած են բռնի եւ այսօր իսկ հնարաւորութիւն չունեն ազատակամ վերադառնալ ո՛չ իրենց բնակավայրերը եւ ո՛չ իրենց եկեղեցու ծոցը:

Ձեր կողմից եղած հեռագրական կարգադրումը, որով 500 թուման էիք փոխադրել Ահմէդ խանի միջոցով, մինչեւ այժմ դեռեւս ստացուած, որովհետեւ այդ Ահմէդ խանը այն կողմերում չէ երեւացած իսկ: Եթէ դրամն իսկ ստացուէր, դարձեալ իր բուն նպատակին պիտի չհասնէր, քանի որ բռնի մահմեդականացրած հայ ժողովուրդը չի համարձակւում հայ լինելը յայտնել:

---

99 «Զանգ», 1919, № 7, էջ 1:

100 ՀԱԴ, ֆ. 200, ց. 1, գ. 194, թ. 7-8 շրջ.:

101 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, էջ 490-491:

102 **Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի** նամակները Հայաստանի Հանրապետության կառավարությանը (1919 թվական), «Իրան-Նամէ», 2000, № 35, էջ 48:

103 ՀԱԴ, ֆ. 57, ց. 5, գ. 198, թ. 1-2: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Երևան, 1999, էջ 129-130: Այլ աղբյուրի համաձայն՝ 1918 թ. «Միայն Խոյ եւ Մակու 1000 հայեր կը ջարդուին, Ս. Թադէի գիւղերուն մէջ 500 հայեր, այլ խօսքով՝ այդ շրջանի հայութիւնը գրեթէ կը բնաջնջուի» (**Բախտիկեան Ներսէս** ծ. վ., Ապրիլեան Եղեռնը եւ պարսկահայերը, «Հասկ» 1965, էջ 175): Մեկ այլ աղբյուր ևս վկայում է 500 հայի սպանդը Մակվում և ավելացնում, որ Խոյի կոտորածից հետո Ալի Իհսան փաշան, Թավրիզ մտնելով, ասել է. «...հրամայեցի Խոյի և Մակուի հայերին էլ կոտորել...» (**Աճառյան Հր.**, Հայ գաղթականության պատմություն, էջ 282):

Թէև Մակուի սարդարը Ձեզ տեղեկագրել է, որ տեղական հայերը յանձնուած են տեղական քահանային, սակայն այդ եւս ճիշտ չէ, որովհետեւ մինչեւ ոչ մի քայլ չէ արուած սարդարի կողմից այդ նկատմամբ: Միայն այրիներն ու որբերն են, որ ամենայն օր դիմում են քահանաներին եւ իրենց այրերի ու հայրերի ազատագրութիւնը հայցում եւ քաղցից փրկել աղաչում:

Այս դրութիւնը նկատի ունենալով Ն.Ս. Օծութիւնը պատուիրեց դիւանիս գրել Գերապատուութեանդ անմիջապէս, անձամբ մեկնել Մակու եւ կամ հնարաւորութեան դէպքում ուղարկել ամենայայտնի վստահելի մի քննիչի տեղն ու տեղը քննելու կատարուած իրողութիւնները, մանրամասն զեկուցագիրը ներկայացնել Վեհափառ Հայրապետին մի առ մի յիշատակութեամբ, թէ ովքե՞ր են վնասուածները, ի՞նչ չափով, ինչո՞վ եւ որչա՞փ դրամական արժէքով, որպէսզի հնարաւոր լինի բոլոր վնասները պահանջել տաճկական կառավարութիւնից, այլեւ ձեռք առնել բոլոր հնարաւոր միջոցները, որպէս զի խլամացած հայութիւնը ազատագրուի եւ վերադառնայ իւր մայրենի եկեղեցու ծոցն եւ իւր բնակավայրերը:

Այս մասին գործի քննութիւնից յետոյ տեղեկագրել են նաեւ անգլիական եւ ֆրանսիական դեսպաններին, խնդրելով նոցա աջակցութիւնը վնասների հատուցման նկատմամբ»[104]:

Մեկ օր անց Ներսես եպիսկոպոսը ՀՀ Արտաքին գործերի նախարարին հղված զեկուցագրում անդրադառնում է նաև Մակվի հայերի ծայրահեղ ծանր վիճակին. «Մակւում մնում են 350 թուրքացած հայեր, որոնց համար ուղարկուած է Պետրոս վարդապետը խնամելու և 500 թուման բաժանելու համար. Սարդարը ակնածելով Հանրապետութիւնից իրաւունք էր տուել մեր պահանջի հիման վրա նրանց հայ համարել և ժողովել հայոց վանքում և Քիշմիշթափա գիւղում: Շշուկները, թէ տաճիկները էլի գալիս են Մակու, վախեցնում է հայերին, չեն կամենում հեռանալ Մակուից, ուր վարում են ստրկական կեանք: Արդէօք բարի չէ՞ր լինել Նախարարութիւնը տեղափոխել նրանց Շահթախտի մօտիկ վայրերը՝ առժամանակ՝ մինչև Բայազետը կգրաւուի հայոց զօրքերով և յետայնու հնար կլինի զետեղել նրանց: Իրանց Սարդարը մեծ ուրախութեամբ կօգնի այդ բանում, որպէսզի անվնաս պահած լինի վերջին բեկորները, պատասխանատվութիւնից ազատ լինելու համար:

Անշուշտ յետոյ յետ բերելու նպատակով, որովհետև Մակուի գիծը մեզ համար շատ կարևոր է և պէտք է հայացնել»[105]:

Նույն թվականի հուլիսի 24-ին Ներսես եպիսկոպոսը գրություն է հղում ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին Մակվի մահմեդականացած հայերին օգնություն ցույց տալու հարցով. «Յատուկ խնդրում եմ ուշադրութիւն դարձնել Մակուի մահմեդականացած 350 շունչ հայերի վրա, որոնց փոխանորդ Պետրոս վարդապետին տրուած է հրահանգ օգնելու, Ձեզ մօտ գալու. 500 թուման ուղարկել ենք նրանց, այժմ կոպէկ չունենք նրանց օգնելու»[106]:

1923 թ. Թադեոս առաքյալի վանքի վանահայր Պետրոս վարդապետը հետևյալ տեղեկությունները է հաղորդում Մակվի հայերի մասին. «Մակու գիւղաքաղաքին, Թադէի վանքին եւ Քիշմիշ Թափա գիւղին մէջ այժմ կապրին 120 հայեր՝ Մակու սարդարի հովանաւորութեան ներքեւ: Հայեր իրենք զիրենք քաղաքականապէս եւ ֆիզիքապէս կը զգան ապահով եւ կապրին հանգիստ: Հայերու յարաբերութիւնը տեղական թուրքերու եւ քիւրտերու հետ շատ բարեկամական է եւ հարեւանական հողի վրայ դրուած: Թադէի վանքին մէջ հայերը ունին ջրաղաց, ձիթահանք, կը զբաղին հողագործութեամբ եւ գիւղատնտեսութեամբ: Վանքը ունի մէկ քանի զոյգ լծկաններ: Մակուի մէջ կան թուրք եւ ռուս հիւպատոսներ, որոնք ունին փոստ եւ հեռագրատուն: Հայերու վերաբերմամբ առանձնապէս ուշադիր է եղած ռուսական հիւպատոսը: Ան վանքին մէջ ապրող տասներեք որբերու դրամական օգնութիւն է ցոյց տուած: Այդ որբերը վանահայրը բերած է Թաւրիզ, Ամերիկեան կոմիտէի որբանոցին մէջ ընդունել տալու համար: Մակուի հեռագրական պարսիկ կառավարիչ Աղա Խաթիպը հայերու վերաբերմամբ շատ բարեացակամ է եւ միշտ օգտակար է եղած»[107]:

Նույն թվականի սեպտեմբերի 15-ի հաղորդագրություններից մեկում նկարագրվում է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոսի առանձնազրույցն Ատրպատականի ընդհանուր զինվորական հրամանատար Աբդուլլահ խանի հետ, որի ընթացքում առաջնորդը բարձրացնում է հայերի՝ իրենց բնակավայրեր վերադառնալու խնդիրը, որին էլ Աբդուլլահ խանը պատասխանում է. «Մեր նպատակը եղած է այդ շրջաններուն (Ուրմիա, Սալմաստ, Մակու եւ այլն) վերջնականապէս քաղաքական ամէն խնդիրները կարգադրել, պետական կարգերը վերահաստատել, մշտական խաղաղութիւնը ապահովել եւ ապա թոյլատրել, որ քրիս-

---

104 ՀԱԴ, ֆ. 57, ց. 5, գ. 173, թ. 17 և շրջ.:

105 ՀԱԴ, ֆ. 200, ց. 1, գ. 266, թ. 28-29 և շրջ.: Ի դեպ, Թավրիզից Պետրոս վարդապետն ուղարկվել է Մակու՝ կոտորածից փրկված և մահմեդականացած հայերին իրենց բնակավայրերում վերաբնակեցնելու նպատակով: Սակայն, ինչպես պարզվում է 1919 թ. հունիսի 2/15-ին Պետրոս վարդապետի՝ Թավրիզի առաջնորդարան հղած գրությունից, նա համաձայն չի եղել Մակվի սարդարի՝ հայերն իրենց նախկին բնակավայրերում մնալու առաջարկին: Այնուհետև թեմակալ առաջնորդը հեռագրել է, որ հայերին պետք է բնակեցնել Վանք և Քիշմիշթափա գյուղերում: Խնդրո առթիվ հաջորդ օրը Հայոց առաջնորդարան հեռագիր է հղել Ալի Ղուլի Մուրթուզա խանը («Զանգ», 1919, № 19, էջ 1):

106 ՀԱԴ, ֆ. 200, ց. 1, գ. 266, թ. 31-32 և շրջ.:

107 «Հայաստանի կոչնակ», 1923, № 27, էջ 855:

տոնեայ ազգաբնակչութիւնը վերահաստատուի իր բնակավայրին մէջ: ...Այժմ պիտի անցնինք Մակու, այստեղ վերջ պիտի տանք գոյութիւն ունեցող սանձարձակութիւններուն եւ պիտի զսպենք այդ շրջանի խռովարար տարրերը: Այս բոլորէն յետոյ, որ պիտի տեւէ երկու ամիս, քրիստոնեայ ազգաբնակչութեան կը թոյլատրենք վերադառնալ եւ ապրիլ ստեղծուած խաղաղ միջավայրին մէջ: ...Երբ Մակու երթանք, մեր գործերէն մեկն ալ այն կըլլայ, որ Հայոց Թադէի վանքէն սարդարի կողմէ յափշտակուած բոլոր շարժական եւ անշարժ գոյքերը կառնենք եւ կը յանձնենք վանքին»[108]:

1924 թ. օգոստոսի 14-ին Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանն Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին հղած զեկուցագրում նշում է նաև, որ Մակվի հայերի կոտորածի և ավեր ու թալանի համար Մակվի սարդարի դեմ սկսված դատը տակավին ընթացքի մեջ է. «...չլուծուած զանազան հարցերը ինձնից անկախ պատճառով վախճանական վճիռ դեռ չեն ստացել. Մակուի Սարդարի դեմ դատ է սկսուած 150.000 թումանի 500 հայի կոտորածի և վանքի աւերման պատճառով, յետ պահանջելով Թադէոս առաքելոց Վանքի գիւղը, երկրորդ՝ Ստեփաննոս Նախավկայի հողերի հարցը շատ սուր դրուած է և լուծման է սպասում...»[109]:

1925 թ. հուլիսի 25-ին կազմված գրություններից մեկում Ներսես եպիսկոպոսը, անդրադառնալով իր պաշտոնաթողության խնդրին, Գևորգ Ե կաթողիկոսին գրում է. «Ես գրել և խոստացել եմ հեռանալ թեմից, երբ կվերջացնեմ Մակուի Նախավկայի հողային մեծ վեճերը, Սալմաստի, Ուրմիոյ տասն հազար տարագիրների ներգաղթի խնդիրը և այլ այդպիսիները, և որպիսիքը դժբախտաբար մինչև այսօր չի յաջողուել վերջացնել, մշտապէս ձգձգւում են և թոյլ չեն տալիս խոստումնս կատարել»[110]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1946 թ. ամռանը, հայության վերջին բեկորները (Մակու քաղաքի և Թադեոս առաքյալի վանքին կից գյուղի՝ Ղարաքիլիսայի հայերը, թվով 200 մարդ)[111], ներգաղթում են Խորհրդային Հայաստան: Դրանով ամբողջությամբ և վերջնականապես հայաթափվում է Արտազը:

**Արտազ-Մակու գավառի վարչական կարգավիճակը.** գավառը բաժանված է եղել մի քանի գավառակների. դրանք էին՝ հյուսիսում՝ Մակու (Բայաթ), Աղգյոլ, Մասիս, ծայրարևելքում՝ Չայփարա, Դարաշամ(բ) կամ Շամբիձոր, Կարակոյուն (Գարագոյուն), հարավում՝ Բաբացուկ, Թամաշեք, Սյոքմանավա, արևմուտքում՝ Ավաջուղ (Օվաջըկ), Չարդերուն (Չիար-Դերուն)[112]:

Բաբացուկը գտնվում է Չարդերունի և Մակվի միջև: Այս գավառակում է Թադեոս առաքյալի հոչակավոր վանքը:

Ավաջուղը գտնվում է Բայազետի կողմում՝ Թուրքիայի սահմանին կից, որտեղ ապրում են այրումները: Տեղի խաները ռուս-պարսկական երկրորդ պատերազմից հետո՝ 1828 թ., գաղթել էին Ալեքսանդրապոլից (այժմ՝ Գյումրի): Գավառակում է գտնվում Քիլիսաքյանդ գյուղը:

Չարդերուն (Չալդորան, Չիար-Դերուն) գավառակը ևս ընկած է թուրքական սահմանի մոտ և իր անունը ստացել է չորս նշանավոր վանքերից[113], որոնք են՝ Բագրևանդի Սբ. Հովհաննես, Ծործորի Սբ. Աստվածածին, Քիլիսաքենդի և Թադեոս առաքյալի վանքերը: Չարդերունի խաները քուրդ էին, նրանց նախնիները այստեղ էին վերահաստատվել Վասպուրականի Արճեշ գավառից:

Դարաշամ (Դարաշամբ, Շամբիձոր) գավառակը գտնվում է Մակվից հարավ-արևելք՝ Արաքսի աջ ափին: Հայկական գյուղերից էին Բաշքյանդը (Դարաշամբ), Օրթաքյանդը և Դիբքյանդը[114]:

Մակվի ծայրհյուսիսարևմտյան անկյունում և Փոքր Արարատ լեռան հարավային կողմում են գտնվում Տամբատ (Տմբատ) քաղաքի ընդարձակ ավերակները: Դրանց հարավային և արևելյան մասով հոսում են Սարիսու և Զանգիմար գետերի վտակները: Ավերակ քաղաքի տարածքում ճյուղավորված բազմաթիվ քարանձավներ կան, որտեղ խաշնարածներն անցկացնում են ամռան ամիսները: Մակվի հայերը հավատացած էին և սերնդեսերունդ փոխանցել են պատմությունն այն մասին, որ ավերակների տեղում երբեմ գոյատևած բնակավայրն Արշակ Բ հայոց Արշակունի թագավորի կառուցած պատմական Արշակավան քաղաքն էր (Դդար), որն ավերեցին արքունիքի քաղաքականությունից դժգոհ հայ նախարարները[115]:

1907 թ. սեպտեմբերի դրությամբ նշվել է. «Մակու. Մակուայ խանութիւնը վասսալ մի իշխանապետութիւն է պարսկական պետութեան մէջ: Մակուայ խան Սարդարը տարեկան մի որոշ գումար ու ընծաներ է ուղարկում պարսից արքունիքը, պատերազմի ժամանակ օգնութիւն տալիս, և միայն այսքանը:

Մակուայ ներկայ խանութեան սահմանները բաւական ընդարձակ են, երեք կողմից նրանք հասնում են ռուսական ու օսմանեան երկրներին. իսկ

108 «Հայաստանի կոչնակ», 1923, № 37, էջ 1175-1176:

109 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4077, թ. 3-4 և շրջ.:

110 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4090, թ. 8-9 և շրջ.:

111 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 29, 158:

112 **Նժդեհ**, նշվ. հոդվ., էջ 143:

113 **Չարդերուն (Չալդորան)** տեղանունը ծագում է **չահար** (*չորս*) և **դրան** (**դեյր**-*վանք*) բառերից (տե՛ս **Րաֆի Էսմայիլե**, Իրանանե Արմանի, Թեհրան, 1970, էջ 73-74, պարսկերեն): Պարսկական գրականության մեջ Արտազ գավառը հայտնի է Մակու անվամբ: Միակ երկասիրությունը, որտեղ հիշատակվում է Արտազ տեղանունը, **Մասուդ Քեյհանի** «Իրանի մանրամասն աշխարհագրություն»-ն է, որտեղ կարդում ենք. «Մակուին Արտազ էլ ասում են» (տե՛ս նրա «Ջողրաֆյայե Մոֆասալե Իրան», հ. II, Թեհրան, 1893, էջ 158, պարսկերեն):

114 **Նժդեհ**, նշվ. հոդվ., էջ 144-148:

115 **Մուսավի Մաքուի (Մակվեցի)**, Մակվի պատմությունը, Թեհրան, 1997, էջ 19-20 (պարսկերեն):

չորրորդ-հարաւային կողմից՝ Խօյի գաւառապետութեան: Այս սահմանում տեղաւորուած ընդարձակ հողը ծածկուած է հարիւրաւոր գիւղերով. հողի և գիւղերի ամենախոշոր մեծամասնութեան տէրտիրականը Սարդարն է, մնացեալ աննշան փոքրամասնութիւնը պատկանում է սարդարական ընտանիքի զանազան աղա-խաներին: ...երկիրը-հողը բացարձակապէս պատկանում է Սարդարին: Նրան են պատկանում ու նրա քմահաճոյքներին խաղալիք՝ երկրում բնակուած ամբողջ ազգաբնակչութիւնը, որի մեծագոյն մասը քրդեր են, իսկ միւս բաժինը ատրպատականցի թիւրքեր...»[116]:

**Մակու գավառի բնակչությունը.** ԺԹ դարավերջին գավառի բնակչությունը հիմնականում բաղկացած էր «...քրդերէ և թիւրք շիաներէ և մի տեսակ թաթարներէ: Հայերը աղոնց մէջ աննշան մի թիւ կը կազմեն»[117]:

*Հայեր.* ներկայիս հայաթափ Արտազ գավառը և առհասարակ Ատրպատականը տասնյակ դարեր առաջ ունեցել են խիտ հայ ազգաբնակչություն, որի խոսուն վկաներն են վանքերն ու եկեղեցիները: Դրանցից, ցավոք, շատ քչերն են կանգուն մնացել:

Դոմինիկյան հոգևորական Ժուրդեն դը Սևերակը, որը Հնդկաստան ուղևորվելիս 1320 թ. ձմռանը եղել է Հայաստանում, նշել է. «Այս նահանգում (այսինքն՝ Հայաստանում) մեծ մասամբ բնակվում են հերձվածող հայեր. քարոզիչ և կրտսեր եղբայրները կաթոլիկության են դարձի բերել այս հերձվածողներից ճիշտ չորս հազար, թերևս նույնիսկ ավելի անձանց. և այս բացարձակ ճշմարտություն է: Եվ իրոք, մի մեծ արքեպիսկոպոս՝ տեր Զաքարիան, իր ողջ հոտի հետ միասին, ընդունել է մեր կրոնը»[118]:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո «...Մակւայ խանութեան մէջ ապրող հայերը գաղթեցին դէպի Արարատեան դաշտը»[119]:

Գաղթերի հետևանքով Մակվի խանության հայերի թվաքանակը բավական նվազում է, և 1905 թ. հայեր եղել են միայն 4 բնակավայրում՝ Մակվում, Քիշմիշթափայում, Ղարաքիլիսայում և Դարաշամբում. «Բացի թաթարներից ու քրդերից Մակվում կա ուշադրության արժանի երրորդ ազգություն: Հայերը, որոնք Վանի և Արարատի շուրջը IX-XII դարերում ունեին իրենց Վասպուրականի թագավորությունը, և ներկայիս Մակվի ողջ տարածքը եկեղեցիներով ու շինություններով ծածկելով (այժմ ավերակված են), աստիճանաբար մահմեդականների շրջանում նվազեցին և արդի ժամանակաշրջանում բնակվում են խանության չորս գյուղերում: Չխոսելով նրանց՝ եկեղեցիներով նշված հին բնակավայրերի մասին անգամ համեմատաբար ոչ վաղ շրջանում՝ 30 տարի առաջ հայեր կային, օրինակ՝ այժմ միայն բացառապես մահմեդականներով բնակեցված Դանալի և Վարմազիար գյուղերում»[120]:

1905 թ. Մակու քաղաքում, Քիշմիշթափա, Ղարաքիլիսա և Դարաշամբ գյուղերում կար 209 տուն (1226 շունչ) հայ բնակիչ. «Նախկին հարուստ վաճառականներից ոչ ոք արդեն չկա. Մակվում մնացել են միայն չքավորներն ու արհեստավորները՝ դարբիններ, կոշկակարներ, գինեվաճառներ, զինագործներ և այլն: Գյուղերում զբաղվում են հողագործությամբ: Խաները նրանց նայում են կասկածանքով, բնակչությունը՝ ուղղակի թշնամանքով, և հայերի ողջ գոյությունը Մակվում ոչնչով չի ապահովված»[121]:

1910 թ. Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը նշում է. «Խոյի և Մակուի վիճակներում շատ աւելի փոքրաթիւ և խեղճ է հայութիւնը... Մակուի երեք հայաբնակ վայրերն ևս զուրկ են դպրոցից, անկարող գրեթէ առանց արտաքին օժանդակութեան օրինաւոր դպրոց պահելու»[122]:

1911 թ. մայիսի 5-ին Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին հղած գրության մեջ Կարապետ եպիսկոպոսը, անդրադառնալով Մակվի հայերի վիճակին, նշում է. «Մակուի վիճակը իւր պատմական նշանակութեամբ և աշխարհագրական դիրքով այնպիսի կարևորութիւն ունի հայութեան համար, որ ամէն ջանք գործ պէտք էր դնել, եթէ հնար էր, այդտեղի հայերի թիւը բազմացնելու և երկու հոյակապ վանքերը շատ աւելի բարեզարդ վիճակի մէջ դնելու, ոչ թէ եղածն իսկ աւերակի մատնելու»[123]:

116 **Աւօ**, Նամակ Թրքո-պարսկական սահմանագլխից, «Հնչակ», 1907, № 9-10, էջ 126:

117 «Մշակ», 1890, № 147, էջ 3:

118 “После Марко Поло. Путешествия Западных чужеземцев в страны трех Индий”, перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я. М. Света, Москва, 1968, с. 138.

119 «Դրօշակ», 1902, № 9, էջ 130:

120 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 24 (բնագրում՝”Кроме татар и курдов, в Маку есть и третья национальность, заслуживающая внимания. Армяне, имевшие в IX-XII в. свое Васпураканское царство около Вана и Арарата и усеявшие всю территорию нынешняго Маку церквами и зданиями, стоящими теперь в развалинах, мало-по-малу таяли среди мусульман и в настоящее время живут лишь в 4 селениях ханства. Не говоря о старых поселениях их, отмеченных церквами, даже в сравнительно недавнее время, лет 30 тому назад, армяне были еще, напр., в деревнях Даналы и Вермезъяр, занятых теперь исключительно мусульманами)”.

121 Նշվ. աշխ. էջ 24 (բնագրում՝ “Из прежних богатых купцов никого уже нет; в Маку остались лишь бедняки и ремесленники: кузнецы, сапожники, виноторговцы, оружейники (чахмахсазы) т. п. В деревнях занимаются хлебопашеством. Ханы смотрят на них подозрительно, население прямо враждебно, и все существование армян в Маку ничем не обезпечено”). Ե. Ֆրանգյանի հաշվումներով՝ «...Մակուի զանազան գիւղերը ցրւած հայերի թիվը 180 տանից չէ անցնում: Ուրեմն հայերը կազմում են ազգաբնակության շատ աննշան մասը. պէտք է ասել, դրանց վիճակը շատ աննախանձելի է» (**Ֆրանգեան Ե.**, Մակուի խանութիւնը, «Տարազ», 1904, № 15, էջ 146):

122 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺՁ, էջ 174-175:

123 Նշվ. աշխ., էջ 231:

Մակուն ամբողջությամբ հայաթափվում է Երկրորդ աշխարհամարտից հետո:

*Թաթարներ.* 1828 թ. հայերի գաղթից հետո գավառում մեծամասնություն են կազմում թաթարները: 1905 թ. ականատեսի վկայությամբ՝ նրանք առանձնանում են իրենց կոպտությամբ և խարդախությամբ[124]:

*Քրդեր.* ըստ 1905 թ. մի տեղեկության՝ խանության քոչվոր քրդերը երեք ցեղախմբից էին: Արարատ լեռան մոտից մինչև թուրքական սահմանը զբաղեցնում էին ջալալները (ավելի քան 1500 ծուխ), Արաքս գետից փոքր-ինչ արևելք՝ դեպի Սոքար լեռ և մինչև Խոյ, միլաններն էին (շուրջ 1000 ծուխ), Չալդրանում՝ հայդարանլիները (մինչև 200 ծուխ: Ի դեպ, քոչվոր հայդարանլիները ԺԹ դարավերջին սարդարի կողմից Կարանեի գրավումից հետո Մուստաֆա աղայի գլխավորությամբ անցել են Թուրքիա՝ Մահմուդիե շրջան)[125]:

Նույն ժամանակաշրջանի մեկ այլ հաղորդման համաձայն՝ Մակուի սահմանի «հաւասարակշռութիւնը պահում էր նրանով միայն, որ Մակուի քրդերը, որ երկու գլխաւոր ցեղերից են՝ Արուսանցի եւ Հայտարանցի, բարեկամ եւ ցեղակից էին թուրքաց սահմանի քրդերին: Արուսանցիք, որ սար էին ելնում Սարայի գծի վրայ, Նոշարից-Կոտուր, ցեղակից էին Մլանցի աշիրաթին, որի հիւղերը Սարայի շրջանն են: Իսկ Հայտարանցիք, որ թւով աւելի քիչ էին Մակուի մէջ, քան Արուսանցիք, բնակւում էին Կարանիի դաշտը եւ սար էին ելնում Ալագեանի լեռնաշղթայի վրայ՝ սահմանակից Աբաղային»[126]:

**Մակու գավառի վանքերը.** պատմության ընթացքում Արտազ գավառի տարածքում կառուցված վանքերից ԺԹ դարավերջին գործել են միայն երկուսը. «Թեմի մէջ կան երկու վանք. Արտազի Թադէոս Առաքեալի վանքը եւ Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը»[127]:

Հայտնի է, որ «...վակֆային գույքի վարչությունը՝ «Օղաֆը», իր իրավասության տակ էր առել Ատրպատականի նախկին հայաբնակ լքյալ ազգային ու եկեղեցական կալվածքների հովանավորման գործը», սակայն 1966 թ. մարտին Մակվի, Խոյի, Սալմաստի և այլ շրջանների լքյալ եկեղեցիների կալվածապատկան հողերը վերստին անցնում են Ատրպատականի թեմական խորհրդի տնօրինության ներքո՝ ընդունելով «Օղաֆ»-ի հսկողությունը[128]:




124 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 15.

125 Նշվ. աշխ., էջ 19:

126 **Արամը** (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 179:

127 **Առաքելեան Հ.**, Կրթական Պարսկաստանի հայերի դպրոցական վիճակը, «Մասիս», 1885, № 3768, էջ 959:

128 **Փահլևանյան Հ.**, Իրանահայ համայնքը, Երևան, 1989, էջ 58:

# ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ

Թադեոս առաքյալի վանքի տեղում հավանաբար գոյություն է ունեցել բնապաշտական մեհյան, որի ավերակների վրա հետագայում կառուցվել է այս մենաստանը[1]: 301 թ., երբ քրիստոնեությունը Հայաստանում ընդունվում է որպես պետական կրոն, և հին կրոնի կործանված շինությունների տեղում կառուցվում են եկեղեցիներ, հայ հոգևոր դասի և ժողովրդի հատուկ ուշադրությանն է արժանանում նոր կրոնի տարածման ճանապարհին նահատակված Թադեոս առաքյալի անվան հետ ավանդաբար կապված այս մենաստանը: Այն հետագայում դառնում է հոգևոր մի կարևոր թեմի կենտրոն ու ժողովրդի կողմից շատ սիրված ուխտատեղի: Վանքը բազմիցս վերակառուցվել ու ճոխացվել է հետագա դարերում:

Հավատացյալ հայ ժողովուրդը դարեր շարունակ այս հինավուրց վանքն է եկել մխիթարվելու և սփոփվելու: Կատարված նվիրատվությունները օգտագործվել են սրբատեղիի պահպանման ու շենացման համար: Վանքի վանահայրը, որը միաժամանակ վարել է Արտազ գավառի թեմական առաջնորդությունը, մեծ ազդեցություն և վճռորոշ ձայն է ունեցել Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններում: Արտազի թեմի և Սբ. Թադեի վանքի առաջնորդներից երկուսը՝ Մեսրոպ Արտազեցին (1359-1372) և Գրիգոր Ջալալբեկյանցը (1443-1465) օծվել են Ամենայն Հայոց կաթողիկոս:

Թադեոս առաքյալի վանքը, նշանավոր հոգևոր կենտրոն և հռչակավոր ուխտատեղի լինելուց բացի, եղել է հայ ժողովրդի դարավոր մշակույթի, գրականության և կրթության օջախ: Այս վանքն է ղեկավարել ամբողջ գավառի կրթական գործերը: Մշտական հարձակումների ու ավարառության հետևանքով մենաստանը Սանահնի, Հաղպատի, Տաթևի, Գլաձորի և այլոց նման մշակույթի նույնքան հայտնի կենտրոն չի դառնում, բայց դարեր շարունակ ծառայում է իր հովանու տակ ապրող ժողովրդի կրթական-ուսումնական գործերին, հնարավորինս իր լուման ներդնում ազգային և մշակութային անկախ կյանքը պահպանելու, մայրենի լեզուն, դպրությունը սերունդներին ժառանգելու գործում: Վանքը դժվարին օրեր է ապրել արաբական, սելջուկյան, մոնղոլական, մանավանդ Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ, ավերվել ու կողոպտվել է և ծանր հարվածներ ստացել իրանա-օսմանյան պատերազմների ընթացքում: Զարմանալի չէ ուրեմն, որ վանքի պատմության հետ կապված բազմաթիվ փաստաթղթերից ու տեղում ստեղծված գրական-մշակութային գործերից շատ քչերն են պահպանվել ու հասել մեզ: Սակայն մեծ է եղել հայ ժողովրդի ու նրա հոգևոր առաջնորդների և հայրերի նվիրվածությունը առաքելական նահատակավայրի հանդեպ, նրանց տոկունությունը մենաստանի դժնդակ օրերի թոհուբոհում: Հաճախակի թալանն ու ավերումը, կոտորածն ու տարերային աղետները անզոր են եղել իսպառ ոչնչացնելու տեղում ստեղծված հայ հոգևոր արժեքները: Հակառակ իր ներկա թափուր վիճակին՝ Թադեոս առաքյալի վանքն այսօր էլ հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի խոսուն վկան է:

Դարեր շարունակ վանքը եղել է Ատրպատականի հայոց կարևորագույն հոգևոր կենտրոնը, միջնադարյան Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր հաստատություններից մեկը: Այսօր էլ այն շարունակում է մնալ իբրև առաջնակարգ ուխտատեղի, որի հանդեպ ակնածանք է տածում ոչ միայն հայությունը, այլև վանքի շրջակա մահմեդական բնակչությունը:

**Թադեոս առաքյալի քարոզչությունը և նահատակությունը Հայաստանում**[2]. հայոց եկեղեցին իր սկզբնական հիմնադիրներ է ճանաչում «Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս առաքեալները, զորս ինքն յատուկ կոչմամբ ալ Առաջին Լուսաւորիչք Հայաստանեայց կանուանէ»[3]: Նրանց անձնական քարոզ-

1 Այս խնդրում լույս կարող են սփռել միայն տեղում իրականացվելիք հնագիտական պեղումները:

2 Թադեոս առաքյալի վկայաբանության, քարոզչության և Գյուտ նշխարացի մասին տե՛ս Սոփերք Հայկականք (այսուհետև՝ Սոփերք, համապատասխան հատորներով և էջերով), Ը, Վենետիկ, 1853: Տե՛ս նաև **Անանուն**, Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն, քարոզութեանն եւ գալստեան ի Հայս եւ կատարմանն, որ ի Քրիստոս: Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյն (այսուհետև՝ **Անանուն**, համապատասխան էջերով), Մատենագիրք Հայոց, հ. Գ, Անթիլիաս, 2004:

3 **Օրմանեան Մ.**, Հայոց եկեղեցին, Կ.Պոլիս, 1911, էջ 23: 1994 թ. ապրիլի 22-ին Վատիկանից Էջմիածին ժամանած պատվիրակությունը, որի կազմում էին բարձրաստիճան կաթողիկե հոգևորականներ Արևելյան եկեղեցիների Սբ. Ժողովի նախագահ կարդինալ Սիլվեստրինիի գլխավորությամբ, Հռոմի Հով-







**Թադեոս առաքյալի վանքի և Վանք (Ղարաքիլիսա) գյուղի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից, վանքի տեսքն արևմուտքից և հարավ-արևմուտքից**



**Ուխտագնացության օր Թադեոս առաքյալի վանքում (լուս.՝ Ժորես Ոսկանյանի, 1960-ական թվականներ)**

չության և նահատակության վրա է հիմնվել Հայաստանյայց առաքելական եկեղեցին: Թադեոս առաքյալի անունը հաստատապես կապված է Հայաստանում առաքելական քարոզչության սկզբնավորման հետ, որն ընդունում են քրիստոնեական բոլոր եկեղեցիները[4]: Հայոց Ընդհանրական հայրապետական աթոռը կոչվում է «Աթոռ Թադէոսի առաքելոյն», «Թադէական աթոռ», իսկ Հայաստանը՝ «վիճակ Թադէոսի առաքելոյն»[5]:

Ըստ Մովսես Խորենացու՝ Եդեսիայի (նաև Ուռհա, այժմ՝ Ուրֆա) Աբգար հայոց Արշակունի թագավորը[6], որ պարսիկների օգնությամբ կամենում էր թուլացնել հռոմեական ճնշումները, լսելով պարսից արքունիքում ծայր առած գահակալական կռիվների մասին, գնում է Պարսկաստան, դադարեցնում խռովությունները, բայց տունդարձի ճանապարհին հիվանդանում է բորոտախտով: Հրեաս-

հաննես-Պողոս Բ պապի անունից Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանին (1955-1994) է հանձնում Հայաստան աշխարհի առաջին լուսավորիչներ Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների մասունքները («Սիոն», 1994, ապրիլ-մայիս-հունիս, էջ 154-156):

4 **Հատիտյան Ա.**, Վկայաբանություն Թադեոս առաքյալի քարոզության, նրա Հայաստան գալու և նահատակության մասին, «Էջմիածին», № Է, 1982, էջ 32: Թադեոս առաքյալի քարոզչության մասին տե՛ս **Օրմանյան Մ.**, Հայոց եկեղեցին, էջ 21-29: Նույնի՝ Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 4-55: **Անանեան Պօղոս**, Քրիստոնեության հետքեր Հայաստանի մէջ ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն), «Բազմավէպ», 1978, էջ 8-64: **Հացունի Վարդան վարդապետ**, Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 1-165: **Կոգեան Ս.**, Հայոց եկեղեցին մինչեւ Փլորենտեան ժողովը, Բեյրութ, 1961, էջ 1-60: **Սահակեան Ա.**, Թադէոս Հայոց առաքեալ, «Հասկ», 1969, հունիս-յուլիս, էջ 228-233: **Դանիէլեան Անուշաւան վրդ.**, Թադէոս՝ առաքեալ Հայոց, «Հասկ», 1974, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 425-429: **Անդրիկեան Ն.**, Սանդուխտ, «Բազմավէպ», 1911, յուլիս, էջ 289-292; օգոստոս, էջ 369-372; **Թօփճեան Բ.**, Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս լուսաւորիչ առաքեալներ Հայաստանի, «Հորիզոն», 1992, նոյեմբեր 30, № 28 (700), էջ 12 և այլն:

5 **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փաւստոս Բուզանդ, համապատասխան էջերով), բնագիրը Ք. Պատկանյանի (վերահրատ.), Երևան, 1987, էջ 48, 66, 112, 116 և այլն:

6 Աստրագետ Հ. Մելքոնյանի կարծիքով «Թադեոս առաքյալի վկայաբանություն»-ից հայտնի Աբգար թագավորը ասորական գրականության վաղագույն երկերից մեկի՝ «Ադդայի վարդապետության» մեջ հիշատակվող Աբգար Ուկամա (Սև, Աբգար Ե) թագավորն է: Իշխել է 4-50 թթ. (ընդմիջում է եղել 7-13 թթ., երբ երկրի գործերը տնօրինել է Մաղնուի որդի Մաղնուն), սակայն նա քրիստոնեություն չի ընդունել, ինչը հաստատում է այս ավանդության ժամանակավրեպ լինելը: Ասորի առաջին թագավորը, ով քրիստոնեությունը հայտարարում է պետական կրոն, 179-214 թթ. գահակալած Աբգար Թ-ն էր (տե՛ս **Մելքոնյան Հ. Գ.**, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից. 3-5-րդ դդ., Երևան, 1970, էջ 162):

տանի Հերովդես արքան, որ թշնամաբար էր տրամադրված հայոց թագավորի հանդեպ, հռոմեացիներին հավատացնում է, թե այդի բուն նպատակը հակահռոմեական դաշինք ստեղծելն է: Աբգարը պատվիրակություն է ուղարկում Պաղեստին՝ հռոմեական Մարինոս զորավարի մոտ՝ հայտնելով իրականությունը պարսից վիճակի մասին: Երուսաղեմում պատվիրակները տեսնում են Հիսուս Քրիստոսին ու տուն վերադառնալով՝ նրա հրաշագործությունների մասին պատմում են թագավորին, որն էլ, հավատով լցված, Ապահունյաց նախարար Անանին, Հովհաննես Նկարչին և նշանավոր այլ անձանց (թվով 10 հոգի) հատուկ նամակով ճանապարհում է Երուսաղեմ և իր մայրաքաղաքն է հրավիրում Հիսուսին՝ խնդրելով բժշկել իրեն: Հիսուսին ուղղված նամակին պատասխանում է Թովմաս առաքյալը և հայտնում, որ Հիսուսը չի կարող կատարել թագավորի խնդրանքը, բայց խոստանում է համբարձվելուց հետո աշակերտներից մեկին ուղարկել Եդեսիա՝ Աբգարին բժշկելու և հայերին քրիստոնեական հավատի լույսը հասցնելու համար. «...և յորժամ համբարձայց՝ առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ»[7]: Ունենալով թագավորի հանձնարարականը՝ Հովհաննեսը փորձում է նկարել Հիսուսին: Բայց ապարդյուն: Տեսնելով այդ՝ Քրիստոսը դեմքին է մոտեցնում ոսկեթել եզերված սպիտակ դաստառակը (թաշկինակը), որի վրա գծագրվում է տերունական պատկերը: Պատվիրակները, վերցնելով այն, վերադառնում են Եդեսիա՝ իրենց հետ տանելով նաև Փրկչի նամակը: Պատկերադրոշմ անձեռագործ դաստառակի շնորհիվ Աբգար թագավորը բժշկվում է, թեև մնում են ծանր հիվանդության որոշ հետքեր[8]:

Հիսուսի խաչելությունից և համբարձվելուց հետո Թովմաս առաքյալի եղբորը՝ Թադեոս առաքյալին, որը, ըստ հայոց եկեղեցու հաստատուն ավանդության, Քրիստոսի 12 աշակերտներից էր, միաժամանակ նաև յոթանասուն աշակերտների գլխավորն ու ուսուցիչը, իբրև քարոզության վիճակ, բաժին է ընկնում Հայաստանը. «...էառ զՀոգին սուրբ ընդ այլ առաքեալսն 'ի վերնատուննն. և 'ի վիճակելն զաշխարհս 'ի վերայ սրբոց առաքելոց, եհաս վիճակն Թադէոսի երթալ 'ի քարոզութիւն Հայոց ազգի. և Պետրոս վեմն հաւատոյ, որ էր գլուխ սուրբ առաքելոցն՝ ետ զգեղարդն աստուածամուխ իբր զէն Թադէոսի, օգնական և օժանդակ 'ի քարոզութիւն առաքելոյն»[9]:

Թադեոս առաքյալը (ասորական աղբյուրներում՝ Ադդա կամ Ադդե)[10] գալիս է Եդեսիա, իջևանում է Տուբիա անունով հրեայի տանը, Քրիստոսի խոսքով լուսավորում է շատերին և լիովին բուժում է թագավորին: Աբգարը, անձամբ իր վրա կրելով նոր կրոնի հրաշագործ ազդեցությունը, ներշնչվում է նրանով, դարձի է գալիս և որպես իր հավատի հաստատում՝ Եդեսիայում կառուցում է եկեղեցի: Իսկ Թադեոսը, ունենալով Սանատրուկին ուղղված Աբգարի նամակը, որի մեջ թագավորը քեռորդուն հանձնարարում էր աջակցել առաքյալին, աշակերտների հետ շտապում է դեպի Հայաստան և Քրիստոսի հավատքի լույսը տարածելով ու եկեղեցիներ կառուցելով՝ հասնում է Արտազ գավառի Շավարշան գյուղաքաղաքը, ուր գտնվում էին հայոց թագավորների ամառանոցներն ու արքունի պալատը. «...առնույր զաշակերտսն և փութով հասանէր յաշխարհին Հայոց, առ թագաւորն Սանատրուկ, 'ի գաւառին Արտազ, 'ի քաղաքագեւղն Շաւարշան, յապարանս արքունի, որ էին հովոց գետինք թագավորացն Հայոց»[11]: Առաքյալը, որպես նվիրական սրբություն, իր հետ Հայաստան է բերում

7 **Մովսէս Խորենացի,** էջ 150: Աբգար թագավորի նամակի մասին տե՛ս նաև “Отрывок из её Абгар-намака Лабубныё (“Переводы и статьи **Н. О. Эмина** по духовной армянской литературе”, Москва, 1897, с. 285-287). **Alishan L.**, Lettre d’Abgar ou histoire de la conversion des Edesseens par Laboubnia, contemporain des apotres, Venise, 1868.

8 Հիսուսի դաստառակի պատմությունը շարադրելիս օգտվել ենք 1706 թ. Կոստանդնուպոլսում տպագրված «**Յայսմաւուրք**»-ից (էջ ԺԵ-ԺԸ):

9 Սոփերք, Ը, էջ 59: Թադեոս առաքյալի և Սանդուխտ արքայադստեր «Վկայաբանութիւնը» հրատարակել է Ղ. Ալիշանը՝ իբրև բնագիր ընտրելով ԺԲ դարի մի «Տոնական» և համեմատելով այն 14-րդ դ. նույնատիպ մեկ այլ ձեռագրի հետ (**Սոփերք,** Ը, էջ 7): Բնագրի աշխարհաբար թարգմանությունը տե՛ս «Էջմիածին», 1982, Է, էջ 35-41: Վերոհիշյալ խնդիրները սպառիչ կերպով լուսաբանել է նաև **Հ. Գ. Մելքոնյանը** (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 158-181): Այս առնչությամբ տե՛ս նաև **Տեր-Պետրոսյան Լ. Հ.,** Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը, «Էջմիածին», 1987, ԺԱ-ԺԲ, էջ 83-89; 1988, Ե-Զ, էջ 44-54; 1989, Դ-Ե-Զ, էջ 90-99:

10 Ավետարաններում Թադեոսն անվանվել է նաև Հուդա Հակոբյան (Ղուկաս, Զ, 16) կամ Ղեբէոս (Մատթեոս, Ժ, 3): **Հր. Աճառյանն** անվան ծագումը համարում է ասորական և մեկնաբանում է «իմաստուն» (տե՛ս նրա Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 244): Միքայել Ասորի պատրիարքն այս կապակցությամբ բոլորովին այլ բացատրություն է տալիս. «Առաքեալն Յիսուսի Թադէ, յազգէ Շմաւոնի, որ նայ ինքն է Ղէբէոս, որ է սիրտ եւ կոչեցաւ Թադէոս, որ է Սիրելի» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային-եկեղեցական թանգարանի, կազմեց՝ **Վ. ծայրագ. վրդպ. Տէմիրճեան**, Անթիլիաս, 1977, էջ 67. ձեռագիրը՝ **Միխայէլ Ասորի**, Համառօտ ժամանակագրութիւն): Տե՛ս նաև Քրիստոնյա Հայաստան (հանրագիտարան), Երևան, 2002, էջ 377-378: Մովսես Խորենացին և ուրիշները Թադեոս առաքյալին համարել են Քրիստոսի 70 աշակերտներից մեկը: Վարդան Արևելցին (13-րդ դ.) և Գրիգոր Տաթևացին (1346-1409) այս հանգամանքը բացատրում են նրանով, որ Թադեոսը եղել է այդ աշակերտների գլխավորն ու ուսուցիչը: Տաթևացին գրում է. «Եւ այս է [ստոյգ] պատճառն որ ոմանք [զԹադէոս առաքեալն] յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր» (**Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 549):

11 Սոփերք, Ը, էջ 13: **Գ. Կ. Ո. (Ոսկերիչյան Գարեգին քահանա),** Ս. Թադէոս առաքեալ. Մկրտարան-ուխտատեղին յԵդեսիա, «Բիւզանդիոն», 1897, թիւ 334, դեկտեմբեր 1/13: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 6:

Սբ. մյուռոնի յուղից, որն ինքը՝ Հիսուսն էր հանձնել աշակերտներին (Մատթեոս, Զ, 13), և Սբ. Գեղարդը[12], որով հռոմեացի զինվորը խոցել էր Հիսուսի կողը նրա խաչելությունից հետո:

Աբգար թագավորի մահից հետո Եղեսիայում թագավորում է նրա Անանուն որդին, իսկ Հայաստանում՝ քեռորդի Սանատրուկը:

Բնապաշտական Հայաստանում Թադեոս առաքյալը, քրիստոնեություն քարոզելով, շատերին է հավատափոխ անում: Սանատրուկ թագավորն ու իր 18-ամյա դուստրը՝ Սանդուխտը, ևս ընդունում են քրիստոնեություն: Սակայն կարճ ժամանակ անց քաղաքական պատճառներով Սանատրուկը վերադառնում է հայրենական կրոնին և սկսում քրիստոնյաների հալածանքը: Թագավորը չի խնայում անգամ հարազատ դստերը, երբ նա մերժում է քրիստոնեությունից հրաժարվելու հոր պահանջը. «...Այս Սանատրուկս նահատակեաց զԹադէոս առաքեալն եւ զօրհորդն իւր զսուրբն Սանդուխտ ի Յարտազ...»[13]: Նախ մարտիրոսվում է Սանդուխտ կույսը: Առաքյալն ու հավատացյալները սրբուհու մարմինն ամփոփում են նահատակության վայրին մերձակա բլրի բարձունքում՝ ապահովելով ամեն զգուշություն ու նրա հանգստարանը դարձնում թշնամիների համար անտեսանելի. «Եւ եկեալ սուրբ առաքեալն ...և առեալ զմարմին սրբոյ կուսին Սանդըխտոյ եդին ՚ի նոյն տեղւոջ, և արար աներեւոյթ զհանգիստ երանելւոյ սուրբ տիկնոջն Սանդխտոյ»[14]: Մի քանի օր անց Սանատրուկի զինվորները փոքր ճորակից քիչ հեռու՝ մի բարձրավանդակում, ժայռերի մոտ սպանում են Թադեոս առաքյալին: Այդժամ երկնքից ահեղ սաստկության ձայն է լսվում, և նահատակված առաքյալի վրա երկնային լույս է ցայտում: Ժայռը պատռվում է ու ներս է առնում սրբի մարմինը: Անօրենները, այս հրաշքը տեսնելով, սարսափահար փախչում են, իսկ հավատացյալները նոր ուժ են առնում. «Եւ հասեալ բազում զօրականք իշխանօքն հանդերձ, և կալեալ զսուրբ առաքեալն՝ հանին ՚ի փոքր ձորակէն սակաւ մի ՚ի բարձրավանդակ տեղի մի ՚ի վիմամէջս...Եւ կատարեցաւ ՚ի նմին ժամու սրով: Եւ ՚ի կատարել սրբոյն...եղեւ շարժումն մեծ, և պատառեալ վիմին ընկալաւ զսուրբ մարմին առաքելոյն զօրութեամբն Աստուծոյ, եւ անօրէնքն եղեն փախստականք»[15]: Թադեոս առաքյալի և Սանդուխտ սրբուհու հետ նահատակվում են նաև Զարմանդուխտ տիկինը, Սամուել իշխանը և բազում քրիստոնյաներ:

Առաքելական քարոզչության ժամանակամիջոցը համարվում է ութ տարի (35-43թթ.)[16]: Նահատակության օրերը վկայաբանության ընդարձակ և համառոտ տարբերակները ներկայացնում են համապատասխանաբար հայոց և հույյան տոմարներով. Սանդուխտ կույսինը՝ քաղոց ամսվա 7-ին (դեկտեմբերի 15), իսկ Թադեոս առաքյալինը՝ քաղոցի 13-ին (դեկտեմբերի 23)[17]:

**Թադեոս առաքյալի կանոնները**. Հայ առաքելական եկեղեցու կանոնական հավաքածուի բաղկացուցիչ մասն է կազմում «Սահմանք կանոնաց Սուրբ առաքելոյն Թադէոսի ի քաղաքին Ուռհայ...» կանոնախումբը[18]:

Ավանդության համաձայն՝ Թադեոս առաքյալը դեռևս Ուռհա (Եդեսիա) քաղաքում եղած ժամանակ հաստատել է եկեղեցական գրավոր օրենքներ և կանոններ, որոնք հետագայում ընդունվել և գործադրվել են հայոց եկեղեցում: Այդ կանոնների նորովի շարադրանքն իրեն է վերագրում Թադեոս առաքյալի առաջին աշակերտներից Զաքարիա կրոնավորը,

---

12 Գեղարդը դարեր շարունակ պահվել է Այրիվանքում (վանական համալիրը նրա անունով կոչվել է նաև Գեղարդավանք), որտեղից էլ հետագայում տեղափոխվել է Սբ. Էջմիածին (տե՛ս **Ղարիբյան Ի. Գ.**, Հրաշագործ Սուրբ Գեղարդ, Երևան, 2003):

13 Մանր ժամանակագրություններ, հ. II (այսուհետև՝ ՄԺԲ, համապատասխան էջերով), կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 314:

14 Սոփերք, Ը, էջ 82-83: Հմմտ. **Անանուն**, էջ 15:

15 Սոփերք, Ը, էջ 54, 57: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 17-18: Հայաստանում Թադեոս առաքյալի գործունեության տարիների, մարտիրոսության, վարքագրության ստեղծման ժամանակի հարցում կարծիքներն առանձնանում են: Այդ մասին տե՛ս **Օրմանյան Մ.**, Հայոց եկեղեցին, էջ 29, 248: **Վարդանյան Ռ.**, Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը և նրա ժամանակը, «Հայոց սրբերը և սրբավայրերը» (հոդվածների ժողովածու), Երևան, 2001, էջ 61-70: **Դանիելյան Է.**, Սուրբ Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» (հոդվածների ժողովածու), Երևան, 2000, էջ 49-54: **Ակինեան Ն.**, Վկայաբանութիւն Ս. Թադէոսի եւ Սանդխտոյ կուսին եւ կանոնք Թադէի, «Հանդէս Ամսօրեայ», 1969, № 10-12, էջ 400-426; 1970, № 1-3, էջ 1-34: **Phillips G.**, The doctrine of Addai, the Apostle, Cambridge,1868: “La legende d`Abgar dans l`histoire d`Armenie de Moiise de Kohren”, par A. Carriere, Paris, 1895. **Duval R.**, Histoire d`Edess, La littйrature Syriaque, Paris, 1907 և այլն: Ավանդությունը ժամանակին ռուսերեն է թարգմանել Մ. Էմինը (“Сказание о мученической кончине святого апостола Фаддея в Армении”, “Переводы и статьи **Н. О. Эмина** по духовной армянской литературе”, Москва, 1897, с. 113-132) և այլն:

16 **Օրմանյան Մ.**, Հայոց եկեղեցին, էջ 24: Տե՛ս նաև **նույնի՝** Ազգապատում, Ա, էջ 18-20:

17 Սոփերք, Ը, էջ 58, 75, 83: Ռ. Վարդանյանը, հենվելով տոմարական հաշվումների վրա, Սանդուխտի նահատակության օր է համարում դեկտեմբերի 17-ը (տե՛ս **Վարդանյան Ռ.**, նշվ. հոդվ., էջ 66 և հետո): Հոդվածում կան նաև հետաքրքիր դիտարկումներ Թադեոս առաքյալի «Վկայաբանության»՝ իբրև հայերեն գրված առաջին ինքնուրույն երկի մասին: Հոդվածագրի կարծիքով այն հեղինակել է Սամուել եպիսկոպոսը 420-423 թթ.:

18 Հայ եկեղեցին դեռևս հայկական թագավորության՝ քաղաքական իշխանության գոյության պայմաններում իրեն էր վերապահել օրենսդրական և դատական գործերը, և աննշան բացառությամբ կղերականության ձեռքով է կազմվել հայ օրենսդրությունը: Երբ հայությունը կորցնում է քաղաքական կենտրոնական իշխանությունը, և երկիրը ենթարկվում է օտար տիրապետողներին, եկեղեցու սեփականացրած այդ իրավունքներն ավելի են ամրապնդվում, քանի որ Հայաստանին տեր դարձած օտար պետությունները հայ եկեղեցու ղեկավարներին սիրահոժար ճանաչում են որպես հայության իրավական միակ ներկայացուցիչը:

որը հիշատակվում է նաև «Վկայաբանութեան» և «Գիտ նշխարաց»-ի մեջ. «Զայս աւրինադրութիւն ես Զաքարիա աշակերտ առաքելոյ Թադէոսի գրեցի, որպէս լւայ ի նմանէ, ամենայն հաւատացելոց ի Քրիստոս»[19]:

Ըստ Հ. Տաշյանի՝ այս կանոնները կազմելու շարժառիթն անմիջականորեն կապվում է ասորի կրոնավոր Լաբուբնայի հետ[20], կանոնները թարգմանվել են ասորական բնագրից, կազմողն օգտվել է «Վարդապետութիւն առաքելոց» մատյանից և նրա հայերեն թարգմանությունից, որ կատարվել է Ե դարից հետո այն նույն անձանց կողմից, որոնք ստեղծել են Թադեոս առաքյալի «Վկայաբանութիւնը» և նշխարների գյուտի պատմությունը[21]: Իսկ թե երբ է գրվել «Կանոնք Թադէոսի»-ն ներկա ձևի մեջ, մինչև օրս ճշտված չէ: Ստույգ է միայն, որ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը (717-728) ծանոթ չի եղել այդ կանոններին, հակառակ դեպքում դրանք անպայմանորեն կներառվեին նրա նշանավոր կանոնագրքում[22]: Այս ամենը նկատի առնելով՝ ոմանք կարծել են, որ Թադեոս առաքյալին վերագրված կանոնագիրքն առաքյալի Հայաստան գալու, նահատակվելու և նշխարաց գյուտի պատմության հեղինակների գրչի արգասիք է:

Ժողովածուն կազմված է 33 հոդվածից, որտեղ հարց ու պատասխանի ձևով սահմանվում ու կարգավորվում են հոգևոր դասի և աշխարհիկ հավատացյալների ընդհանուր վարքագծի, կենցաղավարության հետ կապված խնդիրները: Թադեոս առաքյալին վերագրվող կանոններից 16-ը վերաբերում են հոգևորականներին, 11 հոդվածներով կանոնակարգվում են հավատացյալների ողջախոհ կենցաղի դրույթները: Կանոններից 6-ը սահմանում է ծիսակարգի մի շարք հիմնարար դրույթներ:

**Թադեոս առաքյալի ավանդության արձագանքները հետագա դարերում.** հայ մատենագրության մեջ Թադեոս առաքյալի մասին առաջին հիշատակությունները վերաբերում են Ե դարին: Փավստոս Բուզանդն իր «Հայոց պատմության» երրորդ դպրության սկզբում առանց մանրամասնելու սոսկ հիշատակում է առաքյալի քարոզչության և մարտիրոսական վախճանի մասին՝ պարզաբանելով, որ այդ «...բոլորը ուրիշների կողմից արդեն գրված են...: Բայց որպեսզի մեր պատմության մեջ ընդհատում չնկատվի՝ մասնավոր նշանակեցինք, ինչպես մի աղյուս, որ պատի շարվածքի մեջ է դրվում շենքը ամբողջացնելու համար»[23]:

Այնուհետև Մովսես Խորենացին ներկայացնում է առաքյալի գործունեությունն ու նահատակությունը Հայաստանում, նրա նշխարների գյուտը և ծանոթագրում, որ այդ ամենի մասին ուրիշները պատմել են իրենից առաջ, ինքը հարկ չի համարում մանրամասն կրկնել. «Գտանի որ ինչ առ սոցա ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ առաքելոյն Թադէի ի Հայս, և հաւատալ Սանատրկոյ, և թողուլ զհաւատսն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն առաքելոյն և որք ընդ նմա՝ ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրեարս գալ և ընդունել զմարմին Առաքելոյն... և մարտիրոսանալ դստերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհն. և աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց, և փոխել յառապարն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք ոճով երկրորդել»[24]:

Թադեոս առաքյալի մասին հաջորդ տեղեկությունը, որը նաև ենթադրել է տալիս, որ առաքյալի նահատակավայրում և Թադեոս առաքյալի վանքի տեղում դեռևս Գ դարում պաշտամունքային ինչ-որ շինություն պետք է լիներ, կապվում է Գրիգոր Լուսավորչի անվան հետ: 226 թ. Պարսկաստանում տեղի են ունենում քաղաքական լուրջ փոփոխություններ. տապալվում է Պարթև Արշակունիների իշխանությունը, գահ է բարձրանում Պարսք (Փարս) նահանգի Ստահր քաղաքի քրմապետ Սասանի թոռ Արտաշիր Պապականը՝ Սասանյան հարստության հիմնադիրը (թագավորել է մինչև 243 թ.)[25]: Սասանյանները պայքար են սկսում երկրի ներսում պարթևական հարստության ողջ մնացած ներկայացուցիչներին ոչնչացնելու համար, կարճ ժամանակամիջոցում ստեղծում են կենտրոնացված զորեղ պետություն և դառնում ռազմական հզոր ուժ Մերձավոր և Միջին Արևելքում: Նրանք թշնամական դիրք են գրավում հայոց Արշակունիների՝ իրենց արքայատոհմի հակառակորդների հանդեպ՝ նպատակ ունենալով ոչնչացնել նրանց և

---

19 **Կանոնագիրք Հայոց,** հ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 40: Առաքելական կանոնների մասին տե՛ս նույն տեղում, էջ XLIII-XLVI, 19-40, ինչպես նաև **Տաշեան Յ.**, Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը. Թուղթ Յակոբայ առ Կոդրատոս եւ կանոնք Թադդէի: Քննութիւն եւ բնագիրք, Վիեննա, 1896, էջ 392-425, Քննութիւնք, էջ 131-150: **Ակինեան Ն.**, Մատենագրական հետազօտութիւններ, «Հանդէս Ամսօրեայ», 1970, № 1-3, էջ 29-34: **Մովսիսեան Յուսիկ վրդ.**, Հայաստանեայցս առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն, Ս. Էջմիածին, 2008, էջ 22:

20 Ենթադրվում է, որ «Վարդապետութիւն առաքելոց»-ը գրվել է 380 թվականին (**Ակինեան Ն.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1970, № 1-3, էջ 31-32):

21 Ն. Ակինյանն (նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ»,1970, № 1-3, էջ 15-16) ու Հ. Մելքոնյանը (նշվ. աշխ., էջ 170-171) նույնպես ենթադրում են, որ «Վկայաբանութեան» հեղինակը Սամուել եպիսկոպոսն է:

22 Հայ իրավաբանական մտքի պատմության մեջ դարագլուխ է կազմում Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի Կանոնագիրքը, որը, դժբախտաբար, մեզ է հասել ոչ իր սկզբնական վիճակով: Այն համաշխարհային պատմության մեջ իրավական փաստաթղթերի առաջին մեծ ժողովածուն է, հայկական Corpus juris canonici-ն և կազմվել է ավելի վաղ, քան Իսիդորոս Մերկատորի կանոնական ժողովածուն (տե՛ս ՀԺՊ, հ. II, Երևան, 1984, էջ 482: **Կանոնագիրք Հայոց**, հ. Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 10-11):

23 **Փաւստոս Բուզանդ**, էջ 13:

24 **Մովսէս Խորենացի**, էջ 157:

25 Նշվ. աշխ., էջ 205:

գրավել Հայաստանը: Հայ պատմիչների կողմից Խոսրով Մեծ անվանված[26] Տրդատ Բ (216-256) հայոց թագավորը հենց սկզբից հանդես է գալիս Սասանյանների դեմ, ապաստան է տալիս պարթև Արշակունի Արտավան Ե վերջին թագավորի որդիներին, ստեղծում հայ-պարթևական ռազմական դաշինք, համախմբում է հակասասանյան ուժերին և ապավինելով Հռոմեական կայսրության օգնությանը՝ 228 թ.-ից ռազմական գործողություններ է սկսում Արտաշիրի դեմ: Հակամարտությունները շարունակվում են նաև Արտաշիր Պապականի որդու՝ Շապուհ Ա-ի (որին Խորենացին շարունակում է Արտաշիր կոչել) օրոք: Շուրջ 30 տարի Տրդատ Բ թագավորը համարվում էր Սասանյանների թշնամին, որին հարկավոր էր հեռացնել ասպարեզից: Սուրբ Գրիգորի հայրը՝ Անակը, որ պարթև Արշակունի էր՝ Սուրենի Պահլավ տնից[27], պատրաստակամություն է հայտնում սպանել հայոց թագավորին: Թավրիզում պարսիկների հետ բանակցություններ վարելուց հետո Անակը ընտանիքով վերադառնում է Հայաստան, իբր թե հալածական է Արտաշիր Սասանյանից և հայ ազգակից արքային ապավինելու խնդիր ունի: Հասնելով Արտազ գավառ՝ Անակն օթևանում է Թադեոս առաքյալի գերեզմանի մոտ: Եվ այստեղ էլ, ըստ ավանդության, Անակի ու կնոջ (ըստ որոշ աղբյուրների՝ Ոգուհի անվամբ) մերձությունից հղություն է առնում սուրբ Գրիգորը, ապա ծնվում է նույն տեղում, ուստի ստանում է շնորհ՝ շարունակելու առաքյալի գործը. «Արդ՝ ի բնակելն Անակայ ի դաշտին Արտազու՝ պատահէ նմա տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն, որպէս թէ ի ներքսագոյն սրսկապանի խորանին. անդ ասեն զյղութիւն մօր սրբոյ և մեծի մերոյ Լուսաւորչին: Վասն որոյ և զնորին Առաքելոյ շնորհսն ընկալեալ որ առ հանգստարանաւ նորին զլինելութիւն էառ՝ զնորին ելից զհոգևոր մշակութեանն պակասութիւն»[28]:

Թադեոս առաքյալի քարոզչության և նահատակության պատմությունն իր արտացոլումն է գտել նաև հայոց դարձի պատմության ասորական խմբագրության մեջ. «Հայոց այս թագավորի՝ Սանատրուկի օրոք հայտնվեց Ղևին, որի մականունն էր Թադեոս, այսինքն՝ Ադդե, և նրանց քարոզեց հավատի խոսքը: Սանատրուկը՝ Աբգար թագավորի քեռորդին, ընդունեց նրան: Լսելով այդ՝ հայոց նախարարները եկան նրա մոտ և ասացին նրան. «Քեզ վայել չէ լքել քո նախնիների աստվածներին»: Նա էլ կատարեց նրանց կամքը և վերադարձավ իր նախկին մոլորությանը: Իսկ Ադդեին բարձրացրին մի բլուր, որտեղ նա սպանվեց նրանց ձեռքով ու թաղվեց հավատացյալ մարդկանց կողմից»[29]: Փոքր-ինչ հետո կարդում ենք. «Երբ նա (Անակը) հասավ մի քաղաքի (իմա՛ Շավարշան, Ա. Հ.), նրա բանակը դադար առավ այնտեղ: Իսկ ինքը բարձրացավ այն բլուրը, որտեղ պսակի էր արժանացել Ադդե առաքյալը, և այդ գիշեր ննջեց իր կնոջ հետ: Վերջինս հղացավ նրանից այս Գրիգորին, որը լուսավորեց ողջ Հայաստանը»[30]:

Թադեոս առաքյալի՝ Հայաստանում ունեցած քարոզչության, նրա ու Սանդուխտ կույսի նահատակվելու ավանդությունը համառոտ ներկայացրել են նաև հետագա հայ պատմիչները, մասնավորապես ԺԲ-ԺԳ դարերի նշանավոր մատենագիր Մխիթար Անեցին[31]: Այն իր արտացոլումն է գտել նաև ԺԶ-ԺԸ դարերի պատմիչների և մանր մատենագիրների՝ Զաքարիա սարկավագ Քանաքեռցու, Դավիթ Բաղիշեցու և այլոց գործերում[32]:

**Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի «Գիւտ նշխարաց»-ը.** Թադեոս առաքյալի քարոզչական գործունեության և մարտիրոսության պատմությունը շարադրելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև մեկ այլ ստեղծագործության՝ «Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյ եւ Սամուելի եւ Իսրայելի եւ այլոց» խորագիրը կրող երկին, որը մեզ է հասել Ե դարից: Հրաշապատում ձևով ներկայացված է գյու-

---

26 **Ագաթանգեղոս**, Պատմություն Հայոց (այսուհետև՝ **Ագաթանգեղոս**, համապատասխան էջերով), աշխարհաբար թարգմ. ներածականով ու ծանոթություններով Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977, էջ 31-35: **Մովսէս Խորենացի**, էջ 202-203, 207-212: Դեպքերի շարադրանքը մանրամասն տե՛ս ՀԺՊ, h. II, էջ 23-44:

27 Պահլավա-պարթևական արքայատոհմը բաժանվում էր երեք ճյուղի՝ Կարենի Պահլավ, Սուրենի Պահլավ և Ասպահապետի Պահլավ: Կարենի Պահլավ տունը ազգակցական կապերին հավատարիմ մնաց, իսկ մյուս երկուսն անցան Սասանյան Արտաշիրի կողմը (**Մովսէս Խորենացի**, էջ 204, 207-208):

28 **Մովսէս Խորենացի**, էջ 212: Խորենացին Գրիգոր Լուսավորչի մոր՝ Ոգուհու անունը չի հիշատակում: Նրա մասին վկայված է **Հովհան Մամիկոնյան** (այսուհետև՝ **Հովհան Մամիկոնյան**, համապատասխան էջերով), Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 32: Այս տեղեկությունը, Խորենացու երկից օգտվելով, գրեթե նույն ձևակերպումով հաղորդում է Ժ դարի պատմիչ, Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին (898-929): Գրիգոր Լուսավորչի ծնողների՝ Արտազում գիշերելու փաստը վկայակոչելիս պատմիչը գրում է, թե երկնային նախախնամությամբ Անակ Պարթևը օթևանում է սուրբ առաքյալի քնարանում, որը խորանի խցի ներսում էր. «Իսկ Անակ... եկեալ երեկօթս առնէ յԱրտազ գաւառի. և ըստ երկնային այցելութեանն պատահի սորա տեղի օթևանի ՚ի քնարանի սրբոյ Առաքելոյն ՚ի ներքսագոյն սրսկապանի խորանին, և անդ ապա լինել ասի յղութեան մօր Սրբոյն Գրիգորի: Եւ յետ սահմանեալ աւուրցն՝ ապա և ծնունդ նորուն ՚ի նմին տեղւոջ կատարեալ լինի» (**Յովհաննու** կաթողիկոսի **Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ **Յովհ. Դրասխանակերտցի**, համապատասխան էջերով), Երևան, 1996, էջ 40):

29 **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. հոդվ., «Էջմիածին», 1988, Ե-Զ, էջ 44:

30 Նշվ. հոդվ., էջ 45:

31 **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց (այսուհետև՝ **Մխիթար Անեցի**, համապատասխան էջերով), աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 76-77, 81-86:

32 **Զաքարեայ սարկաւագի** պատմագրութիւն, h. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 3 (այսուհետև՝ **Զաքարեայ սարկաւագ**, համապատասխան էջերով): Տե՛ս նաև ՄԺԲ, էջ 312-315:

տի պատմությունը՝ իբրև վկայաբանության բնականոն շարունակություն[33]: Պատումի գլխավոր դեմքը Կիրակոս մենակյաց կրոնավորն է, որ ճգնում էր Արտազ գավառի Շավարշան գյուղաքաղաքի մոտակայքում՝ Սանատրուկ լեռան վրա գտնվող մի այրում. «Ես՝ Կիրակոս էի աշակերտեալ Դաւթի միայնակեցի. բնակէի ՚ի սնարս լերին Սանատրուկ, ՚ի յայրին, մօտ ՚ի Շաւարշան...»[34]: Կիրակոսն «՚ի քուն գիշերի» հրաշալի տեսիլք է ունենում, թե մոտակա բլրակի վրա ոսկեղեն աթոռին նստած է լույսերով ողողված Թադեոս առաքյալը և նրա շուրջն են «աշակերտք և վկայք նորա, և աղջիկն Սանդուխտ»[35]: Երրորդ գիշեր տեսիլքը նորից կրկնվում է, և առաքյալը մենակյացին ցույց է տալիս իր գերեզմանի տեղն ու պատվիրում չմոռանալ այն. «...Կիրակոս, միտ դիր և ցուցից քեզ զնշխարս մեր ուր հանգուցեալ են: Եւ եցոյց ինձ արձան մի անտաշ յարեւելից կողմանէ, և ասէ. Աստ գտանես»[36]: 30-օրյա պահեցողությունից հետո Կիրակոսը գործի է անցնում. գտնում է երազում տեսած արձանը (ժայռը) և փորում է այնտեղ, բայց ապարդյուն: Գիշերը Թադեոս առաքյալը վերստին հայտնվում է տեսիլքով, և մատնացուցած տեղում հայտնաբերվում են մի վկայի նշխարներ: Այնուհետև տեսիլք է գալիս բարձրահասակ ու գեղեցիկ երիտասարդ, ներկայանում է իբրև Զաքարիա, ապա լույսերով պարուրված Սանդուխտ արքայադուստրն ու ցույց տալիս իր նշխարների վայրը մի փոքր եկեղեցու մեջ՝ բլրի վրա. «Եւ կոյսն փառաւորէր զԱստուած և ասէ ցիս. Ես ՚ի բլրին եմ՝ ուր զառաջինն ցուցաւ քեզ տեսիլն. և տարաւ զիս ՚ի բլուրն և ցուցանէր ինձ եկեղեցի մի փոքրիկ և լի լուսով»[37]: Կիրակոսը կրկին օրերն անցկացնում է պահքով, ծոմապահությամբ ու ջերմեռանդ աղոթքներով, ապա գնում և այս ամենի մասին պատմում է եպիսկոպոսին[38]: Մի վերջին անգամ երազում մենակյացին հայտնվում է առաքյալի լուսավոր կերպարանքը, հուսադրում, թե «Այսօր գտանէք զփափաքելին ձեր»[39], անձամբ տանում և ցույց է տալիս իր նշխարների տեղը: Կիրակոսը, օգնական ունենալով Սամուել անունով քահանային, ի վերջո գտնում է սրբալույս նշխարները, որոնց վրա դեռևս տեսանելի էին նահատակության հետքերը. «Եւ եղեւ ահ և թնդիւն և պատառեցաւ վէմն, և հոտ անուշութեան բուրեաց և ելից զվայրսն: Եւ գտաք զնշխարսն յիւրաքանչիւր հանգստի ահաւոր և սքանչելի տեսլեամբ. առաջինն՝ առաքեալն որ կայր ի մէջ պատառեալ վիմացն յարեւելից կողմանէ որպէս երեւեցաւն. և մօտ յառաքեալն գտաք զնշխարս որոց նշանն այս էր. միոյն ընդ ուսն հարեալ երկաթի բեւեռս և ՚ի նմին կային բեւեռքն. և միւսումն ընդ լռունսն ծակեալ, և էին զարմանալիք»[40]: Այս գյուտից երկու օր անց (երրորդ օրը) Կիրակոսն ու Սամուելը հայտնաբերում են Սանդուխտ սրբուհու գերեզմանը ու դուրս բերում նրա նշխարները ևս. «Եւ յերրորդում աւուրն հասաք ՚ի հանգստարան սրբոյն Սանդխտոյ և աղօթեցաք, և եղեւ շամանդաղ թանձրամած ՚ի վերայ բլրին մինչև յերիս ժամս աւուրն, և ոչ կարացաք տեսանել ինչ. ահիւ և լալով խնդրեցաք փափագելին... Եւ բացեալ հանգիստ սրբոյն և հոտ անուշութեան բուրեալ, և փարատեցաւ շամանդաղն և եղեւ լոյս և երեւեցան նշխարքն, և առեալ բերաք ՚ի տեղին ուր նշխարք սուրբ առաքելոյն էին, և եդաք առ նմա»[41]:

Գյուտի լուրը տարածվում է ամենուր: Հայոց աշխարհի տարբեր կողմերից մարդկանց բազմություն է հավաքվում Արտազում՝ սուրբ մասունքները տեսնելու և փառաբանելու համար: Շատերը բժշկվում են մարմնավոր ախտերից, իսկ Ռշտունյաց գավառից եկած մի կույր վերագտնում է աչքերի լույսը «՚ի ձեռն սուրբ առաքելոյն և նորին աշակերտացն»[42]:

Երկի հեղինակը, որ հետազոտողների կարծիքով նույն ինքը՝ «Վկայաբանության» հեղինակ Սամուել եպիսկոպոսն է[43], նշխարների հայտնագործումը կապում է Հովհան կաթողիկոսի և հայոց մարզպան Վահան Մամիկոնյանի ապրած ժամանակաշրջանի հետ՝ ավելացնելով, որ երկրի հոգևոր և քաղաքական այրերը, ամբողջ ժողովուրդը տոնեցին սրբերի հիշատակը. «Եւ եղեւ գիւտ նշխարացն ՚ի շնորհաց սուրբ Հոգւոյն յաւուրս հոգէզարդ, աստուածասէր և ճգնազգեաց տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, և քաջանուն և նախանձախնդիր աստուածային պատուիրանացն Վահանայ Մամիկոնենից տեառն Հայոց մարզպանի և սպարապետի. որք եկին աշխարհախումբ բազմութեամբ եպիսկոպոսօք, քահանայիւք, և սարկաւագօք և այլ բազմութեամբ ազատաց և խառնիճաղանճ ամբոխիւ, և տօնեցին սաղմոսիւք և օրհնութեամբ զյիշատակ սրբոցն բազում աւուրս և ուխտ եդեալ կատարեալ զյիշատակ նոցա: Եւ առնուին մասն ՚ի նշխարաց սուրբ առաքելոյն Թադէոսի և Սանդխտոյ և յայլոց վկայիցն, և տուեալ փառս Աստուծոյ գնացին յիւրաքանչիւր տեղիս խնդութեամբ»[44]: Այս իրադարձության մասին է նաև Մովսես Խորենացու հակիրճ տեղեկությունը. «...ի գաւառն, որ անուանեալ

33 Սոփերք, Ը, էջ 86-97: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 19-22:

34 Սոփերք, Ը, էջ 87: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 19:

35 Սոփերք, Ը, էջ 88-89: Տե՛ս նաև **Անանուն**, նույն տեղում:

36 Սոփերք, Ը, էջ 89: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 20:

37 Սոփերք, Ը, էջ 91-92: Տե՛ս նաև **Անանուն**, նույն տեղում:

38 «Գիւտ նշխարաց»-ի հեղինակը եպիսկոպոսի անունը չի հիշատակում (Սոփերք, Ը, էջ 92), իսկ Ղ. Ալիշանը ծանոթագրում է. «Ի Յայսմաւուրս Շահակ կոչի եպիսկոպոսդ» (Սոփերք, Ը, էջ 102):

39 Սոփերք, Ը, էջ 92: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 21:

40 Սոփերք, Ը, էջ 92-93: Տե՛ս նաև **Անանուն**, նույն տեղում:

41 Սոփերք, Ը, էջ 93-94: Տե՛ս նաև **Անանուն**, նույն տեղում:

42 Սոփերք, Ը, էջ 95: Տե՛ս նաև **Անանուն**, նույն տեղում:

43 **Ակինեան Ն.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1970, № 1-3, էջ 15-16: Տե՛ս նաև **Մելքոնյան Հ. Գ.**, նշվ. աշխ., էջ 170-171:

44 Սոփերք, Ը, էջ 96-97: Տե՛ս նաև **Անանուն**, էջ 22:

կոչի Արտազ, ի տեղի դաշտավայրս, ուր յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի առաքելոյն մերոյ Թադէի»[45]: Այսպիսով, Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի նշխարների գյուտը տեղի է ունեցել Նվարսակի հաշտության պայմանագրի կնքումից հետո՝ հավանաբար 485-486 թթ.՝ Հովհան Ա Մանդակունի կաթողիկոսի աթոռակալության (478-490) և Վահան Մամիկոնյանի մարզպանության շրջանում[46]:

Նշխարների գյուտի մասին ակնարկներ կան ուշ շրջանի հայ հեղինակների՝ Ուխտանեսի (Ժ դար), Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ, Ժ դար), Հովհաննես Դրասխանակերտցու (Ժ դար), Մխիթար Անեցու (ԺԲ-ԺԳ դարեր), Մխիթար Այրիվանեցու (ԺԳ դար) և այլոց աշխատություններում[47]:

Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի «Գիւտ նշխարաց»-ի հանդես գալը Ե դարի վերջերին պատահական չէր: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հայ հոգևոր ու մշակութային կյանքում ուժեղանում է ասորական և հունական ազդեցությունը: Հայ ժողովուրդը մինչև Ե դարասկիզբը զուրկ էր սեփական այբուբենից: Փաստորեն մի ամբողջ հարյուրամյակ Հայաստանի հարավարևելյան նահանգներում եկեղեցական արարողությունները ու կրոնական ընթերցումները կատարվում էին ասորերեն, իսկ արևմտյան մասում՝ Բյուզանդական կայսրության սահմանների մոտ, տիրապետող էր հունարենը: Օտարամուտ ազդեցությունները ավելի են ուժեղանում, երբ 387 թ. կնքված պայմանագրով Մեծ Հայքն առաջին անգամ բաժանվում է Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:

Այդ ժամանակ քրիստոնեական աշխարհում դրված էին պատրիարքական աթոռների գերակայության, նրանց հնության և առաքելական ծագման հիմնավորման հարցերը: Հայոց եկեղեցին չէր կարող անտարբեր լինել ընդհանրական եկեղեցում ընթացող պայքարի նկատմամբ, մանավանդ, երբ ոտնձգություններ էին կատարվում նրա նվիրապետական անկախության դեմ: Ասորիներն Աբգարի և Ադդայի զրույցով, իսկ արևմտյան քրիստոնեական աշխարհը Պողոս և Պետրոս առաքյալների ավանդությամբ, իրենց եկեղեցիներն առաքելական հայտարարելով, ձգտում էին գերազահություն և առաջնություն ձեռք բերել միմյանց և Հայ լուսավորչական եկեղեցու նկատմամբ: Սկսվում է ծանր և անզիջում պայքար մի կողմից հակակշռելու համար արևմտյան հռոմեական-հելլենական հոգևոր ազդեցությունը, մյուս կողմից թոթափելու համար ասորական եկեղեցու, հատկապես ասորի բարձր հոգևորականության հավակնությունները հայ կաթողիկոսական աթոռի նկատմամբ:

Հայ Արշակունիների հարստության անկումից (428 թ.) հետո ազգային կյանքի առաջնորդությունն ու ղեկավարությունն անցնում է հոգևորական դասի տնօրինությանը: Վերջինիս հովանավորությամբ էլ նոր թափ է ստանում մշակութային վերելքը, որ սկիզբ էր առել քրիստոնեության ընդունումից (301 թ.) հետո: Այդ մի քանի տասնամյակներում, երբ դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը, հոգևոր և մշակութային կյանքի ղեկավար կրոնական դասին հաջողվում է դեռևս կանգուն մնացած հայ աշխարհիկ ուժերի աջակցությամբ, հայ գրերի գյուտով և մշակութային անկախ կյանք ստեղծելով հավերժացնել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ամրապնդել նրա հոգևոր կյանքի ու ազգապահպանման հիմքերը:

Դավանաբանական պայքարի միջոցին հայ բարձր հոգևորականությունը մասնակցում է Նիկիո եկեղեցական ժողովին (325 թ.), ստեղծում հայոց եկեղեցու վարդապետությունը (կրոնական աշխարհայացքը), մերժում Քաղկեդոնի եկեղեցական ժողովի (451թ.) ընդունած որոշումները և բաժանվելով ընդհանրական եկեղեցուց՝ հիմնում է իր սեփական անկախ եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ: Հայ եկեղեցու կենտրոնը, ինչպես նախկինում, մնում է Էջմիածինը:

Հայոց եկեղեցին ոգեշնչում է նաև պայքարը զրադաշտականության դեմ (Դ-Ե դարեր), որն ավելի է սերտացնում եկեղեցու կապը ժողովրդի հետ:

Զրադաշտականության դեմ վարած երկարատև պատերազմներից հետո Նվարսակի դաշնագրով (484 թ.) հայոց եկեղեցին ձեռք է բերում կրոնական ազատություն: Առաջնահերթ խնդիր էր դարձել երկրում ստեղծված բարենպաստ պայմաններն օգտագործելով ավելի ամրապնդել սեփական դիրքերը ոչ միայն ներքին կյանքում, այլև արտաքին աշխարհում: Վերոհիշյալ անցքերի հիմքի վրա Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների վկայաբանությունը, ինչպես նաև նահատակված սրբերի նշխարների

45 **Մովսէս Խորենացի**, էջ 212: Ի դեպ, ԺԷ դարի մի անանուն ժամանակագիր Նշխարների գյուտը սխալմամբ վերագրում է 721 թ., այսինքն՝ Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի աթոռակալության շրջանին (717-728). «Թաթեոս Առաքելուն և Սանդըղտայ կուսին մարմինն ի Հայոց թվականին ՃՀ (721)-ին գտվելի հրաշօք և զարմանալի բանիւք» (Մանր ժամանակագրություններ, հ. 1 (այսուհետև՝ ՄԺԱ, համապատասխան էջերով), կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 203): Այս սխալը, անշուշտ, երկու Հովհաննես կաթողիկոսների (Հովհաննես Ա Մանդակունու և Հովհաննես Գ Օձնեցու) անունների շփոթության արդյունք է:

46 Գյուտի ժամանակի մասին տե՛ս **Մելքոնյան Հ. Գ.,** նշվ. աշխ., էջ 180-181:

47 **Ուխտանէս եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, Պատմութիւն հայրապետաց եւ թագաւորաց Հայոց (այսուհետև՝ **Ուխտանէս եպիսկոպոս**, համապատասխան էջերով), Վաղարշապատ, 1871, էջ 54: **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն Տիեզերական (այսուհետև՝ **Ստեփանոս Ասողիկ**, համապատասխան էջերով), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 82: **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 50: **Մխիթար Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ **Մխիթար Այրիվանեցի**, համապատասխան էջերով), Մոսկվա, 1860, էջ 48 («Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյն և Սանդըխտոյ կուսին ‘ի ձեռն Կիրակոսի»):

հայտնաբերումը հնարավորություն էին ընձեռում բարձրացնել Հայ լուսավորչական եկեղեցու դիրքը և պաշտպանել նրա ինքնուրույնությունն օտար տիրապետությունների հավակնություններից: Պատահական չէ, որ Ե դարի վերջերին են վերագրվում Թադեոս առաքյալի, հայոց առաջին մարտիրոսուհու՝ Սանդուխտ կույսի, և Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը: Նշխարաց գյուտերի առթիվ կազմակերպվում են տոներ ու եկեղեցական ուխտագնացություններ, որոնց նպատակն էր ժողովրդի լայն խավերում քրիստոնեական հավատն ամրապնդելու միջոցով ուժեղացնել հայոց եկեղեցին: Նահատակված սրբերի հիշատակը հավերժացնելու համար կառուցված վանքերը դարձել են աղոթատեղիներ, իսկ նրանց մեջ պահված սրբերի մասունքները[48] դարեր շարունակ թույլերի ու տկարների միակ հույսն ու ապավենն են եղել: Սուրբ նշխարների գերբնական ուժին ու հրաշագործությանն է հավատ ընծայել ժողովուրդը երաշտի, համաճարակների, փորձությունների ու վտանգների ժամանակ:

Հայոց եկեղեցին մինչև Ը դարը Թադեոս առաքյալի և Սանդուխտ սրբուհու հիշատակի օրը տոնել է առանձին-առանձին՝ ըստ անշարժ տոմարի, միայն Ը դարից հետո է այն տոնել շարժական տոմարով, միասնաբար՝ Վարդավառից հետո եկող առաջին շաբաթ օրը (հուլիսի 4-ից օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում)[49]:

**Թադեոս առաքյալը հայ ժողովրդական բանահյուսության մեջ.** աստվածաշնչյան դեմքերի ու անցքերի, քրիստոնեական ազգային և ընդհանրական սրբերի, Հայոց դարձի պատմության ու հայ եկեղեցու հայրերի մասին ստեղծված ավանդություններն իրենց ուրույն տեղն ունեն հայ ժողովրդական բանահյուսության մեջ: Սրանց առաջացումը, անշուշտ, պայմանավորված է նոր կրոնի ընդունմամբ, ժողովրդական լայն խավերում քրիստոնեական գաղափարների տարածմամբ ու արմատացմամբ, ինչպես նաև ժամանակի ընթացքում քրիստոնեական հավատալիքների ձևավորմամբ ու կայունացմամբ:

Հայ ժողովրդի հոգևոր արժեքներն ուսումնասիրելու տեսանկյունից բնապաշտական կրոնի տարրերով[50] շաղախված հավատալիքներն առավել հետաքրքրական են: Նրանցում բազմաթիվ են նաև տեղագրական ու տեղանվանական բնույթի ժողովրդական ստուգաբանությունները:

Քրիստոնեական սրբերի հետ առնչվող ավանդություններից մի քանիսը կապվում են Թադեոս առաքյալի անվան ու քարոզչության հետ, որտեղ արտացոլվում են Հայաստանի առաջին լուսավորչի գործունեության մասին ժողովրդական պատկերացումները: Ավանդությունն առաքյալին է վերագրում հայկական մի շարք վանքերի կառուցումը (թեև դրանք բոլորն էլ հիմնադրվել են ավելի ուշ ժամանակներում), նրա գործունեությամբ է մեկնաբանվում որոշ տեղանունների (այդ թվում մանրատեղանուններ) առաջացումը: Ընդհանուր պատկերացում տալու համար ստորև ներկայացնում ենք այդ ավանդություններից մի քանիսը:

Անգղա Սբ. Աստվածածին կամ Չիթատուր վանքը գտնվում է Վասպուրականի Հայոց ձոր գավառում՝ Անգղ գյուղից 1 կմ հեռու: Ավանդության համաձայն՝ աղոթող Թադեոս առաքյալին մի գիշեր հայտնվում է Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկում, պատվիրում է կործանել Անգղ գյուղի բնապաշտական աղոթատեղիներն ու տեղը եկեղեցի կառուցել: Առաքյալը կատարում է Տիրամոր պատվերը և սկսում եկեղեցու շինարարությունը: Սակայն դևերը գիշերով քանդում են կառուցածը և քարերը ջուրն են նետում: Այսպես շարունակվում է միառժամանակ: Աստվածածինը տեսիլքով վերստին հայտնվում է Թադեոսին և առաջարկում կառույցի ամրության համար հիմքում դնել օծված խաչ և հրաշագործ յուղով լի շիշ: Առաքյալը կատարում է Աստվածամոր այս պատվերը ևս: Երբ դևերը գալիս են եկեղեցին քանդելու, դառնում են սև ագռավներ: Նրանց հետևից հասնում են անգղների կերպարանք առած հրեշտակները, և հալածական դևերը գետն են թափվում՝ «Սա չէ՞ այն, սա չէ՞ այն» աղաղակելով: Թադեոս առաքյալը հաջողությամբ ավարտում է եկեղեցու կառուցումը, որն այդուհետև անվանվում է Անգղա Սբ. Աստվածածին, ինչպես նաև Չիթատուր վանք, իսկ գետը՝ Սաչան[51]:

48 Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի վկայությամբ՝ ԺԹ դարի վերջին Թադեոս առաքյալի մասունքները կրող խաչեր են պահվել Արցախում՝ Գանձակ (Կիրովաբադ) քաղաքի Նորաշեն թաղամասի Սբ. Աստվածածին եկեղեցում (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, վերահրատ.՝ Երևան, 1999, էջ 184), Վարանդայի գավառի Ավետարանոց ավանի Սբ. Աստվածածին եկեղեցում (էջ 209), նույն ավանի մերձակայքում գտնվող Սբ. Ղևոնդեանց անապատ համալիրում (էջ 208), Շուշիի Ագուլեցոց Սբ. Աստվածածին եկեղեցում (էջ 235) և այլուր: 1890 թ. Գյոկչա քաղաքից 10 կմ հյուսիս գտնվող Գիրդադյուլ հայաբնակ գյուղում (ներկայումս ավերակ գյուղատեղի Ադրբեջանի Հանրապետության Կուտկաշենի շրջանում՝ Գյոկչայ (Կոկիսոն) գետի աջ վտակ Ղոբուն գետակի ափին), բնակիչներից մեկի տանը պահվում էր «...սրբատփի նման մի արծաթեայ անօթ, որի մէջ է Թադէոս առաքեալի մասունքից մի մեծ կտոր: Անօթի վերայ փորագրուած է հեռաւոր հնութեան ձեւի տառերով այս հակիրճ արձանագրութիւնն. *«Թադէոս առաքեալ, պաղատել անյիշաչար Յիսուս Քրիստոս»*: Մասունքն գտած է տան տիրոջ երեխան 3 տարի առաջ գիւղի արեւելեան կողմի ձորով հոսող վտակից: Յորդառատ անձրեւի հեղեղներն քանդում են հողեայ այրերը եւ թափում հեղեղատի մէջ, որից գտած է երեխան մասունքս» (**նույնի**՝ Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 213, վերահրատ.՝ Երևան, 1999, էջ 112):

49 Այդ մասին մանրամասն տե՛ս **Վարդանյան Ռ.**, նշվ. հոդվ.: Տե՛ս նաև **Մինասեան Լ. Գ.**, Երկու խօսք Ս. Թադէոս Առաքեալի եւ ընդհանրապէս շարժական տօների մասին, «Ալիք», 1984, 7-ը յունուարի, էջ 6:

50 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ Կ:

51 Նշվ. աշխ., էջ 247-248: Անգղա վանքի մասին տե՛ս **Սարգիսեան Հ. Ն.**, Տեղագրութիւն ի Փոքր եւ Մեծ Հայս, Վենետիկ,

Երկրորդ ավանդությունը ևս կապված է առաքյալի շինարարական գործունեության հետ: Ամիդ (Դիարբեքիր, Տիգրանակերտ) քաղաքից հյուսիս՝ Արղանա գետի ափին, Թադեոս առաքյալը հիմնում է նոր վանք: Սակայն հաջորդ օրն նեք աշխատանքային գործիքներն անհետանում են: Այսպես կրկնվում է մի քանի օր: Զարմացած առաքյալը, ձեռքերը երկինք բարձրացնելով, գոչում է. «Տե՛ր, մի՞թե չես ուզում, որ քո անունով ուխտատեղի կառուցվի»: Այնժամ երկնքից ձայն է լսվում. «Թադե՜, Թադե՜, բարձրահայաց» (ասել է, թե բարձրում նայիր): Առաքյալը բարձրանում է ժայռն ի վեր և գտնում է բահերն ու բրիչները: Հենց այստեղ էլ կառուցում է վանքը ու անունը դնում Բարձրահայաց[52]:

Իր քարոզչության ընթացքում Թադեոս առաքյալն իջևանում է Սասնո Մահբբանք գյուղում, որը փռված էր Ծովասար լեռան արևելյան փեշին: Հաջորդ օրը՝ գյուղից դուրս գալուց հետո, ծարավը հագեցնելու համար նա ձեռքի գավազանով հարվածում է գետնին ու սառնորակ աղբյուր բխեցնում: Ջրից խմում են նաև մոտակայքում արածող սև ոչխարներն ու իսկույն սպիտակում: Ականատես հովիվն այս հրաշքի մասին պատմում է Բռնիկ իշխանին, որն էլ խնդրում է առաքյալին բուժել իր հիվանդ որդուն՝ փոխարենը խոստանալով տեղ հատկացնել վանք կառուցելու համար: Առաքյալը աղբյուրի ջրում լողացնում է իշխանորդուն և բուժում է մարմնական ախտերից: Ուրախացած Բռնիկը որոշում է նորաշեն վանքի պատերը զարդարել ոսկով ու արծաթով, սակայն Թադեոս առաքյալը չի թողնում՝ վախենալով, որ ազնիվ մետաղների տենչով տարված՝ մարդիկ կավերեն վանքը: Այդ գումարով Բռնիկ իշխանը Մահբբանքի վանքից քիչ հեռու բերդ է կառուցում և վանքի անունով կոչում Մահբբանքի բերդ[53]:

Վանա լճի արևելյան կողմերով անցնելիս Թադեոս առաքյալին հիացնում է ափամերձ ու ծառաստաններով հարուստ մի գյուղի գեղեցիկ բնապատկերը: «Այլ ու՞ր գնանք»,— բացականչում է նա: Գյուղի անունը մնում է Այլուր, որ հետո չնչին փոփոխությամբ դառնում է Այլուր (Ալուր)[54] (Թիմար գավառում):

Հավավ գյուղի բնապաշտ հայերը Բալուի շրջանում քարոզող Թադեոս առաքյալին ծաղրելու համար սկսում են շան նման հաչել: Զայրացած առաքյալն անիծում է նրանց, որ կորցնեն իրենց մարդկային լեզուն: Այդպես էլ լինում է: Եվ քանի որ բնակիչները խոսելիս շարունակ հա՜վ, հա՜վ են կանչում, գյուղի անունը մնում է Հավավ[55]:

Թադեոս առաքյալի անվան հետ է կապվում նաև Բաղեշ քաղաքից (այժմ՝ Բիթլիս) հարավ-արևմուտք՝ Ամպ գյուղի մոտ գտնվող Խնդրակատար Սբ. Աստվածածին վանքի կառուցումը: Երբ Թադեոս առաքյալն այս կողմերն է գալիս քարոզելու և Տիրամոր անվամբ մենաստան կառուցելու նպատակով, աղոթքի մեջ ցանկություն է հայտնում երկրում հազար ու մի եկեղեցի հիմնել ու հետո մեռնել: Այս խոսքերի վրա իբր թե գյուղի վրա տարածված ամպի միջից առաքյալին են հասնում հետևյալ բառերը. «Խնդիրդ կատարվեց»: Ահա այս պատճառով էլ գյուղը կոչվում է Ամպ, իսկ նորակառույց եկեղեցին՝ Խնդրակատար Սբ. Աստվածածին[56]:

Բաղեշի արևելյան կողմում՝ ձորամիջում հիմնված Ավեխի Սբ. Աստվածածին վանքի մոտ բխող աղբյուրը, ըստ ավանդապատումի, Թադեոս առաքյալի գործած հրաշքներից է: Բռնությամբ տառապող մի աղջիկ դիմում է առաքյալին. վերջինս աղոթքով ժայռից աղբյուր է բխեցնում և բուժիչ ջուրը խառնելով հողի հետ՝ քսում է հիվանդի վերքերին: Այստեղ էլ, ավանդության համաձայն, սուրբը կառուցում է Աստվածածնին նվիրված վանքը, որը հայտնի է նաև Ավեխու Սբ. Թադեի վանք անվամբ[57]:

Թադեոս առաքյալի հայաստանյան քարոզչությունը վերաբերող վերոհիշյալ ավանդությունները բացառապես առնչվում են երկրի արևմտյան և հարավային տարածքներին: Սակայն նմանատիպ պատումներ են պահպանվել նաև արևելահայոց ժողովրդական բանահյուսության մեջ: Ավանդության համաձայն՝ մայրաքաղաք Արտաշատի բլուրներից մեկի վրա հանդիպում են Հայոց աշ-

1864, էջ 255: **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ.Պօլիս, 1884, էջ 134-136: **Ոսկեան Հ.,** Վանի-Վասպուրականի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1942, յուլիս-դեկտեմբեր, էջ 163-166:

52 **Ղանալանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 257:

53 Նշվ. աշխ., էջ 214: **Սարգիսեան Հ. Ն.,** նշվ. աշխ., էջ 238-239: **Մահբբանք** կամ **Մահբուբանք գյուղը** գտնվում էր Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի նույնանուն գավառի Խութ-Բռնաշեն գավառակում՝ Մուշ քաղաքից մոտ 14 կմ հարավ-արևելք՝ Բռնաշեն գյուղի մոտ՝ Ծովասարի հյուսիսարևելյան լանջին: Վանքը կառուցված էր գյուղից հյուսիս և հրաշագործ աղբյուրի անվամբ կոչվում էր նաև **Աղբյուրիկ** կամ **Աղբերիկ վանք**: Վերջինիս մոտակայքում էր Մահբբանքի բերդը: 1741 թ. Ալահմեդին բեկը գրավում և ավերում է բերդը, բայց հետագայում հաշտվելով ըմբոստ սասունցիների հետ՝ վերակառուցում է այն: Գյուղը եղել է հայաբնակ, մինչդեռ 20-րդ դարասկզին արդեն նրա բնակիչները քրդեր էին (**Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ Տեղանունների բառարան, համապատասխան հատորներով և էջերով), հ. 3, Երևան, 1991, էջ 652-653):

54 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, էջ 194: Տե՛ս նաև **Միրախորեան Մ.**, նշվ. աշխ., մասն Բ, Կ.Պօլիս, 1885, էջ 279:

55 **Ղանալանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 200:

56 **Սարգիսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 242: Տե՛ս նաև **Միրախորեան Մ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 59: «Արարատ», 1898, էջ 300: **Ոսկեան Հ.**, Սալնաձոր-Բաղեշի վանքերը, «Հանդէս Ամսօրեայ», 1944, յունուար-դեկտեմբեր, էջ 85-88:

57 **Սարգիսեան Ն.,** նշվ. աշխ., էջ 242: Տե՛ս նաև «Արարատ», 1898, էջ 300: **Ոսկեան Հ.,** Սալնաձոր-Բաղեշի վանքերը, էջ 79-80:

խարիի երկու լուսավորիչները՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները: Ի նշան հանդիպման՝ լծակից ընկերները ժայռի վրա դրոշմում են խաչանշանը և օծում այն սրբալույս մյուռոնով: Գիշերն օթևանում են նույն հարկի տակ: Այստեղից էլ ծագում է բլրանունը՝ Օթյաց խաչ[58]: Հաջորդ օրը Թադեոս առաքյալը մեկնում է Արտազ, որտեղ և նահատակվում է Սանատրուկ արքայի հրամանով, իսկ Բարդուղիմեոս առաքյալն ուղևորվում է Վասպուրականի Աղբակ գավառ՝ իր քարոզչության վերջին վայրը՝ արժանանալով նույն ճակատագրին:

Օթյաց խաչ տեղանունը դարեր շարունակ պահպանվել է ժողովրդի հիշողության մեջ: 1816 թ. ամռանը՝ Խոր Վիրապ այցելած ժամանակ, Սբ. Էջմիածնի միաբան Մեսրոպ սարկավագ Թաղիադյանին վանականներն արևմտյան բլրագագաթին ցույց են տալիս այդ խաչանշանը և պատմում ավանդությունը[59]:

Ժողովրդական ավանդությունը Թադեոս առաքյալի հետ է կապում նաև Ագուլիս տեղանվան առաջացումը: Պատմում են, որ քարոզչական գործունեության ընթացքում՝ Որդուատից (Օրդուբադ) Ագուլիս գնալու ճանապարհին, առաքյալը գիշերում է Ագուլիսի և Հանդամեջի արանքում բարձրացող քարաժայռի վրա: Վաղ առավոտյան, արեգակի առաջին ճառագայթների հետ արթնանալով, նա բացականչում է. «Ակն ի լոյս»: Ժամանակի ընթացքում արտահայտությունը ձևափոխվում է, աղավաղվում (Ագուլիս) և վերածվում է տեղանվան: Հետագայում ժայռը սրբացվում է, դառնում ուխտատեղի շրջակայքի բնակչության համար[60]:

**Սանդուխտ կույսի նահատակության արձագանքները.** դեռևս Ի դարասկզբին պահպանվում էին Արտազ գավառի, մասնավորապես Կըրխբուլաղ (Ծավարշան) գյուղի և դրացի մահմեդական բնակչության շրջանում. «Մինչև այժմ էլ դեռ տեղացի թուրքերի և քրդերի մէջ այսպիսի մի ավանդութիւն կայ, որ այդ բլրի վրայ շինուած բերդում (հեղինակը նկատի ունի Սանատրուկ թագավորի բերդը) ապրել է մի բնապաշտ թագաւոր, որի աղջիկը չէ հաւատացել իր հօր պաշտած կուռքերին և երկրպագութիւն չէ տուել նրանց, հայրն էլ աղջկան հանձնել է դահիճներին և սպանել տուել»[61]:

**Թադեոս առաքյալի նահատակավայրը.** Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայագրության և Չալդորանի դաշտի (Սանատրուկի դաշտ) ու շրջակա սարերի տեղագրական տվյալների համադրությունն օգնում է պարզաբանել այստեղ կառուցված եկեղեցիների ու մատուռների պատմական պատկանելությունը:

Խորենացին առաքյալի նահատակության վայրը նկարագրելիս հիշում է. «...և պատառումն քարին և յիրեարս գալ և ընդունել զմարմին Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին»[62]: Նման նկարագրություն գտնում ենք Թադեոս առաքյալի «Վկայաբանութեան» էջերում: Այսպես. «Եւ հասեալ բազում զօրականք իշխանօքն հանդերձ, և կալեալ զսուրբ առաքեալն՝ հանին 'ի փոքր ձորակէն սակաւ մի 'ի բարձրավանդակ տեղի մի 'ի վիմամէջս»[63]: Ապա «Եւ 'ի կատարել սրբոյն ...եղեւ շարժումն մեծ, և պատառեալ վիմին ընկալաւ զսուրբ մարմին առաքելոյն ...Եւ յարուցեալ իջին 'ի տեղի սպանման, իմացան, թէ սրով կատարեցաւ»[64]: «Գիւտ նշխարաց» բաժնում կարդում ենք. «Եւ եղեւ ահ և թնդիւն և պատառեցաւ վէմն, և հոտ անուշութեան բուրեաց և ելից զվայրսն: Եւ գտաք զնշխարսն յիւրաքանչիւր հանգստի ահաւոր և սքանչելի տեսլեամբ. առաջինն՝ առաքեալն որ կայր 'ի մէջ պատառեալ վիմացն յարեւելից կողմանէ որպէս երեւեցաւն»[65]:

Սկզբնաղբյուրներում Թադեոս առաքյալի նահատակավայրի նկարագրությունը զարմանալի ճշգրտությամբ համընկնում է տեղագրական տվյալներին, մասնավորապես վանքի հյուսիսում՝ ձորակի մյուս կողմում՝ փոքր հարթության վրա բարձրացող ժայռին, որին կից կառուցված է Սբ. Նահատակ մատուռը:

Բլրի տարածքը փոքր եկեղեցի կամ մատուռ կառուցելու համար եղել է ավելի հարմար, սակայն ժայռին կցված լինելն այնպես, որ նույնիսկ ժայռի մի մասը ներառեր շինության արևմտյան պատի մեջ, ունեցել է, անկասկած, հատուկ նպատակ և, անշուշտ, կապված է առաքյալի նշխարների առկայության հետ:

Հայկական եկեղեցաշինությունը ենթարկվել է իր օրենքներին, գրված և չգրված կանոններին, որոնք դարերի ընթացքում պահել են իրենց սկզբունքային ուժը՝ առանց խոչընդոտելու ճարտարապետության զարգացմանը:

Հայկական եկեղեցու մուտքը հիմնականում բացվում է կառույցի արևմտյան ճակատում՝ ավագ

58 Սոփերք, ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 25: Տե՛ս նաև **Օրմանյան Մ.,** Ազգապատում, Ա, էջ 13:

59 «Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիդեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի ի Հայս» (տե՛ս **Թաղիադյան Մ.**, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 97): **Քաջբերունու** (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) վկայությամբ՝ 1860-ական թթ. Խոր Վիրապի վանահայր Հակոբ վարդապետ Քանդարյան Ալեքսանդրապոլցին խաչերի վրա շինել է մի փոքրիկ մատուռ (տե՛ս նրա Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, 2003, էջ 29):

60 **Հախնազարեան Յովհ.,** Գողթան գաւառ (պատմագրութիւն եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991, էջ 58: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 325: **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 10: **Ղանալանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 157:

61 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 23:

62 **Մովսէս Խորենացի**, էջ 157:

63 Սոփերք, Ը, էջ 54:

64 Սոփերք, Ը, էջ 57:

65 Սոփերք, Ը, էջ 92-93:

խորանի դիմաց: Հաճախ մեծ եկեղեցիներն ու տաճարները, արևմտյան մուտքից բացի, ունեն մեկ կամ ավելի մուտքեր երկայնական (հյուսիսային և հարավային) ճակատներում: Երբեմն տարածքի հետ կապված սահմանափակումների պայմաններում արևմուտքից հնարավորություն չունենալու պատճառով մուտք է բացվել միայն հյուսիսային կամ հարավային կողմերից. մի հանգամանք, որն ավելանում է Թադեոս առաքյալի նահատակավայրի մասին մեր ունեցած տվյալներին: Սբ. Նահատակ մատուռի արևմտյան պատը կից է ժայռին, ուստի մուտքը բացել են հարավային պատի արևմտյան հատվածում:

**Թադեոս առաքյալի նահատակության ավանդությունը հաստատող միջադեպ.** 1991 թ. դեկտեմբերի 8-ին Իրանի Ուրմիա քաղաքում Արևմտյան Ատրպատականի «Մշակույթի ժառանգություն» («Միրասե Ֆարհանգի») կազմակերպության պետ պ. Էբրահիմե Հեյդարիի վկայությամբ՝ Սբ. Նահատակ մատուռի արևմտյան պատի տակ գանձախույզները փորել և բացել են մի դամբարան (Իրանում գտնվող տարբեր հնավայրեր, այդ թվում նաև եկեղեցիներ, ցավոք, երբեմն ենթակա են ավերիչ գանձախուզության)[66]:

Գանձախուզության նպատակով փորված և հայտնաբերված այս դամբարանը մի նոր և կարևոր տվյալ է, որ գալիս է հաստատելու Թադեոս առաքյալի՝ այս վայրում նահատակվելն ու հողին հանձնվելը:

Ե դարում՝ Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ, Կիրակոս ճգնավորի տեսիլքների շնորհիվ գտնվել են Թադեոս առաքյալի նշխարները «...ի մէջ պատառեալ վիմացն յարեւելից կողմանէ»[67]: Մի նկարագրություն, որը, կարծես համընկնում է բացված դամբարանի հետ: Կարելի է ենթադրել, որ Թադեոս առաքյալի մասունքները փոխադրել ու ամփոփել են նահատակավայրին ամենամոտ տափարակում. «...և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին»[68]:

Թադեոս առաքյալի նահատակությունից մի քանի դար հետո ժայռից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռու կառուցվել է Թադեոս առաքյալի վանքը, որն իր ամբողջ վեհությամբ իշխում է Սանատրուկի դաշտի վրա:

**Թադեոս առաքյալի վանքի աշխարհագրական դիրքը.** Թադեոս առաքյալի կամ Թադեի վանքը գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գավառում՝ Մակու քաղաքից 23 կմ հարավարևելք՝ Չալդրանի դաշտում, 46′ 33′ արևելյան երկայնության և 38′ 96′ հյուսիսային լայնության միջև, ծ. մ. 1830 մ բարձրության վրա: Ընկած է Թավրիզ-Մակու խճուղուց արևմուտք, որին միանում է մոտ 60 կմ երկարություն ունեցող ճանապարհով. «Թագամ մեքենաների երթևեկություն չկար: Այնուամենայնիվ, մենք շարունակում էինք ճանապարհը: Ժամեր անց վերջապես ճերմակության մեջ ուրվագծվեց վանքը:

66 Տեղում տեսանելի են եղել դամբարանի պատերը. արևմտյան կողմում քարաժայռն էր, իսկ մյուս պատերը աղյուսի և քարի իրար հաջորդող շերտերի շարվածք ունեին (Իրանում այդպիսի դամբարաններ կան և թվագրվում են մինչև Բ դարով): Դամբարանից հանված հողում նշմարվել են մարդու կոնքի և ազդրի խիստ փտած ոսկորներ:
1991 թ. դամբարանի գանձախուզության մասին տեղեկանալով՝ անմիջապես դեպքի վայր եմ մեկնում գործընկերոջս հետ. «1991 թ. դեկտեմբերի առաջին օրերն էին: 12 օր Արևմտյան Ատրպատականում գտնվող նախկին հայաբնակ գյուղերի եկեղեցիները չափագրելուց հետո պատրաստվում էի գործընկերոջս՝ Սոկրատի հետ վերադառնալ Թեհրան: Մեկնելուց առաջ անցա «Միրասե Ֆարհանգի» (Հուշարձանների վարչություն) գրասենյակ՝ պետին՝ պրն. Հեյդարին հրաժեշտ տալու նպատակով, որն էլ ինձ տեսնելուն պես ասաց.
– Պարո՛ն Հախնազարյան, շատ տհաճ դեպք է պատահել: Գանձախույզները Ս. Թադեոս առաքյալի վանքի հյուսիսում գտնվող մի քանի մատուռների ներսում և դրսում փոսեր են փորել, որոնց հետևանքով գմբեթավոր մատուռի մեջ մի դամբարան է բացվել: Ըստ հնագիտական տվյալների՝ դամբարանը նման է հին պարսկական Աքեմենյան շրջանի դամբարաններին. պատերը կառուցված են երկու-երեք շերտ աղյուսից և մի շերտ քարից: Մի՛ մտահոգվեք, ես կարգադրել եմ, որ փորած հողը հետ լցնեն դամբարան...
Հրաժեշտ տվեցի և դուրս եկա շենքից: Անսպասելի լուրն ինձ հանգիստ չէր թողնում, ես չէի կարողանում կողմնորոշվել:
– Սոկրա՛տ, մենք Թեհրան չենք մեկնում, գնում ենք Թադեոս առաքյալի վանք,– ասացի ես:
– Բայց, պարո՛ն Արմեն, տեսնում եք, որ եղանակը վատ է, սկսել է ձյունել...
Մենք ուղղություն վերցրինք դեպի վանք: Մեքենան բարձրանում էր արդեն ձյունածածկ լանջերով՝ շարունակ խրվելով թանձրացող մառախուղի մեջ: Ճամփան հազիվ էր երևում: Ես մտորում էի. «Արդյո՞ք կկարողանանք տեղ հասնել»: Այդ փոթորկոտ եղանակին ո՛չ մարդ էր երևում, ո՛չ անասուն, անգամ մեքենաների երթևեկություն չկար: Այնուամենայնիվ, մենք շարունակում էինք ճանապարհը: Ժամեր անց վերջապես ճերմակության մեջ ուրվագծվեց վանքը:
Երբ հասանք վանք, ես արագ բարձրացա և ներս մտա հիշյալ մատուռն ու տեսա դամբարանն ու աջ ու ձախում կուտակված հողը: Իրոք, քառանկյուն դամբարանի պատերի շարվածքը մի քանի շերտ աղյուս էր, ապա քար: Կիսախավարում հողաթմբերի մեջ մի քանի ոսկորներ էին երևում, որոնք գցելով դամբարանի մեջ և հողով ծածկելով՝ արագ վերադարձա ինձ սպասող մեքենան:
Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի մեջ տրված է նաև Թադեոս առաքյալի նահատակության, նահատակության վայրի և գերեզմանի մասին պատմող ավանդությունը:
Հնագույն դամբարանի գոյությունն ինքնին հարցերի շարան է ստեղծում և որոշ եզրակացությունների հանգեցնում:
Դամբարանը գտնվում է մատուռի արևելյան պատին կից և, եթե հստակ պատճառ չկար, ապա ինչո՞ւ ժայռին այդքան մոտ կառուցեցին մատուռը (հավանաբար մուտք գործելու հնարավորություն չլինեն) և ստիպված այն կառուցեցին սովորության հակառակ հարավային ճակատում: Յուրահատուկ է այս սրբավայր-ուխտավայրի հարավային պատի ներքևում կիսակլոր շարված կամարով մի մեծ պատուհանը, որը բացվում է դեպի «Սրբաժայռը» (տե՛ս վանքի հատակագիծը): «Սրբաժայռից» 30-40 սմ էլ հեռու է մատուռի արևմտյան պատը, որին անմիջական կից է դամբարանը:
Ե՞րբ է կառուցվել Թադեոս առաքյալի վանքը, ստույգ հայտնի չէ, սակայն, ըստ ամենայնի, այն կառուցվել է ժայռ-դամբարանին ամենամոտ և հարմար վայրում՝ ինքնին շեշտելով «ժայռ-դամբարանի» նշանակությունը՝ որպես ուխտավայր:
Վերոնշյալ տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ սա է առաքյալի դամբարանը, որը կարոտ է մասնագիտական և հավելյալ քննության:

67 Սոփերք, Ը, էջ 93:

68 **Մովսէս Խորենացի,** էջ 157:

ղէոս Առաքելոց վանքը գտնուում է Մակու, պարսկա-թուրք սահմանագլխի վրայ: Աբաղայի սահմանակից, թիւրքական Կարէնի մեծ գիւղից 11/2 ժամ հեռու, իսկ թիւրքական սահմանից ձիով վեց ժամ հեռաւորութեաբ վրայ: Խոյից մինչեւ վանք 14 ժամուայ ճամբայ է ձիով...»[69]:

Վանքի տեղանքը մանրամասնորեն նկարագրվել է 1894 թ. «Արտազու սուրբ Թադէոս Առաքելոյ վանքը գտնվում է համանուն գաւառի Սանատրուկ դաշտի արևմտեան կողմի սարամիջի տափարակի ձորաբերան հարթոցի վերա: Օդն առողջարար, ջուրն ոչ այնքան բարեհամ: Այն առուակը, որն անցնում է վանացս արևելեան և հիւսիսային կողմով, ներկայումս կոչվում է Սուրբ Սանդուխտայ կամ Կառնուտայ ջուր, որովհետև ջուրը սկիզբ է առնում սուրբ Սանդուխտ մատրան արևելեան կողմի աղբիւրից: Այն սարագոտին, որը ձգվում է վանից և Սանատրուկ դաշտի հիւսիսային կողմը արևմտից-արևելք ուղղութեամբ, կոչվում է Արեգունի սար, իսկ վանից արևմտեան կողմը հիւսիսից-հարավ ձգուող սարագոտին կոչվում է Դեգղար (Ծնկնուկասար): Դեգղարի և Արեգունի սարերի միացման մէջտեղի բարձրութիւնը և քարը կոչվում է Նահատակութեան տեղի, որտեղ կառուցած են մատուռներ թուով երեք հատ, բացի այս մատուռները երկու մատուռ էլ գտնվում են մինը վանքի հարաւային կողմը ... և միւսը վանքի արևելեան կողմը յանուն սբ. Սանդխտոյ կուսի, վանքից մի վերստ հեռաւորութեամբ... Վանքից դէպ հարաւ-արևելք չորս վերստաչափ հեռաւորութեամբ գտնվում է Շաւարշան հին քաղաքի աւերակները և Սանատրուկ լիառը համանուն բերդով»[70]:

Մահմեդական բնակչության շրջանում վանքը հայտնի է Ղարաքիլիսա անվամբ:

**Ղարաքիլիսա անվան ստուգաբանությունը.** վերջին տարիներին Իրանում կատարված բանասիրական ուսումնասիրությունները նոր լույս են սփռում ղարա բառով կազմված ատրպատականյան տեղանունների վրա: Հայտնի է, որ թուրքական էթնիկ տարրի առկայության պայմաններում, սկսած ԺԴ-ԺԵ դարերից, երկրամասում գերիշխող է դարձել ազերի թուրքերենը, և տեղանունները ձևափոխվելով հարմարեցվել են նոր լեզվամտածողությանը: Սակայն այսօր էլ մի շարք գյուղերում և մասնավորապես Գելինղիյե (Gelinghieh) ավանում տարեցները գործածում են իրենց բնիկ ազերի պարսկերեն բարբառը. թաթի և հարզանի անուններից առաջ հաճախ օգտագործում են ղարեա-ղարա, նաև ձևափոխված՝ քալե, քալա, քալան բառը, որը նշանակում է մեծ, մեծագույն, կարևորագույն[71]: Ուստի ղարա բաղադրիչով կազմված տեղանուններն այս հետազոտությունների հիմքի վրա վերաիմաստավորվում են: Ներկայացնենք մի քանի օրինակ:

Ատրպատականի Ղարարուդ գետը վաղ միջնադարում կոչվել է Քալանրուդ (րուդ պարսկերեն նշանակում է գետ): Թարգմանվում է ոչ թե սև գետ, ինչպես թուրքերենում (ղարա = սև, գետում եղած բաց գույնի ավազաքարերի պատճառով այն այդպես կոչվել չէր կարող), այլ մեծ գետ, կարևորագույն գետ, ինչպես որ է իրականում (Ղարարուդը Ատրպատականի ամենամեծ գետն է): Նույնը կարելի է ասել Ղարաչաման անվան կապակցությամբ: Չաման կամ չամանզար նշանակում է մարգագետին, իսկ Ղարաչաման անվանված վայրը նշանավոր է իր ընդարձակ ու հարուստ մարգագետիններով և արոտավայրերով: Ուստի Ղարաչաման նշանակում է մեծ մարգագետին: Ղարադաղն ու Ղարաբաղը թուրքերեն ղարա-ով սխալմամբ ճանաչված են համապատասխանաբար Սև լեռ ու Սև այգի, մինչդեռ հետազոտողների կարծիքով (Իրաջե Աֆշար, Անդրանիկ Հովյան և այլք) դրանք պետք է թարգմանել համապատասխանաբար Մեծ լեռ և Մեծ այգի:

Ղարա=ղարեա բառիմաստի պարզաբանումը հասկանալի է դարձնում նաև Ղարաքիլիսա (Կարաքիլիսա) անվան իրական նշանակությունը: Նախ նշենք, որ գյուղանունն առաջացել է Թադեոս առաքյալի վանքին տրված Ղարաքիլիսա անունից և թարգմանվել է Սև եկեղեցի՝ նկատի ունենալով հին եկեղեցու՝ մուգ գույնի քարերով շարված լինելը: Մինչդեռ վանքի՝ ԺԹ դարում սպիտակ ավազաքարից կառուցված հատվածը շատ ավելի մեծ է և իր ձյունաթույր ճերմակությամբ նույնիսկ հեռվից տեսանելի է մթության քողի տակ: Այլ խոսքով, ըստ Ատրպատականի բարբառների նորագույն ուսումնասիրությունների՝ Ղարաքիլիսա նշանակում է ոչ թե սև եկեղեցի, այլ մեծ, կարևորագույն եկեղեցի[72], մանավանդ որ այն համապատասխանում է իրականությանը:

**Թադեոս առաքյալի վանքի հիմնադրումն ու առաջնորդության հաստատումը.** հայկական գրեթե բոլոր նշանավոր վանքերի կառուցումն անմիջականորեն պայմանավորված է որևէ ավանդությամբ կամ հրաշագործությամբ: Քրիստոնեության առաջին գաղափարակիր-քարոզիչների նահատակության վայրերը սրբացվել են, իսկ նրանց գերեզմանների վրա հետագայում կառուցվել հոգևոր շինություններ: Այդպիսին է նաև վանքի հիմնադրման՝

69 **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1922, № 2, էջ 30-31:

70 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 9 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): Նաև՝ «(Թադեի վանքը) Նստած է փոս տեղ, ձորի մէջ, եւ երեք կողմերից բարձրանում են լեռները» («Մուրճ», 1903, № 8, էջ 123: Վերահրատ.՝ **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 27):

71 **Քասրավի Ահմադ,** Քարունե Քասրավի, Թեհրան, 1986, էջ 431 (պարսկերեն):

72 **Ղարա** տերմինի և նրանով կազմված տեղանունների մասին մանրամասն տե՛ս **Իրաջե Աֆշար**, Ղարաքիլիսա, «Փեյման», Թեհրան, 1998, № 2 (պարսկերեն): **Յովեան Անդրանիկ**, Ղարաքիլիսա, «Իրան-Զամին», Թեհրան, 1996 (պարսկերեն):

ավանդության վրա խարսխված պատմությունը, ավանդություն, որտեղ արտահայտվում է Հայ առաքելական եկեղեցու և հայոց ազգային կրոնի մի շատ կարևոր գաղափարախոսությունը:

Վանքի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ավանդությունն այն վերագրում է մեր թվականության Ա դարին[73]: Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը և հետագա պատմիչները գրել են առաքելական վկայաբանության մասին, սակայն հիշել են միայն սուրբ Թադեոս առաքյալի գերեզմանը և հիշատակություն չեն թողել վանքի վերաբերյալ: Այն չեն հիշատակում նաև Եղիշեն և Ղազար Փարպեցին: Որոշ հայագետների կարծիքով Ավարայրի՝ 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցած նշանավոր ճակատամարտի վայրը մոտ էր Թադեոս առաքյալի վանքին (տե՛ս Ավարայր գյուղ)[74], ուստի անհասկանալի են համարում երկու պատմիչների կողմից վանքը չհիշատակելու հանգամանքը: Այլոց կարծիքով այս լռությունն ապացույց է այն փաստի, որ Ե դարի կեսերին վանքը գոյություն չի ունեցել, այլապես «...նրա կողքից կամ մօտակայքից անցած կը լինէին Աւարայրի դաշտը մեկնող հայկական զօրամասերը և կամ հոգևորականները, որոնք պիտի աղօթէին կամ պատարագէին տաճարում և Վարդանանց պատերազմի ականատես Եղիշէ պատմագիրը անպայման կը յիշատակէր այդ մասին»[75]: Պատմիչների լռության պատճառը հավանաբար այն է, որ նախ՝ Թադեոս առաքյալի նահատակավայրը հեռու էր գտնվում ճակատամարտի վայրից, հակառակ դեպքում «...Եղիշեն և Ղազար Փարպեցին, անշուշտ, կօգտագործեին այդքան բարենպաստ առիթը՝ ճակատամարտի վայրը մատնանշելու, ինչպես նաև Թադեոս առաքյալին գովերգելու ու մեծարելու համար»[76], ապա նաև այն, որ Ե դարում նահատակության վայրում եղել է մատուռ, բայց ո՛չ վանք:

Թադեոս առաքյալի վանքի մասին մատենագրական տեղեկությունները բացակայում են մինչև Է դարը, երբ հպանցիկ հաղորդվում է, որ Արտազ գավառում է հանգչում Թադեոս առաքյալի աճյունը. «...Արտազ գավառը՝ սբ. Թադեոս առաքյալի հանգստարանը...»[77]:

Նահատակության վայրում, ամենայն հավանականությամբ, մինչև վանքի կառուցումը եղել է պաշտամունքային շինություն, թեև այդ մասին ուղղակի վկայություններ չկան: Նման ենթադրության հիմքեր են տալիս մի քանի հանգամանքներ.

1) Անակ Պարթևի մասին Խորենացու վերոհիշյալ վկայության մեջ հանդիպող խորան բառը, որը, անշուշտ, պետք է ենթադրեր կառույցի առկայություն:

2) Կիրակոսի տեսիլքում Սանդուխտ կույսի հաղորդած տեղեկությունը[78]:

3) Քրիստոնեության առաջին դարերից սկսած՝ Արտազում եպիսկոպոսական նստավայրի գոյության հանգամանքը:

4) Թադեոս առաքյալի վանական համալիրի տեղագրական քննությունը լիովին համապատասխանում է սկզբնաղբյուրների հաղորդած վկայություններին:

Այս վանքը՝ որպես առաքյալի նահատակավայրում կառուցված սրբատեղի, ամեն տարի հազարավոր հավատացյալների ուխտատեղի է եղել, ու առաջնորդությունն էլ Հայոց եկեղեցական կազմակերպության մեջ կարևոր դեր է ունեցել: Արտազահայությունը ավանդաբար հավատացել է, որ Թադեոս առաքյալի գերեզմանը գտնվում է վանքի հարավային ավանդատանը, իսկ Սանդուխտ կույսի գերեզմանն ամփոփող մատուռը կառուցված է վանքից մոտ 1, 5 կմ հարավ գտնվող բլրի վրա:

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները ենթադրել են տալիս, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց և Ամենայն Հայոց կաթողիկոսության ստեղծումից հետո էլ Թադեոս առաքյալի աթոռը՝ իբրև Արտազի թեմի եպիսկոպոսանիստ կենտրոն, շարունակել է իր գոյությունը: Օրինակ 633 թ.՝ Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի օրոք (630-641), բյուզանդական Հերակլ կայսեր նախաձեռնությամբ Կարին քաղաքում հրավիրված եկեղեցական ժողովին մասնակցել է նաև Արտազի Տիրատուր արքեպիսկոպոսը[79], որը, ամենայն հավանականությամբ, նստում էր Թադեոս առաքյալի սրբավայրում:

---

73 Ուսումնասիրողներից մեկը վանքի հիմնադրման ժամանակը տանում է ԺԲ դ. (տե՛ս **Կոստանեանց Կ.**, Հայոց վանքերը. համառօտ տեսութիւն, Մոսկուա, 1886, էջ 98): Իրանահայ բանասեր Հայկ Աճեմյանը եզրակացնում է, որ «...վանքի կառուցումը կատարուել է Թ դարից յետոյ, իսկ մինչ այդ Արտազի գաւառի Հայութեան մէջ դարերի ընթացքին, սերունդից սերունդ աւանդուել է թէ Ս. Թադէոս Առաքեալը և Սանդուխտ Կոյսը նահատակուել են այդ վայրերում, ուր մինչև այժմ էլ ցոյց են տալիս Առաքեալի աղօթատեղն ու թաքստոցը, ճգնարանն ու Չարչարանաց Բլուրը: Աւանդաբար սրբագործուած այդ վայրերում կառուցել են անշուք և անզարդ մատուռներ, իսկ Առաքեալի գերեզմանի վրայ էլ շինել են վայելուչ տաճար, որ դարերի ընթացքում ձևափոխումների ենթարկուել է ըստ վանահայրերի ճաշակին և հասկացողութեան... Պիտի ենթադրել, որ Ս. Թադէի և Արտազ գաւառի այլ հայ վանքերի տաճարները կառուցուել են Հայ հեթանոսական պաշտամունքի մեհեանների և տաճարների վրայ» (**Աճէմեան Հ.**, Ս. Թադէի վանքը, մասն I, էջ 21-23):

74 **Մանանդյան Հ.**, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Երկեր, h. Ե, Երևան, 1984, էջ 180:

75 **Աճէմեան Հ.**, նշվ. աշխ., մասն I, էջ 21:

76 **Агабекян Г. О.**, К вопросу о месте Аварайрского сражения, «ՊԲՀ», 1964, № 4, էջ 96.

77 **Հովհան Մամիկոնյան**, նշվ. աշխ., էջ 32:

78 Սոփերք, Ը, էջ 91-92: Կիրակոսի տեսիլքի մասին տե՛ս սույն աշխ., էջ 34:

79 **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, h. Բ, Վենետիկ, 1785 (վերահրատ.՝ Երևան, 1984), էջ 328, 538: Տե՛ս նաև **Օրմանյան Մ.**, Ազգապատում, Ա, էջ 803-809: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը (պատմական ակնարկ), Թեհրան, 1999, էջ 10:

Առաքյալի անվամբ սրբագործված և եպիսկոպոսանիստ կենտրոն դարձած վանքում է աթոռակալել Ժ դարի գիտնական, եպիսկոպոս Գրիգոր Ամատունին. «...սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն, որ նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդոզական գաւառի...»[80]:

**Թադեոս առաքյալի վանքն ու Ամենայն Հայոց կաթողիկոսությունը.** 1113 թ. երիտասարդ հասակում Գրիգոր Գ Պահլավունու՝ Ամենայն Հայոց կաթողիկոս (1113-1166) օծվելը պատճառ է դառնում Աղթամարի աթոռի ըմբոստության: Հայոց եկեղեցու երկու թևերի միջև 1116 թ. ծագած այս վեճի ժամանակ Թադեոս առաքյալի (Արտազի) թեմի առաջնորդն իր կողմնակցությունն է հայտնում Աղթամարի կաթողիկոսությանը և Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսին, սակայն մեկ տարի անց վերստին ընդունում է «մեծ աթոռի», այսինքն՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գերակայությունը. «ՌՃԺԶ (1116): Տէր Գրիգորիս՝ ամս ԾԳ (53): Աստ ի վախճանելն տեառն Բարսղի և ի նստիլն տեառն Գրիգորիսի տղայ հասակաւ՝ ԺԵ ամաց յաթոռ հայրապետական՝ Դաւիթ անուն ոմն եպիսկոպոս յաթոռն Աղթամարայ՝ արհամարհէ զտղայութիւն Գրիգորիսի և ապստամբեալ նստի կաթուղիկոս՝ հաւանեցուցալ ինքեան և զաթոռն Սիւնեաց և զԹադէոսի առաքելոյն՝ տարի մի, և յետոյ դարձան նոքա ի հնազանդութիւն մեծ աթոռոյն. և Աղթամար մնաց յիւրում ապստամբութիւն»[81]: Արտազի թեմի և Թադեոս առաքյալի վանքի կարևորությունն այնքան մեծ է եղել, որ նրա առաջնորդը բուն հայաստանյան եպիսկոպոսական երեք նշանավոր կենտրոնների՝ Բջնիի, Հաղպատի և Տաթևի (Սյունյաց) առաջնորդների հետ վճռորոշ ձայնի իրավունք է ունեցել Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններում[82]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԳ դարում**. 1243 թ. Ամենայն Հայոց Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսը (1221-1267) Կիլիկիայի հայոց թագավորության Սիս մայրաքաղաքում հրավիրում է եկեղեցական ժողով: Մասնակիցների թվում հիշվում է նաև Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Հովսեփ վարդապետը[83], որն էլ 1247 թ. Կոստանդին Ա-ի կարգադրությամբ վերանորոգում է նախընթաց շրջանում թուրք-սելջուկների ու վրացիների կողմից ավերված ու ամայացած վանքը: Հաստատությունը նյութապես ապահովելու համար կաթողիկոսը հատուկ շրջաբերականով ընդարձակում է թեմի սահմանները և մի քանի նոր գյուղեր ու քաղաքներ նեթակա դարձնում վանքին: Նա նաև դրամական անհրաժեշտ օժանդակություն է հատկացնում համալիրը վերանորոգելու և վանականների համար բարեկարգ վիճակ ստեղծելու նպատակով. «...յորժամ ՈՂԶ էր թուականս հայոց, առաքինի կաթողիկոսն Կոստանդին առաքէ եկեղեցեացն Արևելից ընծայս՝ մետաքսառէջս ի կերպասուց պէսպէս գունովս, և մեծագին նափորտս ի սպաս պատարագին սրբոյ ի ձեռն Թէոդոսի սպասաւորի իւրոյ՝ ի պատուաւոր վանորայս, և շրջաբերական նամակ շիրմի առաքելոյն Թադէոսի տալ նմա վիճակ զշրջակայ գաւառսն և զքաղաքսն եւ ոսկի յոլով ի շինութիւն գաւթին, զոր շինէր վարդապետն Յովսէփ, յետ աւերածոյն՝ որ ի թուրքաց, և ի հինիցն վրաց, քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ և ամայի»[84]: Վանքի վերաշին-

80 **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 400: Տե՛ս նաև **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 203-204:

81 **Սամուէլի** քահանայի **Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (այսուհետև՝ **Սամուէլ Անեցի**, համապատասխան էջերով), Վաղարշապատ, 1893, էջ 124: Պատմիչի տեղեկությունը **Հ. Ոսկյանը** սխալմամբ ներկայացնում է իբրև 1113 թ. կատարված իրողություն (տե՛ս նրա՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 468, ծանոթ. 8): Հմմտ. **Ակինեան Ն.**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 11:

82 **Օրմանյան Մ.**, Ազգապատում, Ա, էջ 1583-1584: Լ. Խաչիկյանը սխալ է համարում Մ. Չամչյանի, Ղ. Ալիշանի և Մ. Օրմանյանի այն տեսակետը, թե Արտազի եպիսկոպոսական աթոռը ԺԲ դարում եղել է կաթողիկոսի ընտրությունը վավերական ճանաչող չորս աթոռներից մեկը: Նա գտնում է, որ նման կարգ հայոց եկեղեցում հաստատվել է միայն եգիպտական սուլթանության զորքերի կողմից Կիլիկիայում Հայոց կաթողիկոսների նստավայր Հռոմկլան գրավելուց (1292 թ.) հետո (տե՛ս նրա Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, «ԲՄ», № 11, Երևան, 1973, էջ 136-137, ծանոթ.): Ի դեպ, այն, որ Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսի ընդդիմադիր գործողություններից հետո է հայոց եկեղեցում սահմանվել վերոհիշյալ կարգը, հստակ նշված է մասնավորապես 1802 թ. հունիսի 2-ին (Դավիթ-Դանիելյան կաթողիկոսական պայքարի ժամանակ) Էջմիածնի միաբանների՝ Ռուսաց Սուրբ ժողովին ուղարկած նամակում. «...ի վախճանիլ Բարսղի հայրապետի յամի Տեառն 1113, Դաւիթ անուն ոմն եպիսկոպոս՝ ի ձեռն կաշառաց և բռնութեամբ այլազգեաց առանց ընտրութեան ազգին օծաւ հայրապետ. այսմ անհաւան գտաւ ազգն, և ոչ իսկ ընկալաւ զնա: Նմին իրի ժողով մեծ արարեալ ի Սեաւ լերին, ժողովեցան անդ երկու հազար հինգ հարիւր սուրբ հարք, բանիւ արարեալ մերժեցին զԴաւիթ, և կարգեցին հայրապետ Հայոց Գրիգոր Պալհաւունի. ...Եւ սահմանեցին զայս կանոն զի յընտրութեան հայրապետի լիցի մեծագոյն հաւանութիւն չորից գլխաւոր աթոռոց Արքեպիսկոպոսաց այսինքն սրբոյն Թադդէոսի առաքելոյն, զՏաթևոյն, Բջնու և Հաղբատու, և վճռեցին հաստատնապէս զի ընտրութիւն առանց սոցա անվաւեր լիցի: Այս յայտնի երևի յԸնդհանրական թուղթս սրբոյն Ներսէսի Շնորհալւոյն... և ի հին պատմութիւնս ազգի մերոյ» (Դիւան հայոց պատմութեան (այսուհետև՝ ԴՀՊ, համապատասխան գրքերով և էջերով), գիրք Ե, Դանիէլ կաթուղիկոս (1800-1808), հրատ. **Գիւտ** աւագ քահանայ **Աղանեանց**, Թիֆլիս, 1902, էջ 245):

83 Սփ 1243 թ. ժողովի մասին մանրամասն տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, էջ 1900-1912:

84 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց (այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**, համապատասխան էջերով), աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ311: ԺԴ դ. վրաց անանուն ժամանակագրի վկայությամբ՝ Շահնշահ և Ավագ Զաքարյան իշխանները, 30 հազարանոց բանակով անցնելով Արաքս գետը, ռազմական գործողություններ են ծավալել Խլաթի և Վաղարշակերտի (Ալաշկերտ) շրջանում: Այս ժամանակ էլ հավանաբար վրաց զորքի մի մասը, հալածելով թուրքերին, անցնում է Արտազի կողմերը և հասնում մինչև Սբ. Թադեի վանք (տե՛ս Վրաց ժամանակագրություն (1207-1318), Երևան, 1971, էջ 91): Հմմտ. **Мартиросян А.**, Армянские поселения на территории Ирана в XI-XV вв., Ереван, 1990, с. 35-36.

ման աշխատանքներին ընթացք տալու համար Հովսեփ վարդապետին, անշուշտ, անհրաժեշտ էր նաև մոնղոլ-թաթար իշխողների հավանությունը, մանավանդ որ թաթար զորապետ Անագուրակ-Նուինի ամառանոցային նստավայրն էլ գտնվում էր վանքի մերձակայքում: Ուստի վանահայրը ներկայանում է զորապետին, ստանում ակնկալած թույլտվությունն ու լծվում աշխատանքի. «...Եւ Յովսեփայ երթեալ առ զօրագլուխ մի թաթարին, որում անուն էր Անագուրակ-նուին, որոյ իջաւանքն իւր յաւուրսն ամարայնոյ հուպ էր ի գերեզման սուրբ առաքելոյն Թադէոսի, և նորա հրամանաւ սրբեալ զեկեղեցին և նաւակատիս կատարեալ՝ շինեաց զվանսն և ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս»[85]: Ավելին, թաթար իշխանավորը, հասկանալով ուխտատեղիի կարևորությունը, իր հերթին բարեկարգում է ճանապարհները և խիստ կարգադրում զինվորներին չխոչընդոտել ու չնեղել վանք այցելող ուխտավորներին: Անգամ «...բազումք ի նոցունց գային և մկրտէին զուստերս և զդստերս իւրեանց. և բազում այսահարք և հիւանդք բժշկէին... Այլ և ամենայն զօրքն թաթար ոչ էին թշնամի խաչի և եկեղեցւոյ, այլ և յոյժ պատուէին և ընծայս մատուցանէին...»[86]:

Մեկ այլ հեղինակ վանքում ընթացող վերակառուցման աշխատանքների մասին վկայում է. «Յովսէփ վարդապետն շինեաց զգերեզման Թադէոսի առաքելոյն»[87]: Ի դեպ, Հովսեփ վարդապետ Արտազեցին 1247 թ. իրականացնում է ոչ միայն վանքի վերանորոգումը, այլև գավիթ է կառուցում[88]:

ԺԳ դարի կեսերին հիշատակվում է «Արտազ Մակու է, ուր կայ սուրբ առաքեալն Թադէոս» ձևով[89]:

1285 թ. Կիլիկիայի հայոց Լևոն Գ թագավորը (1270 -1289) մոնղոլ Արղուն խանի հետ քաղաքական դաշինք կնքելու նպատակով ժամանակի հայտնի գիտնական Թորոս փիլիսոփայի ընկերակցությամբ լինում է նաև Ատրպատականում և ուխտի գնում Թադեոս առաքյալի վանք, հյուրընկալվում Արտազի թեմակալ առաջնորդ, վանքի վանահայր Տիրացու Ա եպիսկոպոսին[90]. «Եւ ութ ամաւ յառաջ (1285 թ.) եկեալ սուրբ արքայն Հայոց Լևոն՝ բարի և սնուցող և երախտաւոր տէրն իմ յայս սուրբ ուխտս, և բազում սէր գտեալ արքային Հայոց ի սիրոյ եպիսկոպոսէս տեր Տիրացուէ: Նա և ես նուաստս Թորոս վայելեալ ի սէր սորա...»[91]:

Թորոս փիլիսոփան երկրորդ անգամ վանք է այցելում Թովմաս եպիսկոպոսի հետ 1292 թ.՝ վերստին հյուրընկալվելով տեր Տիրացուին: Մինչ այդ եգիպտական սուլթանության զորքերը, որոնք հարձակվել էին Կիլիկիայի բերդերի ու բնակավայրերի վրա, գրավել Հռոմկլան՝ հայոց կաթողիկոսների նստավայրը, գերեվարում են Ստեփաննոս Դ Հռոմկլայեցի հայրապետին (1290-1293): Նոր կաթողիկոս ընտրելու նպատակով «...գալ վերստին նորոգել զաթոռ Սուրբ Լուսաւորչին», Կիլիկիայի հայոց Հեթում Բ թագավորը (1289-1301) Թովմաս եպիսկոպոսի գլխավորությամբ հատուկ պատվիրակություն է առաքում «յաշխարհս Արևելից»՝ Հայաստան[92]:

Նկատի ունենալով, անշուշտ, Տիրացու եպիսկոպոսի մեծ հեղինակությունը և վճռորոշ դերը կաթողիկոսական ընտրություններում, ինչպես նաև Թադեոս առաքյալի նահատակության վայրում հիմնված վանքի՝ հայերի համար նվիրական լինելը՝ թագավորը հանձնարարում է առաջին հերթին ուղևորվել Թադեոս առաքյալի վանք՝ Տիրացու առաջնորդի մոտ. «Եւ մեզ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն յառաջագոյն գալ ի սուրբ առաքելոյն Թադէոսի...»[93]:

Ինչպես երևում է, երկրորդ այցելության ժամանակ Թորոս փիլիսոփան իր հետ Արտազ է բերում նաև Կիլիկիայի Դրազարկ վանքում 1291 թ. ընդօ-

85 **Կիրակոս Գանձակեցի,** նույն տեղում:

86 Նույն տեղում, էջ 312: Տե՛ս նաև **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786 (վերահրատ՝. Երևան, 1984), էջ 230: **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 469:

87 **Մխիթար Այրիվանեցի**, էջ 67:

88 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 311, 328:

89 Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, էջ 16 (համառոտ խմբագրություն): «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ ձևակերպումը գրեթե նույնն է. «Արտազ գաւառն Մակու է, ուր կայ սուրբ առաքեալն Թադէոս» (տե՛ս նշվ. աշխ., էջ 32):

90 Հ. Աճեմյանի և Հ. Մարտիրոսյանի կարծիքով Հովսեփ Արտազեցուն հաջորդել է ոչ թե Տիրացու եպիսկոպոսը, այլ Ստեփանոս վարդապետը, որը նահատակվել է մոնղոլների կողմից 1257 թ. Արտազի Գերեթին վանքում: Հ. Աճեմյանն իր տեսակետը չի հիմնավորում (տե՛ս նրա «Ս. Թադէի վանքը», մասն I, էջ 28), իսկ Հ. Մարտիրոսյանը վկայակոչում է Մաղաքիա աբեղայի (ԺԳ դ.) «Պատմութիւն վասն ազգին նետողաց» աշխատության ռուսերեն հրատարակությունը (“История монголов **инока Магакии,** XIII века”, перевод и объяснения **К. П. Патканова**, СПб, 1871, с. 25, 26. Տե՛ս **Мартиросян А.**, նշվ. աշխ., էջ 74): Սակայն այս տեսակետը զուրկ է որևէ հիմքից, քանի որ Մաղաքիայի տեղեկությունը սխալ է մեկնաբանվել: Պատմիչը, իրոք, հաղորդում է Գերեթին վանքում (տեղն անհայտ) Ստեփանոս վարդապետի նահատակության մասին՝ ավելացնելով, որ նա ա՛յդ վանքի վանահայրն էր և ոչ մի խոսք չի ասում ո՛չ Արտազ գավառի, և ո՛չ էլ Թադեոսի մենաստանի մասին. «Իսկ գլխաւոր մի (մոնղոլներից)... գնաց ի վանք մի, որ ասի Գերեթին, և էր հայր վանից ալևոր ծեր յոյժ, ընդրե(ա)լ ս(ուր)բ և առաքինի ամ(ենայն) վարիւք և բարի գործովք կատարե(ա)լ, Ստեփաննոս անուն» (**Մաղաքիայ աբեղայի** պատմութիւն վասն ազգին նետողաց (այսուհետև՝ **Մաղաքիա աբեղա**, համապատասխան էջերով), Ս. Պետերբուրգ, 1870, էջ 23-24, նաև էջ 25):

91 ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (այսուհետև՝ ԺԳ, համապատասխան էջերով), կազմ. Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 692: Տե՛ս նաև «Արարատ», 1911, էջ 223-224:

92 ԺԳ, էջ 692:

93 Նույն տեղում: Է. Հակոբյանն այս իրողությունը ներկայացնում է 1293 թ., մինչդեռ Դրազարկ վանքի ավետարանի հիշատակարանում հաստատագրված է 1292 թ. (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 13):

րինակած ավետարանը և մեկ տարի անց Թադեոսի մենաստանում գրում ձեռագրի հիշատակարանը՝ պատմելով վերոհիշյալ դեպքերի մասին:

Խաղաղ ժամանակաշրջանը Թադեոս առաքյալի վանքի համար երկար չի տևում: 1295-1297 թթ. մոնղոլ Նովրուզ զորապետը սկսում է Նախիջևանի, Արտազի և Մարաղայի շրջանների քրիստոնյաների հալածանքը: Թաթարները գրավում ու ավերում են նաև վանքը, կողոպտում հարստությունները, քանդում շինությունները, անասելի տանջանքների ենթարկում Տիրացու եպիսկոպոսին. «Ըմբռնեցին և զեպիսկոպոսն Առաքելոց զՏէր Տիրացուն. և ազգի ազգի անարգանօք ձաղեցին. և առին զամենայն ինչս նորա. բայց ի վանքն նորա, որ էր շիրիմ սուրբ առաքելոյն Թադէոսի, քանդեցին զշինուածս տանցն, աւերեցին, կողոպտեցին և իսպառ կործանեցին»[94]:

Նույն դեպքերի մասին տեղեկություններ են պահպանվել նաև ձեռագրերից մեկի հիշատակարանում. «Ի թվին ՉԽԶ (1297) էր. աշխարհակալ Ղազանն, և եպիսկոպոս Սիւնեաց՝ Ստեփանոս Տարսայճի որդի, և եպիսկոպոս Թադէոսի առաքելոյ՝ Տիրացու, որ բազում նեղութիւնս կրեալ յանօրինաց, յաւերել տանց և շինուածոց վանից ի չարազգխէն Նաւռուզայ»[95]: Ենթադրվում է, որ թաթարների այս հարձակումից շատ չանցած՝ 1298 թ., Տիրացու եպիսկոպոսը մահացել է և թաղվել վանքում[96]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԴ դարում.** մատենագրության մեջ վանքի հետագա դարերի պատմության վերաբերյալ պահպանված տեղեկություններն ավելի մանրամասն են ներկայացված: Դրանց շնորհիվ, սկսած ԺԴ դարից, հնարավոր է առավել հանգամանորեն հետևել Արտազ գավառի թեմական առաջնորդների, վանքի վանահայրերի շինարարական և մշակութային գործունեությանը, մենաստանի հետ անմիջականորեն կապված պատմական անցքերին:

1315 թ. ստեղծված ձեռագրերից մեկում վանքը մեծարվում է որպես «...ի սուրբ և յերկնահանգէտ, ի հռչակաւոր ուխտս, ի յաթոռս և ի հանգիստս սուրբ առաքելոյս Թադէոսի, ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յիսուսի, առ ոտս սուրբ և աստուածային արեամբ ներկեալ նշանիս՝ սուրբ Գեղարդեանս, և սուրբ կուսին Սանդխտոյ, և այլ բազմահաւաք սրբոցս...»[97]:

1318 թ. Թադես առաքյալի վանքի և Մակու քաղաքի միջնամասում, «Թուանքչի լեռան շղթայաժայռը պատառելով», վանահայր Զաքարիա Ծործորեցին բացում է Կապի կոչված կիրճի ճանապարհը և այդ հսկայածավալ աշխատանքի մասին հիշատակագրություն թողնում ժայռին[98]:

1319 թ. ավերիչ երկրաշարժը մեծ վնաս է պատճառում մենաստանին: Հիմնովին կործանվում են եկեղեցին, վանական համալիրի մյուս կառույցները: Զոհվում է 75 հոգևորական. «...եղեւ ահագին շարժ յարեւելս. եւ զԹադէոս առաքելոյն վանքն եւ զեկեղեցին կործանեաց՝ եւ զտունսն փլոյց եւ ՀԵ (75) ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ զվանքն տէր Զաքարէ...»[99]:

Երկրաշարժից հետո Զաքարիա եպիսկոպոսը միաբաններին ու թեմին ենթակա հայ համայնքների օգնությամբ ձեռնամուխ է լինում վանքի հիմնավոր վերակառուցմանը: Նոր «լուսակիր և երկնանման» տաճարի կառուցումը տևում է 10 տարի՝ 1319 թ.-ից մինչև 1329 թ.[100] *(տե՛ս սույն աշխ., էջ 157-159, արձ. № Ա)*: Երկրաշարժի հետևանքով կործանված նախկին եկեղեցու պատերը հիմք ընդունելով՝ Զաքարիա եպիսկոպոսը սրբատաշ մոխրագույն բազալտ քարերով վերակառուցում է վանքի մայր եկեղեցին, որը պահպանվել է մինչև օրս: Բացի այդ՝ վանքի միաբանությանը խմելու ջրով ապահովելու նպատակով մոտակա լեռան ստորոտից դուրս եկող Կառնուտի սառնորակ աղբյուրի ջուրը գետնաթաղ խողովակներով հասցնում է վանք: Զաքարիա եպիսկոպոսի շինարարական ձեռնարկումներից է նաև Մակու գետի վրա կամարակապ կամրջի կառուցումը, որն իրականացրել է առաջնորդության տարիներին պարոն Պետրոսի և իր մյուս եղբայրների աջակցությամբ:

Հավանաբար 1320-ական թվականներին ստեղծված մի հիշատակարանում, ի թիվս Հովհաննես Քռնեցու աշակերտների, հիշվում են «Առաքել եւ Ի(սրայ)էլ վ(ա)րդ(ա)պ(ետ) ի գաւառէն Արտազու»[101]:

1330 թ. հուլիսի 1-ին գրված ձեռագրերից մեկում գտնում ենք վանքի հիշատակությունը. «...ի գա-

94 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան** արքեպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ **Ստեփաննոս Օրբէլեան**, համապատասխան էջերով), Թիֆլիս, 1911, էջ 473: Տե՛ս նաև **Օրմանեան Մ.,** Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2018: **Մուսավի Մաքուի**, նշվ. աշխ., էջ 68:

95 Երուսաղեմ, ձեռագիր № 1428, էջ 168:

96 Լ. Խաչիկյանը ենթադրում է, որ հետագայում հին եկեղեցու հարավարևմտյան սյան հիմք ծառայեցված և 1298 թվակիր կիսաեղծ արձանագրությամբ տապանաքարը (տե՛ս վիմագիր № 11) Տիրացու Ա եպիսկոպոսի գերեզմանաքարն է. «Կարծում ենք, որ այստեղ ամփոփված են հենց Տիրացուի մասունքները, –գրում է նա, –ուստի նա իր մահկանացուն կնքել է Նովրուզի կողմից խոշտանգվելուց ընդամենը 2-3 տարի հետո՝ 1298 թվականին» (տե՛ս **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., էջ 138: Նաև նույնի՝ Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը, Աշխատութիւններ, հ. Բ, էջ 55):

97 ԺԴ, էջ 114:

98 **Հայկունի Ս.**, Պարսկահայք (թղթակցութիւն), «Արարատ», 1896, էջ 587-588:

99 **Սամուէլ Անեցի**, էջ 157: Տե՛ս նաև **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 317: **Աճեմեան Հ.**, նշվ. աշխ., մասն I, էջ 28:

100 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 473-474: Տե՛ս նաև **Աճեմեան Հ.**, նշվ. աշխ., մասն I, էջ 26:

101 Մատենադարան, ֆ. 44 (Գարեգին Հովսեփյան), թղթ. 86, վավ. 7, թ. 37: Տե՛ս նաև **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մասն երկրորդ, Անթիլիաս, 1969, էջ 284:

ւառս, որ կոչի Արտազ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Թադէոսի և աստուածամուխ սուրբ գեղարդեանն...»[102]:

Դեռևս 1330-ական թվականներին անվանի րաբունապետ Մեսրոպ Արտազեցին հոգևոր ուսմունքի լսարան է հիմնում վանքում: Այս մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նրա աշակերտներից Հովհան Սսեցին 1335 թ. ընդօրինակած Ներսես Շնորհալու «Մեկնութիւն Մատթէի աւետարանին» ձեռագրի հիշատակարանում. «Այլ և ես թարմատարս Յոհան աշակերտ բանի յաշխարհէն Կիլիկեցոց, ծնեալ և սնեալ ի մայրաքաղաքն Սիս, եկի յաշխարհիս Արևելից՝ տարաշխարհիկ շրջելով սակս ուսման, որ և ուսայ զորն որ յեռամեծէն Եսայեայ և է զոր ի մերոյս րաբունապետէ Մեսրոպայ, առ ոտս սորա դեգերելով և վարժելով, և տեսի ի մեր լսարանիս զայս լուսաւոր և թուրվանդայ մեկնիչս... Արդ գրեցաւ սա... ի յաշխարհիս Արտազ կոչեցեալ, ի հայրապետութեան տեառն Յակոբայ ...և յեպիսկոպոսութեան Արտազու և սուրբ առաքելոյն Թադէոսի տէր Զաքարիայի»[103]:

Մենաստանի մասին պահպանված գրավոր տեղեկություններում սա առաջին հիշատակությունն է վանքի կրթադաստիարակչական աշխատանքների մասին:

1343 թ. մոնղոլ ցեղապետներից Չոբանյան Ամիր-Շեխ Հասան Քուչուկը (կրտսեր, փոքր), որն իր իշխանության տակ էր առել Ատրպատականը, գրեթե ամբողջ Հայաստանը, արշավում է մոնղոլ Ջելաիրյանների՝ Արևմտյան Հայաստանում ունեցած տիրույթների վրա, սակայն պարտություն կրելով՝ դիմում է փախուստի: Նրա որդին՝ Ամիր-Ղոզ Հասանն ապաստանում է Թադեոս առաքյալի վանքում: Հասան Քուչուկը, տեղեկանալով այդ մասին, որդուն փոխադրում է իր նստավայրը՝ Թավրիզ[104]:

1385 թ. Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանն արշավում է Ատրպատական և այլ բնակավայրերի ու հոգևոր կենտրոնների հետ թալանի ու ավերածության ենթարկում նաև Թադեոս առաքյալի վանքը:

ԺԴ-ԺԵ դարերում առավել աննպաստ քաղաքական պայմաններ են ստեղծվում հայ ժողովրդի համար: Շատ ավելի սարսափելի վիճակ է ստեղծվում Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների ժամանակ՝ ԺԴ դարի վերջին տասնամյակներին: Արևելքից խուժելով՝ մոնղոլ ցեղերն արյուն ու կոտորած էին սփռում իրենց անցած բոլոր երկրներում: Արտազ գավառը և Թադեոս առաքյալի վանքը ներխուժման ճանապարհին էին գտնվում: Արհավիրքներով լի այդ ժամանակաշրջանում վանքը քանիցս ենթարկվում է թալանի ու ավերածության:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԵ դարում.** 1426 թ. կարա-կոյունլու թուրքմեն տիրակալ Սքանդարը (Իսկանդար) Մակվի բերդը գրավելուց հետո օժանդակում է Թադեոս առաքյալի վանքի վերաշինությանը:

1493 թ.-ից հետո՝ վանքի վանահայրությունը և Արտազ գավառի եպիսկոպոսական թեմը գլխավորած Զաքարիա Գ եպիսկոպոսի օրոք, լուրջ հակասություններ են եղել Էջմիածնի կաթողիկոսության և Թադեոս առաքյալի վանքի միջև, որոնք, ամենայն հավանականությամբ, վերաբերում էին վանքապատկան հողերից ստացվող հասույթների և այլ եկամուտների բաշխմանը[105]: 1493 թ. Էջմիածնի Սարգիս Գ Մյուսայլ աթոռակից կաթողիկոսը (1484-1515) միջամտում է թեմի գործերին և սահմանափակում Զաքարիա եպիսկոպոսի իրավասությունները: Սակայն Ատրպատականի իշխանավոր, Ուզուն Հասանի թոռը՝ Մաղսուդի որդի Աբուլ Մոզաֆար Ռուստամ փադիշահը (1493-1496), հանդես գալով ի պաշտպանություն վանքի, 1493 թ. օգոստոսի 21-ին մի հրովարտակ է ուղարկում Սարգիս կաթողիկոսին՝ պահանջելով նրանից վերականգնել Զաքարիա եպիսկոպոսի իրավասությունները, ոտնձգություններ չկատարել վանքի ու նրա վանահոր դեմ. «Ուչքիլիսայի Սարգիսը թող իմանա, որ Մակվի Ղարաքիլիսայի (Թադեոս առաքյալի վանք) կրոնավոր (վանահայր) Զաքարիան ապացուցել է, որ նա (Սարգիսը) նրան անտեղի և անիրավացի կերպով նեղություն է պատճառում և նրա նկատմամբ ոտնձգություններ է անում, [ուստի] անհրաժեշտ է, որ նրա հետ վերաբերվի ըստ նախկին կարգի և անտեղի ու հակառակ արքայական հրամանագրի նրա հանդեպ ոտնձգություններ չանի և այս հարցում չթերանա և այդ իր պարտականությունը համարի»[106]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԶ դարում.** մի շարք հիշատակագրություններ վկայում են, որ Զաքարիա, Սրապիոն, Մկրտիչ և Գրիգոր եպիսկոպոսների առաջնորդության տարիներին մի քանի հոգևորականների ու աշխարհիկ բարեգործ անձանց օգնությամբ վանքը ենթարկվել է հիմնավոր նորոգման: Այսպես, 1574 թ. Հովհաննես երեցի ընդօրինակած ավետարանի հիշատակարանում գրվել է. «...Յիշեցէք... ի դուռն Ս. Թաթէոսի առաքելոյն զՏէր Զաքարայ եպիսկոպոսն, Տէր Սրապիոն եպ., Տէր Մկրտիչ եպ., զպարոն Տէր Գրիգոր եպ. և այլ միաբան կրաւնաւորքն, Տէր Անդրիասն, վանից հայր Տէր Յոհաննէսն, Տէր Կարապետն, տնտես Տէր Յա-

102 ԺԴ, էջ 227:

103 Երուսաղեմ, ձեռ. № 1428: Տե՛ս նաև **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., էջ 155:

104 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 16:

105 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ, պրակ I (այսուհետև՝ **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I), կազմեց **Հ. Դ. Փափազյան**, Երևան, 1956, էջ 82:

106 Նույն տեղում, էջ 52: Հրովարտակը հրատարակվել է նաև **Haghnazarian A.**, Das armenische Thaddaeuskloster in Prov. Nord Azerbeidjan-Iran, Aachen, S. 210, հրովարտակ № 1: «Հուր», 1972, № 2:

կոբն, Տէր Թաթոսն, Յովանէս երէցն, զԹանանդ սարկաւագն (Գրիգոր սարկաւագն)... սոքա եղեն պատճառ վանից շինութեանն, ժամատունն ծածկեցին, ժամատեղն հաստատեցին և վանից դուռն զարդարեցին և շէն կու պահեն և շատ չարչարանք քաշեցին յանաւրինաց ...Աստուած ողորմի լոէս Ղազարի հոգոյն, որ վասն ս. Թաթէոսի առաքելոյ սիրոյն համար նահատակեցաւ... Յիշեցէք զնորընծայ Տէր Թաթէոս եպիսկոպոսն որ... վերստին հաստատեց ժամակարգութիւն... կրկին նորոգել և կազմել ետուն զաւետարանն... Յիշեցէք մալիք Չաթուխն և զերկրի ժողովուրդքն և զտանուտէրքն Մակուայ, որ յանձն առին վանից պակասութիւն՝ մալին, խարջին, պարտքին աւգնականութիւն առնեն...»[107]:

**1605 թ. բռնագաղթը.** ԺԵ դարի երկրորդ կեսին սկսվում են թուրք-պարսկական երկարատև պատերազմները՝ գլխավոր թատերաբեմ ունենալով Օսմանյան պետությանը և Իրանին ենթակա հայկական ու հայաշատ գավառները, որոնք, բազմիցս ձեռքից ձեռք անցնելով, մարդկային և նյութական չափազանց մեծ կորուստների պատճառ են դառնում:

1604 թ. պարսկական զորքի թալանած, ավերած, իսկ բնակչությանը գերեվարած գավառների թվում հիշվում է նաև Մակուն[108]:

1605 թ. Իրանի Շահ Աբաս Ա-ի (1587-1629) հրամանով կենտրոնական Հայաստանի գավառներից շուրջ չորս հարյուր հազար հայ տեղահան է արվում և բռնի քշվում Պարսկաստան: Իրանական բանակները նահանջելիս տեղահանում են հատկապես Բասենի, Արարատյան դաշտի և Նախիջևանի քաղաքների ու գյուղերի հայությանը, և որպեսզի օսմանյան առաջացող զորքերին զրկեն կենսական միջոցներից, այրում են անգամ չհնձած արտերը, ավերում Երնջակ գավառի ծաղկուն ու վաճառաշատ Հին Ջուղա քաղաքը[109]:

Հատկապես ծանր զրկանքներ ու կորուստներ են կրում Արաքսի հյուսիսային ափից գաղթող քարավանները, որոնք ստիպված էին անցնել գետը. «Վասն զի ի քշելն զերկիրս՝ ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստուն, այլ զբազումս: Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերբ Գեղամայ, եւ Լոռւոյ, եւ զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զՋարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զձորն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղօրայսն Մակուայ...»[110]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԷ դարի երկրորդ կեսին.** 1650-1653 թթ. Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի (1633-1655) կարգադրությամբ և վանահայր Մկրտիչ եպիսկոպոսի և միաբանության ջանքերով վանքում վերաշինության բուռն աշխատանքներ են ծավալվում:

1650 թ. նախ նորոգվում է կիսաքանդ եկեղեցին, ապա այն խորանը, որտեղ, ըստ ավանդության, ամփոփված էին Թադեոս առաքյալի նշխարները և, վերջում՝ Սբ. Սանդուխտ ու Սբ. Նախատակ մատուռները. «Զայսու ժամանակաւ յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի, շինեցաւ վերստին և վանքն սուրբ առաքելոյն Թադէոսի, որ է յԱրտազ գաւառին ի գիւղն Մակու. զի միանգամայն ամենայն շինուածքն աւերեալք էին, և ի սոյն ժամանակի եպիսկոպոս ոմն Մկրտիչ անուն իւրովք միաբանօքն՝ աթեռայիւք և սարկաւագօք, որք էին ամենեքեան ի նոյն գեղջէն Մակուայ. զի թէպէտ և աղքատք էին և յընչից թափուրք, այլ վառեցան ամենեքեան սիրով սրբոյ առաքելոյն Թադէոսի, յուսացան յողորմութիւն ամենազօրին Աստուծոյ և ի բարեխօսութիւն սրբոյն Թադէոսի առաքելոյն, ձեռն ի գործ արկին, և սկիզբն արարին շինութեան վանացն. և նախ զտաճարն սկսան շինել, որոյ արևելեան և հիւսիսային կողմանց որմոցն մինչև ցկէսն միայն շէն էր մնացեալ, և այլ ոչինչ բնաւ և սոքա զամենայն միանգամայն մինչև զգլուխ կաթուղիկէին շինեցին, ներքուստ և արտաքուստ սրբատաշ վիմօք, ամուր և գեղեցիկ և եղև կատարումն գործոյ տաճարին ՌՂԹ թուին: Յետ կատարման տաճարին նոյն յաւսովն, որ առ Աստուած՝ սկսան զժամատունն շինել խռատեալ քարամբք և մածուցեալ կրով, և սորին կատարումն եղև ի ՌՃԲ թուին: ...կատարեալ զամենայն շինուածս զայսոսիկ շնորհօք ի ողորմութեամբն Աստուծոյ, նոյն եպիսկոպոսն Մկրտիչ և միաբանքն իւր կան անդէն և պաշտեն զԱստուած և զսուրբս նորա՝ ակնկալեալք ողորմութեանն Աստուծոյ...»[111]: «Մկրտիչ եպիսկոպոս, որ նորոգեաց զեկեղեցի սուրբ առաքելոյն ի հիմանէ, և շինեաց զդարպասն և զմատուռն ի տեղի նահատակութեան առաքելոյն և սրբուհւոյն Սանդխտոյ կուսի. որոյ ձեռնտու և գործակալք էին տէր Դանիէլ և տէր Պետրոս բազում աշխատութեամբ. ի թուականիս հայոց ՌՃ (1651), հրամանաւ երիցս երանեալ և ճգնազգեաց Փիլիպ-

107 **Թօփճեան Յ.**, Յուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 13: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 45-46: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 477-479:

108 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 74 (այսուհետև՝ **Առաքել Դաւրիժեցի**, համապատասխան էջերով):

109 Հարկ է նշել, որ Շահ Աբասի հրամանով բռնագաղթված քաղաքացիները, մասնավորապես ջուղայեցիները, բնակեցվում են Իրանի Սպահան (Իսֆահան) քաղաքում և շրջակայքում, իսկ գյուղական բնակչությունը՝ Փերիա և Չարմահալ գավառների գյուղերում: Շահի նպատակն էր հայերի շնորհիվ զարգացնել արվեստները, արհեստները, ներքին ու արտաքին առևտուրն Իրանում:

110 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 86:

111 Նշվ. աշխ., էջ 283-284: Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. 8233, թ. 110ա:

պոս կաթողիկոսին»[112]: «...փառազարդ ծերունւոյն Մկրտիչ եպիսկոպոսի, որ վերստին նորոգեաց եկեղեցի Սուրբ Առաքելոյն, որ քակեալ էր յերկուց կողմանց ի հիմանց, այլ եւ զդարպասն եւ զտեղին նահատակութեան սուրբ առաքելոյն եւ զՍուրբ Սանդուխտն, հանդերձ գործակցութեամբ քաջամարտիկ տէր Դանիէլին եւ Բէստենց տէր Պետրոսին...»[113]:

Վանքի վերաշինության մասին վկայություններ են պարունակում նաև պարսկական սկզբնաղբյուրները: Թավրիզի Մելիք-Թանգյան թանգարանում պահվում է Իրանի Շահ Աբաս Բ-ի 1660-1661 (հիջրայի 1071) թ. հրովարտակը՝ գրված այդ աշխատանքների առնչությամբ. «Թագավորական հրովարտակս վերաբերում է Նախիջևանի և Ատրպատականի հայ քրիստոնյաներին: Ահմադ Բալավին սխալ է հաղորդել, թե Ղարաքիլիսան և այլ եկեղեցիներ ավերվելուց հետո ավելի մեծ են կառուցվել և փայտածածկը փոխարինել են աղյուսածածկ և քարածածկ գմբեթով և [այդ նպատակով] գյուղացիներից դրամահավաք են կատարել: Ինչպես Չուխուր-Սաադ'ի բեկլարբեկը և Նախիջևանի տիրակալ շեյխ-օլ-իսլամն են հաստատել, եկեղեցիները հին են և ավելի չեն մեծացել ու շքեղացել, որ հարկավոր լինի քանդել: Որով կարգադրում ենք բոլոր տիրակալներին, որ հայերի հետ լավ վարվեն, դժվարություններ չհարուցեն և թողնեն, որ նրանք իրենց աղոթքներով նպաստեն պետությանս բարօրությանը»[114]:

1672-1673 թթ. Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Գողթնի Սբ. Խաչ եկեղեցու նորոգության համար Խոյի և Սալմաստի շրջաններում հանգանականություն անցկացնելու համար հանձնարարականներ է շնորհում հրատարակիչ Թովմաս Վանանդեցուն՝ նշելով. «...առաքելական եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւնն եւ նախախնամութիւնն ի վերայ աստուածախնամ երկուց սրբոց աքռող Թադէոսի եւ Բարթուղիմէոսի սրբոց առաքելոցն վասն թեմի եւ վիճակի առաջնորդաց, որդւոց մեր սիրելեաց եւ համօրէն քահանայից եւ տօվլաթաւորաց, նաեւ առհասարակ ժողովրդեան...»[115]:

1664 թ. Իսահակ (Սահակ) Մակվեցի վարդապետը ձեռնարկում է մենաստանի շրջապարսպի հյուսիսային հատվածի նորոգությունը. «Թվին ՌՃԺԳ (1664) ...Սահակ վարդապետն եկն ի վանքն սուրբ Առաքելոյն Թադէոսի աւագ տօներին: Եւ զարունն սկսաք հիւսիսայի[ն] կողմի պարիսպն շինել»[116]: Այնուհետև Իսահակ վարդապետի սկսած վանքի վերանորոգման, ընդարձակման աշխատանքներին աջակից է լինում նրա օգնական, հետագայում վանահայր Սարգիս Կաֆայեցին: Դրա վերաբերյալ վանքում թարգմանված Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» ձեռագրի հիշատակարանում գրված է. «...Արդ, ստացօղ եղև նոր թարգմանեալ գրոցս Սարգիս վարդապետն Կաֆայեցի, որ էր առաջնորդ մեծ Աթոռոյն Թադէոսի սուրբ առաքելոյն, որ նորոգեաց զեկեղեցին ի հիմանէ և զպարիսպն ընդարձակեաց հաստահեղուս որձաքարամբք, բրգօք և դարպասօք, խցերօք և հիւրանոցօք և տնտեսանօք եւ այլ հարկաւոր շինուածովք: Այլ և զմուլքն վանիցս, զոր այլազգիքն տիրեալ էին, նոր յետ գնեաց և վախմ ետ սուրբ Աթոռոյս, ի հայրապետութեանն Յակոբայ կաթողիկոսի, յԱթոռն Սուրբ Էջմիածնի և յարհիեպիսկոպոսութեան նահանգիս Իսահակ վարդապետի Մակուեցոյ և ի թագաւորութեանն Պարսից Շահ-Սուլէյմանն, և ի թվականիս մերում ՌՃԻԵ (1676) ամին»[117]:

Իսահակ վարդապետն իր օգնական Սարգիս Կաֆայեցուն, որին նշանակել էր վանքապատկան գյուղերի ու կալվածքների հոգաբարձու, հանձնարարում է գտնել, մաքրել ու վերականգնել Զաքարիա Ա Ծործորեցու կառուցած Կառնուտի աղբյուրը: Այն հետագայում հավանաբար երկրաշարժերի կամ էլ ոչ հոգատար վերաբերմունքի պատճառով խափանվել էր, և միայն «նշմարանքն» (հետքերն) էին մնացել, որի պատճառով վանքի միաբանությունը երկար ժամանակ զրկվել էր խմելու ջրից: Երկարատև ու հետևողական ջանքերի շնորհիվ «եղև գիւտ ջրմղին», այսինքն՝ հայտնաբերվում է աղբյուրի ակունքը, և ջուրը հասնում է վանք. «...յետ ԺԳ ամի առաջնորդութեան մերոյ եւ ի թվականիս մերում ՌՃԻԶ երրորդի (1677) եղեւ գիւտ ջրմղին, որ ասի Կառնուտի, զոր յառաջ ժամանակաւ բերեալ էր մեծն Զաքարիա եպիսկոպոսն պարոն Մանուէլի որդի, երկրորդ անգամ ի հիմանէ շինող սուրբ եկեղեցւոյս եւ էր քակտեալ եւ աւերեալ եւ հազիւ ուրեք նշմարանքն մնացեալ: Այլ այժմ շնորհօք Աստուծոյ կրկին նորոգեցաւ եւ յորդաբուխ աղբիւրն բերեալ ածաւ ի մէջ վանիցս եւ գեղջս հոգաբարձութեամբ

112 Մատենադարան, ձեռ. 340, թ. 123: Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յովհ.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 351-352: **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 47: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 480-481:

113 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 810:

114 Հրովարտակը հրատարակվել է՝ «Հուր», 1971, № 3-4: **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 220, հրովարտակ № 9: Տե՛ս նաև Մատենադարանի պարսկերեն հրովարտակները (այսուհետև՝ **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. 3), պր. 3, կազմող՝ **Ք. Կոստիկյան**, Երևան, 2005, էջ 43:

115 **Գրիգորեան Մեսրոպ**, Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցւոյ մասին, Վիեննա, 1969, էջ 135-136:

116 ՄԺԱ, էջ 306 (տեքստում «հիւսիսային» բառի փոխարեն ժամանակագիրը գրել է «հիւսային»): Տե՛ս նաև էջ 313 («[Թվին] ՌՃԺԳ (1664) կաթողիկոսն գն[աց Ստամ]պօլ և մեք եկաք ի վանքն սուրբ Առաքելոյ [Թադ]էոսի. զարունն սկսաք պարիսպ[ն շին]ել»):

117 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 487:

Սարգիս վարդապետի Կաֆայեցւոյ: ...Եւ խնդրեմ զի ամ յամէ խնամատար լիջիք եւ հոգ տարջիք, զի մի ի սպառ վնասեսցի եւ խանգարեսցի: Քանզի յառաջին շինուածոյն մինչեւ ի մեզ իբրեւ ԳՃԾ (350) ամ անցեալ էր եւ մեք նորոգեցաք...»[118]:

Սարգիս վարդապետ Կաֆայեցին վանքում վերանորոգման աշխատանքներն իրականացրել է 1679-1685 թթ. ընկած ժամանակահատվածում. «Թվին ՌՃԻԸ (1679)-ին սկսայ նորոգել զտաճար սուրբ Առաքելոյն Թադէոսի և աւարտեցի թվին ՌՃԼԴ (1685)-ին»[119]:

Շինարարական հնգամյա աշխատանքների ավարտի մասին է վկայված նաև 1684 թ. վանքում նորոգված և վերստին կազմված Ճաշոցի հիշատակարանում, ըստ որի՝ Իսահակ վարդապետը նշյալ թվականին «...նորոգեաց ի հիմանց զտաճար սուրբ աթոռոյն առաքելոյն Թադէոսի, որ էր քակտեալ եւ քայքայեալ... յիշեցէք... զԻսահակ եւ Սարգիս վարդապետսն, որ բազում աշխատութեամբ Ե (5) ամ հազիւ աւարտ հասուցին զնորոգութիւն տաճարի դամբարանի սուրբ առաքելոյն Թադէոսի...»[120]:

1691 թ. արդեն վանահայր նշանակված Սարգիս վարդապետ Կաֆայեցին հիմնովին վերանորոգում է եկեղեցին և շրջապարիսպը. «...ի հիմանէ նորոգեաց զե[կե]ղեցին եւ զպարիսպն, ի թագաւորութեան Շահ Սուլէյմանի, ի թուականութեանս Հայոց ՌՃԽ (1691), զամսեանըն Մայիսի»[121]:

1692 թ. ամռանը վանքում և մոտակա Վանք գյուղում (Ղարաքիլիսա) համաճարակ է բռնկվում, որը մարդկային զգալի կորուստների պատճառ է դառնում: Ողբերգական այս դեպքերի մասին ժամանակագիրը թողել է երկու վկայություն: Դրանցից առաջինը հավաստում է. «Թվին ՌՃԽԱ (1692) մահ անկաւ ի սուրբ առաքելոյն Թադէոսի վանքն և ի գեղն...»[122], իսկ երկրորդը՝ «Թվին ՌՃԽԱ (1692) սուրբ Գրիգորի պասին, ամառն մահ անկաւ սուրբ Թադէոսի Առաքելոյ վանքն, որ տէր Պօղոսն և Խ (40) ճան մեռան գեղէն և վանքէն»[123]: Բայց նույնիսկ վանքի համար այդ դժվարին օրերին վերակառուցման աշխատանքները շարունակվում են:

1692-1693 թթ. վերանորոգվում են վանքի շրջապարսպի աշտարակներից մեկը, սեղանատունը, վանականների վնասված խցերի և ուխտավորների համար առանձնացված կացարանների մի մասը. «Թվին ՌՃԽԱ (1692) շինեցաք պռճի քօշկն և հարաւոյ կողմի խցերն», իսկ 1693 թ. «...շինեցաք զտնտէս տունն և միւս տարին՝ սեղանատունն և արեւմտեան և հիւսիսոյ կողմանն խցերաց կէսն»[124]:

1696 թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրաշարժը մեծ վնաս է հասցնում վանքին: Ապրիլի 15-ին վնասվում են եկեղեցու արևելյան հատվածը, պարիսպն ու նորակերտ խցերը. «Դարձեալ ի թիվն ՌՃԽԵ (1696) ապրիլի ԺԵ (15) սաստիկ շարժ եղև բոլոր Հայաստանուն և սուրբ Թադէոս առաքելոյ պարիսպն հանդերձ նորակերտ խցերօքն բլաւ և Կաթուղիկէն յարևելից կուսէ պատառեցաւ...»[125]:

Երկրաշարժի երկրորդ ուժեղ ցնցումը նույն թվականի մայիսին էր. «ՌՃԽԵ (1696) յամսեան մայիս ահագին շարժ եղև յերկիրն Մակուայ, որ և սուրբ աթոռն Թադէոսի խախտեալ բեկբեկեցաւ»[126]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԸ դարում.** Զաքարիա առաջնորդի օրոք (1735-1743) վերսկսված թուրք-պարսկական պատերազմները մեծ վնաս են պատճառում նաև Թադեոս առաքյալի վանքին:

Քաղաքական երերուն կացությունն ուղղակիորեն անդրադառնում է վանքի տնտեսական վիճակի վրա: Վանքի կառավարիչները կացությունը բարվոքելու ակնկալիքով 1742 թ. Իրանի Նադիր շահին են ղրկում երկու խնդրագիր, որոնց արդյունքը լինում է շահի հրապարակած հրովարտակները:

Առաջին հրովարտակով, որը Նադիր շահն արձակում է նշյալ թվականի սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 1-ին (հիջրայի 1155 թ. ռաջաբ ամիս) վանքի առաջնորդ Մինաս եպիսկոպոսի խնդրագրի հիման վրա, արգելվում են պաշտոնյաների չարաշահումները վանքի միաբանների և Ղարաքիլիսա գյուղի բնակիչների նկատմամբ և նրանցից գյուղից հեռացածների հարկերի հավելագանձումը: Վանահոր գրության մեջ մասնավորապես նշվել է. «Խալիսե Ղարաքիլիսա գյուղում եղած ռայաթների[127] մի քանի ընտանիքներ իրենց վրա դրված վոջուհաքի[128], մալլիյաթի, ծախսերի ու բարձրագույն դիվանի այլ պարտավորությունների պատճառով խեղ-

118 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 482-483: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երեւան, 2007, էջ 810:

119 ՄԺԱ, էջ 310:

120 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 485: Պահպանվել է Շահ Սուլեյմանի (1666-1694) 1673 թ. մարտի 20 - ապրիլի 18-ին (հիջրայի 1083 թ. զի հեջջե ամիս) հրովարտակը՝ կազմված Ղարաքիլիսայի խալիֆա Առաքել վարդապետի խնդրագրի հիման վրա: Գրության մեջ մասնավորապես նշված է. «...Խուդավերդիի որդի Հաջի Միրզա բեկը Եսայի վարդապետի, մի քանի հայ ու ֆրանկ քահանաների ու ռայաթների հետ ապօրինաբար մեծ բռնություն են գործում թշվառիս նկատմամբ, որը հուսահատվել է: Հիշյալ Եսայի վարդապետը պարտք ուներ և նվաստս նրա պարտքի համար պարտամուրհակ ու կանխիկ գումար տվեցի: Այս գումարից նվաստիս ոչինչ չի հասել»: Ի պատասխան, շահը կարգադրել է բավարարել խնդրարկուի պահանջը («Հուր», 1971, № 3-4: Տե՛ս նաև **Haghnazarian A.,** նշվ. աշխ., էջ 224, հրովարտակ № 12: Նշյալ թվականին Արտազի թեմում և Թադեոս առաքյալի վանքում պաշտոնավարում էր Իսահակ Մակվեցին: Ըստ ամենայնի, խնդրագրի հեղինակը վանքի միաբաններից է:

121 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 486:

122 ՄԺԱ, էջ 306:

123 Նշվ. աշխ., էջ 309:

124 Նշվ. աշխ., էջ 311:

125 Նշվ. աշխ., էջ 284:

126 ՄԺԲ, էջ 418:

127 Ռայաթ, ռաիյյաթ (արաբ.) - հպատակ, հարկատու ժողովուրդ, հատկապես գյուղացիությունը:

128 Վոջուհաք, վջուհաք-կանխիկ դրամով գանձվող հարկ:

ճանում են, թաքնվում ու ցաքուցրիվ լինում, իսկ նրանց փոխարեն ու *մութավաջջեհաքը* գալիս են հավիտենական պետության համար աղոթող այս մի քանի հոգևորականներից ու հիշյալ վանքի սպասավորներից են պահանջում»[129]:

Երկրորդ խնդրագիրը Մինաս եպիսկոպոսը Նադիր շահին է հղում վանքապատկան ջրի օգտագործման առնչությամբ՝ տեղեկացնելով, որ Ղրխբուլաղ գյուղի բնակիչները ոտնձգություններ են կատարում վանքապատկան ջրի ոռոգման բաժնի նկատմամբ: Ի պատասխան՝ շահը կարգադրում է Թավրիզի կառավարչին արդարացիորեն լուծել հարցը[130]:

1744 թ. Սբ. Էջմիածնում վախճանվում է «...սրբոյ Առաքելոյն Թադէոսի միաբան, Մելքոն Կաֆայեցի վարդապետն...»[131]:

1746 թ. աշնանը Նադիր շահն արձակում է մի հրամանագիր, որով հաստատվում է Թադեոս առաքյալի վանքի և կալվածքների՝ հարկերից ազատվելը, և Իրանի տեղական իշխանություններին կարգադրվում է աջակցել հոգևորականներին և անգամ հարկ եղած դեպքում օգնել նրանց[132]: Այս հրամանագիրը երկու տարի անց նույն բովանդակությամբ հաստատում է նաև Իբրահիմ շահը. «Քրիստոնյա քահանաներից ու վանականներից լավագույն Ղարաքիլիսայի Մինաս խալիֆայի հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ ու անսահման գթասրտությամբ [հաշվի առնելով] նրա նվիրվածությունն ու ծառայությունները, նաև այն, որ ըստ ...ռաղամների[133] բովանդակության, Ղարաքիլիսա գյուղը եղել է հիշյալ վանքի վակֆը[134], իսկ գյուղի բնակիչները, լինելով նրա սպասավորները, մուաֆ[135] են եղել դիվանի մութավաջջեհաքից, ...ըստ կարգի նրանց դիվանի պարտավորություններից, ինչպիսիք են ջիզյան[136], այլ մութավաջջեհաքն ու սադերաքը, ավարիզաքը, չոքանբեկին և այլն, մուաֆ ու մուսալլամ ճանաչեցինք, որպեսզի իրենց հարկերը հիշյալ մուլքերի[137] եկամուտների հետ ծախսեն նշված վանքի ու նրա բնակիչների վրա: Բացի հիշյալ գյուղից, որտեղ էլ, որ այդ վանքի վակֆային մուլքերը գտնվելիս լինեն, նույն կարգով մուաֆ ու մուսալլամ հայտարարեցինք: Երևանի ամիլները թող հիշյալ գյուղի ու նշված վանքի այլ վակֆային մուլքերի հարկերը իրենց աբվաբ-ե ջամից[138] հանված համարեն և ոչ մի դինար[139] չպահանջեն: Սուրհանդակները, ճանապարհների հսկողներն ու ռահդարները թող վանքի առևտրական կամ այլ գործերով տարբեր կողմերը գնացող-եկող սնազլուխներին ճանապարհին ու վիլայեթներում չնեղեն: Քանի որ հիշյալ գյուղը գտնվում է Ռումի ու Քրդստանի սահմանագծի վրա, և հաճախ ավազակներն ու ավարառուները ոտնձգություններով նեղում են նրան, ուստի Երևանի, Խոյի ու Դումբուլի հաքիմները[140] թող նրանց ներխուժման ժամանակ [վանքին] անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն: ...Գնացող-եկողներից թող առանց դատական հիմքի դինար ու հացահատիկ չպահանջեն ու չանհանգստացնեն: Որտեղ էլ որ այդ գյուղից ցրվածները լինեն, ոչ ոք չպետք է նրանց ետ բերելուն խոչընդոտի, այլ պետք է գաղթեցնի նրանց հին բնակավայրը, որպեսզի [այնտեղ] բնակվեն...»[141]:

1747 թ. վանահայր Մինաս եպիսկոպոսը վանքի համար պատվիրում է Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի նկարները *(տե՛ս սույն աշխ., էջ 104-105, արձ. ԺԱ):*

Եսայի «աստուածաբան և մաքրակենցաղ» վարդապետի առաջնորդության տարիներին Էջմիածնի Սիմեոն Երևանցի կաթողիկոսից (1763-1780) ստացվում է թուրք-պարսկական պատերազմների ընթացքում վնասված վանքը վերանորոգելու նպատակով հանգանակություն սկսելու թույլտվությունը: Այդ նպատակով Հայաստանի տարբեր գավառներ է մեկնում մենաստանի միաբան Պետրոս վարդապետը: Վերջինս, սակայն, հանգանակված գումարը վատնում է իր անձնական կա-

---

129 Թավրիզի հայոց առաջնորդարանի թանգարան, № 192, տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 218, հրովարտակ № 8: Բնագրի թարգմանությունը՝ ըստ Ք. Կոստիկյանի:

130 «Հուր», 1971, № 3-4: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 222, հրովարտակ № 10: Բնագրի թարգմանությունը՝ ըստ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

131 ՄԺԱ, էջ 305 (Իսահակ վարդապետի ժամանակագրությունը (XVIII դ.):

132 Մատենադարանի պարսկերեն հրովարտակները (այսուհետև՝ **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. չորրորդ), պր. չորրորդ, կազմող՝ **Ք. Կոստիկյան**, Երևան, 2008, էջէջ 63-64:

133 Ռաղամ-պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ:

134 Վակֆ (արաբ.) բառացի նշանակում է անշարժանալ, կանգ առնել, ամրանալ: Այսպես էին կոչվում վանքերին, եկեղեցիներին, մզկիթներին նվիրված կամ վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որոնք այլևս օտարման ենթակա չէին: Վախմ անել, վախուպ անել՝ նվիրել:

135 Մուաֆ (արաբ.) -նույնն է՝ թարխան (մոնղոլ.). նշանակում է որոշակի հարկերից ազատ:

136 Ջիզյա, ջիզիե (արաբ.) -գլխահարկ. գանձվում էր ոչ մահմեդականներից տարին մեկ անգամ՝ ըստ հարկատուի կարողության և ուներ նվաստացուցիչ բնույթ: Յուրաքանչյուր հարկատու համայնքի գլխահարկը միշտ հաշվում էր միատեղ և գանձվում էր միանվագ:

137 Մուլք (արաբ.) -սեփականություն, տիրույթ, ժառանգած կամ դրամով գնած անշարժ կալվածք կամ հող:

138 Աբվաբ-ե ջամ' (արաբ.) -հարկերի հաշվառման ձև է, երբ որևէ հարկատուից կամ գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը հաշվվում և գրանցվում են հարկային մատյաններում: Հարկերի ընդհանուր գումարը համառոտ անվանվում է նաև ջամ':

139 Դինար (արաբ.) -դրամական միավոր, որը հայկական աղբյուրներում հայտնի է նաև դեան, դիան ձևով:

140 Հաքիմ (արաբ.) -իշխանավոր: Այդպես էին անվանում հիմնականում գավառների կառավարիչներին, որոնք օժտված էին վարչական և դատական իրավասություններով, և երբեմն՝ նաև հոգևորական դատավորներին:

141 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. չորրորդ, 73-75: Տե՛ս նաև **Կոստիկյան Ք.**, Պարսկալեզու վավերագրերը Մակուի Ս. Թադեոս վանքի մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. XXV, Երևան, 2006, էջ 357:

րիքների համար («Զի նա յայսքան ամս կոնդակաւ սրբ. վեհին զդրամս և զինչսն ժողովեալ, աստ և անդ վատնեալ էր»), դիմում է բազմաթիվ չարաշահումների ու խախտումների, նույնիսկ հանդգնում է ծախել Թադեոս առաքյալի մասունքով աջից մի փոքր կտոր[142], որի պատճառով էլ Սիմեոն կաթողիկոսը զրկում է նրան հոգևոր աստիճանից և կարգադրում է վտարել Թադեոս առաքյալի վանքի միաբանությունից:

1766 թ. բայազետցի Մուրադի միջոցներով կառուցվում է Սբ. Աստվածածին մեծ մատուռը *(տե՛ս սույն աշխ., էջ 185):*

1779 թ. վախճանվում է Պարսկաստանի տիրակալ (1762-ից) Քարիմխան Զանդը, որով սկիզբ է դրվում անիշխանության երկարատև շրջանին: Այն բացասաբար է ազդում հատկապես երկրի ծայրամասային շրջանների վրա: Բնական է, որ վանքը չէր կարող զերծ մնալ դրա հետևանքներից:

Ղուկաս Ա Կարնեցի (1780-1799) կաթողիկոսը 1781 թ. փետրվարին Բայազետի իշխաններին ուղարկած կոնդակում վկայում է, որ վանքի միաբանությունը հարկադրված էր խանական գանձարանին կանխիկ (մաղթու) վճարել տարեկան շուրջ հիսուն թումանի գումար, սակայն խանի կինն ու որդիները պահանջում են նաև տարատեսակ թանկարժեք իրեր: Վանականները, չդիմանալով հարստահարություններին, վրաց Հերակլ թագավորի երևանյան արշավանքից առաջ փախչում են Խոյ և Բայազետ՝ թողնելով վանքն ամայի. «Եւ յանցեալ տարւոջն մինչ ի գալ Վրաց արքային բազում զօրօք և ի վրդովիլ երկրիս, միաբանքն նոյնոյ վանիցն փախուցեալ էին ի Խօյ և ի Բայազիտ, այժմ ոչ դառնային ի վանքն, թողլով ամայի վասն չափազանց հարկապահանջութեանն Մակուայ սուլթանին Ահմատ կոչեցելոյ և որդւոցն և կնոջն...»[143]:

Միաբանությունն առկա պայմաններում մերժում է վերադառնալ վանք: Միաբանները մի գրութեամբ խնդրում են Հայոց Հայրապետին խանի հետ բանակցելով բարելավել վանքի պայմանները, մեղմել ագահ իշխանավորի ընչաքաղցությունը և թեթևացնել մենաստանի վրա դրված հարկերը, ապա թե ոչ չեն վերադառնա. «...որպէս զի թէ ինքն և թէ իւրայինքն ըստ առաջնոյն մի՛ միշտ զսուրբ վանքն կողոպտել ջանասցեն՝ ուրոյն ուրոյն զիրս պահանջելով, այլ միայն զմաղթուն իւրեանց առցեն, այն ևս թեթևաբար և պակասով, ապա թէ ոչ, այլ այն վանից միաբանն յետս ոչ դառնան, ասեն, ի վանքն և առաջնորդ ևս ոչ կարէ նստել անդ...»[144]:

Միաբանությունից լքված վանքում եկեղեցական ոչ մի արարողություն չի կատարվում, ուխտավորներ չեն այցելում, որի պատճառով էլ շրջանի իշխանավորները զրկվում են եկամտաբեր աղբյուրից: Այդ էր պատճառը, որ խանի ընտանիքը, մեծ զիջումների գնալով, միաբանությանը հրավիրում է վերադառնալ վանք: Բայազետի հայ իշխանավորների և Ղուկաս կաթողիկոսի նամակագրությունից տեղեկանում ենք, որ այդ նպատակով Մակվի խանը հիսուն թումանի մաղթուն իջեցնում է մինչև քառասուն, ապա մինչև երեսուն թումանի[145]:

Վանքի տնտեսական աննպաստ պայմանները շտկելու նոր ջանքեր է գործադրում 1783 թ. առաջնորդ կարգված Իսահակ վարդապետ Փառակեցին, որը վանքապատկան կալվածքների համար ծանր պայքարի մեջ է մտնում մակվեցի Մանուչեի (նախնիները տեղափոխվել էին Խոյից), խառակոնիսցի ռես Սարգսի որդիների, սալմաստեցի Յավրիի և այլոց հետ: Պայքարն ի վերջո ավարտվում է Փառակեցու հաղթանակով. խլված հողերը վերադարձվում են վանքին, իսկ «ժանդաքարույ մարդիքն» վտարվում են Վանք գյուղից (դեպքերի շարադրանքը մանրամասն տե՛ս վանքի կալվածքների բաժնում)[146]:

1784 թ. վերականգնվում են շրջապարսպի հարավային բուրգն ու հարակից հատվածները[147]:

1787 թ. կառուցվում են Թադեոս առաքյալի վանքի գավիթն ու ջրաղացը. «Շինեցաւ ամբարով ջաղացն ՌՄԼԶ թւոջն, զկնի երեք ամսոյ աւարտ էհաս օգոստոսի ելն, հրամանաւ և արդեամբ տեառն Իսահակ շինարար արքեպիսկոպոսին Փառակեցի լուսահոգի վարդապետին... Շինեցուցանեմք զգաւիթն սուրբ և զջրաղացն ամբարով սրբատաշ քարիւ և այլ շինուածք ևս»[148]:

---

142 ԴՀՊ, գիրք Ը. Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, մասն II (1767-1776), հրատարակեց **Գիւտ** ա. քահանայ **Աղանեանց**, Թիֆլիս, 1910, էջ 292-293: Սիմեոն Երևանցու կոնդակը զետեղված է 1774 թ. ներքո: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 492: Թադեոս առաքյալի մասունքով աջն այժմ պահվում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարանում:

143 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, Երևան, 2003, էջ 197: Թադեոս առաքյալի վանքի պատմության այս խառը շրջանի մասին տե՛ս **Խ. Տ. Գ.** (**Տեր-Գրիգորյան Խաժակ**), Ս. Թադէոս առաքեալի վանքը 1780-1783 թւականներին, «Ալիք», 1996, 11 յունիսի, էջ 5-6:

144 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 197: Մակվի խանի հարստահարությունների մասին տե՛ս նաև ԴՀՊ, գիրք Դ. **Ղուկաս կաթողիկոս** (1780-1800), յառաջաբանով, յաւելուածներով եւ ծանօթութիւններով հրատարակեց **Գիւտ** աւագ քահանայ **Աղանեանց**, Թիֆլիս, 1899, էջ 74-77:

145 ԴՀՊ, գիրք Դ, էջ 216:

146 ՄԺԱ, էջ 309, ծանոթ. 38:

147 Այդ մասին պատմող վիմագիրը տե՛ս սույն աշխ., էջ 171, արձ. ՀԸ: Ի դեպ, 1785 թ. Իսահակ վարդապետը շինարարական աշխատանքներ է իրականացնում Բայազետում, մասնավորապես բարեկարգում է Եսայի վարդապետի գերեզմանը. «Ի թւոջն մեր ՌՄԼ չորսին (=1785) Բայազիտի սուրբ Կարապետ եկեղեցւոյ դէմն բազում հանճարօք շինեցուց Բ (2) ամբար ցորէնի և գարոյ տեառն Իսահակ յառաջնորդ վարդապետն սրբոյ գահին Թադէոսի Ա[ռա]քելոյն: Եւ յոյժ արժան է լի բերանով ողորմիս տալ այս խղճալուն և որ շինեաց խորանն, զգեստի պահարան Գ (3) աչքէ, սատուխ և գերեզմանն ևս, յառաջնորդ Եսայի վարդապետին այլև ի սուրբ վանքն բազում տեղիս, որ և տեսանողաց յայտնի է...» (ՄԺԱ էջ 315, ծանոթ. 38):

148 ՄԺԱ, էջ 309:

Ըստ ամենայնի, 1791 թ. ընթացքում վանքապատկան հողերը, ջուրը յուրացվել են այլազգի մերձակա բնակիչների կողմից, իսկ թալանի նպատակով վանքի վրա հարձակումներ գործելու պատճառով վանահայր Գևորգ վարդապետը լքում է վանքը, և այն դադարում է գործել:

1792 թ. հունվարի 27-ի գրություններից մեկից պարզվում է, որ վանքը չէր գործում. «Թուղթ առ բայազետցիսն, ի պատասխանի մահսարին նոցա, որով խնդրեալ էին զհոգս առնել բացման սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանացն, որ փակեցեալ էր: ...խնդրեալ էիք հոգս առնել վասն սրբազան Առաքելոյն Թադէոսի հրաշազարդ սուրբ վանացն ձերոց, զի դուռն բացցի եւ շինութիւնն նորոգեսցի»[149]:

1792 թ. կաթողիկոսի միջնորդությամբ Երևանի խանը հատուկ գրությամբ դիմում է Խոյի Դոլվաթլու խանին (վերջինիս քրոջը՝ Բեկումին էր հանձնվել վանքի խնամքը)՝ խնդրելով նրան պաշտպանել վանքը այլազգիներից և հնարավորություն տալ նոր առաջնորդին բարեկարգելու մենաստանը. «Յառաջ քան զայս՝ ընդ առաջնորդին ձերոյ և հոգևոր որդւոյն մերոյ Գէորգ շնորհունակ վարդապետին գրեալ բազմակնիք թուղթքն ձեր հասին առ մեզ, և իմացաք զխնդիր ձեր, որ վասն այցելութեան սրբազան առաքելոյն Թադէոսի հրաշազարդ վանացն: Ապա ի գնալն մեր յԵրևան քաղաք՝ զԳէորգ վարդապետն ևս ընդ մեզ տարաք, և խնդիր արարաք ի խանէն մերմէ, և նա գրեաց առ Դօլվաթլու խանն Խօյայ յատկապէս խնամատար և հոգածու լինել շինութեան սրբոյ վանացն, և սաստել բռնաւորացն, որք յափշտակեալ էին զհող և ջուր սրբոյ Տան այնորիկ: Մեք ևս թուղթս գրեցաք ընդ խանի թղթոցն առ խանն Խոյայ և առ Բեկումն... Դօլվաթլու խանն Խօյայ զվանից խնամակալութիւնն յանձնեալ էր Բէկումին, և ընդ պատասխանեաց թղթոցն մերոց գրեալ էր զերկուս թալղայս, մինն ի վերայ Գէորգ վարդապետին առ ի համարձակութեամբ նստիլ ի վանքն և տիրել ամենայն ժառանգութեանց սրբոյ վանիցն ի շինութեան պահել. և զմինն ի վերայ մերձակայ գեղջ բնակչացն այլազգեաց, զի մի յափշտակեսցեն զհող և ջուր սրբոյ վանացն, և մի զայլ ինչ վնաս գործեսցեն»[150]: Ապա հանձնարարում է վանահայր Գևորգ վարդապետին գնալ «...ի սուրբ վանքն և ջանասցէ շինացուցանել և ի բարեկարգութեան պահել»[151]:

1793 թ. նորոգվում է վանքի աղբյուրը. «Ի ՌՄԽԲ (1793)-ն զաղբիւրն նորոգել ետու»[152]:

Մեկ տարի անց կանգնեցվում է սեղանի քանդակազարդ խաչկալը. «Եւ Գէորգ անարժան և յոգնամեղ վարդապետս շնորհիւն աստուծոյ և օգնականութեամբ սուրբ Առաքելոյն ի ՌՄԽԳ (1794) թվականիս մեր զխաչկալն սրբոյ սեղանոյն, որ էր փայտեայ, ի սրբատաշ վիմաց և ի ծաղկահիւս յօրինեալ քարանց բազմաշխատ տքնութեամբ յորդաջան աշխատութեամբ և յոլով խարճազնացութեամբ ետու շինել...»[153]:

1795 թ. Ատրպատական են մտնում Աղա Մուհամմադ խան Ղաջարի բանակները և շարժվում դեպի Կովկաս: Պատմության մեջ իր դաժանությամբ հայտնի դարձած խանի զորքերն ավերում և թալանում են նաև Թադեոս առաքյալի վանքը. «Եւ ըստ որում յաւերակ է սուրբ ուխտն Թադէոսի առաքելոյն»[154]:

Մեկ տարի անց վերաշինվում է վանքի՝ 1787 թ. կառուցված ջրաղացը. «Ի ՌՄԽԵ (1796) զջրաղացն առաջինն այլ նոր ի նորոյ հաղդերձ իւրովք պարագայիւքն մեծաւ աշխատութեամբ շինել ետու»[155]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԹ դարում.** 1810-ական թվականներին վանքի վերանորոգման գործը հանձնարարվում է Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունուն. «Որովհետեւ ըս[տ] այժմե[ա]ն դրու[թեան] արդեանց նոյն վանիցն յոչինչ աւելուն, վ[ա]ս[ն] [ո-րո]յ կոնսիստորիայն կարծէ ի դիմաց վեհ[ա]ստի-ճ[ա]ն կ[ա]թ[ո]ղ[ի]կ[ո]սի յանձն առնուլ ս[ուր]բ Թադէի վանահայր Սիմեէօն արքեպ[իսկոպո]սի, զի նա ի ծերու[թեան] ժ[ա]մ[ա]ն[ա]կի իւրոյ, վ[ա]ս[ն] փրկու[թեան] հոգւոյ ջան դիցի ո[ր]պ[իս]ի եւ իցէ հնարիւք վերանորոգել տացցէ զամ[ենայն] խանգարե[ա]լ տեղիսն տաճարի վանիցն ս[ուր]բ Թադէի ի յիշատակ և պայծառու[թիւն] անուան իւրոյ»[156]:

Վանքի ծրագրված վերանորոգումը սկսելու նպատակով Սիմեոն վարդապետը 1810 թ. օրհնության թղթով դիմում է հայ համայնքներին (Նոր Ջուղա, Սպահան, Սալմաստ, Վան, Շորագյալ-Շիրակ, Բերկրի, Բուլանըղ, Արճեշ, Խլաթ, Մուշ, Կաղզվան, Կարս և այլուր) և ներկայացնելով վանքի անմխիթար վիճակը՝ խնդրում է աջակից լինել մենաստանի վերաշինության գործին (պետք է կառուցվեր «Ա (1) ջրաղաց, Ա (1) տնտեսուն, Ա (1) սեղանատուն, Բ (2) փակեաիք վասն անասնոց և քանի սենեակք վասն միաբանից և Ա (1) աղբեր ջուր...»)[157]: Առաջնորդը նաև հատուկ հանձնարարականով այդ վայրերն է ուղարկում Առաքել վարդապետին՝ լիազորելով նրան հավաքել անհրաժեշտ գումարը[158]:

Սիմեոն արքեպիսկոպոսը քանդել է տալիս գավիթն ու մուգ մոխրագույն սրբատաշ քարերով կառուցված հին եկեղեցու արևմտյան պատը և ձեռնա-

149 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 690:
150 ԴՀՊ, գիրք Դ, էջ 563-564:
151 Նշվ. աշխ., էջ 564-565:
152 «Սիոն», 1960, մարտ, էջ 76: Տե՛ս նաև ՄԺԱ, էջ 311:
153 ՄԺԱ, էջ 311:
154 ԴՀՊ, գիրք Է. Դաւիթ կաթողիկոս, մասն երկրորդ (1803-4), հրատարակեց **Գիւտ** Ա. Ք. **Աղանեանց**, Թիֆլիս, 1909, էջ 243:
155 ՄԺԱ, էջ 312:
156 **Հովհաննիսյան Զ.**, **Նահապետյան Ռ.**, **Ավետիսյան Մ.**, Փաստաթղթեր Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների երկրաշարժերի պատմությունից, «ԲՀԱ», 1989, № 2, էջ 95-96:
157 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 16:
158 Նույն տեղում:

մուխ լինում նոր՝ էջմիածնատիպ եկեղեցու կառուցմանը[159]:

1813 թ. վանքում իրականացվող աշխատանքներին աջակցելու նպատակով պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան վանահորն ուղարկում է 100 թուման. «...քրիստոնյա քահանաների առաջնորդ Ղարաքիլիսայի Սիմոն խալիֆան իրեն ապահով ու մեծարված համարելով՝ իմանա, որ օրերս, երբ Խոյ քաղաքը դարձավ մեր փառահեղ շքախմբի հաղթական իջևանը, ...Աղա Իբրահիմ շեյխ-ուլ-իսլամը այն ժամանակ լույսի մարմնացումի ներկայությամբ զեկուցեց, որ այն պատվարժանը իր ժամանակը գիշեր ու զօր անց է կացնում աստծո հավատը տարածող տաճարի վերանորոգման վրա...: Այն պատվարժանի կամքն ու ջանքերը հիշյալ վանքի փայլի ու բարեկարգման ուղղությամբ արժանացավ մեր ուշադրությանը: Միաժամանակ այն պատվարժանին մոտ 100 թուման ուղարկեցինք արժանապատիվ արդար Լաչին Բեկի հետ, որպեսզի քրիստոնյա մեծամեծներից այն լավագույնը այն գումարը համարելով վստահության ու հույսի աղբյուրը՝ ծախսի այդ վանքի վերականգնման համար և ապահով լինի, որ փառք Բարձրյալ Ալլահին, մեր մեծ օժանդակությամբ այդ վանքի շուրջը փայլ կստանա ու կբարեկարգվի: Այն պատվարժանը պետք է ջանք չխնայի հիշյալ վանքի վերականգնման ու բարեկարգման հարցում, և դարավոր հաղթական պետության օրհնանքը դարձնելով իր առավոտյան ու երեկոյան աղոթքը, չխուսափի հոգևորականներին ու [վանքի] սպասավորներին հավաքելու հարցում: Եղած բոլոր խնդիրների համար դիմի բարձրագույն պալատին և որպես խնդրանք ներկայացնի: Եվ թող այս իր պարտականությունը համարի»[160]:

Ի տարբերություն Զաքարիա Ա Ծործորեցու՝ մուգ մոխրագույն քարերով ԺԴ դարում կառուցած եկեղեցու՝ Սիմեոն Բզնունին այս նոր եկեղեցին կառուցում է սպիտակ սրբատաշ քարերով (կառուցողական արվեստի տեսակետից Սիմեոնաշեն եկեղեցու հատակագիծը նման է Էջմիածնի Մայր տաճարի հատակագծին, իսկ երեսապատման քարերին պահպանված քանդակները կրում են Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու քանդակագործական արվեստի ազդեցությունը): Շինաքարը բերվել է Շավարշան (Կըրխբուլաղ) գյուղի քարհանքից, իսկ վարպետը եղել է Գալուստ անունով մի շնորհալի անձնավորություն[161]:

1817 թ. վերականգնվում են առաջնորդարանը *(տե՛ս սույն աշխ., էջ 171, արձ. ՀԷ)*, վանականների վնասված խցերը, ուխտավորների կացարանները և ջրաղացը, որից օգտվում էին վանքի միաբանությունը և շրջակա գյուղացիությունը[162]: 1819 թ. Մակվի Հյուսեին խանի նյութական օժանդակությամբ կառուցվում է վանքի շրջապարիսպը *(տե՛ս սույն աշխ., էջ 171, արձ. ՀԹ)*[163]*:*

Սակայն վանքի վերաշինության գործը չի ավարտվում (զանգակատունը և հյուսիսային ու հարավային խորանների ծածկերը չեն ամբողջացել)[164], քանի որ 1820 թ. Սիմեոն Էջմիածնեցին Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսի (1809-1830) կարգադրությամբ նշանակվում է Ագուլիսի Սբ. Թովմա առաքյալի վանքի վանահայր[165]:

1824 թ. (տարեթվի մեջ առկա է ակնհայտ շփոթ) վանահոր հիվանդության պատճառով Թադեոս առաքյալի վանքում սկսված խառնակությունները հարթելու նպատակով Աբաս-Միրզան մի հրովարտակ է արձակում, որում գրվել է. «...բարձրաստիճան խիզախ ու խորամիտ, քրիստոնյա վանականների ու խալիֆաների առաջնորդ Ղարաքիլիսայի օջախի Սիմոն խալիֆան բարձր հեղինակավոր մտքի բարեհաճությամբ մեծարված գիտենա, որ օրերս զեկուցեցին, որ այն պատվարժանի վատառողջության պատճառով ժողովրդի մեջ հակառակություն է ընկել, իսկ վանքի գործերը խաթարվել են: Ուստի, հոգ տանելով Ղարաքիլիսայի օջախի ու քրիստոնյա ժողովրդի գործերի կարգավորման մասին, պատվարժան քրիստոնյա արժանավորներից լավագույն Եսայի վանահորը հանձնարարեցինք գալ և մինչև այն պատվարժանի լավանալը վանքի ու վանականների գործերը ստանձնել ու կարգավորել առանց այն պատվարժանի կամքին հակառակվելու: Քանի որ հայ ժողովուրդը, որը գործարքներում ու բաշխումների հարցում Վարդանի վատ վարքի ու յուրացումների պատճառով ընդվզելով բողոքում էր ու դժգոհություն հայտնում, ուստի նրան պատվարժան բարեբախտ Քյալբալի բեկի՝ սարքարի յասավուլի հետ ուղարկեցինք, որ գա իր տանը նստի և վանքի ու քրիստոնյա ժողովրդի գոր-

---

159 Թեև փաստացի տեղեկություններ չկան, սակայն հավանական է, որ Սիմեոն արքեպիսկոպոսը ցանկություն է ունեցել Իրանի աջակցությամբ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը տեղափոխել սուրբ առաքյալի նահատակավայր՝ դրանով իսկ ավելի վեհություն պարգևելով այս մենաստանին, բարձրացնելով նրա արժեքն ու կշիռը ընդհանուր հայ եկեղեցական կյանքում (**Աճէմեան Հ.**, Ս. Թադէի վանքը, մասն II, Թեհրան, 1960, էջ 9):

160 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 137: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

161 **Հախնազարեան Յովh.,** Դասախօսութիւն Ս. Թադէ վանքի կառուցողական արուեստի մասին, «Ալիք», 1967, փետրուար:

162 «Այդ թւականներին թագաժառանգ է եղել Ատրպատականում Նայիբ Սալթանեն, Աբաս շահը. մինչև այժմ (այսինքն՝ 1903 թ.) էլ ցոյց են տալիս այն խուցը, ուր մի անգամ գիշերել է թագաժառանգը» (**Ֆրանգեան Ե.,** Ատրպատական, էջ 30): Հեղինակը նկատի ունի գահաժառանգ և Ատրպատականի փոխարքա Աբաս-Միրզային:

163 **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 16-17:

164 Ե. Ֆրանգյանը նշում է, որ հակառակ մեծ ծախսերին ու ծանր աշխատանքին՝ արդյունքն այնքան էլ գոհացուցիչ չէր (**Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 30, 38):

165 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 25:

ծերին չմիջամտի: Նրա պաշտոնը բարձրաստիճան մեծամեծներից լավագույն Աղալար բեկի խնդրանքով նրանց հանձնեցինք: Այն պատվարժանը պետք է ամեն առումով գերագույն լուսավոր սրտի լիակատար ողորմածությամբ մխիթարվի, որ վերոհիշյալին խստորեն արգելել ենք որևէ կերպ միջամտել վանքի ու հայերի գործին և գրություն պետք է տա, որ երբ, որ նա ստուգման համար անհրաժեշտ լինի, ներկա կլինի»[166]:

1826 թ. թերավարտ աշխատանքներն ամբողջացնելու համար նյութական նոր միջոցներ հայթայթելու նպատակով Առաքել վարդապետն այս անգամ հանգանակություն կատարելու առաջադրանք է ստանում վանահայր Բարսեղ արքեպիսկոպոսից. «...Ահա այս 7 ամէ, որ սկիզբն արարեալ եմք սրբոյ վանիցս հիմնարկութեան. 7 եւ ամք հազիւ կարեմք շնորհիւ Տեառն գլխաւորել... այս է ձև սորին (տաճարին) քառանկիւնի լայնութեամբ և խաչանիշ խօրանօք, անհամար բարձրութեամբ և հնգեակ կաթուղիկէիւ, չորրորդ սիւնք ի միջի և յեօթն սեղանք զանազան յօրինուածովք ի հիմանց մինչ ի վեր ձիւնափայլ, սպիտակագոյն քարիւ... սրբատաշ քերեալ»[167]:

Թադեոս առաքյալի վանքը հիշատակվում է 1830[168], 1831[169], 1840-ական[170] թվականներին և այլն:

1840 թ. հունիսի 20-ի ահեղ երկրաշարժը նոր հարված է հասցնում առանց այն էլ տնտեսապես դժվարին կացության մեջ գտնվող վանքին՝ վնասելով մենաստանի շատ շինություններ: Տարերային աղետը տևում է մինչև սեպտեմբեր ամսվա վերջը և ընդգրկում Հայկական լեռնաշխարհի նշանակալից մասը: Հիմնահատակ կործանվում են Մեծ Մասիսի փեշին գտնվող Ակոռի գյուղն ու Սբ. Հակոբ վանքը, որտեղ պահվող տասնյակ ձեռագրեր ևս ծածկվում են քար ու հողով[171]: Ավերվում են բազմաթիվ գյուղեր, աշխարհիկ ու հոգևոր շինություններ Շարուրում, Նախիջևանում, Եղեգնաձորում, Կոտայքում, Արագածոտնում, Երնջակում, Սուրմալուում, Բայազետում, Զանգեզուրում, Ատրպատականում, Արարատյան դաշտավայրում և այլուր: Երկրաշարժին զոհ գնացին հազարավոր մարդիկ: Մեծապես վնասվում են նաև Թադեոս առաքյալի, Դարաշամբի Սբ. Ստեփանոս վանքերը, Մակու գյուղաքաղաքը և Արտազ գավառի բնակավայրերը. «1840 - Ի 20 յունիսի ամսոյ, որ էր հինգշաբթի, տարին նահանջ ...ըստ Ասիականին ժամն մետասանին չորեք պակաս ...յարեաւ գետնաշարժ եւ ապա հետզհետէ սարսափելի սաստկութեամբ շարունակեցաւ իբրեւ րոպէս չորս ...յԱգուլեաց գաւառի Թովմայ Առաքելոյ վանքն խախտեցաւ հանդերձ բնակարան[օ]քն. եկեղեցիք Հայոց և մզկիթ Տաճկաց և տունք նոցին ուրեք խախտեցան և ուրեք հիմնայատակեցան: Սուրբ Գեղարդայ վանքն, Սիւնեաց աշխարհի Ստաթէի վանքն, Նախավկայի վանքն յերկիրն Պարսից, յԱրդաս գաւառ Թադէոս առաքելոյ վանքն, ի պարսից սահմանի Մակու անուանեալ գիւղաքաղաքն և գիւղորայք նորին հաղորդեցան նոյնպէս վերատառեալ վնասուց»[172]:

1840 թ. հուլիսին Երևանի հայոց կոնսիստորիայի[173] անդամներ Գաբրիել վարդապետ Տեր-Հարությունյանը, ավագ քահանա տեր Հովհաննես Հարությունյանը, Իսահակ քահանա Զաքարյանը և ատենադպիր Գուլքանովը կազմում են երկրաշարժից տուժած վանքերի և եկեղեցիների ցուցակը, որտեղ ամենայն մանրամասնությամբ և ականատեսի հավաստիությամբ ներկայացվում են վանքի կառույցների կրած վնասները. «Վանքն ս[ուրբ] Թադէի Առաքելոյ մեծ տաճարի արևելե[ա]ն կողմի երկու ռուզներն ճեղքեցաւ ոչ այնքան մեծ կ[ա]թուղ[ի]կէի մեկ զեհն մինչ ի գլուխսն քարինքն անկան: Մեծ Աբրահամ եպ[իսկոպո]սի շինե[ա]լ պարսպի կեսն եւ իւր յետնի շինե[ա]լ վարժարանն հիմէն խորտակեցաւ: Յովակիմ եպ[իսկոպո]սի շինե[ա]լ առաջնորդարանն պատառեցաւ, որ ոք չկարէ նստել: Դարբազի բուրջն կիսէն ի վեր վայր թափեցաւ եւ մնացե[ա]լ պատառե[ա]լ մնայ: Յովհաննես եպ[իսկոպո]սի շինե[ա]լ ամբարներն պատառե[ա]լ և ճեղքե[ա]լ է: Վերի կալի թաղբանդ թալայն, նորոգ շինե[ա]լ տակի օթախն, քօղքն խպառ հիմնայատակ եղե[ա]լ: Վանքի ներքոյ քարն պատառե[ա]լ, որ ոք չկարէ մտանել առ այն: Յովհաննես եպ[իսկոպո]սի շինե[ա]լ ամբարն յերից տեղեաց ճեղքեալ է: Սինաս եպ[իսկոպո]սի շինե[ա]լ խուցն ճեղքե[ա]լ է մի տեղույն: Յովակիմ եպ[իսկոպո]սի շինե[ա]լ խուցն ճեղքե[ա]լ է մի տեղույ: Մեծ տաճարի խորանն ճա-

166 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 143: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

167 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 16: Շրջաբերականի մասին տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 497: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 25-26:

168 Researches of the Rev. **E. Smith** and Rev. **H.G.O. Dwight** in Armenia, vol. II, Boston, 1833, p. 63.

169 Researches and Missionary Labours Among the Jews, Mohammedans, and Other Sects by **Rev. Joseph Wolff**, Philadelphia, 1837, p. 37.

170 **Rev. John. Mason Neale**, A History of the Holy Eastern Church, part I, London, 1850, p. 106.

171 Այս տեղեկությունը մեզ է հաղորդել Մատենադարանի գիտաշխող, պարսկագետ Հակոբ Փափազյանը 1980 թ.:

172 «Արարատ», 1917, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 759-761:

173 Երևանի հայոց կոնսիստորիան ստեղծվել է թեմական առաջնորդարանին կից 1837 թ. մայիսի 1-ին (թեմին ենթակա էին Արարատյան դաշտի, Զանգեզուրի, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի), Սևանի շրջանի հայոց հոգևոր հաստատությունները): 1846-1857 թթ. գործել է Վաղարշապատում, ապա վերստին Երևանում: Ունեցել է կառավարչական, դատական, հաշվապահական և տնտեսական բաժիններ: Նրա որոշումները ուժի մեջ են մտել թեմակալ առաջնորդի հավանությունն ստանալուց հետո: Լուծարվել է 1921 թ.՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո (տե՛ս ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, առաջաբան):

քեալ է յերկուց տեղեաց»[174]: Հարկ է նշել, որ երկրաշարժից տուժած վանքի վերանորոգումն իրականացնելու նպատակով հոգևոր կոնսիստորիան որոշում է «Որովհետև ըս[տ] այժմե[ա]ն դրու[թեան] արդեանց նոյն վանիցն յոչինչ աւելուն, վ[ա]ս[ն] [որո]յ կոնսիստորայն կարծէ ի դիմաց վեհ[ա]ստիճ[ա]ն կ[ա]թ[ո]ղ[ի]կ[ո]սի յանձն առնուլ ս[ուր]բ Թադէի վանահայր Սիմէօն արքեպ[իսկոպո]սի, զի նա ի ծերու[թեան] ժ[ա]մ[ա]ն[ա]կի իւրոյ, վ[ա]ս[ն] փրկու[թեան] հոգւոյ ջան դիցի ո[ր]պ[իս]ի և իցէ հնարիւք վերանորոգել տացցէ զամ[ենայն] խանգարե[ա]լ տեղիսն տաճարի վանիցն ս[ուր]բ Թադէի ի յիշատակ և պայծառու[թեան] անուան իւրոյ»[175]:

**Թադեոս առաքյալի վանքը ԺԹ դարի երկրորդ կեսին.** 1851-1852 թթ. զանգակատուն կառուցելու նպատակով Թադեոս Խան Առաքելյանը վանքին նվիրում է 300 թուման, որը, սակայն, յուրացնում է նաև այլ զեղծումներով հայտնի դարձած վանահայր Թադեոս վարդապետը[176]:

Հերթական նվիրատվությունը վանքին կատարվում է 1852 թ., որի առթիվ Ատրպատականի թեմի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Սաղունյանը շնորհակալություն է հայտնում դարադաղցիներին[177]:

1867 թ. Քիշմիշքափա գյուղի հասարակության միջոցներով վերականգնվում է վանքի շրջապարսպի արևելակողմի կիսափուլ աշտարակը *(տե՛ս սույն աշխ., էջ 171-172, արձ. Զ):*

Թադեոս առաքյալի վանքը թալանից ու ավարառությունից զերծ պահելու համար պաշտպան են եղել նաև Մակվի խաները: 1880 թ. վանահայր Եսայի վարդապետը, գովեստով խոսելով Հյուսեին խանի մասին, նշել է. «Հիւսէին աղէն... եթէ չը լինէր՝ մենք մեծ հարուածների պիտի ենթարկուէինք: Անցեալ Շէյխ Իբադուլլահի արշաւանքին գիւղ չը մնաց այս կողմերը, որ չը թալանուէր, ամենի հոտերը և նախիրները քշեցին տարան: Չը նայած, որ մեր վանքը Մագուայ խանութեան մէջն է ընկնում, բայց նորա խաները խլել են վանքի երկու գիւղերը, հողերը, ջուրը և վանքի խցերը ամբար են շինել իրանց համար, բայց Հիւսէին աղի շնորհիւ մենք բոլորովին անվնաս մնացինք և մի մազ անգամ չը կորցրեցինք»[178]:

1886 թ. Թադեոս առաքյալի հռչակավոր վանքը հիշվում է որպես «անշուք ու երեսի վրա ձգած» մի հաստատություն[179]:

1894-1895 թթ. Համիդյան զանգվածային ջարդերից, ինչպես նաև Առաջին աշխարհամարտի տարիներին և հատկապես Հայոց Մեծ եղեռնից հետո վանքը վերածվում է անօթևան ու գաղթական հայերի հանգրվանի. «Վանայ կողմից միշտ գաղթականներ կգան տես այնպիսի վիճակի մէջ, որ վանքը ստիպեալ պիտի օգնէ... այս վանքը այս կղզիացած վայրն ըստ կարելւոյն փրկիչ դարձաւ գաղթականաց»[180]:

1897 թ. վանքում էին ապաստանել Վանի ջարդերից մազապուրծ 260 անօթևան գաղթականներ[181]:

Համիդյան ջարդերից հետո Թադեոս առաքյալի վանքում ապաստանած հայերին օգնություն ցույց տալու և վանքի տնտեսությունը կարգի բերելու նպատակով Մկրտիչ Ա կաթողիկոսի կոնդակով Սարգիս Հայկունին նշանակվում է կառավարիչ[182]. «...Հայրապետական կոնդակաւ մերով կարգեմք զքեզ ուսուցիչ Դպրեվանից Ս. Թադէի, միանգամայն և տեսուչ դպրոցաց շրջակայ գիւղօրէից խանութեանն պատուիրելով փութալ հասանել ի տեղի պաշտամանց և քոյով տոկուն ջանասիրութեամբ սկսանիլ զղժուարին գործն կրթական: Այլ և պատուէր հրամանի տամք կառավարել զկալուածս վանից ժողովել զարդիւնս նորին և մատակարարել զայն»[183]: Ս. Հայկունին նվիրվածությամբ անցնում է գործի. «...կարճ ժամանակամիջոցում ոչ միայն կարգավորում է վանքի տնտեսությունը, այլև Խրիմյան Հայրիկի հանձնարարությամբ մեծապես օգնում անապաստան գաղթականներին: Նա տեղացիներից գաղթականների համար սենյակներ ու գոմեր է վարձում և տեղավորում նրանց. վառելիք ու սննդամթերք, հագուստ է բաժանում կարիքավորներին: Նրանցից շատերը այստեղ ևս ցրտից ու քաղցից չդիմանալով, հիվանդանում են, Ս. Հայ-

174 **Հովհաննիսյան Զ.**, **Նահատակյան Ռ.**, **Ավետիսյան Մ.**, նշվ. հոդվ., էջ 95-96:

175 Նույն տեղում:

176 **Բասմաջեան Կ.**, Ներսէս Աշտարակեցիի քանի մը կոնդակները, «Սիոն», 1938, օգոստոս, էջ 247: Ի դեպ, ղարաբաղցի Սաղաթել բեկ Յուզբաշյանը Թադեոս առաքյալի և Բարդուղիմեոսի վանքերը նորոգելու ակնկալիքով 1849 թ. 4% շահութաբերության պայմանով, 260 տարի ժամկետով մի տարօրինակ ներդրում է կատարել, այն է՝ 400 ռուբ. Մոսկվայի, 166 ֆունտ ստերլինգ Լոնդոնի բանկերում: 2109 թ. լրացող այդ պայմանագրի № 17 կետը վերաբերում էր Սբ. Թադեոսի վանքին. «Առաջին լուսավորիչների՝ Թադէոսի և Բարթողիմէոսի՝ վանքերը նորոգելու համար նշանակում եմ 50.000 րուպլ.» («Բիւզանդիոն», 1900, № 1229, 19 հոկտ., էջ 1):

177 **Թօփճեան Յ.**, Յուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 17:

178 **Թօխմախեան Ա.**, Մասիս լեռների հարաւային ստորոտներ, մասն Գ, Թիֆլիս, 1882, էջ 42: Ի դեպ, վանահայրը ավելացրել է նաև, որ վանքից խլված կալվածքները վերադարձնելու հարցով և պաշտպանություն ու աջակցություն ստանալու ակնկալիքով դիմել է Սբ. Էջմիածնի Սինոդին, որից ոչ մի պատասխան չի ստացել:

179 «Արաքս», 1892, Բ, դեկտեմբեր, էջ 55:

180 **Հայկունի Ս.**, Պարսկահայք (թղթակցութիւն), էջ 588:

181 **Минорский В.**, նշվ. աշխ., էջ 26:

182 Հարկ է նշել, որ այն տեղեկությունը, թե իբր Հայկունին նշանակվել է Թադեոս առաքյալի վանքի վանահայր, սխալ է (**Հ. Տ. Ա.** (**Տեր-Աստվածատրյան Հայկ**), Սարգիս Հայկունի, «Հովիւ», 1908, № 45, էջ 714):

183 Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 142: Տե՛ս նաև «Արարատ», 1896, էջ 424: **Սվազլյան Վ.**, Սարգիս Հայկունի, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 4, Երևան, 1973, էջ 25, ծնթ. 42:

կունին նրանց դեղորայք է հասցնում»[184]: Բացի այդ՝ «...գաղթականներից գրի է առնում բանահյուսական բազմազան ու հարուստ նյութեր, մյուս կողմից, ամենայն խնամքով ու հոգատարությամբ, արտագրում և ցուցակագրում է այդ վանքում ցիրուցան թափված տասնյակ ձեռագիր հիշատակարանները»[185]:

Ուշագրավ է 1896 թ. հոկտեմբերի 1-ին վանքին տրված հետևյալ նկարագրությունը. «Վանքը տեսայ փառաւոր և հոյակապ, ունի հին և նոր շինութիւն, հինը խորանն և դպրաց կեցած տեղն է, իսկ նորն, որ մի դար առաջ Սիմէօն արքեպիսկոպոս կառուցած է դրսից բոլորովին սպիտակ քարով, որ և դիւրատաշ է, ունի ճիշդ ս. Էջմիածնայ ձևն ու մեծութիւնը, և որի կաթուղիկէն երկու տեղէ ճեղքուած է: Սիմէօն արքեպիսկոպոս եկեղեցույն կից մի զանգակատուն ևս սկսած, ներքին կամարներն կապած ու կիսատ թողած է. այս զանգակատունը տակաւ առ տակաւ քանդուելով եկեղեցոյ արևմտեան մասն ևս իւր հետ խոնարհեցնելու վերայ է:

Եկեղեցիս կառուցանելու համար շատ ծախք եղած է, նորոգելու համար ևս բաւական գումար պէտք է:

Նոր մասն եկեղեցւոյս կառուցուած է այն ժամանակ, որ այս կողմերն ամբողջ հայաբնակ էին, որպէս քարերու վերայ գրուած յիշատակագրերն կը յայտնեն...

Վանքի շուրջն պատած են Էջմիածնայ խցերու ձևով խցեր, որք 50-ի չափ են, ունին բաւական թուով ներքնադարաններ, աշտարակներ, սակայն կիսուայկէս փլած են, ցարդ մէկը չէ նորոգուած: Հին պարսպից դուրս արևմտեան կողմն կայ նոր պարիսպն, ուր զետեղուած է ձիթհանքն, անասնոց գոմեր, երկրագործական տուն ևն. նրանք բոլորովին փլած են, բացի ձիթհանքէն, որն ևս փլելու վերայ է»[186]:

1890-ական թվականներին վանքին տրվել է հետևյալ ուշագրավ նկարագրությունը. «Ս. Թադէի վանքը բաղկացած է այժմ կրկնակի տաճարներից, որոնց չորս կողմը միաբանների կացարաններ են եւ այլ կարեւոր շէնքեր՝ շրջապատուած բուրգաւոր պարիսպներով: Տաճարի հին բաժինը 1329 թուականին է շինած Զաքարիա արհիեպիսկոպոսի ձեռնտուութեամբ՝ կապտագոյն սրբատաշ քարից, աւազախառն կրաշաղախով եւ խաչաձեւ յատակագծով: Սոյն շինութեան քարը բերուած է երկու ժամ հեռաւորութեան վերայ՝ Գարաբուլաղ անուամբ քարահանքից: Խաչաձեւ կաթուղիկէի մեծութիւնն միջին տրամագծերով 4 3/4 սաժ. x 4 3/4 սաժ.: Նա ունի մի խորան, երկու սեղան, հինգ լուսամուտ, իսկ գմբէթը՝ չորս լուսամուտ: Հարաւային խորանի վերեւի մասում գաղտնի պահեստի տեղ կայ: Անսիւն է այս տաճարը եւ հաստատուած կամարների վերայ: Սեղանի վերայ բարձրանում է քառաշէն, քանդակազարդ, գմբէթազարդ խաչկալը՝ դռներով ու կամարներով: Սեղանի առաջ մասը զարդարած է գեղանի խորաքանդակ նկարներով եւ արձանագրութեամբ: Հարաւային խորանում ամփոփած կան երկու վարդապետաց մարմիններ՝ Զաքարիա եւ Եսայի անուններով †1643 եւ †1751 թուեր կրող մարմար շիրիմների տակ: Խորանների դռները զարդարած են սաղափի զարդաքանդակներով: Ներսի հիւսիսային որմի վերայ քանդակած է շինութեան հանգամանքները պատմող խոշորագիր արձանագրութիւնը. եկեղեցոյ շինուածքը շարժից բաւական վնասուել է, խաչի ձեւով ճաքճաքել: Նա մի քանի անգամ զանազան ժամանակներում, զանազան մարդկանց ձեռնտուութեամբ նորոգուած է: Կաթուղիկէիս դրսի մեծութիւնն է 5 x 5 x 5 սմ՝ երկարութիւն, լայնութիւն եւ բարձրութիւն: Դրսի պատուհանների շրջանակը գոյնզգոյն քարերով զարդարած է: Եկեղեցոյ տանիքը սալայատակած է, որ տեղ-տեղ խանգարուել է եւ բուսականութեամբ ծածկուել: Նոյն վիճակի մէջ են նաեւ պատերը:

Այս հին շէնքին կից կանգնած է նոր փարթամաշէն, զարդարուն եւ գեղեցկաքանդակ տաճարը, որի հիմնարկութիւնն եղել է դարուս սկզբներում երջանկայիշատակ Բզնունի Սիմէօն արքեպիսկոպոսի հոգածութեամբ: Նոր տաճարը միանգամայն նման է ձեւով եւ կերտուածքով ս. Էջմիածնի տաճարին, այդպէս եւ մեծութեամբ: Միայն ս. Թադէի տաճարը կիսաւարտ է, անշուք եւ մերկ ներսից, մինչ դրսից միանգամայն հրաշալի է: Ամբողջ տաճարը գոտիաձեւ, ժապաւէնանման քանդակներով զարդարած է, ինչպէս, օր., Մայր Աթոռի զանգակատունը: Շինութիւնն ամբողջովին սպիտակ, պանրագոյն քարից է, որ բերուած է մի ժամ հեռաւորութեան վերայ գտնուող Գրխբուլաղ (Շաւարշան) գիւղի մօտից: Տաճարն ունի տասն եւ մէկ լուսամուտ, երեք դուռ եւ երկու սեղան՝ հիւսիս, հարաւ, գմբէթը՝ ութ լուսամուտ: Նա բարձրանում է չորս հսկայական սիւների վերայ: Մեծութիւնն է միջին տրամագծերով 8 x 8 ս.: Պատերի բարձրութիւնն է 5 սաժէն: Զանգակատունը կիսակործան է եւ կիսատ: Տաճարի կտրան սալայատակը թերակատար է եւ բուսականութեամբ ծածկուած, ուստի միշտ կաթում է անձրեւներից եւ ձիւնից յետոյ: Այս տաճարն եւս երկրաշարժից խախտուած է, միայն թեթեւ կերպով: Արեւմտեան դրան ճակատը զարդարած է հիանալի քանդակներով: Դռան գլխին ամրացրած է մի մար-

184 **Սվազլյան Վ.**, նշվ. աշխ., էջ 25:

185 **Սվազլյան Վ.**, նշվ. աշխ., էջ 26: Ի դեպ, 1897 թ., երբ վանահայր է նշանակվում Հովհաննես վարդապետ Բազունին, Ս. Հայկունուն զրպարտելով հեռացնում է աշխատանքից, իսկ Մկրտիչ Ա կաթողիկոսն էլ, տեղեկանալով այդ մասին, վանահորը գրում է. «Ես քեզ ղրկեցի Թադևոս առաքյալ, որ քո հին մեղքերդ քավես, բայց դու դարձյալ նույն ճիվաղն ես, ի՞նչ կուզես Հայկունիէն»: Նույն թվականին Հայկունին վերադառնում է Էջմիածին: Նրա հավաքած նյութերի մի մասը, ցավոք, կորչում է պարսկական մաքսատանը դրանք բռնագրավելու հետևանքով (Նույն տեղում):

186 **Հայկունի Ս.**, Պարսկահայք (թղթակցութիւն), էջ 587-588:

մարեայ պարսկերէն արձանագրութիւն՝ նուիրուած Պարսից Աբբաս Միրզայի յիշատակին: Հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային պատերը զարդարած են զանազան կենդանիների եւ բոյսերի նկարաքանդակներով եւ բազմաթիւ արձանագրութիւններով: Արձանագրութիւններ կան նոյնպէս տաճարի ներսը՝ սիւների ճակատներին: Հին կաթուղիկէն նորի համար ծառայում է իբրեւ սեղան եւ երգիչների տեղ: Հնի արեւմտեան պատը վերցրած է եւ նոր տաճարը՝ կցած հնի հետ:

Վանքի արեւմտեան կողմում՝ պարսպից դուրս, առանձին շրջապատի մէջ է գտնւում տնտեսական պիտոյքների բակը, ձիթհանքը, գոմանոցը եւլն: Շրջապատի բոլոր շինութիւնները կառուցուած են կաւաքարից, հասարակ շաղախով: Խցերի մեծ մասը թաղակապ է: Արեւելեան բուրգերն եռայարկ են եւ կամարակապ: Շրջապարիսպը նմանապէս շինուած է հասարակ շաղախով եւ քարով»[187]:

ԺԹ դարի վերջերին վանքում իրականացվում են մասնակի նորոգություններ: Ծնունդով ղարադաղցի, Թավրիզում և Բաքվում բնակվող Թումանյան եղբայրները, որոնք նյութապես աջակցել էին գործին, 1901 թ. արժանանում են Խրիմյան Հայրիկի շնորհակալական կոնդակին. «Յանուն Թումանեան եղբարց յաղագս նպաստելոյ նորոգութեան վանուց ս. Թադէի Առաքելոյ, որ յԱրտազ (Մակու)»[188]:

1897 թ. դեկտեմբերի 15-ին Ամենայն Հայոց Մկրտիչ Ա կաթողիկոսը Թադեոս առաքյալի վանքում դպրոց բացելու հարցին ուղղված գրությամբ դիմում է վանահայր Հովհաննես վարդապետին և նշում. «...Ձեռնարկեր էք վանուց մէջ մի ծաղկոց բանալ վանուց գիւղի դպրոցի համար, մի աժան գնով վարժապէտ ևս գտած էք: Առայժմ բաւ է այդքան. Զգուշացիր գիշերօթիկ աշակերտներ պահել, վասն զի դժուարին է և վանքը ձեռնհասութիւն չունի: Դասագրքեր ուզած էիք, պատրաստի գտնուածներէն ղրկեցի, առ այժմ բաւական է: Այս ձմեռն անցուցէք, մինչև գարուն: Ես մօտ օրերս Տփխիս պիտի գնամ, եթէ Աստուած յաջողէ, այն տեղէն Բաքու գնամ Ս. Թադէի վանուց վերաշինութեան համար պիտի աշխատեմ: Եթէ յաջողեցաւ, այն ժամանակ օրինաւոր դպրոց կրնայ բացուիլ»[189]:

1898 թ. նոյեմբերի 15-ին գրված զեկուցագրով Հովհաննես վարդապետ Բազունին Մկրտիչ Ա կաթողիկոսին հայտնում է վանքում կատարված խուզարկության և իրենց նյութական անելանելի դրության մասին. «...ամսուս 7ին, սարդարի կողմանէ մեզ լուր տրուեցաւ, թէ ամիր Նիզանից հեռագիր ստացած է, որ կիրամայէ վանքէն Մամուրի խուզարկութեան ժամանակ իւր տարած ամէն մի բան՝ թէ մեր հրացաններ, թէ փամփուշտներ, ամէն ալ պէտք է, որ սարդար Մամուրից առնէ և մեզ յանձնէ և գողցուած ապրանքների մէկին տաս վճարուի, այժմ սարդար Մամուր եղած է նրայ վրայ, որ ամիր Նիզամի հրաման ի գործ դնէ: Նաև հրամայուած էր, քանի որ սուրբ Դադի վանք սահմանագլխին մօտ է, պէտք է ոչ թէ երկու կամ չորս հրացան գտնուի նոյն վանուց մէջ, այլ թէ յիսունի չափ հրացան, 1000 փամփուշտ և նոցա գործածելու չափ մարդ ևս պահելու վանքին արտօնուած է: Սարդար իւր խնդակցութիւն յայտնեց և գրէթէ բոլոր խանխանաւաքներ ուրախացան: Քանզի ամէն ժամանակ օտարականէն գալ իրենց հայրենիք ոտնակոխ ընելով, առանց երկրի նախարարութեան մի բանի տեղ դնելու, նոցա խիստ ցաւ պատճառած էր՝ մանաւանդ վանքի վրայ եղած կեղծ կասկածներ վերցուելով մաքրուեցաւ Ձերին սուրբ Օծութիւն Վեհ շնորհիւ: ...Բայց դժբախտաբար երկրիս քանի մը խաներ սարդարին հակառակելով, բայց իրար ինկած, մեծ հակառակութիւն մէջերնին ծագած ըլլալով, շարունակ Մամուրներ առանց յետ կտրուելու տեղս կլեցուին, սարդարի յակառակորդներ տանելու համար: Բայց կարող չեն տանելու սոյն պատճառաւ մեր գործ յետ կը մնայ, յայտնի է Ձերին սուրբ Օծութեան, որ այս մօտ երկու ամիս է, որ մենք Մաքու բերուած ենք, Մաքուայ դժոխային երկու քարափների մէջ աննշմարելի լռիկ քաղաքավարութեամբ արգելուած էինք սարդարի կողմանէ: Կետնառուծի պէս սարդար մինչ ցարդ օր եօթ գոյն կտար իր խօսքերին, ալ չեմք գիտէր, թէ ի՞նչ էր իր նպատակ, մի գուցէ ուրիշ բարձրագոյն տեղէ մը կասկած և սպասելիք ունեւր, այդ մեզ յայտնի չէր: Վեհափառ Տէր, ձիւն եկաւ, վանք երթալու մեզ անհնարին եղաւ, քանզի Մաքուայ անանցանելի ճանապարհներ խպառ գոցուեցան: Մենք քաղց ու ծարաւ, առանց մի դահեկան ունենալու այս երկու ամիս է, որ ինկած ենք Մաքու անմարդասէր, ժլատ, անկարեկից, 90 տուն անուանական հայոց մէջ ինկած, գրեթէ ամեն ալ, մանաւանդ մեծամասնութիւն լաւ կարողութեան տէր են, բայց ի՞նչ օգուտ, որ իրենց ծերունի վարդապետ, որ ազգի ընդհանուր դատի համար կը տանջուի, հալ ու մաշ կըլլայ, մի օր մի մարդ պատառ մը հաց չեն տուած նրա քաղց լեցնելու: Եթէ մեր հայրենակից լուսահոգի Գարեգին սրբազանի եղբօր որդին պ. Համազասպ և երևանցի պ. Մովսէս տեղս չըլլային, մենք մինչ ցարդ սովամահ եղած էինք, նոքայ մարդասիրաբար երբեմն մեզ կխնամէին: Վեհափառ Տէր, ...հայրաբար գթացէք ձեր նուաստ հին աւուրց չարաչար տանջուած, ծերունի նուաստ որդւոյ վրայ քաղցր սրտիւ ու հաճութեամբ, և ոչ տհաճութեամբ կամ անմիջապէս մեզ նիւթապէս օգնութիւն ձեր ողորմած ձեռոք կառկառեցէք և կամ թէ ընդունեցէք սոյն վերջի հրաժարական, քանզի մեր այս անտանելի աղքատութեան տոկալ և տանել, որ այլևս մեզ անկարելի է, նամանաւանդ այլևս գործելու մեր հալեալ ու մաշեալ ոյժ ու կարողութիւն մեզ չի

187 **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, Ս. Էջմիածին, 2007, էջ 42-43:
188 «Արարատ», 1901, մայիս-յունիս, էջ 261:
189 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 7, թ. 29:

զօրեր: ...Նաև պարտ կհամարեմ յայտնելու, եթէ վանք ունենար մի ամէնափոքր ապրուստի ճանապարհ մը ինչո՞ւ մենք Մաքուայ մէջ սովամահ պիտի ըլլայինք: Վանքի վիճակ նորէն նկարագրել և պատկերացնել աւելորդ է, մենք 120 րուպլի յետզյետէ պարտ ըրած եմք վանքի վրայ ծախսած եմք, գոմէշ, եզ, գութան, սայլ ու այլ երկրագործական ապրանքներ պատրաստելու համար, մաս մըն ալ վանից զանազան գործիքներ առնելով և ուրիշ ծախքեր հոգալու մսխած եմք, այսօր մեր ցաւերու վրայ բարդուած է նաև պարտատէրերի ամէն օրեայ մեր գլուխ հանած խայտառակութեամբ, վանքին չկա այնպիսի մի բան մը, որ ծախեմք, պարտքեր կոծեմք, երբ հատ գոմէշ, երբք եզ, հազիւ ձեռք բերած ենք, եթէ նա ալ ծախուի, այլևս չէ պէտք այդ հնադարեան պատմական անօգուտ վանք, վանք մնայ և մարդ մէջ բնակուի, մենք անցեալ աշուն և գարնան երեսուն սօմար ցորեն թէև ցանած էինք, յույս մեծ ունէինք, որ այս անցած կալին առնուազ չըսենք 300, այլ թէ 160 սօմար արդիւնք վերցանելու էինք, բայց ինչպէս երկրիս բոլոր բերք նուազ համարեայ թէ չկար, նոյնպէս վանքին ընդամէն 56 սօմար ցորեն եկաւ նոյն 56 սօմարից 10 սօմար ...առաջուլախան տարաւ իւր պարտուց տեղ, մնացածէն 4 սօմար ցանեցինք, իսկ մնացած մաս խոտաղի, մշակի, մանջալի և այլ ծառաների վարձ տրուեցաւ, երկու ամսուան ուտելու հաց հազիւ մնաց, մի ափ գարնան ոչ ուտելու և ոչ ցանելու չի մնայ, ուրեմն թշուառ ծերունի վարդապետ ի՞նչ ընէ, արդարև, եթէ վանք մի տեղէ մը ամէնափոքր ապրուստի մը ճար ըլլար, այսքան ալ երես չէինք դներ անտարակուս մեծ ցաւ ունեցող բժիշկի դուռ կտրած թախանձելէ չի դադարեր, քաղցած լիոց տուներ կդեգերի: Մենք ալ կը պատկառեմք, այսքան ձերին Սուրբ Օծութեան թախանձել օգնութիւն խնդրելէ, աւելի լաւ է բարեհաճիք մեր նուաստի յետ ...ընել, քան թէ այսքան թախանձանաց նեղութիւն քաշել, և մենք ալ յուսահատութեամբ հալ ու մաշ չըլլամք: Ճշմարիտ է այս անգամ, երբ Մաքու բերուեցանք, դիւանի գործ մի կողմէն, պարտատէրներու մեզ տուած նեղութիւն միւս կողմէն, վանքի աղքատութեան անկեալ վիճակ մի կողմէն, այս ամէնի ձեռքում նեղուելով ուզեցինք յանկարծ գիշերանց խոյս տալ դէպի Սուրբ Աթոռ Ձերին Սուրբ Օծութեան կամ պատժո, կամ գթութեան յանցն առնելով, բայց մտածելով քանի որ վանցս խուզարկութիւն մեր դատական խնդիր Ձերին Վեհափառութեան շնորհիւ նպաստաւոր և բարեհաջող ելք ունեցաւ, երբ ապրանքներ վերադարձունին և կորցուածների մասին կարելի է քննիչ գայ, զմեզ նոյն տեղ չըգտնէ, ապրանքներ որոյ պիտի յանձնուի, և քննչի դէմ ո՞վ պիտի կանգնէ կորսուած ապրանքներ հաստատէ, այս ամէն մտաբերելով լաւ համարեցինք կրկին վանք վերադառնալ, պարտատէրերին համօզելով, թէ ահա նորէն կը դիմեմ Նորին Սուրբ Օծութեան հայրախնամ ողորմած սրտին, որուն համար ահա վանցս պահապան մօկացի Մանուկ մեր նամակներ իրէն յանձնելով ուղարկեցինք ի յոտս Ձերին Վեհափառութեան, մեծայոյս եմ, որ այս անգամիս Ձերին հայրական մխիթարութիւն մեր նուաստութիւն բերելով մեր վհատեալ սիրտ պիտի մխիթարուի, ապա թէ դատարկ յետս դառնայ այս կողմեր մնալ այլևս մեզ անկարելի է, ձմեռ ալ չլլայ, պիտի խոյս տամ դէպի Սուրբ Աթոռ, ինչ որ ալ ըլլայ այլևս Ձերին հայրախնամ ամէնագութ ողորմած կարեկցութեան ապաւինելով անհամբեր սրտիւ մնամ խնդանուէր աղօթիցդ կարօտ Ն.Խ.Ծ. վշտալի Յովհաննէս վարդապետ Բազունի վանահայր Սուրբ Թադէի Առաքելոց անկեալ վանից որ ի Արտազ»[190]:

**Թադեոս առաքյալի վանքը Ի դարի սկզբին.** ԺԹ դարավերջին և Ի դարասկզբին որոշակի քայլեր են արվում վանքում դպրոց բացելու ուղղությամբ[191]:

1900 թ. վանք այցելած Արտրպատականի թեմի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Այվատյանն արձանագրում է վանքի անմխիթար վիճակը և բարձրացնում անհապաղ նորոգության խնդիրը. «Եկեղեցին երկու մասից է շինւած, հին և նոր...: Հինը սև քարից շինւած է և բաւական հաստատուն շինութիւն է, սեղանն էլ սրա մէջ է շինւած, բայց այնուամենայնիւ շարժից պատերը ճեղքւած են և բէմի վրայ հարաւային կողմից պատը շարժից բաժանւած է, իսկ նոր շէնքը սպիտակ փուխր աւազաքարից է, աշխատութամբ շինւած Սիմէօն եպիսկոպոսի բաւական գեղեցիկ ճարտարապետութեամբ շինւած և դրսի պատերը զարդարւած են զանազան կենդանիների, թագաւորների և զինանշանների նկարներով, ինչպէս լուսանկարն էլ ցոյց է տալիս, բայց գմբէթից սկսած մինչև եկեղեցւոյ հիմը նորոգութեան պէտք ունի, պատերը մի քանի տեղով, վերից սկսած մինչև եկեղեցւոյ հիմը նորոգութեան պէտք ունի, պատերը մի քանի տեղով, վերից սկսած մինչև եկեղեցւոյ հիմը ճեղքւած է: Դժբախտ հանգուցեալ Սիմէօն եպիսկոպոս չի կարողացել իրէն սկսած շինութիւնը աւարտել, եկեղեցու տանիքը չի սալայատակած, իսկ զանգակատունը մինչև առաջի կամարը շինելուց յետոյ վախճանել է: Իսկ սրան յաջորդող անարժան անձանց անհոգութեամբ ձիւնի և անձրևի տակ առանց այն ալ արդէն խոնաւութեան չը դիմացող այդ քարերը փշրւելով-փշրւելով թափւել են և օր մը բոլորովին հիմնայատակ պիտի լինեն: Այդ նոր եկեղեցոյ ներքին ճարտարապետութիւնը շատ փառաւոր է. պէտք է ամենայն տիպի ճեղքւածքները շինելուց յետոյ, եկեղեցու տանիքը սալայատակել և զանգակատունը պարզ ոճով մը լրացնել: Եկեղեցու չորս կողմը քանի հատ մեծ և փոքր սենեակներ կան, որը պարզ առաստաղով, կան որ կամարակապ են շինւած: Բացի մի քանի-

190 Նշվ. գործը, թ. 43-44 և շրջ.:

191 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 119:

սից, միւսները ոչ դուռ ունեն, ոչ պատուհան, գրեթէ կարող եմ ըսել քարուքանդ վիճակի մէջ է: Դրանց նորոգութեան համար իմ կարծիքով պէտք է անպետքները քակել և պետք եղածի չափ շնորհքով շէնք մը շինել: Այս շինութիւններու նորոգութեանց համար Ձերդ վերհափառութեան հրամանին համաձայն այո՛, այստեղ մի ժամ հեռաւորութեան վրա կը գտնուին սև և սպիտակ քարերի հանքեր, բայց իմ խոնարհ կարծիքով, աւելի լաւ է սև քարը միայն գործածել և սպիտակ ամենևին չը գործածել: Նոյնպէս և կիր, աւազ մոտը կը գտնուին: Բայց այստեղ այնպիսի վարպետներ չը կան, որոնք կարողանան այնպէս նորոգել, որ գոնէ հին շինութեան ճարտարապետական ձևը պահպանին և շինուածքն էլ մի քանի նման լինին: Վարպետներ կան Սալմաստում, Հին քաղաք կոչւած գիւղում, որոնք շատ քիչ են, մի քանի հոգի միայն և այն էլ ո՛չ այնքան մաքուր գործ անողներ: Ուրեմն վարպետներ, քարտաշ, հիւսն և երկաթագործ, ինչպէս նաև խսկիլէի (իմա՛ փայտամած, Ա. Հ.) անհրաժեշտ փայտը և այլ շինելիքի պէտք լինելիք փայտը և երկաթը պէտք է Ռուսաստանից բերել տալ: Փայտի համար, Ձերդ վեհափառութիւնը դիմելու լինէր կառավարութեանը, պէտք լինելիք փայտը կարելի էր Կարսի Սողանլուի լեռներից Արազ գետով դիւրութեամբ փոխադրել: Այս բոլոր շինութեանց նորոգութեանց համար գնալիք ընդհանուր ծախսը 10-15 հազար ռուբլու չափ ենթադրում եմ: Եթէ բոլոր պէտքերը պատրաստ լինեն, այստեղ իհարկէ համեմատաբար աւելի քիչ ծախս կը գնար: Բայց որովհետև չը գիտեմ, Ռուսաստանից վարպետների, փայտի և երկաթի արժէքները չը գիտեմ, դրա համար ծախսերը մի քիչ չափազանցւած ենթադրած լինեմ»[192]:

1901 թ. փետրվարի 20-ին վանքի կառավարիչ Մեսրոպ Ավետիսյանը կաթողիկոսին գրում է, որ «...վանքի պարտքերը փակելու համար 200 ռուբլի է վերցրել գրաբեր Մարգար Միրզոյանից, խնդրում է վճարել: Նշում է և ջրաղացի կառուցումն ու այլ տնտեսական ընթացիկ գործերի մասին»[193]:

1902 թ. վանահայր «...Գէորգ Վրդ. Նալբանդեանն եկաւ Մակու, եւ վանքին ծանօթանալուց եւ գործերը կարգի բերելուց յետոյ՝ գնաց իր վիճակին պատկանող Խոյ քաղաքին այցելութեան»[194]:

Գևորգ վարդապետի՝ Ի դարասկզբին կազմած «Տոմարի հաշիւների բովանդակութիւնից պարզւում է, որ ամեն տարի նորոգութեան են ենթարկւել տաճարն ու իրեն յարակից շէնքերը»[195]: Մեկ այլ աղբյուր ևս հավաստում է վանքում Գևորգ վարդապետի իրականացրած նորոգությունների մասին. «Դաշնակցութիւնը նիւթական միջոցներ տրամադրեց վանահօր, որ գործի լծուելով վանքը նորոգեց, նոր սենեակներ շինել տուաւ, ջրաղացը գործի դրաւ և հինգ վեց տունինց գիւղ մը հաստատելով, կարճ ժամանակուան ընթացքին առաջադրուած նպատակին համապատասխան վիճակի մը հասցուց այդ դարաւոր հաստատութիւնը»[196]:

Նույն ժամանակ որպես փոխվանահայր է հիշվում Գարեգին վարդապետը, որը ձեռնարկում է վանքի դպրոցի կառուցումը (ի դեպ, դպրոցի շինարարության համար պատուհանների շրջանակները և ապակիները բերել են Խոյից)[197]:

1902 թ. մայիսի 14-ին Ամենայն Հայոց Մկրտիչ Ա կաթողիկոսը գրությամբ դիմում է Մակվի Ալի Ղուլի Մուրթուզա խանին՝ խնդրելով աջակցել վանքի վերանորոգման համար ուղարկված երկու վարպետներին. «Գրութեանս մատուցանողներն են Ռուսաստանցի երկու քարտաշ վարպետներ Մկրտիչ և Կարապետ, որոնց ես խրկեցի այդտեղ նորոգելու Ս. Թադէոս Առաքելոց տաճարի խարխուլ տեղեր և ընդհանուր հաշիւ ներկայացնելու ամբողջ վանքի վերանորոգութեան մասին և որոնք մի քանի ժամանակ պիտի ապրին վանքում մինչև նորոգութիւնները վերջացնելն: Յայտնելով այս մասին Ձերդ Վսեմութեան՝ կը խնդրեմ յատկապէս պէտք եղած պաշտպանութիւն և աջակցութիւն չխնայել նոցա մինչև նոցա վերադարձը:

Առօթելով առ բարձրեալն Ձերդ թանկագին առողջութեան և երկարակեցութեան համար՝ յանձնում եմ Ձեր բարեխնամոց և հայրական պաշտպանութեան մեր հնադարեան սրբավայրը, նորա վանահայր Գէորգ վարդապետին և Ձեր հաւատարիմ հպատակ հայերին, որոնց եմ հոգացող և գլուխ հոգևոր»[198]:

Նույն թվականի հուլիսի 12-ին Մկրտիչ կաթողիկոսը հանձնարարում է Եղիշե ծ. վարդապետին այցելել Թադեոս առաքյալի վանք և ուսումնասիրել նորանշանակ վանահոր, վանքի և ժողովրդի փոխհարաբերությունները. «Ի նշանակելն մեր վանահայր վանուցն Ս. Թադէոս Առաքելոց Արտազու, որ ի Մակու գտ. Գէորգ ծ. վարդապետն Նալբանդեան, ի նկատ առեալ զխղճալի դրութիւն վանուցն և ծառայողաց նորին, որպէս և զերթևեկութիւն անցորդաց, գաղթականաց և անդ աշխատաւոր վարպետաց յղելոց ի մերոյս կողմանէ, մեք կարգադրեցաք ենթարկել վանահայրութեան վանուցն զվիճակն Խոյի և Մակուայ գիւղօրէիւք իւրովք, զի ժողովեալ զպտղի արդիւնս և զայլ հասոյթս հոգասցին զծախս ինքեանց, տալով միայն տարեկան հաշիւն Առաջ-

192 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 417, թ. 60:

193 Մատենադարան, ց. 46բ, Խրիմյան կաթողիկոսի արխիվ, թղթ. 111, վավ. 45:

194 **Հանգոյց Ն. (Աղբալյան Նիկոլ)**, Սամսոնի յուշերը, «Հայրենիք», Պոսթըն 1924, № 7, էջ 139-140: Ի դեպ, Գևորգ վարդապետի ջանքերով Խոյում դպրոց է բացվել:

195 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 31:

196 **Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրութ, 1955, էջ 583: Հմմտ. նույն տեղում, էջ 586:

197 **Մալխաս (Հովսեփյան Արտաշես)**, Զարթօնք, հ. Բ, Պոստոն, 1933, էջ 215, տե՛ս նաև հ. Ա, Պոստոն, 1933, էջ 91, 92:

198 ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 30, թ. 60ա շրջ. և 61:

նորդարանիդ իբրև կեդրոնի թեմին: Յայտնելով զայսմանէ Ձեզ, պատուիրեմք զի ի պատահելն ի կողմանէ վիճակայնոց տեղւոյն դատ ինչ և կամ խնդիր յԱտեանս Դավրիժոյ մարդասիրաբար յանձն առջիք իբրև թեմակալ վիճակին պաշտպանել առ դրունս պարսիկ պաշտօնէից, և ի մեկնելն Ձեր ի վիճակդ յայցելութիւն հանդիպեսջիք նաև ի Խոյ և ի Մակու և անձամբ ծանօթասջիք ժողովրդեան և ստուգեսջիք զյարաբերութիւն ընդ վանուցն և վանահորն»[199]:

1903 թ. ականատեսը վանքի վերաբերյալ գրում է. «Բակի մէջտեղը կը բարձրանար պատմական եկեղեցին: Խորանը յարակից մասերով նախնական շէնքի մը մնացորդն էր, տասնեակ մը դար առաջ կառուցուած: Մուտքի մասը, բարձրադիր զանգակատան հետ, 18-րդ դարու շինութիւն մըն էր, ճերմակ կակուղ քարէ շինուած եւ արտաքուստ՝ գեղատեսիլ քանդակներով զարդարուն:

Ընդարձակ բակին մէկ կողմը նոր շինութիւններն էին՝ դարպասի քովի թոնրատունը, մառանը եւ նոր շինուած դպրոցի երկու սենեակները: Իսկ եկեղեցիի դրան դիմաց, կարգով շարուած էին հին շարք մը խուցեր, կիսաւեր վիճակի մէջ: Բակի ճակատը եւ մէկ կողմը, իրարու քով, շարուած էին միաբաններու յատուկ խուցերը: Այդ խուցերէն մեծ մասը բոլորովին պարապ կը մնար. մէկ երկուքը կը գործածուէին որպէս յարդանոց, ցորենի ամբար, խոտնոց ու պահեստ:

Հեռաւոր անցեալի մէջ Թադէոս Առաքեալի վանքը ունեցեր է բազմանդամ միաբանութիւն, հարուստ կալուածներ եւ սեփական տասնեւչորս գիւղեր, որոնք ժամանակի ընթացքին յափշտակուեցան տիրող խաներէ, քիւրտ բէկերէ: Մինչեւ 1828 թուականը, երբ տեղի ունեցաւ Խոյի եւ Մակուի հայութեան գաղթը դէպի Արարատեան Դաշտ, Թադէոս Առաքեալի վանքը Ատրպատականի թեմական կեդրոնն կը համարուէր:

Տարիներու ընթացքին, սակայն, հռչակաւոր վանքը անշքացաւ, թեմական կեդրոնը փոխադրուեցաւ Թաւրիզ, միաբանները ցրուեցան եւ նախկին շէն վանքէն մնաց խեղճուկ վանք մը, պատմական արժէքով միայն հարուստ:

Միաբաններու խուցերը քարուկիր, կամարակապ փոքր սենեակներ էին, խոշոր քարերով սալայատակուած, ուր մարդ հազիւ կրնար բան մը որոնել: Ամէն խուց մէկ պատուհան ունէր, հազիւ կէս ոտք լայն եւ երկու ոտք երկարութեամբ, ուրկէ եկած լոյսը անյաջող կերպով կը կռուէր ներսի խաւարին հետ: Այդ խուցերը այնքա՜ն ցուրտ, անհրապոյր ու մութ էին, որ հոն բնակելու գաղափարն իսկ սարսափ կրնար պատճառել մարդու:

Եկեղեցին եւ շրջապատի ամբողջ շինութիւնները շրջափակուած էին հաստ պարիսպով մը, որ միաժամանակ խուցերու ճակատի պատն էր: Պարիսպը գիւղի կողմէն թէեւ հազիւ քսան ոտք բարձրութիւն մ՚ունէր, բայց երեք կողմերէն կախուած էր ձորի վայր եւ երբեմն տեղեր մինչեւ յիսուն ոտք ուղղաձիգ կը բարձրանար՝ սկսելով ձորի յատակէն, ուր փոքր առու մը կլկլալով կը հոսէր դէպի վանքի ջաղացքը»[200]:

Նույն թվականին Գևորգ ծ. վրդ. Նալբանդյանը դիմում է Մկրտիչ Ա կաթողիկոսին ռուսական կառավարության վճռի դեմ Մակուի և շրջակայքի հայ բնակչության մեջ առաջացած բողոքի առնչությամբ. «...ս. Էջմիածնի և տեղւոյն համօրէն վանօրէից և եկեղեցեաց շարժական և անշարժ կալուածոց անարդար բռնաբարութեանց դժբաղդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ս. Թադէի Առաքելոյ վանուցս թեմի ազգայնոց մէջ, սրտերնին համակ խոցուած նուաստիս հանրագրութիւններով՝ միահաղոյն կը բողոքեն ռուս կառավարութեան բռնակալութեանց դէմ...: Թէմիս հանրագրութիւններն ներփակած եմ, որք են Մակուէն, Քիշմիշթէփէէն, ս. Թադէի վանքի գիւղէն, Խոյէն, Սէյդավայէն, Տիզէ, և Շուա, և Մահլազան և այլն գիւղերէն»[201]:

1904 թ. վանքի և 3 անձից բաղկացած միաբանության վերաբերյալ գրվել է. «...ան հայկական ոճով է շինուած, ինչպէս մեր բոլոր վանքերը, բայց անոր մէջ մի այլ քաղցրութիւն կայ. իր քանդակները, իր զարդանկարները մինչեւ այդ տեսածներուս ոչ մէկուն կը նմանին: ...Վանքին մէջ շատ սենեակներ կային, բայց քիչերն էին բնակելի: Միաբանութիւնը բաղկացած էր աչքերը ցաւոտ պառաւ տնտեսէ մը, ջրաղացպանէ մը, որ միաժամանակ ծառայ էր, տիրացու եւ բոլոր գործերուն հասնողը եւ վարդապետէ մը (իմա՛ վանահայր Գևորգ Նալբանդյան, Ա. Հ.), Պուլկարիայէն եկած. անոր աչքերն ալ ցաւոտ էին...»[202]:

Նույն թվականին վանքն ուխտավոր այցելուներ չուներ, քանի որ «...Եթէ գային իսկ, օթեւանելու տեղ չունէին եւ ստիպուած գիւղին մէջ պիտի պատսպարուէին: Վանքի նախապէս շինուած հիւրանոցները քանդուած էին եւ վարդապետը բնաւ միտք չունէր զանոնք վերանորոգելու: Կային նորոգուած միայն երկու սենեակ...»[203]:

1904 և 1906 թթ. վանք այցելած Արամ Մանուկյանն իր հուշերում գրում է. «Նրա (իմա՛ վանահայր Գևորգ Նալբանդյանը, Ա. Հ.) օրով վանքը շէնացել էր. մի նոր ջրաղաց էր շինել, նոր առու հանելով. հին եւ նոր ջրաղացի համար քարեր էր բերել տուել հին Նախիջեւանից Ջուլֆայի վրայով մինչեւ վանք:

199 Նշվ. գործը, թ. 105, բողոն, ձեռագիր:

200 **Մալխաս**, Զարթօնք, հ. Բ, էջ 216-217: Հմմտ. նույնի՝ Ապրումներ, հ. Ա, Պէյրութ, 1956, էջ 289-290:

201 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, էջ 151:

202 **Ռուբէն (Տեր-Մինասյան Ռուբեն)**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Թեհրան, 1982, էջ 315:

203 Նշվ. աշխ., էջ 322:

Վանքի մէջ մի քանի սենեակներ էր շինել տուել: Իհարկէ, այս բոլորն անում էր մասամբ կուսակցութեան միջոցներով եւ մասամբ էլ հանգանակութիւններով Խոյ, Սալմաստ, Թաւրիզ եւ այլն, ո՛ւր կրկին մերոնք էին կատարում այդ հանգանակութիւնները: Բայց եւ այնպէս նրանից առաջ էլ այդ բոլորը եղել է. եւ ոչ ոք, բացի իր անձնական գործից, ոչնչով չէր հարստացրել վանքը: Նրանից յետոյ վանքը նորից քանդուեց»[204]:

Նոյն ժամանակ նաև Երկրից Կովկաս անցնող Կոմսը (Վահան Փափազյան), լինելով վանքում, նշում է. «Հիանալի էին ալեւոր, 5-րդ կամ 8-րդ դարէն բոլորովին անեղծ՝ զարդարուն մնացած եւ նետի մը պէս ուղղուած կապոյտ երկինքին՝ գեղեցիկ եւ միաձոյլ գմբէթը եւ սլացիկ պատե՛րը, հրաշալի բարձրաքանդակ ծաղիկներով, ողկոյզներով ու դէմքերով,– թանգարան մը կարծես, որ չորս կողմէն, կը գրկէր լայնանիստ գմբէթը: Աջ կողմը քանի մը սենեակներ՝ պաշտպանուած պարիսպներով»[205]:

Կյանքի վերջին տարիներին Թադեոս առաքյալի վանքում ապրել և հեղափոխական գործունեություն է ծավալել հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից Մոկացի Հարությունը (Ախպեր Հարություն)[206]: Վախճանվել է 1902 թ. և ամփոփվել վանքի գերեզմանատանը:

1904 թ. օգոստոսին վանքում է եղել Մուրադ Սեբաստացին և պատին՝ արտաքուստ հիշատակագրել է.

«Մուրատ Սեբաստացի
1904 – Օգոստոս ...
Անցանք մենք ընդ հուր և ընդ ջուր,
Իսկ ես կ'ըսեմ՝ նաև ընդ արիւն,
Եւ նորեն կ'երթանք դեպի հուր եւ արիւն...»[207]:

Ի դեպ, 1905 թ. Վանք գյուղի տեր Շուջաես սուլթանն անվստահությամբ է վերաբերվել հայերին՝ զենք գտնելու մտադրությամբ մի քանի անգամ խուզարկելով վանքը[208]:

1910 թ. թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի վկայությամբ՝ վանքը գտնվում էր անմխիթար վիճակում, և առաջին հերթին անհրաժեշտ էր տանիքի վերանորոգումը[209]:

1911 թ. հունիսի 17-ին «Առաջադրութեամբ յայտնուեց Ատրպատականի Հայոց առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին, թէ հեռագրուեց Կովկասի Պ. Փոխարքային Ատրպատականի և յատկապէս Ղարադաղի ու Մակուայ շրջանի հայերին և Ս. Թադէոս առաքեալի վանքին պաշտպանութիւն ցոյց տալու համար հարկաւոր ցուցումներ անել Թաւրիզի գեներալ-հիւպատոսին»[210]:

**Թադեոս առաքյալի վանքը Երկիր տանող դարպաս.** «Կղզիացած հարևան վանքի զուտ հայաբնակ գիւղով, շրջանի պարսիկ գիւղերէն, ան թէեւ արժէքաւոր մեկնակէտ մըն էր, եւ որպէս այդպիսին անգնահատելի օգտակարութիւն մունեցաւ, բայց իր դիրքի բերումով, առանց հայաբնակ շրջաններու, անոր դերը սահմանափակուեցաւ որպէս անցողական կայան մը լինելու մէջ»[211]:

ԺԹ դարավերջից մինչև Առաջին աշխարհամարտը Թադեոս առաքյալի վանքն Իրանից «Երկիր», մասնավորապես Վասպուրական անցնող ֆիդայական խմբերի համար կարևոր տարանցիկ հենակետ էր՝ հայ հեղափոխական շրջաններում հայտնի Մենավոր կամ Մենավորի վանք անվամբ: Այդ խմբերին մեծ օգնություն է ցույց տվել Ընծայր ծածկանունով հայտնի վանահայր Գևորգ վարդապետ Նալբանդյանը[212]: 1897 թ. հուլիսի 20-22-ին՝ Արևմտահայաստան երկրորդ անգամ անցնելու ճանապարհին, զորավար Անդրանիկ Օզանյանն իր ընկերների հետ հանգրվանում է վանքում և հանդի-

---

204 **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1923, № 3, էջ 51: Տե՛ս նաև Արամը (Արամի յուշերը), էջ 173:

205 **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. առաջին, Պոսթըն, 1950, էջ 382-384:

206 Մոկացի Հարությունը ծնվել է 1860 թ. Մոկսի Հաղին գյուղում: 1894 թ. արդեն Հ.Յ. Դաշնակցության անդամ էր: 1896 թ. հունիսին մասնակցել է Վանի ինքնապաշտպանության կռիվներին: 1897 թ., Խանասորի արշավանքի ժամանակ նշանակվել է հետևակ զորքերի հարյուրապետ, սակայն արշավանքից հետո «մեկուսացաւ և ապա անցաւ Արտազի Ս. Թադէի վանքը՝ յեղափոխական աշխատանքներ կատարելու և Երկրի հետ կապ պահպանելու պարտականութեամբ: Զինատար խումբեր, ռազմիկներ, սուրհանդակներ, գործիչներ և այլն, որոնք Ս. Թադէի վանքը կու գային, Ախպէրն էր որ կ'ընդունէր, կը պահէր, կը խնամէր և ապա ճամբու կը դնէր հարկ եղած ուղղութեամբ: Այս աշխատանքը կատարեց մօտ հինգ տարի... Ծանր հիւանդութիւն մը բոյն դրած էր իր սրտին մէջ, մինչև որ 1902-ի Յունիսի 25ին, Դշ. առաւօտ, Ս. Թադէի վանքի հինաւուրց կամարներուն տակ փչեց իր վերջին շունչը և թաղուեցաւ վանքի գերեզմանատան մեջ» (Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ 1915-1930, Վենետիկ, 1930, էջ 356-357: Տե՛ս նաև «Դրոշակ», 1902, էջ 152-153):

207 **Վարանդեան Մ.**, Մուրատ, Պոսթըն, 1931, էջ 103: Տե՛ս նաև **Գևորգյան Հ.**, Սեբաստացի Մուրադ, Երևան, 2005, էջ 88:

208 **Минорский В.**, նշվ. աշխ., էջ 26:

209 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 175:

210 «Արարատ», 1911, էջ 523:

211 **Մալխաս**, Ապրումներ, հ. Ա, էջ 150: Վանքի մասին՝ որպես զինատար խմբերի կենտրոնատեղի, նշվել է նաև. «Թադէոս Առաքեալի վանքը գտնւում է Մակու, պարսկա-թուրք սահմանագլխի վրայ, Աբաղային սահմանակից, թուրքական Կարէնի մեծ գիւղից մէկուկէս ժամ հեռու, իսկ թուրքական սահմանից ձիով վեց ժամ հեռաւորութեան վրայ:
Խոյից մինչեւ վանք 14 ժամուայ ճամբայ է ձիով, այն էլ լաւ քշելու պայմանով: Ո՛չ մի հայ գիւղ չկայ ճանապարհին: Այնպէս որ Խոյից վանք պէտք է երթալ մի շնչով, մի գիշերուայ մէջ: ... որովհետեւ գնացողները զինատար կամ ռազմամթերք տանող խմբեր են լինում, որոնք չեն ուզում ընդհարումներ ունենալ Գորելի ձորի եւ Գեաղուկի (կիրճ) մէջ ապրող շատ ռազմիկ քրդերի եւ թուրքերի հետ» (**Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1922, № 2, էջ 31: Տե՛ս նաև Արամը (Արամի յուշերը), էջ 167-168):

212 Այդ դեպքերի մանրամասնությունները տե՛ս **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, էջ 315-339: **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1923, № 3, էջ 49: Տե՛ս նաև **Արամը** (Արամի յուշերը), էջ 169:

պում Հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Փարամազին, որն այստեղ էր եկել 30-33 հոգուց բաղկացած զինյալ խմբով՝ «էրզիր» մուտք գործելու մտադրությամբ[213]:

1902 թ. մայիսին Արևմտյան Հայաստան անցնելու համար մի քանի օր լինելով Թադեոս առաքյալի վանքում՝ Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատը) գրել է, որ այդ վանքը ծառայում էր թե՛ որպես ժամանակավոր կացարան հայ հեղափոխականների համար և թե՛ կարևոր դեր էր խաղում ռազմամթերք փոխադրելու գործում[214]:

1904 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վանքում էր մնում Արամ Մանուկյանը, որին «Ուշ լինելու եւ յարմար վալատ չլինելու պատճառով, ...չի յաջողւում վանքից անմիջապէս ճանապարհուել դէպի Վան: Ժամանակը զուր չի անցնում: Օգտուելով հանգամանքից՝ Արամը սկսում է ծանօթանալ կուսակցական գործերին, ուսումնասիրում է վանքի կատարած դերը, փոխադրութեան ձեւերը, դէպքերն ու դէմքերը»[215]: Ի դեպ, վանքի խցերից մեկում զենք պահելու համար պատրաստել էին թաքստոց[216]:

Հայ ազգային-ազատագրական շարժման մեջ վանքի կատարած վիթխարի դերի վերաբերյալ գրվել է նաև, որ «Թադէի վանքը... Երկիր ռազմամթերք եւ մարդ փոխադրող ամենախոշոր խողովակն էր: Խոյից վանք ռազմամթերքը փոխադրել ենք...մեր զինատար խմբերով, կամ վանքի քարաւաններով՝ վանքի ապրանքներ անուան տակ: Մի քանի փորձեր են եղել Շահթախթից կամ Ղամարլուից ուղղակի վանք ապրանք տեղափոխելու, քրդերի կամ թիւրքերի միջոցով...:

Թադէի վանքը Վանի յեղափոխական, ազգային-հասարակական-կրթական գործունէութեան գլխաւոր նաւահանգիստն էր: Վանը՝ բռնակալութեան ժամանակին՝ առաջադիմութեան, յեղափոխական գործունէութեան եւ գործիչների բազմութեան մեծագոյն մասը պարտական է այս վանքին, որ ճակատագրի մի բարեբախտ դիպուածով ընկել եւ մնացել է այս հոծ քրդութեան եւ թրքութեան մէջ, իբրեւ մի փրկութեան ովասիս»[217]:

1905-1906 թթ. վանք այցելած Կոմսը գրում է, որ վանահայր Գեւորգ վարդապետի «...գլխաւոր եւ իրական աշխատանքն էր Արաքսի այն կողմէն եւ Սալմաստէն եկող զինամթերքը տեղաւորել պատրաստուած գաղտնարաններու մէջ, որոնք հետզհետէ կը ղրկէր Երկիր զինատար խումբերու միջոցով կամ, աւելի յաճախ, ձիեր, էշեր բեռնաւորելով՝ կայանէ-կայան փոխադրել կուտար: Առաջին կայանն էր Կարանի պարսկական գիւղաքաղաքը, որ շինուած էր համանուն դաշտին մէջ եւ կայանն էր Էրզրում-Պարսկաստան առեւտրական ճամբուն վրայ: Այդտեղ, հայ խանութպանի քով ցորեկ մը կը հանգստանային եւ հետեւեալ գիշերը ապրանքները ներս կ'երթային Նազարավա-Խաչան կամ Չիպուխլը եւ անկից դէպի Բերկրի: Հաւատարիմ եւ նուիրուած օգնական մը ունէր վարդապետը՝ Թաթոսը՝ հնամեայ սպասաւորը վանքի: Անոնցմէ զատ, 1-2 տնտես պառաւներ եւ մեր զինուորներէն իբր պահակ եւ պահապան վանքին, 2-3 հոգի միշտ հոն էին: Այս էր ամբողջ «միաբանութիւնը»[218]:

1907 թ. գյուղացիական ապստամբությունից հետո՝ սեպտեմբերին, «Թադէի վանքի և նրա հայաբնակ գիւղի պահպանութեան ապաւինած ու հայ կռուողներով պաշտպանուած բազմաթիւ քիւրդեր ու թիւրքեր ազատուեցին կոտորածից, Սարդարը նրանց խնայեց հայերի խաթրին, բայց շատ էլ հաճելի չեղաւ նրան հայերի այդ արարքը...»[219]:

**Թադեոս առաքյալի վանքը Եղեռնից մազապուրծ հայերի պատսպարան.** 1915 թ. սկզբին պարսկա-թուրքական սահմանին գտնվող հայկական երեք գյուղերի «տղամարդերը սրի քաշուած են Քիւրտերու կողմէ: Ողջ մնացողներն ապաստանած են Ս. Թադէոսի վանքը»[220]:

1915 թ. գարնանը, երբ Վանի նահանգի Սարայ գավառի Հասան, Թամրան, Ավզարիկ, Վերին և Ներքին Ախոռիկ հայաբնակ գյուղերը ենթարկվում են քրդերի հարձակմանը, «մարդոց մեծ մասը կոտորելով, կիները կը բռնաբարեն», նշյալ գյուղերի ողջ մնացած հայերի մի մասը «Ս. Թադէոսի վանքը կը լեցուի, և միւս մասն ալ Մակու կապաւինի»[221]:

**Թադեոս առաքյալի վանքի ինքնապաշտպանությունը.** Առաջին աշխարհամարտի վերջին շրջանում՝ 1918 թ. ապրիլ ամսին, ռուսական զորքերի նահանջից հետո, թուրքական զորաբանակները մտնում են Ատրպատականի, մասնավորապես Արտազի սահմանները: Մակվի սարդար Ալի Ղուլի Մուրթուզա խանի թույլտվությամբ, քաղաքապետ Կարաբեկ Շամշադին խանի ցուցմունքով, Երևանից ու Նախիջևանից գաղթած տարագիրների (մուհաջիրներ) և Մակվի գավառի թուրք ու քուրդ բնակչության մի մասի աջակցությամբ հունիսի

---

213 Անդրանիկի յուշերը, «Հայրենիք», 1930, № 6, էջ 121-122:

214 **Օհանջանեան Ս. (Ֆար-Հատ)**, Իմ յիշատակարանը, «Հայրենիք», 1943, № 4, էջ 95:

215 **Արամը** (Արամի յուշերը), էջ 20-21, 177-178 և 187-188: Այդ մասին տե՛ս նաև **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», 1923, № 3, էջ 54 և № 4, էջ 82:

216 **Մալխաս**, Զարթօնք, հ. Բ, էջ 217:

217 **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», 1922, № 2, էջ 30-31: Տե՛ս նաև **Արամը** (Արամի յուշերը), էջ 168-169:

218 **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. առաջին, էջ 384: Վանքի տնտես Թադեոսի մասին հայտնի է, որ «96-ի կոտորածին Վանի Հայոց-Ձորի Հընդստան գիւղէն փախած՝ ապաստանած էր Թադէոս Առաքեալի վանքը: Ամբողջ ընտանիքը՝ մայր, կին եւ երկու զաւակները կորսնցուցած, Թադոս Ախպերը, աշխարհային անցաւոր կեանքէ ձեռք քաշեց ու ինքզինքը նուիրեց վանքին» (**Մալխաս**, Զարթօնք, հ. Բ, էջ 211):

219 **Աւօ**, Նամակ Թրքօ-պարսկական սահմանագլխից, «Հնչակ», 1907, № 9-10, էջ 126:

220 «Կոչնակ», 1915, № 14, էջ 331:

221 «Կոչնակ», 1915, № 19, էջ 349:

սկզբին թուրքական զորքերը հարձակվում են վանքի վրա՝ «հայության կանգուն դրոշմը» ոչնչացնելու նպատակով: Զորահրամանատար Ֆայեղ էֆենդուն օգնում են նաև սարդարի ավագ որդին՝ Աբաս փաշա խանը, նրա ազգականը՝ Նադո խանը: Սարդարը «մեծահոգաբար» կարգադրել էր որդուն խնայել հայ կանանց և երեխաներին, բայց ավար վերցնել վանքի հնությունները և հատկապես Թադեոս առաքյալի Աջը[222]:

Այս օրհասական օրերին Մակվի հայերը երեք հոգուց բաղկացած հատուկ պատվիրակություն են ուղարկում Խոյ զորավար Անդրանիկի մոտ օգնության խնդրանքով: Սակայն Խոյում տիրող խառնակ դրության պատճառով պատվիրակները չեն կարողանում տեսնել Անդրանիկին կամ որևէ լուր տալ նրան և ձեռնունայն վերադառնում են:

Օգնություն ստանալու հաջորդ փորձը նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը դիմելն էր: Այս նպատակով Դավալու է (այժմ՝ Արարատ, նույնանուն մարզում) ուղարկվում ղարաքիլիսցի Պողոսն ընկերոջ հետ: Նրանք էլ, սակայն, հին Ակոռի գյուղի մոտակայքում՝ Ալի-Բայ կոչված ամրության տակ, հանդիպում են զինված քրդերի: Ընդհարման ժամանակ Պողոսի ընկերը սպանվում է, իսկ ինքն ազատվելով վերադառնում է վանք և մասնակցում հունիսյան պաշտպանությանը:

Ակնհայտ էր, որ դրսից օգնություն ստանալ հնարավոր չէ: Վանքում ապաստանած հայկական մի քանի գյուղերի (Ղարաքիլիսա, Քիշմիշքափա և այլն) բնակիչները (96 ընտանիք, շուրջ 500-600 մարդ) և Արևմտյան Հայաստանից ճողոպրած 38 գաղթականները Մոկացի Մուշեղի գլխավորությամբ, ապավինած սեփական ուժերին, 33 օր շարունակ հերոսական ու անձնուրաց դիմադրություն են ցույց տալիս մենաստանը պաշարած թուրքական մեծաքանակ զորքին: Պաշարման երկրորդ օրը թուրքերը կտրում են վանքի ջուրը (օգնությամբ է հասնում վանքի նախկին հովիվ շորբուլաղցի քուրդ Բայլարը, որը, թեկուզ և կարճ ժամանակով, շտկում է իրավիճակը): Թշնամու բազմաթիվ գրոհներ ետ են մղվում: Սակայն զինամթերքի սպառման և վանքի նախկին հովիվ քուրդ Նաղի Բաբալցու դավաճանության պատճառով («ձիթհանի կողմից ծակում է գոմի պատը, ռումբեր դնում, պայթեցնում, ճանապարհ բացում թշնամիների ներս թափանցելուն»)[223] հուլիսի 2-ի գիշերը թշնամին ներխուժում է վանքի բակ՝ կոտորելով պաշտպաններից շատերին, իսկ կանանց ու երեխաների մի մասին գերի է տանում: Թալանվում են վանքի գաղտնարանը, վանքապատկան արժեքավոր իրերը, մենաստանի գանձերը, այդ թվում նաև վանքի խորհրդանիշը՝ Թադեոս առաքյալի Աջը, որը, հակառակ Աբաս փաշա խանի պահանջների, Ֆայեղ էֆենդին տանում է իր հետ[224]: Հայ պաշտպաններն իրենք էլ վրեժխնդիր են լինում՝ սպանելով Նադո խանին, Սեիդ Միր Աբդուլլային, խմբապետ Իմամ Ալի խանին և այլոց:

Մթության քողից օգտվելով՝ 85 հայեր վանքի շրջապարսպի արևելյան կողմից իջնում են ձորը և ճանապարհը շարունակելու համար բաժանվում երեք խմբի: Նրանցից 32-ը որոշում է անցնել Սոկառ լեռան բարձունքները և հասնել Մուխուր հին ծանոթներին ապավինելու հույսով. բոլորն էլ սպանվում են այդ գյուղում՝ քարաշեն անասնագոմի մեջ: Երկրորդ խմբի անդամները (38 հոգի), որոնց մեջ էին նաև շատ ղարաքիլիսցիներ, Պողոսի գլխավորությամբ մեծ դժվարությամբ հասնում են Դավալու և այնտեղ էլ դավադրաբար նահատակվում են: Մի քանի օր անց հայոց բանակի զինվորները գրավում են Դավալուն և սպանվածներին թաղում եղբայրական գերեզմանում:

Մնացած 15 հայերը (երրորդ խումբ) գնում են Նիաղ գյուղը՝ ապավինելու «բարեկամ» Նաջաֆի օգնությանը, բայց սպանվում են վերջինիս ձեռքով հենց նրա տան մեջ[225]:

Թադեոս առաքյալի վանքի ինքնապաշտպանության և կոտորածի վերաբերյալ բավական ուշագրավ է վանահոր՝ Պետրոս վարդապետ Ղազարյանի վկայությունը, որն էլ ներկայացնում ենք ամբողջությամբ. «1918 թւին հերթը հասնում է վանքին, հազարաւոր թուրք ու քուրդ պաշարում են վանքը և կողքի 80 տուն ունեցող գիւղը: Հայերը 30-40 լաւ զէնք են ունեցել, մտնում են վանքի անկիւնների բարձր աշտարակների մէջ ու 35 օր դիմադրում: Այդ միջոցին, հեռուից անցք են փորում և հասնում են ամենաուժեղ աշտարակի տակ ու պայթուցիկ դնում: Աշտարակը կործանւում է, կռուողներն էլ հետը: Վարդապետը ժողովրդին լցնում է վանքը, դռները փակում ու պատարագ է մատուցում, հաղորդութիւն է տալիս: Այդ միջոցին թուրքերը պարսպից լցւում են ներս: Պետրոս վարդապետ Ղազարեանն ասում է. «Տղամարդիկ, ով կարող է ետևի գաղտնի անցքով իր գլուխն ազատի», ինքն էլ 50-60 հոգու հետ դուրս է գալիս: Անբախտ կին-երեխաների վայնասունը դեռ շատ հեռուից լսում էր. «Ոչինչ չէինք կարող անել, փախչում էինք, որ մեզ ազատենք: Հասանք մի հովիւ, ես ասացի քիչ հեռուից անցնենք, մի մասը թէ՝ քաղցած ենք ու ծարաւ, ճամբաներս շարունակել չենք կարող: Ես 25-30 հոգու հետ հեռուից անցայ, մնացեալը հովւից հաց ու ջուր են ուզում, հովիւն

222 «Ալիք», 1979, 25-29 յունիսի:

223 «Ալիք», 1978, մայիսի 21 և 1979, 25-29 յունիսի: Ի դեպ, 1918 թ. դեպքերի մասին վկայություններ է թողել նաև հետագայում վանքի հսկիչ Վասիլ Դավթյանը (անտիպ):

224 «Ալիք», 1979, 25-29 յունիսի: Վանքի պատերին մինչ օրս էլ մնում են թուրքական հրետանու արձակած գնդակների հետքերը:

225 Նույն տեղում: 1914-1918 թթ. դեպքերը շարադրելիս, ի թիվս այլ նյութերի, օգտվել ենք նաև Հայկ Աճեմյանի անտիպ օրագրից (էջ 131, 134-140):

ասում է՝ նստէք այստեղ, ես գնամ բերեմ: Գնում է գիւղ, իմաց է տալիս իւրայիններին, գալիս են ու բոլորին էլ ոչխարի պէս մորթոտում են: Մենք հասանք Դաւալուի դիմաց, անցանք Դաւալու, որտեղ հանրապետական բանակն էր հաստատւած: Երկար ժամանակ մնացինք Հայաստանում, յետոյ եկայ Թաւրիզ, Սրբազանի տւած յոյսով, որ ուղարկելու է օգնական հայեր, եկայ վանք»[226]:

Ողբերգական այս իրադարձություններից հետո Թադեոս առաքյալի վանքն իր անմիջական շրջակայքով միանգամայն ամայանում է:

1921 թ. Ներսես արք. Մելիք-Թանգյանը շրջաբերական է արձակում, որով «...դիմում է Թավրիզում հաստատւած նորեկ հայերին, եթէ գտնւեն յանձն առնելու վանքի պաշտպանութիւնը, և կրօնափոխների հաւաքումը, որը կարող է ամեն տեսակի վտանգ, նեղութիւն, նոյնիսկ մահ ունենալ, նման պարագայում կը դասւեն կրօնի ու ազգի համար զոհւածների շարքին»[227]: Այդ դիմումին արձագանքողների թվում էր նաև Հայկազ Ճգնավորյանը, որն էլ իր մի քանի ընկերներով մեկնում է վանք, որտեղ «...տեսանք մի վարդապետ, կրօնափոխ եղած երկու պառաւ կին և մէկ 10-11 տարեկան տղայ: ...Վանքը շրջապատւած էր քրդերի վրաններով: ...Առաւօտեան ... մտանք վանքը: Բայց ինչ վանք. երեք օր քերել-ավելուց յետոյ, մի քիչ մաքրւեց: Թէ բակում և թէ խուցերում բաւականին մարդկային ոսկորների մնացորդ կար, բոլորը միասին թաղեցինք»[228]:

Ականատեսի վկայությամբ՝ երեք կրոնափոխներից մեկը «...գիւղի հարուստ Արշակի կինն էր՝ տիկին Անահիտը, նոր անունը չեմ յիշում: Նրան այնքան այրել էին տաք երկաթով, որ ստիպւած ցոյց էր տւել վանքի պահեստը, որտեղ սահագին ապրանք, արծաթ ու ոսկի էր պահւած: Կողոպտել տարել էին նաև Ս. Թադէի աջը: Այդ բոլորը տարել էին սարդարի պալատը, Բաղչաջուղ: Այդ դէպքերի կենդանի վկաները յիշեալ երեք կրօնափոխներն էին: Կոտորածի և թալանի ղեկավարը Աբաս փաշախանն էր»[229]:

**Թադեոս առաքյալի վանքը 1918-1946 թթ.** 1918 թ. թալանված իրերի շարքում ուշագրավ էր հատկապես վանքի պատկերազարդ ու ասեղնագործ վարագույրը (չափերը՝ 4,0 x 6,0 մ): Վերջինս, որ 1918 թ. կողոպտված եկեղեցապատկան այլ իրերի հետ տրվել էր Մակվի սարդարին՝ Ալի Ղուլի Մուրթուզա խանին, 1924 թ. զարնանը՝ սարդարի կնոջ տեսած հրաշապատում երազից հետո, վերադարձվում է մենաստանին: Վանահայր Պետրոս Ղազարյանը, թանկարժեք իրը նոր վտանգի չենթարկելու համար, մանավանդ սարդարի պահոցներում տարիներ շարունակ մնալով խոնավությունից խիստ վնասվել էր, ուղարկում է Թավրիզ՝ թեմի առաջնորդարան, որտեղ էլ որոշվում է վարագույրը վերջնական կորստից փրկելու նպատակով վաճառել: 1929 թ. աշնանը վերավաճառելու մտադրությամբ 800 դոլարով վարագույրը գնում են նյույորքաբնակ Հակոբ և Հարություն Պարոնյան եղբայրները: Գումարն էլ հատկացվում է Թադեոս առաքյալի վանքի վերաշինության գործին[230]: Վարագույրի հետագա ճակատագիրն անհայտ է:

Վարագույրը հավանաբար ստեղծվել է ԺԹ դարի կեսերին Նոր Ջուղայում կամ Իրանի հայաշատ այլ վայրում[231]:

Մեր կարծիքով վարագույրը պատրաստվել է Հնդկաստանի հայաշատ կենտրոններից մեկում (Մադրաս, Կալկաթա) ու նվիրվել վանքին: Այն կարված է մահուդի մեծ ու փոքր բազմաթիվ կտորներից, որոնք հմտությամբ միացվել են իրար և ասեղնագործվել: Պատկերներն աստվածաշնչյան բնույթ ունեն: Վարագույրի միջնամասը զույգ սյուներով բաժանված է երեք հատվածի, որոնցից յուրաքանչյուրում ներկայացված է Հիսուս Քրիստոսի կյանքի կարևոր դրվագները՝ Ծնունդ, Խաչելություն



և Հարություն: Սյուներին ու վարագույրի եզրագծով՝ բոլորակների մեջ, պատկերված են Հին Կտակարանի մարգարեները, Քրիստոսի 12 առաքյալները և ավետարանիչները: Վարագույրն ունեցել է ասեղնագործ հիշատակագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 104, հիշատակագրություն Դ):*

1918 թ. կոտորածից փրկված 10-12 հայ ընտանիք 1919 թ. վերստին վերադառնում և բնակություն է հաստատում վանքի խցերում մինչև 1946 թ.[232]:

1920-ական թվականներին հոչակավոր մենաստանի «ամայի եւ կիսաւերակ բնոյթը»[233] հարկա-

226 **Ճգնաւորեան Հայկազ Ա.**, Յուշ եւ Փաշառու, հ. Ա, Թեհրան, 1972, էջ 90-91:
227 Նշվ. աշխ., էջ 84:
228 Նշվ. աշխ., էջ 88-89:
229 Նշվ. աշխ., էջ 91:
230 **Անէմեան Հ.**, Արտազի Ս. Թադէի վանքի ձեռագործ վարագոյրը, «Բազմավէպ», 1930, էջ 307:
231 **Անէմեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 308:
232 Ըստ Վասիլ Դավթյանի վկայության:
233 Ընդարձակ Տարեցոյց Ազգային Հիվանդանոցի, Կ.Պոլիս, 1927, էջ 387:

ղրում է Ներսես արքեպիսկոպոսին 1931 թ. հուլիսի 1-ին հատուկ կոչով դիմել իրանահայությանը՝ խնդրելով «...օգնել հինաւուրց սրբատեղւոյն, ...որպէսզի հնար լինի խպառ խանգարումից ազատել»[234] վանքը: Հանգանակություն կատարելու նպատակով Պետրոս վարդապետն այցելում է Իրանի հայաշատ շրջաններ՝ Թավրիզ, Թեհրան, Նոր Ջուղա, Աբադան և այլուր, հաջողությամբ կատարում առաջադրանքը, «...հանգանակում է դրամ, եկեղեցական սպասներ և հագուստ ու կահաւորանք և վերադառնում է վանք: Հաւաքած դրամով նորոգում է վանքը»[235]:

**Թադեոս առաքյալի վանքը Ի դարի երկրորդ կեսից ի վեր**. Երկրորդ աշխարհամարտից հետո Իրանում ստեղծված ներքին խաղաղ պայմանների շնորհիվ Ատրպատականի հայոց թեմական խորհուրդը հնարավորություն է ստանում կրկին իր անմիջական հսկողության ներքո վերցնել Թադեոս առաքյալի և Ստեփանոս նախավկայի վանքերը: Որպես պահապան՝ վարձվում է Նաղդալի անունով մի թուրք, որն անցյալում աշխատել էր վանքում: Մինչև 1970 թ. նրան ընկերակցում է Վասիլ Դավթյանը, որը վանքի մերձակա գյուղերից մեկում ապրող մի մահմեդականի շնորհիվ պատանի հասակում փրկվել էր թուրք ասկյարի գնդակից:

1955 թ. (հիջրայի 1334) դեկտեմբերին № 405 հրամանագրով վանքը ներառվում է Իրանի պատմական հուշարձանների ցուցակում:

Աշխատանքները կազմակերպելու և ստացված հասույթները ճիշտ օգտագործելու նպատակով 1966 թ. օգոստոսի 8-ին ստեղծվում է վանքերին վերահասու հանձնախումբ, որը երկամյա բանակցություններից հետո՝ 1969 թ., կարողանում է հողամասեր գնել Վանք գյուղում և շրջակայքում (տարածքը վաճառվել էր դեռևս 1948 թ.), ու շուրջ 4.000 հեկտար տարածություն միացնում է ազգապատկան հողաբաժիններին: Դրա շնորհիվ վանքի մերձակա բոլոր հողերը համարվում են Հայոց թեմի սեփականությունը[236]:

1960-1970-ական թվականներին վանքի տարածքում և մերձակայքում ընթանում են հնագիտական աշխատանքներ գերմանական հնագիտական արշավախմբի կողմից (ղեկավար՝ Վոլֆրամ Կլայս)[237]:

1996 թ. մայիսին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը հանդես է գալիս Թադեոս առաքյալի վանքի անհապաղ վերանորոգությանն աջակից լինելու հայտարարությամբ՝ մասնավորապես նշելով. «1. Երբ մեր ժողովուրդը կը պատրաստուի տօնելու Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականացման 1700-ամյակը, այս շրջագծէն ներս Ս. Թադէն պետք է արժեւորուի որպէս սրբավայր ու կենդանի վկայարան հայ եկեղեցւոյ առաքելականութեան: 2. Ս. Թադէն բազմիցս ենթակայ ըլլալով աւերումներու, այսօր կը գտնուի լուրջ վտանգներու դիմաց: Հետեւաբար, պէտք է վերաշինութեան աշխատանքներուն անմիջապէս սկսիլ: 3. Ս. Թադէն Սփիւռքին մէջ ուխտագնացութեան ամենէն կարեւոր սրբավայրն է: Հարկ է վերստին լուսարձակի տակ բերել Ս. Թադէն հայ կեանքէն ներս: 4. Ս. Թադէն հայ ճարտարապետութեան սքանչելի գոհարներէն մէկն է: Պէտք է փրկել զայն ամէ՛ն գնով»[238]:

2000 թ. կառավարության առաջարկությամբ Թադեոս առաքյալի վանքը ներկայացվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ին (UNESCO)՝ համաշխարհային հուշարձանների ցուցակում ներգրավելու համար: Վերականգնման դեպքում ենթակա էր «Միրասե Ֆարհանգի» պետական կազմակերպությանը:

2005 թ. օգոստոսի 16-ին Թեհրանում տեղի է ունենում Իրանի հայկական եկեղեցիների և մշակութային հուշակոթողների պահպանման միջթեմական հանձնախմբի անդրանիկ նիստը՝ նվիրված վանքային համալիրների նորոգության հարցերին: Խնդրո առթիվ գիտամեթոդական ժողով է կազմակերպվում նաև ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունում Իրանի միջթեմական հանձնախմբի հետ համատեղ[239]:

2007 թ. սեպտեմբերի 6-9-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդհանուր պատասխանատուներից Ալքիվիատես Փրեբիսն Իրանի մշակութային ժառանգության պատասխանատուների, ճարտ. Վարուժան Առաքելյանի, Իրանի եկեղեցիների պաշտպանության պատասխանատու Շերլի Ավետյանի և այլոց մասնակցությամբ այցելում է Հովվի և Ծործորի Սբ. Աստվածածին եկեղեցիներ, Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկայի և և Թադեոս առաքյալի վանքեր՝ այդ հուշարձանները համաշխարհային ժառանգության ցուցակում ներառելու նպատակով[240]:

2008 թ. հուլիսի 2-10-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի՝ Կանադայի Քվեբեկ քաղաքում գումարված 32-րդ նստաշրջանի ընթացքում Թադեոս առաքյալի վանքը միջազգային այդ կազմակերպության ցուցակում գրանցվում է որպես Իրանի պատմամշակութային 9-րդ կոթող (ի դեպ, Իրանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի քննարկմանն էր հանձնել նաև Ծործորի Սբ. Աստվածածին և Սբ. Ստեփանոս նախավկա վանքերի փաթեթները):

---

234 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 33:

235 Նույն տեղում:

236 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 232-233:

237 **Սարգսյան Գ.**, Ս. Թադեի վանքը, «Իրան-Նամէ», 1995, № 2, էջ 29:

238 **Արամ Ա կաթողիկոս**, Պէտք է վերանորոգուի Սուրբ Թադէն 1700-ամեակէն առաջ, “Outreach”, 1996, may, p. 5.

239 Մանրամասն տե՛ս Տեղեկանք Իրանի հայկական եկեղեցիների և մշակութային յուշակոթողների պահպանման միջթեմական յանձնախմբի, «Լրաբեր», 2005, № 4-5, էջ 56-58 և № 6, էջ 10-20:

240 Մանրամասն տե՛ս «Հայ արվեստ», 2007, № 3-4, էջ 30-31:

**Թաղէի վանքի ուխտագնացությունները 1954 թ-ից ի վեր.** Իրանահայ համայնքն առ այսօր ակնածանքով ու ջերմեռանդությամբ է կապված հոչակավոր սրբավայրի հետ և օգտվելով Իրանի կառավարության հովանավորությունից՝ ձգտում է կենդանի պահել փառավոր մենաստանի հիշատակը. «Ս. Թաղէի վանքի ուխտագնացութիւնը իրանահայութեան կեանքում մի կարեւոր երևոյթ է, որ բովանդակում է՝ ազգային, հայրենասիրական եւ կրօնական վսեմ խորհուրդներ: Ուխտագնացութիւնը մի ազդակ է, ազգային մեր գոյատեւման նպաստող եւ հինը նորի հետ շաղկապող»[241]:

Ատրպատականի հայոց առաջնորդարանը, 1954 թ.-ից սկսած, Թադեոս առաքյալի տոնի օրը (հուլիս ամսվա վերջին օրերից մեկն է) կազմակերպում է ուխտագնացություն դեպի վանք՝ համայն հայության ուշադրությունը վանքի վրա բևեռելու համար: Շարժման նախաձեռնողներն էին Ատրպատականի հայոց թեմական խորհուրդն ու Ատրպատականի թեմի առաջնորդական տեղապահ Կարապետ ավագ քահանա Մանուկյանը:

Իրանը Թադեոս առաքյալի վանքին՝ որպես քրիստոնեական գլխավոր սրբատեղիի, բարյացակամ վերաբերմունք է դրսևորում և հովանավորում է ուխտագնացությունը:

Առաջին ուխտագնացությունը կազմակերպվում է 1954 թ. հուլիսի 30-ին[242]:

Ուխտագնացությունն ավելի լավ կազմակերպելու և ուխտավորների անհրաժեշտ հոգսերը հոգալու նպատակով 1966 թ. օգնստոսին ստեղծվում է հանձնաժողով, որի անդամներն էին Հայկ Ստեփանյանը, Վարուժան Առաքելյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Էմիլ Հակոբյանը և Համազասպ Ոսկանյանը[243]:

1966 թ. հուլիսի 13-ին՝ վանքի ուխտագնացության օրը, Բերիայի թեմի առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպեյանը (1956-1967) Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Վարդան ծ. վարդապետ Տեմիրջյանի և թեմական խորհրդի հրավերով պատարագում և քարոզում է վանքում և գլխավորում Սբ. մասունքների թափորը[244]:

Մեքենաների երթևեկությունը դյուրացնելու նպատակով պետության կողմից կառուցվել է ավտոխճուղի, հավանաբար որի արդյունքում էլ 1968 թ. ուխտագնացների թիվը կազմում էր 12.000, իսկ ուխտագնացությունից ստացված հասույթը հատկացվում է ոչ միայն վանքի բարեզարդման, այլ նաև Ստեփանոս Նախավկա վանքի՝ անհրաժեշտ նորոգության համար[245]:

Թադեոս առաքյալի վանքի վերջին տասնամյակների պատմության մեջ հատկանշական իրադարձություններ են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսներ Գարեգին Ա-ի՝ 1970 թ. հուլիսի 16-ի[246], Խորեն Ա-ի՝ 1973 թ. մայիսի 16-ի և Արամ Ա-ի՝ 1996 թ. հունվարի 14-ի, 1997 թ. հուլիսի 18-20-ի այցերը հոչակավոր սրբավայր[247]: Արամ Ա Վեհափառ հայրապետը երրորդ անգամ այցելում է նաև 2000 թ. հուլիսի վերջերին՝ վանքի 46-րդ ուխտագնացության և քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված տոնակատարության օրերին[248]: 2004 թ. հուլիսի 15-17-ին մեծ շուքով նշվում է վանքի ուխտագնացությունների 50-ամյա տարելիցը, որի առնչությամբ Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա կաթողիկոսը հրապարակում է Օրհնության գիր[249]: 2005 թ. հուլիսին Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի տոնակատարության օրը վանքում տեղի ունեցած ժամերգությանն ու պատարագին մասնակցում է նաև Իրանում ՀՀ դեսպան Կարեն Նազարյանը:

Հերթական ուխտագնացությունը տեղի է ունենում 1991 թ. հուլիսի 11-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ընդհ. փոխանորդ Արտավազդ արքեպիսկոպոս Թրթռյանի հովանավորությամբ, Ատրպատականի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Նշան աբեղա Թոփուզյանի ղեկավարությամբ և քահանաներ Գառնիկ Տերտերյանի ու Կոմիտաս Թորոսյանի մասնակցությամբ[250]:

1996 թ. հուլիսի 18-ին կազմակերպվում է Թադեոս առաքյալի վանքի 42-րդ ուխտագնացությունն Ատրպատականի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ տ. Նշան վարդապետ Թոփուզյանի նախագահությամբ, Հայոց թեմական խորհրդի նախաձեռնությամբ և գործադիր հանձնաժողովի գործադրությամբ: Մասնակիցների թվում էին նաև Միացյալ ազգերի կազմակերպությունից (ՄԱԿ) երկու ներկայացուցիչ և Իրանում Ավստրիայի դեսպանը[251]:

**Միմնդական բնակչության վերաբերմունքը.** Թադեոս առաքյալի վանքը մահմեդական բնակչության շրջանում մեծ հեղինակություն է ունեցել և առ այսօր ունի: Դեռևս ԺԹ դարավերջին Խ. Դադյանը

241 **Նետ (Սարուխանեան Սամուէլ)**, Ուխտագնացութի՞ւն, թէ.., «Ալիք», 1972, 17 օգոստոսի: Տե՛ս նաև **Առաքելեան Վ.**, Ս. Թադէոս առաքելոյ վանքի տարեկան ուխտագնացութեան առիթով, «Ալիք», 1995, 1 օգոստոսի, էջ 2:

242 **Ուխտաւոր** (Հայկ Ստեփանյան), Ուխտագնացութիւն դէպի Ս. Թադէի վանք, «Ալիք», 1954:

243 **Մամեան Ն.**, Ատրպատականի Հայոց թեմը, «Րաֆֆի» տարեգիրք, Ա տարի (1968), Թեհրան, 1969, էջ 392:

244 **Տէմիրճեան Վ.**, Գաւազանագիրք Լիբանանի և Սուրիոյ Հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա, Անթիլիաս, 1980, էջ 411:

245 **Մամեան Ն.**, նշվ. հոդվ., էջ 392:

246 **Առաքելեան Վ.**, նշվ. հոդվ., «Ալիք», 1995, 1 օգոստոսի, էջ 2:

247 **Արամ Ա կաթողիկոս**, Նախատօնեակ 1700-ամեակի, «Կամք», 1996, 2 փետրվարի (թիվ 2844): Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 34-36:

248 Նայիրի (պատի) օրացույց (2001 թ. յաւելուած):

249 Օրհնության գիրը տե՛ս **Թօփուզեան Նշան ծվ, վրդ.**, Հաւատքի մկրտութեան աւազանը՝ Սբ. Թադէն, Թեհրան, 2006, էջ 9:

250 «Ալիք», 1991, 13 հուլիսի:

251 «Ալիք», 1996, 22 յուլիսի, № 151, էջ 1 և 4:

գրել է. «Մահմեդական շրջակայքում միակ վանքն է սա, որ վայելում է զանգահարութեան դարաւոր իրաւունքը: Շրջակայ թուրքերը և քրդերը մեծ ակնածութեամբ են վերաբերուում դէպի սուրբ Թադէի վանքը, իբրև մի մեծ ուխտատեղի (Ղարաքիլիսայ օջաղի)»[252]:

Այդ առթիվ մեկ այլ ականատես 1905 թ. նշել է. «Վանքը մեծ հարգանք է վայելում մուսուլմանների մոտ. ես տեսել եմ, թե ինչպես էին իմ ուղեկիցները հպվում գրակալի վրա բացված Ավետարանին: Ինքը՝ Մակվի սարդարը, մոտակա ամառային նստավայրից (այն է՝ Ղարա-խաչ) Ղարաքիլիսա իր այցելությունների ժամանակ կոչնակ էր զարկում և հրամայում էր ոչխարներ մորթել սրբի պատվին («ղուրբան»-զոհ)»[253]:

**Թադեոս առաքյալի վանքի կալվածքներն ու տնտեսությունը.** վանքը եղել է միջնադարյան Հայաստանի խոշոր հողատեր հաստատություններից մեկը, ունեցել է բազմաթիվ կալվածքներ (վարելահողեր, այգիներ, արտեր, հանդեր և այլն), վանքապատկան գյուղեր, նույնիսկ քաղաքներ, շարժական ու անշարժ մեծ հարստություն: Այն ստեղծվել է դարերի ընթացքում հոգևոր և աշխարհիկ իշխանավորների, աշխատավոր ժողովրդի կողմից կատարված նվիրատվությունների, ինչպես նաև առք ու վաճառքի գործարքների շնորհիվ:

Հողային տիրույթների մասին վաղագույն վկայություններից մեկը վերաբերում է 1247 թ., երբ ավերված վանքը վերականգնելու և վանահայր Հովսեփ վարդապետ Արտազեցուն նյութապես աջակցելու նպատակով Կոստանդին Ա Բարձրաբերդցին կաթողիկոսական շրջաբերականով ընդարձակում է հոչակավոր մենաստանին ենթակա թեմի սահմանները, նոր գյուղեր ու քաղաքներ հանձնում վանքին, դրամական անհրաժեշտ միջոցներ ու եկեղեցական իրեր ուղարկում վանականներին[254]:

1562 թ. (հիջրայի 968 թ.) Թադեոս առաքյալի վանքի (Ղարաքիլիսա) և Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկայի վանքի (Դարալու Շամլըղ) միջև ծագում են հողային որոշ խնդիրներ: Վանքի հանդի, ինչպես նաև Կարիզ, Մահլազան և Կորուղ գյուղերի պատկանելության վերաբերյալ վեճը լուծվում է հօգուտ Թադեոս առաքյալի վանքի[255]: Իրանի շահ Թահմասպ Ա-ն (1524-1576) հատուկ հրովարտակով հաստատում է վանքի վիճելի հանդի՝ նախկինում գոյություն ունեցող սահմանները «Անգուրակի լեռնանցքի, Ղըրխբուլաղ գյուղի և Հենաքի գերեզմանոցի միջև», նրա ոռոգման ու հիշյալ գյուղերից հօգուտ վանքի եկեղեցական տուրքերի գանձման կարգը՝ խստիվ պահանջելով «...Դարալու-Շամլըղի (Դարաշամբի) քյադխուդաներն ու ռայաթները ոչ մի դեպքում այդ [հարցին] չմիջամտեն և հին օրենքից ու նախկին կարգից չշեղվեն»[256]: Ըստ այս փաստաթղթի՝ «...հիշյալ հանդի ոռոգման համար (հակկաբե)[257] Արքայուն գյուղի գետի վեց բաժնից երեք բաժինն է հատկացված, ուստի թող Արքայուն գյուղի ռայաթները նույն կարգով հաստատված ճանաչեն և ոչ մի դեպքում առանց իրավունքի և ապօրինի կերպով հիշյալ հանդի հողերի և մուլքերի [գործերին] չմիջամտեն, նրանց ջրի բաժնին չմոտենան և նախկին կարգից ու օրենքից չշեղվեն»[258]:

Վերոհիշյալ կալվածքների համար վեճը շարունակվում է նաև հետագայում: Հավանաբար գործին միջամտում են նաև տեղի մահմեդական իշխանավորները, ինչն էլ հարկադրում է շահ Թահմասպ Ա-ին 1575-1576 թթ. (հիջրայի 983 թ.) վերահաստատել Ղարաքիլիսայի արտի պատկանելությունը Թադեոս առաքյալի վանքին՝ նշելով նաև սահմանները. «...Ղարաքիլիսայի մազրայեն[259], որի սահմաններն են Անգուրակը, Ղրխբուլաղը, Հունաքի գերեզմանատունը, ...լեռնանցքը, Ղուշեարխաջը, Դիբակդաշը և Աղբուլաղը որպես մուլք պատկանում է այնտեղի քրիստոնյա ռայաթներին: Ուստի նույն կարգով թող կարգադրված համարեն, որ Հաջի Օղլին ու այլք չպետք է մուտք գործեն այդ մազրայեն, ոտնձգություններ կատարեն, շար'ին[260] հակառակ

252 **Խ. Վ. (Խաչիկ վրդ. Դադյան)**, Համառօտ նկարագիր Շաւարշան-Արտազ գաւառի Ս. Թադէոս Առաքելոյ վանքի, «Արարատ», 1898, յունուար, էջ 38: **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 40:

253 **Минорский В.**, նշվ. աշխ., էջ 9-10 (բնագրում՝ “Монастырь пользуется большим уважением у мусульман, я видел, как мои спутники прикладывались к евангелию, раскрытому на аналое. Сам макинский сардар во время наездов в Кара-килиса из близлежащей летней резиденции звонил в колокол и приказывал резать баранов (“курбаны” – жертва) в честь святого”). Այսօր էլ երբեմնի հայկական գյուղերում հաստատված քուրդ խաշնարած գյուղացիները մի առանձին ակնածանքով ու հարգանքով են վերաբերվում վանքին և որևէ ձևով չեն վնասում նրան: Նույնիսկ վանքամերձ հողամասերում աճած ծառերը կտրելը կամ վառելը մեղք է համարվում:

254 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 311:

255 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 61-62, նաև էջ 93-94:

256 Նույն տեղում:

257 Հակկաբե (պարսկ.) -ջրից օգտվելու իրավունք է, որը համարվել է սեփականություն և ժառանգվել է սերնդեսերունդ կամ էլ ենթարկվել է տարբեր կարգի օտարման:

258 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 61-62, 93-94: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 19: **Փափազյան Հ.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 162: **Փափազյան Հ.**, Ջրատիրության մասին դիվանական փաստաթղթերը և Շահ Սաֆիի 1638 թ. հրովարտակը, «ԲՄ», № 11, Երևան, 1973, էջ 226: Պարսկերեն բնագիրը հրատարակված է նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., հրովարտակ № 2: «Հուր», 1972, № 2:

259 Մազրա'է, մեզրե -1. արտ, հանդ, 2. մշակովի դաշտ, վարելահող: Դեռևս ԺԳ-ԺԴ դդ. բառն օգտագործվել է բնակավայր նշանակությամբ՝ հանդես գալով և՛ իբրև ինքնուրույն տեղանուն, և՛ իբրև տեղանվան բաղկացուցիչ մաս: Այստեղից էլ բազմաթիվ Մազրա/Մեզրե-ները Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում: ԺԵ դարից տերմինը ձեռք է բերել նաև կալվածք, ագարակ իմաստը:

260 Շարիաթ, շար' (արաբ.) -մահմեդական օրենքների ու հաստատված նորմերի ամբողջություն, որով առաջնորդվում էր

այնտեղ ձմեռանոց հաստատեն և նախկին կարգն ու հին օրենքը խախտելով որևէ նեղություն չպետք է պատճառեն»[261]:

1611 թ. նոյեմբերի 7-դեկտեմբերի 7-ին (հիջրայի 1020 թ. ռամազան ամիս) Իրանի Շահ Աբաս Ա-ի հրովարտակով վերահաստատվում է վանքապատկան նվիրաբերված կալվածքները, Կարիզ (Ֆարիզ), Մահլազան և Կորուղ (Ղորուղ) գյուղերի չերաղլիքի պատկանելությունը վանքին և արգելում Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկայի վանքի հոգևորականներին որևէ ոտնձգություն կատարել դրանց նկատմամբ. «Բարսեղ վանահայրը գալով աշխարհի ապավենի դուռը՝ ...միապետ Նորին Մեծության հրամանագիրը ներկայացրեց, որի հակիրճ բովանդակությունը [հետևյալն է]. «Ինչպես հետևում է... հրամանագրի ու օրինական փաստաթղթերի ու ղաբալեների բովանդակությունից, Ղարաքիլիսա մազրաեն, որի սահմաններն են Քոթուկը, Անգուրակը, Ղրխբուլաղը և Հունաքի գերեզմանատունը, որպես մուլք պատկանում է այնտեղի ռայաթներին: Նշված մազրաեի հակկաբեն Արքավուն գյուղի գետից հաստատված է եղել որպես 6 բաժնից 3-ը: Նույն կարգով որոշված համարելով՝ Արքավուն գյուղի ռայաթները չպետք է ապօրինաբար մտնեն նշված մազրաեի մուլքերն ու հողերը, հավակնեն նրանց հատկացված հակկաբեի նկատմամբ, խախտեն նրանց նախկին կարգն ու հին օրենքը, քանզի հնուց Ֆարիզ, Մահլազան ու Ղորուղ գյուղերի չերաղլիկը պատկանել է Ղարաքիլիսային, Դարաշամլուի քեդխուդաներն[262] ու ռայաթները որևէ ոտնձգություն չպետք է կատարեն ու հին կարգը չխախտեն»[263]:

1633 թ. հունվարի 12-փետրվարի 11-ին Իսմայիլն շահն արձակում է մի հրովարտակ, որով վերստին հաստատում է իր պապի՝ շահ Թահմասպի գրությունը վանքապատկան կալվածքների վերաբերյալ[264]:

1656 թ. Կեռ տեղամասում Թադեոս առաքյալի վանքին հողակտոր է նվիրում վարագնակերտցի Յաղուբի որդի Խոնդամիրը[265]:

1660 թ. նոյեմբերի 16-ին մակվեցի Դամուրը երեք թումանով վանքին է վաճառում իր բաժին հողը. «Առաջի Աստուծոյ եւ առաջի Մակուայ տօլվաթաւորացն ես Մուստաֆարի տղայ Դամուրս իմ կամով իմ փայ մուլքն առաքելաց եւ գեղարէքին ծախեցի առաքելոյն Թադէոսի ձեռամբ Սահակ վարդապետին նորին առաջնորդին... Գինն երեք թուման»[266]:

1663 թ. գնվում և վանքին է նվիրվում Յոմրիդաշ գյուղի 6 դանգ մուլքը[267]:

1674 թ. նոյեմբերի 27-ին կազմված կալվածագրով վերստին հաստատվում է վարագնակերտցի Խոնդամիրի նվիրատվությունը. «...ես Վարայգնակերտցի Եաղուբի որդի Խոնդամիրս վախըմ տուի ս. առաքելոյն Թաթէոսի Շահառուի մօտ Կեռ հողն...»[268]:

1679 թ. սեպտեմբերի 20-ին վանքի «սպասաւոր» Սարգիս Կաֆայեցին վանքի՝ Մակվում ունեցած երկու այգին և ութ կտոր վարելահողը հաստատում է որպես նվիրատվություն. «Այս է վախմ և մուլք ս. առաքելոյն՝ թէ այգետեղ, թէ վարելոյ հողն ի Մակու այս է. Անուշկավանի դիմաց այգին. այսպէս ութ կտոր հող, երկու այգի. ստորագրութիւն – ես՝ Սարգիս վարդապետ Քաֆայեցի ի սպասաւոր ս. առաքելոյն...»[269]:

Նույն թվականին կազմված պարսկերեն համախոսականներից մեկի համաձայն՝ հաստատվում են Մակվի մահալի Յոմրիդաշի Մուհամմադքենդ, Ղարաքիլիսայի Քոնդեզքենդ, Ռեյհանլուների Շուրաք և Դիբաքի Շամսիքենդ մեզրեները՝ գնված Սարգիս Կաֆայեցի և Սահակ Մակվեցի վանահայրերի կողմից[270]:

1680 թ. հաստատվում են վանքի կալվածքները Նուշիկում (Քեշիշլիք), Վարագնակերտում և Մակվում[271]:

1684 թ. սեպտեմբերի 29-ին վանահայր Սարգիս Կաֆայեցին հաստատում է մակվեցի Մովսեսի դուստր Նազլուի՝ մենաստանին հող նվիրելու գործարքը, որը կնքվում է Մակվի Սբ. Վարդան եկեղեցում. «...ես Մովսէսի դուստր Նազլուս առաջի Աստուծոյ և առաջի մեր առաջնորդ Սարգիս վարդապետին և առաջի Մակուայ տօլվաթաւորացն ի մէջ ս. Վարդանայ իմ հօր Մովսէսի բաժին մուլքն ...վա-

հոգևորականների կրոնադատական ատյանը: Շար'ի դատարաններում, ի թիվս այլ հարցերի, քննում էին տնտեսական խնդիրների շուրջ քաղաքացիների միջև առաջացած վեճերը:

261 «Հուր», 1971, № 2: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 227, հրովարտակ № 13: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

262 Քյադխուդա, քեթխուդա (պարսկ.)-գյուղավագ, տանուտեր, ռես: Նույն գյուղում կարող էին լինել մի քանի քյադխուդաներ: Նրանք գյուղի ավագների խորհրդի անդամներ էին, այդ անունը ստացել էին տանուտերի պաշտոնը զբաղեցրած ժամանակ և հետագայում՝ ազատվելուց հետո էլ սովորույթի ուժով շարունակում էին պահպանել այն:

263 «Հուր», 1971, № 3-4: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 224, հրովարտակ № 11: Նյութի բնագրի թարգմանությունը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

264 **Կոստիկյան Ք.**, նշվ. հոդվ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, էջ 356:

265 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 13:

266 Նույն տեղում: Տարօրինակ է, որ 1660 թվականի ներքո վանքի առաջնորդ է հիշվում Սահակ (Իսահակ) վարդապետը, երբ բազմաթիվ սկզբնաղբյուրներից հայտնի է, որ նա առաջնորդությունն ստանձնել է 1663-1665 թթ. միջակայքում: Ենթադրվում է, որ թվագրման վրիպակ կա:

267 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 120-121: Նյութի բնագրի թարգմանությունը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

268 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 13:

269 Նույն տեղում:

270 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 189: Նյութը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

271 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 139: Նյութը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

խըմ արի ս. առաքելոյն...» (կնիքի վրա եղել է՝ «Քի ծառայ Սարգիս վարդապետ»)[272]:

1685-1686 թթ. Ղարաքիլիսա գյուղն ամբողջությամբ նվիրվում է վանքին[273]:

1694 թ. ապրիլի 5-ին կազմված կալվածագրերից մեկի համաձայն՝ «...Ես՝ Մակուեցի Այտիշենց ազգէն, Ասլանենց Մկրտչի թոռն, և Պապումի որդի Կիրակոսս... յօժար կամօքս վախըմ արարի Ղուքլունճանի փայն, և Նուշկայ դէմի գլգլոտ այգին, մուլքն և ագարակն, որ վանքին վախմ լինի և ուտեն մասուլն...»: Կողքին՝ «Ես՝ Իսահակ վարդապետ առաջնորդ ս. առաքելոյն, Այտիշենց Կիրակոսի վկայութեամբ մոհրեցի», ապա այլ կնիքներ՝ Սարգիս, Մատթեոս Ջուղայեցի, խոյեցի Պետրոս ստորագրություններով[274]:

ԺԷ դարի կալվածագրերից մեկով ևս հաստատվում է Թադեոս առաքյալի վանքին կատարած նվիրատվությունը. «Ես՝ լուսահոգի Մահդասի Սելամի քոյր Սինաս և փեսայ Խաչատուրս գիտեմք և վկայեմք, որ մահտեսի Սելամն... իւր առած այգին վախմ արուց ս. Թադէոս առաքելոյ... և նա եղև անյայտ... Վասն որոյ մեք վերոգրեալքս... այգին վերստին վախմ արարաք վանից սրբազան առաքելոյն...»[275]: Վկաների թվում եղել են նաև Խոյի քահանաներ տեր Հովհաննեսը, տեր Մարգարը, տեր Գաբրիելը, սույն քաղաքի ռես Բաղալը և այլք:

ԺԷ դարի անթվակիր կալվածագրերից մեկի համաձայն՝ «Ես՝ Մակուեցի Բաղդասարի որդի Վարդումս իմ կամօքս... իմ հայրենական մլքերն... յանձնեցի ի դուռն Թաքէոսի առաքելոյն, ի ձեռն ի Սահակ վարդպետին: Դարձեալ մեր երկու այգին հասանի ձեռն Սահակ վարդպետին»[276]:

1704 թ. կազմված վավերագրերից մեկը ևս մի նվիրատվություն է արձանագրում վանքին. «Մեք Վարազնակերտցի տօլվաթաւորքս, սարդարս որդի Աղաջանի, Կուլամիրս... Ղազարս... Գրիգորս... Թարխանս... միաբանք..., որ յառաջ տված էր վանիցն կրկին հաստատեցինք...»: Կնիք՝ «Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի ծ(ա)ռ(ա) Սարգիս վարդապետ». տակը գրած է. «Ես՝ Սարգիս վարդապետս առաջնորդ ս. առաքելոյն Թադէոսի...»: Ապա տրված են Աստվածատուր վարդապետի, տեր Ներսեսի, Խոյի Ստեփանոս վարդապետի, խոյեցի Պետրոս վարդապետի և ռես Մուրատխանի ստորագրությունները[277]:

Նույն թվականի հոկտեմբերի 10-ին կազմված մի կալվածագրի համաձայն՝ «...Մելիք Պնիկի դստերքս՝ Էքարս, Խաթունս մեր հօրէն մնացած Մակուայ այգիքն (ք. այգի)... յօժարութեամբ տվաք վախմ ի դուռն Թադէոս առաքելոյն...»: Վերջում տրված են նախորդ կալվածագրի անձանց և Անձուկ գյուղի հասարակության ստորագրությունները[278]:

Ալեքսանդր Ա կաթողիկոսի՝ 1707 թ. արձակած հրովարտակով վանքապատկան էին Թավրիզը, Մուժամբարը, Տուխուրկանը, Մարաղան, Խոյը, Չորսը, Մակուն և շրջակա բոլոր գյուղերը[279]:

Թավրիզի Մելիք-Թանգյան թանգարանում պահվող պարսկերեն № 55 վավերագրի համաձայն՝ վանքի առաջնորդ Մատթեոս վարդապետ Սպահանցին 1721-1722 թթ. (հիջրայի 1134 թ.) երկու թումանով Թահունե Խարաբե Բոզորգում մի ջրաղաց է գնում և նվիրում վանքին[280]:

1738 թ. հոկտեմբերի 8-ին իր գնած Ղուռուչայի այգին վանքին է նվիրում աստապատցի Արզումանի որդի Աստվածատուրը. «...Ես Աստապատեցի Կուսանց Մեհրապի որդի Յուսէփս և ես Պօղոսի կին Տուփլումս... ծախեցինք... Ղուռուչայի այգին... ս. Թաքէոս առաքելի անուամբն մեր Արզիմանի որդի Աստուածատրին... որ վախուց արեց ս. Թաքէոս առաքելուն ԺԵ (15) թումանն...»[281]:

1746 թ. վանքապատկան մի արտի համար համախոսական է կազմվում[282]:

1748 թ. Իբրահիմ շահը մի հրովարտակ է արձակում՝ հաստատելով Ղարաքիլիսա գյուղի վանքապատկան լինելը, վանքի հարկերից ազատվելը և վանքի վրա հարձակումների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցույց տալը. «...Մինաս խալիֆայի հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ ու անսահման գթասրտությամբ [հաշվի առնելով] նրա նվիրվածություննն եւ ծառայությունները, նաև այն, որ ....Ղարաքիլիսա գյուղը եղել է հիշյալ վանքի վակֆը, իսկ գյուղի բնակիչները, լինելով նրա սպասավորները, մուաֆ են եղել դիվանի մութավաջջեհաթից, մեր արքայական Մեծությունը նույնպես կարգադրեցինք նրանց դիվանի պարտավորություններից, ինչպիսիք են ջիզյան, այլ մութավաջջեհաթն ու սադերաթը, ավարիզաթը, չոբանբեկին և այլն, մուաֆ ու մուսալլամ ճանաչել, որպեսզի իրենց հարկերը հիշյալ մուլքերի եկամուտների հետ ծախսեն նշված վանքի ու նրա բնակիչների վրա: Բացի հիշյալ գյուղից, որտեղ էլ որ այդ վանքի վակֆային մուլքերը գտնվելիս լինեն, նույն կարգով մուաֆ ու մուսալլամ հայտարարեցինք: Երևանի ամիլները թող հիշյալ գյուղի ու նշված վանքի այլ վակֆային մուլքերի հարկերը իրենց աբվաբ-ե ջամից հանեն և ոչ մի դինար չպահանջեն: Սուրհանդակները, ճանապարհների հսկողներն ու հարկա-

272 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 13:

273 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 127: Նյութը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

274 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 13-14:

275 Նշվ. աշխ., էջ 15:

276 Նշվ. աշխ., մասն Բ, էջ 15-16:

277 Նշվ. աշխ., էջ 14:

278 Նույն տեղում:

279 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 254:

280 **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 231, հրովարտակ № 16:

281 **Թօփճեան Յակոբ,** նշվ. աշխ., մասն Բ, էջ 14:

282 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 22:

հավաքները թող վանքի առևտրական կամ այլ գործերով տարբեր կողմերը գնացող-եկող սևագլուխներին ճանապարհին ու վիլայեթներում չնեղեն: Քանի որ հիշյալ գյուղը գտնվում է Ռումի ու Քրդստանի սահմանագծի վրա, և հաճախ ավազակներն ու ավարառուները ոտնձգություններով նեղում են նրանց, ուստի Երևանի, Խոյի ու Դումբուլի հաքիմները թող նրանց ներխուժման ժամանակ [վանքին] անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն: Գնացող-եկողներից թող առանց դատական հիմքի դինար ու հացահատիկ չպահանջեն ու չանհանգստացնեն: Որտեղ էլ որ այդ գյուղից ցրվածները լինեն, ոչ ոք չպետք է նրանց ետ բերելուն խոչընդոտի, այլ պետք է գաղթեցնի նրանց հին բնակավայրը, որպեսզի [այնտեղ] բնակվեն...»[283]:

1749 թ. հոկտեմբերի 23-ին Ուռջինանց Սարգսի որդիները վանքի առաջնորդ Մինաս վարդապետին 10 թումանով մի տուն են ծախում. «...Մեք Ուռջինանց Սարգիսի որդիքս ծախեցինք մեզ ռաաթ տված տունս իւր չորից հատերօվն ս. Թաթէոսի առաքելոյ յառաջնորդ Մինաս վարդապետին 10 թուման, որոյ կէսն է Ե (5) թումանս»[284]:

1758 թ. հուլիսի 14-ին մահտեսի Սելումը վանքին է նվիրում իր գնած այգին. «...ես մահտեսի Սելումս իմ այգին վախուպ արի ս. առաքելուն Թադէոսի...»[285]: Գործարքը կնքվում է Խոյի Սբ. Սարգիս եկեղեցում: Սելումի մահից հետո (վավերագրում տարեթիվը չի նշված) նրա քույր Սինանն և վերջինիս ամուսինը՝ Խաչատուրը, վերստին հաստատում են նվիրատվությունը և հնարավոր ոտնձգություններից այգին զերծ պահելու համար պայման կապում. եթե իրենք կամ ազգականները խախտեն գործարքը, ապա պարտավոր են խանին վճարել 15 թուման, իսկ եթե վանքի միաբաններից կամ առաջնորդներից որևէ մեկը վաճառի կամ գրավ դնի ընծան, «...զպատիժն Կայենի և Յուդայի առցէ» (անեծքի ընդունված ձևակերպում, որը բազմիցս հանդիպում է հայկական միջնադարյան վիմագրերում ու ձեռագրերում): Վավերագիրը հաստատել են Խոյի քահանաները և ռես Բաղալը (տեքստում՝ Պատալ)[286]:

Էջմիածնի կաթողիկոսական աթոռին ենթակա թեմերի ցուցակում, որը կազմել է Երեմիա Օշականցին, 1765 թ. Արտազի թեմը ներկայացված է հետևյալ կերպ. «Թադէոս Առաքելոյ վանից թեմն. Բայազիդ իւր նահանգովն. Սահաթափոս իւր գիւղորէիւն բաց ի Սուրմարիոյ և ի Ալէթլուոյ. Խօյ իւր նահանգովն. Սլդուզ իւր նահանգովն, Մարաղայ իւր նահանգ, Յուշնի, Մակու իւր գիւղէիւն, Չօրս»[287]:

1772 թ. նոյեմբերին խոյեցի մահտեսի Եղիշի եղբայր Սաֆարը Թադեոս առաքյալի վանքին է նվիրաբերում հայրական տան գոմի տեղը. «Ես՝ մահտեսի Եղիշու եղպար Սաֆարս իմ հայրենական տան կոմի տեղն, որ է իմ բաժինըն, վախմ արի ս. Թաթոս առաքելուն և իմ կողակից Նուպարի հոգէբաժին...»[288]: Վկաների թվում հիշատակվում է նաև Խոյ քաղաքի ռես Բաղալը:

1779 թ. մարտի 4-ին կազմված կալվածագրերից մեկի համաձայն՝ «...Կօհրօվանց Ճհանի որդի Պատովս... կրկին վախմ արի ս. առաքելուն (այգին)... և այս եղև ի յառաջնորդութեան գերայիռչակ ս. առաքելուն Թաթէոսի տ(եառ)ն Եսայիաս աստուայծաբան մաքրակենցաղ վարդապետին և նորին ս. վանից բազմաշխատ միաբան Գէորգ գերզգօն վարդապետին....»[289]:

1785 թ. օգոստոսին ղափանցի մահտեսի Օհանեսն ու կինը՝ Թագուհին, վանքին են նվիրում Խոյ քաղաքի Սբ. Սարգիս եկեղեցու թաղամասում գտնվող իրենց տներն ու տնամերձ այգին[290]:

ԺԸ դարի 80-ական թվականներին մեծահռչակ վանքը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու նպատակով գործի է լծվում առաջնորդ Իսահակ եպիսկոպոս Փառակեցին: Պայքարը վանական կալվածքները վանքին վերադարձնելն էր, որոնց ապօրինաբար տիրություն էին անում աշխարհիկ անձինք. «Յուժ չարաչար թշնամի Բոր գիւղացիք սրբոյ վանքիս Թադէոսի առաքելոյն այլ առաւել չարագոյն չիք նզովեալ որդի Մանուչարն և անիծեալ Նեռան որդի Մկրտիչն միշտ չարութեամբ ի ժամանակի Եսայի վարդապետին իբրև զգազան կերեալ էին և պէսպէս փորձանս յարուցեալ ի վերայ սրբոյ վանքին ձեռամբ Մակուայ սուլթանին: Եւ երբ եկն Փառակեցի տեառն Իսահակ շինարար վարդապետն յառաջնորդ, որքան կարաց կարկեաց զբերանս չարեաց և այնու պատճառաւ շատ ձանձրութիւն կրեաց ի չարեաց Խ (40) տարուան խանգարեալ բարին կամէր ի լոյս ածել ողորմելին»[291]:

1787 թ. է՛լ առավել սրված հակամարտության հաղթանակող կողմը վանքի շահերի պաշտպան առաջնորդն էր. «...հնոց ժամանակաւ բնակեցեալքն ի գիւղն ժանդաբարոյ մարդիքն տուրս հալածեաց տնով և նզովիւք փակեաց և բազմակնքով կանոնադրեաց, զի մի մտցեն ի գիւղն սրբոյ վանքին և ի թուլադրութենէ յառաջնորդաց: Չարք ոմանք աստի և անտի փախուցեալ մարդիք, քան զի տեսցէ

283 **Կոստիկյան Ք.**, նշվ. հոդվ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, էջ 357:

284 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 23:

285 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 14: Հմմտ. **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 490, ծանոթ. 20:

286 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 15:

287 ԴՀՊ, գիրք Գ. Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 803:

288 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 15: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 490, ծանոթ. 20:

289 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 15:

290 Նույն տեղում: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Արտազի վանքը, էջ 53: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 490, ծանոթ. 20: Է. Հակոբյանը (Ս. Թադէի վանքը, էջ 23) վավերագիրը սխալմամբ ներկայացնում է 1765 թ. տակ (թեև Փառակեցի առաջնորդի անունը ստույգ է հիշատակում):

291 ՄԺԱ, էջ 315, ծանոթ. 38:

կանոնագիրն տէր Իսահակ շինարար յառաջնորդ վարդապետին և ինքն զգուշ լինիցի: Վասն որոյ ի սորանէ յառաջ դէտըն միաբանից շատ գիւղէն էր եղեալ և որք լաւ տեղ և արտօրեաք սրբոյ վանքին, զայն եկամուտ ոչինչ, աշխարհականքն էին տիրապետեալք այնու կողմանէ աղաղակէին տգէտքն թէ՝ մեր է և նախնեաց մերոց մեզ մուլք մնացեալ է: Եւ այնու վշտացեալ ողորմելին աւուրս հինգ մինչև Ծ (50) թման խարճեաց և նոցա վարն և վաստակն առաւ եւ տնով դուրս արաւ, գնացին Մակու՝ Մանուչարն, որ Խօյայ էր եկաց նախնին, ըռէս Սարգիսի որդիքն, Խառակունսայ, Եաւրին Սալմաստու, ինչևիցէ շատ վնասակար էին, մերժեցան աստուծով...»[292]: Խլված հողերը վանքին վերադարձնելու վերաբերյալ կան նաև այլ մանրամասներ[293]:

1797 թ. կազմված կալվածագրերից մեկի համաձայն՝ Մարգարը՝ Վարդանի որդին և Մինասի թոռը, իր «...յօրաբաժին մուլքն ծախեցի ս. Թաթէոսի առաքելոյ վանիցն առաջնորդ վրդ-ին ԵՌ (5000) դին., որ կէսն կանէ Ծ (50) շահի, ձեռամպ երեցփոխան Եղոյին...»[294]:

Ըստ 1806 թ. փետրվարի 20-ին կազմված կալվածագրերից մեկի տեղեկության՝ «...Յովսէփի որդի Նազարս... յայգիս վախուբ էի արարեալ ս. առաքելոյն Թաթէոսի, զկնի քանի ամաց կոտորեալ էին բոլոր զծառսն և զտունկսն ի ժամանակս խառնակութեան զօրացն պարսից և հիւսիսայնոց... ընծայեցի... Բ (2) հատ տեղ ևս... յառաջնորդութեան Սիմէօն վարդապետի...»[295]:

1808 թ. թագաժառանգ Աբաս-Միրզայի՝ Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Սիմեոն վարդապետին ուղղված հրովարտակում մասնավորապես նշվել է. «Քրիստոնյա մեծամեծներից լավագույն, պատվարժան բարձրաստիճան Սիմոն խալիֆայի ու Ղարաքիլիսայի մահալի ռայաթների հանդեպ ունեցած մեծ ողորմածությամբ կարգադրեցինք, որպեսզի վերոհիշյալ պատվավոր [անձը] նշված մահալի բոլոր հայերին ու ռայաթներին, որոնք նախորդ տարիներին ցաքուցրիվ են եղել, հավաքի և անհրաժեշտ ճիգ ու ջանք չխնայելով հիշյալ մահալի բարեկարգման ու բարգավաճման համար, այնտեղի բոլոր ռայաթների ու հայերի հետ լավ վարվի: ...Բաբաջուքի ու շրջակա մյուս մահալների պատվարժան մուբաշիրներին կարգադրվում է ոչ մի դեպքում չմիջամտել ու Ղարաքիլիսայի ջրի ու մուլքի նկատմամբ ոտնձգություններ չկատարել»[296]:

1809 թ. հուլիսին հաստատվում է մահտեսի Ստեփանի և վանահայր Սիմեոն վարդապետի միջև կատարված տնտեսական գործարքը. «...մահտեսի Եաղիշու որդի մահտեսի Ստեփանս ծախեցի Թադէոսի առայքելու վանիցն... ի առաջնորդութեան Տ(եառ)ն Սիմէօն վարդապետին (իմ տներն) Գ(3) թուման ԵՌԺ (5010) շահի...»[297]:

Սիմեոն արքեպիսկոպոսի օրոք վանքին կալվածքներ են ընծայվում[298]:

1814 թ. Աբաս-Միրզայի հրամանագրով Թադեոս առաքյալի վանքին շնորհվում է հարկազանձումների իրավունք, որն էլ մի քանի անգամ վերահաստատվում է հետագայում[299]:

Նույն թվականին Աբաս-Միրզայի հրամանով Ղարաթուլքի գյուղն ամբողջությամբ նվիրվում է վանքին. «...Խոյի բեկլարբեկի Ֆաթհալի խան Ղաջարը բարձր մտքի պատվավոր բարեհաճությամբ հուսադրված իմանա, որ օրերս քրիստոնյաներից լավագույն Ղարաքիլիսայի խալիֆայի (իմա՛ Սիմեոն վարդապետ, Ա. Հ.) հանդեպ անսահման ողորմածությամբ Բաբաջիքի Ղարաթուլքի գյուղը, որտեղի դիվանի մութավաջջեհաթը 40 Թավրիզի թուման է, նրան հանձնեցինք, որպեսզի հետևելով այնտեղի հողագործությանը, նրա եկամուտները ծախսի իր ապրուստի: Այնտեղ մութավաջջեհաթը ըստ կարիքի ամեն տարի անփոփոխ կերպով ըստ մեր դիվանի հավալեին հանձնի արբաբ-ե հավալեին: Խոյին ենթակա բարեբախտ այդ մահալը թող համարելով նրան աբվաբ-ե ջամ՚ արված որոշված գումարից ավելի ոչ մի դինար ու հատիկ չպահանջեն ու չգանձեն»[300]:

1815 թ. Աբաս-Միրզայի արձակած մեկ այլ հրամանագրով վերստին հաստատվում է Ղարաթուլքի գյուղի նվիրատվությունը Թադեոս առաքյալի վանքին. «...Ղարաքիլիսա վանքի նկատմամբ հարգանքն անհրաժեշտ է, իսկ նրա վանականների ու քահանաների մասին հոգ տանելը գթառատ մտքի գաղտնիքը, ուստի այս թոնգուզ յըլ տարվա սկզբից, Ղարաթուլքի գյուղը, որ Բաբաջիքի բոլուքի գյուղերից է և հետևյալ կերպով ջամ՚ արվել դիվանին, հանեցինք այդ բոլուքից և շնորհեցինք իմաստուններից լավագույնին, որպեսզի այդ գյուղի եկամուտնե-

292 ՄԺԱ, էջ 314, ծանոթ. 38: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 236, № 22:

293 «Թւին ՌՄԼԶ (1787)-ին Փառակեցի տէր Իսահակ շինարար յառաջնորդ վարդապետն գեղէն դուրս վարեաց ըռէս Սարգիսի որդիքն՝ Մանուչարն և Սալմաստցի Եաւրին և նզովիւք փակեաց, որ ոչ կարիցե ասել եկօղ և բնակօղքն թէ՝ այս արտս և կամ այս ինչ տեղ իմ է, բոլորն հողն և ջուրն վանքին [է]» (ՄԺԱ, էջ 308):

294 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 15: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 24:

295 **Թօփճեան Յ.**, նույն տեղում: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, նշվ. աշխ., էջ 25:

296 ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 3945 ա: Նյութի բնագրի թարգմանությունը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

297 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 15:

298 Նշվ. աշխ., էջ 15-16:

299 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 138-140, 149: Նյութի բնագրի թարգմանությունը մեզ է տրամադրել պարսկագետ Ք. Կոստիկյանը:

300 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 138: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

րը տնօրինի ու ծախսի հիշյալ վանքի ապրուստի ու նորոգման վրա...»[301]:

1820 թ. պարսից թագաժառանգը մի նոր կալվածագիր է արձակում՝ նշելով. «...նախկինում Ղարաքուլքի գյուղը որպես ռոճիկ հանձնվել էր քրիստոնյա մեծամեծների առաջնորդ Ղարաքիլիսայի խալիֆային: Օրերս վերոհիշյալը նոր ռաղամ խնդրեց: [Ուստի] կարգադրվում է բարձրաստիճան անձին նախկինի պես գյուղը վերոհիշյալին տրամադրել, որպեսզի այդ գյուղի մութավաջջեհաթը որպես իր ռոճիկ պահանջի ու ստանա»[302]:

1824 թ. վանահայր Բարսեղ եպիսկոպոսը կազմում է մի ցուցակ, որից հայտնի են դառնում վանքի ենթակայության ներքո գտնվող կալվածքները: Դրանք են՝ ութ հողային տարածքներ Դեհխարղանում, Խոյ քաղաքում և նրա մերձակա «Քէնէյի, Յոնջալըխ» վայրերում, ինչպես նաև մեկ տասնյակից ավելի վարձով տրվող տներ Խոյում և Բայազետում (ցուցակում նշված են նաև վանքին նախկինում պատկանող կալվածքները՝ Խոյի մոտ գտնվող «Փեռայ և Քէնէյի» և Չորսի նահանգի «Տիզէ» գյուղերում)[303]:

1828 թ. հոկտեմբերի 11-ին բայազետցի տեր Գաբրիելի որդին՝ մահտեսի Հարությունը, կինը՝ Աննան, «...ի ժամանակս Տեառն Բարսեղ արքեպիսկոպոսին և առաջնորդին ս. աթոռոյն սրբազան առաքելոյն Թադէոսի, մեք մեր յօժար կամօքն զմեր Ե (5) կտոր տունն, և առաջի եղեալ խամն, վախուպ և կտակ արարինք Սրբազան առաքելոյն Թադէոսի վանիցն և... թասլիմ արարինք առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսին...»[304]:

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմից և Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուց հետո պարսկահայերի գաղթը կասեցնելու նպատակով թագաժառանգ Աբաս-Միրզան ձեռնարկում է որոշ քայլեր, որոնցից մեկը Քիլիսաքենդ գյուղի ընծայումն էր Թադեոս առաքյալի վանքին[305]:

1830 թ. տվյալներից մեկի համաձայն՝ Բայազետ քաղաքը պատկանում էր Թադևոս առաքյալի վանքի եպիսկոպոսի գլխավորած թեմին[306]:

1835 թ. Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի հանձնարարությամբ Գալուստ աղա Եղիմիրզյանցը վաճառում է Ատրպատականի Դուխուրգան գյուղում գտնվող աթոռապատկան այգին, «թէ զբաժինն Էջմիածնի և թէ զմասն սրբոյ վանիցն Սրբոյն Թաբէոսի առաքելոյն»[307]:

ԺԹ դարի առաջին կեսին վանքն ուներ «...իր սեփական գիւղերը և կալւածները, որոնցից ստացւած արդիւնքը կարող էր լիուլի բաւարարութիւն տալ թէմի բոլոր պահանջներին: Նա ուրիշ խօսքով եղել է մի հարուստ և ընդարձակ միաբանութիւն, իր բոլոր պարագաներով և յարմարութիւններով»[308]: Վանքին էր պատկանում Մակվի և Խոյի գավառներում գտնվող 15 գյուղ: Դրանք էին՝ Մըզրա, Յումրի-դաշ, Վանքի գյուղ (Ղարաքիլիսա), Դիպակ-դաշ, Շաբուկ, Աղբուլաղ, Ղարաքուլքի, Սոնա-բուլաղ, Աղդաշ, Մահլազան, Ղորուղ, Նուշիկ, Քյոհրեվան, Չորս, Ռահան[309]: Բացի նշյալ բնակավայրերից՝ «...վանքը ունեցել է զանազան տեղերում մի արտ, մի այգի, մի տուն և այլն, ինչպէս օրինակ՝ Դիզա գիւղում (Խոյ գաւառ) ունէր մի տուն և մի այգի, Չորս գիւղում «բաստի» հողը, Փեռա գիւղի մէջ մի անտառ, Խոյ քաղաքում մի այգի և տուն..., Հաֆթվանում (Սալմաստի գաւառ) մի քանի արտեր, Խոյում, ինչպէս և Մակուում ունեցել է մի քանի ձիթհան գործարաններ: ...Բացի վերև առաջ բերւած գիւղերից և սեփականութիւններից՝ վանքը ունէր լծկան մի քանի զոյգ եզներ և գոմէշներ, գութաններ, սայլեր և ջրաղաց. նախիրներով տաւար, հօտերով ոչխար էր դուրս գալիս վանքից»[310]:

Ցավոք, ինչպես վանահայրերի ոչ հոգատար և անտարբեր վերաբերմունքի, այնպես էլ թալանի հետևանքով վանքը, 1840-1850-ական թվականներից սկսած, հայտնվում է անմխիթար դրության մեջ (ի դեպ, այդ վիճակը պահպանվում է մինչև 1901 թ.). «Քիւրդերի և թուրքերի կողոպուտները և ասպատակութիւնները, առաջնորդարանի տեղափոխութիւնը և պարսկահայերի գաղթը, վանքի վիճակը դարձնում են անմխիթար և աննախանձելի. պակաս մնացած տեղն էլ գալիս են լրացնելու վանքի վանահայրերը: Իրար յետևից գալիս են մի քանի վանահայրեր, մէկը միւսից ապիկար, մէկը միւսից ընչաքաղց և խայտառակ: Ճզմում, հիւծում են հարուստ վանքը և թողնում են դատարկ և չոր քարերը, որոնք ողբում են ցաւալի իրականութիւնը»[311]:

1851 թ. Աբաս-Միրզայի արձակած հրովարտակով արգելվում է վանքապատկան հողատարածությունների օգտագործումը խաշնարած ցեղերի կողմից. «...անգլիական դեսպանի զեկուցման համաձայն Ղարաքիլիսայի մարգագետիններն ու արո-

301 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 139: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

302 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 140: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

303 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 492ա, էջ 1-2: Տե՛ս նաև **Կոստիկյան Ք.**, նշվ. հոդվ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. XXV, էջ 353:

304 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 15:

305 **Րաֆֆի**, Ճանապարհորդություն Պարսկաստանում, ԵԺ, h. 8, Երևան, 1957, էջ 323 (ծան. 1):

306 Missionary Researches in Armenia by **Eli Smith, Harrison Gray Otis Dwight, Josiah Conder**, London, 1834, p. 415.

307 Կալվածագրեր եւ տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, կազմեց Հար. Աբրահամյանը (այսուհետև՝ **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, համապատասխան էջերով), Երևան, 1941, էջ 106:

308 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 30:

309 «Արարատ», 1898, էջ 38-40: Տե՛ս նաև **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 30-31:

310 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 30-31:

311 Նույն տեղում, էջ 35:

տավայրերը շրջակայքի վրանաբնակ ցեղերը գալիս ոչնչացնում են, որը հակառակ է բարձրագույն ամենալուսավոր մտքին: Ուստի կարգադրում ենք, որպեսզի այս հպատակեցնող ռաղամին համապատասխան, ցեղերից, վրանաբնակներից ու այլ ոչ մեկը նշված արոտավայրերի հետ գործ չունենա և երբեք չգան ու այնտեղ բնակություն չհաստատեն, այլ թողնեն [դրան] հիշյալ վանքի տրամադրության տակ: Որոշվեց, որ խորամիտ ու բանիմաց քրիստոնյա աստվածաբանների գլխավոր, քրիստոնեության օրենքներով առաջնորդվող Հիսուսի իմաստուն այրերից լավագույն Նիկողայոս խալիֆան (տարեթվի մեջ առկա է ակնհայտ շփոթ, քանի որ Նիկողայոս Կարբեցին վախճանվել է 1850 թ.) մշտապես պետք է տնօրինի վանքի մարգագետիններն ու արոտավայրերը, թույլ չտա որևէ մեկին այնտեղ մուտք գործել ու ոտնձգություն կատարել»[312]:

Նույն թվականի աշնանն Ատրպատականի հայոց առաջնորդ Սահակ Սաքունյանցը հատուկ գրությամբ տեղեկացնում է Ներսես Աշտարակեցուն, որ Նիկողայոս Կարբեցու մահից հետո վանքի «վեքիլ» Թադեոս վարդապետը և նրա եղբայր Հովսեփ միաբանը մենաստանի կայքն ու գումարները տնօրինելու նպատակով վերցրել են վանքում պահվող մուրհակներն ու հաշվետոմարները, յուրացրել նախկին առաջնորդին պատկանող իրերն ու դրամը[313]: 1852 թ. մարտի 7-ին Թիֆլիսից առաջնորդին ուղարկած կոնդակում կաթողիկոսը պահանջում է ետ վերցնել այդ հույժ կարևոր փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում դիմել Թավրիզում ռուսական հյուպատոս Ն. Վ. Խանիկովի աջակցությանը և մանրամասն զեկույց ներկայացնել Թադեոս առաքյալի վանքի տնտեսական վիճակի, հողային տիրույթների, վանքապատկան գյուղերի ու նրանց բնակչության, վանքի ստացած հասույթների ու կատարած ծախսերի, միաբանության թվաքանակի և կարևոր այլ հարցերի մասին[314]: Սահակ եպիսկոպոսն առաջադրված խնդիրների մասին ծանուցում է կաթողիկոսին 1852 թ. օգոստոսի 20-ին: Նա միաժամանակ ներկայացնում է Ղարադաղի հայկական այն գյուղերի ցանկը, որոնց բնակիչները վերջին մեկ տարում տարբեր առիթներով ավելի քան 513 թուման ընդհանուր գումարի չափով ընծայաբերություններ են կատարել Թադեոս առաքյալի վանքին[315]: Ի դեպ, մինչ այդ՝ 1852 թ. հուլիսի 12-ին, Թավրիզից Սահակ եպիսկոպոս Սաքունյանցը շնորհակալագիր է ուղարկում Ղարադաղի բնակչությանը վանքին կատարած այս նվիրատվությունների առիթով[316]:

1854 թ. արձակված հրովարտակներից մեկով վերստին հաստատվում է վանքի իրավասությունը Ղարաքուլքի գյուղի նկատմամբ. «...Խոյի Բաքաջիքի բոլուքի Ղարաքուլքի գյուղի մալիյյաթը առանձնացվել ու հատկացվել էր Ղարաքիլիսայի ծախսերի համար և այնտեղից ոչինչ չէր պահանջվում, անցյալ տարի քրիստոնյա իմաստունների ընտրյալ ու հոգևորականների առաջնորդ Ատրպատականի մամլաքյաթի հայերի խալիֆա Սահակ Սաքիմյանովի (իմա´ Սահակ Սաքունյան, Ա. Հ.) խնդրանքով երկու աշխարհների հոգի, արքայական սրբազնագույն ու փառահեղ սարքարը հիշյալ գյուղի հաստատված մալիյյաթը... ըստ գործադրության ենթակա պայմանագրերի նախկին նախկին տարիների պես շնորհել ենք այդ վանքի ծախսերը հոգալու համար և այս առումով այնտեղ վանականները հանգիստ ու ապահով լինեն: Այս պատճառով արքայական հրամանագրի օրինակով կարգադրում ենք, որպեսզի նախկինի պես հիշյալ գյուղի մալիյյաթը հոգևորականների առաջնորդ վերոհիշյալ Սահակ խալիֆան ստանալով ծախսի Ղարաքիլիսայի կարիքների վրա: Որոշվեց, որպեսզի բարձրաստիճան ազնվականներ Խոյի ներկայիս ու ապագա հաքիմները հիշյալ գյուղի մալիյյաթը հատկացված համարելով նշված վանքին, չգանձեն ու չյուրացնեն և ոչինչ չպահանջեն»[317]:

Վանքի տնտեսական դժվար կացության մասին 1852 թ. նոյեմբերի 29-ին (կոնդակ թիվ 380) գրում է ինքը՝ կաթողիկոսը՝ վկայակոչելով գործին քաջատեղյակ աշխարհականների և հոգևորականների տված բացատրությունները Թադևոսյան եղբայրների շորթած գումարների, իրեղենի ու նպարեղենի մասին և ավելացնում. «...տիրեալ էին նոքա բոլոր կառավարութեան վանիցն և Նիկողայոս եպիսկոպոսն կայր ի ձեռս նոցա իբրև գերի: Եւ նոքա երկու եղբարք ունելով ի ձեռս իւրեանց զամենայն զկառավարութիւն վանքական զորս կամէին պահէին ի միաբանութեան վանիցն և զորս ոչ կամէին հալածէին: Եւ թէ աղքատ էին նոքա և զրկանօք վանիցն հարստացեալ կան այժմ»[318]: Ներսես Աշտարակեցին Սաքունյանցին վերստին հանձնարարում է մանրամասն հաշվետվություն ներկայացնել իրավիճակի մասին և անհրաժեշտության դեպքում ապավինել ռուսական հյուպատոսի աջակցությանը[319]:

Նույն օրը՝ 1852 թ. նոյեմբերի 29-ին, հարցի առնչությամբ Ներսես կաթողիկոսը մեկ այլ կոնդակ է ուղարկում Թավրիզ: Փաստաթղթից պարզվում է, որ Սահակ Սաքունյանցը դեռևս մեկ տարի առաջ հանդիպել է Մակվի սարդար Ալի խանին՝ փորձելով

312 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 147: Բնագրի թարգմանությունը՝ Ք. Կոստիկյանի:

313 **Բասմաջեան Կ.**, նշվ. հոդվ., «Սիոն», 1937, յունիս, էջ 181:

314 Նույն տեղում:

315 Նշվ. հոդվ., էջ 182-184:

316 **Թօփճեան Յ.,** նշվ. աշխ., մասն Բ, էջ 17: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 27:

317 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 149: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

318 **Բասմաջեան Կ.**, նշվ. հոդվ., «Սիոն», 1938, օգոստոս, էջ 246:

319 Նշվ. հոդվ., էջ 248:

կարգավորել վանքի գյուղից՝ Ղարաքիլիսայից, հոգուտ խանական գանձարանին բաժին հանվող հարկերի խնդիրը: Բանն այն է, որ սարդարը պատճառաբանելով, թե Նիկողայոս Կարբեցին չի վճարել գյուղի չորս տարվա հարկը, պահանջում էր վճարել կամ փոխհատուցել այն[320]: Պարտքի դիմաց Սահակ եպիսկոպոսը սարդարին ստիպված էր վճարել 100 թումանի գումար[321]:

Ի վերջո, երկամյա գրագրությունից և Թադեոս առաքյալի վանքի հարցերը բազմակողմանիորեն քննարկելուց հետո՝ 1853 թ. հոկտեմբերի 21-ին, կաթողիկոսը հանձնարարում է Սահակ Սաթունյանցին տեղում պահել միայն վանքին պատկանող իրերը, իսկ էջմիածնապատկան ունեցվածքն ուղարկել Սինոդի տնօրինությանը. «Յաղագս մնացորդացն զկնի վախճանի սրբազան Նիկողայոս եպիսկոպոսին եղելոյ ...զպատկանեալսն սրբոյ վանիցն Թադդէոսի Առաքելոյ յանձնել ձեզ և որոյ պատկանի և զպատկանեալսն Աթոռոյ Էջմիածնի առաքել ի Սինօդն նորա»[322]:

Վանքի տնտեսական վիճակը քիչ թե շատ կարգավորելու նպատակով Իրանի Նասրեդդին շահը 1853 թ. փետրվարի 10 - մարտի 12 (հիջրայի 1269 ջումադի առաջին ամիս) հրովարտակով հաստատում է Ղարաքուլքի գյուղի մալիյյաթի պատկանելությունը վանքին. «...այսուհետև Ատրպատականի հայերի խալիֆա քրիստոնյա իմաստուններից լավագույն Սահակ Սաքիմյանովի խնդրանքով հիշյալ գյուղի (իմա՛ Ղարաքուլքի, Ա. Հ.) մալիյաթը հետևյալ կերպ շնորհվել է վանքին ծախսերը հոգալու համար, որպեսզի նա ամեն տարի այնտեղից գանձի ու ստանա՝ հոգալու համար վանքի կարիքները: ...Որոշվում է, որ Ատրպատականի շրջանի ներկայիս և ապագա հաքիմները պետք է հիշյալ գյուղը վերոհիշյալ պատվարժանին հանձնված համարեն և այնտեղից մալիյյաթ չպահանջեն...»[323]:

Որոշ ժամանակ անց Ալի խան սարդարը, վանքի անպաշտպան վիճակից և տնտեսական ծանր կացությունից օգտվելով, զավթում է վանքին մերձակա կալվածքները, գյուղի հողերը, ավելացնում նրանցից գանձվող հարկերի չափը: Այս մասին Սահակ եպիսկոպոսը 1855 թ. փետրվարի 18-ի գրությամբ տեղեկացնում է Ներսես Աշտարակեցուն: Նշելով, որ վանքի դիվանում պահվող կալվածագրերում պահպանվում է վանքն ու գյուղը թագավորական հարկերից ազատելու մասին արքայական հրամանագիր, Սաթունյանցը խնդրում է կաթողիկոսին միջոցներ ձեռնարկել խնդիրը կարգավորելու համար: 1856 թ. հունիսի 5-ին Ամենայն Հայոց Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսը պատասխան ուղարկած կոնդակում գրում է. «...անհամաձայն ի ժամանակս գալոյն եւ վերադառնալոյն զօրաց Ռուսաց եւ փոփոխութեանց տէրութեան բռնացեալ Ալի Խանն Մակուայ ստանայ զիարկ ի վանիցն եւ զգիւղն գրաւեալ ընդ իշխանութեամբ իւրով եւ այլոց եւս տիրեալ բազմացն ի կալուածոց վանիցն վասն անհոգութեանց վիճակաւորաց, որոց ամենից զկալուածագիրսն ներկայացուցեալ Ձեր նորուն գերազանցութեան Անիչկով դեսպանի Ռուսաց յառաջ քան զգնալն նորա ի Թեհրան եւ յետ գնալոյն նորա յանձնեցեալ գտանի ի նմանէ պաշտպանութիւն Ձեր եւ վանիցն Նիկոլայ Վլադիմիրիչ Խանիկով հիւպատոսին Ռուսաց... յառաջադրէք մեզ գրել առ նա զյանձնարարութիւն վասն գործադրութեանց կալուածագրոց վանիցն եւ հրովարտակացն Շահից յաղագս կարճելոյ զբռնաբարութիւն Ալի Խանին վասն պահանջելոյն նորա աւելի քան որչափ ստանայ ի տարին վանքական կառավարութիւն, եւ յայն ամին անցելոյ դնելոյն ի վանքն զիւր վերակացու եւ պահանջէ խստիւ ի միաբանից եւ ի գիւղականաց զբահրայ հնձոց ցորենոյ եւ գարւոյ եւ տառապեցուցանէ այնքան զի ցրուեցին գիւղացիք եւ տապալեցին կառավարութիւնք վանքին»[324]:

Հաջորդ վավերագիրը, որն անթվակիր է, կազմվել է Ատրպատականի թեմի առաջնորդ Հակոբ ծ. վրդ. Շահբազյանի (1857 թ. հունիս - 1859 թ. ապրիլ 19) գրության հիման վրա: Նկատի ունենալով վարդապետի բողոքները Բաբաջիքի և Ղարաքիլիսայի ջրի տնօրինման վերաբերյալ՝ Աբդուլլահ խանը կարգադրում է, որ այդ խնդիրը կողմերի ներկայությամբ քննվի և լուծվի շար'ի դատարանում Միրզա Աղասիի կողմից և «...փաստաթուղթ և իլթիզամ վերցվի, որպեսզի այսուհետև երբ էլ, որ որևէ մեկը այն զանց առնի ու հակառակ վարվի, պատժվի և նրա խոսքը անհիմն լինի»[325]:

Մեկ այլ անթվակիր վավերագրում, որը տրված է Մուհամմադ Իբրահիմ խանի կողմից՝ ուղղված Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանին (ժամանակը որոշվում է Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտոնավարության տարիներով՝ 1861-1869), նշվում է, որ Ղարաքիլիսայի բնակիչների նկատմամբ պետք է այնպես վարվել, որ նրանք չլքեն իրենց բնակավայրերը, նաև արգելվում է վանքին հատկացված ամենամյա հարկաբաժնի նկատմամբ պաշտոնյաների ոտնձգությունները. «Այլ հաքիմներից նմանապես հանձնարարագրեր ունենք, այդ թվում՝ ռայաթների վկայության համաձայն, բարձրաստիճան սարքարը ողորմածաբար անցած

320 Նշվ. հոդվ., «Սիոն», 1938, սեպտեմբեր, էջ 284:

321 Նշվ. հոդվ., էջ 285:

322 Նշվ. հոդվ., «Սիոն», 1940, սեպտեմբեր, էջ 236:

323 Թավրիզի հայոց առաջնորդարանի թանգարան, № 105: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 228, հրովարտակ № 14: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

324 Կոնդակներ և նամակներ (տե՛ս ԴԱՀՊ, հ. Բ, էջ 78-80):

325 Մելիք-Թանգյան թանգարանի արխիվ, № 48: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 214, հրովարտակ № 4: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

տարիների այնտեղի 70 թումանի եկամուտը տեղի քահանաներին ու միաբաններին է հատկացրել որպես մակթա: Սարքարի որևէ հանձնակատար նրանց մոտ չի եկել և նրանք երկու բաժնով այդ գումարը կանխիկ դրամով ստացել են: [Բայց] պնդելով, որ նախորդ տարվանից հին պայմանագիրը չեղյալ է ճանաչվել, մարդ են ուղարկել այնտեղի եկամուտները գանձելու: Այս պատճառով այնտեղի ռայաթները տագնապահար եղած ոմանք արդեն փախուստի են դիմել, ոմանք էլ մտադրվել են փախչել: Պատվարժան խալիֆա Գևորգը և այնտեղի մյուս լքված քահանաները խնդրանքով դիմեցին, որ սարքարին ներկայանալով խնդրեմ, որպեսզի նրանց հետ նախկինի պես ու հին հատկացմանը համապատասխան վարվելով սարքարի մարդիկ, այնտեղի եկամուտները, որոնք վերը նշված գումարից ավելին չի լինում, խալիֆայի մարդկանցից չգանձեն, այնտեղի գյուղատնտեսական գործին չմիջամտեն, որպեսզի տեղի ռայաթները ցաքուցրիվ լինելու պատճառը չդառնան»[326]:

1865 թ. նոյեմբերի 20 - դեկտեմբերի 20-ին (հիջրայի 1282 թ. ռաջաբ ամիս) Իսքանդար խան սարդարի արձակած հրամանագրերից մեկի համաձայն (ըստ Գևորգ արքեպիսկոպոսի զեկուցագրի)՝ պահանջվում է վերականգնել վանքի ոտնահարված իրավունքները՝ պահպանելով վարձակալության պայմանագրի կանոնները, ժամանակին վճարել Խոյում գտնվող վակֆային կալվածքների վարձը սեփականատիրոջը՝ Թադեոս առաքյալի վանքին[327]:

1866 թ. մայիսի 16 - հունիսի 15-ին (1283 թ. մուհարամ ամիս) հրովարտակով վերահաստատվում է Ղարաքիլիսա գյուղի՝ վանքապատկան կալվածք լինելը, սակայն այդ խնդիրը պետք է քննարկվեր շար’ի դատարանում և համապատասխան լուծում ստանար[328]:

1867 թ. Խոյի բեկլարբեկին ուղղված առանձին հրովարտակով շահը կարգադրում է լուծել վանքի կալվածքների խնդիրը, իսկ գյուղացիներից պահանջում է ենթարկվել մահմեդական կրոնական օրենքներին ու վճարել վանքին հասանելիք տուրքերը[329]:

1886 թ. «...վանքի «ահագին կալուածներից մնացել է մի քշուառ գիւղ 20 տուն հայերով և մի քահանայով, մնացեալ գիւղերն ու վարելահողերը գրավել են Մաքուի Ալի-խանի որդիքը...»[330]:

1896 թ. վանքապատկան կալվածքների վերաբերյալ ցավով գրվել է. «Վանքի շուրջն եղած է անտառ, իսկ այսօր 50-60 ծառ հազիւ մնացած է, քանի տարի առաջ ունէր ջրաղաց, այն ևս չկայ, 3-4 վերստ յարևելս հեռաւորութեան վերայ վանքի լաւ հողերն անմշակ մնալով, նաև անտեր, անցած են թուրքերու ձեռք, որ այսօր 100 տուն երկրագործի բաւական է: Այժմ ևս վանքը բաւականին ընդարձակ հողեր ունի, սակայն գութան և ոյժ պէտք է մշակելու համար:

Վանքը եկամուտ չունի, երկրագործութեամբ պիտի շէն մնայ. երեք գիւղ ժողովուրդ ունի. Վանքի գիւղ... միայն վանքի հունձը ճրի անելու պատրաստ է, Քիշմիշքափա... 3 խալուար ցորեան պտղի կտան վանքին, իսկ մակուեցիք... 40 մանէթ»[331]:

1890-ական թվականների վերջերին վանքի ենթակայության ներքո մնացել էր ընդամենը 25-30 խալվար հող. «...Ս. Թադէի վանքի լայնատարած կալուածներից ներկայումս վանքի ձեռքին մնացել են միայն մի քանի վարելահողեր, որպիսիք են՝ Խամեր, Քշաքշեն, Գեօլի ականջ, Քարխանքի դէմ, երկու Կառնուտ, Կալղանոց, Հրեշտակապետ, Սևահող, Կալղրում և Ջաքէկ, ընդամենը 25-30 խալվար սերման տեղ: Ինչպես լսում ենք, վերջերս վարելահողերի վերջին երեք մասերը ևս անցել են խանի ձեռքը»[332]:

1900 թ. վանքի կորցրած կալվածքների վերաբերյալ Սահակ եպիսկոպոս Այվատյանը ցավով նշում է. «Այս վանքը առաջները շատ հող ունեցել է, հիմա քառորդը հազիւ է մնացած, կորածներից մէկ մասը Մաքւի խաներն են յափշտակել, մի մասը մօտիկը գտնուած հայ գիւղացին է յափշտակել, իհարկէ վանահարց անփութութեան հետևանք, չեմ ասէր, որ ուղղակի իրենք տւած են կամ ծախած, այլ ասում եմ, որ մի մասն ալ իրենց ազգականներին նւիրած, ինչպէս Եսայի վարդապետ, որ այժմ իրեն իրաւունք համարած է Էջմիածնում Գայեանէի վանքը նստել ամսական քսանուհինգ րուպլի ստանալ, իրեն 35 տարւայ վանահայրութեան ընթացքում վանքը քարուքանդ րրած է և մի մասն ալ իրեն եղբարց և ազգականաց ձեռքն անցուցած և ուղղակի վանքի պարսպի տակի հողերը: Հանգուցեալ Յովհաննէս վարդապետը այդ մասին անպարտ է, նա իրաւ է ոչ մի նորոգութիւն չի արել, ոչ մի կորած հողերից յետ չի ստացել, բայց ինչ վիճակի մեջ, որ իրեն յանձնել են, նոյն վիճակի մեջ էլ պահել է»[333]:

1903 թ. նույն հարցի առնչությամբ մեկ այլ ականատես գրում է. «Վանքը միմիայն անունն ունի, ոչ

326 Մելիք-Թանգյանի թանգարանի արխիվ, № 47: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 215, հրովարտակ № 5: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

327 Թավրիզի հայոց առաջնորդարանի թանգարան, № 49: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 212, հրովարտակ № 3: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 27: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

328 Թավրիզի հայոց առաջնորդարանի թանգարան, № 49: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 212, հրովարտակ № 3: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 27: Բնագրի թարգմանությունը՝ պարսկագետ Ք. Կոստիկյանի:

329 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 27:

330 «Արաքս», 1892, Բ, դեկտեմբեր, էջ 55:

331 **Հայկունի Ս.**, Պարսկահայք, էջ 588:

332 **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 40: Տե՛ս նաև **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 44:

333 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 417, թ. 61:

հարստութիւն ունի, ոչ էլ հնութիւն, ինչպէս երևում է՝ հազիւ կարողացել է մասամբ իր շինութիւնն ու քարերը պահել..., խաները ամեն մի բանից խարջ ու խուրջ առնելուց յետոյ՝ չէին կարող վանքից էլ չառնել. վանքի կալուածք ամբողջ հողերը գրաւեցին անարգել, սուսիկ ու փուսիկ տիրացան. վանքը ցանում է մէկ երկու անջուր արտեր-դէմեր: Առաջուայ զոյգ-զոյգ գութաններն ու սարքը փչացաւ գնաց. այժմ վանքը իր տարուայ ուտելիք հացը յազիւ է ձեռք բերում...»[334]:

1903 թ. սեպտեմբերի դրությամբ «Ս. Թադէի Առաքելոյ վանուցս թեմի» կազմում հիշվում են Մակուն, Քիշմիշթեփեն, Վանքի գյուղը, Խոյը, Սեյդավարը, Տիզեն, Շուավը, Մահլազանը և այլ գյուղեր[335]:

Նույն թվականին վանահայր Գևորգ Նալբանդյանի շնորհիվ վանքի տնտեսական վիճակը համեմատաբար բարելավվում է. «Վանքը այժմ ունի 32 ոչխար, տասը կթան, 15 տաւար, 4 կթան կով և մատակ, 4 եզ, 4 գոմէշ, մի գութան, մի սայլ, ջրաղաց, մօտ 30 խալւար հող, երկու հատ ձէթհան գործարան, նոյնպէս և հաւեր, բադեր և այլն. մի փոքրիկ միաբանութիւն: Այնպէս որ այժմ վանքի վիճակը բաւականին բարւոք կարելի է համարել...»[336]:

1905 թ. վանքի կորցրած կալվածների վերաբերյալ նշվել է, որ «Նախկինում վանքին էր պատկանում շուրջ 14 գյուղ Մակվում և Խոյում, սակայն ներկա ժամանակաշրջանում, չնայած այն հանգամանքին, որ կալվածքների կոնդակները պահվում են Էջմիածնում, որտեղ ուղարկվել են նաև վանքի ողջ թանկարժեք իրերն ու հնությունները, այդ բոլոր գյուղերը (Մահլազան, Աղկույրուկ, Կորուլ, Աղդիզե և այլն) զավթված են խաների կողմից, և վանքը պահվում է սոսկ հոտից հավաքված խղճուկ հարկերով: Բացի արքեպիսկոպոսից (ներկա ժամանակաշրջանում վայելում է մեր հովանավորությունը, բուլղարահպատակ է)՝ վանքում ապրում են միայն մեկ քահանա և մեկ տիրացու»[337]:

1910 թ. հուլիսի 11-ին Մատթեոս Բ կաթողիկոսին հղած գրությամբ Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը վանքի կորցրած կալվածքները վերադարձնելու հարց է բարձրացնում. «Այս վանքը դեռ անցեալ դարի սկզբներում 14 գիւղեր է ունեցել, որոնց մի մասի համար կարևոր կալուածագրեր կան պահուած այն վաւերագրերի մէջ, որ Մայր Աթոռ էին տարուել, և ես իբրև առաջնորդ այստեղ եկած միջոցին հետս բերի: Օգտուելով այն հանգամանքից, որ Մակուում Ռուսաց ժամանակաւոր փոխհիւպատոսութիւն է հաստատուած, պէտք է աշխատեմ տեղւոյս հիւպատոսարանի օժանդակութեամբ խնդիր յարուցանել զանազան խաների կողմից գրաւուած այդ կալուածների համար...: Եթէ յիշեալ կալուածներից մի փոքր մաս նոյնիսկ կարելի լինէր ձեռք բերել, Ս. Թադէի վանքը ո՛չ միայն բարեշէն դրութիւն կունենար, այլ և կօժանդակէր բարենպատակ ձեռնարկութիւնների... այլապէս պէտք ունի առ այժմ արտաքին օգնութեան»[338]:

1954 թ. նշվել է, որ վանքի ձիթհանը (տեղում մնացել էր միայն քարը) և երկու ջրաղացներից մեկը ավերակ վիճակում են[339]: Նույն թվականին վանքապատկան էր նաև 18 կտոր հողատարածք:

2000 թ. ամռանը Թադեոս առաքյալի վանքն ուներ 21 կալվածք, որոնք Ատրպատականի առաջնորդարանի կողմից վարձակալության էին տրվել շրջակայքի բնակչությանը[340]:

**Թադեոս առաքյալի վանքը գրչօջախ.** ստորև ներկայացնում ենք վանքում գրված կամ նորոգված մեզ հայտնի ձեռագրերն ըստ ժամանակագրության:

1292 թ. «գերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոս» տեր Տիրացու Ա-ի օրոք վանքում ընդօրինակվում է մեկ տարի առաջ Կիլիկիայի Դրազարկ վանքում Թորոս փիլիսոփայի ընդօրինակած Ավետարանը[341]: Ի դեպ, հետագայում ձեռագիրը տարվել է Ագուլիսի Սբ. Թովմա առաքյալի վանք, որտեղ էլ այն 1650 թ. Գալուստ դպիրին կազմել է տվել Խաչատուր վարդապետը և վերստին նվիրել վանքին[342]:

1315 թ. Ռստակես գրիչն (ստացող՝ Վարդան) ընդօրինակում է «Ներսիսի Շնորհալւոյ Մեկնութիւն Սաղմոսաց». «...ի հոգւոյն սրբոյ սատարութենէ և ի բարի կամաց վերադիտողիս տէր Զաքարիայի, ետու գրել զանզին գանձս աստուածայինս... և եդի ի սուրբ և հռչակաւոր աթոռս Թադէոսի առաքելոյս...»[343]:

334 **Նժդեհ**, նշվ. հոդվ., էջ 147:

335 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, էջ 151:

336 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 41:

337 **Минорский В.**, նշվ. աշխ., էջ 27 (բնագրում՝ “Прежде монастырю принадлежало до 14 деревень в Маку и Хое, но в настоящее время, несмотря на то, что грамоты на владение хранятся в Эчмиадзине, куда отправлены и все драгоценности и древности монастыря, все деревни эти (Махлазан, Ал-куйрух, Корул, Ах-дизе и др.) захвачены ханами, и монастырь поддерживается на скудные сборы среди паствы. Кроме архимандрита (в настоящее время болгарскаго подданого, состоящаго под нашим покровительством), в монастыре живет лишь 1 священник и 1 причетник).

338 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 175:

339 **Ուխտաւոր**, նշվ. հոդվ., «Ալիք» 1954:

340 Ըստ Գեղամ Գևոնյանի բանավոր հաղորդման:

341 **Մաքսուդեան Մ. վրդ.**, Ագուլիսի եր շրջակայքի ձեռագրերը, «Արարատ», 1911, դեկտեմբեր, էջ 223-224: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 470-471: ԺԳ, էջ 691-692:

342 **Մաքսուդեան Մ. վրդ.**, նշվ. հոդվ., էջ 224:

343 ԺԴ, էջ 114-116: Ի դեպ, 1863 թ. այս ձեռագիրը պահվել է Սևանի վանքի մատենադարանում (**Սմբատեանց Մ.**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 405):

1330 թ. ստեղծվում է ավետարան Ռստակես գրչի կողմից (ծաղկող՝ Հովսեփ, ստացող՝ Մարգարե)[344]:

1337 թ. Մանուել գրչի կողմից ստեղծվում է Կանոնագիրք, որի պատվիրատուն էր «այր խոնարհամիտ» Իսրայել քաբունին[345]:

1406 թ. ստեղծվում է Երգ երգոցի մի մեկնությունն[346]:

1426 թ. ընդօրինակվում է Ժողովածու: Գրիգոր գրիչն այն սկսել է ընդօրինակել Թավրիզի Սբ. Աստվածածին եկեղեցում, ապա տեղափոխվել Թադեոս առաքյալի վանք և ավարտել 1426 թ.՝ այն նույն տարում, երբ կարա-կոյունլու Սքանդարը (Իսկանդար) գրավում է Մակվի բերդը[347]:

1574 թ. Հովհաննես երեց գրիչն ընդօրինակում է ավետարան. «Յիշեցէք ի դուռն Ս. Թաթէոսի առաքելոյն Յովանէս երէցն... զնորընծայ Տէր Թաթէոս եպիսկոպոսն որ ...վերստին հաստատեց ժամակարգութիւն ...կրկին նորոգել և կազմել ետուն զաւետարանն»[348]:

1650-1660 թթ. անհայտ գրչի ձեռքով (հավանաբար վանքում) ստեղծվում է ավետարան և շուրջ երեք դար պահվում վանքի ձեռագրատանը: 1954 թ. այն հանձնվում է Ատրպատականի հայոց առաջնորդարանին՝ այնուհետև ի պահ տրվելով Թավրիզի Մելիք-Թանգյան թանգարանին[349]:

1676 թ. ընդօրինակվում է Դիոնիսիոս Արիոպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» (թարգմանիչ՝ Ստեփանոս Լեհացի, ստացող և նվիրատու՝ Սարգիս վարդապետ Կաֆայեցի)[350]:

1676 թ. «...ըստ հրամանի տէր Զաքարիայի, և սպասաւորի առաքելոյն Թադէոսի...» ստեղծվում է «Մեկնութիւն աւետարանի Յովհաննու»[351]:

1677 թ. ընդօրինակվում է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց», որի նվիրատուն էր Իսահակ Մակվեցի եպիսկոպոսը, նկարազարդողը՝ Մկրտիչ ծաղկողը. «Զստացօղ սորին՝ զԻսահակ վարդապետ, վերատեսուչ Թադէոսի առաքելոյ Սուրբ Աթոռոյն, որ աւանդեաց զգիրքս՝ յիշատակ իւր ի դուռն Սուրբ Առաքելոյն»[352]:

1677 թ. ստեղծվում է Ժողովածու (գրիչ, ստացող՝ Իսահակ վրդ. Մակվեցի). «...յիշատակ է Իսահակ վարդապետին Մակուեցւոյ՝ առաջնորդի սուրբ աթոռոյն Թադէոսի սուրբ առաքելոյն»[353]:

1677 թ. Իսահակ վրդ. Մակվեցու հեղինակած Ժողովածուի հետագա՝ 1733 թ. հիշատակարանում նշվել է. «...զարմն Յովանիսեան, /Զի ես եմ տեղեաւ, որ եմ Արտազեան/, Սարգիս վարդապետ...»[354]:

1677 թ. Իսահակ վրդ. Մակվեցու հեղինակած Ժողովածուի հետագա՝ 1782 թ. հիշատակարանում նշվել է. «...Իսահակ արդար յառաջնորդ լուսահոգի վարդապետին տեղն արժանուն աջորդ եղէ անարժան հող ու մոխիր Իսահակ եպիսկոպոս Փառակեցի ՌՄԼԱ (1782)-ին. յոյժ դառն եւ դժը[ն]տակ ժամանակի, թողում զամենան և բոր կպեցեալ գիւղս մեր էր ցաւ, քան զամենայն: Գ (3) ամ է ջանամ, թէ հանեմ, անկար լինելոյս /// մնայ»[355]:

1684 թ. վանքում նորոգվում և վերստին կազմվում է Ճաշոց, որի հիշատակարանում խոսվում է նաև վանքի շինարարական հնգամյա աշխատանքներն ավարտելու մասին. «Արդ ի վերջ ժամանակիս որ էր թվականն Հայոց ՌՃԼԳ (1684) ...ետ վերստին կազմել եւ նորոգել զաստուածաբուխ սուրբ մատեանս որ կոչի Ճաշոց: Արդ... յիշեցէք... զվերջին կազմող եւ նորոգօղ եւ պատճառ եղօղ սորին, այլ եւ զԻսահակ եւ Սարգիս վարդապետսն»[356]:

«...Գրեցաւ ի թվականիս մերում ՌՃԼԹ (1690) ամին... ձեռամբ փծուն Իսահակ վարդապետի, ի դրան Սուրբ Առաքելոյն Թադէոսի»[357]:

«...ես՝ զառամեալ ծերունիս Իսահակ վարդապետ... ի թվականիս մերում ՌՃԽԲ (1693), յամսեանն մարտի Ժ-երորդի գրեցի ձեռամբ իմով...»[358]:

1711 թ. հոկտեմբերի 13-ին «...ի դուրն Թադէոս առաքելոյն» գրիչ Անտոն սարկավագը հեղինակում է մի ձեռագիր ժողովածու, որն էլ այլոց կողմից շարունակվում է մինչև 1751 թվականը[359]:

---

344 ԺԴ, էջ 227:

345 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 474-475: Հեղինակի կարծիքով վանքում Սարգիս վարդապետ գծողը «ի նեղ եւ ի դառն ժամանակի» արտագրել է 1383-ով թվագրվող «Քարոզգիրք Բարթուղիմէոսի» երկը (տե՛ս նշվ. աշխ., էջ 476): Մինչդեռ գրչի հիշատակարանից ակնհայտ է, որ այն գրվել է Մակվի Սբ. Աստվածածին վանքում իմաստուն հռետոր Կարապետ րաբունապետի օրոք. «...ի մենաստանիս ի Մակու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի...» (ԺԴ, էջ 545): Բացի այդ՝ Թադեոս առաքյալի վանքը՝ իբրև Առաքյալի մասունքներն ամփոփող սրբավայր, երբևէ չի կրել Տիրամոր անունը:

346 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 477:

347 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, (այսուհետև՝ ԺԵԱ, համապատասխան էջերով), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 353:

348 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 13:

349 **Վարդան ծ. վարդապետ**, Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային թանգարանի հայերէն ձեռագիրները, ԴԱՀՊ, հ. Բ, էջ 71:

350 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1984, էջ 459-462: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 21:

351 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 54:

352 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 21: Նաև՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 807-812: Տե՛ս նաև **Գէորգեան Ա.**, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն IX-XIX դդ., Գահիրէ, 1998, էջ 442:

353 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հ. Բ, Երեւան, 2004, էջ 98:

354 Նշվ. աշխ., էջ 98:

355 Նույն տեղում:

356 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 485-486:

357 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 785:

358 Նույն տեղում:

359 Նշվ. աշխ., էջ 893-900: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 22:

**Թադեոս առաքյալի վանքին նվիրաբերված ձեռագրեր.** վանքի ձեռագրերի հավաքածուն նաև հարստացել է անհատ մարդկանց կողմից տարբեր առիթներով և տարբեր տարիներին վանքին կատարած նվիրատվությունների շնորհիվ: Այսպես՝

1294 թ., ավետարան, գրիչ՝ Հակոբ, վայր՝ Արգելանի վանք, պատվիրատու և նվիրատու՝ Տուրութերան աշխարհից ոմն Փոխանտիկին՝ կողակից Խտլոքի. «...տվի զիմ Աւետարանս ի սուրբ Թադիոսի ժամատեղս, որ հասարակաց կարդան, ու այլ մարդ չկարէ հուքմ արնել»[360]:

1429 թ., Ճաշոց, գրիչ՝ Եզեկիել վարդապետ, վայր՝ Սյունիք, նվիրատու՝ ախալցխացի մահտեսի Ամիր փաշա. «...Այր ոմն ազնուական Ամիր-Փաշայ... հանդիպեցաւ ի բանակս Շահռուխ կոչեցեալ բռնաւորի՝ որդոյ Լանկ-Թամուրի, որ էր բանակեալ շուրջ զդղեկեաւն Երընճակոյ, որ և զգիրքս զայս գերի բերեալ յերկրէն Սիւնեաց: Եւ հանդիպեալ սրմա մեծահաւատ մահդասիս Ամիր-Փաշա, եւ ետ ի հալալ արդեանց իւրոց և յարդար վաստակոց իւրոց, և գնեաց զգիրքս և ազատեաց ի գերութենէ այլազգեաց:

Եւ ըստ սիրալիր ըղձից իւրոց...զոր ունէր առ սուրբ առաքեալն Թադէոս՝ ընծայեաց զայս հոգէնորոգ մատեանս և զվարդապիքիթ բուրա[ստա]նս յիշատակ հոգւոյ իւրոյ ի դուրս երկնահանգէտ սուրբ ուխտիս և գերահռչակ սուրբ մենաստանիս և աստուածաբնակ սուրբ տաճարիս և լոյսընծայ սուրբ գերեզմանի սուրբ առաքելոյս Թադէոսի»[361]:

1435 թ., Մաշտոց, գրիչ՝ Գրիգոր, գրչության վայր՝ Չմշկածագ, Կարմիր մենաստան, նվիրատու՝ Ամիր միհյընակյաց. «...Ամիր միհակէցս գնեցի զՄաշտոցս, Թաթէի սուրբ Առաքելոցս վախն տվի, յիշատակ ինձ և ծնաւղացն...»[362]:

1648 թ., ավետարան, գրիչ՝ Թովմա, վայր՝ Մոկսի Դաշտ գյուղ, նվիրատուներ՝ տանուտեր Մովսես, Քիչխաթուն. «Դարձեալ յիշեցէք զՄովսէսն և Քիչխաթուն, որ ըստացան իւրեանց հալալ վաստակով զսբ. Աւետարանս և փակեցին ի դրունս Ս. Թադէոս առաքելոյն»[363]:

1653 թ., «Քերականականք-Քարոզգիրք», գրիչ և ստացող՝ Սահակ աբեղա Շախսաբանցի, վայր՝ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք. «Յիշատակ է սուրբ գիրքս ի դուռն Թադէոսի առաքելոյն»[364]:

1677 թ., Աստվածաշունչ, վայրը՝ Տիգրանակերտ, ժամանակը՝ 1640 թ., նվիրատուներ՝ Մեսրոպ վարդապետ Բաղիշեցի, մահտեսի Հովհաննես[365]:

1775 թ., նորատիպ «Տօնացոյց», նվիրատու՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցի (1763-1780)[366]:

1786 թ., ավետարան, նվիրատու՝ տեր Մկրտիչ քահանա: Ձեռագիրը Խասալու Սարդար տանուտերի պատվերով 1671 թ. անհայտ գրչի կողմից ընդօրինակվել է Աղվանից աշխարհում՝ Պարտավում: 1752 թ. ավետարանը ձեռք են բերել Ուղումչեցի Բաղդասարի և Հուռումսիմի զավակները, ապա 1786 թ.՝ տեր Մկրտիչը, որն էլ այն նվիրել է նշանավոր մենաստանին[367]:

ԺԸ դարի վերջ, Առակագիրք, Միքայել Ասորու «Համառօտ ժամանակագրություն», նվիրատու՝ խոյեցի Ղասում: Ըստ ամենայնի, ընդօրինակվել է Բայազետում 1639 թ. առաջ. «Ես Ղասումս իմ յօժարութեամբս ետու պատմագիրս յիշատակ, ի դուռն Թադէոսի Առաքելոյն, մի ոք իշխեսցէ հանել ի դրանէ Առաքելոյն Թադէոսի: Եւս մէկ Առակաց Գիրք տուի յիշատակ Սահակ Վարդապետին տանէ Վանքն...»[368]:

1808 թ. ապրիլ, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն», նվիրատու՝ վարպետ Գալուստ (գրչության վայրը, տարեթիվը և ընդօրինակողի անունը հայտնի չեն): Նվիրատվությունն ամրագրվել է մատյանի պահպանակի առաջին երեսին. «Վարպետ Գալուստն ետ Սիմէօն վ(ա)րդ(ա)պ(ե)տս առաջնորդ սրբազան առաքելոյն Թադէոսի ի յիշա-

360 ԺԳ, էջ 735, 736: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Արտազի վանքը, էջ 41, ծնթ. 9: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 470, ծանոթ.:

361 ԺԵԱ, էջ 518: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 18: Ամիր փաշայի հիշատակարանը թվագրված չէ: Լ. Խաչիկյանը թվագրել է 1429-ով՝ ելնելով այն իրողությունից, որ այդ թվականին Շահռուխի զորքերը պաշարել ու գրավել են Երնջակի բերդը: Նա ենթադրել է նաև, որ Եզեկիել վարդապետը (Որոտնեցի) ապրել ու ստեղծագործել է Տաթևի վանքում (ԺԵԱ, էջ 695): Հետաքրքիր է հիշյալ ձեռագրի հետագա ճակատագիրը. Ճաշոցի մեկ այլ նվիրատուի՝ Հովհաննես Սալմաստեցու՝ 1441 թ. հիշատակարանից տեղեկանում ենք, որ մի քանի տարի անց վանքի աթոռակալ Գրիգոր վարդապետի (նկատի ունի, անշուշտ, Գրիգոր Մակվեցի Ջալալբեկյանցին) հրամանով հավանաբար մինչև 1441 թ. ձեռագիրը տարվել է գավառի Ջաղացտեղ գյուղը («...ի Չորս-Շամբի, ի գեւղս Ջաղացտեղ») և վաճառվել: Հովհաննես Սալմաստեցին գնել է այն ու նվիրել տեղի Սբ. Աստվածածին եկեղեցուն (ԺԵԱ, էջ 519):

362 ԺԵԱ, էջ 449: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 18:

363 ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատարակարաններ, հ. Գ (այսուհետև՝ ԺԷԳ, համապատասխան էջերով), կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 328-329:

364 Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ՝ «Անտոնեան հաւաքածոյ», կազմեցին **Ն. Ակինեան** եւ **Հ. Ոսկեան,** Վիեննա, 1971, էջ 155-156: Գրչի հիշատակարանը կրճատումներով վերահրատարակվել է. տե՛ս ԺԷԳ, էջ 570:

365 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 791-794: Տե՛ս նաև **Ամատունի Կարապետ եպս.**, Սահակ վրդ. Մակուեցի, «Բազմավէպ», 1983, էջ 105: **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 484:

366 ԴՀՊ, գիրք Ը, էջ 472 (627): Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 492, ծանոթ.:

367 **Վարդան Ծ. վարդապետ**, Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային թանգարան հայերէն ձեռագիրները, ԴԱՀՊ, հ. Բ, էջ 71:

368 Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգայինեկեղեցական թանգարանի, էջ 68 (**Միխայէլ Ասորի**, Համառօտ ժամանակագրութիւն): Տե՛ս նաև **Վարդան Ծ. վարդապետ**, Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային թանգարան հայերէն ձեռագիրները, ԴԱՀՊ, հ. Բ, էջ 71:

տակ ծնողացն թուին ՌՄԾԷ (1808) ապրիլի ԺԳ, որ ի Թարուէ(զ) քաղաքի»[369]:

1840-ական թթ., Տոնական, նվիրատու՝ Մելիք-Միրզա[370]:

**Թաղեոս առաքյալի վանքի ձեռագրերի հավաքածուն.** վանքը հայ գրչության կարևոր կենտրոններից է: Հնուց ի վեր այդտեղ ստեղծվել, ընդօրինակվել ու նկարազարդվել են բազմաթիվ ու բազմաբնույթ ձեռագրեր: Նրանց մի մասը դարերի թոհուբոհում ոչնչացել է ու թալանվել: Մի նշանակալի մասն էլ ամբողջությամբ կամ պատառիկների տեսքով հասել է մինչև մեր օրերը և պահվում է հայկական ձեռագրերի տարբեր գրապահոցներում:

Նշանավոր մենաստանում գրական-մշակութային կյանքի մասին տեղեկությունները կապվում են Զաքարիա Ա Ծործորեցու (ԺԳ դար) գործունեության հետ, որի օրոք ոչ միայն ընդօրինակվել ու թարգմանվել են նոր ձեռագրեր, այլև սկզբնավորվել է վանքի ձեռագրերի հավաքման գործը[371]:

Վանքի ձեռագրերի հավաքածուն բազմիցս հաշվառվել է 1894-1911 թթ. (Սարգիս Հայկունի, Հ. Թոփճյան, Խաչիկ վրդ. Դադյան, Խորեն վրդ. Լազարյանց):

1901-1906 թթ. վանքում պահվում էր 36 անուն, 71 հատոր ձեռագիր և 158 անուն, 225 հատոր հին ու նոր տպագիր գիրք, բացի այդ՝ օտարալեզու 11 անուն, 11 հատոր մատյան և 34 անուն, 64 հատոր հեղափոխական տետրակ[372]:

Մտահոգված վանքում պահվող ձեռագրերի և հնությունների վիճակով՝ 1910 թ. մայիսի 13-ից հուլիսի 6-ը Ատրպատականի թեմում կատարած իր շրջայցի ժամանակ Կարապետ եպիսկոպոսը կարգադրում է դրանք ուղարկել Մայր Աթոռ Սբ. Էջմիածին[373]:

1911 թ. մարտի 25-ին կազմվում է վանքապատկան 73 ձեռագրերի ցուցակը, որն էլ ձեռագրերի հետ Խորեն վարդապետ Լազարյանցը հանձնում է Սալմաստի առաջնորդական փոխանորդ Եղիշե քահանա Մկրտչյանին՝ «...Մայր Աթոռո գրադարանին ուղարկելու»: Այնուհետև Եղիշե քահանան նշում է. «...Տ. Կարապետ սրբազանի հրամանի համաձայն Արտազի Ս. Թաթեի առաքելո վանքում գտնված ձեռագրեր թվով 73 կտոր ստացանք և Խոյում հանձնեցինք պ. Ռուբեն Մկրտչյանին ուղարկելու Ս. Էջմիածին Ամենայն Հայոց կաթուղիկոսի տեղակալ սրբազան հոր հասցեին»[374]:

1911 թ. մայիսի 5-ին թեմի առաջնորդը կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին զեկուցում է, թե իր կարգադրությամբ «...Արտազի Ս. Թաղեոս առաքելոց վանքում պահւած ձեռագրերը ցուցակագրւած Մ. Աթոռ ուղարկւի: Առաջնորդարանիս կողմից իբրև քննիչ ուղարկւած Սալմաստի գործակալ Տ. Եղիշէ քահանան այդ կարգադրութեան համաձայն 73 կտոր ձեռագիր բերել է վանքից Խոյ և նորա ցուցակի մի օրինակը Առաջնորդարան ուղարկելով՝ միւս օրինակը ձեռագրերի հետ ուղարկել է Ջուլֆա»[375]: Այնուհետև 73 ձեռագրերը ուղարկվում են Էջմիածնի մատենադարան[376], որտեղից էլ հետագայում տեղափոխվում են Երևան՝ Մաշտոցի անվան Մատենադարան: Մնացած 8 ձեռագրերը Էջմիածին են մուտք գործում տարբեր տարիներին[377]:

Ներկայումս Թաղեոս առաքյալի վանքի ձեռագրերի բարձրարժեք հավաքածուն պահվում է Երևանի Մատենադարանում (81 միավոր), Թավրիզի Մելիք-Թանգյան թանգարանում և այլուր[378]:

**Թաղեոս առաքյալի վանքի շարժական կայքը.** 1875 թ. հուլիսի 1-ին կազմվում է ոչնչացված կահկարասիների և ձեռագրերի ցուցակը, որը հաստատում է Անդրեաս արքեպիսկոպոսը: 40 իր ընդգրկող այդ ցուցակում նշված էին նաև գրչյա 12 ձեռագրերից հետևյալները՝ Սիմեոնի «Քարոզգիրք», Գրիգոր Տաթևացու «Լուծմանց գիրք», Առաքել Դավրիժեցու «Պատմագիրք», Մովսես Խորենացու «Պատմագիրք», Հայերեն-թուրքերեն բառարան, Քարոզգիրք և այլն[379]:

1894 թ. մարտի 14-ին Խաչիկ վարդապետ Դադյանը կազմում է վանքապատկան իրերի համառոտ ցուցակը. «Սոյն ցուցակագրութեանը ներկայ էին մակուեցի պարոն Յարապետ Բարաղամեանցը՝ հոգաբարձու Մակուայ Հայրիկեան ուսումնարա-

369 **Մովսէս Խորենացի**, էջ ԽԴ: Տե՛ս նաև Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմեց **Հր. Աճառեան,** Վիեննա, 1910, էջ 20: Ձեռագիրը հետագայում Կարապետ եպիսկոպոսն ուղարկել է Էջմիածին:

370 Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 121: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 498, ծանոթ. 27:

371 **Եգանյան Օ.**, Արտազի Թաղեոս Առաքյալի վանքի ձեռագրերի հավաքածուն, «ԲՄ», 1971, № 10, էջ 401:

372 **Յակոբեան Է.**, Ս. Թաղէի վանքը, էջ 30:

373 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 175:

374 **Եգանյան Օ.**, նշվ. հոդվ., էջ 404:

375 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 229:

376 Նշվ. աշխ., էջ 229: Ի դեպ, տեղեկություններից մեկով էլ ձեռագրերը Մայր Աթոռ են փոխադրվել 1911 թ. մարտին («Արարատ», 1911, օգոստոս, էջ 617): Տվյալներից մեկով էլ՝ 1911 թ. սեպտեմբերի վերջերին վանքից 70-ից ավելի ձեռագրեր առաքվել են Սբ. Էջմիածնի մատենադարան (**Տեր-Մկրտչյան Գ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 591):

377 Ի դեպ, **Վ. Տեմիրճյանը** Թաղեոս առաքյալի վանքից 1911 թ. տեղափոխված հավաքածուում հաշվում է 78 ձեռագիր (տե՛ս նրա՝ ԴԱՀՊ, հ. Բ, էջ 68), մինչդեռ ճիշտը 73-ն է, քանզի այդ թիվն է արձանագրված հանձնման-ընդունման վավերաթղթում (**Եգանյան Օ.**, նշվ. հոդվ., էջ 404):

378 **Եգանյան Օ.**, նշվ. հոդվ., էջ 401-407: Մի ուշագրավ դիտարկում. Նժդեհի ստորագրությունը կրող ճանապարհորդական ուղեգրությունից տեղեկանում ենք, որ վանքում եղած ժամանակ (1894 թ.) «Խաչիկ վարդապետը ձեռագիր գրքերի միջոցով գտաւ Ջուարթնոց եկեղեցին, ուր այսօր պեղումներ է կատարում» (**Նժդեհ**, նշվ. հոդվ., էջ 146):

379 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 164, թ. 5:

նին, քիշմիշքափացի պարոն Մուրադ Ստեփանեանը՝ հոգաբարձու նոյն գիւղի Մասիսեան ուսումնարանին, վանքեցի ծխակատար Սարգիս քահանայ Աբելեանը և երեցփոխ նոյն գեղջ պարոն Սողոմոն Տէր-Թադէոսեանը և օգնական նորին Մկրտիչ Մէլքոնեանը եւ Սբ. Թադէոս առաքելոյ վանահայր արժանապատիւ տէր Եսայի վարդապետ Յովսէփեանը»[380]:

1896 թ. հոկտեմբերի 2-ին վանքի տեսուչ Ս. Հայկունին ճշտում է Խաչիկ վարդապետ Դադյանի կազմած եկեղեցական իրերի ցուցակը՝ նշելով, որ մակվեցի Հայրապետ Բարաղամյանի մոտ գտնվող «...ցուցակին համեմատ գտայ սպասներն, բացի մի քանի սպասներից, զորս Խաչիկ վ. իբրև հնութիւն Ս. Էջմիածին տարած է»[381]:

1899 թ. նոյեմբերին Ատրպատականի հայոց առաջնորդ Սահակ եպիսկոպոս Այվատյանի կարգադրությամբ ցուցակագրվում են վանքի եկեղեցական զարդերն ու անոթները, ամբողջ սպասքը, ինչպես նաև գրապահոցի գրքերը[382]:

Վանքապատկան 183 իրերի շարքում առանձնապես կարևորվում էր Թադեոս առաքյալի «արծաթապատ և ոսկեզօծ, 12 հասարակ քարերով, բոյթ մատին խաչաձև երկու հասարակ քարերով Աջը», որը, ըստ հիշատակագրության, նորոգվել է Իսահակ Արդար Մակվեցու հրամանով ԺԷ դարի վերջին[383]: Վանքում պահվող մասունքների շարքում հիշվում է նաև երկու խաչ, որոնցից մեկում ներփակված էր Թադեոս առաքյալի ատամը, իսկ մյուսում՝ նրա «գագաթան մասը» (գանգից ոսկոր)[384]:

Եկեղեցական իրերի վերոհիշյալ ցուցակում (Տոմար) հստակեցվում է, որ Սահակ եպիսկոպոսը վանքի ժամանակավոր վերահսկողներ է նշանակել Վանք գյուղի քահանա տեր Սարգիս Աբելյանին, մակվեցի Մեսրոպ Ավետիսյանին և Մանուկ Մկրտչյանին[385]:

1900-ական թվականների սկզբներին կազմվում է «Տոմար Ս. Թադէի առաքելոյ վանուց ել և մտից» 114-էջանոց մատյանը, որտեղ գրառվում են վանքի տնտեսության ելքն ու մուտքը՝ սկսած 1901 թ. սեպտեմբերի 13-ից մինչև 1907 թ. հոկտեմբերի 1-ը: Տոմարի մեջ ընդգրկված են վանքի 157 իրերը, տպագիր և ձեռագիր մատյանները[386]:

**Հայ կաթողիկե թեմի հաստատումը և հայ առաքելական թեմի վերստեղծումը Թադեոս առաքյալի վանքում**. լինելով ժամանակի հայ ականառու դեմքերից մեկը՝ իր լատինամետ գործունեության շնորհիվ Զաքարիա Ա Ծործորեցին մեծ հեղինակություն էր վայելում կաթողիկեների մոտ: Պահպանված տեղեկությունները վկայում են, որ նա գրագրություն է ունեցել Հովհաննես Երզնկացի (Ծործորեցի) վարդապետի[387], Բարդուղիմեոս եպիսկոպոսի, կաթողիկե այլ գործիչների[388], Կիլիկիո Ամենայն Հայոց կաթողիկոսների[389] և բարձրաստիճան այլ հոգևորականների հետ, մասնակցել հայ կաթողիկե եկեղեցական հարցերի քննարկման ժամանակ, սերտ հարաբերություններ է հաստատել ժամանակի հայ նշանավոր գործիչների հետ: Բացի այդ՝ Զաքարիա եպիսկոպոսն Արտազ գավառում, մասնավորապես Թադեոս առաքյալի վանքում և Ծործորում իր շուրջն է համախմբել հայ և եվրոպացի մի խումբ անվանի վանականների (ֆրանցիսկյան միաբանության անդամ ֆրա Պոնցիուս, Հովհաննես Երզնկացի-Ծործորեցի, Իսրայել հայ վարդապետ Բաբունի և այլք) և ձեռնամուխ եղել կաթողիկե եկեղեցու նշանավոր գաղափարախոսներ Թովմա Աքվինացու, Նիկողայոս Լյուրացու, Բոնավենտուրայի և այլոց գործերի թարգմանությանը[390]:

Ի դեպ, վանքում հանգրվանած ֆրանցիսկյաններին էլ հետևելով՝ միաբանությանն են անդամագրվում տեր Տիրացուն, Ներսես Տարոնացին, Իսրայել Արտազեցին և Դանիել Դավրիժեցին և այլք[391]:

Ավելին, լինելով առաքելական երկու՝ հայ և հռոմական եկեղեցիների միության ջատագով, նա այս հարցի շուրջ երկարատև բանավեճեր է վարում Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես եպիսկոպոս Օրբելյանի հետ[392]:

---

380 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 164, թ. 13-14:

381 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 7, թ. 23:

382 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 27:

383 Նույն տեղում, էջ 28: Սուրբ առաքյալի աջը հետագայում տեղափոխվել է Էջմիածին՝ Մայր Աթոռի թանգարան: Ի դեպ, ավանդության համաձայն, Թադեոս առաքյալի վանքում է պահվել սպարապետ Վարդան Մամիկոնյանի աջ ձեռքի ճկույթը, որը հետագայում տարվել է Վան և պահ տրվել բերդաքաղաքի Սբ. Վարդան եկեղեցուն (**Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 499: Տե՛ս նաև **Շէրենց Գէորգ**, Սրբավայրեր: Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 26):

384 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 50: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 28:

385 **Յակոբեան Է.**, նշվ. աշխ., էջ 28-29:

386 Նշվ. աշխ., էջ 31:

387 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 472: Տե՛ս նաև նույնի՝ Արտազի վանքը, էջ 42:

388 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 42:

389 **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 304-308: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 473: Նույնի՝ Արտազի վանքը, էջ 42:

390 **Յովհաննէս Քռնեցի**, Յաղագս քերականին, բնագիրը հրատ. պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1977, էջ 19-20:

391 **Ալիշան Ղ.**, Հայապատում, հ. Բ, էջ 545-547: Տե՛ս նաև **Marcus Antonius v. d. Oudenrijn O. P.**, Linguae Haicanae scriptores, Bernae, 1960, p. 23.

392 **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 304-308: Տե՛ս նաև **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Բ, էջ 2073-2074: **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 473: Նամակներից մեկը հրատարակվել է՝ **Մսերեանց Մ.**, Թուղթ Յովհաննու Օրպէլի Արքեպիսկոպոսի Սիւնեաց առ Զաքարիա Ծործորեցի՝ Արքեպիսկոպոս Արտազու և Առաջնորդ Ուխտին Թադէոսի Առաքելոյ, «Ճռաքաղ», հ. 2, Մոսքուա, 1860, էջ 55-57:

Զաքարիա եպիսկոպոսի և հայ կաթողիկե բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում դոմինիկյան հոգևորական Ժուրդեն դը Սևերակը, որը Հնդկաստան ուղևորվելիս 1320 թ. ձմռանը եղել է Հայաստանում: Նա գովեստով է խոսում Թադեոս առաքյալի վանքի առաջնորդի մասին, անվանում է նրան «մեր մի կաթոլիկ արքեպիսկոպոս՝ մեծ և ուժեղ վեհապետ», որն «իշխում է այս կողմերում և ըստ ամենայնի արժանի է վստահության»[393]:

Հայտնի է, որ 1321 թ. Զաքարիա եպիսկոպոսը նամակ է գրում Հռոմի Հովհաննես ԻԲ (1316-1334) պապին: Նույն տարում Զաքարիայի գիտությամբ և օժանդակությամբ ու «Հռոմի պապի հրամանաւ» Ծործորի Սբ. Աստվածածին վանքում Հովհաննես Երզնկացի-Ծործորեցին թարգմանում է Թովմա Աքվինացու «Յաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աշխատությունը[394]: Զաքարիայի և ընդհանրապես Թադեոս առաքյալի աթոռի հոգևոր իշխանությունն ու լատինամետ գործունեությունը դուրս էին գալիս Արտազ գավառի սահմաններից և ընդգրկում էին Ատրպատականի հայաբնակ մի շարք շրջաններ, այդ թվում նաև Թավրիզ ու Մարաղա քաղաքները[395]:

Ենթադրվում է, որ վանքի եպիսկոպոսական աթոռի համար երկու հակադիր խմբավորումների՝ լատինադավանների և առաքելական եկեղեցու ավանդույթների պաշտպանների միջև մղվող պայքարի արդյունքում 1321 թ. Զաքարիա Ա-ի ազդեցությունից և իրավասությունից դուրս է բերվում Ատրպատականը, ապա նաև Թադեոս առաքյալի վանքը:

Զաքարիայի կաթողիկամետ գործունեությանը հակակշռելու, հայ ազգային եկեղեցու սկզբունքներն ու ավանդույթները պաշտպանելու, Թադեոս առաքյալի վանքը և եպիսկոպոսական թեմը լատին ու հայ կաթողիկե գործիչների ազդեցությունից դուրս բերելու նպատակով հայ առաքելական բարձրաստիճան հոգևորականության և ավատատերերի ջանքերով 1321 թ. Թավրիզում թեմի առաջնորդ է նշանակվում Ծործորեցուց կախում չունեցող և կաթողիկեությանը հակադրվող «սրբազան քաւչապետ և վերատեսուչ առաքելական աթոռոյ» տիտղոսով մեծարված Մատթեոս եպիսկոպոսը[396]:

Նա պաշտոնավարել է մոտ մեկուկես տասնամյակ: 1335 թ. չափածո մի հիշատակարանում հիշվում է կաթողիկե քարոզիչների ու նրանց դավանանքն ընդունած հայ գործիչների դեմ մղած պայքարի առնչությամբ[397]:

Արտազի և Ատրպատականի մյուս հայաբնակ շրջանների հայ կաթողիկեների առաջնորդի պաշտոնը Զաքարիայի մահվանից հետո մի քանի տարի միայնակ վարում է Տիրացու Բ եպիսկոպոսը[398]: Այդ է վկայում 1342 թ. Թավրիզում ընդօրինակված Ավետարանը (գրիչ՝ Սարգիս), ուր հիշատակվում է նահանգի և Թավրիզ քաղաքի առաջնորդ տեր Տիրացու եպիսկոպոսը[399]:

Առաքյալի նահատակությամբ սրբացված մենաստանը վերստին դառնում է հայ եկեղեցու և ազգային ավանդույթներին հավատարիմ թեմակալ առաջնորդի (այժմ արդեն՝ Մատթեոս եպիսկոպոսի հաջորդների) աթոռանիստը, իսկ Զաքարիա Ծործորեցուն հաջորդած հայ կաթողիկե առաջնորդները ստիպված զիջում են՝ սահմանափակվելով Մակվի բերդի և Ծործորի վանքի շրջանակներով (մինչև Արտազի հայկական իշխանության անկումը 1426 թ.)[400]: Ընդ որում, երկու կողմերն էլ իրենց են վերապահում Թադեոս առաքյալի թեմի առաջնորդի տիտղոսը[401]: Արտազի թեմի լատինադավան առաջնորդի նստավայր է դառնում, ամենայն հավանականությամբ, Ծործորի վանքը, իսկ նրա հոգևոր իշխանությունն Արտազի սահմաններից դուրս ճանաչում է միայն Ատրպատականի հայ կաթողիկե բնակչությունը[402]:

Մեսրոպ Արտազեցու ջանքերով 1361 թ. Սիս քաղաքում հրավիրվում է եկեղեցական ժողով, որը չեղյալ է հայտարարում 1307 թ. Սսի, 1309 և 1316 թթ. Ադանայի ժողովների ընդունած որոշումները հայ և կաթողիկե եկեղեցիների ունիայի (միության) վերաբերյալ, մերժում կաթողիկեական նորամույծ ծեսերը՝ վերջնականապես ձախողելով հայոց եկեղեցին պապականությանը ենթարկելու Հռոմի փորձերը[403]:

Թադեոս առաքյալի վանքում հաստատված հայ առաքելական հոգևորականության և այդտեղից վտարված, Մակվում և Ծործորի վանքում հաստատված հայ կաթողիկե հոգևորականության միջև

393 “После Марко Поло. Путешествия Западных чужеземцев в страны трех Индий”, с. 137.

394 ԺԴ, էջ 173-174: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երեւան, 2004, էջ 1267:

395 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», № 11, էջ 154: Այս և հետագա դեպքերի մասին տե՛ս նաև **Мартиросян А.**, նշվ. աշխ., էջ 87-89:

396 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», № 11, էջ 154-158:

397 Նշվ. հոդվ., էջ 154-155: Ձեռագիր չափածո հիշատակարանը կազմել է Գրիգոր երեցը, 1335 թ. (տե՛ս ԺԴ, էջ 268-269):

398 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», № 11, էջ 158:

399 ԺԴ, էջ 331:

400 Ի դեպ, հայ կաթողիկե թեմի վերաբերյալ նշվել է, որ ամբողջ ԺԴ դ. վանքը հավանաբար ղեկավարել են ունիթորները, և նրանց հիերարխիական բախումների հետևանքներն իր վրա է զգացել նաև միաբանությունը: Զաքարիա վանահայրը հավանաբար կաթողիկե էր: Հռոմի հետ խզումը տեղի ունեցավ միայն մոտ 1420 թ., քանի որ 1426 թ. Մակուի կաթողիկե իշխանները թալանում են վանքը (**Pelliot P.**, Zacharie de Saint-Thadйe et Zacharie Sefкdinian, Paris, 1943, Revue de l’Histoire des Religions, 121, p. 150-154. **Tournebize F.**, Histoire politique et religieuse de l’Armйnie depuis l’origine des Armйniens jusqu’a la mort de leur dernier roi (l’an 1393), Paris, 1910, p. 320-343).

401 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», № 11, էջ 156, 158:

402 Նշվ. հոդվ., էջ 158:

403 **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հ. Բ, էջ 2245-2246:

հարաբերությունները հետագայում այն աստիճան են սրվում, որ ԺԵ դարի սկզբներին Մակվի հայ կաթողիկեներն ավերում ու կողոպտում են վանքը: Նրանք ոչ միայն տանում են եկեղեցու դուռը, մեծ զանգը և ժամատան գերանները, այլև թույլ չեն տալիս վերաշինել վանքը և դժվարություններ են ստեղծում հայ առաքելական եկեղեցու ավանդույթներին հավատարիմ մնացած հոգևորականների համար. «...ի թվին Հայոց ՊՀԵ (1426)... ի սոյն ամի որում էառ Ըսքանդար անուն ոմն բռնաւոր՝ որդի Ղարա-Ուսուֆին՝ զանառիկ բերդն Մակուայ, և զերկաբնակ ազգն ախթարմայից տարագիր և տարաշխարհ արար ի վերայ երկրի, և կատարեցաւ բան տեառն, զի չարքն չարեաւ կորոյս և զայգին ետ այլոց մշակաց: Որ և եւ՝ նուաստից նուաստս և տրուպս ամենայնի Գրիգոր ...գծող սմին, ի վաղուց հետէ փափաքէի շինութեան առաքելական սուրբ աթոռոյս մերոյ և ոչ տային թույլ նախասացեալ ներհակքն՝ բնակիչքն Մակուայ: Որ և կրկին վայ եկն ի վերայ նոցա ի յԱրտազ գաւառէ, և ետ շ(է)խ Բայազիթ ոմն այլազգոյ: Եւ զոր յառաջասացեալ չարքն բարձեալ էին ի դրանէ սուրբ Առաքելոյս և տարեալ թասպութեամբ և նախանձու, սա դարձեալ ի տեղի իւր եբեր մեծաւ յաւժարութեամբ և հնազանդութեան սիրով՝ զդուռն եկեղեցոյս, և զմեծ զանկակն, և զգերան ժամատանս, և այլ ամենայն ափաք (՞) և զողորմութիւն, զոր ի մարդապաշտ անիծեալ յազգէն յայն ոչ տեսաք ամենևին, զոր սա արար...»[404]:

1682 թ. Իսահակ Մակվեցին ընդունում է կաթողիկեություն և իր դավանագիրն ուղարկում Հռոմի Իննովկենտիոս ԺԱ պապին. «...Իսահակ Արդար, Տէր Վարդան Յունանեանի առջեւ 1682-ին կաթուղիկէ հաւատոյ դաւանութիւնը կու տայ եւ իր դաւանագիրը կը ղրկէ Ինովկինտիոս ԺԱ. Քահանայապետին»[405]: Այս մասին Վարդան եպիսկոպոս Հունանյանը Եվդոկիայի (Թոքատ) իր համաքաղաքացիներին ուղղված «Թուղթ Քաջալերական»-ում գրում է. «Իսահակ Վրդ. Մակուեցի, աշակերտ Յակոբայ Կաթողիկոսի, առաջին Արքեպիսկոպոս Մեծին Հայաստանի յԱրտազ գաւառի, ուր է դամբարան Սրբոյ Առաքելոյն Թադէի, այր առաքինասէր եւ գիտնական, ի ձեռն իմ արար զդաւանութիւն Եկեղեցւոյն Հռոմայ, ի վանս Բազրեւանդայ, որ յափն Եփրատայ, յամի Տեառն ՌՈՁԲին (1682), մինչ շրջէի քարոզութեամբ ի Հայաստան, եւ զնոյն յղեաց առ Ինովչենցիոս Փափն ԺԱ-ներորդ»[406]:

**Առաջնորդանիստը Թադեոս առաքյալի վանքից Թավրիզ փոխադրելու փորձ.** վանքի աշխարհագրական դիրքը, ժամանակի հետամնաց հաղորդակցության միջոցները (հատկապես աշնան և ձմռան ամիսներին) հնարավորություն չէին ընձեռում միաբանությանը և առաջնորդին կապ պահպանել արտաքին աշխարհի և թեմին ենթակա հեռավոր համայնքների հետ: Քաղաքական անկընկալ դեպքերն ավելի են մեկուսացնում թեմական կենտրոնը: Առանձնացված վիճակում է հայտնվում նաև Արաքսի իրանական ափին ծվարած Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքը: Դրան հակառակ՝ կարևոր դեր է ստանձնում Ատրպատականի մայրաքաղաք Թավրիզում հաստատված հայ համայնքը: Գաղթից հետո այն տարբեր վայրերից եկած հայ արհեստավորներով ու առևտրականներով մասամբ բազմամարդ է դառնում և նյութապես ավելի լավ վիճակում էր, քան գյուղական բնակչությունը: Թավրիզը միաժամանակ վճռորոշ դեր ուներ Խոյ, Ուրմիա (Ռեզայիե), Մարաղա, Սալմաստ, Մարանդ քաղաքներում և նրանց շրջակա գյուղերում ապրող հայության համար: Քաղաքական տեսակետից ևս Թավրիզը կարևոր դիրք ուներ. այստեղ էր հաստատվել Իրանի թագաժառանգը, որը միաժամանակ Ատրպատականի փոխարքան էր:

Այս հանգամանքները նկատի ունենալով՝ Բարսեղ արքեպիսկոպոս Կեսարացին, ստանձնելով Արտազ գավառի թեմական առաջնորդությունը և Թադեոս առաքյալի վանքի վանահայրությունը, Էջմիածնին առաջարկում է վերացնել դարեր գոյատևած Թադեոս առաքյալի և Նախավկայի թեմերը և այդ երկուսի միացումով ստեղծել ընդհանուր առաջնորդություն Իրանի Ատրպատական նահանգի հայ համայնքի համար: Նրա ջանքերը թեև հաջողությամբ չեն պսակվում, սակայն հող են նախապատրաստում նրա հաջորդների օրոք այդ գործն իրականացնելու համար:

**Ատրպատականի հայոց միացյալ թեմի կազմավորումը.** երբ Բարսեղ արքեպիսկոպոսին հաջորդած Նիկողայոս Կարբեցին (1834-1850) ստանձնում է Թադեոս առաքյալի վանքի վանահայրությունն ու թեմի առաջնորդությունը[407], գավառի քա-

---

404 ԺԵԱ, էջ 353: Տե՛ս նաև **Ալպօյաճեան Ա.**, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 372: **Խաչիկյան Լ.,** նշվ. հոդվ., «ԲՄ», էջ 163-164: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 18:

405 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 50:

406 **Ամատունի Կարապետ եպս.**, Սահակ վրդ. Մակուեցի, «Բազմավէպ», 1983, էջ 111: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 21: Իսահակ Մակվեցու՝ հռոմեամետ հայացքների մասին դեռևս 1673 թ. Երուսաղեմի ֆրանսիսկյան միաբաններից մեկը գրել է. «...[Սահակը] մեծ առաքինութեամբ, եռանդով եւ արժանիքներով օժտուած անձ մը, խանդավառ՝ որքան կարելի է ըլլալ՝ իր ազգին միաբանութեան համար Հռոմէական Սուրբ Եկեղեցիին հետ, զոր գովելէ չի դադրիր իր քարոզներուն մէջ, յայտարարելով զայն՝ աշխարհի բոլոր Եկեղեցիներուն մայրը» (**Ամատունի Կարապետ եպս.**, նշվ. հոդվ., «Բազմավէպ», 1983, էջ 110-111):

407 Նիկողայոս Կարբեցու պաշտոնավարության սկիզբը՝ 1834 թ., որոշվում է Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի կոնդակով, որը Վեհափառ հայրապետն ուղարկում է թավրիզաբնակ մեծահարուստ վաճառական Սեթի Խան Ծատուրյանին նույն թվականի մայիսի 18-ին: Կոնդակում խոսվում է Թադեոս առաքյալի ու Նախավկայի թեմերը միավորելու և «զՆիկողայոս նորապսակ Արքեպիսկոպոսն» «նորոգ առաջնորդ» նշանա-

ղաքական կացությունն ու ազգագրական պատկերն ավելի ճշտված էին: Թեև 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո էլ Թադեոս առաքյալի ու Նախավկայի վանքերը հոգևոր առումով կապված էին Էջմիածնի հետ, սակայն քաղաքական տեսակետից ենթակա էին Իրանին:

Արդեն 1828 թ.-ից Էջմիածնի՝ Ռուսաստանի քաղաքական ազդեցության ներքո հայտնվելուց հետո և մանավանդ 1836 թ. մարտի 11-ին հրապարակված հայոց եկեղեցու կանոնադրությամբ՝ «Պոլոժենիե»-ով, ցարական կառավարությունը կարողանում է իր անմիջական հսկողության տակ առնել ռուսահպատակ հայության հոգևոր ու կրթական գործերը: Ստեփանոս նախավկայի առաջնորդությունը կորցնում է իր թեմական տարածքների մի խոշոր մասը, տարածքներ, որոնք գտնվում էին Արաքսի ձախ ափին՝ ռուսական կայսերության կազմում (Նախիջևանի, Գողթն, Երնջակ գավառներում): Հաշվի առնելով նոր իրադրությունը՝ Կարբեցին իր պաշտոնավարության սկզբում Մայր Աթոռի համաձայնությամբ, Իրանի կառավարության թույլտվությամբ ի վերջո գլուխ բերեց իր նախորդի նախապատրաստած գործը. Արտազի և Ստեփանոս նախավկայի թեմերը միացվում են, և ստեղծվում է Ատրպատականի հայոց միացյալ թեմը՝ առաջնորդական կենտրոն ունենալով հայաշատ Թավրիզը[408]: Նորաստեղծ թեմի առաջնորդ նշանակված Նիկողայոս Կարբեցին 1841 թ. վերջնականապես փոխադրվում է Թավրիզ[409]:

Քաղաքի Ղալա (Բերդաքաղ) թաղամասում՝ Սբ. Աստվածածին Մայր եկեղեցու բակի արևմտյան կողմում, Նիկողայոս Կարբեցին կառուցում է առաջնորդարանի միհարկանի նոր շենքը, դառնում է նորաստեղծ թեմի առաջնորդ, «սակայն իր կոչումի վրայ պահում է Ս. Թադէի վանքի վանահոր հանգամանքը»[410]: Թեմական նախկին կենտրոններ Թադեոս առաքյալի և Ստեփանոս նախավկայի վանքերը, ինչպես նաև Արևելյան և Արևմտյան Ատրպատականներում եղած հայկական շուրջ հարյուր վանքերն ու եկեղեցիներն իրենց սակավաթիվ հայ համայնքներով ենթարկվում են հայոց նորաստեղծ առաջնորդությանը:

Այս շրջանից սկսած՝ Թադեոս առաքյալի վանքը դադարում է Արտազի թեմի առաջնորդական կենտրոն լինելուց և անցնում է վանահայրերի տնօրինությանը:

Ձեռնարկը, ըստ էության, առավել ևս ամայության է մատնում Թադևս առաքյալի վանքը, որը հանձնվում է սոսկ ամենասահմանափակ հնարավորությունների տեր մի վանահոր հսկողությանը:

ԺԹ դարի երկրորդ կեսից՝ սկսած Նիկողայոս Կարբեցի և Սահակ Սաքունյանց առաջնորդների պաշտոնավարության շրջանից, վանքը դադարում է թեմական կենտրոն լինելուց, որով կորցնում է նաև Էջմիածնի կաթողիկոսական ընտրություններում ունեցած վճռորոշ ձայնի իրավունքը՝ հօգուտ Ատրպատականի նորաստեղծ առաջնորդության: Վանքի միաբանությունը և վանահայրությունը, սակայն, մինչև Ի դարի առաջին տասնամյակները պահպանում են իրենց գոյությունը[411]:

Չնայած կարգավիճակի փոփոխությանը՝ Թադեոս առաքյալի վանքը շարունակում է մնալ Էջմիածնի կաթողիկոսների ուշադրության կենտրոնում: 1851-1852 թթ. Ներսես Ե Աշտարակեցին Ատրպատականի հայոց առաջնորդարան ուղարկած կոնդակներում քանիցս քննարկում է վանքի տնտեսական դժվարին կացությունը, մասնավորապես Թադեոս վարդապետ Թադևոսյանի և նրա եղբոր՝ Հովսեփ միաբանի գործունեության պատճառով մենաստանի առջև ծառացած դժվարությունները: Պարզվում է, որ Թադեոս վարդապետը վանքի «վեքիլ» (ներկայացուցիչ, փոխանորդ) էր նշանակվել Նիկողայոս Կարբեցու կողմից և չարաշահելով առաջնորդի վստահությունը՝ եղբոր հետ բազմաթիվ կեղծարարություններ էր կատարել վանքում, իսկ առաջնորդի մահից հետո յուրացրել էր վանքի ու Կարբեցու անձնական գումարներն ու իրերը, պարենը:

Թավրիզում և Էջմիածնում Թադևոսյան եղբայրները մեղադրում են Սահակ Սաքունյանցին՝ անհիմն մեղադրանքով ու առանց նախնական քննության իրենց հանդեպ բռնություն գործադրելու համար[412]: 1852 թ. նոյեմբերի 29-ին ուղարկված կոնդակում (№ 383) Ներսես Ե-ն իր զայրույթն է արտահայտում դեպքի առիթով և խստորեն հանդիմանում առաջնորդին պաշտոնեական դիրքը չարաշահելու առնչությամբ[413]:

1865-1866 թթ. (Հիջրայի 1282) թ. Իրանի Նասրեդդին շահը (1848-1896), մտահոգված Ատրպատականի հայ բնակչության հանդեպ իրականացվող բռնություններից, բանակի ընդհանուր հրամանատար Ազիզ խանին ուղղված հրովարտակում կարգադրում է. «Ելնելով նրանից, որ ողջ բնակչու-

---

կելու մասին (ԴԱՀՊ, հ. Ա, Պէյրութ, 1980, էջ 209-211: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 26): Նրա մահվան տարեթիվը՝ 1850 հուլիսի 11, նշված է Ներսես Աշտարակեցու՝ 1852 թ. նոյեմբերի 29-ին Սահակ Սաքունյանցին ուղարկած թիվ 382 կոնդակում (տե՛ս **Բասմաջեան Կ.,** նշվ. հոդվ., «Սիոն», 1938, սեպտեմբեր, էջ 285):

408 **Երիցեան Ա.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 338: Տե՛ս նաև **Աճեմեան Հ.**, նշվ. աշխ., մասն II, էջ 11- 20:

409 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 26:

410 Նույն տեղում:

411 **Ֆրանգեան Ե.,** Ատրպատական, էջ 33-41: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 498-499: Տե՛ս նաև **Աճառյան Հր.**, Հայ գաղթականության պատմություն, էջ 244 («...Սահակ նստաւ նախ Ս. Թադէոսի վանքը...», ապա «...աթոռը Արտազէն Թաւրիզ փոխադրեց, որ այնուհետև Ատրպատականի առաջնորդական թեմը դարձաւ»):

412 **Բասմաջեան Կ.,** նշվ. հոդվ., «Սիոն», 1938, օգոստոս, էջ 245-246:

413 Նույն տեղում, 1938, հոկտեմբեր, էջ 317-318:

թյան հանգիստն ապահովելը մեր պարտավորությունն է, սակայն ինձ տեղեկացրել են, որ Ատրպատականում հայերի նկատմամբ անվայել դեպքեր են պատահում և հայ կանանց ու աղջիկներին առևանգում և պատվազրկում են, տիրակալությանս շրջանում բնակչության ինչքն ու պատիվը ապահովելու նպատակով կարգադրում եմ աչալուրջ հսկել, մասնավորապես հայերի նկատմամբ անարդարություններ թույլ չտալ և իրենց կեցությունն ապահովել և իրենց կանանց նկատմամբ կատարած ոտնձգությունները հետապնդել ու խստիվ պատժել, որպեսզի հայերն իրենց ապահով զգան»[414]: Նույն թվականին շահի՝ Ազիզ խանին ուղարկած մեկ այլ հրովարտակում կարդում ենք. «...Հարկավոր է ուշադիր լինել Ատրպատականի տարբեր վայրերում ապրող հայության նկատմամբ, որպեսզի անօրինություններ տեղի չունենան, և նրանք կարողանան ապահովության մեջ իրենց գործը շարունակել: Այս հրովարտակով կարգադրում եմ, որ բոլոր գավառապետներն ու գործակատարներն աչալուրջ լինեն, որ հայ գյուղացիության նկատմամբ որևէ անարդարություն տեղի չունենա և ավելորդ հարկեր չգանձվեն, և նրանց համար հանգիստ կեցություն ապահովեն»[415]:

ԺԹ դարի վերջին տասնամյակներին Ատրպատականի հայաշատ վայրերում եռանդուն գործունեություն են ծավալում բողոքական և քրիստոնեական այլ դավանանքների քարոզիչները: Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը (Խրիմյան Հայրիկ, 1892-1907) 1894 թ. դեկտեմբերի 9-ին երկրամասի հայոց առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցին (1894, հունվար-1895, դեկտեմբեր) ուղարկած կոնդակում գրում է. «Քաջայայտ է ամենեցուն այսօր ողբալի վիճակ հոգեւոր զաւակաց մերոց յԱտրպատականի, որք զրկեալ եւ անմխիթար կան ի բարոյական կրթութենէ եւ ի քարոզչութենէ աստուածային բանին, շարունակ պատրելով ի զանազան խոստմանց խորամանկ միսիօնար քարոզչաց բողոքականաց կամ այլ դաւանութեանց, զհետ լինին մոլորութեանց նոցա, շեղելով յուղիղ եւ արդար ճանապարհէ Մօրս մերոյ Ս. Եկեղեցւոյ. եւ առաթուր հարկանել՝ կոխան անելով զքարոզութեանցն նոցա զվնասակար սերմունս, չէ բաւական ամէնուրեք ի Վիճակիդ մի միակ կարողութիւն Սրբազնութեան Ձերոյ առանց օգնականաց յայլ եւ այլ գաւառս թեմիդ»[416]: Քաջ գիտակցելով, որ օտար կրոնների ներթափանցումն ազգային կրթության պակասի արդյունք է («Բանքս մեր առաւելապէս զբարոյական եւ զազգային կրթութենէ են»), Խրիմյան Հայրիկն Ատրպատական է ուղար-

414 «Հուր», 1971, № 2: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 233, հրովարտակ № 18:

415 Նասրեդդին շահի հրովարտակը պահվում է Թավրիզի հայոց առաջնորդարանի թանգարանում՝ 81 թվահամարի տակ (տե՛ս **Haghnazarian A.**, նշվ. աշխ., էջ 232, հրովարտակ № 17):

416 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 115:

կում «բարեկիրթ, ուսեալ և պիտանի» գործիչների՝ Հովսեփ վարդապետին և Խաչիկ վարդապետ Դադյանին: Առաջինը պետք է գործեր Սալմաստում, Հավթվան գյուղում բացեր Կենտրոնական դպրոց և մայրենի լեզու ու կրոն դասավանդեր հայ մանուկներին, իսկ Խաչիկ վարդապետի առաքելության նպատակներն այլ էին: Մինչ այդ Մակվի Թեյմուր խան սարդարը կաթողիկոսին տեղեկացրել էր Թադեոս առաքյալի վանքում կատարված կողոպուտի մասին: Սակայն Սուքիաս արքեպիսկոպոսն ու վանքի վանահայր Եսայի վարդապետը 1894 թ. նոյեմբերի 27-ի գրությամբ ժխտում են իրողությունը («չէ ստոյգ եւ ճշմարիտ այն նկարագրութիւն Թեմուր խանին»)[417]: Խաչիկ վարդապետը՝ իբրև կաթողիկոսի նվիրակ, պետք է գնար վանք՝ գործերի վիճակը տեղում քննելու և Էջմիածին «զընդարձակագոյն տեղեկագիր» ներկայացնելու, ինչպես նաև Մակվի սարդարին հանդիպելու համար: Խրիմյան Հայրիկը թեմակալ առաջնորդից պահանջում էր սատար լինել երկու վարդապետներին և հանձնարարականները կատարելիս աջակցել նրանց[418]:

Եսայի վարդապետի երկարատև (35 տարի)[419] պաշտոնավարության շրջանը համընկնում էր գավառի հայության արտագաղթից հետո հոգևոր կենտրոնի աղքատացման ու թուլացման շրջանին: Պակասն էլ լրացնում են ավարառու քուրդ ցեղերի հարձակումները. «...այդ 35 տարուայ ընթացքում մեծամեծ նեղութիւններ է կրել քիւրդերի կողմից, որոնք անդադար սահմանից անցնելով աւարի են տուել գիւղերը»[420]:

Հարկ է նշել, որ մինչև 1956 թ. Ատրպատականի թեմը ենթարկվում էր Սբ. Էջմիածնին, որից հետո առ այսօր՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը:

**Արտազի թեմի առաջնորդների և Թադեոս առաքյալի վանքի վանահայրերի գավազանագիրք**. նախքան քրիստոնեությունը 301 թ. Հայաստանում պետական կրոն հռչակելն Արտազ գավառն ունեցել է առաջնորդական թեմ. աթոռակալել է յոթ եպիսկոպոս (այդ շարքում՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներից հետո, առաջինը Զաքարիան է՝ Թադեոս առաքյալի աշակերտը, որը հայտնի է նաև «Վկայաբանութիւն»-ից և «Գիւտ նշխարաց»-ից: Ապա հաջորդում են Զեմենտոս, Ատրներսեհ, Մուշե, Շահեն, Շավարշ և Ղևոնդիոս հայրապետները)[421], որոնց հայոց եկեղեցու հաստատուն ավան-

417 Նույն տեղում:

418 Նույն տեղում:

419 Այլ տվյալներով՝ Թադեոս առաքյալի վանքում Եսային պաշտոնավարել է 40 տարի (տե՛ս նրա մահախոսականը՝ «Արարատ», 1917, ապրիլ-մայիս, էջ 332):

420 «Նոր-Դար», 1895, № 86, էջ 3:

421 Արտազում գահակալած եպիսկոպոսների մասին հանգամանորեն տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, Ա, էջ 27-68: Հմմտ. **Մագուստեան Ն.**, Հայաստանեայց եկեղեցին, «Հայրենիք», 1941, № 8, էջ 71: **Անապատական**, Համառօտ պատմութիւն հայ-լատինական յարաբերութեանց (սկիզբէն մինչև 1382), Անթիլիաս, 1973, էջ 23-24:

դությունը համարում է Ամենայն Հայոց հայրապետներ և Գրիգոր Լուսավորչից առաջ գործած հովվապետներ: Այդ տեսակետի հիմք է ծառայում «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» ձեռագիր պատառիկը՝ քաղված 649 թ. Մաղարդավանքում (Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկայի վանք) Հովհաննես վարդապետի հեղինակած շարադրանքից. «...ի հին յիշատակարանէ միոջ, որ էր գրեալ (ի) ՂԸ (649) թուական[ին] Հայոց, ձեռամբ Յօհաննէս սպասաւորէ, ի սուրբ ուխտէն Մաղարթայ»[422]: Հովհաննես Մաղարդեցին Արտազի եպիսկոպոսների ցանկն (գավազանագիրքը) ավարտում է Ղևոնդիոսով և պատճառաբանում է, թե ինքը չի կարողացել գտնել առաքելական աթոռի վրա նրան հաջորդած առաջնորդների անունները. «Զկնի սորին (Ղևոնդիոս եպիսկոպոսի) չկարացաք գտանել թէ ոյք յաջորդեալ են ի տեսչութիւն եկեղեցւոյն առաքելական վիճակիս Արտազու...»[423]: Անվանացանկի շարունակությունը փորձում է գտնել նաև Զաքարիա Ա Ծործորեցի արքեպիսկոպոսը, սակայն ապարդյուն: Ուստի Հովհաննես վարդապետի հիշատակարանը կորստից փրկելու նպատակով 1329 թ. նա նորոգել է տալիս ձեռագիրը. «Սոյնպէս և մեք զբազումս աշխատեցաք, բայց չկարողացաք գտանել: Ուստի կրկին նորոգեցաք բազում աշխատութեամբ սուրբ ուխտս թվին ՉՀԸ (1329)»[424]:

Վերջին հանգամանքն առիթ է տվել որոշ հայագետների կասկածել սկզբնաղբյուրի ճշմարիտ լինելուն: Մինչդեռ, ինչպես գրում է Մ. Օրմանյանը, «սա ...աւանդութեան մը արձագանքն է եւ հնար չէ ո՛չ Մաղարթեցին եւ ո՛չ Ծործորեցին մտացածին կամ խաբէական տեղեկութեանց հնարիչ ենթադրել»[425]: Արտազի առաջնորդական աթոռը Հայաստանյայց հայրապետական աթոռն էր, «որով իբր գլխաւոր կը մնայ, ...իրեն նուիրական հաստատութիւն ալ ունի Թադէոսի սրբանուէր գերեզմանովը»[426] (զուգահեռ գործում էր նաև Սյունյաց թեմական աթոռը՝ իբրև երկրորդական և ստորակա):

Սակայն տեսակետներից մեկի համաձայն՝ այս ցանկը կազմվել է հետագայում՝ վանքի հեղինակությունը բարձրացնելու նպատակով. «...Ս. Թադէի վանքի վերաշինութիւնից անմիջապէս յետոյ Զաքարիա պարոնտէրը շրջանառութեան մէջ է դնում «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» կոչուած մի գրութիւն, որի անսքող նպատակն է անընդմէջ յաջորդականութեան կարծեցեալ շղթայով յարաբերութեան մէջ մտնել Գրիգոր Լուսաւորչի եւ Քրիստոսի աշակերտ Թադէոս առաքեալի հետ: Զաքարիա եպիսկոպոսը իր այս յօրինուածքին պատմական ստոյգ գրութեան տեսք տալու մտահոգութեամբ յայտնում է, որ ձեռքի տակ ունեցել է հայոց ՂԸ (այսինքն՝ մեր թուականութեան 650) թուականին Մաղարթա վանքի սպասաւոր ոմն Յովհաննէսի գրած մի յիշատակարան: Ուշադիր քննութիւնը բերում է այն համոզման, որ ցանկի մէջ թուարկուած անուններն ըստ մեծի մասի յօրինուած են նոր ժամանակներում՝ Զաքարիայի գործակցութեամբ»[427]:

Նույն տեսակետի կողմնակիցներից մեկն էլ այդ մասին գրում է. «...ցուցակդ յօրինուեր է յօգուտ Արտազու աթոռին առաքելականութեան՝ որ կը յեղյեղուի հոն ստեպ: Եւ այս գործը կը պատշաճի այն շրջանին՝ ուր նոյն աթոռն աւելի կարևորութիւն մը ստացաւ, ու սկսաւ ցոյց տրուիլ հոն առաքելոյն շիրիմ մը... Հետևաբար շատ կասկածելի և նոյն իսկ անկարելի է՝ որ գրուած լինի 649 թուականին: Յամենայն դէպս՝ արտազեցի ցուցակագիրդ բնաւ չէ խորհեր Հայոց հայրապետութեան յաջորդութիւնը գտնել ու տալ ազգին, այլ ուզեր է իր վիճակին թադէականութիւնն ապահովել այն շրջանին՝ ուր հայրապետական աթոռը կը թափառեր հայրենի սահմաններէն դուրս:

...Ծործորեցւոյն ցուցակին «ի հին զրուցատրութենէ» և «գործակցութեամբ Հոգւոյն» հաւաքուած անուանք՝ կրնային նպաստել իր աթոռին փառաց, բայց ոչ և հայ եկեղեցւոյ պատմութեան: Նախագրիգորեան շրջանին համար կը պատասխանեմ. եթէ Արտազ Թադէոսի օրերէն և աշակերտէն սկսեալ եպիսկոպոսներ ունենար, ապա չպիտի մոռնային անոնք առաքելոյն կարծեցեալ գերեզմանը, որոյ վրայ հիմնած էին իրենց աթոռը...

Իրական էր հանգստարանի անյայտութիւնդ, և առաքելական քարոզութեան վիպականութիւնն ապացուցուած, ուրեմն Թադէի արտազական աթոռին և աթոռակալաց գոյութիւնն ալ աղոնց կարգին կը պատկանի:

...արտազեցւոց այդ իսպառ անյիշատակութիւնը՝ չի ներեր մեզ հաւատք ընծայել արտազեան անգան ու նպատակաւոր ցուցակին: Չի մեր եպիսկոպոսական աթոռոց այդքան հնագունին՝ - ինչպէս կուզուի՝ - ու կարևորագունին ժառանգորդները չէին կրնար միանգամայն անտես ապրիլ մեր անցեալ պատմութեան այն բոլոր առթից մէջ՝ որ անոնց ե-

422 Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (այսուհետև՝ Ե-ԺԲ, համապատասխան էջերով), աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 14: Տե՛ս նաև «Արարատ», 1868, էջ 102-104:

423 Ե-ԺԲ, էջ 14:

424 Նշվ. աշխ., էջ 15, ծանոթ. 1: Տե՛ս նաև «Արարատ», 1868, էջ 102:

425 **Օրմանյան Մ.,** Ազգապատում, Ա, էջ 32: Այս հարցի առնչությամբ **Պ. Անանյանը** գրում է. «Արտազու աթոռին Գաւազանագիրքը... իր մէջ կը պահէ պատմական վաւեր տարրեր: Ասոնք օգտակար են լուսաբանելու համար նախագրիգորեան շրջանի քրիստոնէութեան գոյութիւնը Հայաստանի մէջ» (տե՛ս նրա՝ Քրիստոնեության հետքեր Հայաստանի մէջ ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ, «Բազմավէպ», 1978, էջ 62):

426 **Օրմանյան Մ.,** Ազգապատում, Ա, էջ 32:

427 **Խաչիկեան Լ.**, նշվ. հոդվ., Աշխատութիւններ, հ. Բ, էջ 86:

ռնիլը կը պահանջէին՝ ըստ եկեղեցական կարգաց»[428]:

Արտազի թեմակալ առաջնորդների գավազանագիրք ստեղծելու մեզ հայտնի առաջին փորձը վերաբերում է ԺԷ դարի թեմի առաջնորդ Մկրտիչ Արտազեցուն: Վերջինիս կազմած ցանկում, սակայն, տրված են առաջնորդների մի մասի սոսկ անունները առանց տարեթվերի՝ սկսած Զաքարիա Ա Ծործորեցուց մինչև իր օրերը[429]:

Հաջորդ փորձը կատարել է Խաչիկ վարդապետ Դադյանը, որի՝ 1894 թ. կազմած անվանացանկը մինչև օրս անտիպ է. այստեղ ներկայացված են ԺԹ դարում պաշտոնավարած վանահայրերի և Արտազի (ապա նաև Ատրպատականի հայոց) թեմի առաջնորդների ցանկը[430]:

Գավազանագրքի քիչ թե շատ ամբողջական տարբերակներ են կազմել նաև Հայկ Աճեմյանը[431] և Նորայր եպիսկոպոս Ծովականը (1960)[432]: Փորձ է արվել ճշտելու թեմակալ առաջնորդների և վանահայրերի պաշտոնավարության տարիները:

Ստորև ներկայացվող Արտազի թեմի առաջնորդների գավազանագիրքը կազմվել է աղբյուրագիտական նյութի առավել ամբողջական ընդգրկման և քննության հիման վրա:

**Զաքարիա (68-72).** ազգությամբ հրեա էր[433]: Թադեոս առաքյալի աշակերտն էր, հիշատակվում է առաքելական «Վկայաբանութեան» մեջ և «Գիտ նշխարաց»-ում[434]:

«Արտազու անգոյ աթոռին առաջին եպիսկոպոսն է Զաքարիա, որ հանուած է Թադէի կեղակարծ Վկայաբանութենէն,– և կրկնուած ասոր միջնադարեան յարասութենէն,– ուր առաքեալը կըսէ հաւատացեալ՝ թէ «ետու ձեզ առաջնորդ զԶաքարիաս սիրելին Քրիստոսի, որ իմ լծակից և պաշտօնեայ Տեառն»[435]:

Մեկ այլ տվյալի համաձայն՝ Զաքարիա եպիսկոպոսը հովվել է 12 տարի՝ 58 թ.-ից մինչև իր նահատակությունը՝ 70 թ. (նահատակվել է Երվանդ Բ թագավորի կողմից)[436]:

**Զեմենտոս (72-76).** ազգությամբ հայ էր[437]: Հաջորդել է Զաքարիա հայրապետին: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ պաշտոնավարել է 70-79 թվականներին. «Զեմենտոս, որ բոլոր ճանապարհների վրայ հսկող էր կգուած եւ Սանատրուկ թագաւորի հաւատարիմն էր, երբ իւր դահճապետ եղբայրը Ս. Թադէոս Առաքեալին նահատակում էր, եղած հրաշքները տեսնելով՝ քրիստոնեայ դարձաւ, եւ Զաքարիայի մահից յետոյ յաջորդեց նրան: Զեմենտոս իւր եպիսկոպոսութեան պաշտօնը ամենայն արժանաւորութեամբ վարելուց յետոյ՝ 79 թ. նահատակուեց Երուանդ Բ թագաւորի եղբայր Երուազ քրմապետից»[438]:

Այս առաջնորդի վերաբերյալ կա նաև հետևյալ տեսակետը. «...հին վկայագիրը կը կերտէ անոր անձն աշխարհիկ ձևի տակ. յարասութիւնը կը մարտիրոսացնէ. արտազեան ցուցակը զայն եպիսկոպոս կը ձեռնադրէ, և Օրմանեան Հայոց «հայրապետ» կ'ընտրէ: Անուրի դրուած վաճառ մ'է. ով ինչ գին տայ՝ զայն կը ստանայ..»[439]:

**Ատրներսեհ եպիսկոպոս (77-92)**[440]. «...կ'ապրի լոկ արտազեան մտացածին ցուցակին և Ազգապատումին մէջ, որ չվարանեցաւ անոր կենսագրութիւնն ալ կերտել»[441]:

**Մուշե եպիսկոպոս (93-123).** հաջորդել է եպիսկոպոս Ատրներսեհին[442]: Նա «Պարսից երկրից էր. հեթանոսների երկիւղից ծածկաբար կառաւարեց իր թեմը 30 տարի...»[443]:

---

428 **Հացունի Վարդան վարդապետ**, նշվ. աշխ., էջ 100-101, 102, 104:

429 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 351-352: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 480-481: Նույնի՝ Արտազի վանքը, էջ 47:

430 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58: Խ. Դադյանի կազմած գավազանագիրքը հետևյալն է. «Սբ. Թադէոս Առաքելոց փոխանորդ առաջնորդները սկսեալ 1818-էն՝

«1. Սիմէօն եպիսկոպոս Պզնունի 1818-1824
2. Բարսեղ եպիսկոպոս 1824-1834
3. Նիկողայոս եպիսկոպոս 1834-1851
4. Սահակ եպիսկոպոս Սաթունեանց 1851-1857
5. Յակոբ ծայրագոյն վարդապետ Շահպազեանց 1857-1858
6. Աբէլ եպիսկոպոս Ղուշչիկեանց 1858-1860
7. Գէորգ եպիսկոպոս Վեհապետեանց 1861-1867
8. Գրիգոր եպիսկոպոս Յովբեանց 1868-1873
9. Անդրէաս եպիսկոպոս Պօլսեցի 1873-1878
10. Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց 1879-1882
11. Թադէոս եպիսկոպոս Տէր ...
12. Մեսրոբ ծայրագոյն վարդապետ Ճերմակեանց 1885-1886
13. Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարեանց 1886-1892
14. Սուքիաս եպիսկոպոս Պարզեանց,

***վանահայրք 1820-էն՝***

Եսայի վարդապետ Սարգսեանց 1837
Փիլիպպոս վարդապետ 1840
Եղիազար վարդապետ 1858
Կարապետն Փիլիպպոսեան 1862
Եսայի վարդապետ Յովսէփեան 1895»:

431 **Աճէմեան Հ.,** Ս. Թադէի վանքը, մասն I, էջ 27-31, մասն II, էջ 13-14:

432 **Ծովական Ն. եպիս.**, Ս. Թադէոսի վանք, «Սիոն», 1960, էջ 75-76:

433 **Մագսուտեան Ն.**, նշվ. հոդվ., «Հայրենիք» 1941, № 8, էջ 71: Տե՛ս նաև **Փօսթաճեան Թ.**, Հայ եկեղեցւոյ ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Նույնի՝ Հայաստանեայց եկեղեցին եւ միւսները, Լոս Անճելըս, 2005, էջ 220:

434 Սոփերք, Ը, էջ 53, 72:

435 **Հացունի Վարդան վարդապետ**, նշվ. աշխ., էջ 105:

436 **Մովսիսեան Յուսիկ վրդ.**, նշվ. աշխ., էջ 25:

437 **Փօսթաճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Լոս Անճելըս, 2005, էջ 221:

438 **Մովսիսեան Յուսիկ վրդ.**, նշվ. աշխ., էջ 25:

439 **Հացունի Վարդան վարդապետ**, նշվ. աշխ., էջ 107:

440 **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 261: Տե՛ս նաև **Փօսթաճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29; նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

441 **Հացունի Վարդան վարդապետ**, նշվ. աշխ., էջ 107:

442 **Փօսթաճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

443 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1946, էջ 463:

**Շահեն եպիսկոպոս (124-150).** հաջորդել է Մուշեղին[444]:

**Շավարշ եպիսկոպոս Աղվանից (151-171).** Շահեն եպիսկոպոսից հետո Արտազի թեմը կառավարել է 20 տարի[445]:

**Ղևոնդիոս (172-190)**. առաջնորդել է Արտազի թեմը՝ հաջորդելով Շավարշ եպիսկոպոսին[446]: Սակայն նրա նահատակության թվականը՝ 190 թ., չի համապատասխանում Վաղարշ թագավորի (193-213) գահակալության տարիներին:

Շահեն, Շավարշ և Ղևոնդիոս առաջնորդների վերաբերյալ գրվել է. «Արտազու հակապատմական ցուցակէն միայն գիտենք Շահենի, Շաւարշի ու Ղևոնդիոսի անուններն ալ, որոնք եթէ պատմաքննութենէն դատապարտուած են չգոյութեան, մխիթարութիւնն ունին գէթ «սուրբ մակդիրն» ընդունելու իրենց վրայ Ազգապատումի մէջ, որ անոնց հիւրաքանչիւրին կենսագրութիւններ ալ պարգևեց»[447]:

**Մխիթար հայրապետ Սյունյաց** (190-239)[448]:

**Մեհրուժան** (240-279)[449]. ըստ Եվսեբիոս Կեսարացու՝ հիշվում է 254 թ. Արտազի Մեհրուժան հայրապետն Աղեքսանդրայի Դիոնիսիոս հայրապետից նամակ ստանալու առնչությամբ[450]:

**Աղուբիոս եպիսկոպոս (302-327՞).** «...ժողովրդի խնդիրքով՝ Լուսաւորիչը կարգեց նրան այս պաշտոնին, ուր և մնաց 25 տարի, երևի 302-327 թթ.»[451]:

**Դանիել եպիսկոպոս (327-345՞).** այս թվականներին հիշվում է որպես Արտազի թեմի առաջնորդ[452]:

**Վրթանես եպիսկոպոս (345-351՞).** հաջորդել է Դանիել եպիսկոպոսին[453]:

**Ստեփան եպիսկոպոս (351).** որպես Արտազի թեմի առաջնորդ՝ հիշվում է 351 թ.[454]:

**Իսրայել եպիսկոպոս (Դ դարի վերջին քառորդ).** հոջորդել է Ստեփան եպիսկոսին[455]:

**Թադեոս եպիսկոպոս (մոտ 421-451).** հաջորդել է Իսրայելին՝ Արտազի թեմն առաջնորդելով մոտ 30 տարի՝ մինչև կյանքի վերջը[456]:

**Տիրատուր արքեպիսկոպոս (Է դար).** մասնակցել է Կարինի 633 թ. եկեղեցական ժողովին[457]:

**Գրիգոր Ամատունի (Ժ դար)**[458]:

**Հովսեփ վարդապետ Արտազեցի (առնվազն 1243-1247).** ԺԳ դարի նշանակավոր գիտնական և եկեղեցական գործիչ, վարդապետ Հովհաննես Տավուշեցու աշակերտն էր[459]:

**Տիրացու Ա եպիսկոպոս (1285՞-1298՞).** աշակերտել է Վարդան Արևելցուն[460]: Խոր Վիրապի վանքում 1266 թ. ընդօրինակում է իր ուսուցչի «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատությունը[461]: Ապա եղել է Արտազի թեմի առաջնորդը՝ հաջորդելով Հովսեփ Արտազեցուն:

1285 թ. Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Գ-ի հետ Թադեոս առաքյալի վանք ուխտի եկած Թորոս փիլիսոփան հյուրընկալվում է «...առ գերահռչակ եւ արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ ս(ուր)բ ուխտիս Թադէոսի առաքելո, և յայսմ ժամանակի փայլէր իբրեւ զջահ վառեալ ի մէջ գիշերի, որ էր նաւահանգիստ վտանգելոց, քաղցելոց եւ ծարավելոց շնորհօք սուրբ Առաքելոյն...»[462]:

Տիրացու եպիսկոպոսի անվան հետ է կապվում նաև սուրբ Սուքիասյանց քրիստոնյա նահատակների նշխարների հայտնաբերումը. «...յաւուրս մեր յայտնեաց Աստուած սքանչելի հրաշիւք, ի ձեռն արհիականիս մերոյ և մեծ դիտապետիս տէր Տիրացուի» և Կողբավանքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շենացումը[463]:

Մոնղոլ Նովրուզ զորապետի արշավանքների ժամանակ ենթարկվել է տանջանքների: Ենթադրվում է, որ մահացել է 1298 թ.:

---

444 **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 118: Տե՛ս նաև **Փօթուրճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

445 **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., հ. Դ, էջ 155-156: Տե՛ս նաև **Փօթուրճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

446 «Արարատ», 1868, էջ 102-104: Տե՛ս նաև **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 140: **Փօթուրճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

447 **Հացունի Վարդան վարդապետ**, նշվ. աշխ., էջ 108-109:

448 **Փօթուրճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

449 **Եւսեբիոս Կեսարացի,** Պատմութիւն եկեղեցւոյ, յեղեալ յԱսորւոյն ի Հայ ի Ե դարու, թարգմ. Հ. Ա. Ճարեանի, Վենետիկ, 1877, էջ 517: Տե՛ս նաև **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, էջ 27-68: **Փօթուրճեան Թ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1955, № 3, էջ 29: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 221:

450 **Մազսուտեան Ն.,** նշվ. հոդվ., «Հայրենիք», 1941, № 8, էջ 72:

451 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 109-110:

452 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 10:

453 **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 129:

454 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Դ, էջ 601:

455 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 392:

456 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., էջ 244:

457 **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 328, 538: Տե՛ս նաև **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 160:

Ի դեպ, սկզբնաղբյուրները վերոնշյալ առաջնորդների կյանքն ու գործունեությունը կապում են Արտազի հետ՝ չհիշատակելով, սակայն ո՛չ առաջնորդական նստավայրը, ո՛չ Թադեոս առաքյալի վանքը: Անշուշտ, այն սրբատեղին, որտեղ պաշտոնավարել են նրանք, Թադեոս առաքյալի նահատակավայրն է՝ իբրև գավառի կարևորագույն հոգևոր կենտրոն:

458 **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 400:

459 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 330:

460 Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի (կազմ. **Ս. Տէր-Աւետիսեան**), Վիեննա, 1970, էջ 551:

461 ԺԳ, էջ 346, 347-348:

462 **Մաքսուդեան Մ.**, Ագուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը, «Արարատ», 1911, դեկտեմբեր, էջ 223-224: Տե՛ս նաև **Զարբհանալեան Գ.**, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսմանց ազգային վարժարանաց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1905, էջ 150: **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 43: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 470-471: ԺԳ, էջ 692:

463 Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, (կազմ. **Ս. Տէր-Աւետիսեան**), Վիեննա, 1970, էջ 255-256: Տե՛ս նաև ԺԳ, էջ 621-622:

**Զաքարիա Ա եպիսկոպոս Բիստեցի**[464] **(նաև Ծործորեցի) (1315՞-1337)**. Զաքարիա եպիսկոպոսի՝ որպես թեմակալ հայ կաթողիկե առաջնորդի պաշտոնավարման սկիզբն անհայտ է: Հավանաբար հաջորդել է Տիրացու Ա եպիսկոպոսին, թեև նրա մասին առաջին հիշատակությունը միայն 1315 թ.-ից է[465]:

1303 թ. Թադեոս գրչի հեղինակած ձեռագրի հիշատակարանում հիշվում է Զաքարիա Ծործորեցին[466]:

Ռստակես գրիչը Զաքարիա եպիսկոպոսին մեծարում է «...յառաջնորդութեան այսմ նահանգիս և աստուածախնամ Արտազ գաւառիս՝ սուրբ և առաքելաշնորհ արհիական գլուխն, տիեզերալոյս և աշխարհածաւալ, բարիախոհ և վերադիտող, պարիսպ ամրութան հանուրց եկեղեցեաց, և բերդ հաստատուն քահանայից և ամենայն քրիստոնէից» բառերով[467]:

ԺԴ դարասկզբին Հովհաննես Օրբելին գրություն է հղում Զաքարիա Ծործորեցուն՝ նրան դիմելով այսպես. «Զգերապատիւ գլխոյդ, սրբազան քաջ հովուապետիդ, աթոռակալի վերակացուիդ առաքելական աթոռիդ, էքսարխօսիդ Հայոց...»[468]:

1316 թ. հուլիսի 18-ին Հովհաննես Երզնկացի-Ծործորեցու հետ մասնակցում է Կիլիկիայի Ադանա քաղաքում հրավիրված հայ և կաթողիկե եկեղեցիների միության խնդիրներին նվիրված եկեղեցական ժողովին. «...արհեպիսկոպոսն Զաքարիա՝ որ էր իշխօղ եկեղեցւոյն սրբոյն Թադէոսի առաքելոյն, ուր կայ գերեզման նորին ի կողմանս արևելեան, յայնկոյս Երասխ գետոյն՝ ի սահմանս երկրին Պարթևաց, ոչ հեռի ի մեծահռչակ Արարատ լեռնէ»[469]:

1318 թ. հիշատակվում է «...առաջնորդ տէր Զաքարեայ»-ն[470]:

Զաքարիա եպիսկոպոսը 1319-1329 թթ. ընթացքում իրականացնում է շինարարական աշխատանքներ, ինչպես նաև ծավալում մշակութային և վարչական լայն գործունեություն:

1321 թ. Հովհաննես Երզնկացին «...ձեռնտուութեամբ արհեպիսկոպոսին տէր Զաքարիայի, սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի...» թարգմանում է Թովմա Աքվինացու Եկեղեցու յոթ խորհուրդները[471]:

1329-1337 թթ. հիշվում է իր աթոռակից տեր Տիրացուի հետ[472]:

1332 թ. ստեղծված Աստվածաշունչն ավարտվել է (ձեռագրի ստացող՝ Ներսես Տարոնացի, գրչության վայր՝ Գլաձոր-Քռնա) նաև «...յեպիսկոպոսութեանն տէր Զաքարիայի՝ սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի...»[473]:

Զաքարիայի մահվան ստույգ տարեթիվն անհայտ է: Հավանաբար վախճանվել է մինչ 1350 թ. «...գրեցաւ աւետարանս և կաթօղիկեօքն ի ընդիր այլ և զգլուխ հո[յ]ակապ ուխտի և զարժանաժառանգ յաջորդ սուրբ առաքելոյս Թադէոսի վիճակի զտէր Զաքարիայ՝ զհանգուցեալն ի Քրիստոս»[474]:

**Տիրացու Բ եպիսկոպոս (1329-1361՞).** «հեզ և սրբասեր» Տիրացու Բ եպիսկոպոսը 1329 թ.-ից հիշվում է որպես իր հորեղբոր՝ Զաքարիա Ա-ի աթոռակից: Նշյալ թվականին վանքի վերականգնման աշխատանքներին վերաբերող վիմագրերից մեկում Տիրացու եպիսկոպոսը հիշվում է որպես Զաքարիայի հաջորդ[475]:

1330 թ. ստեղծված մի ձեռագրի հիշատակարանում Զաքարիա եպիսկոպոսի կողքին դարձյալ հիշվում է տեր Տիրացուն. «...յառաջնորդութեան այսմ նահանգի տեառն Զաքարիայի և տէր Տիրացու՝ հեզի եւ սրբասիրի ...»[476]:

1336 թ. Թումա գրչի՝ Թավրիզում ստեղծած ավետարանի հիշատակարանում հիշվում են Զաքարիա Ծործորեցին և աթոռակից տեր Տիրացուն. «...յեպիսկոպոսութեան և վերադիտողութեան սրբոյ առաքելոյն Թադէոսի՝ տէր Զաքարիայի և տէր Տիրացւի՝ հեզոց, հանդարտաց և բարեսիրաց, որոց տացէ տէր աստուած ժամանակ սոցա ընդ երկայն աւուրս...»[477]:

1337 թ. ևս տեր Տիրացուն հիշվում է որպես Զաքարիա Ա-ի հաջորդ. «...յառաջնորդութիւն արհիա-

---

464 **Բիստ (Բուստ)** գյուղը գտնվում է ներկայիս Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջանում՝ Գիլան գետի ձախափնյա բարձրության, Գիլան և Նասրվազ գետերի միջակայքում հրվանդանաձև երկարած լեռնաճյուղին՝ ծովի մակերևույթից 1550-1650 մ բարձրության վրա՝ Կապուտջուղ լեռան հարավարևմտյան ստորոտին: Հայ մատենագրության մեջ հիշատակվում է՝ սկսած ԺԳ դարից: Մտնում էր Մեծ Հայքի Գողթան գավառի մեջ և հարկատու էր Տաթևի վանքին: Նշանավոր էր հատկապես գյուղից 1 կմ հյուսիս գտնվող Սբ. Նշան անապատով (կոչվել է նաև Կարմիր վանք, Բուստա վանք), որը եղել է ԺԴ-ԺԷ դդ. հայոց գրչության աչքի ընկնող օջախներից մեկը:

465 ԺԴ, էջ 114:

466 **Յովսէփեան Գ.**, նշվ. աշխ., մասն երկրորդ, էջ 257: Տե՛ս նաև ԺԴ, էջ 15:

467 ԺԴ, էջ 114: Նույն ձեռագրում հիշատակվում է նաև Զաքարիա Ծործորեցու եղբայրը՝ պարոն Պետրոսը:

468 **Հացունի Վարդան**, նշվ. աշխ., էջ 47:

469 Նշվ. աշխ., էջ 48: Ադանայի ժողովի մասին տե՛ս նաև **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հ. Բ, էջ 2122-2132: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 13:

470 **Խաչերեան Լ.**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, դպրոցներ, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարյան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI դդ.), հ. երկրորդ, Լիզպոն, 1998, էջ 121:

471 ԺԴ, էջ 173: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 1267:

472 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 44:

473 ԺԴ, էջ 245: Ի դեպ, Գլաձորի միաբանության անդամ Ներսես վարդապետը ձեռագիրը ստանալու համար գումարի նեղության պատճառով, ի թիվս այլոց, դիմել է նաև Զաքարիա Ծործորեցու աջակցությանը. «...գնացի ի սուրբ առաքեալն Թադէոս՝ առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս. և նա ետ ինձ Շ (500) դր[ամ]...» (նույն տեղում, էջ 246):

474 ԺԴ, էջ 385:

475 Տե՛ս սույն աշխ., էջ 157-159, արձ Ա:

476 ԺԴ, էջ 227:

477 ԺԴ, էջ 282:

կան գլխոյն եւ սրբազան քահանայապետին տէր Զաքարիայի եւ յաջորդի նորին տէր Տիրացուի երջանկի հեզի եւ մարդասիրի լցեալք եւ պայծառացեալք ամենայն առաքինութեամբ զորոյ Տէր Աստուած անվրդով եւ անփորձ պահեսցէ զնոսա...»[478]:

1350 թ. Տիրացու Բ-ն հիշվում է որպես «...այ[ր բար]եխորհ և իմաստուն, յոյժ անուանի և ամենեցուն մեծա<ր>մեծաց սիրելի»[479]:

Վերջին անգամ հիշատակվում է 1361 թ.՝ աթոռակից ունենալով Զաքարիա Բ եպիսկոպոսին[480]:

**Զաքարիա Բ եպիսկոպոս (1361՞-1392).** հայ կաթողիկե եպիսկոպոս Տիրացու Բ եպիսկոպոսին հաջորդել է Զաքարիա Բ պարոնտեր[481] եպիսկոպոսը: Վերջինս՝ իբրև Տիրացուի աթոռակից, հիշատակվում է 1361 թ. «...ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Թաթէոսի՝ Տէր Տիրացուի և Տէր Զաքարիայի»[482]: Պաշտոնավարել է առնվազն մինչև ԺԴ դարի 90-ական թվականները: Արդեն միայնակ է հիշատակվում 1392 թ. Մակվում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում: 1392 թ. կաթողիկե այս եպիսկոպոսը հիշվում է որպես Թադեոս առաքյալի վիճակի հայրապետ[483] և Արտազ գավառի պարոնտեր[484]. «...առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրաւնաւորի...» (գրիչ՝ ֆրա Մխիթարիչ, աշխատանքն ավարտել է 1406 թ.)[485]:

**Մատթեոս եպիսկոպոս (1321-1335՞).** հայտնի էր կաթողիկեների քարոզչության դեմ ծավալած իր գործունեությամբ:

Պաշտոնավարել է մոտ մեկուկես տասնամյակ՝ 1321-1335՞ թվականներին:

**Մեսրոպ վարդապետ Արտազեցի (1335՞-1359).** հաջորդել է Մատթեոս եպիկոպոսին, նստավայրը Թադեոս առաքյալի վանքն էր: Հայտնի էր կրթադաստիարակչական գործունեությամբ և մեծարվել է իբրև անվանի րաբունապետ[486]: Իր ազգանվեր գործունեության շնորհիվ մեծ հռչակ ու հեղինակություն է ձեռք բերել: 1359 թ. ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս (1359-1372)[487]:

**Պետրոս եպիսկոպոս (հիշ. 1397).** սկզբնաղբյուրները Մեսրոպ Արտազեցուն հաջորդած առաջնորդի մասին լռում են: Սակայն հայտնի է, որ Պետրոս եպիսկոպոսը ԺԴ դարավերջին թեմի առաջնորդն ու վանքի վանահայրն էր[488], որը 1397 թ. քահանա է ձեռնադրում Կիրակոս Ա Վիրապեցուն (1441-1443). «...և եղին զկաթողիկոս զտէր Կիրակոս. որ էր յերկրէն Քաջբերունեաց, ի գեղջէն Խառաբաստայ. և ելեալ յերկրէ բնակեցաւ ի կենդանաթաղ վիրապն Լուսաւորչին յամս երեսուն երկու. էր սա աշակերտաց Սարգսի և Վարդանայ վարժապետաց. այր ճգնաւոր սուրբ և ընտրեալ. որ թուին ՊԽԶ 1397 եղև քահանայ ձեռամբ տէր Պետրոս եպիսկոպոսի Թադէոսի առաքելոյն. մինչ ի թուին ՊՂ 1441 միս ոչ եկեր. և գինի ոչ արբ. և կիթ անասնոց. և այժմ հաւանութեամբ ամենեցուն եդին կաթողիկոս...»[489]:

**Մխիթարիչ (հիշ. 1406).** կաթողիկե այս առաջնորդի օրոք 1406 թ. արտագրվում է Երգ երգոցի մի մեկնություն[490]: Հիշվում է որպես վանքի րաբունապետ[491]:

**Գրիգոր եպիսկոպոս Մակվեցի Ջալալբեկյանց (1426՞-1443).** Ջալալ բեկի որդին էր և, ըստ ամենայնի, ծնունդով Մակու քաղաքից էր. «Սովորաբար

---

478 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 474-475: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 15:

479 ԺԴ, էջ 385:

480 Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, կազմ.՝ **Մինասեան Լ.**, Վիեննա, 1972, ձեռ. 23, էջ 32:

481 Տերմինի մասին Մ. Օրմանյանը գրել է. «Պարոն կոչումը սղումն է պատրոն (Patron) եւրոպական բառին եւ կը պատասխանէ հայերէն տանուտէր կոչման, եւ այսպէս կը կոչուէին միջին դարերու նշանաւոր եւ իշխանաւոր անձեր, իսկ Տէր կոչուածը իբրեւ պատուանուն սեփականուած էր եկեղեցականներուն: Այս տեսութեամբ պարոնատէր, այսինքն պարոն եւ կը կոչուէին այն եկեղեցականները, որոնք կանխուէն աշխարհիկ վիճակի մէջ իշխանաւորի դիրք վայելած էին» (**Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Բ, էջ 2607):

482 Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, ձեռ. 23, էջ 32:

483 **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 310:

484 ԺԵԱ, էջ 61, ծանոթ.:

485 Նույն տեղում:

486 **Զարբհանալեան Գ.**, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 150, 193-194: Տե՛ս նաև **Չամչյանց Մ.,** նշվ. աշխ., հ. Գ, էջ 355: **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 44: **Ծովական Ն. եպս.**, Ս. Թադէոսի վանք, «Սիոն», 1960, էջ 76:

487 Մեսրոպ Արտազեցու՝ կաթողիկոս ընտրվելու հանգամանքը Մ. Օրմանյանը հետևյալ կերպ է բացատրում. Հակոբ Բ Անավարզեցու «յաջորդն եղաւ Մեսրոպ Արտազու արքեպիսկոպոս ու Թադէոսի վանքի առաջնորդ, եւ յայտնի չէ թէ պատահմամբ Սիս գտնուելով, կամ ներհակընդդէմ մրցումներու վերջ տալու համար, այսպէս հեռուէն անձ մը հայրապետական աթոռ բարձրացած է... Իր ընտրութիւնը պէտք է մեկնել իբր չափաւորութիւն մը Կիլիկիոյ լատինասէր ուղղութեան մէջ, քանի որ լատինասիրութիւնը, առանց երկրին քաղաքական օգուտ մը բերելու, ներքին երկպառակութիւններու պատճառ կըլլար» (տե՛ս **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հ. Բ, էջ 2243-2244):

488 Հ. Ոսկյանը, հիմք ընդունելով Թ. Մեծոփեցու «Յիշատակարանը», Արտազի այս առաջնորդին անվանում է Պողոս (**Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 476): Դեռևս 1973 թ. Լ. Ս. Խաչիկյանը ցույց է տվել, որ Մեծոփեցու «Յիշատակարան»-ի՝ Մատենադարանում պահվող ձեռագրերում Արտազի եպիսկոպոսն առանց բացառության անվանվում է Պետրոս, և հավանական է համարում Պողոս անվան վրիպակ լինելը հրատարակված տեքստում (**Խաչիկյան Լ.,** նշվ. հոդվ., «ԲՄ», էջ 156, ծանոթ.):

489 ԴՀՊ, գիրք Ժ. Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ դար), կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով հրատարակեց **Գիւտ Աղանեանց** ա. քահ., Թիֆլիս, 1912, էջ 46: Տե՛ս նաև **Թովմա Մեծոփեցի**, էջ 222: Ժամանակագրութիւն **Գրիգոր** վարդապետի Կամախեցւոյ կամ **Դարանաղցւոյ** (այսուհետև՝ **Գրիգոր Կամախեցի**, համապատասխան էջերով), հրատ. Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 312: Տե՛ս նաև **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 453: ՄԺԲ, էջ 353:

490 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 477: Տե՛ս նաև **Հախնազարեան Ա.**, Իրանում գտնող հայկական վանքերի պատմութիւնը. Սուրբ Թադէի վանքը, «Ալիք», 1983, օգոստոսի 6, էջ 4:

491 **Խաչերեան Լ.**, նշվ. աշխ., էջ 143:

Մակուեցի կամ Արտազեցի կամ Սուրբ Թադէոսցի ալ կը կոչուի, որովհետև եպիսկոպոս էր Արտազի, որ է Մակու քաղաքը, ուր է Սուրբ Թադէոսի մայրավանքը, բայց անհաւանական չէ, որ ծննդեամբ ալ նոյն քաղաքէն եղած ըլլայ»[492]:

1441 թ. նախ մասնակցում է Կիրակոս Վիրապեցու (1441-1443) կաթողիկոսական ընտրությանը («...Գրիգոր վարդապետ ի սուրբ Թադէոսէ...»)[493], ապա աթոռակալում Էջմիածնում (1443-1465). «...Կիրակոս երկամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ հրաժարուեց կաթուղիկոսութիւնից և սկսեց առանձնական կեանք վարել. իսկ նորա տեղը առանց ազգի հաճութեան 1443 թուին կաթուղիկոս կարգուեց Մակուեցի Ջալալբէկեան եպիսկոպոսը՝ Գրիգոր Ժ-որդ անուամբ»[494]:

**Հակոբ վարդապետ (հիշ. 1486).** հայտնի է միայն, որ 1486 թ. նահատակված Միրաք Թավրիզեցուն[495] վերջին հարգանքը մատուցողների թվում է եղել նաև «...վարդապետն Յակոբ՝ ի սուրբ Թադէոսի Առաքելոյ վանացն»[496]:

**Զաքարիա Գ. (հիշ. 1493).** նշյալ թվականին հրովարտակ է ստանում Ուզուն Հասանի թոռ Ռուստամ տիրակալից[497]:

**Կարապետ (հիշ. 1516).** միակ հիշատակությունը վերաբերում է 1516 թ., երբ դիմում է Սեֆյան Իսմայիլ շահին՝ խնդրելով պաշտպանել Թադեոս առաքյալի վանքի իրավունքները[498]:

Այնուհետև մինչև 1574 թ. միմյանց են հաջորդում «...Յոհաննէս եպիսկոպոս եւ յետ նորա Յակոբ վարդապետ, Պետրոս վարդապետ, Ներսէս եպս., Սրապիոն եպս., Գրիգոր եպս., Վրդանէս եպս., Պետրոս եպս. Քօսեցի, Դանիէլ վրդ., Մկրտիչ եպս. Փոքր, Սրապիոն եպս., Թադէոս եպս...»[499], որոնց վերաբերյալ տեղեկություններ չունենք:

**Թադեոս եպիսկոպոս Արայիշենց (հիշ. 1574).** այդ թվականին Հովհաննես երեցի կազմած ավետարանի հիշատակարանում վկայված է. «Յիշեցէք զնորընծայ Տէր Թաթէոս եպիսկոպոսն որ ...վերստին հաստատեց ժամակարգութիւն...»[500]:

**Բարսեղ եպիսկոպոս Բիստենց (1591-1631).** առաջին անգամ անունը հիշվում է Շահ Աբաս Ա-ի 1591-1592 թ. հրովարտակում[501]: Եվս երկու անգամ Բարսեղի անունը վկայված է Ղարաջալու գյուղում կազմված ավետարանների հիշատակարաններում: Առաջին ձեռագիրը կազմել է Արիստակես եպիսկոպոսը 1615 թ. «...կազմեցաւ Աւետարանս ի գիւղս որ կոչի Ղարաջալու, ի դուռն Ս. Պօղոսիս, ի յոտն Ս. Թաթէոսի առաքելոյն, ի յառաջնորդութեան Բարսեղ եպիսկոպոսին, ի քահանայութիւն տէր Պօղոսին...»[502]: Երկրորդ ձեռագիրը նորոգել է Պետրոս երեցը 1631 թ. «...վերստին նորոգեցաւ [սր.] Աւետարանս...ի յենխահեայ, ի գեղչէն Ղարաջալու, ի դուրս Ս. Վարդանայ, ...ի պատրիարքս Հայոց Էջմիածնա[յ] Մովսէսին, և առաջնորդս մեր Բարսեղ եպիսկոպոսն»[503]:

**Մկրտիչ եպիսկոպոս Մակվեցի (առնվազն 1650-1664).** առաջնորդ նշանակվելու ստույգ տարեթիվը հայտնի չէ: 1650-1653 թթ. ընթացքում նա հաջողությամբ իրականացնում է վանքի վերականգնման ու նոր շինություններով լրացնելու գործը[504]:

Եպիսկոպոսին հաջորդած Իսահակ Մակվեցին իր նախորդին հիշում է հետևյալ խոսքերով. «...յաջորդեցաք զտեղի փառազարդ ծերունւոյն Մկրտիչ եպիսկոպոսի...»[505]:

---

492 **Հայրապետյան Շ.**, Մայր աթոռի մեծ երախտավոր և գրիչ կաթողիկոսը. Գրիգոր Ժ Ջալալբեկյանց, «Էջմիածին», 1998, № Է, էջ 71: Մեկ այլ տեսակետով՝ Գրիգոր Մակվեցու ծննդավայրը Թավրիզ քաղաքն է (նույն տեղում):

493 **Թովմա Մեծոփեցու** Յիշատակարանը, Թիֆլիս, 1892, էջ 51, 78-82: Տե՛ս նաև **Թովմա Մեծոփեցի**, էջ 218: Նօտարք հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ընծայեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցւոյ Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, 1888, էջ 122: **Զաքարեայ սարկաւագ**, հ. Գ, էջ 31: **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 202: ԴՀՊ, գիրք Ժ, էջ 46: **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 490-491:

494 **Յ. վ. Մ. (Մովսիսյան Հուսիկ վարդ.),** Հայաստանեայցս Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, «Արարատ», 1886, յունուար, էջ 12: Տե՛ս նաև **Թովմա Մեծոփեցի**, էջ 218:

495 Սկզբնաղբյուրների համաձայն՝ Խոջա Միրաքը նահատակվել է Թավրիզում 1486 թ. մարտի 24-ին ( ՄԺԱ, էջ 144, 155 ծանոթ.): Տե՛ս նաև Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատութեամբ **Յ. Մանանդեանի** եւ **Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, 1903, էջ 325 ( բնագիրն ամբողջությամբ՝ էջ 322-328): Միրաք Թավրիզեցու նահատակության մասին հիշատակում է նաև ԺԵ դարի վենետիկցի ճանապարհորդ Ջ. Բարբարոն (**Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 213-214):

496 Հայոց նոր վկաներ (1155-1843), աշխատութեամբ **Յ. Մանանդեանի** եւ **Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, 1903, էջ 325: Տե՛ս նաև **Աճառյան Հր.,** Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 508:

497 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 18-19: Տե՛ս նաև **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 52, 82: Հրովարտակը հրատարակվել է նաև **Haghnazarian A.**, Das armenische Thaddaus kloster in Prov. Nord Azerbeidjan-Iran, s. 210, № հրովարտակ 1: «Հուր», 1972, № 2:

498 **Կոստիկյան Ք.**, նշվ. հոդվ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, էջ 355:

499 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 480:

500 **Թօփճեան Յակոբ**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 13:

501 «Հուր», 1971, № 3-4: Տե՛ս նաև **Haghnazarian A.**, նշվ. աշխ., s. 224, հրովարտակ № 11:

502 ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա (այսուհետև՝ ԺԷԱ, համապատասխան էջերով), կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 545: Տե՛ս նաև ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ (այսուհետև՝ ԺԷԲ, համապատասխան էջերով), կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 412-413: **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 478: **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 32:

503 ԺԷԲ, էջ 412-413: Ազգանունից դատելով՝ Բարսեղը ևս եղել է Բիստ գյուղից: Սակայն վերոհիշյալ հիշատակարաններն այդ մասին լռում են:

504 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 283: Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 351-352: **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 46-47:

505 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 481: Տե՛ս նաև նույնի՝ Արտազի վանքը, էջ 48: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 810:

**Իսահակ վարդապետ Մակվեցի Արղար (1664-1702, եպիսկոպոս՝ 1677-ից)**. Թադեոս առաքյալի վանքի ամենանշանավոր առաջնորդներից էր, եկեղեցական մեծահամբավ գործիչ ու հայտնի աստվածաբան:

Մկրտիչ եպիսկոպոսի հրաժարականից հետո կաթողիկոսն Արտազի թեմի առաջնորդ է նշանակում Իսահակ Մակվեցուն, սակայն Արտազի առաջնորդությունն ու վանքի վանահայրությունն ստանձնելու ստույգ թվականը հայտնի չէ: Այդ մասին սկզբնաղբյուրները հաղորդում են 1663-1665 թթ.[506]: Իր օրագիր-հիշատակարանում (ավարտել է 1677 թ. սեպտեմբերի 3-ին) Մակվեցին նշում է, որ տասներեք տարի պաշտոնավարելուց հետո միայն օգնական է ունեցել Սարգիս վարդապետ Կաֆայեցուն: Ըստ այդմ, պաշտոնավարությունը սկսվել է 1664 թ.:

Սակայն մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1663 թ. ապրիլի 30-ի կոնդակով Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը դիմում է Գանդիմանի և Ջղախոռի բնակիչներին և հաստատում, որ Իսահակ Մակվեցին թեմի նորանշանակ առաջնորդն է. «...զԻսահակ վարդապետն մեր, զի միշտ զձեզ խրատեսցէ եւ ուսուցանէ զբանն ա(ստուա)ծային եւ հովուեսցէ զձեզ ըստ հարցն աւանդութեան, զի դայ է ձեզ վարդապետ, եպիսկոպոս և առաջնորդ: Ձեր ամ(ենայն) հասքն եւ իրաւունքն ի դա յանձնեցաք վերստին, որպէս որ յառաջն յանձնեալ էաք: ...Եթէ քահանայ, եթէ ղօլվաքաւոր եւ եթէ ռամիկ, ով որ այլեւայլ արար Իսահակ վարդապետի խօսիցն, այնպիսին պատիժս եւ դառնութիւնս մեծ է կրելոց յինէն, եւ հնազանդքն ա(ւր)հ(ն)ութիւնս եւ պարգեւս ընդունելոց են յինէն»[507]:

Հիշատակարանում առաջնորդը համառոտ ներկայացնում է իր կենսագրությունը. ծնվել է Արճեշ գավառի Ականց գյուղում, քահանայի ընտանիքում: Ուսանել է Էջմիածնում և աշակերտել Հակոբ Դ Ջուղայեցի հայրապետին (1655-1680), որի հանդեպ ուներ անսահման սեր և հարգանք. «Արդ ես տրուպս յամենայնի եւ վերջինս ի բանասիրաց Իսահակ վարդապետս Մակուեցի, որդի Սահակ քահանայի որդւոյ Մէրտնի, որդւոյ Քիչիմիրի, որդւոյ Արայէլի, որդւոյ Յոհանիսի, որդւոյ Թադէոսի, որ յԱկանց կոչեցելոյ գեղջէ ի յԱրճիշոյ եւ յԱղիովտոյ եկեալ աշակերտ մեծափառ սրբազան հայրապետին Տեառն Յակոբայ կաթողիկոսի ամենայն Հայոց յաթոռն գերագահ սուրբ Էջմիածնի սնեալ եւ վարժեալ առ ոտս նորա ի նոյն յոգնահանձէս աթոռն եւ ի նմանէ ձեռնադրեալ եւ առեալ զամենայն աստիճանս եկեղեցականս, եւ թէ վարդապետական իշխանութիւն եւ գաւազան, եւ թէ եպիսկոպոսական առաջնորդութիւն սուրբ աթոռոյս Թադէոսի առաքելոյն»[508]:

Եղել է Հակոբ Դ Ջուղայեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահը. «...Կաթուղիկոսն Յակոբ բերեալ զձեռնասուն աշակերտն իւր Իսահակ վարդապետ Մակուեցի՝ արար Եպիսկոպոս, և եդ ի տեղի իւր Աթոռակալ և Տեղապահ...»[509]:

Ձեռնադրությունը տեղի է ունեցել 1677 թ. «Ի թվին ՌՃԻԶ (1677) եպիսկոպոս աւրհնեցին զիս...»[510]:

Վարել է բազմաբեղուն գործունեություն. իրականացրել է լայնածավալ շինարարություն Թադեոս առաքյալի և Բագրևանդի Սբ. Հովհաննես վանքերում, զբաղվել գրական և գիտակրթական աշխատանքով, պայքար է մղել աղանդավորության դրսևորումների դեմ, կազմակերպել և հովանավորել է թեմում ու հատկապես Թադեոս առաքյալի վանքում մշակութային կյանքը և այլն:

1677 թ. Էջմիածնի Մայր Աթոռի կարիքները հոգալու նպատակով Իսահակ վարդապետ Մակվեցուն տրվում է հանգանակություն իրականացնելու հանձնարարական: Դեպի Բաղեշ կատարած ճանապարհորդությունը զուգադիպում է Ներսես վարդապետ Հզվեցու մահվան հետ: Ի հիշատակ վերջինիս՝ նրա հարազատները Թադեոս առաքյալի վանքին են նվիրում Աստվածաշունչ մատյան. «Իսկ ի թվականիս մերում ՌՃԻԶ (1677). երորդի ամի, Ներսէս վարդապետս այս Հզուեցի գետակուր եղեալ վաղճանիցաւ և եղբայր նորա՝ մահդասի Յովհաննէսն և վարդապետ նորա՝ Մեսրոպ րաբունապետն Բաղիշեցի, զԱստուածաշունչս կտակս ընծայեցին ի ձեռն մեր անարժանի՝ Իսահակայ վարդապետի՝ առաջնորդի սուրբ Աթոռոյ Առաքելոյն Թադէոսի, զոր և մեր առեալ բերաք և եդաք յիշատակ ի դրան սուրբ առաքելոյն յաւիտեան»[511]:

---

506 «Թվին ՌՃԺԲ (1663), դեկտեմբեր ամսոյն, ի տօնի գլխաւոր առաքելոցն՝ Պետրոսի և Պողոսի, Իսահակ վարդապետն եկն Թադէոս Առաքելոյ վանքն առաջնորդ» (ՄԺԱ, էջ 309): «Թվին ՌՃԺԳ (1664) ...Սահակ վարդապետն եկն ի վանքն սուրբ Առաքելոյն Թադէոսի աւագ տօներին...» (ՄԺԱ, էջ 306, տե՛ս նաև էջ 313): «Թվին ՌՃԺԴ (1665) Սահակ վարդապետն եկն առաջնորդ սուրբ Առաքելոյն» (ՄԺԱ, էջ 310): 1669 թ.-ից սկզբնաղբյուրներում նա արդեն հիշատակվում է իբրև Թադեոս առաքյալի վանքի վերատեսուչ (**Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 481): Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երեւան, 2007, էջ 810:

Իսահակ Մակվեցու կյանքի ու գործունեության մասին տե՛ս նաև **Ամատունի Կարապետ եպս.**, Սահակ վրդ. Մակուեցի, էջ 98-118, կից բնագրեր՝ էջ 119-131: Նույնի՝ ԺԷ դարու երեւելի վարդապետներ, «Բազմավէպ», 1988, էջ 53-56:

507 Դիվան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի. Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705 թթ.), մասն Ա, աշխատասիրեց **Տեր-Գրիգորեան Խ.**, Անթիլիաս, 2003, էջ 59:

508 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 481-482:

509 **Զաքարեայ** սարկաւագ, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 71-72: Հմմտ. **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Բ, էջ 2974:

510 ՄԺԱ, էջ 309:

511 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 792: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 484:

Իսահակ Մակվեցու առաջնորդական երկարամյա շրջանից մեզ հասած օրագրային վկայություններից բացի՝ Արդար մականունով հայտնի աստվածաբանի[512] այս գործչի մասին տեղեկություններ կան նաև այլ աղբյուրներում: Արտազի թեմի առաջնորդը ժամանակի հոգևոր բարձրաստիճան մի շարք գործիչների՝ վրաց Նիկոլաս կաթողիկոսի, Աղվանից Պետրոս և Սիմեոն կաթողիկոսների և այլոց հետ իր ստորագրությունն է դնում Հակոբ Դ Ջուղայեցու՝ 1667 թ. ապրիլի 28-ի ընծայագրի ներքո, որով Ամենայն Հայոց կաթողիկոսը եղբորորդուն՝ պարոն Մանուելին, ժառանգաբար, «որդւոց յորդի» հանձնում է Նախեղուռ գյուղի մովրովության պաշտոնը. «Սահակ վարդապետ-աթոռակալ Սուրբ Առաքելոյն Թաթէոսի»[513] (գյուղը Քարբլիի և Կախեթի Ռուստամ թագավորից (1634-1658) Էջմիածինը նվեր էր ստացել 1657 թ.)[514]:

Իսահակ Մակվեցին նույն թվականին հիշվում է նաև բաքղութցի (Մարաղայի գյուղերից) Սկրտիչ երեցի՝ 1667 թ., սակայն ավելի վաղ ստեղծված ավետարանի գնման առթիվ. «...յառաջնորդութեան մերում նահանգի՝ Իսահակ րաբունապետի՝ առաջնորդ Սրբոյ առաքելոյն Թադէոսի»[515]:

1675 թ. հիշվում են «...Մակուեցի Իսահակ վարդապետն. և նորին աշակերտ Սարգիս վարդապետն Կաֆայեցին...»[516]:

1682 թ. Իսահակ Մակվեցին ընդունում է կաթողիկեության և իր ծավալած գործունեության համար էլ 1698 թ. Իննովկենտիոս ԺԲ քահանայապետից թագ ստանում[517]:

1684 թ.-ից հիշվում է նաև Թավրիզի և շրջակա քաղաքների ու գյուղերի հոգևոր առաջնորդ. «...թվականն Հայոց ՌՃԼԳ (1684) եւ ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանին ...եւ առաջնորդութեան քաղաքիս Թարվիզու եւ բոլոր երկրին քաղաքաց եւ գիւղօրէիցն ամենեցուն Իսահակ վարդապետին Մակուեցւոյ...»[518]: Նույն պաշտոնում հիշատակվում է նաև 1691 թ.[519]:

Անանուն Վանեցու Ժամանակագրությունից տեղեկանում ենք, որ Իսահակ Մակվեցին երկու անգամ (1675, 1699) այցելում է Վան և մեծ ընդունելության արժանանում: 1675 թ. քարոզչության նպատակով այս հինավուրց քաղաք է գալիս Կիպրոս կղզու հոգևոր առաջնորդ Սարգիս վարդապետը և իր գաղափարների բազմաթիվ կողմնակիցներ է ձեռք բերում, ինչպես ժամանակագիրն է գրում՝ «որոյ չար համբաւ տարածեցաւ եւ լու եղև ընդ ամենայն աշխարհ»[520]: Վասպուրական նահանգի բարձրաստիճան ու հեղինակավոր հոգևոր այրերը, որոնց թվում նաև Իսահակ Մակվեցին և Սարգիս Կաֆայեցին, անհանգստացած աղանդավորական շարժման թափից, 1675 թ. հավաքվում են Վանում, քննադատում Սարգիս Կիպրացու ուսմունքը և քարոզչին վտարում քաղաքից[521]: Երկրորդ անգամ Իսահակ վարդապետը Վան է ուղևորվում 1699 թ. հունվարին և երեք ամիս հյուրընկալվում քաղաքում. «...մեծ և անուանի, արդար Իսահակ վարդապետն եկն ի Վան, որ էր այր ծերունի և յոյժ առաքինի և ամենայն ներքին և արտաքին գիտութեամբ և փիլիսոփայական իմաստութեամբ զարդարեալ. և քաղաքացիքն յոյժ պատուով և փափագմնօք ընդունեցին զնա իբրև զլուսաւորիչն Հայոցս. և յետ երեք ամսոյ մեծ պարգեւօք առաքեցին զնա յԱթոռն իւր ի Թադէոս Առաքելոյ վանս»[522]:

Իսահակ Մակվեցին վախճանվել է 1702 թ. և ամփոփվել Բագրևանդի Սբ. Հովհաննես (Ուչքիլիսա) վանքում: Այդ մասին է վկայում նրա աշակերտներից Իգնատիոս Համթեցի երեցը. «Այր մեծահամբաւ եւ խստակրօն, սքանչելի եւ հրաշագործ, որ ի թուին ՌՃԾԱ (1702) Աստուած փոխեցաւ, եւ կայ եղեալ յՈւչքիլիսէն ի յիւրում Աթոռին, ի ձախակողմ խորանին, եւ առնէ մեծամեծ սքանչելիք սուրբ գերեզման նորա, ի փառս Աստուծոյ եւ ի պարծանս քրիստոնէից»[523]:

**Սարգիս վարդապետ Կաֆայեցի (1691՞-1717).** 1677 թ. Սարգիս վարդապետը ձեռնադրվում է եպիսկոպոս. «Թվին ՌՃԻԶ (1677) եպիսկոպոս

512 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 486: Տե՛ս նաև ՄԺԱ, էջ 328 («...մեծ վարդապետն Իսահակ, որ մականուամբ Արդար Սահակ յորջորջիւր»):

513 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ 1, էջ 162:

514 Նշվ. աշխ., էջ 18-19:

515 **Ներսիսյան Վ.**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանի, «ԲՄ», 1986, № 15, էջ 319:

516 ԴՀՊ, գիրք Ժ, էջ 106:

517 **Ամատունի Կարապետ եպս.**, Սահակ վրդ. Մակուեցի, «Բազմավէպ», 1983, էջ 116: Նույնի՝ ԺԷ դարու երեւելի վարդապետներ, էջ 56: Այս նույն ժամանակ Հռոմի պապը Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսին նվիրել է ոսկեզօծ գահ: Նշյալ թվականին Բագրևանդի Սբ. Հովհաննես վանքում «...ընկալեալ ՚ի միաբանութիւն Հռովմէական եկեղեցւոյ՝ զԻսահակ Մակուեցի՝ զաթոռակալն Ս. Թադէի, որ յԱրտազ...» (**Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 532):

518 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 485:

519 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 1072:

520 ՄԺԲ, էջ 413: Անանուն Վանեցու Ժամանակագրությունն առաջին անգամ հրատարակել է Գյուտ քահ. Աղանյանցն իր «Դիւան հայոց պատմութեան» մատենաշարի 10-րդ գրքում՝ «Անցք Վասպուրական աշխարհի» խորագրով (գիրք Ժ, էջ 103-122):

521 ՄԺԲ, էջ 413:

522 ԴՀՊ, գիրք Ժ, էջ 118: Տե՛ս նաև ՄԺԲ, էջ 420:

523 ԴՀՊ, էջ 381: Տե՛ս նաև ՄԺԱ, էջ 328, նաև էջ 304, 311 («ՌՃԾԱ. Վաղճանեցաւ մեծ վարդապետն Իսահակ, որ մականուամբ Արդար յորջորջիւր ի վանս Բագուանա սուրբ Գրիգորի, որ ըստ հասարակաց Ուչքիլիսէ կոչի, և եդաւ անտ ի տապանի» կամ՝ «Թիւն ՌՃԾԱ (1702) վախճանեցաւ Իսահակ վարդապետն, յուլիս ամսոյ ԺԳ (13) աւուր ի Վարդավառին երկուշաբաթին արշալուսոյն, երեքշաբթի թաղեցաք Ուչքիլիսի ձախակողմի խորանն)»: Բագրևանդի Սբ. Հովհաննեսի վանքն (639 թ.) ավերվել է Լենկ Թեմուրի օրոք՝ ԺԴ դ. վերջին և վերանորոգվել 1679 թ. Իսահակ Մակվեցու կողմից. «վերստին նորոգեցաւ ձեռամբ Իսահակ վարդապետին» (ՄԺԲ, էջ 414):

աւրհնեաց, Յակոբ կաթողիկոսն Էջմիածին, զԿաֆայեցի Սարգիս վարդապետն»[524]:

Նույն թվականին էլ Իսահակ վարդապետ Մակվեցու խնդրանքով նշանակվում է վանահոր օգնական[525]: 1679 թ.-ից մասնակցում է վանքում իրականացվող վերաշինման աշխատանքներին[526]:

1680-1730 թթ. ընթացքում ստեղծված մի ժողովածուում գրել է. «...եւ՝ Սարգիս վարդապետս Կաֆայեցի քսաներորդ ամի արգեպիսկոպոսութեան իմոյ զշնորհաբաշխութիւն արարեալ ի Սուրբ Առնոյն Թաթոսի (այսպէս) առաքելոյն»[527]:

1685 թ. Իսահակ վարդապետից ստանում է «...զաւազան էքլէսիաստական իշխանութիւն, ի վերայ դամբարանի սուրբ Առաքելոյն, ի տօնի Պէնտէկոստէին»[528]:

1691 թ. Սարգիս Կաֆայեցին հիշվում է որպես Թադեոս առաքյալի վանքի վերատեսուչ. «...աշակերտի նորին՝ Սարգիս վարդապետի Կաֆայեցւոյ, որ է վերատեսուչ սրբոյ Աթոռոյ առաքելոյն Թադէոսի...»[529]: 1698 թ. Հռոմի Իննովկենտիոս ԺԲ պապի կողմից պարգևատրվում է ուրարով (եկեղեցականի ուսանոց)[530]:

1704 թ. Թադեոս առաքյալի վանքի սեփականությունը հաստատող մի վավերագրում Սարգիս Կաֆայեցին արդեն հիշվում է վանքի առաջնորդ. «Ես Սարգիս վարդապետս առաջնորդ սուրբ Առաքելոյն Թադէոսի...»[531]:

Վախճանվել է 1717 թ. և ամփոփվել Թադեոս առաքյալի վանքում. «ՌՉԺԷ. ՌՃԿԶ Վաղճանեցաւ Սարգիս վարդապետն Կաֆայեցի և եդաւ մարմին նորին ի սուրբ աթոռն առաքելոյն Թադէոսի»[532]:

**Մատթեոս վարդապետ Սպահանցի (1719).** Անանուն Վանեցի ժամանակագիրը Մատթեոս վարդապետի պաշտոնավարության սկիզբ է համարում 1719 թ. հունվարի մեկը. «Թվին ՌՃԿԸ (1719) Սպահանցի Մաթէոս վարդապետն եղև առաջնորդ, յունվարին մէկն»[533]: Մինչդեռ Մատթեոս վարդապետը գրում է, որ նշյալ թվականի փետրվարի 14-ին գնացել է Սբ. Էջմիածին և կարգվել վանքի առաջնորդ. «Թվին ՌՃԿԸ (1719)-ումն, փետրւրվարի ԺԴ (14) աստուծով գնացի սուրբ Էջմիածին. առաջնորդութիւն տվին ինձ սուրբ Առաքելոյն Թադէոսին վանքին ինձ մեղաւոր Մաթէոսիս որ սուտ վարդապետ ասի, Ըսբանցի ասի»[534]:

**Հովհաննես վարդապետ Քավեցի (հիշ. 1728).** պաշտոնավարության ստույգ ժամանակաշրջանը հայտնի չէ: 1728 թ. Հովհաննեսը թեմի առաջնորդն էր և Թադեոս առաքյալի վանքի վանահայրը[535]:

**Զաքարիա վարդապետ Ղափանցի (1735-1743).** վանահայր է նշանակվել 1735 թ. ամռանը. «Թվին ՌՃՁԴ (1735)-ին և յամրսեանըն յօգոստոսի մուտն, ես՝ Ղափանցի Դաւիթ վարդապետի եղբօր որդի, Զաքարիայ վարդապետս, Թաթեոս Առաքեալ առաջնորդ եկայ»[536]: Պաշտոնավարելով 9 տարի՝ վախճանվել է 1743 թ. դեկտեմբերի 23-ին և ամփոփվել վանքում. «Ի ՌՃՂԲ (1743) թվին, դեքտեմբերի ԻԳ (23), ուրբաթ օրն, Զաքարեա մեծ վարդապետն, արքեպիսկոպոսն վանից և վիջակի սուրբ Առաքելոյն Թադէոսի, առ աստուած փոխեցաւ և մեզ որբ եթող...»[537]:

**Մինաս եպիսկոպոս (1743-1759՞).** հաջորդել է Զաքարիա վարդապետ Ղափանցուն 1743 թ.[538]: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1741 թ. ապրիլի 5-ին. «...Ղափանցի Զաքարիայ վարդապետի աշակերտ, Մինաս վարդապետն ի սուրբ Էջմիածին օրհնեցաւ, Նոր կիրակին, Ղազարու կաթուղիկոսէն ամենայն Հայոց, Ճահկեցոյ»[539]:

1748 թ. հիշվում է Իբրահիմ շահի հրովարտակում[540], 1749 թ.՝ առուծախի մի վավերագրում[541],

524 ՄԺԱ, էջ 306, 309:

525 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 48: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 810:

526 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 50:

527 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 542:

528 ՄԺԱ (Իսահակ վարդապետի Ժամանակագրութիւնը (XVIII դ.), էջ 310:

529 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 1072: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 486:

530 **Ամատունի Կարապետ եպս**, Սահակ վրդ. Մակուեցի, «Բազմավէպ», 1983, էջ 116:

531 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 14: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 489: Հ. Ոսկյանը սխալմամբ ենթադրել է, որ 1704 թ. Կաֆայեցու առաջնորդության ժամանակահատվածի վերին սահմանագիծն է (նշվ. աշխ., Բ մաս, էջ 491):

532 ՄԺԱ, էջ 328:

533 ՄԺԱ, էջ 305:

534 Մատենադարան, ձեռ. 8233: Տե՛ս նաև ՄԺԱ, էջ 308:

535 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 491: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 22:

536 ՄԺԱ, էջ 305: Ի դեպ, այս շրջանում վանքի միաբաններից հիշվում է Մելքոն վարդապետը, որը ստորագրել էր Դուխուրգան գյուղում Էջմիածնի կաթողիկոսարանին պատկանող այգին վարձակալության տալու մասին կապալագիրը. «Գրեցաւ թւին ՌՃՁԴ (1735)-ին հոկտեմբերի ԻԴ (24)-ին ...Ես՝ Սուրբ Թաթէոս Առաքելի միաբան Մելքոն վարդապետս վկայ եմ» (**Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 80: Դուխուրգան (Թուխուրգան) գյուղը հավանաբար համապատասխանում է Ուրմիա լճից արևելք գտնվող Դեհկարկանին, որտեղ սկսված ռուս-պարսկական բանակցություններն ավարտվում են 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով: Այստեղ դեռևս ԺԸ դարում այգիներ ունեին և՛ Էջմիածնի կաթողիկոսարանը, և՛ Թադեոս առաքյալի վանքը: Գյուղը հայաբնակ է եղել մինչև 1890-ական թվականները (Տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 74):

537 ՄԺԱ, էջ 305, 308: Վիմագիրը տե՛ս սույն աշխ., էջ 160, արձ. Ժ:

538 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 22:

539 Իսահակ վարդապետի ժամանակագրությունը (XVIII դ.), ՄԺԱ, էջ 305:

540 **Կոստիկյան Ք.**, նշվ. հոդվ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, էջ 357:

541 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 14:

իսկ 1753 թ. հունիսի 13-ին՝ Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսի (1753-1755) մի կոնդակում. «...Արտազի Ս. Թադէոս վանքի վանահայր Մինաս արքեպիսկոպոսին, որպէս զի իւր խնդրանաց համաձայն Ս. Կարապետի վանքը վերանորոգէ...: Կոնդակս ուղղուած համայն Հայոց, հանգանականութիւն անելու նպատակով»[542]:

Մինաս վարդապետի պաշտոնավարության տարիները ստուգապես որոշելու համար գրավոր աղբյուրները բավարար չեն[543]:

**Եսայի վարդապետ (1759՞-1780)**[544]. ծնունդով Վանք գյուղից էր: Եպիսկոպոս է ձեռնադրվել Ղազար Ջահկեցի (1737-1751) կաթողիկոսի կողմից Թադեոս առաքյալի վանքում. «Թվին ՌՃՂԶ (1747)-ին Ղազար կաթուղիկոսն եկաւ ի սուրբ Թադէոս Առաքելոյ վանքն, ինձ Եսայի անարժան վարդապետիս, որ եմ ի գեղջէն սուրբ Առաքելոյն Թադէոսի, եպիսկոպոս օրհնեաց...»[545]:

1765 թ. հիշվում է «Թադէոսի սրբոյ Առաքելոյ և հրաշազարդի վանից Առաջնորդ Եսայի վարդապետն...»[546]:

Եսայի վարդապետը վախճանվել է 1870 թ. վերջերին Բայազետում[547]: Նրա գերեզմանը 1785 թ. պատրաստել է տվել Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Իսահակ Փառակեցին. «...շինեաց խորանն, զգեստի պահարան Գ(3) աչքէ, սատուխ և գերեզմանն ևս, յառաջնորդ Եսայի վարդապետին...»[548]:

**Պետրոս վարդապետ (1781-1782).** Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը (1780-1799) Պետրոս վարդապետին նշանակում է Թադեոս առաքյալի վանքի ժամանակավոր վանահայր[549]:

**Ստեփանոս վարդապետ Ջուղայեցի (1782-1783).** 1782 թ. Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը վանքի առաջնորդությունը հանձնում է Ստեփանոս Ջուղայեցի վարդապետին[550]: Բնակչությունն ու վանքի հոգևորականությունը բողոքում են այդ որոշման դեմ և խնդրում, որ իրենց հոգևոր հովիվ նշանակվի Կարս քաղաքի առաջնորդը (անունը չի հիշատակվում, սակայն այլ աղբյուրներից ճշտվում է, որ նշյալ ժամանակահատվածում Կարսի առաջնորդն էր Հովհաննես վարդապետ Շամբեցին): Գործին միջամտում է նաև Բայազետի Իսաղ փաշան: Թադեոս առաքյալի վանքի առաջնորդության հարցը քաշքշուքի առարկա է դառնում Ղուկաս Կարնեցու, Իսաղ փաշայի և Մակվի իշխանավորների միջև, մինչև որ 1783 թ. մարտի 27-ին հատուկ կոնդակով վանքի վանահայր ու Արտազի թեմի առաջնորդ է նշանակվում Իսահակ (Սահակ) Փառակեցին:

**Իսահակ եպիսկոպոս Փառակեցի Շինարար (1783-1787).** եղել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան: 1774 թ. հոկտեմբերի 19-ին Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս. «Ի ՌՄԻԳ թուոջս... ձեռնադրեաց եպիսկոպոս, Փառակեցի Իսահակ վարդ. ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս... Ի հոկ. ԺԹ»[551]:

1780 թ.-ից հետո՝ շուրջ 3 տարի առանց մշտական վանահոր մնացած Թադեոս առաքյալի վանքում 1783 թ. մարտի 27-ին առաջնորդ է նշանակվում Իսահակ եպիսկոպոս Փառակեցին. «Փառակեցի Նախիջևանու գիւղէն Իսահակ խոհեմառատ եպիսկոպոսն, որ եղև յառաջնորդ նախկին լուսավորչին մերոյ Թադէոսի սրբազան առաքելոյն ՌՄԼԲ (1783) թւին մարտի ելն, Ղուկաս հայրապետին հրամանաւն Գ(3) տարի առանց առաջնորդի մնացեալ էր սուրբ աթոռս որք և խղճալի ...»[552]:

1780-ական թվականներին վերաբերող մի շարք վավերագրեր բավականին աննպաստ կարծիք են հայտնում Փառակեցու մասին: Պարզվում է, որ Արտազ գավառի և հատկապես Թադեոս առաքյալի վանքին պատկանող գյուղերի բնակիչներն ու վանքի միաբանները այս նշանակման համար դժգոհություն են հայտնել հոգևոր բարձր մարմիններին՝ մեղադրելով, որ Իսահակ Փառակեցին չունի իր նախորդների ազնիվ վերաբերմունքը ժողովրդի և իրեն ենթակա հոգևորականության հանդեպ. «ոչ ըստ առաջնոց առաջնորդացն պարկեշտօրէն վարեցաւ, այլ ճոխաբար նորաձեւութեամբ եբաց զինքն եւ զվանքն յաչս բռնաւորաց տեղեացն...»[553]:

Իսահակ Փառակեցին ևս գոհ չի եղել իր նոր պաշտոնից ու միջավայրից: 1783 թ. նա գրում է, որ մեծ դժվարությունների է հանդիպել տեղական իշխանավորների և պետական իշխանության ներկայացուցիչների կատարած կեղեքումների ու մշտական բռնությունների հետևանքով: Խաները օրա-

---

542 Նշվ. աշխ., էջ 3: Տե՛ս նաև **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 23: **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 491:

543 Ն. եպիս. Ծովականը Մինաս (արքեպիսկոպոսի) առաջնորդության տարիներ է համարում 1749-1753 թթ. («Սիոն», 1960, էջ 76): Խ. Դադյանը հրատարակել է առաջնորդի տապանագիրը՝ թվագրված 1751-ով, որը խիստ կասկածելի է (տե՛ս **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90):

544 Ն. եպիս. Ծովականը Եսայու պաշտոնավարության շրջան է համարում 1765-1779 թթ. («Սիոն», 1960, էջ 76):

545 ՄԺԱ, էջ 308:

546 ԴՀՊ, գիրք Գ, էջ 331:

547 Եսայի վարդապետի մահվան տարեթիվը ճշտվում է համաձայն Ղուկաս կաթողիկոսի գրած մի թղթի, որտեղ վերջինս նշում է, որ 1781 թ. դեկտեմբերին արդեն նրա մահվանից մեկ տարուց ավելի էր անցել. «Սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ Եսայի վարդապետն մինչ վախճանեցաւ, յորմէ հետէ մինչև ցայժմ է աւելի քան զտարի մի, նոյն սուրբ վանքն մնացեալ էր թարց այցելուի» (ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, էջ 278):

548 ՄԺԱ, էջ 315, ծանոթ. 38:

549 ԴՀՊ, գիրք Դ, էջ 216:

550 Նշվ. աշխ., էջ 401:

551 ԴՀՊ, գիրք ԺԱ. Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, մասն Գ (1777-1779), յաւելուածներով եւ ծանօթութիւններով հրատարակեց **Գիւտ Աղանեանց**, Թիֆլիս, 1913, էջ 459:

552 ՄԺԱ, էջ 315, ծանոթ. 38:

553 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 492-493:

վուր ավելի են ուժեղացնում իրենց հալածանքներն ու անօրինությունները հայկական գյուղերի ու վանքերի նկատմամբ: Այդ դառն օրերին, գրում է Փառակեցին, միակ մխիթարությունը եղել է Աստվածաշունչ ընթերցելը, բարձրյալից թողություն ու փրկություն հայցելը. «Թշուառ հոգի մեղապարտ տէր Իսահակ անարժան եպիսկոպոս ՌՄԼԲ (1783) թուին կարգեցայ սրբազան Առաքելոյն Թադէոսի գերաշնորհ սքանչելագործ սուրբ աթոռոյս յառաջնորդ, քանզի ժամանակն յոյժ դառն եւ դժնդակ էր եւ ոչ գոյր թագաւոր Պարսից եւ բազումք էին կեղեքօղք սրբոյ վանքիս եւ ես տառապեալս եւ անընտել դարիպ միայն առնէի մխիթարութիւն ինձ սուրբ Աստուածաշունչ գիրքս»[554]:

«Սկիզբն կոնդակին առաջնորդականի, որ տուաւ Թադէոսի Առաքելոյ վանից նորոգ առաջնորդ կարգեցեալ Սահակ վարդապետին Փառակեցւոյ, զոր ի վիճակաց նոյն վանիցն քահանայք և իշխանք եկեալ տարան»[555]: Մի քանի ամիս անց Իսահակ վարդապետն իր մասին գրել է. «Մեղապարտ Իսահակ եպիսկոպոս ՌՄԼԲ (1783) թւին, օգոստոսի Ժ(10)-ին գրեցի, էի աղբակալ սրբոյ գերեզմանին Թադէոսի»[556]:

1786 թ. Իսահակ Փառակեցին արդեն արքեպիսկոպոս էր. «Թվ. ՌՄԼԵին Փառակեցի տէր Իսահակ արքեպիսկոպոսն եւ առաջնորդ սուրբ աթոռոյն Թադէոսի ձեռնադրեալ ի Սիմէօն սրբազան կաթուղիկոսէն մինչեւ վերոյ գրեալ թուոջն Գ. ամաւ առաջնորդ եղեալ էր»[557]:

«...սրբոյն Թադէոսի Առաքելոյ առաջնորդ Իսահակ վարդապետն...» անվան հիշատակությանը հանդիպում ենք նաև նույն թվականի հունվար և փետրվար ամիսների գրագրություններում[558]:

Վանքի տնտեսական վիճակը բարվոքելուն զուգընթաց վանահայրը հետևում էր նաև շինարարական աշխատանքներին: 1787 թ. կառուցում է ջրաղաց՝ ամբարով հանդերձ, գավիթ և այլն[559]:

**Գևորգ վարդապետ (1787-1806՞).** 1787 թ. Ղուկաս Կարնեցին Արտազ գավառի թեմական առաջնորդ և Թադեոս առաքյալի վանքի վանահայր է նշանակում Գևորգ վարդապետին. «Ապա Ղուկաս կաթուղիկոս Թադէի առաջնորդ կը կարգէ Գէորգ վարդապետը (եպիսկոպոս) եւ անոր նկատմամբ յատուկ սէր ու համակրանք ունենալով դիմում կը կատարէ Խոյի խանին, որ դիւրութիւններ ընծայէ անոր վանքին բարեզարդութեան համար»[560]:

1790 թ. Գևորգ վարդապետը հիշվում է որպես «...նորոգ առաջնորդ...»[561]:

Անվան հիշատակությանը հանդիպում ենք նաև 1791 թ.[562]:

Հակառակ պաշտոնավարության անհանգիստ շրջանին՝ կարողանում է գլուխ բերել շինարարական մի քանի գործեր (1793 թ. նորոգում է աղբյուրը, 1794 թ. եկեղեցու փայտյա խաչկալը փոխարինում է քարաշենով, 1796 թ. վերաշինում է ջրաղացը և այլն):

1800 թ. Գևորգ եպիսկոպոսը հիշվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության կապակցությամբ Բագրևանդի Սբ. Հովհաննես վանքում տեղի ունեցած եկեղեցական ժողովի մասնակիցների թվում (կաթողիկոս է ընտրվում Դանիել Սուրմառեցին)[563]:

1801 թ. ապրիլի 28-ին Էջմիածնում կաթողիկոս է օծվում Դավիթ Էնագեթցին, որը շուտով կարգալույծ է անում Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Գևորգ եպիսկոպոսին և հեռացնում Արտազի թեմից՝ Դանիել Սուրմառեցի կաթողիկոսին պաշտպանելու համար:

Կարճ ժամանակ անց ծերունի առաջնորդը զղջում է Դավթին հակադրվելու համար, ընդունում է նրա գերակայությունը և վերահաստատվում նախկին պաշտոնում: Այս դեպքերի մասին է վկայում Դավիթ կաթողիկոսը 1803 թ. դեկտեմբերի 26-ին Արտազի թեմի հոգևորականությանն ու ժողովրդին ուղարկած կոնդակում[564]:

1804 թ. Դավիթ կաթողիկոսը կամենում է թեմի առաջնորդ նշանակել Առաքել վարդապետին, սակայն վերջինս «...չյօժարեցաւ ի գալ»[565]:

**Սիմեոն Էջմիածնեցի Բզնունի (1806՞-1820).** Սիմեոն Էջմիածնեցին Մայր Աթոռի բարձրաստիճան հոգևորականության շրջանում ականավոր դեմք էր: Ծնողներն էին Մուրադը և Գայանեն[566]:

Ղուկաս Կարնեցու մահից հետո եղել է Էջմիածնի կաթողիկոսական տեղապահ, Թիֆլիսում անձամբ ներկա է գտնվել մահամերձ Հ. Արղության կաթողիկոսի կյանքի վերջին րոպեներին: Քաղաքական հայացքներով արքեպիսկոպոսն ուներ հակառուսական կողմնորոշում և Իրանին համակիր հայ հոգևորականության ղեկավարն էր: Ուստի նրա մեկնումն Էջմիածնից և Արտազի թեմի առաջնորդ

554 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 493:

555 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 356-357: **Փառական** Գողթան գավառի լեռնային գյուղերից էր:

556 ՄԺԱ, էջ 314:

557 **Ոսկեան Հ.,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 495:

558 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 121, 126:

559 ՄԺԱ, էջ 309:

560 ԴՀՊ, գիրք Դ, էջ 563-565, 1792: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 56:

561 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 523:

562 Նշվ. աշխ., էջ 604, 635:

563 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 532: Տե՛ս նաև ԴՀՊ, գիրք Ա-Բ, խմբագրեց **Գիւտ** քահանայ **Աղանեանց**, Թիֆլիս, 1893, էջ 150:

564 **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հ. Բ, էջ 349-351:

565 Նշվ. աշխ., էջ 423: Առաքել գրիչն աշակերտել է Գևորգ արքեպիսկոպոսին և նրա կողմից վարդապետ է ձեռնադրվել 1798 թ. վանքում (**Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 24): 1816 թ. վանքի միաբաններից հիշվում է Հովհաննես վարդապետը (**Ավետիս քահանա**, Ժամանակագրություն, Վավերագրեր 2, Երևան, 2001, էջ 30):

566 «Սիոն», 1960, էջ 76:

նշանակվելը մասամբ նշանակում էր, որ նրա ղեկավարած իրանասեր խմբակցությունն Էջմիածնում հաջողություն չի ունեցել:

Հավանաբար 1806 թ. Սիմեոն Էջմիածնեցի Բզնունին նշանակվում է Արտազի թեմակալ առաջնորդ և Թադեոս առաքյալի վանահայր[567]: Թավրիզում ներկայանում է պարսից թագաժառանգ և Ատրպատականի փոխարքա Աբաս-Միրզային, որն այդ միջոցին իր բանակով պատրաստվում էր կանգնեցնել ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի հարավ: Վերադառնալով վանք՝ արքեպիսկոպոսը ձեռնարկում է նոր՝ Ճերմակ եկեղեցու կառուցումը:

Արքեպիսկոպոս ձեռնադրվելու ստույգ տարեթիվը հայտնի չէ, բայց 1808 թ. տակավին վարդապետ էր[568]:

Տեղեկություններից մեկի համաձայն՝ 1809 թ. «...Դավրէժում Աբաս-Միրզան կամեցաւ Ս. Թադէոս Առաքելոյ վանահորը կաթողիկոսացնել, բայց երբ նա հրաժարուեց՝ կամայ ակամայ ստորագրեց Եփրեմի կաթողիկոսութեան արտօնագիրը»[569]:

1811 թ. Աբաս-Միրզայի արձակած հրովարտակում նշվել է. «...քրիստոնյաների առաջնորդ Սիմոն խալիֆան [իր հանդեպ] գերագույն մտքի բարեհաճության ավելացմամբ հուսադրված իմանա, որ օրերս արքայական բարձրությանը զեկուցեցին այն պատվարժանի նվիրվածության, հավատարմության ու կամեցողության հանգամանքների մասին»[570]:

Սիմեոն վարդապետի առաջնորդության տարիներին իրականացվում են վանքի վերականգնման ու համալրման շինարարական ամենածավալուն աշխատանքներ[571]:

1820 թ. Սիմեոն արքեպիսկոպոսը, դեռևս շինարարական աշխատանքները չավարտած, նշանակվում է Գողթն գավառի Ագուլիսի Սբ. Թովմա վանքի առաջնորդ[572]:

**Բարսեղ արքեպիսկոպոս Խաչատուրյան Կեսարացի (1820-1834)[573].** ժամանակի բարձրաստիճան ազդեցիկ հոգևորականներից էր: Պարսկահայոց մեծ մասի՝ դեպի Ռուսահայաստան արտագաղթի հետևանքով վարչատնտեսական կարողություններից ու կարևորությունից զրկված Թադեոս առաքյալի վանքի այս առաջնորդը փորձում էր Ատրպատականի առաջնորդարանը վանքից փոխադրել Թավրիզ, բայց չի հաջողվում: Փոխարենը ձեռնարկում է վանքի անավարտ հատվածները լրացնելու գործը[574]:

1828 թ. Բարսեղ արքեպիսկոպոսը հիշվում է Դարաշամբ գյուղի գնման կալվածագրի առնչությամբ. «Սրբոյ Էջմիածնի բնիկ միաբան և սրբազան Առաքելոյն Թատէոսի վանուց և վիճակաց նորա Առաջնորդ և այժմ նորոգ կարգեալ վերատեսուչ համայն հոգևորական գործոցն վերաբնակեալ Ատրպատականի և բնակչութիւնք հայոց, որք ի գաւառսն Նախիջևանու և Ագուլիսայ և Տարալակեազու. և չորից վանօրէիցն Սրբոյ Կարապետոու, Սրբոյ Նախավկայի, Սրբոյ Թովմայի և Կարմիր վանուցն Աստապատու. Բարսեղ Արքեպիսկոպոս Խաչատուրեան Կեսարացւոյ, վաստակաւոր և կատարեցաւ զայս, ի նշանս իշխանութեան ռուսաց կայսեր Նիկոլայ Պավլովիչի, զկնի երից ամաց առման, դրունս և Նախիջևանայ ի ձեռաց պարսից ազգին»[575]:

Բարսեղ արքեպիսկոպոսը հիշվում է նաև 1830 թ.: Նրան այցելած միսիոներները գրել են. «Նախկինում նա հովվում էր Ադրբեջանի բոլոր հայերին, ինչպես նաև Բայազետի փաշայության հայերի առնվազն մի մասին, իսկ նրա նստավայրը Թադևոս Առաքյալի... վանքն էր Մակուի շրջանում: Նրա թեմն ամենամեծ թեմերից մեկն էր, իսկ նրա վանքը՝ հայկական հնագույն և ամենանշանավոր սրբավայրերից մեկը...: Վերջին պատերազմի ավարտին նա, իր հոտի անդամների մեծ մասի գլուխն անցած, գաղթեց դեպի ռուսական տիրույթներ, իսկ նրա վանքի շարժական ունեցվածքը, որի մեջ հատկապես շատ էին կահույքի պարագաները և կենդանիները, տեղափոխվեց Էջմիածին: Նա արտաքուստ 40 տարեկանից ավելի երիտասարդ էր երևում, մարմնի կառուցվածքով ուժեղ էր թվում, լավ ապրելակերպի շնորհիվ խնամված տեսք ուներ և բնությունից օժտված էր մտքի խորաթափանցությամբ: Քանի որ տիրապետում էր հաճելի վարվեցողության, նա մեզ սիրալիր ընդունելություն ցույց տվեց...»[576]:

567 Ըստ Խաչիկ վարդապետ Դադյանի՝ Սիմեոն Բզնունու վանահայրության տարիներն են համարվել 1818-1824 թթ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58):

568 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 57:

569 **Մովսիսեան Յուսիկ վրդ.**, Հայաստանեայցս առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն, էջ 351:

570 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 136: Բնագրի թարգմանությունը՝ Ք. Կոստիկյանի:

571 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 16: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 56:

572 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 25:

573 Ն. եպիս. Ծովականը Բարսեղ Կեսարացու առաջնորդության տարիներ է համարում 1826-1828 թթ. («Սիոն», 1960, էջ 76), Խ. վրդ. Դադյանը՝ 1824-1834 թթ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58): Մինչդեռ 1826 թ. նոյեմբերի 10-ին Կեսարացու գրած շրջաբերականը («...այս 7 ամէ որ սկիզբն արարեալ եմք սրբոյ վանիցս հիմնարկութեան...») հիմք է տալիս եզրակացնելու, որ նա պաշտոնավարել է 1820 թ.-ից (**Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 16):

574 **Թօփճեան Յ.**, նույն տեղում: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 57:

575 Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «Էջմիածին», 1976, Ը-Թ, էջ 63-64:

576 Researches of the Rev. **E. Smith** and Rev. **H.G.O. Dwight** in Armenia, vol. II, p. 63. Տե՛ս նաև Missionary Researches in Armenia by **Eli Smith, Harrison Gray Otis Dwight, Josiah Conder**, p. 258 (բնագրում՝ “He formerly presided over all the Armenians of Aderbaijбn, and part, at least, of the pashalic of Bayezeed, and resided in the convent of ...Thaddeus the apostle, in the district of Magoo. His diocese was one of the largest, and his convent one of

**Նիկողայոս եպիսկոպոս Կարբեցի (1834-1850)**[577]. Ներսես Աշտարակեցու գաղափարակիցն ու աջակիցն էր: 1834 թ. Թավրիզում կառուցում է Առաջնորդարանի շենքը (հետագայում ծառայում է որպես տպարան)[578]:

Նրա ջանքերով 1841 թ. ստեղծվել է Ատրպատականի հայոց միացյալ առաջնորդական թեմը Թավրիզ կենտրոնով[579]: Մահացել է 1850 թ. Թավրիզից ոչ հեռու գտնվող հայաբնակ Մուժամբար գյուղում և թաղվել տեղի եկեղեցու բակում[580]:

**Փիլիպոս վարդապետ (1840-ակա՞ն թվականներ)**[581]. պաշտոնավարության տարիները ստույգ հայտնի չեն: Նրա օրոք ոմն Մելիք-Միրզա Տոնականն է նվիրում վանքին[582]: Վանահոր պաշտոնում նրան փոխարինում է **Թադեոս վարդապետը** (մինչև 1851 թ.), ապա **Եղիազար վարդապետը** (մինչև 1858 թ.)[583]:

**Սահակ եպիսկոպոս Սաթունյանց Աշտարակեցի (1851-1857).** հայտնի է, որ Ներսես Ե Աշտարակեցի Շահազիզյան կաթողիկոսը (1843-1857) 1851 թ. Ատրպատականի հայոց առաջնորդ է նշանակում «գովութեանց արժանի» ու «...բարեջան վիճակաւոր վանաց եւ վիճակի Սրբոյ նախկին Լուսաւորչի Հայոց Սրբազան Առաքելոյն Թադդեոսի...»[584] Սահակ արքեպիսկոպոս Սաթունյանց Աշտարակեցուն: Վերջինս միաժամանակ վարում էր նաև Թադեոս առաքյալի վանքի վանահայրությունը: Նոր առաջնորդի գործունեության շրջանը կարճ է տևում (1851-1857)[585], սակայն նա բավական օգտակար գործունեություն է ծավալում, մասնավորապես Հայոց առաջնորդարանին կից կառուցում է «Արամյան» տղայոց (արական) դպրոցի նոր շենքը (1855) և այլն[586]:

Վախճանվել է 1857 թ. մարտի 24-ին և ամփոփվել Փայաջուկի Սբ. Գևորգ եկեղեցու բակում[587]:

**Կարապետ Փիլիպոսյան** (1858-1862)[588]:

**Եսայի վարդապետ Հովսեփյան (1863-1897).** ծնվել է 1833 թ.: Վանահայրության պաշտոնը ստանձնել է 1863 թ.: Նրա նախաձեռնությամբ 1867 թ. վերականգնվում է վանքի շրջապարսպի արևելյան հատվածը:

Որպես Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ՝ հիշվում է 1870, 1895 թթ.[589]:

Արտազից հեռանալուց հետո՝ 1897 թ. մայիսին, Եսայի վարդապետը տեղափոխվում է Արևելյան Հայաստան և նշանակվում Հառիճավանքի վանահայր[590], ապա տեղափոխվում Մայր Աթոռ Սբ. Էջմիածին և վարում Սբ. Գայանե վանքի վանահոր պաշտոնը: Մահացել է 1917 թ. Երևանում:

Հարկ է նշել, որ այս վանահայրն առանձնապես դրական հիշողություններ չի թողել վանքի մերձակայքի բնակչության շրջանում[591]:

**Հովհաննես վարդապետ Բազունի (1897-1899).** նրան տրվել են Կայծակ, Երլտըրըմ (թուրք. թարգմ.՝ Կայծակ) և Դելի Կարապաշ (թուրք. թարգմ.՝ Գիժ սևագլուխ) մականունները:

1897 թ. մայիսի 12-ին Ամենայն Հայոց Մկրտիչ Ա կաթողիկոսը կոնդակով Հովհաննես վարդապետ Բազունուն նշանակում է Թադեոս առաքյալի վանահայր. «Ի բազում ամաց հետէ հաւաստի լեալ եռանդուն և անձնուէր նշանից քոց ի պաշտաման վանահայրութեան վանուց Ս. Առաքելոյն Բարդուղիմէոսի, որ յԱղբակ, վստահութեամբ իմն յանձն առնեմք քեզ զարդիս զպաշտօն վանահայրութեան Ս. Թադէոս առաքելոյ վանից Արտազու...: ...ընդ վանահայրութեան յաւելու յանձին քո զհովութիւն հօտին մերոյ, որք ի սահմանս խանութեան Մակուայ մինչ ցԽոյ, բաց յանտի զպատսպարումն բազմաթիւ գաղթականաց, զհոգատարութիւն նոցին և զխնամարկութիւն և կարիք բազումք, որք յաւելուն օրըստօրէ»[592]: Նույն թվականի նույն օրն արձակված հայրապետական մեկ այլ կոնդակով Հովհաննես վարդապետին շնորհվում է ականակուռ վարդապետական լանջախաչ կրելու իրավունք[593]:

1897 թ. «վանահայր Ս. Թադէոսի վանից Մակուայ»[594] նշանակվում է շատախցի Հովհաննես

the oldest and most distinguished in Armenia... At the head of most of his flock, he retired within the Russian dominions at the close of the late war, and the moveable property of his convent, which was formerly great in furniture and flocks, was transferred to Echmiбdzin. He seemed less than forty years old, of a vigorous constitution, well nurtured by good living, and of a naturally acute mind... Possessed of a pleasing address, he received us in a friendly manner...").

577 Ըստ Է. Հակոբյանի՝ Նիկողայոս Կարբեցին առաջնորդությունն ստանձնել է 1830 թ.-ից (**Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 26), իսկ ըստ Խաչիկ վարդապետ Դադյանի՝ 1834-1851 թթ., ընդ որում, նշվում է, որ 1837 թ. վանահայրն էր Եսայի վարդապետ Սարգսյանցը (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58):

578 **Աճէմեան Հ.**, Ս. Թադէի վանքը, մասն II, էջ 13:

579 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 57:

580 ԴԱՀՊ, հ. Ա, Պէյրութ, 1980, էջ 200, 211:

581 Ըստ Խաչիկ վարդապետ Դադյանի՝ վանահայրության պաշտոնը վարել է 1840 թ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58):

582 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 498, ծանոթ. 27:

583 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58:

584 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 79:

585 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58:

586 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 35: Տե՛ս նաև **Մարտիրոսեան Հ.**, Իրանի հայկական դպրոցները, «Լրաբեր», 1966, № 10, էջ 65:

587 Հայկ Աճեմյանի անտիպ օրագիր (վիմագիրն ընդօրինակել է 1959 թ. «Ի դամբարանիս ննջէ | Իսահակ արքեպ(ի)ս(կոպոս) Սաղունե(ա)ն, | երախտաւոր առաջնորդ Ատրպ(ա)տ(ա)կ(ա)նի հայկազե(ա)ն: | 1857 ամի մարտի 24-ին»):

588 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 35: Ըստ Խաչիկ վարդապետ Դադյանի՝ 1858 թ. վանահայրն էր Եղիազար վարդապետը, իսկ 1862 թ.՝ Կարապետ Փիլիպպոսյանը (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 58):

589 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 164, թ. 1, 14:

590 «Արարատ», 1897, էջ 230:

591 **Ֆրանգեան Ե.**, Ատրպատական, էջ 37:

592 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 7, թ. 25:

593 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 7, թ. 26:

594 «Արարատ»,1897, յունիս, էջ 229, 274:

վարդապետ Բազունին: Նույն թվականի օգոստոսի 2-ին «Սասունցի Հովհաննես Առաքելյանը հայտնելով կաթողիկոսին Թադեոս առաքյալի վանահայր Հովհաննես վ-ի շինարարական ժրաջան աշխատանքը, խնդրում է նյութապես օժանդակել նրան: Վերջում հայտնում է, թե Սարգիս Հայկունին նույն վարդապետին հաշիվ չի տալիս, առ այդ պահանջելով կաթողիկոսի գրավոր հրամանը»[595]:

1898 թ. հունիսի 5-ին Հովհաննես վարդապետը հիշվում է կաթողիկոսին գրություն հղելու առնչությամբ[596]:

Վանահայրը հեղափոխական հայտնի գործիչ էր՝ «Կայծակ ծածկանունով ճանչցուած: Դեռ 1880-ական թուականներէն Վասպուրականի գաւառներուն մեջ յայտնի էր այս հոգևորականը իւր հանդուգն գործերով և քաջութիւններով, որոնց պատճառով թուրքերն ու քիւրդերը «Դալի Կարաբաշ» մականունով կը ճանչնային զինք: Արճէշի և Աղբակի գաւառներուն մէջ համբաւ հանած էր իբր վարժ ձիավոր և քաջ վարդապետ: Պետերբուրգի մէջ Սիմոն Գիւլամիրեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Արաքս» հանդէսի մէջ (1897) գեղեցիկ ոճով և բաւական մանրամասնութեամբ գրած է Աղթամարի Խաչատուր Գ վերջին կաթուղիկոսի կեանքն ու գործունէութիւնը»[597]: Մկրտիչ Խրիմյան (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսը հրահանգում է նրան անհրաժեշտ օգնություն ցույց տալ կոտորածներից մազապուրծ եղած արևմտահայ գաղթականությանը[598]: Սպանվել է 1899 թ.՝ 80 տարեկան հասակում Թադեոս առաքյալի վանքում, որտեղ և թաղվել է[599]:

Վանահոր մահվան մանրամասները Խորեն վարդապետը, տեղեկանալով վանքի տնտեսից, գրել է. «...թուանքները բացին, էնքան զարկին. որ գուլուլաները դուռը սառատի պէս ծակծկեցին եւ ներս մտան, չորս հոգով բռնեցին, Հայր Սուրբին վիզը կտրեցին... եւ գիշերանց տէրտէրին բերին, իրենց փորած գերեզմանի մէջ թաղեցին: Էնա դիմացի դարին վրայ ի ինոր գերեզմանը»[600]:

Բազունու մահից հետո վանքը ղեկավարում էր «...մի աշխարհական մարդ»[601]:

**Խորեն վարդապետ Լազարյան (1901).** աշխարհական անունն է Վահան, մականունը՝ Լազօղլի (թուրք. թարգմ.՝ Լազի տղա): Ծնվել է 1873 թ.: Որպես վանահայր՝ 1901 թ. հունիսի 17-ին ուղևորվում է իր պաշտոնավայրը (ընդամենը 6 ամիս)[602]: Բավական կարճ է պաշտոնավարել: Վախճանվել է 1933 թ.[603]:

**Գևորգ (Ընծայր) ծ. վ. Նալբանդյան (1901-1908).** Նալբանդ Շխենց Գևորգի որդին՝ Գևորգ Նալբադյանը (աշխարհիկ անունը՝ Ասլան) ծնվել է 1870 թ. Ուրֆա քաղաքում[604]: Եղել է Աղթամարի միաբաններից, պաշտոնավարել է Բուլղարիայում, սովորել ֆրանսերեն, զբաղվել ինքնակրթությամբ[605]:

Իբրև հեղափոխական՝ 1896 թ. Համիդյան ջարդերի ժամանակ աքսորվում է Կ. Պոլիս, այնտեղից անցնում է Բուլղարիա[606]:

1901 թ. նշանակվում է վանքի առաջնորդ. «1901 Սեպ. 13-ից Հոկտ. 26-ը Ս. Թադէի Առաքելոյ Վանքին վանահայր նշանակուած ըլլալով, Ամենայն Հայոց Հայրապետէն - Տ.Տ. Մկրտիչ կաթողիկոսէն տեղս ժամանեցի...»[607]: Նկատի ունենալով վանքի բարենպաստ դիրքը հայ հեղափոխական գործիչների և զինատար խմբերի Վասպուրական անցնելու առումով, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին առաջարկվել էր վանահայր նշանակել վստահելի մի հոգևորականի. «...Այս մասին դիմուեցաւ Խրիմեան կաթողիկոսին, որ շատ լաւ հասկնա-

---

595 Մատենադարան, ց. 46բ, Խրիմյան կաթողիկոսի արխիվ, թղթ. 106, վավ. 574:

596 Մատենադարան, ց. 46բ, Խրիմյան կաթողիկոսի արխիվ, թղթ. 108, վավ. 1072:

597 Վասպուրական. Վան-Վասպուրականի ազրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915-1930, էջ 251:

598 **Կոստանդյան Է.**, Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 389: Ի դեպ, այստեղ առկա է Հովհաննես վրդ. Բազունու գործունեությանը վերաբերող հակասական մի տեղեկություն, ըստ որի՝ հայտնի հեղափոխական գործիչ վանահայրը դրսևորել է «քրիստոնյա վանահորը ոչ վայել վերաբերմունք գաղթականների նկատմամբ: Նրանց հյուրընկալելու և օթևան տալու փոխարեն, պարսից սարբազների օգնությամբ գաղթականներին վանքից դուրս է հանում: Այդ մասին իմանում է վեհափառ հայրապետը և անձամբ նամակ գրում խոտորյալ վարդապետին, պարսավում նրա այդ ընթացքը. «Այժմ բացարձակ հրաման կուտամ Ձեզ, որ հանված գաղթականները պետք է տեղավորվեն վանուց մեջ, մինչև գարնան նոցա համար ուրիշ տնօրինություն լինի»: Խրիմյանը զայրանում է, որ վանահայրն ի չարն է գործադրել իր վստահությունը, և զգուշացնում, որ այդ ընթացքի համար նրան կհեռացնի վանահայրության պատասխանատու պաշտոնից: Ուղարկելով պատկառելի մի գումար՝ նա պատվիրում է Հովհաննես Բազունուն ետ կանչել արտաքսված գաղթականներին՝ խոստանալով հանգանակել և վանահոր ձեռքը հասցնել նոր գումարներ և՛ վանքի վերաշինության, և՛ գաղթականների հոգսերը հոգալու համար» (**Կոստանդյան Է.**, նույն տեղում):

599 Վասպուրական. Վան-Վասպուրականի ազրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915-1930, էջ 251:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 80-ամյա Հովհաննես Բազունուն սպանել են 1900 թ. (**Տեր-Մկրտիչեան Ե.**, Վասպուրականի գանձերը, հ. Ա, Պոսթոն, 1967, էջ 163):

600 **Տեր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 163:

601 **Ֆրանգեան Ե.,** Ատրպատական, էջ 38:

602 **Տեր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 163: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ը, **Մաղաքիա Օրմանյան**... **Մատթէոս Բ Իզմիրլեան**, Երեւան, 2001, էջ 461:

603 Հայտնի է, որ Խորեն վարդապետը Հայոց բարեգործական ընկերությանը կտակել է 6600 դոլար՝ միջնադարյան ձեռագրերի հրատարակության համար (**Տեր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 590):

604 **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 580:

605 «Արարատ», 1901, էջ 428:

606 **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1923, № 3, էջ 51-52: **Արամը** (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 173:

607 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 29: Տե՛ս նաև «Արարատ», 1901, էջ 477: Գևորգ վարդապետը 1901 թ. աշնանը Մկրտիչ Խրիմյանից նվեր է ստացել ականակուռ լանջախաչ («Արարատ», 1901, էջ 480):



լով նպատակը, այդ օրերուն հեռուէն եկած նորեկ վարդապետ մը ղրկեց հոն: Այդ վարդապետը Գէորգ Վրդ. Նալպանտեանն էր, որ մեր յեղափոխութեան պատմութեան մէջ ծանօթ է «Ընծայր» ծածկանունով: Վարդապետը բնիկ Ուրֆացի էր և վանք գալէն առաջ կը վարէր Սղերտի առաջնորդական փոխանորդութիւնը: Յեղափոխականները անոր մեկնելէն առաջ բացատրած էին, թէ ուր պիտի երթայ և ինչ նպատակով պիտի ստանձնէ վանքին տեսչութիւնը: Ըսած էին, թէ վանքը աշխարհէն կտրուած, ամայի լեռներու մէջ քիւրտերով շրջապատուած վայր մըն է, և թէ ինքը փոխադրական այդ խիստ կարևոր կայանի ղեկավարը պիտի ըլլայ: Վարդապետը, որ քառասուն անց, վառվռուն մարդ մըն էր, կը պատասխանէ,– «գործիս կուգայ» ու անմիջապէս կը մեկնի վանքը»[608]: Հարկ է նշել, որ Ընծայր վարդապետը մեծ դեր է կատարել հեղափոխական գործունեության մեջ. «...Թադէի վանքը ընդհանրապէս քիչ կը սխալէր եւ լաւ կընթանային անոր գործերը, որոնք Գէորգ Ծայրագոյն Վարդապետի խորհուրդին արժեք կու տային: Վարդապետը համեստ էր: Ան ինքզինքը ծառայ կը համարէր Թադէի վանքին եւ իր այդ հանգամանքով ալ կենթարկուէր իր հոգեւոր պետերուն, սակայն անոնք հեղինակութիւններ չէին իրեն համար: Ան կենթարկուէր նաեւ կուսակցական ատեանի որոշումին, կամ անոր լիազօրին, սակայն այդ... 

608 **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 582:

609 **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. Ա, Թեհրան, 1982, էջ 325-326:

1903 թ. սեպտեմբերին Գևորգ ծ. վարդապետը հիշվում է Թադեոս առաքյալի վանքի, Մակվի և Խոյի առաջնորդ[610]:

1903 թ. վանքի այցելուն վանահոր մասին գրում է. «Բարձրահասակ թիկնեղ մարդ մ’էր Գէորգ ծայրագոյն վարդապետը: Փառահեղ մօրուքը լայն կուրծքը ծածկած էր, դէմքը գեղականի մը դեմքին նման պղնձագոյն, կորովի արտայայտութիւն ունէր: Տեսնող մը առաջին իսկ հայեացքով կը հասկընար, որ վանահայրը սովորական տիպի միաբաներէն չէ, որոնք ամբողջ կեանք մը կ’անցնեն խուցի չորս պատերու մէջ, երբեմն աղօթելով, յաճախ իրար բամբասելով ու միշտ իրենց որովայնը պարարտացնելով «ի փառս Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ:

Գէորգ վարդապետը այն հայ եկեղեցականներէն էր, որոնք մատի վրայ կը համրուին: Երբ տարիներ առաջ կաթողիկոսի հրամանով եկած էր, որպէս վանահայր, վանքի իսկայ տնտեսութիւնը բոլորովին քայքայուած գտաւ, անբարեխիղճ վանահայրերու ապիկարութեան պատճառով: Վարդապետը թեւերը վեր սոթտած՝ գործի էր լծուեր մշակի մը նման աշխատելով: Հետզհետէ վանքի հողերը մշակելով, չեղածէն տնտեսութիւն մը ստեղծեց:

Հին տիպի եկեղեցականներէն էր, հաւատաւոր եւ նուիրուած եկեղեցիին, առանց անձնական փառասիրութեան: Եկեղեցին եւ ազգը իր հասկացողութեամբ անքակտելի միութիւն մէին, մէկուն ծառայողը՝ կը ծառայէր եւ միւսին: Վանահայրը՝ եռանդուն հայրենասէր մը՝ ոտքով գլխով ինկած էր յեղափոխական շարժման մէջ, սկզբնական օրերէն իսկ»[611]:

Հետաքրքրական է 1904 թ. վանահորը տրված հետևյալ գնահատականը. «...Թադէի վանքին հո-

610 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, էջ 149, 151:

611 **Մալխաս**, Զարթօնք, հ. Բ, էջ 209-210: Գևորգ վարդապետի մասին գրվել է նաև. «Ընդհանրապէս մեր կղերականութիւնը, փճացած ու ապիկար, տնտեսութեան անկարող, կամ անփութութեան եւ անկարողութեան, եւ կամ անձնական շահու համար, իրենց աւանդ ձգուած հարստութիւնը կողոպտելով, քայքայեր են մեր վանքերու մեծագոյն մասը: Երջանկայիշատակ Սիմէոն արքեպիսկոպոսի շինարար վանահայրութենէն վերջը աւերակ մ’էր, երբ Գէորգ Ծայրագոյն վարդապետ Նալպանտեանը (Ընծայր) Խրիմեան Հայրիկի կարգադրութեամբ կուգայ, որպէս վանահայր, ինչպէս ինքը կ’ըսէր, աւերակներու մէջ բոյն մը շինելու:
Ուրֆացի այդ համեստ վանականը կը լծուի հերքիւլեան աշխատանքի եւ չեղածէն կը ստեղծէ տանելի դրութիւն մը: Անշուշտ Դաշնակցութիւնն ալ, որոշ չափով կ’օժանդակէ նիւթապէս: Մեծ դժուարութեամբ կը յաջողի վերաշինել քանդուած հին ջրաղացը, որոշ եկամուտ մը ապահովելով վանքին: Վաղուց ի վեր դատարկուած ախոռը նորէն կը լեցուի կթան կովերով, ոչխարի փոքր հօտով, լծկան եզներով:
Ֆարաջայի փեշերը մէջքը կոխած, այդ գործունեայ մարդը, ամէն բանի կը հասնի, ե՛ւ վանքի տնտեսութեան: Դար ու դադարում չունի. անվերջ կ’աշխատի իր սիրած վանքը նախկին պայծառութեան հասցնելու: Քանի մը մարդավարի սենեակներ ալ կը շինէ, թէեւ ոչ ամբողջովին լրացած, վանքի գիւղի մանուկներուն համար, որպէս դպրոց» (**Մալխաս**, Ապրումներ, հ. Ա, էջ 289):

յակապ գմբէթը, որ բոլորէն բարձրը եւ շքեղն էր նահանգին մէջ եւ անոր պետը՝ Գէորգ Ծայրագոյն Վարդապետը՝ գմբէթանման էր, պատկառազդու վեղարով: Դաշնակցութիւնը անփոխարինելի օգուտ կը քաղէր հինաւուրց վանքէն եւ անոր անհաւատ ծառայ՝ «Անծայր» վարդապետէն»[612]: Ի դեպ, իր վարքի պատճառով նա մեծ հեղինակություն էր վայելում նաև քրդերի շրջանում, որոնք «...իրենք կուզէին օգնել այդ սգաւորին՝ նուէրով կամ նիւթականով, բայց վարդապետը չէր ընդուներ: Այդ պատճառ կը դառնար, որ անոր վարկը բարձրանար եւ ան դառնար անշահախնդիր վարդապետ մը, կենդանի նահատակ մը եւ հաւատարիմ ծառայ մը՝ նահատակ Թադէի: ...կը զտնէին, որ այս ուսեալ վարդապետը, որ իրենցմէ աւելի աշխարհ տեսած է եւ գիտէ ամեն ինչ, նոյնպէս իրենց հետ է. վստահութիւն ու հաւատ ունէին անոր հանդէպ: Եւ այդ պատճառով, փոքրաթիւ հայութիւնը եւ Թադէի վանքը անանձնաշնորհեալ վիճակի մէջ էին դրուած...»[613]:

Հայտնի է նաև, որ Գևորգ վարդապետը «լաւ քրդախօս էր եւ, առհասարակ, մեծ հեղինակութիւն ունէր շրջանի թուրք եւ քիւրդ տարրի մէջ»[614]:

1905-1906 թթ. վանք այցելած Կոմսը (հմմ՛ Վահան Փափազյանը, Ա. Հ.) գրում է. «Վանահայրն էր մեր անփոխարինելի Ընծայրը (Գէորգ վարդ. Նալպանտեան): Սղերդցի վարդապետ մը, որ Խրիմեանէն խնդրած էինք Ս. Թադէոս Առաքեալի վանքին համար: Գիտնական մը չէր եւ ոչ ընչաքաղց կամ փառասէր: Գիտէր, թէ ինչու զինքը ընտրած էինք լեռներու մէջ կորած այդ մենաւոր վանքը գալու եւ եկած էր անվարան: Մակուի խանութեան, քիւրտերու եւ պարսիկներու այդ աշխարհին մէջ՝ վայրենի եւ ամայի լեռնաշխարհով՝ մեր Ընծայրը չէ՛ր տխրեր, չէ՛ր վախնար, այլ վախցուցած էր շրջակայ աշիրէթները: Միշտ գործի վրայ էր. քանի մը տուն այս ու այն կողմէն եկած հայերու համար, որոնք կը բնակէին վանքէն քիչ մը հեռու գիւղի մը մէջ: Վարդապետը անոր աղբիւրները կը կանոնաւորէր, հողեր կը մշակէր, ծառ կը տնկէր, ջրաղաց կը շինէր...»[615]:

1906 թ. վանահորը տրված գնահատականում Արամ Մանուկյանը նշում է. «Իմ վրայ նա մի լաւ աշխատող, շինարար եւ հայրենասէր մարդու տպաւորութիւն է թողել, թէեւ ընկերներից շատերը նրան չէին սիրում: Ճիշդ է, նա մի քիչ մամոնասէր էր, ինչպէս բոլոր վարդապետները: Բայց եւ այնպէս մեր վերածնունդի համար մեծապէս տառապող հայ վարդապետներից մէկն էր...»[616]:

1908 թ. փետրվարի 7-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանը միջնորդագիր է հղում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին՝ վանահայրության պաշտոնից հրաժարված Գևորգ ծ. վարդապետին Մայր Աթոռի միաբանների շարքն ընդունելու համար նոր թեկնածու առաջադրելու համար. «...վանահայր Վանուցն Ս. Թադէի առաքելոյ, որ յԱրտազ, Տ. Գէորգ ծ. վարդապետ Նալբանդեան, եկեալ այսր ի Թաւրիզ և մատուցեալ զհաշիւ և զտեղեկագիր պաշտօնավարութեան իւրոյ առաջի պատ. Թեմական Խորհրդոյ, հրաժարեցաւ իսպառ ի պաշտամանէ, և մեր կշռեալ զամենայն հանգամանս գործոյն և ի վերայ հասեալ, եթէ յիրաւի չէր ինչ նմին պատեհ զալ մնալ ի պաշտաման վանահայրութեան, ընկալաք զհրաժարականն: Առ որ խնդրեմ խոնարհաբար զբարեհաճ տնօրէնութիւն Ձերդ Բ. Սրբազնութեան առ ի կարգել զնա միում ի վանօրայց Ռուսահայոց, զի աստ ի վիճակիս Ատրպատականի չիք առ ժամայն պաշտօն ինչ նմին յարմարաւոր: Տ. Գէորգ ծ. վարդապետ գալով հպատակ Բուլղարիոյ, խոստանայ ընդունել զհպատակութիւն Ռուսիոյ, եթէ կարևոր համարեսցի այդ, և հնազանդ յամենայնի հրամանաց Բարձրագոյն հօգևոր իշխանութեան վարել հաւատարմութեամբ զամենայն պաշտօն, զոր հաճոյ լինի յանձն առնել նմին:

...Խնդրեմ միանգամայն ցուցանել զոք ի միաբանից Մ. Աթոռոյ, եթէ գտցի յարմարաւոր, առ ի կարգումն ի վանահայրութիւն վանուցն Ս. Թադէի Առաքելոյ»[617]:

Այնուհետև Գևորգ ծ. վարդապետը վարել է Չարսանճագի առաջնորդական փոխանորդի պաշտոնը[618]:

Նահատակվել է 1915 թ. Մեծ եղեռնի օրերին. չնայած «...մահը ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կմնան»[619]:

**Դանիել ծ. վ. Ջաղոյան Ռշտունի (1907-1908).** Ծնվել է 1867 թ.[620] Ռշտունիքի (Գավաշ) Բողոնիս

612 **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 319-320:

613 Նշվ. աշխ., էջ 320-321:

614 **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1923, № 3, էջ 49: Տե՛ս նաև **Արամը** (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 171:

615 **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. առաջին, էջ 384:

616 **Արամը** (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 173:

617 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 127:

618 **Երեւանեան Գ.**, Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 296: Տե՛ս նաև **Արամը** (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 173. «Գէորգ Վարդապետը «Հուրիաթ»ին Առաջնորդ էր Սղերդի. այնտեղից էլ անցել էր Խարբերդ Չարսանճագ, ուր քրդական տիրապետութիւն էր դարձել և հողային մեծ վէճեր կային: Այնտեղ միւս առաջնորդների նման իր հօտի հետ միասին հերոսաբար նահատակուել էր»:

619 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու **Մ. Գ. Ներսիսյանի** խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 409: Տե՛ս նաև **Ստեփանյանց Ս.**, Հայոց ցեղասպանությունը և հայ եկեղեցին, «ՊԲՀ», 2000, № 1, էջ 23: **Արամը** (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 173:

620 Վասպուրական. Վան-Վասպուրականի ազրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915-1930, էջ 347: Մեկ այլ աղբյուրում Դանիել ծ. վ. Ջաղոյանի ծննդյան տարեթիվ է նշված 1869 թ. (Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան, Երեւան, 2001, էջ 951):

գյուղում: Նախնական ուսումը ստացել է Աղթամարի Ժառանգավորաց վարժարանում: Վարդապետ է ձեռնադրվել 1893 թ., եղել է Աղթամարի վանքի միաբան: 1907 թ. նշանակվել է Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ: Ի դեպ, Խոյում նրան հանդիպած ականատեսը գրել է, որ Վասպուրականից եկած Դանիել վարդապետին հանձնարարված էր գնալ Էջմիածին վանքի վանահայրությունը ստանալու համար[621]:

Նա «Երիտասարդ հասակէն մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը և Լեռնապարեան գաւառներուն մէջ վարեց կուսակցական աշխատանքներ: Կառավարութեան աչքին իբր «վտանգաւոր» անձնաւորութիւն նկատուելով տարի ու կէս բանտարկուեցաւ Վանի մէջ: Ազատուելէ յետոյ նորէն շարունակեց իր յեղափոխական գործունէութիւնը և նորէն հալածանքի ենթարկուելով 1907-ին անցաւ Պարսկաստան և ժամանակ մը վարեց Արտազի Ս. Թադէի վանքին վանահայրութիւնը, միաժամանակ նաև նւիրուելով յեղափոխական աշխատանքներու: Ապրիլեան Հերոսամարտին Դանիէլ Վարդապետը Քաղաքամէջի Հ. Յ. Դաշնակցութեան Զինուորական Մարմնին կից կարևոր աշխատանքներ կը կատարէր: 1915-1917 մնաց Վանի մէջ և լծուեցաւ վերաշինական և հանրային բազմատեսակ աշխատանքներու: Հայաստանի Հանրապետութեան ատեն վարեց նաև Էջմիածնի որբանոցներու ընդհանուր կառավարչի պաշտօնը»[622]:

Հիշատակվում է 1908 թ. մայիսի 15-ին Մակու քաղաքի համար Արսեն Թադևոսյանին որպես քահանա ձեռնադրելու նպատակահարմարության առնչությամբ[623]:

1909 թ. նոյեմբերի 3-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի գրությունից հայտնի է դառնում, որ Դանիել վարդապետը հեռացել է վանքից առանց թույլտվություն ստանալու և հաշվետվություն ներկայացնելու. «...վանք Ս. Առաքելոյն Թադէոսի, որ Արտազ, յանխնամ վիճակի մնացեալ կան զարդիս, զի վերջին վանահայր Նորին Տ. Դանիէլ վարդապետ Զաղոյեան՝ ոչինչ ընկալեալ հրաման ի թեմական իշխանութենէ և ոչ մատուցեալ զհաշիւ, եթող զվանսն ի ձեռս աշխարհիկ առն ուրումն և մեկնեցաւ չոգաւ ի սահմանս Տաճկաստանի»[624]:

Գնդակահարվել է 1937 թ. սեպտեմբերին[625]:

621 **Մատթէոս**, Իմ կեանքի յուշերից, «Հայրենիք», Պոսթըն, 1925, № 3 (27), էջ 138:

622 Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915-1930, էջ 347-348:

623 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 131:

624 Նշվ. աշխ., էջ 150:

625 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 545 և գիրք Ը, էջ 951: Տե՛ս նաև **Մանուկյան Ա.**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Երևան, 1999, էջ 126-127:

**Թաղիկ աբեղա (1909-1911).** աշխարհիկ անունը՝ Վահրամ Երիցյան: Եղել է Աղթամարի վանքի միաբաններից: 1909 թ. նոյեմբերի 3-ին թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը առաջադրում է Վահրամ սարկավագ Երիցյանին ձեռնադրել կուսակրոն քահանա և հանձնարարում ստանձնելու Թադեոս առաքյալի վանքի ժամանակավոր տեսչությունը[626]: Նույն օրն էլ ստացվում է Մատթեոս Բ կաթողիկոսի թույլտվությունը. «...եթէ հնադարեան հռչակաւոր վանք Ս. Առաքելոյն Թադէոսի, որ յԱրտազ, զարդիս թափուր գտանի ի վանահօրէ, ույր սակս խնդրէք զթոյլտուութիւն մեր ձեռնադրիլոյ զՎահրամ սարկաւագն Երիցեան ի միաբանից Աղթամարայ, որ յերից ամաց հետէ գտանի ի Սուլդուզ գաւառակի, ի կուսակրօն քահանայ վասն յանձն առնելոյ նման ժամանակաւորապէս զտեսչութիւն վանուցն: ...այսու կոնդակաւ մերով թոյլ տամք...»[627]: 1910 թ. մայիսի 23-ին թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը Սալմաստի Հաֆթվան գյուղի Սբ. Գևորգ եկեղեցում կուսակրոն քահանա է ձեռնադրում Վահրամ Երիցյանին՝ վերակոչելով նրան Թաղիկ աբեղա[628]: 1910 թ. հուլիսի 11-ին Մատթեոս Բ կաթողիկոսին հղած գրության մեջ անդրադառնալով Թաղիկ աբեղայի գործունեությանը՝ Կարապետ եպիսկոպոսը նշել է. «Կէս տարուց ի վեր Ս. Թադէի փոխվանահայրութեան պաշտօն վարելով, նա գոհացուցիչ կերպով տարել էր գործը և ջանք գործ դրել եղած սուղ միջոցներով շենցնելու վանքը. ուստի վանքն այցելելուց յետոյ վերահաստատեցի նրան այդ պաշտօնի մէջ...»[629]:

Սակայն, Վանքի գյուղի (Դարաքիլիսա) բնակիչներից Հովսեփյանները (նախկին վանահայր Եսայի վարդապետի ազգականները), վայելելով Մակվի սարդարի հովանավորությունը, Թադեոս առաքյալի վանքում իրենց իշխանությունը տարածելու մտադրությամբ հալածանքներ են սկսում Թաղիկ աբեղայի հանդեպ: Իրականությունը պարզելու և խնդիրը լուծելու նպատակով Կարապետ եպիսկոպոսը վանք է ուղարկում Սալմաստի գործակալ Եղիշե քահանային: Այդ ցավալի դեպքերի մասին թեմի առաջնորդը 1911 թ. մայիսի 5-ին զեկուցագիր է հղում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին: Գրության մեջ մասնավորապես հաղորդվում է, որ «...Վանքի գիւղում ապրող Յովսէփեան եղբայրները խիստ նեղացնում են անցեալ տարի հոգելոյս Հայրապետի հրամանով իմ ձեռնադրած և վանահայր կարգած Թադեկ աբեղային, և իրենց ոտնձգութիւնների համար ակներեւ պաշտպանութիւն գտնելով Մակուի սարդարի կողմից, ձգտում են ըստ երևոյթին վանահօրը փախցնելու և տէր ու տիրական դառնալու վանքում: Վանա-

626 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 150:

627 Նշվ. աշխ., էջ 151:

628 Նշվ. աշխ., էջ 175:

629 Նույն տեղում:

հայրը գանգատում էր, որ Յովսէփեանները փորձել են իրեն թունաւորել, հրացանաձգութիւն է եղել վանքի վրայ և այլն: Յիշեալ Տ. Եղիշէ քահանան Թեմական խորհրդի որոշմամբ վանք գնալով՝ մանրակրկիտ քննութիւն էր կատարել, վկաների հարց ու փորձ արել և ստուգել, որ վանահօր ցուցումները ճիշտ են և Յովսէփեանների բռած ընթացքը՝ շատ կողմերից անվայել: Ապա Մակու գնալով տեսնւել էր Սարդարի հետ, որը վանահօրը Յովսէփեանների և ուրիշ գիւղացիների Մակու էր տանել տուել և իբրև թէ հաշտեցրել, բայց վանք վերադառնալուց յետոյ, Յովսէփեանները շարունակել էին իրենց ոտնձգութիւնները և ոչ միայն Թադեկ աբեղայի վանքում մնալը անտանելի դարձել, այլ և գիւղացիներին իրենց հարստահարութիւններով այն տեղը հասցրել, որ 25 տան չափ ցանկութիւն են յայտնել թողնելու գիւղը և Սալմաստի կողմերը գաղթելու: ...Կը խնդրեի առայժմ յանձնարարել Տ. Եսայի վարդապետին, որի ազգականներն են Յովսէփեանները, գրել և հասկացնել նոցա, որ անիրաւ տեղը կոյր գործիք չը լինեն Սարդարի ձեռքում և որ ի հարկէ թոյլ չի տուի նոցա պատճառով վանքը աւերակ դարձնել, այլ հարկը կը ստիպէ ի վերջոյ նոցա ազգովին հեռացնել վանքից»[630]: Մակվի սարդարի ձեռնարկած որոշ քայլերի պատճառով (օրինակ՝ Վանքի գյուղացիներին արգելվել է որևէ հարաբերություն ունենալ Առաջնորդարանի և վանահոր հետ) Թադիկ աբեղան գաղտնի հեռանում է վանքից, ապա թեմի առաջնորդի հրամանով վերադառնում է և սուրբ մասունքով հանգանակություն ձեռնարկում շրջակա հայաբնակ վայրերում[631]:

Թեմի առաջնորդի՝ 1911 թ. օգոստոսի 11-ի գրություններից մեկում Թադիկ աբեղան հիշվում է արդեն որպես հանգուցյալ[632] (տեղեկություններից մեկի համաձայն՝ նրան սպանել են քրդերը[633]: Սպանությունը հավանաբար կատարվել է հունիս-օգոստոս ամիսների միջակայքում): Վանքը մնում է առանց հոգևոր առաջնորդի:

1912 թ. մայիսի դրությամբ վանքը դեռևս վանահայր չուներ[634]: Սակայն այլ գրություններից (օրինակ՝ 1912 թ. հուլիս) պարզվում է, որ ժամանակավոր վանահայր է կարգվել Մակվի քահանա Արսեն Թադևոսյանը[635]:

**Պետրոս վարդապետ Քաջբերունի Ղազարյան (1914-1948).** Թադեոս առաքյալի վանքի վերջին վանահայրն էր: Ծնվել է 1893 թ. մայիսի 10-ին: 1924 թ. Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հանձնարարությամբ վերստանձնում է իր պաշտոնը և բնակություն հաստատում վանքում:

1924 թ. դեկտեմբերին վանահայր Պետրոս վարդապետին[636] հայրապետական կոնդակով շնորհվում է վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրավունք[637]:

1924 թ. հուլիսի 10-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը Գևորգ Ե կաթողիկոսին հղած գրությամբ խնդրում է Պետրոս վարդապետին խրախուսել՝ վարդապետական խաչ կրելու իրավունք շնորհելով. «Անցեալ օրը Խաչիկխան Սարաճեան Կովկասեան կողոպուտից շուկայում գնելով մի վարդապետական խաչ, բերաւ ինձ մօտ՝ խնդրելով նուիրել մեր թեմի երկու վարդապետներից արժանաւորագոյնին: ...Թադէոս առաքելոյ վանահայրն է Պետրոս: Մակուի սարդարի դէմ դատ է սկսուած 150,000 թումանի՝ վանքի աւերման, 500 հայի սպանման և գիւղի յետ դարձման մասին: Այս մեծ խնդրում ...գործել և գործում է կիսաքաղց Պետրոս վարդապետը, երևի շուտով դատը կվճի յօգուտ վանքի: ...կխնդէի հայրապետական սրբատառ կոնդակով խրախուսել յիշեալ վարդապետին՝ շնորհելով իրաւունք կրել վերոյիշեալ խաչը»[638]:

1934 թ. Պետրոս վարդապետը վանքի անհրաժեշտ նորոգությունների համար հանգանակություն սկսելու նպատակով այցելում է Նոր Ջուղա[639]:

1946 թ. Պետրոս վարդապետ Ղազարյանը Գևորգ Զ կաթողիկոսից թույլտվություն է խնդրում Խորհրդային Հայաստան ներգաղթելու, վանքի շարժական կայքը Սբ. Էջմիածին փոխադրելու և վանքը վանքապատկան հողերի վարձակալին պահպանության հանձնելու համար՝ մասնավորապես նշելով, Թադեոս առաքյալի վանքում ապրող բոլոր հայերն արդեն ներգաղթել են Խորհրդային Հայաստան[640]: Խնդրանքը մերժվում է[641]:

1948 թ. Պետրոս վարդապետը բուժվելու նպատակով մեկնում է Թավրիզ: Վախճանվել է նույն տարվա դեկտեմբերի 31-ին: Աճյունն ամփոփվել է հայկական գերեզմանոցի Սբ. Շողակաթ եկեղեցու հարավային պատի մոտ[642]:

630 Նշվ. աշխ., էջ 230-231:
631 Նշվ. աշխ., էջ 231-232:
632 Նշվ. աշխ., էջ 234:
633 «Արարատ», 1911, էջ 525: Ի դեպ, մեկ այլ տվյալի համաձայն՝ 1909 թ. Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը Վահրամ սարկավագ Երիցյանին ձեռնադրում է կուսակրոն քահանա և կարգում Թադեոս առաքյալի վանքի ժամանակավոր վանահայր («Արարատ», 1909, էջ 788):
634 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 267:
635 Նշվ. աշխ., էջ 279:

636 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4079, թ. 1:
637 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4074, թ. 4:
638 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4074, թ. 5:
639 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4139, թ. 11-12, 13-14:
640 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4209, թ. 10: Հմմտ. գ. 4234, թ. 6, 8:
641 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4235, թ. 1, 2:
642 **Յակոբեան Էմիլ**, Ս. Ստեփանոս Նախավկայ վանքի վանահայր Ղեւոնդ վարդ. Բարսեղեանի նամակը յղուած Ատրպատականի Հայոց թեմի օրուայ առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգեանին - 1918 դեկտ. 21-ին, «Հասկ», Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 414, ծանոթ. 7: Վանահոր մարմարե շիրմաքարն ունի հետևյալ արձանագրությունը. *«Տապան | Պետրոս | վարդապ(ետ) | Ղազարեան, | ծն(եալ) 1893 մայիս 10, | վախ(ճանեալ) 1948 դեկտ(եմբեր) 31»* (Արձանագրու-

թյունն ընդօրինակել է Հայկ Աճեմյանը 1959 թ.: Տե՛ս Հայկ Աճեմյանի անտիպ օրագիր, էջ 156: Ի դեպ, 2006 թ. դեկտեմբերի 24-ին այցելելով Թավրիզի Սբ. Շողակաթ եկեղեցի՝ Ատրպատականի հայոց թեմի Առաջնորդ Նշան եպիսկոպոս Թոփուզյանն ասել է. «...Եթէ լաւ նայենք, եկեղեցու շուրջը պիտի տեսնենք մի քանի շիրմաքարեր, այն եկեղեցական սպասաւորներին, որոնք իրենց կեանքը զոհեցին այս նւիրական Թեմի ծառայութեան հովիտում. Հայր Պետրոսը, Սբ. Թադէի Վանքի վերջին վանահայրը, որը 1948 թ.ին Վանքում կոյր աղիքի հիւանդութեան բերումով փոխադրւելիս է եղել Թաւրիզ, այդ օրերի խղճուկ փոխադրամիջոցներով, բայց աւաղ որ ճանապարհում Մարանդ քաղաքի մօտ իր հոգին է աւանդում» («Արտազ», 2006, № 7-8, էջ 17): Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4247, թ. 3:

# ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ԻՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի բազում այլ վանքերի նման Թադեոս առաքյալի վանքը պատմության ընթացքում նույնպես բազմիցս ենթարկվել է ավարառության և ավերածությունների: Դրա հետևանքով վանքը հաճախ զրկվել է ոչ միայն ուխտավորների՝ վանքին հատկացված ընծաներից, այլև հնուց ի վեր վանքի սեփականությունը կազմող և նրան հոչակ ու համբավ ապահոված մշակութային և նյութական սեփականություններից:

Ցավոք, ներկայումս շատ քիչ բան է հայտնի ժամանակի ընթացքում կորսված վանքապատկան իրերի վերաբերյալ: Հայտնի է, որ 1875 թ. կազմվել է վանքի ոչնչացված իրերի և ձեռագիր մատյանների ցուցակը՝ հաստատված Անդրեաս արքեպիսկոպոսի կողմից[1]:

Ինչ վերաբերում է զանազան իրերի ընծայագրերի կամ հիշատակագրությունների ընդօրինակման և հավաքման աշխատանքներին, ապա այդօրինակ եզակի աշխատանք է հեղինակել Խաչիկ վարդապետ Դադյանը: Նա 1894 թ. կարողացել է վանքապատկան որոշ իրեր (օրինակ՝ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի յուղաներկ պատկերները, վանքի վարագույրներից մեկը և այլն) փոխադրել Էջմիածին:

Իրերի նկարագրություններով հանդերձ՝ ընդօրինակած արձանագրություններից 17-ը Դադյան վարդապետը հրատարակել է[2], 25-ը մնացել է անտիպ: Մեկական արձանագրություններ էլ հրատարակել են Հ. Աճեմյանը և Ք. Ավետիսյանը:

Ստորև ներկայացնում ենք բոլոր՝ 45 միավոր արձանագրությունները.

**Ա** Ծոցուրար, հիշատակագրությունը՝ կիսաեղծ. «...կարմիր մետաքսէ կտորի վրայ...: ...ծածկուած է 90 հատ $3^1/_2$ սմ տրամագիծ ունեցող ոսկեթել խնձորազարդերով: Ներքևի ծայրը 4 սմ լայնութեամբ ժապաւինաձև ոսկեթել և արծաթաթել պաճուճանք: Ծայրը արծաթեայ ծոպերով: Մեծութիւնն է՝ երկարութիւնը 144 սմ ներքևից, լայնութիւն՝ 52 սմ, մէջտեղինը 34 սմ, նեղ ծայրը կոլոր ձուաձև: ...Աստառը կարմիր ներկած կտաւից»:

*Յիշատակ է Վար..., ՌԿ (1611) ին:*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 269:

Ծանոթ. 1894 թ. Խ. Դադյանն իրը փոխադրել է Էջմիածին:

**Բ** Վակաս, մարգարտաշար, ասեղնագործ 9 պատկերի մոտ (ասեղնագործված են Յիսուս Քրիստոսի, Աստվածամոր, Հովհաննես Մկրտչի, Պողոսի, Ղուկասի, Հովհաննես ավետարանչի, Պետրոսի, Մատթեոսի, Մարկոսի պատկերները). «Բոլոր պատկերները բաժանուած են մարգարտաշար խորաններով՝ ամենեքեանն էլ մարգարտեայ լուսոյ պսակով: Վակասի վերևի լուսանցքի գրութիւնն է».

*Մարկոս, Մաթէոս, Պետրոս, Մարիամ, Յիսուս Քրիստոս, Յովհաննէս, Պօղոս, Ղուկաս, Յօհաննէս:*

Ստորին եզրին.

*Յիշատակ է վարշամակս Առաքեալ վարդ(ա)պ(ե)տին ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ բերի յետ ելից աստի, թվ ՌՂԱ (1642):*

«Ընդամենը վակասի վրայ խոշոր կանեփահատի չափ 102 հատ մարգարիտ կայ: Մեծութիւնն է՝ երկարութիւնը 57 սմ, լայնութիւնը 15 սմ, աստառը կտաւ և շագանակագոյն կաշի: Վակասի թիկունքը շաղաշատեռ քաթան, նօսր կտաւէ աստառ՝ ծիրանի, մանիշակի, դեղին, սպիտակ զոլերով, լայնութիւնը 57 սմ, երկարութիւնը նոյնպէս»:

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 268-269:

Ծանոթ. Խ. Դադյանի կարծիքով՝ սա Առաքել Դավրիժեցու վակասն է: Էջմիածին է տարվել 1894 թ.:

**Գ** Քշոց՝ պղնձե, կլայեկած, հին. «...առանց պատկերի՝ 18 եզրածակերով, միայն եզերքից 2, 1/2 սմ լուսանցք թողած և երեք սմ լայնութեամբ ժապաւէնաձև փորագրած: Կոթը պղնձեայ և հագցրած: Յատակագրութիւնն է».

Մի երեսին.

*Յիշատակ է Դանէլի որդի Գրիգորի ի դուռն ս(ուր)բ Մեծոբ Ա(ստուա)ծածին | թվ(ին) ՌճԼԶ (1687), վանեցի:*

Մյուս երեսին.

*Գրիգորի որդի Սարօն քրթերուց եսիր գնեց և յիշատակեց ի դուռն Փրխվաց ս(ուր)բ Ստեփան(նոս)ի, թվ(ին) ՌՄՀԸ (1829):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 45 (**Դադեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 267:

Ծանոթ. Մեծոփավանքը (Սբ. Աստվածածին) գտնվում է Արճեշ, իսկ Փրխուսի Սբ. Ստեփանոս եկեղեցին՝ Խլաթ գավառում:

Խաչիկ վարդապետը 1894 թ. քշոցը փոխադրել է Էջմիածին:

Եսիր նշանակում է գերի:

---

1 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 164, թ. 5:

2 **Դատեան Խաչիկ**, Պարսկաստանից բերած հնութիւնները, «Արարատ», 1895, էջ 266-269: **Խ. Վ. (Խաչիկ վրդ. Դադյան)**, Համառօտ նկարագիր Շաւարշան-Արտազ գաւառի Ս. Թադէոս Առաքելոյ վանքի, «Արարատ», 1898, էջ 89:

**Դ** Վարագույր. «Մի հնամաշ կտաւեայ վարագոյր հայկական գեղեցիկ նկարներով: Մեծութիւնն է հինգ արշին, քառակուսի»:

*Յիշատակ է վարաքուր: Փոլատի որդի Պապիկ(ին): Ծնօղին և եղպար Վարդան(ին) և Խաչատուրին: Եւ ծնօղ Ղարիպին: Ի դուռն Թաքէոսի առաքելին: Յիշատակ օրհնութեան եղիցի, թվին ՌՃԼԸ (1689)ին:*

Նկարների տակ գրված է.

*Այս է Ակոբ առաքելոյ գլխաղիր: Բանտն այս է: Պարտեզն այս է: Այս Արութիւն է: Ես մահտեսի Ըզնատիոս Եւդոկիացի: Այս պատանատեղ է: Այս Գողգոթայ է:*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 266:

Ծանոթ. 1894 թ. Դաւյանը վարագույրը փոխադրել է Էջմիածին:

**Ե** Զանգ. «Վանուցս կոտրած զանգի գիրը»: Լայն եզրի պարագիծը՝ 98 սմ (1 արշ. 6 վերշ.), միջինը՝ 58 սմ (13 վերշ.), ունկերի տակ՝ 35,5 սմ (8 վերշ.): Վեց ունկերով, միջի օղակը կա, պակասում է «զարկ երկաթը»: Բարձրությունն է 31սմ՝ 7 վերշ.:

*Յիշատակ է Մարտիրոսի որդի Այտինին, Խոճումին, ի դուռն Ս(ուր)բ Նախավկային, թվ(ին) ՌՃԽ (1691):*

Քիչ վեր.

*IN TE DOMINE SPERAVI («Ի քեզ Տէր յուսացայ»):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 35 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հիշատակագրությունից դատելով՝ զանգը պատկանել է Սբ. Ստեփանոս նախավկայի վանքին, իսկ թե ի՞նչ հանգամանքներում է տեղափոխվել Թադեոս առաքյալի վանք՝ դժվար է ասել:

**Զ** Վակաս՝ մարգարտաշար, ասեղնագործ 13 պատկերներով. «...պատկերացնում է Յիսուսին իւր երկոտասան աշակերտներով, բայց աննաշակ. նմանապէս մարգարտաշար նկարներով, խորաններ և յուսոյ պսակներ: Յիսուսը աթոռին նստած խաչակնքում է: Պօղոսի և Պետրոսի ձեռին մի մի բանալի: Յակոբոս և Թաթէոս առաքեալների ձեռքին սուրբ գիրք, մնացեալները մի մի գաւազան ձեռներին բռնած: Նկարների ներքև յիշատակագրութիւնն է...: Մեծութիւնն է՝ երկարութիւն 55 սմ, լայնութիւն 16 սմ: Մարգարիտները 1055 փոքրադիր 24 կանաչ քարեր, 5 սպիտակ, 7 կարմիր, 11 դեղին, 4 մոխրագոյն. բոլորն էլ խամ քար, իսկ երկու քար ընկած են: Թիկունքը կարմիր կտաւից 70 սմ երկայն, լայնութիւնը վակասի երկարութեամբ: Վակասի տակը շագանակագոյն կաշիից»:

*Յիշատակ է վ(ա)կաս. Մ(ա)թէոս վարդ(ա)պետ(ի)ն եւ ուր ծնողոյն Դավթին եւ ուր կ(ե)նակց(ի)ն, աղջկան և ...թվ. ՌՃԾ թ.(1701):*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 269:

Ծանոթ. 1894 թ. վակասը փոխադրվել է Էջմիածին:

**Է** Խաչ, երեսին.

*Յիշատակ է խաչս բարեխօս առ ա(ստուա)ծ վասն Էնիաթի որդի Աւետիսին եւ ծնօղացն, որ ետ ի դուռն Աւգայջքրու Սբ. Ա(ստուա)ծածնին, թվ(ին) ՌՃԾԱ (1702):*

Թիկունքին.

*Այս է ս(ուր)բ ն|շանս, որ | է մասն ի | զագաթ ս(ուր)բ առաքելոյս Թադէոսի | և աշակերտի Ք(րիստո)սի, ի վայելումն | հիզանցի | Վարդան | վարդապետին, ՌՃՂԴ (1745):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 50 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**Ը** Ծոցուրար. «...ներկայացնում է երեք մեխակի ծաղկաման, իրար գլխի, ասեղնագործած ոսկեթելերով, իսկ կոկոնների և բողբոջների վրայ գործ է ածած կանաչ, կապոյտ, դեղին, սպիտակ և մոխրագոյն մետաքսեայ թելեր: Վերևի ծաղկամանի փռուած մեխակների մէջ ասեղնագործած է մի հաւասար քառաթև խաչ: Լուսանցազարդերը ոսկեթել ժապաւէններով զարդարած՝ ներքևի լուսանցքը զառ դիպակ կտորով կարկատած և ոսկեթել ծոպերով, աստառը կարմիր կտաւից, կանաչ մետաքսէ եզերափակով: Յիշատակագրութիւններ սրտի բացուածքի շուրջը...: ...Մեծութիւնն է՝ 142 սմ, երկարութիւն՝ 44-32 սմ, լայնութիւն՝ վզնոցի կողմից 28 սմ և ծայրը կոլոր: Այս ծոցուրարը իւր ժամանակուայ ձեռագործների մէջ օրինակելի կիամարուի, զուտ հայկական գործ»:

*Յիշատակ է Եղինաբին, Վ(ա)րդուհոյն ի վայելումն եղբօրն Եսա(յ)ի վ(ա)րդ(ա)պետին. թվին ՌՃԿԳ (1714) ին:*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 269-270:

Ծանոթ. 1894 թ. ծոցուրարը փոխադրվել է Էջմիածին:

**Թ** Խաչ (ունեւ 44,5 սմ՝10 վերշ. բարձրություն).

*Յիշատակ է թարվզցի փոքր ծառա ս(ուր)բ Առաքելո(յ)ն Թադէոսի Յով(հան)նէս իրիցին, թվ(ի)ն ՌՃՀԸ (1729), սեպտ(ե)մբ(ե)րի Ի (20)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 37 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**Ժ** «Մի զոյգ արծաթեայ խաչեր, մին մեծադիր չիվքիշի (արծաթեայ լարերով կռած, իրար հագցրած), միւսը ձուլածոյ, փոքրադիր՝ անյայտ մասունքով: Սկզբից անկոթ է եղել, յետոյ նոր կոթ են հագցրել, այն ևս պոկուել է: Մեծադիր խաչի երեսն հագցրած է մի ձուլածոյ Յիսուս ուղիղ մէջտեղը: Սոյն երեսի վրայ հագցրած է չորս կապոյտ խամ քար: Իսկ միւս երեսին չորս կապոյտ թևերի վրայ, մի կարմիր էլ մէջտեղը, խաչի թևերի կռնակներում ամրացրած է չորս կանաչ լրքիայի մեծութեամբ խամ քար: Յիշատակագրութիւնն է՝ կոթի վրայ գրուած»:

*Յիշատակ է սուրբ խաչս Սէվումի որդի Հա(յ)րապետին և եղպօր Նաղպաէկին և Օվանէսին, որ ետ ի դուռն սուրբ Թումա առաքելին, թվ. ՌՃՂԶ (1747)ին:*

«Մեծութիւնն է՝ բարձրութիւնը 27 սմ, թևերի փռուածքի լայնութիւնը՝ 12 սմ, կոթը պտուտակով»:

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 267:

**ԺԱ** Թադեոս առաքյալի պատկերը՝ նկարված վանքի համար, յուղանկարչ (23 x 30 սմ), նկարիչը՝ անհայտ. «Թադէոս առաքելոյ պատկերը ներկայացնում է մի հասակաւոր անձն, լուսոյ պսակով և հայրապետական կապտագոյն վերարկու ուսերին, վերարկուի տակ շագանակագոյն հագուստ, իսկ վերջինիս տակ կարմրագոյն ծիրանի. աջ ձեռին խաչաձև և գաւազանանման սուրը խրած գետնին, իսկ ձախ ձեռքով սուրբ գիրքը գրկած.

մի համեստաբարոյ Հրէայի կերպարանք: Իսկ պատկերի շուրջը երևում են վանքեր, մատուռներ և դամբարաններ: Պատկերի երկու կողքի գրութիւնն է...: Մեծութիւնն է՝ 23 x 30 սմ: Տախտակը թերևս ընկուզեայ լինի»։

Վերին մասում.

*Սուրբ առաքեալն Թադէոս:*

Ստորին մասում.

*Յիշատակ է Մինաս վարդապետին, ի դուռն սուրբ Թադէոսի առաքելոյն, թվ(ին) ՌՃՂԶ (1747)ին:*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 267:

Ծանոթ. Դաղյանի վկայությամբ «Սոյն գրութիւնը այնքան եղծուած է, որ միայն խոշորագոյնցով է կարդացուում»: Սա էլ հավանաբար տարեթվի տասնավոր Ղ (90) նիշը Հ (70)-ի հետ շփոթելու պատճառ է դարձել, և թվագրերը վերծանվել են ՌՃՀԶ (1727): Ճշտում ենք. 1747 թ.՝ հաշվի առնելով Մինաս վարդապետի պաշտոնավարության սկիզբը (1743 թ.):

Նկարը 1894 թ. Խ. Դաղյանը տարել է Էջմիածին՝ Մայր Աթոռի թանգարան, որտեղից էլ այն տեղափոխվել է Երևան և պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

**ԺԲ** Սանդուխտ սրբուհու պատկերը՝ յուղաներկ (29,5 x 23 սմ), նկարիչը՝ անհայտ, ստեղծվել է Թադեոս առաքյալի վանքի համար. «...ներկայացնում է մի չքնաղ գեղեցկուհի արքայական ընդելուզեալ թագը գլխին, վարդագոյն ծիրանի ուսերին, հեռարձակ զանգուր մազերով, կարմրայտ, խոշոր և սև աչքերով և ունքերով, պարթև հասակով, երկու ձեռքին սուրբ գիրքը բռնած, երեսը փոքր ինչ մի կողմ թեքած, դիտում է և մտածում, իսկ երեսին դէմ առ դէմ լուսոյ ճառագայթներ են ցոլանում: Ծիրանիի տակ բաց կանաչագոյն կապայաձև հագուստ, իսկ բազուկները կարմրագոյն թևնոցներով: Երկու կողմին երևում են վանքերի, մատուռների և դամբարանների պատկերներ... Պատկերի հիւսիսարևմտեան անկիւնը կոտրած է: Պատկերի վրայի երկու կողմի գիրն է»:

Վերին մասում.

*Ս(ուր)բ (կ)ոյսն Սանդուխտ:*

Ստորին մասում.

*Յիշատակ է Մինաս վարդապետին, ի դուռն սուրբ Թադէոսի առաքելոյն, թվ(ին) ՌՃՂԶ (1747)ին:*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 267: **Ավետիսյան Ք.**, Հայ եկեղեցու սրբերի պատկերները XVII-XVIII դդ. եկեղեցական գեղանկարչության մեջ, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 331:

Նկարը 1894 թ. տարվել է Էջմիածին՝ Մայր Աթոռի թանգարան, որտեղից էլ 1931 թ. տեղափոխվել է Երևան: Պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

Տարընթերցում. վիմագրի երկրորդ մասը Ք. Ավետիսյանը ներկայացրել է որոշ սխալներով. «*(Յիշատակ) է Տէր(՞)յն Սբ Թադէոսի առաքելոյ(՞): ՌՃ<ՀԶ> (17<27>)*»:

Խ. Դաղյանը, հաշվի առնելով երկու կտավների համաժամանակյա լինելը, տարեթիվը վերծանել է 1747:

**ԺԳ** Թեփշիք՝ 7 մոմակալներով.

*Յիշատակ է մահտեսի Մարտիրոսին ի դուռն ս(ուր)բ Թաքէոս Առաքելուն վանքին, ՌՄԴ (1755) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 38 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԺԴ** Մասունք.

*Ս(ուր)բ Թաքէոս Առաքեալն ատամն է, թվ(ի)ն / ՌՄԵ (1756):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 50 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԺԵ** Ավանդատան ծածկոց. «...ներկայացնում է մի բարդի անտառ 58 ծառերից բաղկացած, տակին և երկու կողերին լայն ոսկեթել լուսանցազարդ ծաղկենկար զարդարանք: Անտառը գործած է կարմիր աթլասի վրայ, իսկ լուսանցազարդն ու եզրազարդը մոխրագոյն աթլասի վրայ: Յիշատակագրութիւնն է անտառից բարձր, ծածկոցի վերևի մասում երեք տողից... մեծութիւնն է 90 սմ, լայնութիւնը 50 սմ եզրանկարով հանդերձ»:

*Յիշատակ է ծածկոցս Մարիամին եւ որդոցն իւրոց Աւքանդելին, որ ետուն Թադէոս առաքելոյն սուրբ վանքին, թվ. ՌՄԺԹ (1770):*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 270:

Ծանոթ. 1894 թ. ծածկոցը տեղափոխվել է Էջմիածին:

**ԺԶ** Խաչ՝ արծաթե, ձուլածո, փոքր, անհայտ մասունքով. «...մէջ տեղը ունի մի ապակէ ուռոյցք, որի տակն անյայտ մասունքը: Մասունքի շուրջը գրութիւնն է... խաչի միւս երեսին ամենանուրբ կերպով քանդակած է Տիրոջ յարութիւնը, խաչի մէջտեղը, իսկ թևերի վրայ չորս աւետարանիչները իւրեանց նշանաբաններով: Թևերի կռնակներում հազցրած կան չորս բուստ: Մեծութիւնն է քառակուսի $8^1/_2$ x $8^1/_2$ սմ: Իսկ կոտրած կոթի երկարութիւնը 10 սմ: Խաչը ոսկեզօծած, իսկ կօթը արճիճով և երկաթեայ լարերով է ամրացրած»:

*Յիշատակ է սուրբ խաչս մշկերտցի Տօնապետին եւ որդուն Գէորքին, ձեռամբ Կարապետ վարդապետին, ի դրանն կենդանագիր սուրբ պատկերին, 1221՞ (1772՞):*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 268:

Ծանոթ. 1894 թ. տեղափոխվել է Էջմիածին:

**ԺԷ** Ջահ.

*Յիշատակ է ճահէս աջա/կողման էրգերու-մ/այ տիրացու նե/րուն մեծ եւ փո/քրին Թաքէոս Առաքելոյ վանք/ին, թվ(ին) ՌՄԻԸ (1779) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԺԸ** Ջահ, բարձրությունը՝ 38սմ (8,5 վերշ).

*Յիշատակս է ճահըս էրգէռումցի տիրացու Ունեում, ձախակողմանց դուռն Թաքէոս Առաքլու վանքին, թվ(ին) ՌՄԻԸ (1779) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 37-38 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԺԹ** Սկիհի ծածկոց. «...սկիհոյ քող. բաց սև աղլուխի վրայ ասեղնագործած մի արեգակ, մէջտեղը մի խաչ, իսկ աղլուխի չորս ծայրին մի մի խաչ. արեգակի չորս կողմը չորս հրեշտակ, աղլուխի շուրջը ժապաւէնաձև եզրազարդ, մէջտեղի պարապ տեղերում չինաձև զարդեր: Ճաճանչաւոր արեգակի շուրջը բոլորակ շրջանակ, իսկ սորա մէջ էլ յիշատակագրութիւն...: ...Մեծութիւնն է՝ 90 x 90 սմ, բոլոր գործուածքը արծաթաթելերով»:

*Յիշատակ է սէքինճի Խաչատուրին ի դուռն սուրբ առաքելոյն Թադէոսի ի Իզմուրէ առքի, թվ ՌՄԼ (1781):*

Հրատ. **Դատեան Խաչիկ**, Ճշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 270:

Ծանոթ. 1894 թ. Դաղյանն իրը տարել է Էջմիածին:

Սեթինջի նշանակում է փափուկ բամբակյա կտավ գործող:

**Ի** Շամադան (փոքր), բարձրությունը՝ 27 սմ (6 վերշ.).

*Յիշատակ է Մարիամին ի դուռն ս(ուր)բ Թադէոսի Առաքելուն վանիցն, ձեռամբ Գէորգ վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 37 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԻԱ** «Մի եպիսկոպոսական խոյր՝ մոյգ կապոյտ աթլասի վրայ ոսկեթել ասեղնագործած, ճաճանչաւոր արեգակի մէջ նկարէն ասեղնագործութեամբ Աստուածածինը աթոռի վրայ բազմած, մանուկ Յիսուսը իւր ծնկանը, աջ ձեռքով խաչակնքում է առջևը ասեղնագործած կաթուղիկէի վրայ: Յիսուսը արծաթաթել պատմուճան հագած, գլխին մարգարտաշար լուսոյ պսակ, ձախ ձեռքը սրտին: Աստուածամայրը նոյնպէս մարգարտաշար լուսոյ պսակով, բաց դեղնագոյն վերնազգեստը հագին, իսկ տակը մոյգ կարմիր շապիկ. երևում է ձախ բազուկը և կրծքի կարմիրը: Գլխի ծամերը ոլորած և գլխաշոր ծածկած պսակի տակին: Կուրծքը նմանապէս մարգարիտներով զարդարուն: Յիսուսի պսակի երկշարք մարգարիտները թուով 71-են կորեակի մեծութեամբ: Աստուածամօր պսակի եռաշարքը 210, նոյն մեծութեամբ, իսկ կրծքի շարքը 65 հատ նոյն մեծութեամբ մարգարիտներից: Ոսկեթել ասեղնագործի միջոցները ոսպաչափ ոսկիներով զարդարած, թագի եռանկիւնի ծայրում, ճաճանչաւոր գործուածքի միջի փոքրիկ եռանկիւնիի մէջ, գործած է. «*Է*» տառը, իսկ նրանից բարձր փոքրիկ խաչ: Թագի բոլոր լուսանցքը ծաղկատերև և ծաղկակոկոն գեղեցիկ ասեղնագործ ժապաւէն՝ ոսկեթել, արծաթաթել և մետաքսաթել, կապոյտ և դեղին գոյներով: Աստուածամօր ոտների տակ քիչ ներքև ասեղնագործած է երկու խոյրաձև պսակներ կարմիր և ոսկեթել՝ առաջին պսակի մէջ գործած է՝ «*Ե*» և «*Վ*» տառերը, մէջտեղը վարդապետական գաւազան, իսկ պսակի կողքին ոսկեթելած է *1787*: Միւս կողմի պսակի մէջ «*Մ*» և «*Մ*» գրերը, մէջտեղը աստղ, միայն պսակի կողքին 172 թուանշան գործած: Ժապաւէնաձև լուսանցքազարդի տակի մի տող գրութիւնն է».

Մի երեսին.

*1787: Յիշատակ է ջուղայեցի Էննիազի որդի Մէլիք Նազին նկարեալ:*

«Թագի միւս երեսի ճաճանչաւոր արեգակի մէջ ներկայացրած է Տիրոջ մկրտութիւնը. Յիսուս Յորդանանում կանգնած ձեռքերը խաչած, իսկ Յովհաննէս Մկրտիչը մի ձեռքով ջուր է ածում Տիրոջ գլխին, միւսով՝ ձախով, դրօշակը բռնած գետի մէջ կանգնած: Յիսուսի և Յովհաննու մէջտեղը խաչապսակ արքայական գունդ, Յիսուսի միւս կողքին գառն Աստուծոյ, Յովհաննու միւս կողքին մի տերևակալած ծառ գետի ափին: Գետի մէջ, ոտների տակ, լողում են երեք ձուկ, Հոգին սուրբն էլ աղաւնակերպ իջնում է ամպերի միջից, թագի ծայրի ճաճանչաւոր եռանկիւնիից Աստուծոյ աջն է երևում: Երկուքի գլխի լուսոյ պսակները մարգատաշար՝ իւրաքանչիւրը 85 հատից, կորեկի մեծութեամբ: Սոյն երեսի լուսանցազարդերը և պսակագրերը նոյն են, ինչ որ միւս երեսինը: Միայն տակի տողի գրութիւնն է».

*Մկրտիչ Մելիք Նազն ետ Էջմիածնի նւիրակ Եփրեմ վարդապետին:*

«Թագի մեծութիւնն է՝ բարձրութիւնը 42 սմ, բերանքի լայնութիւնը 31 սմ, միջի լայնութիւնը 36 սմ, իսկ թագի արտախուրակների ասեղնագործ ծաղկենկարները նոյն են, ինչ թագի լուսանցքինը, միայն արտախուրակի վրան աւելի ծաղիկներ և աւելի պաճուճանք: Մինի վրան ծաղիկների մէջ կլորակ շրջանակի մէջ «*Ե*» «*Վ*» տառերը, մէջտեղը գաւազան, միւսին «*Մ*» «*Մ*» գրերը, տակը երկու եռանկիւնի իրար հագցրած: Մեծութիւնը՝ երկարութիւնը 43 սմ, լայնութիւնը 9-7 սմ (լայն և նեղ կողերի): Գլուխը դնելու բերանքի աստառը բաց դեղնագոյն լաթ, իսկ թագի գլխի երկճիւղի աստառը կարմիր վարդագոյն աթլասից»:

Հրատ. **Դատեան Խաչիկ,** Ճշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 268:

Ծանոթ. Դաղյանի կարծիքով՝ սա Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսի (1809-1830) խույրն է: Էջմիածին է տարվել 1894 թ.:

**ԻԲ** Խաչկալ (քարակերտ), հին եկեղեցու սեղանի (ավագ խորան) վրա. արձանագրությունը «գտնւում է սեղանի քարեայ խաչկալի վերայ, խորհրդանոցի մուտքի ճակատին. խաչկալի պաճուճագեղ քանդակները սքանչելի են: Սպիտակ խաս մարմարիոնի քարից շինուած կաթուղիկէն երկու մուտք ունի, կողքերի սիւնակները քանդակներով զարդարուն: Բեմ-քարի գլխի կաթողիկէն փլած է եւ միայն նեցուկ սիւներն են կանգուն»[3], 7 տող.

*Շնորհիւն Աստուծոյ եւ կարողութեամբ նորին / կանգնեցաւ գեղեցկայարմար եւ գ/եղեցկափայլ խաչակալս ի յաջորդու/թեան ժամանակի Գէորգ վարդապետին արդ / որք նուն (՞), / որք հանդիպիք տուք զողորմին, եղև / կատար շինար նորին ի մերս թուոջ / ՌՄԽԲ (1793)-ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 11 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, Ճշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 89 (վրիպտ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 46): **Ոսկեան Հ.,** Արտազի վանքը, էջ 34: Նույնի՝ Վասպուրականի-Վանի վանքերը, էջ 459: **Haghnazarian A.**, էջ 198, արձ. № 2.

**ԻԳ** Շամատան (միջակ). բարձրությունը՝ 29 սմ (6,5 վերշ.).

*Յիշատակ է տիրացու Աղապապին և ծնողացն աշճի Սարգիսին և մօրն Շուշանին, ի դուռն ս(ուր)բ Թադէոսա Առաքելոյ վանից, թվ(ին) ՌՄԾԲ (1803):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 37 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԻԴ** Աշտանակ.

*Յիշատակ է աշտանակս քաղաքի յԱրզրում / թօքմաճի Առնաֆա(րն) ի դուռն Թադէոսի առաքելոյն առաջնորդութեամբ / Սիմէօնի սրբ(ազ)ան եպիսկոպոսի, հոգացողութեամբ և ձեռամբ Առաքել / վարդապետին, թվ(ին) ՌՄԾԹ (1810), նոյեմբերի Գ(3)-ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 35 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. բովանդակությունը գրեթե նույնությամբ կրկնված է հաջորդ աշտանակի վրա:

Թոքմաճի նշանակում է ձուլող:

---

3 **Խ. Վ.**, Ճշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 89 (վրիպտ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, Էջմիածին, 2007, էջ 46):

**ԻԵ** Աշտանակ.

*Յիշատակ է աշտանակս Արզրում քաղաքի թօբմաճի Առնաֆարն ի դուռն Թադէոսի առաքելոյն ի առաջնորդութեան Սիմէոն սրբազան եպիսկոպոսին, հոգացողութեամբն և ձեռամբն Առաքել վարդապետի թվ(ի)ն ՌՄԾԹ (1810)-ին, ճոյեմբերի Գ(3)-ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 35 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԻԶ** Զանգաձև շամարտան.

*Յիշատակ է Գարանլի օղլի մ(ա)հտ(ե)սի Յարութիւնին դաքրճի, կողակցուն՝ Մարք(ա)րտին, ի դուռն Թաթէոսի Առաքելոյն, թվ(ին) ՌՄԾԹ (1810):*

Սրանից մի տող վերև.

*Միրզա,*

Մի տող ներքև.

*Ախիճան Աղայճան ո(ր)դ(ի):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 36 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. դաքրճի նշանակում է ջրիով ապրանք փոխադրող:

**ԻԷ** Զանգաձև շամարտան.

*Յիշատակ է Գարակլի օղլի դաքրճի մահտեսի Յարութիւնին ի դուռն Թաթէոսի Առաքելոյն, թվ(ին) ՌՄԾԹ (1810):*

Մոտ չորս տող բարձր.

*Յիշատակ է Մկիրտիչի որդի դազնճի Էղիւայիս Իսպիրու, ի դ(ու)ռ(ն) ս(ուր)բ Օհաննէս, ՌՄԼԲ (1783):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 36-37 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. դազնճի նշանակում է կաքսայագործ:

**ԻԸ** Պատկեր «Յիսուսը գրկին Սբ. Աստվածածնի». բարձրությունը՝ 98 սմ (1 արշ. 6 վերշ.), լայնութ.՝ 75,5 սմ (1 արշ.,1 վերշ.).

*Յիշատակ է Ալէքսանին առ նոյն եւ կնօջն Շամամին, Տ(է)ր Սիմէօն, թվ(ին) ՌՄԿԹ (1810):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԻԹ** Վանքի գլխավոր մուտքի դռան բանալու փականքի պղնձի արձանագրությունը.

*Թվին ՌՄԿԱ (1812)ին, նուեմբերի Ա-ին, յիշատակ է բնանալիս կարնեցի / Օսիփենց Ըստեփանին, ի դուռն ս(ուր)բ Թադէոս Առաքելու վանիցն:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44-45 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**Լ** Պատկեր «Համբարձումն Քրիստոսի». բարձրութ.՝ 75,5 սմ (1 արշ. 1 վերշ.), լայնութ.՝ 54 սմ (12 վերշ.), նյութը՝ կտավ.

*Յիշատակ է պատկերս մահտեսի Եղօյին եւ որդոց նորա, որ ետ դուռն ս(ուր)բ Սարգսին, թվ(ին) ՌՄԿԱ (1812)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԱ** Առաջնորդական մեծ աթոռ. բարձրութ.՝ 1,55 սմ (2 արշ. 3 վերշ.), լայնութ.՝ 82 սմ (1 արշ. 2,5 վերշ), տողերի երկարութ.՝ 71 սմ (1 արշ.).

*Յիշատակ է աթոռս Եղիազար վարդապետին եւ ծնօղաց նորին եւ ցնծութիւն սրբազան Առաքեալ Թադէոսին վայելումն հոգևոր ծնօղին իմո Սիմէօն սրբազան արքեպիսկոպոսին, թվ(ին) ՌՄԿԳ (1814), մայիսի 1-ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԲ** Սեղանի խաչկալի մուտքի դռներին՝ կտավի վրա պատկերված են աջ կողմում՝ Թադեոս առաքյալի կենդանագիրը, մի երիտասարդ, որը ձախ ձեռքում ունի գեղարդ, աջում՝ դաշույն, մատների ծայրով էլ դաստառակը բռնած, իսկ ձախ կողմում Աստվածամոր պատկերը ձեռքին Բարդուղիմեոս առաքյալն է: Պատկերի չափերն են՝ 0,8 x 0,93 մ (1 սաժ., 2 վերշ. x 1 արշ., 5 վերշ.).

Սբ. Թադեոսի պատկերի գիրն է.

*Յիշատակ է Սիմէօնի արքեպիսկոպոսի եւ յաջորդ :*

Սբ. Բարդուղիմեոսի պատկերի գիրն է.

*Սրբոյ տաճարիս սրբազան առաքելոյն Թադէոսի: Թվ. ՌՄԿԵ (1816):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 14, 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, Ընշվ. հոդվ. «Արարատ», 1898, էջ 89 (վրիպտ.՝**Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 46): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 34-35: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 459-460:

**ԼԳ** Խաչվառ՝ պահված սեղանում: Չափերն են՝ 1,06 x 0,80 մ (1 արշ. 8 վերշ. x 1 արշ. 2 վերշ.): Երկու երեսներին արձանագրված է.

*Ի նորոգման սրբոյ Աթոռոյս նկարեցաւ խաչ/վառս ձեռամբ Սիմէօն Սրբազան արքեպիսկոպոսի / ետ յիշատակ նորակերտ սրբոյ տաճարիս:*

Մյուս երեսին.

*Յիշատակ է Սրբազան Առաքելոյն Թադէոսի / Աթոռոյն առաջնորդ Սիմէօն Արքեպիսկոպոսիս / ծնողացս, քվերցս...*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, Ընշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 89 (վրիպտ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 47): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 35: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 460: **Haghnazarian A.**, էջ 200, արձ. № 9.

Ծանոթ. խաչվառը նկարել և հիշատակագրել է Սիմեոն արքեպիսկոպոսը:

**ԼԴ** Պատկեր՝ «Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս». բարձրությունը 80սմ (1 արշ. 2 վերշ.), լայնութ. 71սմ (1 արշ.).

*Յիշատակ է Յովսէփին կնոջն Մ(ա)րգ(ար)տին, որդոյն Միքէլին. թվ(ին) ՌՄԿԶ (1817):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԵ** Պատկեր՝ «Յիսուսին գրկած Սբ. Աստվածածին».

*Ով սուրբ կոյս լեր բարեխօս վասն զքեզ խնդրողաց եւ վասն նկարիչ եւ իմոց ամենայց, որք յիշատակ ստացել են 1268 (1819):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԶ** Զանգ, փոքրադիր. բարձրությունը՝ 49 սմ (11 վերշ.), պարագիծը՝ 124 սմ (1 արշ. 12 վերշ.), տրամագիծը՝ 40 սմ (9 վերշ.), 3 տող.

*Յամի տեառն 1831, ով հանդիպօղք տուք ողորմի Ք(րիստո)ս զձեզ ողորմեսցի ամէն: | Զանգակս զայս դավրէժէցի նշանագիր Աղայ Աւետիսն ետ յիշատակ | սրբազան Առաքելոյն Թադէոսի հիաշնորհ Վանին, իւր ծնողացն՝ Հայրապետին, | Մայանին, իւր եղբարցն՝ Յովսէփին եւ Փիլիպպոսին եւ կնոջն իւր՝ Ոսգուն, իւր որդոցն՝ | Մարգարին, Հայրապետին, Թադէոսին եւ դուստրն իւր՝ Զարմանդուխտին, | Թագուհուն, Սոփիային եւ ընտանեացն համայնից:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 47 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԷ** Զանգ. բարձրությունը՝ 58 սմ, հաստությունը բարակ կողմում՝ 93 սմ (1 արշ. 5 վերշ.), լայն կողմում՝ 164 սմ (2 արշ. 5 վերշ.), տրամագիծը՝ 53,5 սմ (12 վերշ.): «Նոյն թուականն, նոյն յիշատագրութիւնը. միայն գրութեան վերջում».

*Օվ հանդիպողք մինչև Ք(րիստո)ս զձեզ դաւրէժէցի Գրիգոր Պետրոսեան Բանպիշօվս յիշէք:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 47 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԸ** Կնիք.

*Ուստա Պետրոս:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 35 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԹ** Մասունք, թղթի վրա՝ նոտրգրով.

*Այս է զագ|աթն սրբոյն | Թատէոսի ս(ուր)բ | Առաքելոյն Ք(րիստոս)ի Ա(ստուծո)յն մերոյ աշակերտին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 50 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**Խ** Մեծ շամար(տ)ան, բարձրությունը՝ 84 սմ (1 արշ. 3 վերշ.)

*Յիշատակ է բանազղէցի Օհանէս Տ(է)ր Արքահամե(ա)ն, որ ետ ի դուռն Թաթէոսի ս(ուր)բ Առաքելոյն, ...ոքի(ւն), որ յիշին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 36 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԽԱ** Պատկեր «Սբ. Գևորգ». նյութը՝ կտավ (չափերը՝ անհայտ).

*Յիշատակ Խոնցի Մալաքի որդի Վարթանին, ի դուռն սրբոյ Թադէոսին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 49 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԽԲ** «Մի զոյգ պղնձեայ քշոց, որոնցից մինը կոտրած՝ երկաթով կարկատած և երկաթէ կոթով, 24 եզրածակերով՝ բոժոժների համար: Երկու երեսների անճաշակ նկարները ձեռով միանման են և ներկայացնում են վեց թեւեայ սերոբէներ, իսկ թևերի արանքներում խաչեր նկարած: Առաջին երեսի յիշատակագրութիւնն է».

*Յիշատակ է Սարգիսի որդի Յարութիւնին և Թամամին, Սառային, ի դուռն ս(ուր)բ Ա(ստուա)ծածնին:*

«...մեծութիւնն է՝ 23 x 23 սմ, կոթի երկարութիւնը 19 սմ, ծակերում՝ երեք օղակներ»:

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 45 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Դատեան Խաչիկ**, նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 267:

Ծանոթ. 1894 թ. քշոցը փոխադրվել է Էջմիածին:

**ԽԳ** Մասունք (չափերը՝ 39 x 20 սմ, բազկի հաստութ.՝ 18 սմ, բարակ կողը՝ 16 սմ).

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է կան | ս(ու)րբ խաչս հ(ա)նգու(ցեալ) | Բարդուղիմէոսի | եւ Սավրի գեղի | Ոսափին, թվին | ՌՄԽԸ (1799):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 9, թ. 54:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ընդօրինակողն է Խաչիկ վարդապետ Դադյանը:

**ԽԴ** Զանգ՝ քանդակազարդ, մեծ.

*Купецъ Николай Бакулевъ 1886 года лилъ сей колоколъ Вятской губерніи въ городе Слободскомъ.*

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 206, արձ. № 32:

Ծանոթ. 1918 թ. այս զանգն է զուժել թուրքական հարձակումը Թադեոս առաքյալի վանքի վրա: Գողացել են 1970 թ. (ԴԱՀՊ, հ. Բ, էջ 141):

**ԽԵ** Վարագույր. ասեղնագործ տառերով գրված է եղել.

*Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն: Յ(իսուս) Ն(ազովրեցի) Թ(ագաւոր) Հ(այոց): Է(ութիւն)*

Հրատ. **Անեմեան Հ.**, Արտազի Ս. Թադէի վանքի ձեռագործ վարագոյրը, «Բազմավէպ», 1930, էջ 308-309:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԹ դ.:

# ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔՈՒՄ ՅԱՐԴ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին անձը, ով անդրադարձել է վանքի ճարտարապետական նկարագրին և մինչև իսկ կազմել համալիրի՝ թեկուզ մոտավոր հատակագիծը, դարձյալ վաստակաշատ Խաչիկ ծ. վարդապետ Դադյանն է[1]:

1894 թ. կազմած գծագրում թվահամարների ներքո վարդապետն ամենայն բարեխղճությամբ նշել է համալիրի կազմում գոյություն ունեցող յուրաքանչյուր շինության գործառական նշանակությունը: Տեղեկություններ, որոնք ժամանակի հեռավորությունից շատ կառույցների համար անբացատրելի կարող էին մնալ առանց այդ արժեքավոր գծագրի:



**Խաչիկ ծ. վարդապետ Դադյանի կազմած Թադեոս առաքյալի վանքի հատակագիծը (1894 թ.)**

1899 թ. դեկտեմբերի 2-ին տեղում կատարած չափագրական աշխատանքների հիման վրա վանքի գլխավոր կառույցների (եկեղեցի, գավիթ և զանգակատուն) անհամեմատ ավելի ճշգրիտ գծագրեր (հատակագիծ և հարավային ճակատ) է հեղինակել ճարտարապետ Թաթոս Հակոբյանը[2]:

1903 թ. վանքի ճարտարապետական նկարագրին մասնակի անդրադարձել է իրանահայ դպրոցներում ուսուցչական երկարամյա գործունեություն ծավալած Երվանդ Ֆրանգյանը[3]:

Թադեոս առաքյալի վանքի ուսումնասիրությամբ զբաղվել է նաև բանասեր Հայկ Աճեմյանը[4]:

1960-ական թվականներին Թադեոս առաքյալի վանքում և Ատրպատականում գտնվող հայկական մյուս հուշարձաններում որոշ ուսումնասիրություններ է կատարել Իրանում հաստատված Գերմանական հնագիտական ընկերության տնօրեն Վոլֆրամ Քլայսը[5]: Մենաստանի օժանդակ շինություններում նա հայտնաբերել է նախաքրիստոնեական (այդ թվում նաև Վանի թագավորության) շրջանի

---

1 Ձեռագիրը տե՛ս ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108 (**Դադեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): Հոդվածաշարը տե՛ս «Արարատ» ամսագիր, 1895, 1898:

2 Բնօրինակը պահվում է ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108:

3 «Մուրճ», 1903, № 8, էջ 123-139: Տե՛ս նաև **Ֆրանգեան Ե.,** Ատրպատական, էջ 27-42:

4 **Աճէմեան Հ.**, Ս. Թադէի վանքը, մասն I և մասն II:

5 **Kleiss W.**, Das Kloster des Heiligen Tadd us (Kara Kilise) in Iranisch-Azerbaidjan. Istambuler Mitteilungen, Band 17, 1967. Verlag Ernst Wasmuth, Tьbingen. “Documenti di Architettura Armena”, vol. 4, S. Thadei’ vank, Milano, 1971, pp. 5-8 (տեքստի հայերեն թարգմանությունը տե՛ս էջ 66-68): Ի դեպ, ըստ Վ. Քլայսի, եկեղեցին Ժ դարի կառույց է (**Kleiss W.**, Le monastиre armйnien de Saint-Thadйe en Azerbeidjan, 1967, Archeologia, 19, p. 75), սակայն այդ տեսակետը ոչ այնքան հավանական է համարել ֆրանսիացի հետազոտող Ժան-Միշել Թիերրին՝ նշելով, որ ելնելով հարդարանքի ոճից, մասնավորապես լուսամուտների (զուգահեռ է անցկացրել Դիվարույնի եկեղեցու արևմտյան լուսամուտի եռաթերթ շրջանակի հետ, որը 1447 թվական է), ինչպես նաև արձանագրության տեքստից, ավելի հավանական տարբերակ է ԺԴ դարը, թեև թմբուկի գոտիավոր տեսքը խոսում է ավելի ուշ շրջանի վերակառուցման մասին, որը հավանաբար 1696 թ. կրած վնասներից հետո է եղել (**Thierry M.**, Monuments armйniens du Vaspurakan, Paris, 1989, p. 486):



**Թադեոս առաքյալի վանք (չափ.՝ ճարտ. Թաթոս Յակոբյանի, 1899 թ.)**

խեցեղեն և ենթադրել, որ տեղում եղել է մեհյան, որի կործանումից հետո հայերը կառուցել են Թադեոսի առաջին մատուռը կամ վանքը[6]:

Վանքի քանդակներին և դրանց մշակութային փոխազդեցությունների խնդիրներին անդրադարձել է Հուշանգ Սեյհունը[7]:

Թադեոս առաքյալի վանքի քանդակներին անդ-

6 **Հախնազարեան Յովհ.,** նշվ. հոդվ., «Ալիք», 1967, փետրուարմարտ:

7 "Documenti di Architettura Armena", vol. 4, S. Thadei' vank, pp. 9-10 (տեքստի հայերեն թարգմանությունը տե՛ս նշվ. աշխ., էջ 68-69):



**Թադեոս առաքյալի վանքին կից գտնվող Վանք (Ղարաքիլիսա) գյուղը**

ռադարձել է նաև ֆրանսիացի հետազոտող Ժան-Միշել Թիերրին: Ըստ նրա՝ քանդակների առատությունը զարմացնում է ճանապարհորդին, իսկ ոճը մոլորության մեջ է գցում, և պատկերագրությունը նման չէ արևելյան քրիստոնեական արվեստին[8]:

Թադեոս առաքյալի վանքի ճարտարապետությանը նվիրված մի հոդված է հեղինակել նաև ճարտ. դոկտոր Մուրադ Հասրաթյանը[9]:

**Տեղում իրականացված մեր ուսումնասիրությունները.** տողերիս հեղինակին վիճակվեց վանքի ուսումնասիրությանը նվիրվել 1968 թ.-ից՝ այն ժամանակ, երբ վանքն արդեն տասնամյակներ թափուր էր միաբանությունից և ապավինել էր իր երկու ծեր պահապաններին՝ Վասիլին և Նադդալիին:

**Թադեոս առաքյալի վանքի վերանորոգման աշխատանքները 1960-ական թվականներից ի վեր.** 1969 թ. Թադեոս առաքյալի վանքը մտել է ԻՐԱՆ-ՅՈՒՆԵՍԿՕ միացյալ ծրագրի մեջ, և, ըստ այդմ, վերանորոգության նյութական աջակցությունը պետք է հոգար Իրանի բարեխնամ կառավարության «Չորրորդ ծրագիրը»: Ի դեպ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից վերանորոգման աշխատանքների ծրագիրն իրականացնելու նպատակով ճարտարապետ է նշանակվում Էդուարդ Ութուջյանը, որն էլ նույն թվականի հուլիսի 17-ին և նոյեմբերի 13-ին այցելում է վանք[10]:

1969-1971 թթ. վանքում, իսկ հետագայում նաև Ստեփանոս նախավկայի մենաստանում վանքերին վերահասու հանձնախմբի համագործակցությամբ ընդհատումներով կատարվում են որոշ վերականգնման աշխատանքներ[11]:

1970-ական թվականներին կամավորների նախաձեռնությամբ սկսվում է վանքի՝ համեմատաբար քիչ վնասված շենքերի վերանորոգումը[12]:

1975-1979 թթ. ամռան ամիսներին Փարիզում հաստատված «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը երիտասարդ ֆրանսիահայ անդամների միջոցով մասնակցում է վանքերի և տարածքի բարեկարգման գործընթացին: Երբ Իրանի հեղափոխության պատճառով տարիների դադարից հետո՝ 1983 թ., վերսկսվում է շինարարությունը, կազմակերպությունը ստանձնում է հայկական կողմի ֆինանսական հատկացումների մեծագույն մասը, որն էլ տևում է մինչև 1989 թ.:

1983 թ. մայիսին Թեհրանում տեղի է ունենում Թավրիզի, Թեհրանի և Նոր Ջուղայի միջթեմական ժողով, որտեղ որոշվում է ձեռնամուխ լինել Սբ.

8 **Thierry M.**, նշվ. աշխ., էջ 487:

9 **Հասրաթյան Մ.**, Արտազի Սբ. Թադեի վանքի ճարտարապետությունը, «Հուշարձան. տարեգիրք», Գ, Երևան, 2005, էջ 11-25:

10 Ըստ Դիւան Ատրպատականի հայոց առաջնորդարանի հաղորդագրության:

11 Թադեոս առաքյալի վանքի 30-ամյա վերաշինության ամփոփ տեղեկագիրը հրատարակվել է «Ալիք» օրաթերթի հավելված, 2000, յուլիս:

12 **Thierry M.**, նշվ. աշխ., էջ 484:

Թադեոս առաքյալի, Ստեփանոս նախավկայի, Ծործորի Սբ. Աստվածածին վանքերի և Խոյի Սբ. Սարգիս եկեղեցու վերաշինության գործին: Դրա համար ստեղծվում է գործադիր մարմին:

Աշխատանքները սկսելուց առաջ իրականացվում է 5 գիտարշավ՝ նշյալ հուշարձանների վիճակը ճշտելու համար[13]: Այնուհետև կազմվում և հաստատվում է կատարվելիք աշխատանքների ծրագիրը:

Հարկ է նշել, որ դեռևս 1968-1969 թվականներին Թադեոս առաքյալի վանքում վերանորոգման որոշ աշխատանքներ էր իրականացրել Թեհրանի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետը ՅՈՒՆԵՍԿՕ-ի տնտեսական օժանդակությամբ, սակայն թույլ էին տրվել որոշ սխալներ: Եկեղեցու ծածկի կպրապատման արդյունքում խոնավությունից առաջացել էր սնկային հիվանդություն և փտախտ, որոնց հետևանքով էլ վնասվել էին քանդակներն ու խաչքարերը:

1984 թ. ապրիլին սկսված վերանորոգման աշխատանքների արդյունքում մաքրվում են արդեն քայքայված կուպրի շերտը, «մեռած» հողը, ծածկաքարերը: Բացի դրանից՝ սալահատակվում են հին եկեղեցին ու խորանը, վերակառուցվում է պարսպի հյուսիսային կողմում գտնվող երկու շինություն: Կատարվում են նաև նորոգման այլ աշխատանքներ:

1973-1975 թվականներին պարսպին կից շինությունների ծածկերը նորոգվում են, սակայն ծածկվում են ոչ թե կավահողի, այլ սովորական հողի շերտով, որի հետևանքով անձրևաջրերից կամ ձյան հալոցքից այդ շինությունները ևս քայքայվում էին: 1984 թ. նորոգվում են ինչպես դրանցից մի քանիսի ծածկերը (վանահոր սենյակը և պարսպին հարավից կից երեք սենյակները), այնպես էլ տնտեսական հատվածում գտնվող չորս սենյակներ[14]:

2005 թվականի օգոստոսին ՀՀ պատմության և հուշարձանների պահպանության գործակալության աշխատակիցների հետ մեկտեղ քննարկվում է Թադեոս առաքյալի վանքում իրականացվելիք վերականգնման անհրաժեշտ աշխատանքների հարցը[15]:

13 Այդ գիտարշավներին մասնակցել են Թեհրանից ճարտ. Խոսրոշահին և Հոմայունֆարը, Թավրիզից՝ ճարտ. Մուսավին, Ուրմիայից՝ տարվող աշխատանքների պատասխանատուն. Հեյդարին, Գործադիր մարմնի անդամներ ճարտ. Կարապետ Կարապետյանը, Վարուժան Առաքելյանը, ինչպես նաև ես՝ տողերիս հեղինակը:

14 Իրականացված վերանորոգման աշխատանքների վերաբերյալ 1984 թ. նոյեմբերի 1-ին Արևմտյան Ատրպատականի նախագծային գրասենյակի ղեկավար Էբրահիմ Հեյդարին կազմել է զեկուցագիր: Աշխատանքների համար հատկացված է եղել 2500000 ռիալ, իսկ 3000000 ռիալ գումարով էլ օժանդակել է Ատրպատականի ազգային առաջնորդարանը: Ի դեպ, վերանորոգման աշխատանքներին օգնել են նաև վանքում բնակվող մի քանի հայ ընտանիքներ:

15 «Լրաբեր», 2005, № 6, էջ 18:

# ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վանական պարսպափակ համալիրը բաղկացած է պարսպով բաժանված երկու՝ արևելյան և արևմտյան հատվածներից:

Արևելյան մասում՝ բակի կենտրոնում, եկեղեցին է՝ շրջափակված պարսպին կից միաշարք բնակելի և տնտեսական սենյակներից:

Արևմտյան՝ օժանդակ մասում տնտեսական բաժինն է, որի կառույցները կենտրոնացած են հարավարևելյան անկյունում: Վանքն ունի երկու մուտք՝ բացված արևմուտքից և հարավից[1]:

**Հին կամ Մայր եկեղեցի.** կառուցված է մոխրագույն քարով և ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք, որի զույգ որմնասյուները ներքին տարածությունը բաժանում են երկու մասի՝ մուտքի և կենտրոնական:

Ավագ խորանը կառուցված է մեկընդմեջ մուգ և բաց գույնի քարերով և լուսավորվում է արևելքից: Խորանի երկու կողմերում կան որմնախորշեր, որոնցից հարավայինն ունի ներս ընկած գաղտնարան: 1794 թ. հավելած խաչկալով[2] խորանը բաժանվում է երկու մասի. արտաքին բաժինն ունի 4,50 x 1,20 մ չափերի ուղղանկյուն հատակագիծ՝ ծածկված 7 մ բարձրությամբ կիսաշրջան թաղով, իսկ կիսաշրջան հատակագծով բուն խորանը ծածկված է 3 միակենտրոն փոխհատվող թաղերով, որոնք փոխարինում են գմբեթարդին: Խաչկալը երկու կողմից կիսաշրջան կամարներով միացած է պատերին, որոնք ծառայում են որպես մուտքեր: Կենտրոնական սլաքաձև երկրաչափական զարդե-




**Թադեոս առաքյալի վանք. տեղանքի հանույթը (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1968 թ.)**

---

1 “Documenti di Architettura Armena”, vol. 4, S. Thadei’ vank, Milano, 1971; “Documenti di Architettura Armena”, vol. 20, “Sorhul”, Milano, 1989, p. 102-107:

2 Մինչև ուշ միջնադար հայ եկեղեցու խորաններն ունեցել են միայն քարե պարզ սեղաններ: Խաչկալներն ավելացել են հետագայում՝ ԺԷ դարից հետո, ինչը վերագրվում է ռուսական եկեղեցու ազդեցությանը:




**Թադեոս առաքյալի վանք. համալիրի գլխավոր հատակագիծը (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1968 թ.)**

րով մշակված կամարն ավելի լայն ու բարձր է, իսկ վերին երկու անկյունները զարդաքանդակված են հրեշտակների պատկերներով: Խաչկալի սյուների քիվերն ունեն մանր շթաքարե (ստալակտիտ) զարդաքանդակ, իսկ մուտքերից վեր՝ շրջանակների մեջ, կան արձանագրություններ: Խաչկալի և կողային կամարների ողջ ճակատը երիզված է շթաքարե զարդագոտիով:

Խաչերով հարդարված քարե սեղանը նստած է 0,93 մ բարձրությամբ քառակուսի սյան վրա:

Դասից չորս աստիճանով բարձր բեմի ճակատը զարդարված է 13 կամարներով: Կենտրոնական,





**Թադեոս առաքյալի վանք. կենտրոնական կառույցների տեսքը հյուսիս-արևելքից և հարավից**



**Թադեոս առաքյալի վանք. հատված հին եկեղեցու հարավային ճակատից**

համեմատաբար ավելի լայն կամարում ներառված է խաչաքանդակ, որը խորհրդանշում է Քրիստոսին, իսկ 12 կամարները՝ առաքյալներին:

Բեմի հատակին՝ սեղանի սյանն արևելքից կից, կա մի ուղղանկյուն փոսիկ:

Խորանի երկու կողմերում ավանդատներն են:

Հարավային քառածածկ ավանդատունը հատակագծում ուղղանկյուն է: Արևելյան պատին բացված է նեղ լուսամուտ, իսկ նույն պատի երկարությամբ անարձանագիր մի տապանաքար է, որի ներքո, ըստ ավանդության, ամփոփված է Թադեոս առաքյալի մասունքը: Այս ավանդատունն ունի երեք որմնախորշ, որոնցից արևելյանը գտնվում է լուսամուտից ցած և գործածվում է որպես մոմավառության վայր: Հարավային պատի որմնախորշն ունի ներս ընկած գաղտնարան: Հյուսիսային պատի որմնախորշում (ծածկի քարը հավանաբար 1918 թ. դեպքերի ժամանակ ջարդել են) կա բացվածք: Այս բացվածքը և դեպի վեր բարձրացող և որպես աստիճան ծառայող պատերից դուրս ընկած քարերը տանում են ավանդատան վրա կառուցված նեղ ու երկար, ցածր ու կիսաշրջան թաղով գաղտնարան, որը լուսավորվում է արևելյան պատի որմնախորշի փոքր անցքերով (դրանք դրսից նկատելի չեն):

Ի տարբերություն հարավային ավանդատան՝ հյուսիսայինն արևելքում ավարտվում է կիսաշրջան փոքր խորանով: Լուսամուտը բացված է հյուսիսային պատի մեջ:

Ավանդատների մուտքերի անկյուններից սկիզբ առնող պարզ զարդագոտին, շրջանցելով մուտքերը, թեքվում է դեպի խորան նայող պատեր և խորանի անկյուններից բարձրանում մինչև կամարի հիմ-



**Թադեոս առաքյալի վանք. հին եկեղեցու տեսքը հարավ-արևելքից**

քը: Մուտքերի բարավորները զարդարված են վեցաթև մեկական աստղով, իսկ զարդագոտու թեքված մասերը՝ եռատերև քանդակներով:

Լուսամուտներից վեր՝ մինչև քիվատակ ընկած թմբուկի ազատ գոտու կենտրոնով շուրջբոլորը ձգվում է զարդագոտին, որն առանցքային ճակատներում, շնորհիվ ուղղահայաց հատող համանման ավելի կարճ զարդագոտիների, ձևավորում է ստորին մասում եռատերևով ավարտվող խաչային հորինվածք:

Որմնասյուները և խորանի անկյունններն իրար կապող կամարների վրա հենված է ներքուստ գլանաձև, արտաքուստ 12 նիստանի կիսաշրջան գմբեթարդով և սրածայր վեղարով ավարտվող գմբեթը:

Կիսակլոր հորիզոնական գոտին եկեղեցու հյուսիսային և հարավային պատերն ըստ բարձրության բաժանում է երկու մասի: Զարդագոտուց վեր բացված են մեկական լուսամուտներ: Հյուսիսային պատին՝ սվաղի պահպանված մասերի վրա, նշմարվում են կապույտ և կանաչ գույնի ծաղկանկարների հետքեր: Նույն պատի կենտրոնում 1319 թ. երկրաշարժից հետո եկեղեցու վերակառուցման մասին պատմող որմի քառաշարք քարերի վրա 15 տողով փորագրված արձանագրությունն է *(տե՛ս սույն աշխ., էջ 157-159, արձ. Ա):*

*Սալահատակ.* սրահը սալահատակված է երկու կենտրոններից սկիզբ առնող մուգ և բաց գույնի միմյանց հաջորդող քառակուսի շարքերով: Նման շարվածք կա նաև մուտքի երկու որմնասյուների միջև:

*Հին եկեղեցու արտաքին ճակատները.* մուգ քարից շարված երկաստիճան գետնախարսխով եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն է, որի արևմտյան



**Թադեոս առաքյալի վանք. հատվածներ հին եկեղեցուց**



**Թադեոս առաքյալի վանք. հատվածներ հին եկեղեցուց**

հատվածն ու կից ժամատունը 1810 թ. քանդելով՝ կցել են Նոր՝ ճերմակ քարից կառուցված եկեղեցին:

Պահպանվել են հին շենքի արևելյան ճակատն ամբողջությամբ և հյուսիսային, հարավային ճակատների մեծ մասը:

Պատի շարվածքի առաջին, մասամբ երկրորդ շարքի քարերը երեք ճակատներում էլ ավելի մեծ են, քան մնացած շարքերը: Առաջին շարքում պահպանված որմնասյուների ստորին մասերը (հարավային ճակատում՝ 3, հյուսիսայինում՝ 2) և հարավարևելյան անկյան զարդանախշի հիմքը ենթադրել են տալիս, որ պատի ներքևի այս բաժինը պատկանում է եկեղեցու վաղ կամ 1319 թ. երկրաշարժից առաջ եղած շրջանին:

Կիսակլոր հորիզոնական գոտին 3,60 մ բարձրությամբ եզրագծում է եկեղեցին և եկեղեցու երեք ճակատները երկու մասի բաժանում: Հորիզոնական գոտուց ցած պատն ունի պարզ մշակում, իսկ գոտուց վեր հարդարված է զարդանախշերով: Գոտու շարունակությունը կազմող գծի վրա նույն կե-



Թադեոս առաքյալի վանք. հին եկեղեցու տեսքը արևելքից



**Թադեոս առաքյալի վանք. հատվածներ հին եկեղեցու տեղում գոյություն ունեցած ավելի հին եկեղեցու որմնասյուների որմնախարիսխներից**

տում հատվում են տանիքի և գմբեթի վեղարի թեքությունների գծերը:

Հյուսիսային, հարավային ճակատների լուսամուտները ներգծված են սլաքաձև զարդանախշ կամարների մեջ առնված զրեթե միանման մեկական խաչքանդակներով (միակ տարբերությունն այն է, որ հարավային ճակատում խաչքանդակի հորիզոնական թևերի վրա քանդակված են մեկական աղավնիներ), որոնց ստորին թևերն ավարտվում են մուգ-բաց քարերով հարդարված քառակուսի շրջանակներով:

Արևելյան ճակատի լուսամուտը ներգծված է եռատերև կամարով ներփակված խաչքանդակով, որի ստորին թևն ավարտվում է քառակուսի շրջանակով: Շրջանակը զարդարված է մուգ-բաց գույնի վեցաթև աստղաձև շարվածքով:

Պատերն ավարտվում են քիվերով: Երեք ճակատների առանցքներում, ճակտոնների ծայրերին զետեղված են գմբեթաձև քարե մանրակերտերը:

*Գմբեթ.* ունի 12 նիստանի թմբուկ, որի արևելյան երկու անկյուններում տումբաներ են, իսկ արևմտյան երկու տումբաները քանդել են նոր եկեղեցին կցելու ժամանակ: Թմբուկն ունի վերնամասում կամարաձև ավարտվող և դեպի ներս լայնացող առանցքային 4 լուսամուտ և աչքի է ընկնում հորիզոնական մուգ









**Թադեոս առաքյալի վանք. հատվածներ հին եկեղեցու ներքին ծավալներից**





**Թադեոս առաքյալի վանք. հին եկեղեցու թմբուկը ներքուստ**




**Թադեոս առաքյալի վանք. եկեղեցու, գավիթ-եկեղեցու և զանգակատան հարավային և հյուսիսային ճակատները (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Ղախնազարյանի, 1968 թ.)**

(բազալտ) և բաց (դեղնավուն ֆելզիտ) 6-ական շարքերով:

**Ճերմակ կամ Նոր եկեղեցի.** ուղղանկյուն, խաչաձև կենտրոնագմբեթ կառույց է, որն արևելքից կցվել է հին եկեղեցուն: Կառուցված է բաց, գրեթե սպիտակավուն քարով:

Եկեղեցու հատակագիծն անմիջապես աչքի է ընկնում Էջմիածնի Մայր տաճարի հետ ունեցած նմանությամբ, սակայն այն տարբերությամբ, որ Էջմիածնում արևելյան աբսիդը խորանն է, իսկ այստեղ աբսիդի փոխարեն հին և նոր եկեղեցիների միացման կամարն է: Էջմիածնի Մայր տաճարը







**Թադեոս առաքյալի վանք. կենտրոնական կառույցների արևմտյան և արևելյան ճակատները (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1968 թ.)**



**Թադեոս առաքյալի վանք. Ճերմակ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից**



**Թադեոս առաքյալի վանք. հատված Ճերմակ եկեղեցու հյուսիսարևմտյան կողմից**




**Թադեոս առաքյալի վանք. վանական համալիրի երկայնական կտրվածքը դեպի հյուսիս և արևելք, գլխավոր կառույցների կտրվածքը դեպի հյուսիս (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1968 թ.)**

հատակագծում գրեթե քառակուսի է՝ արտաքուստ շեշտված չորս աբսիդներով, իսկ այստեղ ուղղանկյուն է՝ արևելք-արևմուտք ձգվածությամբ (եկեղեցու լայնությունն է 13,10 մ, երկարությունը՝ 17,10 մ, կենտրոնական նավի լայնությունը՝ 5,40 մ, մյուս երկուսինը՝ 4,38 մ, խաչաձև սյուների միջուկը՝ 1,05 մ, թևերի հատվածը՝ 0,20 մ, հյուսիսային ու հարավային աբսիդների խորությունը՝ 4,72 մ, լայնությունը՝ 3,70 մ, դեպի հին եկեղեցու բացվածքը՝ 4,64 մ):

Երկուական որմնախորշեր կան երեք աբսիդներում: Հարավային պատին՝ մկրտության ավազանի դիմաց, կա ևս մի կիսակլոր կամարով որմնախորշ (գետնից բարձրությունը՝ 0,85 մ, երկարությունը՝ 0,75 մ, լայնությունը՝ 0,28 մ, բարձրությունը՝ 1,30 մ):

Մկրտության ավազանը գտնվում է հյուսիսային պատի արևելյան մասում՝ գետնից 0,90 մ բարձրության վրա (արտաքին չափերն են՝ 1,05 մ երկարություն, 0,55 մ լայնություն, 0,30 մ բարձրություն, ներքին չափերն են՝ 0,60 մ երկարություն, 0,30 մ լայնություն, 0,14 մ խորություն): Ավազանի խորշն ավարտվում է չորս շարք շքաքարե գոտիներով՝ մշակված սլացիկ կամարով: Ավազանին և խորշի




**Թադեոս առաքյալի վանք. գավիթ-եկեղեցու և եկեղեցու կտրվածքները դեպի արևելք և դեպի արևմուտք (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Ղախնազարյանի, 1968 թ.)**

աջ կողմում երկու արձանագրություն կա *(էջ 161, արձ. ԺԶ; էջ 162, արձ. ԻԱ):*

Չորս սյուների արևելյան և արևմտյան ճակատներին՝ գետնից մոտ 2,50 մ բարձր, պահպանվել են շինարարական վիմագրեր: Արձանագրություններ կան հյուսիսարևմտյան որմնասյան ճակատին *(տե՛ս սույն աշխ., էջ 160, արձ. Թ, ԺԴ; էջ 161, արձ. ԺԷ-ԺԹ):*

Երեք ճակատներին երեքական մեծ և արևելքից՝ հին եկեղեցու կողքերին ևս երկու նեղ լուսամուտներ կան: Այդ լուսամուտներից երեքը բացված են աբսիդներից վեր՝ տանիքի մակարդակով, որոնցից արևմտյանը դրսից տեսանելի է, իսկ մյուս երկուսը տանիքի հենապատի հետևում են:

Եկեղեցու ներսի պատերն ու սյուներն առանց խարսխի բարձրանում են (4,75 մ) մինչև քիվ, որտեղից սկսվում են կամարները (նույն նիշի վրա է գտնվում հին եկեղեցու հյուսիսային ու հարավային ներքին պատերի կիսակլոր հորիզոնական գոտին):

Սյուների առաջին քիվից 0,80 մ ավելի բարձր երկրորդ քիվն է, որտեղից սկսվում են 9,25 մ բարձ-

րությանբ կիսաշրջան կամարները: Նրանք, իրար միանալով, կազմում են գմբեթատակ քառակուսին: Կիսաշրջան կամարների վրա նստում են ավելի բարձր սլաքաձև կամարները, որոնց անկյուններում առագաստներն են: Հնգաստիճան քիվից վեր բարձրանում է ներքուստ կլոր, արտաքուստ 12-նիստանի թմբուկն իր 12 լուսամուտներով: Թմբուկն ավարտվում է եռաստիճան քիվով սկսվող գմբեթով, որը պսակված է սրածայր վեղարով:

*Հատակ.* 1950-ական թվականներին եկեղեցու հատակը ցեմենտապատվում է՝ ծածկելով սյուների կից եղած քարերի մեծ մասը: 1980-ական թվականներին հատակը պատվում է բաց մոխրագույն տրավերտին քարով[3]: Այս քայլը ոչ միայն անհրաժեշտ չէր, այլ նույնիսկ սխալ էր, քանի որ նոր քարաշարը ծածկեց նաև արձանագրություններից մի քանիսը:

*Ճերմակ եկեղեցու արտաքին ճակատները.* Նոր եկեղեցին բաց երանգի քարով առանձնանում է




**Թադեոս առաքյալի վանք. գավիթ-եկեղեցու և եկեղեցու կտրվածքները դեպի արևելք և դեպի արևմուտք (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Ղախնազարյանի, 1968 թ.)**



**Թադեոս առաքյալի վանք. Ճերմակ եկեղեցու արևելյան ճակատը հարավային անկյան մոտ**

մուգ մոխրագույն քարով կառուցված հին եկեղեցուց: Նոր եկեղեցու արտաքին կառուցվածքը հուշում է կառույցի ներքին ծավալահատակագծային հորինվածքը, մինչդեռ հին եկեղեցու՝ ներսից խաչաձև հորինվածքն արտաքինից ամփոփված է ուղղանկյան մեջ: Եկեղեցու ճակատներն ամբողջությամբ զարդարված են որմնաքանդակներով, իսկ հին եկեղեցու պատերի զարդաքանդակներն ավելի զուսպ են[4]:

Նոր եկեղեցու արտաքին ճակատները շրջանցող քիվերը պատերն ըստ բարձրության բաժանում են չորս հորիզոնական հատվածների, որոնք դասակարգված են ըստ իրենց բովանդակության:

Մուգ բազալտե եռաստիճան խարսխի վրա բարձրացող պատերի առաջին հատվածն անզարդ է: Որոշ քարերի փորագրված են միայն վարպետների անունների սկզբնատառերը՝ «Ա», «Բ», «Գ», «Դ»: Այս հատվածում են բացված եկեղեցու երեք մուտքերը:

Երկրորդ հատվածում պատը մշակված է որմնասյունակամարաշարով, որն ընդհատվում է մուտքերի վերևում: Ավելի վեր ճակատները մեջտեղում երիզում է երկշերտ հորիզոնական զարդագոտին:

3 1969 թ. ամռանը Թեհրանի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները, դասախոս պրն. Ֆալամաքիի ղեկավարությամբ, «ուսումնասիրության» պատրվակով և «գյուտ անելու» տենչով, առանց համարակալելու քարուքանդ են անում եկեղեցու հատակի և խորանի քարերն ու մի քանի անմիտ փորփրումից հետո հեռանում: Բարեբախտաբար, 1968 թ. վանքում եղած ժամանակ չափագրել էի հատակի քարերը, այնպես որ ավերածությունից երկու տարի հետո Սադրեդին Շիրդել վարպետը մի կերպ կարողանում է եղած քարերով նախկինի նման սալահատակել եկեղեցին...

4 Քանդակների վերաբերյալ ֆրանսիացի հետազոտողը նշել է, որ այսքան շքեղ հարդարանքը քիչ է ընդունված հայերի մեջ և շատ լավ արտացոլում է հիմնողի՝ Սիմեոնի փառասիրությունն ու իշխանատենչությունը: Նա ծնունդով Վանա լճի ափերից էր և պետք է որ նախանձեր Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու շքեղությանը: Որոշ նշաններից (բուսազարդերով գոտին, ռազմիկ սրբերի պատկերները) կարելի է հասկանալ, որ նա ցանկացել է ընդօրինակել այն: Բացի իր երևելի ոգեշնչողից՝ Գագիկ թագավորից, նա օգտվում էր արվեստի բազմաթիվ մարդկանց օգնությունից, որտեղից էլ գալիս է գործի հավաքական, կոսմոպոլիտ ոճը, որտեղ միավորված են աշխարհիկ թեմաներ, գյուղական տեսարաններ կամ այնպիսիք, որոնք վերցված են իրանական և քրդական լեգենդներից, կրոնական թեմաներ ոչ միայն քրիստոնեական, ինչպես՝ մարգարեների, ռազմիկ սրբերի, Իսրայելի թագավորների պատկերները, այլ նույնիսկ մահմեդական, ինչպես՝ Ալ-Բուրակը՝ մարգարեի գրաստը: Դեկորատիվ քանդակները, ծաղիկները, կիպարիսները կամ իրանական ժողովրդական բանահյուսությունից վերցված տեսարանները լավ որակի գործեր են, և հավանական է, որ դրանց կատարողները իրանցիներ են եղել՝ կրթված զենդական փայլուն դպրոցում, որը ծաղկում էր Շիրազի շրջանում ԺԸ դ. վերջին: Ի հակադրություն սրանց՝ քրիստոնեական հարթաքանդակները բավականին միջակ են կատարված, և պատկերագրության մեջ արտացոլված է ենթակարգություն՝ արևմտյան ազդեցությամբ, սակայն այս վերջին կետը չի վերաբերում Թադեոս առաքյալի վանքի քանդակագործներին: Ի դեպ, ԺԷ և ԺԸ դդ. ամբողջ հայկական արվեստն էր ենթարկվում այդ ձևին (**Thierry M.**, նշվ. աշխ., էջ 495):





**Հատված ճերմակ եկեղեցու հարավային կողմից և արևմտյան ճակատից բացված մուտքը**



**Ճերմակ եկեղեցու հարավային աբսիդն արտաքուստ**



**Դրվագներ Ճերմակ եկեղեցու արտաքին հարդարանքից**



**Դրվագներ ճերմակ եկեղեցու արտաքին հարդարանքից**



Հարթաքանդակներ Ճերմակ եկեղեցու որմերին

Սյունակամարաշարի զույգ սյուները հենվում են բարձակավոր (կոնսոլային) խարիսխների վրա, իսկ կամարների արանքում վեցթևյան սերովբեների քանդակներ են: Եկեղեցու չորս անկյուններում սյունաշարի բարձրությամբ ձգվում են ճակատները եզրերում ավարտվող առանձին սյուներ: Նրանց կից՝ վերևում, վեցթևյան սերովբեների փոխարեն դեմքով դեպի ճակատների անկյունները նայող մեկական հրեշտակներ են, իսկ մուտքերի երկու կողմերում կանգնած են պահապան հրեշտակներ: Կամարաշարի մեջ ներգծված են կամարաձև շրջանակներով երիզված ոչ խորը խորշեր, որոնք մշակված են տարբեր քանդակներով: Հյուսիսային և հարավային արտաքուստ հնգանիստ աբսիդների



**Հարթաքանդակներ Ճերմակ եկեղեցու որմերին**

կենտրոնական նիստում՝ խորշի մեջ, քանդակված է ծաղկամանից սկիզբ առնող և սիմետրիկ ճյուղավորվող ծաղիկ-տերևներով զարդարված ծառ, որն ավարտվում է քառաթերթ մայր ծաղիկով: Այն ամփոփված է սրածայր կամարով ավարտվող, բուսազարդերով մշակված շրջանակով: Իսկ կից երկու նիստերում քանդակված է բույսով փաթաթված սլացիկ ծառ՝ առնված սլաքաձև բուսազարդ շրջանակի մեջ: Այս երեք քանդակները, որոնք խորհրդանշում են կենաց ծառը, հայ ճարտարապետության մեջ զարգացում ապրելով, հասել են ԺԹ դարաշեմին և Իրանի ղաջար մշակույթի ազդեցությամբ այս ձևն ու դրսևորումը ստացել: Աբսիդի արևմտյան նիստի խորշի կենտրոնում վարդյակ է,



**Պատկերաքանդակներ ճերմակ եկեղեցու որմերի արտաքին հարդարանքում**

որից վեր երկգլխանի արծվի քանդակն է, իսկ արևելյան նիստում արծվի փոխարեն հովազի և ձիու բարձրաքանդակներն են: Արևմտյան աբսիդի եզրային նիստերում՝ վարդյակից վեր, մեջքից ծագող արեգակով նստած առյուծն է՝ «Շիրոխորշիդը», որը դարեր շարունակ եղել է Իրանի պետական խորհրդանիշը:

Եկեղեցու հյուսիսարևելյան և հարավարևելյան ճակատների խորշերում ագուցված է երկու խաչքար, որոնցից մեկը ներփակված է երկրաչափական, մյուսը՝ բուսական զարդագոտիով: Երկուսն էլ մշակված են կենաց ծառից սկիզբ առնող խաչերով: Խաչերից մեկի չորս անկյուններում վարդյակներ են, իսկ մյուսում՝ չորս ավետարանիչների քանդակներ: Խաչքարերից ցած փորագրված են արձանագրություններ: Այսպիսի մեկական խաչքարեր կան արևմտյան ճակատի եզրային խորշերում:

Հարավային և հյուսիսային մուտքերի խորշերի մեջ մի կողմում հեծյալ Սբ. Սարգիսն է՝ ձիու գավակին նստած իր որդու՝ Մարտիրոսի հետ, իսկ մյուս կողմում վիշապին նիզակահարող հեծյալ Սբ. Գևորգն է: Այս քանդակներից ցած կան արձանագրություններ:

Կամարաշարի վերևում զարդագոտու ներքևի շերտը մշակված է բուսազարդերով, իսկ վերևինը՝ բուսազարդերով միացված աստվածաշնչյան և աշխարհիկ պատկերաքանդակներով: Այդ շերտում հյուսիսային և հարավային աբսիդների կենտրոնում մարդ-արարչի դեմքով արևն է քանդակված, որը նախաքրիստոնեական շրջանից փոխանցված ու դարեր պահպանված կյանքի խորհրդանիշն է եղել: Արևին հաջորդում են հետևյալ տեսարանները՝ վիշապի հեքիաթային կերպարանքներով կենդանին՝ բերանի մեջ եղջերու, մի մեծ քարի առջև մուրճը ձեռքին ծնկաչոք մարդ, մի զինվոր, որ մի ձեռքով նիզակը, մյուս ձեռքով թամբած ձիու սանձն է բռնել, մի սիրամարգ, իսկ մյուս կողմում հովազն է՝ որսը հոշոտելիս, մի մարդ՝ ձեռքը մեկնած գահին բազմած իշխանավորին:

Աբսիդից հարավ և հյուսիս ընկած զարդագոտիներում պատկերված են՝ գետնին նստած ուղտ, գրկախառնված երկու մերկ անձնավորությունների քանդակներ (որոնք հավանաբար Ադամի ու Եվայի պատկերներն են), հրացանը երկու եղջերուներին ուղղած որսորդ, եկեղեցի, կով ու հորթ, առասպելական թևավոր առյուծ, որին եկեղեցու անկյունադարձին հաջորդում են երկու սրամարտող զինվորներ (կեռ թուրն ու կլոր վահանը ենթադրել են տալիս, որ այստեղ ներկայացված է պարսիկ առասպելաբանության հեղինակ Ֆիրդուսու «Շահնամե»-ի երկու հերոսների՝ Ռուստամի և Զոհրաբի մենամարտի դրվագը):

Եկեղեցու արևելյան պատին քանդակված են երկու խոյեր, իսկ արևմտյան պատին՝ աստվածաշնչյան Հովհանին կուլ տվող կետ-ձուկ:

Զարդագոտին շարունակվում է դեպի արևմուտք, ուր պատկերված են ետևի ոտքերին կանգնած արջ ու նրա առջև ընկած մարդ, ապա ալիքների վրա տատանվող առագաստանավ: Եկեղեցու այս հատվածում քանդակները մասամբ հողմահարված ու վնասված են, որի հետևանքով որոշ պատկերներ անհասկանալի են դարձել:

Հորիզոնական զարդագոտուց վեր՝ երրորդ հատվածում, հին եկեղեցուց մինչ զանգակատուն



**Դրվագներ Ճերմակ եկեղեցու հարթաքանդակ գոտիներից**



**Դրվագներ ճերմակ եկեղեցու հարթաքանդակ գոտիներից**



**Դրվագներ Ճերմակ եկեղեցու հարթաքանդակ գոտիներից**





**Ճերմակ եկեղեցու հարավային և հյուսիսային մուտքերը**

սյունաշարը պատը բաժանում է 16 մասի, որից 13-ում սրբերի քանդակներն են, իսկ 3-ում՝ լուսամուտները: Զարդասյուների խոյակներից ներքև քանդակված են աջ ու ձախ թեքված կեռ կտուցներով արծվի գլուխներ, իսկ ներքևում՝ սյուների միջև, մարդու կամ կենդանիների քանդակներ են:

Հյուսիսային ճակատի արևելյան առաջին քանդակը Դավիթ թագավորինն է՝ թագը գլխին և քնարը ձեռքին: Եկեղեցու հարավային աբսիդի կենտրոնում Գրիգոր Լուսավորչի քանդակն է, իսկ հյուսիսայինում՝ Մարիամ Աստվածածինը: Արևելյան ճակատի հյուսիսում եկեղեցու շինարար Զաքարիա Ծործորեցու պատկերն է՝ կառույցի մանրակերտը ձեռքին, իսկ հարավում՝ Հիսուս Քրիստոսի պատկերը՝ ոտքերն օդում, գառնուկը գրկին և դրոշը ձեռքին: Եղած 28 քանդակներից միայն Հիսուս Քրիստոսն ու Մարիամ Աստվածածինն են լուսապսակով ներկայացված: Մյուս քանդակները հավանաբար Հին Կտակարանի մարգարեներն ու Նոր Կտակարանի առաքյալներն են:

Չորրորդ և վերջին գոտին ավարտվում է պատի քիվով: Առաջին գոտու նման այն ևս հարդարանք չունի, բացառությամբ եկեղեցու արևմուտքում՝ երկու սրբերի քանդակների և հարավում ու հյուսիսում՝ երկու տեղ մուգ-բաց քարերի համադրությամբ խաչաձև զարդերի:

*Մուտքեր.* ունի երեք մուտք: Գլխավոր մուտքը արևմուտքից է, իսկ մյուս երկուսը բացված են հյուսիսից և հարավից: Բոլոր մուտքերն էլ երիզվում են բուսազարդ շրջանակով:

*Գլխավոր մուտք.* շեշտված է բուսական զարդերով հարդարված կիսաշրջան և սլաքաձև կամարներով, որոնց միջև նույնպես բուսազարդեր են: Մուտքի բարավորին կա երկու արձանագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 168, արձ. ԿԶ; էջ 169, արձ. ԿԹ):* Կիսաշրջան կամարի հիմքում լուսնի և արևի պատկերաքանդակներն են:

*Հարավային մուտք.* բացված է բուսազարդ կամարով պսակված խորշի մեջ: Կամարը վերևից ուղղանկյուն շրջանակի մեջ է առնված, որի վերին անկյուններում երկթևանի, կենտրոնում՝ վեցթևյան հրեշտակներ են: Մուտքի բարավորին կա արձանագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 167, արձ. ԾԵ),* որից վեր հրեշտակի քանդակն է՝ ձախ ձեռքին կշեռք բռնած: Կշեռքի նժարներից մեկում քանդակված են երկու անձանց գլուխներ:

*Հյուսիսային մուտք.* ընդհանուր առմամբ նման է հարավային մուտքին, միայն այն տարբերությամբ, որ բարավորին քանդակված է գետնին ընկած սատանայի գլխին նիզակն ուղղած Գաբրիել հրեշտակապետը:

*Տանիք.* շուրջ երկու դար եկեղեցու տանիքը մնացել է անավարտ (տանիքում քարերը պետք է երկթեք ծածկ ունենային), և ժամանակավոր լուծումները չեն կարողացել ապահովել ջրահեռացումը. տանիքից պատերի մեջ ներծծվող ջուրը վտանգում է շենքի կայունությունը:



**Ճերմակ եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքի դուռը**



**Հատվածներ ճերմակ եկեղեցու ներքին ծավալներից**

*Գմբեթ*. եկեղեցու չորս սյուներին նստած առագաստները դրսից ստեղծում են բարձր քառանկյունիներ (տումբաներ), որոնք նույնպես ծածկ չունեն: Դրանց վրա բարձրանում է 12-նիստանի թմբուկը, որն ունի 12 լուսամուտներ:

Թմբուկի արևելյան և արևմտյան պատերին, լուսամուտից վեր գտնվող ելուստից կախված է քարե օղակ (շինանյութ վեր բարձրացնելու այս քանդակը հավանաբար ավելի շուտ վարպետի թողած հիշատակն է, քան ունեցել է գործնական նշանակություն):







**Ճերմակ եկեղեցու թմբուկը ներքուստ, առագաստը և հատված եկեղեցու վեղարի ծածկասալերից**

*Զանգակատուն.* եկեղեցու արևմտյան աբսիդին կից է ճերմակ կրաքարից կառուցված չորս սյունանի անավարտ զանգակատունը, որի արևելյան երկու սյուները կից են աբսիդին: Սյուները դրսից և ներսից զարդարված են քանդակազարդ սյունակամարաշարով:

Սյունակամարաշարից ներքև՝ հյուսիսային ու հարավային ճակատներում, ընդարձակ բուսաքանդակներ են, որոնց նմանօրինակները՝ իրենց կից կենաց ծառի քանդակով, ներքին պատերին էլ կան: Արևմտյան ճակատում՝ սյունակամարաշարից ներքև, երեք քանդակներ են՝ կենտրոնում՝ թագը գլխին, սրով մարտնչող իշխանավորը, որին կուլ է տալիս վիշապը: Կողքերին՝ շրջանակներում, կենաց ծառի քանդակներն են:

Եկեղեցու գլխավոր մուտքը պաշտպանող չորս առյուծները բարձրաքանդակված են զանգակատան սյուների ներսի արևելյան և արևմտյան ճակատներում:

Սյունակամարաշարի մեջ՝ հարավային և հյուսիսային ճակատներում, քանդակված են գահին բազմած թագադիր իշխանավորներ, միայն այն տարբերությամբ, որ հյուսիսային ճակատում գահակալներից երկուսը հոգևորականի վեղար ունեն: Այս քանդակներից վեր՝ կամարների տակ, ագուցված են խաչքարեր: Երկու ճակատներում էլ կան արձանագրության հետքեր, որոնք անընթեռնելի են դարձել:

Սյուների արևմտյան ճակատին՝ կամարների մեջ, մեկական խաչքարեր են:

*Զանգ.* հին լուսանկարներում երևում է 1886 թ. Ռուսաստանի Վյատկայի նահանգում ձուլված եկեղեցու մեծ զանգը *(տե՛ս սույն աշխ., էջ 108, արձ. ԽԴ)*, որն անհետացել է 1970 թ. ամռանը[5]:











**Զանգակատուն. տեսքն արևմուտքից, հարթաքանդակներ և զանգը**

*Եկեղեցական բակ.* եկեղեցին գտնվում է ուղղանկյուն բակի կենտրոնում, որի շուրջ պարսպի երկայնքով ձգվում է իրար կից սենյակների շարքը:

Հյուսիսային պարսպի արևմտյան եզրին՝ ուղղանկյուն խցին կից, դեպի արևելք կառուցված է իրար մեջ բացվող երեքական խցերի չորս խումբ: Առաջին խմբի խցերն ավելի մեծ են, քան մյուս երեք խմբերինը, որոնք թաղակապ են, իսկ նրանց մուտքերը, ի տարբերություն առաջինի, կամարակապ են: Խցերն ունեն փոքրիկ ուղղանկյուն լուսամուտներ:

5 Օգտվելով վանքի մենավոր դիրքից՝ 1970 թ. անհայտ չարագործները տանում են եկեղեցու երկու զանգերից մեկը. վերջինս թեև չուներ գեղարվեստական որևէ արժեք, սակայն ուշագրավ էր որպես վանքի պատմության մի պատառիկ: Գողության փաստի մասին ահազանգում են և՛ իրանական թերթերը, և՛ հայկական «Ալիք» օրաթերթը (ԴԱՀՊ, h. Բ, էջ 205):



**Զանգակատուն. տեսքը հարավից և առյուծների բարձրաքանդակներ**




**Թադեոս առաքյալի վանք. շրջապարսպի տեսքն արևելքից, նույն ճակատի չափագրությունը, պարսպի հարավարևելյան և հյուսիսարևելյան անկյուններում գտնվող բրգաշտարակները**







**Թադեոս առաքյալի վանք. արևմտյան կողմով ձգվող շրջապարսպի կիսաշտարակներից մեկը և հարավարևելյան բրգաշտարակը 1968 և 2009 թթ.**

Պարսպի՝ երկու աշտարակներով հզորացված հյուսիսարևելյան անկյունը ներս է ընկած, որին արևմուտքից կից են հյուսիս-հարավ ուղղությամբ իրար մեջ բացվող չորս խուց (հավանաբար վանահոր կացարանն է): Բաց թաղակապ նախամուտքը տանում է ուղղանկյուն առաջին խուցը, որի երկու մուտքերից հարավայինը բացվում է դեպի երկու խցերը, իսկ հյուսիսայինը՝ աշտարակի մեջ երկայնքով տեղավորված թեք խուցը: Նախամուտքի հարավային արտաքին պատի ստորին անկյունից կամարակապ մուտքի աստիճաններն իջնում են երեք ուղղանկյուն խուց և աշտարակի մեջ գաղտնարան ունեցող նկուղային հարկ: Եվս մի գաղտնարան էլ կա այս հարկից ներքև՝ աշտարակի մեջ:

Եկեղեցուց արևելք կան դեպի բակ բացվող մուտքերով ուղղանկյուն, թաղակապ, ավելի ցածր










**Թադեոս առաքյալի վանք. շրջապարսպի արևմտյան հատվածի մուտքին հարող մասը 2009 թ. (լուս.՝ Մարգրիթ Հախնազարյանի), դարպասից վեր ագուցված զույգ խաչքարերը և շրջապարսպի արևմտյան ճակատի չափագրությունը**







**Թադեոս առաքյալի վանք. շրջապարսպի հյուսիսարևելյան և հարավային բրգաշտարակները, բակի արևելյան հատվածը և դրվագներ շրջապարսպի ներքին ծավալներից**




**Թադեոս առաքյալի վանք. շրջապարսպի հարավային ճակատը, հյուսիսային պարսպապատի կենտրոնական հատվածը և արևմտյան պարսպի հյուսիսային հատվածն արտաքին բակի կողմից**

չորս խցեր, որոնց հյուսիսում երկու օժանդակ սենյակներ են, իսկ հարավում՝ պարսպի հարավարևելյան անկյունում, հավանաբար ուշ շրջանի բարձր դահլիճներ, որոնցից մեկն արևելյան շարքում է, մյուսը՝ հարավային: Դահլիճներն ունեն տափակ կամարով պսակված ընդհանուր մուտք, որը բացվում է արևելյան և հարավային շարքերի անկյունից դեպի երկու միջանցքներ: Հարավային՝ ավելի մեծ դահլիճը լուսավորվում է բակին նայող նույնպես տափակ կամարով ավարտվող երեք լուսամուտներով: Երկու դահլիճների ծայրերին կան մեկական, իսկ նկուղային հարկում՝ չորս օժանդակ սենյակներ:

Հարավային շարքում՝ դահլիճից արևմուտք, տեղադրված են ընդհանուր կամարակապ մուտքով և միջանցքով երկու թաղակապ խցեր, որոնցից արևմուտք կան ևս երեքը՝ առանձին մուտքերով:

Հարավային պարսպի արևմտյան մասում եկեղեցական բակի մուտքն է, որի երկու կողմերում երկուական սենյակներ են:

Արևմտյան պատին կից պահպանվել են հյուսիսային կեսի հինգ թաղակապ խցերը, իսկ պատի մեջտեղում երկու բակերը միմյանց կապող մուտքն է:

Եկեղեցական բակի արևմուտքում տնտեսական բակն է, որի հարավարևելյան անկյունն է միայն կառուցապատված: Ի տարբերություն կանոնավոր ուղղանկյուն խցերի՝ տնտեսական մասը շեղումներով է կառուցապատված: Գոմերի և մառանների կենտրոնում երդիկավոր թոնրատունն է, որի անկյունային որմնասյուները միմյանց միացնող չորս կամարներին նստած է կեղծ գմբեթավոր ծածկը: Թոնրատանը կից ճիթհանն է:

**Շրջապարիսպ**. վանքն ունի կանոնավոր կոպտատաշ շարվածքով շրջապարիսպ, որն անկյուն-



**Թադեոս առաքյալի վանք. հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան պարիսպներին կից օժանդակ կառույցների ճակատները բակի կողմից**

ներում հզորացված է կիսաշրջան վեց աշտարակներով: Բոլոր աշտարակներում կան խցեր: Տնտեսական մասի հարավային պարիսպն այժմ քանդված է, որը լրացվել է ուղղանկյուն հատակագծից դուրս եկած պարսպով:

Պարիսպները և աշտարակները կառուցված են բազալտե կոպտատաշ քարով: Ի դեպ, դրանց բարձրությունը միայն արևմուտքում տեղանքի թեքության պատճառով հասնում է 8 մ, իսկ մյուս կողմերում՝ 5 մ:

**Մուտքեր**. բացված են արևմտյան և հարավային պարիսպների կենտրոնում: Հարավային մուտքը տանում է դեպի եկեղեցու բակ և նայում է զանգակատան կամարներին, իսկ արևմտյան մուտքը բացվում է դեպի տնտեսական բակ: Վանքի երկու հատվածներն իրարից բաժանող պարսպապատը կենտրոնում ունի բակերն իրար միացնող դուռ:

Վանքի արևմտյան մուտքը, ի տարբերություն հարավային պարզ, ուղղանկյուն բացվածքով մուտքի, պսակված է սլաքաձև կամարով, որի երկու կողմերում խաչքարեր են: Բարավորի կենտրոնում ձևավոր շրջանակի մեջ արձանագրություն է, որի երկու կողմերում իրար նայող հովազների քանդակն է:



**Թադեոս առաքյալի վանք. հատվածներ շրջապարսպին ներքուստ կից օժանդակ կառույցներից**









**Թադեոս առաքյալի վանք. օժանդակ կառույցները նորոգության ընթացքում**








**Թադեոս առաքյալի վանք. դրվագներ օժանդակ կառույցներից, վանքի ձիթհանը նորոգությունից առաջ և հետո**

# ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Հնավայրի տարածքում պահպանված վիմագրերի ուսումնասիրությամբ մասնագետները սկսել են զբաղվել դեռևս ԺԷ դ.:

Վանքի վիմագրերից առաջինը գրի է առել վանքի առաջնորդ Իսահակ վարդապետ Մակվեցին 1677 թ.[1]:

Այնուհետև գրեթե երկդարյա ընդմիջումից հետո սկսվում է վանքի վիմագրերի ընդօրինակման և հրատարակման գործը: Այդ գործի առաջին նախաձեռնողը Հովհաննես Շահխաթունյանցն է, որը, սակայն, գրի է առնում և հրատարակում ընդամենը մեկ արձանագրություն[2]:

Նշյալ ուղղությամբ մեծ ավանդ ունի Խաչիկ վարդապետ Դադյանը: Դեռևս 1894 թ. նա, Խրիմյան Հայրիկի հանձնարարությամբ լինելով Մակու գավառում, հավաքում է նաև Թադեոս առաքյալի վանքի վիմագիր արձանագրությունները և դրանց մի մասը հրատարակում հոդվածաշարով[3], որը հիմք է դառնում հետագա ուսումնասիրությունների համար: Վիմագրերից շատերը վերջին հարյուրամյակում անհետ կորել են, և Դադյանի վերծանությունները այսօր ձեռք են բերել բնագրի արժեք: Հավաքել է 56 միավոր վիմագիր. հրատարակել է 21-ը, իսկ 34-ը անտիպ է: Ձեռագիրը պահվում է Հայաստանի ազգային դիվանում[4]:

Ի դարասկզբին վանք այցելած Ե. Ֆրանգյանը հրատարակել է 3 արձանագրություն[5]: Այնուհետև մեկ արձանագրություն է վերահրատարակել Կ. Կոստանյանցը[6]:

Հ. Ոսկյանը բավարարվել է սոսկ Խ. Դադյանի՝ 1898 թ. հրատարակած 21 արձանագրության վերահրատարակմամբ[7]:

Մեկական միավոր արձանագրություններ էլ հրատարակել են Հ. Աճեմյանը[8], Է. Հակոբյանը[9], Հ. Ստեփանյանը (Ուխտավոր կեղծանվամբ)[10] և Լ. Խաչիկյանը[11]: Լ. Մինասյանը հրատարակել է 6 արձանագրություն, որոնցից 3-ի առաջին հրատարակիչն է[12]:

Ֆրանսիացի հետազոտող Ժան-Միշել Թիերրին վերահրատարակել է թիվ Ա և ԿՁ վիմագրերը, ինչպես նաև օգտվելով մեր թեզում ներառված վիմագրերից՝ դրանցից մի քանիսը քարգմանաբար է ներկայացրել[13]:

Թադեոս առաքյալի վանքի վիմագրերին վերաբերող մեր հրապարակումը կատարվել է 1973 թ., որտեղ ներկայացված է 35 միավոր արձանագրություն[14]:

Ստորև ներկայացնում ենք 126 միավոր արձանագրություն, որից 63-ը հրատարակվում է առաջին անգամ:

### Հին եկեղեցու ներսում

**Ա** Արձանագրություն. «...գտնւում է հիւսիսային որմի վերայ՝ լուսամուտի տակ, բաղկացած է տասն եւ հինգ տողից՝ խոշոր երկաթագիր, տեղ-տեղ փակագիր, կրճատ պատուագիր: Բռնած տարածութիւնն է 2 արշ. 15 վերշ. x 2 արշ. 8 վերշ., տողերի երկարութիւնը՝ 2 արշ. 13 վերշ., տառեր՝ 5 x 10 սմ».[15] 15 տող.

*Այս տաճար լուսակիր եւ երկնանման առկայացե(ա)լ հաստատ|ագոյն հիմամբք ի վերայ ա(ստուա)ծաբնակ շիրմի ս(ուր)բ առաքելոյս | Թադէոսի որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էառ | ի շարժէ, իսկ ես*

1 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 97:

2 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 350-351:

3 Հոդվածաշարը տե՛ս «Արարատ» ամսագիր, 1895, 1898 (1898 թ. վերահրատարակությունը տե՛ս **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու):

4 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108:

5 **Ֆրանգեան Ե.**, Վեց օր Թադէի վանքում, «Մուրճ», 1903, № 8: Նույնի՝ Ատրպատական, էջ 28-29:

6 Վիմական տարեգիր, կազմեաց **Կ. Կոստանեանց**, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 164:

7 **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 33-37: Տե՛ս նաև նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 458, 460-464:

8 **Աճէմեան Հ.**, նշվ. աշխ., մաս I, էջ 26:

9 **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 14:

10 **Ուխտաւոր** (Հայկ Ստեփանյան), նշվ. հոդվ., «Ալիք», 1954:

11 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», № 11, էջ 138: Տե՛ս նաև **Խաչիկեան Լ.**, Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը, Աշխատութիւններ, հ. Բ, Երեւան, 1999, էջ 55:

12 **Մինասեան Լ.**, Հնադարեան մի կամուրջ Ատրպատականում, «Հանդէս Ամսօրեայ», 1968, էջ 244-246: Տե՛ս նաև **նույնի**՝ Իրանի հայկական վանքերը, էջ 12-13, 16-17:

13 **Thierry M.**, նշվ. աշխ., էջ 486, 494:

14 **Haghnazarian A.**, Das Armenische Thaddдuskloster in der Provinz West Aserbaidjan in Iran (Dissertation, RWTH Aachen, 1973).

15 **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 89 (վերահրատարակությունը տե՛ս **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 45):





*նուաստ սպասաւոր նմին Զաքարիայ եպ(իս-կոպոս) որդի պ/արոն Մանվէլայ կարողու-թ(եամ)բն ա(ստուծո)յ սկիզբն արարի կրկին նորոգ/ութե(ան) առաւել քան զառաջինն ի ժա-մանակի սաստ/իկ նեղութեան եւ հալածանաց քրիստոնէից, որ եւ բազ/ում եկեղեցիք քակտին վ(ա)ս(ն) որ յարձանագրեցաք զ/յիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի / մեծին այն եւ անարիւն զէնման զառինն ա(ստուծո)յ հան-դ/երձ ծնողօք եւ զարմիւք եւ զ(յ)աջորդն մեր աղբ/աւր որդին զտէր Տիրացուն այլեւ զհարա-զա/տ եղբար մեր զՊէտրոս եւ զՍարգիս, որք ըստ կարու/թե(ան) նպաստաւորք եղեն ընչիւք: Կատարումն / թվ(ին) ՉՀԸ (1329):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 11 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. Մատենադարան, ձեռ. 340, վավ. 122բ-123ա: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարա-նի, հ. Բ, էջ 97 (հարկ է նշել, որ այս արձանագրության առաջին ընթերցողն է Իսահակ վարդապետ Մակվեցին, որն էլ 1677 թ. հատվածաբար գրի է առել իր հեղինակությամբ վանքում գրված ժողովածուի հիշատակարանում): **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 350-351: **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 89 (վերահրատ. **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 45): **Ֆրանգեան Ե.**, Վեց օր Թադէի վան-քում, էջ 125: Նույնի՝ Ատրպատական, էջ 28-29: **Կոստանեանց Կ.**, նշվ. աշխ., էջ 164: **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 33-34: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 458: **Անէմեան Հ.**, նշվ. աշխ., մաս I, էջ 26: **Մինասեան Լ.**, Հնադարեան մի կամուրջ Ատրպատակա-նում, էջ 244-246: Նույնի՝ Իրանի հայկական վանքերը, էջ 12: **Haghnazarian A.**, Das armenische Thaddaus kloster in Prov. Nord Azerbeidjan - Iran, s. 197. **Thierry M.**, նշվ. աշխ., էջ 486: **Յակոբեան Է.**, Ս. Թադէի վանքը, էջ 14:

**Բ** Արձանագրություն, հին եկեղեցու հյուսիսարևմտյան այան կամարի ծեփի վրա, 4 տող.

*Ես վանեցի Գասպարի / որդի Ախիճանս / յեկի սուրբ ուխտս / տվի. ՌՄԻԵ (1776) ապրե-լի / ԻԸ (28):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վերա-հրատ. **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովա-ծու, էջ 48: **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 36: Նույնի՝ Վասպու-րական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 461: **Haghnazarian A.**, էջ 199:

**Գ** Արձանագրություն, հին եկեղեցու հյուսիսարևմտյան այան կամարի ծեփի վրա, 4 տող.

*Ես արապկերցի մեղա/պարտ զրիչ Ղուկաս / ղպիրս զրէցի հայ(ոց) / թվին ՌՄԼԴ (1785)-ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վերա-հրատ. **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովա-ծու, էջ 49): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 36: Նույնի՝ Վասպու-րական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 461: **Haghnazarian A.**, էջ 199:

**Դ** Արձանագրություն, հին եկեղեցու հյուսիսարևմտյան այան կամարի ծեփի վրա, 7 տող.

*Ի ուխտ եւ յերկրպա/գութիւն սրբոյ աթոռ/ոյս եկի ես վանեցի / մահտեսի Գասպարի որդի / մահտեսի Փիրիջանս / ի ՌՄԾԵ (1806) / մայիս ԺԵ (15):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպտ. **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 49): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 36: Նույնի՝ Վասպուրա-կան-Վանի վանքերը, Բ մաս, էջ 461-462: **Haghnazarian A.**, էջ 199:

**Ե** Արձանագրություն, հին եկեղեցու հյուսիսարևմտյան այան կամարի ծեփի վրա, 9 տող.

*Ես վանեցի ջրպաշ Թումենց / լուսահոգի մահտեսի Գաս/պարի որդի մահտեսի / Փիրի-ջանս եկի սուրբ / առաքելոյդ Թաքէոսի / զերեզ-մանն համբու/րեցի, ով որ հանդ(ի)/պի զայս գիրս կարդայ / հայր մեղայիւ յիշեսցէ:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիրտ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 48): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 35-36: Նույնի՝ Վասպուրա-կան-Վանի վանքերը, Բ մաս, էջ 461: **Haghnazarian A.**, էջ 199:

Տարընթերցում. Խ. Դաղյանը *մեղայիւ* բառի փոխարեն ընթեր-ցել է *մեղուցիս*:

**Զ** Արձանագրություն, հին եկեղեցու հյուսիսարևմտյան այան կամարի ծեփի վրա, 6 տող.

*Ես վանեցի / ջրպաշ Թու/մենց լուսա/հոգի մահտեսի / Գասպարի որդի / Փիրիջանս եկի:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վերա-հրատ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովա-ծու, էջ 48): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 35: Նույնի՝ Վասպու-րական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 461:

Տարընթերցում. ձեռագրում *Փիրիջանս* անձնանունը տրված է *Փիրիճանս* ձևով:

**Է** Արձանագրություն, սեղանի վեմքարին պատկերված են աթոռին նստած բազմապսակ Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, թագը բռնած մի զույգ հրեշտակներ, թագի վրա՝ Աստծու պատկերը: Աստվածածնի աջ կողմում Քրիստոսի Գեղարդն ու Դաստառակը ձեռքին Թադեոս առաքյալն է, իսկ ձախ կողմում՝ Աստվածամոր պատկերը բռնած Բարդուղիմեոսը: Չափերն են՝ 1,69 x 1,29 մ (2 արշ. 6 վերշ. x 1 արշ. 13 վերշ.): Գրչությունը՝ նոտրգիր, միատող.

*Թուին Փրկչի ՌՊԺԱ (1811) և առաջնորդու-թեամբ Սուրբ ուխտիս տեառն Սիմէոն արքե-պիսկոպոսին տէր Բրդն. Խչ. Տր. Նկչ. Այս սուրբ պատկերս ի վանս սրբոյ առաքելոյն Թադէոսի մաքուր շիրմի կարնեցի Քոսեանց մահտեսի Յարութիւնէ յիշատակ վասն իւր, վասն կե-նակցույն մահտեսի Խանումին և որդւոյն մահ-տեսի Յակոբին, մահտեսի Սիմէոնին և տիրա-ցու Գէորգին և այլ ամենայն կենդան...*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 11 (**Դաղեան Խաչիկ** վար-դապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 89 (վերա-հրատ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովա-ծու, էջ 47): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 35: Նույնի՝ Վասպու-րական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 460: **Haghnazarian A.**, էջ 200:

**Նոր եկեղեցու ներսում**

**Ը** Տապանաքար՝ ագուցված Նոր եկեղեցու հարավարևմտյան սյան պատվանդանին (վիմագրի շարունակությունը «կոտրած է եւ սեան տակ մնացած» (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 14).

*Թվ(ին) ՉԽԷ (1298). այս է հանգիստ...*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 14 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 91 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 53): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 464: **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», էջ 138: Նույնի՝ Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը, Աշխատութիւններ, հ. Բ, էջ 55:

Ծանոթ. Ըստ Լ. Խաչիկյանի՝ Արտազի առաջնորդ Տիրացու Ա-ի տապանաքարն է:

**Թ** Արձանագրություն (չափերն են՝ 37 x 49 սմ՝ 9 x11 վերշ.), Նոր եկեղեցու հարավարևելյան սյան արևմտահայաց երեսին, 8 տող.

*Տ(էր) Ա(ստուա)ծ Յ(իսու)ս Ք(րիստո)ս: | Յիշատակ է սիւնս մէլիք Ներ|սեսի որդի մէլիք Նավասարդ, մէլիք | Մօսէս մէլիք Բալասան, մէլիք Ստե|փան եւ մէլիք Աղաջան. երեքին | եղբարք նորոգեցաք վասն հոգոց | նախնեաց մերոց Արծերու|նի Սենեքերիմ Դաւիթբե|կեան. թվին ՌԿին ՞ (1611՞):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 91 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 51): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463-464: **Haghnazarian A.**, էջ 202:

Ծանոթ. Հավանաբար թվականը պետք է լինի ՌՄԿ (1811):

**Ժ** Տապանաքար (մարմարից, չափերը՝ 111 x 49x 13 սմ՝ 1 արշ. 9 վերշ. x 11 վերշ. x 3 վերշ.)՝ տեղադրված եկեղեցու հարավային խորանում, 7 տող.

*Այս է տապան տեառն մեծի | Զաքարիա վարդապետի | Սուրբ Աթոռոյս սա բա.....րի, | որ յաջորդեց Թ (9) տարի, | էր սա երկրաւ Ղափանեցի, | հայր էր սա անարժանիս | ՌՃՂԲ (1743):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 47): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 35: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 460-461: **Haghnazarian A.**, էջ 198:

**ԺԱ** Տապանաքար (մարմարից, չափերն են՝ 102 x 49 x 9 սմ՝ 1 արշ. 7 վերշ. x 11 վերշ. x 2 վերշ.)՝ Նոր եկեղեցու հարավային խորանում.

*Տապանս սայ է եղկելի | Մինաս անուն վարդապետի, | որ յաջորդեց տանս մեծի | Ներզրաղմանց ժամանակի: | Ծառայ էր սա տեառն մեծի | Զաքարիաս վարդապետի: | ՌՄ (1751):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 50): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 35: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 461: **Haghnazarian A.**, էջ 198:

Ծանոթ. Տարեթվի վերծանությունը կասկած է հարուցում, քանի որ պահպանվել է Մինաս առաջնորդին ուղղված Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսի 1753 թվակիր կոնդակը:

**ԺԲ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավարևելյան որմնասյան արևմտյան ճակատին, 6 տող, «երկաթագիր եւ պատուագիր»: Չափերն են՝ 57,8 x 40 սմ (13 x 9 վերշ.).

*Յիշատակ է սուն սրբոյ | Աթոռոյս առաջնորդ Սիմէոն | արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ | եղբօր Խաչատրին եւ քեռն|...րին եւ ամենայն զարմիցն |Թվ. ՌՄԾԹ (1810) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 50): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 36: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Haghnazarian A.**, էջ 202:

**ԺԳ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսարևելյան որմնասյան արևմտյան երեսին, 35,5 x 53,4 սմ (8 x 12 վերշ.) չափերով սպիտակ քարին՝ 6 տող: Գրչությունը՝ երկաթագիր և պատվագիր.

*Յիշատակ է սուն վերանորոգիչ սրբոյ | Աթոռոյս առաջնորդ Սիմէոն | Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ | եւ ծնողաց նորին Մու|րատին եւ Գայեանին, | թվին ՌՄԾԹ (1810):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 12 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 50): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 36-37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Haghnazarian A.**, էջ 203:

Տարընթերցում. Ղազյանի մոտ *Վերանորոգիչ* բառը տրված է *վրանորգեղ* ձևով:

**ԺԴ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսարևելյան սյան արևմտահայաց երեսին, քանդակազարդ, եզրերը՝ նկարազարդ, քանդակները՝ կարմիր գույնով ներկված: Չափերը՝ 80 x 71 սմ (1 արշ. 2 վերշ. x 1 արշ.): Արձանագրությունը՝ անկյուններում.

*Յիշ(ա)տ(ա)կ է սիւնս | Ղօրղանէցի Դաւիթ | կաթ(ո)ղ(ի)կ(ո)սի եղբայր Մէլի|քեան Բարսեղին Երէվան|ցո եւ կող(ա)կցոյն յիւրո եւ | որդոցն Զօհրաբին, Ռուստամ|ին եւ Մկրտչին եւ դըստերա|ցն եւ հանգուցեալ ծընող|ացն եւ համ(ա)յն կենդ(ա)նեաց| եւ ննջեցելոցն ամէն. | թվ(ի)ն ՌՄԿԲ (1813):*

Արձանագրությունը ներփակող ձևավոր շրջանակից դուրս՝ աջ և ձախ կողմերում, 2 տող.

*Տ(է)ր Ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Ղազեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 91 (վրիպ.՝ **Դադոյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 51): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Ուխտաւոր** (Հայկ Ստեփանյան), Ուխտագնացութիւն դէպի Ս. Թադէի վանք, «Ալիք», 1954: **Haghnazarian A.**, էջ 203:



Այս արձանագրությունը թարգմանաբար ներկայացրել է Ժան-Միշել Թիերրին (**Thierry M.**, նշվ. աշխ., էջ 494):

Հրատարակված օրինակում պակասում են առաջին երկու տողերը և շրջանակից դուրս փորագրված հատվածը:

Արձանագրության մեջ հիշվող Դավիթ Ե Էնեգեթցի (Ղորղանյան) կաթողիկոսը պաշտոնավարել է 1801-1807 թթ.:

**ԺԵ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավարևելյան որմնասյան արևելյան ճակատին, մեծությունն է 13 x 9 վերշ., 6 տող.

*Այլ և յիշատակ է բայազեդցի մահ/տեսի Ափրիկի որդի / մահտեսի Բարսեղին եւ Պետ-րոսին{ն} եւ / ծնողացն Շահզատին, մահտեսի Լալէին / որդի Աւետիսին եւ մահտեսի Բարսե-ղի / կողակցի Մարթային: / ՌՄԿԳ (1814):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դադյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 50): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 36-37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Haghnazarian A.**, էջ 202:

**ԺԶ** Արձանագրություն, Նոր եկեղեցու ավազանին՝ զարդերից ցած, 4 տող: Տողերի երկարությունը՝ 93 սմ՝ 1 արշ. և 5 վերշ.

*Յիշատակ է սուրբ ավազանս բայազետցի / մահտեսի Գօրօի / որդի մահտեսի Մընացական-ին, ՌՄԿԴ-ին (1815) / յուլիս Է (7):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դադյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 50-51): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Haghnazarian A.**, էջ 204:

**ԺԷ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավարևմտյան սյան արևմտահայաց երեսին՝ 8 տող, չափերը՝ 47 x 42 սմ՝ 10,5 x 9,5 վերշ.

*Ոգ(ա)ծութ(եամ)բ յ(ա)ռ(ա)ջն(որդ) Սի/մէօն բազմաշխ(ա)տ եպ(ի)սկ(ոպոս)ին / յիշ(ա)-տ(ա)կ է սիւնս մար(ա)ղեցի / տ(է)ր Խաչ(ա)-տուրին եւ կող(ա)կ/ցուն. նաեւ ղարաբախեցի տ(է)ր Պետրոսին եւ կ(ո)ղ(ա)կ/ցուն, նաեւ Չլա-ղառ պ(ա)ր(ո)ն Ա(ստուա)ծատուր/ին եւ կո-ղ(ա)կցուն: ՌՄԿԴ (՞) (1815՞):*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 14 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 91 (վրիպ.՝ **Դադյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 52-53): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 464: **Haghnazarian A.**, էջ 203:

Տարընթերցում. Դաղյանի և Ոսկյանի մոտ տարեթիվը թերի է՝ «ՌՄ...»:

**ԺԸ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսարևմտյան սյան արևմտահայաց ճակատին, 8 տող: Չափերը՝ 42 x 66,7 սմ՝ 9,5 x 15 վերշ.: Արձանագրությունը փորագիր չի եղել, այլ գրված է մատիտով.

*Հոգածութեամբ յառաջնորդ Սիմէօն արք/ե-պիսկոպոսի. եւ պատրիարգութեան սուրբ Սա-ղիմայ Թէո/դորոս եպիսկոպոսին յիշատակ է սիւնս սուրբ Սաղիմայ իմղաչի / եւ նվիրակ տեառն Ստեփան վարդապետին եւ ծնո/ղացն մահտեսի Մէլքոնին Հռիփսիմին / եւ եղբարցն մահտեսի Սարգսին եւ տիրացու / Յարութիւնին եւ Յակոբին եւ ամեն / այն զարմից նորին թվ. ՌՄԿԴ (1815):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 91 (վրիպ.՝ **Դադյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 52): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 464: **Haghnazarian A.**, էջ 204:

Ծանոթ. իմղաչի նշանակում է օգնության հասնող:

**ԺԹ** Տապանաքար՝ կից նոր եկեղեցու հարավարևելյան սյանը, կոտրված է: Արձանագրությունը՝ երկաթագիր, խոշոր տառերով.

*Կ. դամբար. անանուն կոչի:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 91 (վրիպ.՝ **Դադյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հոդվածների ժողովածու, էջ 52): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 464: **Haghnazarian A.**, էջ 204:

Տարընթերցում. Դաղյանի արխիվային վավերագրում ընդօրինակության առաջին տառը ոչ թե Կ է, այլ Չ:

**Ի** Արձանագրություն, Նոր եկեղեցու ավազանից բարձր, 5 տող.

*Սուրբ խաչս բա/րեխօս Էլօին / եւ կնոջն Շամա/մին եւ որդուն / Պետրոսին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հողվածների ժողովածու, էջ 51): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Haghnazarian A.**, էջ 202:

**ԻԱ** Արձանագրություն, Նոր եկեղեցու ավազանից բարձր՝ դեպի արևմուտք, 3 տող.

*Յիշատակ է աւազանս սեղու/կեցի հանգուցեալ մահտեսի | Գերոմի որդիսն մահտեսի:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 13 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1898, էջ 90 (վրիպ.՝ **Դատյան Խաչիկ ծ. վարդապետ**, Հողվածների ժողովածու, էջ 51): **Ոսկեան Հ.**, Արտազի վանքը, էջ 37: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 463: **Haghnazarian A.**, էջ 204:

### Նոր եկեղեցու հյուսիսային ճակատին

**ԻԲ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային մուտքի արևմտակողմում՝ հեծյալի քանդակի տակ, 4 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ Գէվորգս հախվէ-ր/իզցի Եզօի որդի Յարութենին, | կող(ա)կ-ց(ու)ն՝ Գուլէին, եղբ(ո)ր(ն)՝ Գրիգորին, | մօրն, որդոցն, որ է Մէլիքեան, ՌՄԿ (1811):*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 17 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 205:

Այս արձանագրությունը թարգմանաբար ներկայացրել է Ժան-Միշել Թիերրին (**Thierry M.**, նշվ. աշխ., էջ 494):

**ԻԳ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային մուտքի արևելակողմում՝ ձիավորի քանդակի տակ, 3 տող, տեղ-տեղ վնասված.

*Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ Սարգիս բայ(ա)-զ(ի)դցի | Յօվօյի որդի Յակոբին, Սարգիս(ին), | թվ(ի)ն ՌՄԿ (1811):*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 205:

Այս արձանագրությունը թարգմանաբար ներկայացրել է Ժան-Միշել Թիերրին (**Thierry M.**, նշվ. աշխ., էջ 494):

**ԻԴ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային խորանի հրեշտակի քանդակից վեր.

*Յիշ(ա)տ(ա)կ է սրբէս տէր Դանիէլի ծնողացն, կ(ո)ղ(ա)կց(ու)ն եւ որդի Ոսկանին Մուսիսցի (՞), ՌՄԿ (1811):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 17 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԻԵ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային մուտքի ճակատակալ քարին, 4 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է դուռս ավաջուղցի մէլիք Մարտիրոսին եւ կող(ա)կցուն՝ Նանօին, եւ | որդոցն՝ Սեղրակին եւ ծըն(ո)ղացն՝ տ(է)ր Գրիգորին եւ Դ(ի)լբարին, եղբարցն՝ տ(է)ր | Յօհանէսին, Մէլիք Փանոսին եւ կողակցացն՝ Դիլբօին եւ Դուրդանին եւ որդոցն՝ | Պետրոսին եւ Շէկօին եւ այլ ընդանեացն:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Տարընթերցում. Խ. Ղաղյանի ընթերցման մեջ բացակայում է 3-րդ տողն ամբողջությամբ, իսկ 4-րդ տողի «*Ղ(ա)զ(ա)րին, Գրիգորին, թվ(ին) ՌՄԿ (1811)*» հատվածը վիմագրում չկա:

**ԻԶ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային ճակատին՝ խորանների միջև՝ խորանայան գլխի հրեշտակի քանդակից վեր.

*Յիշատակ է սրբէս մնցի տ(է)ր Մարտիրոսի ծնողացն եւ կողակցուն, թվ(ին) ՌՄԿ (1811):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԻԷ** Արձանագրություն, Նոր եկեղեցու արևելյան ճակատին՝ կից հին եկեղեցուն հյուսիսից՝ արևելահայաց որմնախորշի խաչաքանդակի տակ, 71սմ՝ 1արշ., 9 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս քօխաղցի հանգ(ու)ցեալ | Իսկէնտէրեան մ(ա)հ(տե)սի Ակոբին եւ որդուն՝ | Մելքիսեդեկին եւ որդուն՝ Ակոբին եւ Գէ/որգին եւ Փուրումեան մ(ա)հ(տե)սի Ստեփ/աննոսին եւ որդուն՝ Մելքոնին եւ |*



*նաեւ Լուսիկին եւ Մարթային | եւ ղազազ մ(ա)հ(տե)սի Սարգսին, որք | հանդիպիք մի հայր մերիւ յիշեցէք, | թուին ՌՄԿԱ (1812)ին, յուլիսի Ա (1) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 201:

**ԻԸ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային խորանի արևելյան «բաղարջաձև» պատկերաքանդակի տակ, 4 տող (տեղ-տեղ քայքայված).

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խորանս փանիկցի Յարութիւնին եւ կ(ո)ղ(ա)կցուն Զափուռին եւ | որդոց՝ Միքայէլին, կ(ե)նդ(ա)ն(եա)ց եւ ն(ն)ջ(ե)ց(ելո)ցն, | թվ(ին) ՌՄԿԴ (1815):*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Տարընթերցում. Խ. Դաղյանի մոտ՝ *Զափուռին* բառի փոխարեն նշված է *Զափուսին*:

**ԻԹ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային խորանի արևմտյան նիստի երկգլխանի արծվաքանդակի տակ, 3 տող.

*Յիշատակ բայ(ա)զ(ե)դցի | դայբաղ մահդեսի Ավ|[եդի]սին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. դայբաղ նշանակում է կաշեգործ:



**Լ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային խորանի հյուսիսարևելյան քանդակի մոտ, 4 տող (տեղ-տեղ քայքայված).

*Յիշ(ա)տ(ա)կ է Բաեազիտ բնակեալ Խա[չատու]|րի որդի Ասլան աղա[յին կամ] | | Օհանէսին եւ իւր ծնողին, [թվ]|ին | ՌՄԿԹ (1820):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:



**ԼԱ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային ճակատին՝ արևելքից երկրորդ խաչաքանդակի տակ, 2 տող (տեղ-տեղ քայքայված).

*Ս(ուր)բ խաչս բարեխօս առ ա(ստուա)ծ վասն փրկութե(ա)ն տ(է)ր Հայ|րապետին եւ ծնողացն՝ տ(է)ր Հայրապետին եւ Մարգարտին:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԼԲ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային ճակատին՝ արևելքից առաջին խաչաքանդակի տակ, 3 տող.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է խօյէցի մ(ա)հտ(եսի) Եղօյի կողակից Մար(ի)ամին եւ որդոց | Մարգարին, Զաքարին եւ Մանուկին, զողեկացկին եւ ննջեցելոցն, | կենդանեաց:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:



**ԼԳ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հյուսիսային ճակատի արևմտյան անկյան մոտ՝ զեղաքանդակ վարդյակի տակ, 3 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է թ[ալասեցի .... | Աւետիքին ծն ...] | թ[վ(ի)ն ...]:*

Հրատ. առաջին անգամ:



**ԼԴ** Արձանագրություն, 3 տող.

*1856 ամի, ապրելի 24-ին ես գէ|գչէցի Մկրտիչ Սինանօ|վս եկի ս(ուր)բ աթ(ո)ռն:*

Հրատ. առաջին անգամ:



**ԼԵ** Արձանագրություն, 4 տող.

*1856 | ապրելի 24-ին | ես Գոգչէցի Բակօ | Ղազէօվէս եկի ս(ուր)բ | աթոռն:*

Հրատ. առաջին անգամ:





**ԼԶ** Արձանագրություն, 4 տող.

*1858 11 մա(յիս)ի ես՝ Կարապետ | Դ(ա)ւի-թօվ Թէլիմեա(ն)ց Գօք|չէցի եկա Ս(ուր)բ Թա-(դէո)ս, | առ(ա)ք(ե)ալ:*

Հրատ. առաջին անգամ:

**ԼԷ** Արձանագրություն, 4 տող.

*Յիշա(տա)կ Ղևոնդ | Մի(ր)զախանեան | Վանեցի, 1897, | մ(այ)իս(ի) 31:*

Հրատ. առաջին անգամ:



**ԼԸ** Արձանագրություն, 5 տող.

*... | ... | Մակուցի, | ռն(յեմբերի) 21 | 1904:*

Հրատ. առաջին անգամ:



**ԼԹ** Արձանագրություն, 4 տող.

*Վարդան | Գէորգե(ա)ն | Մակուցի, | հոկ. 21, 1905:*

Հրատ. առաջին անգամ (տե՛ս ԼԸ վիմագրի լուսանկարը):

**Խ** Արձանագրություն, 4 տող.



*[Սա]րգիս | Սարուխանեանց | Սալմաստեցի, | հոկ. 20, 1905:*

Հրատ. առաջին անգամ:

**ԽԱ** Արձանագրություն, 3 տող.

*Վարդան Յարութենունե(ա)ն | Տաշւերանցի, | 1907, հոկ(տեմբերի) 5:*

Հրատ. առաջին անգամ:



**ԽԲ** Արձանագրություն, 4 տող.

*Քաջբերունի | Ինջոյեան | Կարնեցի, | 1914 թ.:*

Հրատ. առաջին անգամ:



**ԽԳ** Արձանագրություն, 3 տող.

*Արամայիս | Սարուխանեան | 1954 թ.:*

Հրատ. առաջին անգամ:

**ԽԴ** Արձանագրություն, 3 տող.

*Ռաֆիկ | Սարուխանեան, | 1956:*

Հրատ. առաջին անգամ:

**ԽԵ** Արձանագրություն, 2 տող.

*Յակոբ, Բաղդասար | Ղարիբով:*

Հրատ. առաջին անգամ:

**ԽԶ** Արձանագրություն, 2 տող.

*Արմենակ Շալջեան, | Արամ Շալջեան:*

Հրատ. առաջին անգամ:

### Նոր եկեղեցու հարավային ճակատին

**ԽԷ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի արևմտահայաց երկգլխանի արծվի պատկերաքանդակից ցած, տեղ-տեղ խիստ վնասված.

*Յիշատակ է խորանս ո(է)ր Անթան[էսի] որ|դի իրիցփոխ Մն(ա)ց(ա)կանին եւ [կ(ո)-ղակցուն], | ծնօղացն եւ եղբարց, որդոցն, ՌՄԿ (1811), | ի գեղ Հախվէրիզ[ու]:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 206:



Ծանոթ. Հախվերիզ (այժմ՝ Հախվեյիս) գյուղը գտնվում է Սալմաստ գավառում՝ Իգդիրից 2 կմ հյուսիս-արևմուտք:

**ԽԸ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային մուտքի արևմտյան կողմում. «...քանդակախորանի միջի ձիաւորի տակի գիրը, միատող», 5 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ Մինաս. իրիցփոխ Յա|կոբի որդի Վարդանին, եւ կող(ա)կ|ցուն,*



*եղբօրն՝ Յարութիւնին որդի | Սարգիսին, մօր Ջահվարին ի գեղն | Հախվէրիզ, ՌՄԿ (1811):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 206:

Այս արձանագրությունը թարգմանաբար ներկայացրել է Ժան-Միշել Թիերրին: Ի դեպ, թարգմանության մեջ նշված 1911 տարեթիվը հավանաբար տպագրական վրիպակի արդյունք է (**Thierry M.**, նշվ. աշխ., էջ 494):

**ԽԹ** Արձանագրություն, Հին եկեղեցու և հարավային խորանի միջև, 84 սմ (1 արշ., 3 վերշ.), 3 տող.

*Խաչս յիշատակ է բայազէթցի նալչաչի | Դավօի տղայ Վարդանին եւ ծնօ(ղ)աց նորին | թվ(ին) ՌՄԿ (1811):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. նալչաչի նշանակում է պայտագործ:



**Ծ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային ճակատին՝ խաչաքանդակի տակ, 106,5 սմ (1,5 արշ.), 3 տող.

*Ս(ուր)բ խաչս բ(ա)ր(ե)խոս մ(ա)հտ(ե)սի Ղո(ւ)լիջանին, կող(ա)կց(ո)ւն՝ Եղիսին, որդի | Սարգիսին եւ կ(ո)ղ(ա)կց(ու)ն՝ Գուհարին, եղբարց տ(է)ր Պողոսին, Բարսեղին, Եղ(իա)զ(ա)րին, | թվ(ի)ն ՌՄԿ (1811) ին:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):
Հրատ. առաջին անգամ:

**ԾԱ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային կողմում. «...զանգակատան կից դրսի քանդակախորանի (Շիրիխուրշիդի) առիւծ-արեգակի տակի գիրը չորս տողից, երկարությունը՝ 1արշ. (71սմ)».

*Յիշատակ է ղէվանցի ղոչի որդի Թարիվէրդին եխբօրն Օվանէսին ծն(ո)ղ(ա)ցն Սարգ(ա)ր(ի)տին եւ կողակցին որդի Մախսուտին, ՌՄԿ (1811):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):
Հրատ. առաջին անգամ:

**ԾԲ** Արձանագրություն, Նոր եկեղեցի. «...դէպ արեւմուտք նայող խորանի խաչի տակի գիրը, 2 տողից, երկարութիւնը 1 արշ., 4 վերշոկ (89սմ)».

*ՌՄԿԵ (1816): | ս(ուր)բ խաչս բ(ա)րեխոս բ(ա)րվ(ի)զ(ե)ցի Հա(յ)ր(ա)պետի որդի Ավետիկին եւ ծն(օ)|ղացն Մարիա(մին) եւ կ(ո)ղ(ա)կցուն՝ Ոսկուն, որ կարդա, ողորմի:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):
Հրատ. Haghnazarian A., էջ 206, արձ. № 31:

**ԾԳ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի արեւմտահայաց «քաղարջաձեւ» քանդակի տակ, 71 սմ (1 արշ.) երկարությամբ տողով, արձանագրությունը խիստ վնասված է (մի շերտ թափված է).

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Ղ(ա)յ[սեր]ու Թալ(ա)ucի [Թորոս օղլի] | Հաճու[ն], ծն(ո)[ղա]ցն Սար[գ]սին եւ Մար]իա[մին], | թվ հ(ա)յ(ո)ց [1844]:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):
Հրատ. առաջին անգամ:

**ԾԴ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային մուտքի արեւելյան կողմում՝ հեծյալի քանդակի տակ, 67 սմ (15 վերշ.), 2 տող, տեղ-տեղ քայքայված.

*Յ[իշատա]կ է ս(ուր)բ Մեր[կերիո]ս բայազ|ղցի Յօվօի որդի Յակոբին, Վարդանին:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):
Հրատ. **Haghnazarian A.**, էջ 205:
Ծանոթ. արձանագրությունից ցած փորագրված Դ տառը հավանաբար վարպետի նշանն է:

**ԾԵ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային մուտքի ճակատին, 146 սմ (2 արշ. 1 վերշ.), 3 տող.

*Հոգածութե(ա)մբ յառ(ա)ջնորդ Տ(եա)ռն Տ(եա)ռն Սիմէօն սրբազան արքեպիսկ(ո)պ(ո)սին / յիշատ(ա)կ է դուռս ավաջուղցի մէլիք Մանուկին եւ ծընօղացն՝ Միխօին, / Մարիամին եւ*



*որդոցն Յօհանէսին, Ավաքին, Պետրոսին եւ կող(ա)կցուն՝ Մուրվաք(ի)ն:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 205:

**ԾԶ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի հարավարևելյան կողմում, 1 տող.

*Յ(ի)շ(ատակ) է Սէվքսցի Սէրավ օղլի Պապիկ:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԾԷ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի հարավային արտաքին նիստի զարդաքանդակի տակ, տեղ-տեղ քայքայված, 1 տող.

*Յ(ի)շ(ատակ) է Սէ[վք]սցի Սանոսեց Մ...հի:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:



**ԾԸ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի հարավարևմտյան արտաքին նիստի «գեղեցկապաճույճ» քանդակի տակ, 169 սմ (2 արշ. 6 վերշ.) երկարությամբ, 1 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է խորանս Ղարաբաղու Ավետարանից Գրիգորի դուստր Փարուն, մօրն՝ Հուրուն, քն(ա)կե(ա)լ Թարվէզ:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**ԾԹ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի արևմտյան զարդասյան գլխին՝ հրեշտակի պատկերի մոտ, 2 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Յօհանէսին, / ծնողացն հոգուն:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

**Կ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային մուտքի արևելյան կողմում, 3 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է բայ(ա)զ(ե)տցի Յովա/նէսի որդի Մէլքոնին / ...:*

*Այլ յիշ(ա)տ(ա)կ է մ(ա)հտ(եսի) / Գօրօի կող(ա)կ(ի)ց Եղիսին, / թվ ՌՄԿԴ (1815):*

Հրատ. առաջին անգամ:



**ԿԱ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային խորանի հարավարևմտյան արտաքին նիստին, 3 տող.

*Գարեգին / Մովսէս/եան:*

Հրատ. առաջին անգամ:



**ԿԲ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային ճակատի արևելյան եզրին, 2 տող.



*1896, Եղիազար | Դատվանցի:*
Հրատ. առաջին անգամ:

**ԿԳ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային ճակատի արևելյան եզրին, 2 տող.



*Յիշատակ Արմենակ | Միրաքեան, 1938:*
Հրատ. առաջին անգամ:

**ԿԴ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային ճակատի արևելյան եզրին, 2 տող.



*1896 կոտորումն հայոց ի մարաց, | Կարապետ ասրաւցի:*
Հրատ. առաջին անգամ:

**ԿԵ** Արձանագրություն, Նոր եկեղեցու հարավային ճակատի արևելյան եզրին, 3 տող.



*1921 | Սէքրազ | Հա(մ)բարցումեան:*
Հրատ. առաջին անգամ:

### Նոր եկեղեցու արևմտյան ճակատին

**ԿԶ** Արձանագրություն, Նոր եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին՝ պարսկերեն արձանագրության տակ, 1,51 x 0,27 սմ (2 արշ. 2 վերշ. x 6 վերշ.) մակերեսի վրա՝ 4 տող.

*Շին(ե)ց(ա)ւ շնորհիւ ամեն(ա)զ(օ)րին ա(ս)տուծո)յ զչքնեղ(ա)գեղ եւ լուս(ա)կիր | տ(ա)-*



*ճարս եւ զանկակ(ա)տ(ո)ւնս ի հիմանէ եւ հ(ա)յր(ա)պ(ե)տ(ու)թե(ա)ն տ(եա)ռն Դ(ա)-ն(ի)էլի եւ | Եփրեմի սրբ(ա)զ(ա)նից կարի աշխ(ա)տ(ութեա)մբ եւ հ(ո)գ(ա)ծու(թեամ)բ յ(ա)-ռ(ա)ջն(որ)դ Սիմէօն արք|եպ(ի)սկ(ոպոս)իս յ(ի)շ(ա)տ(ա)կ եւ ծն(ո)ղ(ա)ցս Մուր(ա)տին, Գահանին, եղբ(ա)րց եւ քվերցս Ս(ա)նդ(ուխ)-տ(ին) եւ Խ(ա)չ(ա)տ(ու)րին:*

Կողքի կոփածո քարին եղել է.

*Թվին ՌՄԾԸ (1810):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Ֆրանգեան Ե.**, Վեց օր Թադէի վանքում, էջ 126: Նույնի՝ Ատրպատական, էջ 29: **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 13: **Haghnazarian A.**, էջ 201: **Thierry M.**, նշվ. աշխ., էջ 494:

Ծանոթ. Ե. Ֆրանգյանը հրատարակել է նկատելի բացթողումներով: Մասնավորապես չունի 2-րդ տողում՝ «*եւ հայրապետութեան տեառն Դանէլի եւ*», 3-րդ տողում՝ «*Եփրեմի սրբազանից*», 4-րդ տողում՝ «*եղբարց եւ քվերցս Սանդուխտին եւ Խաչատուրին*» հատվածները: Ե. Ֆրանգյանը և Լ. Մինասյանն այս արձանագրությունը հրատարակել են նախորդ վիմագրի հետ: Մյուս հրատարակություններում ևս կան որոշակի վրիպումներ, ուստի ներկայացնում ենք մեր կողմից ճշտված տարբերակը: Թվագրերն արտագրված են միայն Դաղյանի մոտ:

**ԿԷ** Արձանագրություն, Նոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հյուսիսային անկյան մոտ խաչքանդակի տակ.

*Թվ(ի)ն ՌՄԿ (1811): | Ս(ուր)բ խ(ա)չս բարեխօս հանգուցեալ Սարգսին | եւ կող(ա)կից Նազլուխանին Երևանցու Մէլիքիան:*

Խաչաքների միջակայքում՝ շրջանակված պատկերաքանդակներին կից.





*Ղուկ(ա)ս, Յ(ո)հ(ա)ն(է)ս, | Մատթ(է)ոս, Մարկ(ո)ս:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 17 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Տարընթերցում. Խ. Դադյանի մոտ ավետարանիչների անունները չկան:

**ԿԸ** Արձանագրություն, Նոր եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին՝ պարսկերեն արձանագրության տակ, 80 սմ երկարությամբ 2 տողով արձանագրված է (տե՛ս նախորդ լուսանկարը).

*Արքազ(ա)ն Սիմէօն արքեպ(ի)սկ(ո)պ(ո)սըս | ս(ր)բ(ո)յ Էջմիածնցի երբեմն, աթ(ո)ռ(ա)կ(ա)լ տեղ(ւո)յն եւ անդ ի բեր(եա)լ նստ(ու)ցին ի աթ(ո)ռս յ(ա)ռ(ա)ջն(ո)րք:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 15 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Ֆրանգեան Ե.**, Վեց օր Ս. Թադէի վանքում, էջ 126: **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 13: **Haghnazarian A.**, էջ 201:

Ծանոթ. Ե. Ֆրանգյանը և Լ. Մինասյանն արձանագրությունը հրատարակել են հաջորդ վիմագրի հետ:

Տարընթերցում. Ե. Ֆրանգյանը վիմագիրը հրատարակել է նկատելի տարընթերցումներով և աղճատված: Մասնավորապես, «*տեղ(ւո)յն*» բառի փոխարեն ընթերցել է «*տէրութեան*», չունի «*եւ անդ բեր(եա)լ*» հատվածը (համարել է անընթեռնելի):

**ԿԹ** Նոր եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին արքայազն Աբաս-Միրզայի թողած արձանագրությունը պարսկերեն.

دل بتنگ آمد چو روح الله زتن زاین امهات
میل آبا کرد چندی باز مادرزاد گشت
ازیکی اصحابه طاطاوس نام این سجده‌گاه
گشت آباد و خراب از چرخ بی بنیاد گشت
با زمان دولت فتحعلی شه آنکه او
همچو ابر درفشان دست عطایش راد گشت
از ولی عهدش شهنشاه جهان عباس شاه
کو به گیتی شهره در انصاف و عدل و داد گشت
آنکه بس ویرانه‌ها چون کوفه در ایران‌زمین
فی المثل در عهد عدلش غیرت بعداد گشت
جز دل ویران من کو قابل تعمیر نیست
هر خرابی را که دیدی در جهان آباد گشت
کرد از نو این کهن ویرانه را آباد زو
هم خدا راضی و هم روح بانی شاد گشت
چون زفرمان وی و اقدام استادان چند
سخت‌تر از آهن و محکم تر از فولاد گشت
گفت این مصراع پی تاریخ تعمیرش نوا
وانک طاطاوس باز از داد شه آباد گشت
١٢٢٩

Թարգմ. Սիրտս նեղվեց, որովհետև Աստծո հոգին լքեց այս նյութական մարմինը,

Որոշ ժամանակ մնալով նախնիների հետ՝ հետո կրկին ծնվեց

Նրա հետևորդներից Թադևոս անվամբ մեկի շնորհիվ

Այս աղոթատեղին կառուցվեց, հետո հիմնովին ավերվեց անկայուն բախտի կամոք

Մինչև որ Ֆաթհալի շահի իշխանության օրոք, որն

Ինչպես բարեբեր ամպ, իր առատաձեռնությամբ ու

Թագաժառանգ արքայից արքա Աբասի ձեռքով,

Որն աշխարհին հայտնի է իր արդարադատությամբ,

Բացի իմ ավերված սրտից, որը հնարավոր չէ բուժել,

Շատ ավերակներ, ինչպես Քուֆան Իրանում

Աշխարհի որ մասում էլ տեսներ,

Իր արդարությամբ մեծ ջանք թափեց ու շենացրեց,

Նրա շնորհիվ նորոգվեց նաև այս հին ավերակը,



Որը թե՛ Աստծուն գոհացրեց և թե՛ արարչագործ հոգուն,

Քանի որ նրա հրամանով ու վարպետների ձեռքով

Այն երկաթից էլ պինդ ու պողպատից էլ ամուր դարձավ:

Այս բանաստեղծությունն ասաց վերանորոգման պահին.

Թադևոսի վանքը շահի արդար կամքով շենացավ կրկին:

1229 h. թ. (1813/4 թ.):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 201:

Ծանոթ. թարգմանությունը, խմբագրումը՝ Քրիստինե Կոստիկյանի:

Ստորև ներկայացնում ենք նաև Խ. վարդ. Դադյանի կատարած թարգմանությունը (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց, ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 26 շրջ.).

*Սիրտս նեղութեան Յիսուսի նման մարդեղութիւնից ամբառնալ կամենալ ծնունդը մի քանի ժամանակից յետոյ:*

*Փաթալի շահի թագաւորութեան ժամանակ, որը մարգարիտ տեղացող ամպի նման ողորմութեան ձեռք էր կարկառում:*

*Նա, որ Քուփայի նման շատ աւերակներ Իրանում իւր արքայութեան ժամանակ այնպէս շենցրուց, որ Բաղդատից առաւել:*

*Նորից նորոգել տուեց այս հին աւերակը, որով համ աստուած գոհ եղաւ, համ սբ. հոգին:*

*Այս ուխտատեղին յանուն Թադէոսի, որի հետևողներից մին շէնցրել էր, բայց ժամանակի աւերիչ ձեռքից աւեր էր դարձել:*

*Զաւան Շահանշահի ժառանգի՝ Աբաս շահի (Աբաս-Միրզա) ձեռնտուութեամբ, որը արդարադատութեանց ողորմածութեանց դուռն է:*

*Բացի իմ աւերած սիրտս, որ արժանի էլ չէ նորոգման, աշխարհումս ինչ աւերակ տեսնես, նորոգուեց:*

*Քանի-քանի վայրեր պողպատի նման նորոգուել են նորա հրովարտակով, որին ուրախ հոգիս մատաղ լինի:*

*Ասաց այս ոտանաւորը նոր չէնքի աւարտման ժամանակ, Թաթէոսի վանքը նորից չէնցաւ թագաւորի ողորմութիւնից, 1224:*

**Հ** Արձանագրություն, արևմտյան ճակատի հյուսիսային անկյան մոտ, 3 տող.

*Միխակ Ղազ(ա)րե(ա)ն | Ֆարղուզատե(ա)նց | 1863:*

Հրատ. առաջին անգամ:



**ՀԱ** Արձանագրություն, 4 տող.

*Վան(ե)ցի Գասպար Չ(իք)չեան. | երեք ընկ(ե)րք վանեցիքս՝ | Ե. Բամբակունի, Յ. Չէփի-*



*ճե(ա)ն եւ | Ա. Չ(ի)քչե)ա)ն, 1890 ապր(ի)լ(ի) 15:*

Հրատ. առաջին անգամ:

## Զանգակատուն

**ՀԲ** Արձանագրություն, զանգակատան հյուսիսային ճակատին՝ պատկերաքանդակի տակ, 5 տող.

*Իշ(ա)տ(ա)կ է Աբգար թագաւոր Հան...|էցի միտսի Մաթէոսին եւ կողկցուն Մարիամին |*



*յորդոցն Յակոբին, Ավաքին, որ է ընկել ի քաղ|աքն Թիվլիս, ով որ ընթեռնու, յիշէ մեզ | թվ(ին) ՌՄԿԵ (1816):*

Հրատ. առաջին անգամ:

**ՀԳ** Արձանագրություն, զանգակատան հյուսիսային ճակատին՝ պատկերաքանդակի տակ, 6 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է Աստապատցի Յարու|թիւնին եւ կողակցուն՝ Եղիսա|պետին եւ որդոցն՝*



*Մարգարին, | Յակոբջանին, Սողոմոնին, ...|-նին, Աս(տուա)ծատուրին եւ Յովանէս | աղաից, թվին ՌՄԿԲ (1813)ին:*

Հրատ. առաջին անգամ:

**ՀԴ** Արձանագրություն, զանգակատան հարավային ճակատին, 7 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է թէմիս ս(ուր)բ Թադէոս ....ցի Մանուկի որդի Պարսամին... եւ եղբորն Խաչօին եւ որդի Հայրօին... ՌՄԿԴ (1815), ով կարդա յիշէ մեզ:*



Այս արձանագրությունից ներքև.

*Նաեւ յիշ(ա)տ(ա)կ է բա(յա)զիտցի չան(ա)ղչի Այվազի որդի Գեվորգին եւ ծնող(ա)ցն ... եղբորն Յ(ա)կոբին, Առաքելին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. չանաղչի նշանակում է պնակագործ կամ պնակավաճառ:

**ՀԵ** Արձանագրություն, զանգակատան հյուսիսային ճակատի (կից՝ Նոր եկեղեցու արևմտյան ճակատին) հարավահայաց որմին, 4 տող.

*1895-96-ին եղեւ մեծ կոտորում տաճկ(ա)-հա|յոց ձեռամբ օսմ(անեան) Համիտ կայսեր եւ իւր համանուն | զօրաց, (փորագրիչ) Քաջ[բե-*



*րու]ն|եաց-Արճէշ, որ է Ականցի Գուրգեն Կարապէտեան:*

Հրատ. առաջին անգամ:

**ՀՁ** Արձանագրություն, զանգակատան հարավային կողմում, ներքուստ, 3 տող.

*...Աղաւնի | Սօլախեան, | 1900 յուլիս 27:*

Հրատ. առաջին անգամ:

### Առաջնորդարան

**ՀԷ** Արձանագիր քար՝ ագուցված պատին, 4 տող.

*Շինեցաւ յ(ա)ռաջն|որդարանս ձեռ|ամբ Սիմէօն արք|եպ(ի)սկ(ոպո)սին: Թվ ՌՄԿԶ (1817):*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 16: **Haghnazarian A.**, էջ 207:



### Շրջապարիսպ

**ՀԸ** Արձանագիր քար, հարավային ներսի բուրգի վրա, արտաքուստ, 10 տող.

*Ողորմ(ու)թ(եամ)բ հանրակերտին ամբիծ արեամբ | ըզմեզ փրկողին, միջնորդութ(եա)մբ աշակերտին | նախգին մերոյ Լուսաւորչին, շինեցաւ տեղիքս ի փա|ռս նորին արդեամբ Իսահակ յառաջնորդին, | որ եւ ինքն էր Նախիջեւանցին արքեպիսկոպոս Փա|ռակեցին, յոյժ վշտացեալ տառապեալ հոգին. յուսով դիմեալ...|... փարեալ առ տէր բարին, որք հանդի-*



*պիք տուք զող|որմին եւ միադաւան հայոց ազգին, որք միշտ հոգան | իւրեանց հոգին շն[h](ո)րհօք հոգուն պա(յ)ծառացին, | թւ(ի)ն էր ՌՍՂԳ (1784) ին. աւարտ էհաս օգոստոսին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 23 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 208:

Ծանոթ. ըստ Գ. Գևոնյանի վկայության՝ արձանագիր քարը 2000 թ. գաղտնի տեղահանվել է և տարվել Կարազիադին: Այժմ պահվում է Բախչաջուղի թանգարանին կից գրասենյակում:

**ՀԹ** Արձանագիր քար՝ ագուցված պարսպի արևմտյան մուտքի վերևում, 7 տող.

*Ողորմութ(եամ)բ ա(ստուծո)յ շինեցաւ | շրջապատ պարիսպս ի Մ(ա)կ|ուայ Յուսէն խանին եւ հ(ա)յր|ապետ(ութ)ե(ա)նն Եփրեմ ս(ր)-բ(ա)զ(ա)ն կաթ|ուղիկոսի, ձեռամբ առաջնորդ | Սիմէօն արքեպիսկոպ(ո)ս(ի)ն | ս(ր)բ(ո)յ Էջ-միածնեցի, թվ(ին) ՌՄԿԸ (1819), մայիսի Ա (1):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 23 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 16-17: **Haghnazarian A.**, էջ 207:

Տարընթերցում. Լ. Մինասյանը 2-րդ տողի շրջապատ բառն ընթերցել է շքապատ:



**Ձ** Արևելակողմի փլված և վերականգնված պարսպի արձանագրությունը, 7 տող.

*Յիշա(տա)կ է պարիս|քս այս Իբրահիմ | աղայի և Մակվայ Քիշմիշթափայ | օրհնե(ա)լ ժո-*



*ղովրդոց | հոգածու(թեամ)բ Եսաիա | վ(ա)ր-ղ(ա)պ(ետ)ի 1867, 28 մ(ա)րտի: | Ես(ա)յի վ(ա)ր(դա)պ(ետ)ի:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 23 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 207, արձ. № 35:

Ծանոթ. Վերջին տողը փորագրված է գլխիվայր:

### Փայտյա դուռ

**ՉԱ** Նոր եկեղեցու հյուսիսային մուտքի փայտակերտ դռան վրա.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է դուռս ս(ուր)բ Էջմիածնայ գուղցի Սիմէօն եպ(իս)կ(ոպո)սիս Բզնունցուն:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 16 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 200:

### Վանքի գերեզմանոց

**ՉԲ** Տապանաքար

*Եղբայր Մոկացի Յարութին:*

Հրատ. **Միքայելեան Լ.**, նշվ. աշխ., էջ 18:

**ՉԳ** Տապանաքար, զտնվում է հին եկեղեցու արևելյան կողմում.

*Այս է հանգիստ Ստեփ/աննոսին, ի թվ(ին) ՉԿԴ (1315):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կոտրված է երկու մասի:

**Անորոշ տեղադրությամբ վիմագրեր.** ստորև ներկայացնում ենք 1894 թ. Խաչիկ վարդապետ Դաղյանի[16] ընդօրինակած և ցարդ անտիպ մնացած վիմագրերը, որոնց տեղադրությունը ճշտել մեզ չի հաջողվել:

ա *Յիշատակ է Նոհնանի ... կերտ ի դուռն Թաթէոսի առաքելուն, 1151 (1702՞):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

բ *Յիշատակ է տ(ի)ր(ա)ցու Առքենին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանուցն, թվ(ին) ՌՄԴ (1755) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 38 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

գ *Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Հօռոփսիմին, զՄսրին, ի դուռն ս(ուր)բ առաքելուն Թաթէոսի, ձեռ(ամբ) Գէորգ վարդապետին, ՌՄԴ (1755) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 38 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

դ *Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Ոհաննէսի որդի Մարտիրոսին, ի դուռն ս(ուր)բ Էջմիածնայ ձեռամբ Պետրոս վարդաետին, ՌՄԻԱ (1772):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 38 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ե *Յ(ի)շ(ա)տ(ա)կ է թօխաթցի Արութինին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելուն վանիցն, ՌՄԻԹ (1780):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 38 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

զ *Յիշատակ է հանգուցեալ Պահատուրի որդի Մարտիրոսին, ձեռամբ Տ(է)ր Գէորք վարդապետին, ի դուռն Թաթէոսի առաքելուն, ՌՄԻԹ (1780):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

է *Յիշատակ է մահտեսի Աննային, ի դուռն Թաթէոս ս(ուր)բ առաքելու վանիցն | ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ը *Յիշատակ է Մարեանին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանիցն ձեռամբ Գէորք*

16 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

*վարդապետին, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Թ *Յիշատակ է Աւետիքին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանիցն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ժ *Յիշատակ է մալաքցի Խաչատուրին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանիցն, ՌՄԼԴ (1785) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԱ *Յիշատակ է Թօրոսին, Մարգ(ա)րտին Թաթէոս ս(ուր)բ առաքելոյ ձեռամբ Գէորք վարդապետին, թվ(ին) ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԲ *Յիշատակ է Կիրակոսին Թօրթա ս(ուր)բ առաքելոյ ձեռամբ Գէորք վարդապետին, թվ(ին) ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԳ *Յիշատակ է մահտեսի Մնացականին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոսի առաքելու վանիցն, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԴ *Յիշատակ է Արութիւնին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանիցն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԵ *Յիշատակ է մահտեսի Եղիեաին, կողակիցն Եաղութին ս(ուր)բ առաքեալն Թաթէոսի, ձեռամբն Գէորգ վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԶ *Յիշատակ է Կարապետին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանիցն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԷ *Յիշատակ է Աբրահամին ի դուռն Թաթէոս ս(ուր)բ առաքելոյ վանին, ձեռամբ Գէորք վարդապետին, թվ(ին) ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԸ *Յիշատակ է Խէզարին, ի դուռն Տատէոսու ս(ուր)բ առաքելուն, ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԺԹ *Յիշատակ է Ակոբի, առ դուռն Թադէոս ս(ուր)բ առաքելոյ, ձեռամբ Գէորք վարդապետին, թվ(ին) ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ի *Յիշատակ է մահտեսի Գէորքին ի դուռն Թաթէոս առաքելուն, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԱ *Յիշատակ է հանգուցեալ մահտեսի Մելքիսէթին հոգուն ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու, վանիցն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 41 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԲ *Յիշատակ է մահտեսի Ասատուրին ս(ուր)բ առաքելուն Թաթէոսի, ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 41 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԳ *Յիշատակ է հանգուցեալ ապայճի Սըկըրտիչին կողակցուն Հօռօփսիմային, որդուն Կարապետին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոսի առաքելու վանիցն, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 41 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ապայճի նշանակում է սպիտակ բրդյա կարպետ գործող:

ԻԴ *Յիշատակ է մահտեսի Պետրոսին ի դուռն Թաթէոսի առաքելուն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 42 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԵ *Յիշատակ է տիրացու Գրիգորի դուստր Հօռօփսիմային, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելու վանիցն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 41 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԶ *Յիշատակ է Սահակին, Աւետիքին Թաթէոսի ս(ուր)բ առաքելոյ վանիցն / ձեռամբ Գէորք վարդապետին, թվ(ին) ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 41 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԷ *Յիշատակ է Իաղութին, Թադէոս ս(ուր)բ առաքելոյ ձեռամբ Գէորք վարդապետին, թվ(ին) ՌՄԼԴ (1785) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԸ *Յիշատակ է մահտեսի Արութիւնին, ի դուռն Թաթէոսի առաքելուն ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԻԹ *Յիշատակ է Մանուկին, Օհաննէսին, ի դուռն ս(ուր)բ առաքելու վանիցն, ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Լ *Յիշատակ է մահտեսի Ակոբին, ի դուռն Տաթէի վանիցն ՌՄԼԴ (1785):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԱ *Յիշատակ է Ակոբին, ի դուռն Թաթէոսի ս(ուր)բ առաքելուն, ի ձեռն Գէորգ վարդապետին ՌՄԼԴ (1785) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԲ *Յիշատակ է մահտեսի Նիկողաոս(ին), ի դուռն ս(ուր)բ առաքելուն Թադէոսի / ձեռամբ Գէորգ վարդապետին, ՌՄԼԴ (1785) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԳ *Յիշատակ է տէրէնտէցի Թորոսին, Թաթէոս առաքելու վանիցն, ՌՄԼԴ (1785)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԴ *Յիշատակ է Տ(է)ր Սիմէօնի[ն] որդուն՝ հանգուցեալ Սարգիսի հոգուն, ի դուռն ս(ուր)բ Թաթէոսի առաքելու վանիցն, ձեռամբ Գէորք վարդապետին, ՌՄԼԴ (1785) ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 40 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԵ *Յիշատակ է Մարինոսին, ի դուռն Թաթէոս առաքելու, ՌՄԼԵ (1786):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 41 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԶ *Յիշատակ է Խաչատուրի որդի մահտեսի Միքեիլին, ի դուռն ս(ուր)բ Թաթէոս առաքելոյ վանիցն, ձեռամբ Առաքել վարդապետին, ՌՄԿ (1811)ին:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԷ *Յիշատակ է ս(ուր)բ Թաթէոս առաքելուն, թվին ՌՄԾԿԲ (1813):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԼԸ *Յիշատակ է արապկիրցի բազազներուն, ի դուռն Թաթէոս առաքելու, 1813 կամ 1814:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. բազազ նշանակում է վաճառական:

ԼԹ *Անտօն (22՞):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Խ *Խաչատու աբեղա:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԽԱ *Պօղոս:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԽԲ *Յիշատակ է այս Թեպօիս Մարութի որդի Եղօին, որ ի դուռն ս(ուր)բ առաքելոյ Թադէոսի:*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 44 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

ԽԳ *Յիշատակ է Մարտիրոսի որդի Մկրտիչին ս(ուր)բ Թաթէոս առաքելուն (140՞):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 43 (**Ղաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

# ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՏՈՒՌՆԵՐԸ

## Սանդուխտ կույսի մատուռ

*Տեղադրություն.* գտնվում է Թադեոս առաքյալի վանքից 1,5 կմ հարավ՝ ճանապարհի եզրին՝ փոքր բլրի գագաթին:

*Պատմություն.* հայոց եկեղեցու ավանդության համաձայն՝ Սանատրուկ արքայի դուստրը՝ Սանդուխտը, Քրիստոսի հավատի համար նահատակված առաջին կինն է[1]: Ըստ «Վկայաբանության»՝ Սանդուխտն ավետարանի լույսն ընկալել է Թադեոս առաքյալից. «...եկն (արքայադուստրը) ի գիշերի առ Թադէոս և լուաւ ի նմանէ զքարոզութիւն աւետարանին, և հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ...»[2]: Իմանալով նրա՝ քրիստոնեություն ընդունելու մասին՝ Սանատրուկը դստերը դարձի բերելու ապարդյուն փորձերից հետո հրամայում է սպանել նրան, «քանզի ասէր թէ նա մոլորեցուցանէ զամենեսեան. և եկեալ կալան զնա և տարան ՚ի տեղի կատարմանն... Եւ մի ոմն ի զօրականացն հարեալ զսուրն ՚ի սիրտ կուսին Սանդխտոյ, և նա անդէն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած: Յայնժամ բուրեաց հոտ անուշութեան, և ծագեաց լոյս ի յերկնից իբրեւ զսիւն հրոյ և եկաց ի վերայ մարմնոյն Սանդխտոյ զերիս տիւս և զերիս գիշերս ...և առեալ զմարմին սուրբ կուսին եդ ի նոյն տեղւոջն, և արար զգերեզման յայտնի լոյս արգել շնորհօք»[3]: Կույս Սանդուխտը մարտիրոսվում է ճանապարհի մոտ՝ «...և մարտիրոսանալ դստերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհն»[4]:

Նահատակությունը տեղի է ունեցել Քաղոց (դեկտեմբեր) ամսի 7-ին. «Կատարեցաւ սուրբ առաքեալն Թադէոս ՚ի քաղոց ամսոյ երեքտասան, յիններորդ ժամու, և սուրբն Սանդուխտ յեւթն նորին ամսոյն...»[5]: Սրբուհու նահատակված վայրում հետագայում կառուցվել է մատուռ, որի մասին առաջին վկայությունը գտնում ենք «Գիւտ Նշխարաց»-ում՝ Կիրակոս Միայնակյացի տեսիլքում[6]:

Հայտնի է, որ 1650-ական թվականների սկզբին վանահայր Մկրտիչ եպիսկոպոսն Ամենայն Հայոց Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով ձեռնամուխ է լինում Թադեոս առաքյալի վանքի վերաշինման աշխատանքներին: Ի թիվս շինարարական այլ աշխատանքների՝ սրբուհու հիշատակին նրա գերեզմանի տեղում նաև կառուցում է մի մատուռ. «...Մկրտիչ եպիսկոպոս... շինեաց զդարպաս ( եւ մա)տուռն ի տեղի նահատակութեան առաքելոյն եւ սրբուհւոյն Սանդխտոյ կուսին, որոց ձեռնտու և գործակալք էին տէր Դանիէլ եւ տէր Պետրոս բազում աշխատութեամբ ի թվականիս Հայոց ՌՃ (1651) հրամանաւ երիցս երանեալ և ճգնազգեաց Փիլիպոս կաթողիկոսին»[7]: Կամ «...շինեցին զվկայարան սրբուհւոյ կուսին Սանդխտոյ»[8]: Սրանից հետևում է, որ Սբ. Սանդուխտի ներկայիս մատուռը կառուցվել է 1653 թ. կամ դրանից հետո հավանաբար հին շինության տեղում:

*Նկարագրություն.* 1894 թ. մատուռի մասին նշվել է. «Մատրան մեծութիւնը. լայնութիւնը՝ 4 արշին 4 վերշոկ ...Սեղանի երկարութիւնը՝ 2 արշ. 12 վ. լայնությունը 1 սաժէն 4 վ.: Մի լուսամուտ արևելքից, մինը՝ արևմուտքից, 2 պահարան-սեղան, 2 էլ՝ դասերումը, բարձրութիւնը 2 սաժ. 10 վ.: Դրսից երկարութիւնը 10 արշ., 9 վ., լայնութիւնը 2 ս. 14 վ.: Հիւսիսային դռան բարձրութիւնը 1 ար. 5 վ., լայնութիւնը՝ 12 վ.»[9]:

---

1 Սանդուխտ կույսի մասին մատենագրությունը տե՛ս Թադեոս առաքյալի քարոզչության վերաբերյալ ծանոթագրություններում:

2 Սոփերք, Ը, էջ 61:

3 Սոփերք, Ը, էջ 69-70: Տե՛ս նաև **Ուխտանէս եպիսկոպոս**, էջ 54 («Սա սպան զսուրբ առաքեալն Թադէոս և զդուստր իւր Սանդուխտ, և զայլս յարանց և ի կանանց. որոց անուանք՝ Զեմէնդոս, և Զաքարէ, և Զարմանդուխտ, և այլք բազումք՝ որք հաւատացին յաստուած և մարտիրոսացան»):

4 **Մովսէս Խորենացի**, էջ 157:

5 Սոփերք, Ը, էջ 58: Ի դեպ, նույն աշխատության «Պատմութիւն Թադէոսի Առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին» բաժնում հիշյալ դեպքի կատարման ժամանակը տրված է հռոմեական թվականով դեկտեմբերին. «Կատարեցաւ սուրբն Սանդուխտ ի դեկտեմբերի հնգետասան. և յետ ութ աւուր զսուրբ առաքեալն Թադէոս գլխատեցին» (Սոփերք, Ը, էջ 75: Տե՛ս նաև «Հասկ», 1969, էջ 233):

6 Սոփերք, Ը, էջ 91-92: Կիրակոս Միայնակյացի տեսիլքի մասին տե՛ս սույն աշխ., էջ 34:

7 Մատենադարան, ձեռ. 340, թ. 123:

8 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 283: Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. 8233, թ. 110ա: Վ. վրդ. Տեմիրճյանը, ցավոք, անտեսելով դեպքերին ժամանակակից պատմիչի խիստ ուշագրավ այս տեղեկությունը, Սբ. Սանդուխտ կույսի մատուռը թվագրել է ԺԶ դ. (տե՛ս **նրա**՝ Ցուցակ Ատրպատականի Հայոց թեմի եկեղեցիների ու վանքերի, «Հասկ», 1967, ապրիլ-մայիս (հոդվածին կից ցուցակ):

9 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 66:








**Սբ. Սանդուխտ մատուռի տեսքը հյուսիս-արևմուտքից, արևմուտքից, հյուսիսից, ներքին տեսքը դեպի հարավ և հատվածներ խորանից (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**

Ի դարասկզբին հուշարձանն այցելուին ներկայացել է հետևյալ կերպ. «Վանքից հիւսիս՝ մօտիկ՝ երեք հին մատուռներ կան կիսափլած վիճակում. դրանց մէջ ոչինչ չես գտնում, իսկ դեպի հարաւ, մի քառորդ ժամ հեռու, դաշտի միջից ցցուած մի բլրի վրայ շինուած է սուրբ Սանդուխտի մատուռը. այդտեղ էլ ոչինչ չը կայ»[10]: Մի քանի ամիս անց մեկ այլ ականատես գրել է. «Վանքի առաջ, ընդարձակ

10 «Մուրճ», 1903, № 4 , էջ 146:





**Սբ. Սանդուխտ մատուռը 1992 թ. կատարված կամայական վերականգնումից հետո (միանավ հորինվածքին հավելվել է նորաքուխ գմբեթ) և հավելվածը քանդելուց հետո (լուսանկարները՝ Արմեն Հախնազարյանի)**

դաշտի մէջ, մի ցածր բլրի վրայ երևում է ս. Սանդուխտ կոյսի մատուռը: Փոքր և անպաճոյճ է այդ մատուռը»[11]:

*Վերականգնման աշխատանքներ.* 1991 թ. «Մշակույթի ժառանգություն» («Միրասե Ֆարհանգի») կազմակերպությունը սկսում է Սբ. Սանդուխտ մատուռի վերականգնման աշխատանքները (մատուռը նորոգվում է մեր նախագծով և մեկենասությամբ՝ ի հիշատակ հորս՝ Հովհաննես Հախնազարյանի):

Նույն թվականին էլ վերաշարվում են հուշարձանի՝ դեպի դուրս թեքված և ամեն ժամ փլուզման ենթակա պատերը: Սակայն վերահաս ցրտերի պատճառով ծածկի աշխատանքները հետաձգվում են մինչև հաջորդ գարուն:

Հաջորդ տարի վերսկսված աշխատանքների արդյունքում կառույցն ամբողջանում է, սակայն կատարվում է կոպիտ սխալ. մատուռի երկթեք ծածկը փոխարինվում է կառույցին բոլորովին անհարիր ձվաձև գմբեթով (հեղինակ՝ Վ. Առաքելյան): Տարիների գործադրած ջանքերից ու բազմաթիվ քննարկումներից հետո, ինչպես նաև ունենալով Հայաստանի հուշարձանների պահպանության վարչության նամակ-եզրակացությունը («Վերլուծության արդյունքները բացառում են հուշարձանը գմբեթավոր եղած լինելու վարկածները»), «Մշակույթի ժառանգություն» կազմակերպության պատասխանատուները (պետ՝ պրն. Ա. Շիրազի) 1997 թ. ամռանը որոշում են շտկել կատարված սխալը: Նույն թվականին էլ Սբ. Սանդուխտ մատուռի տարօրինակ գմբեթը քանդվում է, սակայն առ այսօր մատուռն առանց ծածկի է[12]:

*Ճարտարապետություն.* միանավ, թաղածածկ, արտաքուստ ուղղանկյուն հորինվածքով կառույց է: Արտաքին չափերն են՝ 7,53 x 4,85 մ: Զույգ որմնասյուների և դրանք իրար կապող կամարի միջոցով երկայնական նավը բաժանված է երկու հատվածի՝ մուտքի առջև կարճ նախասրահի և զրեթե քառակուսուն մոտ սրահի: Պատերը պահպանվել են թաղի քիվի նիշի բարձրությամբ[13]: Տանիքը եղել է երկթեք[14]:




**Սբ. Սանդուխտ մատուռի հատակագիծը (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**

Միակ մուտքը բացված է հյուսիս-արևմուտքից և նայում է Թադեոս առաքյալի վանքին, կարծես թե հատուկ ընդգծելու համար երկու սրբերի նախատակության, հետևաբար նաև սրբատեղիների միջև եղած կապը: Երկու լուսամուտներ կան արևելյան և արևմտյան ճակատների կենտրոններում: Երկուական որմնախորշեր կան խորանում և սրահում:

11 «Մուրճ», 1903, № 8, էջ 138: Ի դարասկզբին հայերի համար նվիրական այս մատուռը քրդերը վերածել էին ոչխարների փարախի (**Ֆրանգեան Ե.**, նշվ. հոդվ., «Տարազ», 1904, № 15, էջ 145):

12 Մատուռը զուրկ է մնացել ծածկից, հակառակ նրան, որ թե՛ երկթեք տանիքի վերականգնման նախագիծն էր հաստատված, և թե՛ մատուռը վերականգնելու դրամն էր հանձնված «Մշակույթի ժառանգությանը»...

13 1968 թ., երբ չափագրում էինք վանքն ու կից մատուռները, Սբ. Սանդուխտ մատուռի ծածկի մեծ մասն արդեն փլված էր: Պահպանված էին միայն խորանի հատվածը և կիսակլոր կամարածածկ թաղից մի փոքր մասը: Տեղացի խաշնարած քրդերը մատուռն անվանում են Հովվի եկեղեցի (Չոբան քիլիսա) և վկայում են, որ ծածկը փլվել է կայծակի հարվածից: Ուշագրավ է, որ մատուռն իր հատակագծով որոշ ընդհանրություն ունի վանքի հին եկեղեցու հետ:

14 Ի դեպ, 1905 թ. ականատեսը վկայել է, որ «Արտաքուստ այն հիշեցնում է մահմեդական սովորական սրբատեղի, քառանկյուն է և ոչ մեծ կլոր գմբեթով...» (տե՛ս **Минорский В.**, Древности Маку, с. 10 (բնագրում՝ “Видом она напоминает обычный мусульманский зиярет, четырехугольный и с небольшим круглым куполом...”).




**Սբ. Սանդուխտ մատուռի հարավային և արևմտյան ճակատները և կտրվածքները դեպի հյուսիս և արևելք (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**

Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Ներքուստ եղել է սվաղված: Սվաղի մնացորդները նկատվում են հարավային պատի վրա և խորանում: Բացի որոշ քարերի (արտաքուստ) փորագրված պարզ խաչերից (դրանց հեղինակները, ամենայն հավանականությամբ, ուխտավորներ են)՝ կառույցի հարդարանքում այլ մանրամասներ տեղ չեն գտել: Չկան նաև վիմագրեր[15]:

### Սբ. Նահատակ մատուռ

*Տեղադրություն.* գտնվում է Թադեոս առաքյալի վանքից հյուսիս՝ Սբ. Աստվածածին մատուռից ոչ հեռու:

*Պատմություն.* Քրիստոսի 12 առաքյալներից Թադեոսի նահատակության վերաբերյալ ավանդությունը փոխանցվել է սերնդեսերունդ, և այսօր էլ նրա նահատակության վայրը ծառայում է որպես ուխտատեղի բազմահազար հավատացյալների համար:

Ավանդության համաձայն՝ իր քարոզչական գործունեության ընթացքում Թադեոս առաքյալն աշակերտների հետ գալիս է Արտազ գավառ՝ Շավարշան գյուղաքաղաք[16], ուր ճշմարիտ հավատի է բերում բազմաթիվ մարդկանց, այդ թվում նաև արքայադուստր Սանդուխտին: Սակայն շուտով հայոց Սանատրուկ թագավորի հրամանով նահատակվում է. «...և թագաւորն բարկացեալ հրամայեաց փութով սպանանել զառաքեալն ...Եւ հասեալ բազում զօրականք իշխանօքն հանդերձ, և կալեալ զսուրբ առաքեալն՝ հանին ’ի փոքր ձորակէն սակաւ մի ’ի բարձրավանդակ տեղի մի ’ի վիմամէջս...Եւ կատարեցաւ ’ի նմին ժամու սրով... Եւ ’ի կատարել սրբոյն բուրեաց հոտ անուշութեան, և ձայն ահեղ սաստկութեան, և ծագեաց լոյս յերկնից ’ի վերայ սրբոյն, և եղեւ շարժումն մեծ, և պատառեալ վիմին ընկալաւ զսուրբ մարմին առաքելոյն զօրութեամբն Աստուծոյ...»[17]:

Հիշյալ ժայռին կից գտնվող նահատակավայրում, որ դարեր շարունակ ծառայել է որպես ուխտավայր, 1650-ական թթ.՝ Մկրտիչ եպիսկոպոսի վանահայրության օրոք, կառուցվում է Սբ. Նահատակ եկեղեցին. «...կատարումն եղև (վանքի ժամատան) ի ՌՃԲ թուին: ...Ապա զՆահատակ անուանեալ եկեղեցին, որ է տեղի նահատակութեան սրբոյ առաքելոյն Թադէոսի»[18]: Կամ «...Մկրտիչ եպիսկոպոս, որ նորոգեաց զեկեղեցի սուրբ Առա(քելոյն) Թադէոսի ի հիմանէ եւ շինեաց զդարպաս (եւ մա)տուռն ի տեղի նահատակութեան առաքելոյն եւ սրբուհւոյն Սանդխտոյ կուսին ...ի թվականիս Հայոց ՌՃ (1651) հրամանաւ երիցս երանեալ և ճգնազգեաց Փիլիպոս կաթողիկոսին»[19]:

15 Սբ. Սանդուխտ մատուռից որևէ արձանագրություն չունի նաև 1894 թ. տեղում ուսումնասիրություններ կատարած Խ. վրդ. Դադյանը:

16 Սոփերք, Ը, էջ 13:

17 Սոփերք, Ը, էջ 54, 56-57, 74:

18 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 283: Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. 8233, թ. 110ա:

19 Մատենադարան, ձեռ. 340, թ. 122:







**Սբ. Նահատակ մատուռի տեսքը հարավ-արևելքից, արևելքից և գմբեթարդը**

Սբ. Նահատակ մատուռը հետագայում ենթարկվել է նորոգումների: Դրանցից մեկը կատարվել է 1711 թ. ուստա Հովսեփի ձեռքով *(տե՛ս սույն աշխ., էջ 182, արձ. Դ)։*

*Նկարագրություն.* մատուռի առաջին նկարագրությունը տրվել է 1894 թ. «Սոյն զոյգ մատրան մէջ տեղը գտնվում է այն ժայռ քարը, որտեղ նահատակուել է սուրբ Առաքեալը: Ժայռի մեծութ. 18 քայլ երկարութ., 3 քայլ լայն. սաժէն ու կէս բարձրութիւն: ...Սոյն մատռան վարվերը մէջտեղ սեղանի կողից մինչև ի արևմտեան պատը 4 ար., 6 վ.: Սեղանի սրահ (՞) միջտեղը 2 արշ., 12 վ., լայնութ. 4 ար. 9 վ.: Երկու լուսամուտ արևելք և արևմուտքից, 2 պահեստ. սեղան 2 էլ հիւսիս-հարաւի պատերում, բեմ քարով, դռան մեծութիւն 13 վ. լայն, իսկ երկարութ. 1 ար., 7 վ. ...: Մատրան մեծութիւնը դրսից 3 ս. 8 վ., հարաւային պատի լայնութ. 7 ար. 2 վ.»[20]:

*Ճարտարապետություն.* Թադեոս առաքյալի վանքի շրջապատում գտնվող հինգ մատուռներից ամենամեծն է: Արտաքուստ ուղղանկյուն (արտաքին չափերն են՝ 11,40 x 7,0 մ), ներսից միանավ կեղծ-գմբեթավոր կառույց է, որի ծածկը կենտրոնական մասում պահում է մեկ զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարը: Երկարությամբ ներքին տարածությունը բաժանված է գրեթե իրար հավասար երեք մասի: Կենտրոնում բոլորաձև կեղծ

20 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 32, 33:




**Սբ. Նահատակ մատուռի հատակագիծը, կտրվածքը դեպի հարավ, հարավային և արևելյան ճակատները, հարավային ճակատի արևմտյան անկյան մոտից բացված միակ մուտքը և նույն ճակատից բացված լուսամուտը՝ 1711 թ. նվիրատվական արձանագրությամբ**



**Սբ. Նահատակ մատուռ. հատվածներ ներքին ծավալներից, խաչքար (997 թ.) և տապանաքար (1315 թ.)՝ ագուցված մատուռի արևելյան ճակատին (լուսանկարներն ու չափագրությունները՝ Արմեն Հախնազարյանի)**

գմբեթն է, որից արևմուտք ընկած հատվածը թաղակապ է, իսկ արևելյան կողմում գմբեթատակից սկսվող խոր ընկած խորանն է: Գմբեթատակ քառակուսուց անցումը դեպի կեղծ գմբեթ իրականացված է առագաստներով:

Արևմտյան պատի հարավային անկյունը կառուցված է նախատակության ժայռի արևելյան եզրի վրա: Մուտքը հարավարևմտյան անկյունից է: Բացի հյուսիսայինից՝ մյուս պատերին բացված են մեկական փոքր լուսամուտներ:

Մատուռի արևմտյան պատի ներքևում՝ ժայռին կից, բացված է լայն ու ուղղանկյուն անցք:

Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Անկյուններում օգտագործվել են կիսամշակ քարեր, ինչպես նաև խաչքար ու տապանաքարեր: Ներքուստ սվաղված է:

Ա Խաչքար (սև չեչաքար, չափերը՝ 142 սմ բարձրություն (հաշված պատվանդանից) և 67 սմ լայնություն՝ 2 արշ. x 15 վերշ.), ագուցված է մատուռի արևելյան պատի հարավային կողմում.

*Ն եւ ԽԶ (997):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 39 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Դաղյանը սխալմամբ վերծանել է ՆԿ (1011):

Բ Տապանաքար (չափերը՝ 133 x 49 x 18 սմ՝ 1 արշ. 14 վերշ. x 11 վերշ. x 4 վերշ.)՝ ագուցված մատուռի արևմտյան պատի հյուսիսարևմտյան անկյունում.

*Այս է հանգիստ Թաթէրին: Թվ(ին) ՉԿԳ (1314):*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 39 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): **Գևոնյան Գ.**, Անտիպ նյութեր:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ըստ Գ. Գևոնյանի՝ «*Այս է հանգիստ Թա[դե[ոսի, ի թվին] ՉԿԴ (1315)*»:

Գ Տապանաքար (սև չեչաքար, չափերը՝ 133 x 49 x 18 սմ՝ 1 արշ. 14 վերշ. x 11 վերշ. x 4 վերշ.)՝ ագուցված մատուռի արևելյան պատի հյուսիսարևելյան անկյունում.

*Այս է հանգիստ Նէքայուչի(ն): Ի թվ(ին) ՉԿԴ (1315):*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 39 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): **Գևոնյան Գ.**, Անտիպ նյութեր:

Հրատ. առաջին անգամ:

Դ Խաչքարանդակ մատուռի հարավային ճակատին՝ լուսամուտի տակ: Չափերն են՝ 53 x 44,5 սմ (12 x 10 վերշ.): Արձանագրությունը՝ 5 տող.

*Թվ(ին) ՌՃԿ (1711): | յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չ(ս) | ուստա Յովսէփին, | ով որ կ(ա)րդ(ա)ք ող(ո)րմի | ասաց(է)ք նմայ:*



Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 34 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): **Գևոնյան Գ.**, Անտիպ նյութեր:

Հրատ. **Haghnazarian A.**, էջ 209, արձ. դ 39:

Ե Մատուռի հարավային դռնագլխի քարին (չափերն են՝ 80 x 56,5 սմ կամ 1 արշ. 2 վերշ. x 12,5 վերշ.), 58 սմ (13 վերշ.) երկարությամբ տողերով.

*Յիշատակ է Ս(ուր)բ Նա(հա)տակ տ(է)ր | Զաքարին եւ հօրն տ(է)ր Կարապետ|ին եւ մօրն Գարանին, որդոյն | Մուրատին եւ ղ{ր}ստեբանց Թա|փօնին եւ Զանօին եւ այլ ամ|ենեցուն: Թվին ՌՃՀ (1721):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 34 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): **Գևոնյան Գ.**, Անտիպ նյութեր, էջ 10:

Հրատ. **Միհնասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 18: **Haghnazarian A.**, էջ 209, արձ. № 38:

Զ Արձանագրություն, մատուռի սրբատաշ անկյունաքարերից մեկին՝ 2 տող.

*Ա(ստուա)ծ ողորմի | Թ...ատ(ի)ն:*

Հրատ. առաջին անգամ:

## Սբ. Աստվածածին կամ Նախատակության տեղի փոքր մատուռ

*Տեղադրություն.* ավերակները գտնվում են վանքից հյուսիս՝ Սբ. Նախատակ մատուռից մոտ 40 մ հարավ-արևմուտք:

*Նկարագրություն.* 1894 թ. մատուռի վերաբերմամբ նշվել է. «Գլուխը բաց Ա(ստուա)ծածին կամ նախատակութեան տեղի փոքրիկ մատրան նկարագիրը: Հարաւային պատի երկարութիւնը՝ 7 արշին, լայնութիւնը՝ 2 արշ., 8 վերշ.: Սոյն մատրան արեւմտեան քարէ դռան մեծութիւնը՝ բարձր. 1 ար., 7 վ., լայնութիւն 13 վ., հաստութիւն 2 վերշոկ: Մեծութ. մատրան մէջտեղ 5 ար. 4 վ., լայնութ. 4 ար. 8 վեր.: Դռնատեղի մեծի լայնութ. 12 վ., բարձր. 1 ար. 7 վ.»[21]:




**Սբ. Աստվածածին կամ Նախատակության տեղի փոքր մատուռի հատակագիծն ու հարավային ճակատը (չափ.՝ ճարտ. դր. Արմեն Ղախնազարյանի)**

*Ճարտարապետություն.* ավերված է, պահպանվել են միայն հատակագիծը հուշող պատերի ստորին մասերը: Ունեցել է արտաքինից գրեթե քառակուսի (4,99 x 4,63 մ) հատակագիծ, միանավ, թաղակապ հորինվածք, կիսաշրջան խորան: Մուտքը բացված է եղել արևմուտքից: Կառուցվել է անմշակ քարով: Սրբատաշ են միայն անկյունաքարերը:

21 **Ղաղեան Խ.,** Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց, 1894, անտիպ (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 32):





**Սբ. Աստվածածին կամ Նախատակության տեղի փոքր մատուռի տեսքը հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Արմեն Ղախնազարյանի)**

Քարակույտերի մեջ ընկած են 1 մ բարձրությամբ և 12 սմ հաստությամբ քարակերտ (միակտոր քարից, խաչաքանդակով) դուռը[22] և մուտքի ճակատակալ քարը:

22 Միակտոր քարե դռներ ունեն նաև Հայաստանի Հանրապետությունում գտնվող որոշ հուշարձաններ, մասնավորապես Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի (նախկին Վարդենիսի շրջանում) հյուսիսարևելյան եզրին՝ Քարե դուռ (Դաշ կափու) անունն ստացած ամրոցի հարավարևմտյան կողմում կառուցված Սբ. Աստվածածին և Սբ. Սարգիս մատուռները: Սրանք կիսագետնափոր շինություններ են և մասնագետների կարծիքով եղել են վերաիմաստավորված նախաքրիստոնեական սրբատեղիներ (տե՛ս **Միքայելյան Գ.,** Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968, էջ 42): Պահպանված քարե դուռ ունի նաև Արագածոտնի մարզի Փարպի գյուղի Ծիրանավոր եկեղեցին, Վանի թագավորության շրջանի (ուրարտական) դամբարաններից մի քանիսը (մանրամասն տե՛ս **Հմայակյան Ս., Սանամյան Հովի.,** Ուրարտական պաշտամունքային կառույցների և քրիստոնեական սրբավայրերի առնչությունների շուրջ, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 222-229):

*Վիմագրեր.* հայտնի է միայն մեկը, որն էլ ներկայացնում ենք ստորև.

Տապանաքար, ագուցված է եղել մատուռի հյուսիսարևելյան անկյունում.

*Այս է հանգիստ Ծերին, թ(վին) ՉԷ (1258):*

Գրակ. ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 32 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց): **Գևոնյան Գ.**, Անտիպ նյութեր, էջ 3:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տապանաքարը պահպանված չէ:



## Սբ. Աստվածածին մատուռ-եկեղեցի

*Տեղադրություն.* գտնվում է Թադեոս առաքյալի վանքից հյուսիս՝ Սբ. Նահատակ մատուռից մոտ 100 մ հարավ-արևելք՝ բլրի գագաթին:

*Հիմնադրում.* կառուցվել է 1766 թ. բայազետցի Մուրադի մեկենասությամբ:

*Նկարագրություն.* մատուռի առաջին հետազոտող (1894 թ.) Խաչիկ վրդ. Դաղյանն այն անվանել է «Գլուխը ծածկած Սբ. Աստվածածին մեծ մատուռ» և նկարագրել է հետևյալ կերպ. «Սոյն մատռան վարվերը մէջտեղ սեղանի կողից մինչև ի արևմտեան պատը 4 ար., 6 վ.: Սեղանի սրահ (?) մէջտեղը 2 արշ.12 վ., լայնութ. 4 ար. 9 վ.: Երկու լուսամուտ՝ արևելք և արևմուտքից, 2 պահեստ. սեղան, 2 էլ հիւսիս-հարաւի պատերում, բեմ քարով, դռան մեծութիւն 13 վ. լայն., իսկ երկարութ. 1 ար., 7 վ.: ...Մատ-












**Սբ. Աստվածածին մատուռ-եկեղեցու տեսքը հարավ-արևելքից, արևելքից, հարավից, հատակագիծը, կտրվածք դեպի հյուսիս և արևմտյան ճակատը (լուսանկարներն ու չափագրությունները՝ Արմեն Հախնազարյանի)**



**Սբ. Աստվածածին մատուռ-եկեղեցու շինարարական արձանագրությունը (1766 թ.) և գրչանկարը, տապանաքար (1813 թ.) (լուսանկարները՝ Արմեն Հախնազարյանի)**

րան մեծութիւնը դրսից 3 ս. 8 վ., հարաւային պատի լայնութ. 7 ար., 2 վ.»[23]:

*Ճարտարապետություն.* ճեղքած անմշակ քարով ու կրաշաղախով կառուցված մատուռն ունի միանավ թաղակապ հորինվածք: Արտաքին չափերն են՝ 6,78 x 5,10 մ: Կորանկյուն սեղանաձև խորանն ունի երկու խորշ: Եվս երկու խորշեր կան մատուռի հարավային և հյուսիսային պատերին: Միակ մուտքն արևմուտքից է, որի բարավորին եղել է շինարարական արձանագրություն: Լուսամուտները երկուսն են՝ բացված արևելյան և արևմտյան ճակատներում: Կառույցի անկյունաքարերը սրբատաշ են ու տարաչափ. մի քանիսի վրա նկատվում են պարզ խաչքանդակներ: Խաչեր են պատկերված նաև մուտքի աջ կողմում գտնվող տապանաքարի վրա:

*Վիմագրեր.* մատուռի յոթտողանի շինարարական արձանագրությունը (35,5 x 45,5 սմ կամ 8 x 10 վերշ.), որ Խաչիկ վրդ. Դաղյանը տեսել էր տեղում, 1988 թ. գանձախույզների ձեռքով տեղահանվել է և ներկայումս ընկած է քարակույտերի մեջ: Դրա հետևանքով վիմագիրը վնասվել է և մասամբ դարձել անընթեռնելի.

*Ի յառաջնորդութեան տ(եառ)ն Եսայեա վ(ա)րդ(ա)պ(ե)տին շ(ի)նեցաւ ս(ուր)բ Ա(ստուա)ծածին եկ(ե)ղ(ե)ցիս յիշ(ա)տ(ա)կ Բայ(ա)զ(ի)տցի Մուրատին եւ իւր նախնեացն՝ Տ(է)ր Կարապետին, Տ(է)ր Զաք(ար)ին, Գա(յա)նին, հօրն Մինասին, Թափօնին, ...եղբարցն Զաքօին, Յակօյին, թվին ՌՄԺԵ (1766), յուլիսի Բ (2) ին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խ. Դաղյանն այս արձանագրությունն ընդօրինակել է 1894 թ. (տե՛ս ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ.108, թ. 34):

Տարընթերցում. ընդօրինակության մեջ առկա են որոշ վրիպումներ: Մասնավորապես՝ «Գայանին, Մինասին, Թափօնին, Զաքօյին և Յակօյին» անձնանունները Դաղյանն ընթերցել է «Գանին, հօրն իւր Նաէթափոյ (անորոշ), Զաքարին և Յակոբին», իսկ ս(ուր)բ բառը պարզապես բաց է թողել: Թվականն էլ սխալմամբ ընթերցվել է ՌՄՁԵ՝ 1836 (տե՛ս նշվ. գործը, թ. 33): Շինության տարեթվի մեր ընթերցման հավելյալ հավաստիքն է Եսայի առաջնորդի (աթոռակալել է մինչև 1780 թ.) անվան հիշատակությունը:

Տապանաքար, օրորոցաձև, գեղաքանդակ, մատուռի հարավային պատի մոտ (արտաքուստ), հարավային և արևելյան երեսներին ունեցել է 3 տող.

*Այս է տապան սրբազան Առ(ա)քել(ո)յն Թաղ(է)ոսի | Ս(ուր)բ տ(ա)ճարի ի հիմ(ա)նէ ն(ո)րոգող առ(ա)ջն(ո)րդ Սիմէօն | արքեպ(ի)սկ(ոպո)սի քոյր Սանդր(ւ)խդին, ի Ս(ուր)բ Էջմ(իա)ծնա եկն վ(ա)խճ(անե)ց(ա)ւ, | ի տեսութի(ւ)ն եղ|բօրն, աստ վ(ա)խճ(անե)ց(ա)ւ: | ՌՄԿԲ (1813)ին:*

23 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 108, թ. 33 (**Դաղեան Խաչիկ** վարդապետ, Տեղեկագիր սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանուց):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 17: **Haghnazarian A.**, էջ 209, արձ. № 37:

Ծանոթ. Վիմագիրն առաջին անգամ վերծանել է Խ. Դադյանը (**Դադեան Խ.**, ձեռագիր, թ. 33): Հարկ է նշել, որ տապանաքարը ոչնչացրել են գանձախույզները 1990-ական թվականներին:

Այս արձանագրությունը թարգմանաբար ներկայացրել է Ժան-Միշել Թիերրին (**Thierry M.**, նշվ. աշխ., էջ 497):

Տարընթերցում. ընդօրինակությունն ունի որոշ տարընթերցումներ: Հարավային ճակատին՝ 3-րդ տողում, «վ(ա)խճ(անե)ց(ա)ւ»-ի փոխարեն ունի «վիմոջ», արևելյան ճակատին՝ 2-րդ տողում՝ «ի տեսութիւն»-ի փոխարեն՝ «ի նեղութիւն»:

# ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆՔ

**Տեղադրություն.** ԺԲ-ԺԹ դդ. ամայացած, ապա ավերված լինելու պատճառով նրա ճշգրիտ վայրը մինչև 1968 թ. մոռացված էր[1]:

Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ Ծործորի վանքը նույն Թադեոս առաքյալի վանքն է[2]. «...հաւանական կը թուի թէ՝ Ս. Թադէի եւ Ծործորու վանքերը միեւնոյն վանքերն են: Գուցէ անոր եկեղեցիներէն մին նախապէս կոչուած է Ս. Աստուածածին եւ միւսը Ս. Թադէոս եւ կամ նախապէս թեմը Թադէոսի վիճակ եւ վանքը Ս. Աստուածածին անուանուած եւ ապա քանի որ առաջնորդարանը մէկ հատ էր, կնքուած է՝ Ս. Թադէոսի վանք անունով»[3]: Սակայն մյուսներն էլ հստակորեն առանձնացնում են մեկը մյուսից՝[4] գտնելով, որ այս նույնացումը հիմնավոր չէ, քանի որ նախ Ծործորի Սբ. Աստվածածին վանքը սկզբնաղբյուրներում տեղորոշվում է Արտազի (Սբ. Թադեոս առաքյալի) թեմում և երբեք չի նույնացվում եպիսկոպոսանիստ կենտրոնի հետ («...ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի ի վանս Ծործորու կոչեցեալ...»[5] և այլն), ապա այն գտնվում է Թադեոս առաքյալի վանքից շուրջ 12 կմ հեռու՝ Մակու քաղաքից 11,6 կմ հարավ, ծ. մ. 1758 բարձրության վրա, «Ակի ժայռոտ և դժուարակոխ»[6] (այսօր Աղի անվամբ հայտնի) ձորում: Եվ վերջապես Թադեոս առաքյալի վանքի հուշարձանախմբի մեջ մտնող և ոչ մի կառույց Տիրամոր անունը չի կրում և երբևէ չի կրել, մինչդեռ Ծործորի վանքը՝ իբրև գրչօջախ, հայկական ձեռագրերի հիշատակարաններում քանիցս վկայված է հենց Սբ. Աստվածածին անվամբ: Հարցի առնչությամբ գրվել է նաև. «Հայերի կողմից Զենգիմերա Ասպարածին (նաեւ Ասպարազին), իսկ տեղացի մահմեդականների կողմից Մայրամ-նանա կոչուած ...վանքը ...անտարակոյս նոյն այն վանական հաստատութիւնն է, որ յայտնի է միջնադարեան հայկական աղբիւրներում Ծործորի վանք անունով»[7]:

Ի դարասկզբին ականատեսը հետևյալ կերպ է նկարագրում հուշարձանը. «Բեբեջիկում՝ Զենգիմարի խոր և անանցանելի կիրճի անմիջապես մուտքի մոտ, որտեղից գետը դուրս է վազում Մակվի դաշտավայր (Մակու քաղաքից վերև), գտնվում են

1 **Haghnazarian A.**, նշվ. աշխ.: 1968 թ. Թադեոս առաքյալի վանքում «Երեկոյան՝ աշխատանքից հետո, երբ ավարտում էինք լավաշ հացից ու պանրից բաղկացած մեր «ընթրիքը» և զբաղվում օրվա չափագրությունները մոմի լույսի ներքո ուրվագծելով, երբեմն մեր սենյակ էր գալիս վանքի կոտորածից հրաշքով փրկված ծերունին՝ պահակ Վասիլը և ձեռքերը մոմին մոտեցնելով՝ պատմում ու պատմում էր անցյալից, շատ հաճախ անհասկանալի բարբառով: Նա էր, որ մի քանի անգամ խաչակնքելուց հետո խուսքի մեջ հիշեց «Նանա Մերյամ» (Մարիամ Աստվածածին) եկեղեցու անունը, որի գտնվելու վայրը ծանոթ էր նաև պահակ Նաղդալիին: Իմ հարցին, թե որտեղ է գտնվում, նրա միակ պատասխանն էր լինում.
– Էնտեղ,– ձեռքը երկարելով դեպի հյուսիս-արևմուտք:
Գարնանային մի վաղ առավոտ Նաղդալու ընկերակցությամբ ճամփա ընկանք դեպի «Նանա Մերյամ» սրբատեղին, որը, նրա ասելով, համարվում էր տեղի քուրդ ցեղերի կարևոր սրբավայրը: Ինձ թվում էր, որ մենք մեկ-երկու ժամից կկարողանանք վերադառնալ վանք: Երբեմն անձրևի, երբեմն էլ արևի ներքո անցնում էինք մինչև գոտկատեղ բարձրացած ծաղկունքի մեջ կորած դաշտերով, կտրում այդ եղանակին վարարած գետեր դարձած երբեմնի առվակները: Ժամեր անց հասանք հիշված վայրը: Հսկայական կիրճի բերանին իր ամբողջ վեհությամբ նստած էր իր համաչափությամբ գեղատեսիլ բնության հետ ներդաշնակ և քարակույտերով շրջապատված եկեղեցին: Մայրամուտ էր, հարկավոր էր արագ չափագրել, լուսանկարել և վերադառնալ վանք, որտեղ հասանք լուսնյակի լույսով՝ կեսգիշերին:
Երկու տարի հետո Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն պրոֆ. Լ. Խաչիկյանի շնորհիվ (նրա հետ հայրս նամակագրական կապ ուներ) պարզվեց, որ «գտնված» եկեղեցին նշանավոր Ծործորի Մարիամ Աստվածածին վանքն է: Ես պատկան նամակները փոխանցեցի Թեհրանի և Թավրիզի առաջնորդարաններին և Հուշարձանների վարչության տնօրեն դոկտ. Այաթոլլահ-զադե Շիրազիին»:

2 **Զարբհանալեան Գ.**, նշվ. աշխ., Վենետիկ, 1878, էջ 757: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Յուշիկք հայրենեաց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 472: Նույնի՝ Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 102: «Բազմավէպ», 1906, էջ 257: **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., h. Ա, էջ 47:

3 **Չամչեանց Մ.,** նշվ. աշխ., h. Գ, էջ 271: Տե՛ս նաև **Ինճիճեան Ղ.,** նշվ. աշխ., էջ 205: **Աճէմեան Հ.**, նշվ. աշխ., մասն I, էջ 28: **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 168-169:

4 **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 467-468:

5 **Ալիշան Ղ.,** Հայապատում, h. Գ, , Վենետիկ, 1901, էջ 85:

6 **Թօխմախեան Ա.**, Մասիս լեռների հարաւային ստորոտներ, մասն Ա, Թիֆլիս, 1882, էջ 34:

7 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 169:

8 **Минорский В.**, Древности Маку, с. 11-12 (բնագրում՝ “В Бебеджике у самого входа Зенгимар в глубокую и непроходимую щель, по которой река выбегает на макинскую долину (выше города Маку) находятся развалины часовни из тесаного камня, известной у мусульман под названием Марьям-нене, т.е. “Матерь Мария”).

սրբատաշ քարով կառուցված մատուռի ավերակները, որը մուսուլմանների շրջանում ծանոթ է Մարիամ-նենե, այսինքն՝ Մայր Մարիամ անվամբ»[8]:

Վանքի տեղադրության մասին նշվել է նաև. «Զենզեմարի գետաբերանին՝ խոր ձորում, կա մի վանք՝ Մարիամ-նանե (Մարիամ Աստվածածին) անվամբ, որն էլ նույն Ծործորի վանքն է»[9]:

**Անվան ստուգաբանություն.** Ծործոր նշանակում է նեղ ձորակ կամ լեռների մեջ անձրևներից առաջացած հեղեղատ[10]:

**Այլ անվանում.** տեղացի հայերը վանքն անվանել են Զենգիմերա Ասպարածին (Ասպարազին), իսկ քրդերին այն առ այսօր էլ հայտնի է Մայրամնանա դեյր անունով:

**Պատմություն.** Ծործորի վանքը միջնադարյան Հայաստանի և Արտազ գավառի կաթոլիկե հայերի մշակութային նշանավոր կենտրոններից էր:

Վանքի հիմնադրման վերաբերյալ ստույգ տեղեկություններ հայտնի չեն: Նկատի ունենալով, որ արդեն 1314 թ. Հովհաննես Երզնկացի-Ծործորեցին այստեղ ընդօրինակել է ձեռագիր Ժողովածու, ենթադրվել է, որ վանքը կառուցվել է ԺԴ դ. սկզբին (մինչև 1314 թ.)[11], Արտազի թեմի առաջնորդ և Թադեոս առաքյալի վանքի վանահայր Զաքարիա Ա եպիսկոպոսի կողմից (որն էլ մենաստանի անունով ստացել է Ծործորեցի մականունը), ծաղկում է ապրել նույն դարի առաջին կեսին և գոյատևել է մինչև ԺԷ դ. վերջերը: Սակայն հուշարձանի ճարտարապետական տվյալները (հատակագծային լուծումներ, պատերի ստորին շարվածքներում մեծ քարերի օգտագործում և այլն), խոսում են հօգուտ Ծործորի՝ ավելի վաղ կառուցված տեսակետի:

Ծործորի Սբ. Աստվածածին վանքի մասին մատենագրական ամենավաղ տեղեկությունը կապվում է հայ մշակույթի և եկեղեցու նշանավոր գործիչ Հովհաննես Երզնկացի Ծործորեցու անվան հետ[12]: 1314 թ. այստեղ ընդօրինակած Ժողովածուի հիշատակարանում նա իրեն անվանում է Ծործորեցի. «...զտարտամ գրիչս՝ զՅոհան, ծանօթ բանի և տեղեաւ Երզնկացի, իսկ այժմ Ծործորեցի»[13]:

1316 թ. Հովհ. Երզնկացին շարունակում և ավարտում է Ներսես Շնորհալու «Մեկնութիւն Մատթէի աւետարանի» ձեռագիր մատյանը «...բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս...»[14]: Վանքում հաստատվելու մասին գրվել է. «...Յովհաննէսս այլ Երզնկոյ լինելով եւ բնակելով ի վանս Ծործորի: Եւ սա անդ արարեալ է մեկնութիւն քերականի՝ յերկար եւ ճոխ բանիւք եւ պատմաբար նախադրութեամբ եօթն գլխաւք»[15]:

ԺԴ դարասկզբին Հովհաննես Ծործորեցին ձեռագրերից մեկի հիշատակարաններից մեկում նշում է. «...գրեալ ի դուռն Ծործորու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածինս...»[16]:

1316 թ. Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոսի հետ Աղանայի եկեղեցական ժողովին մասնակցում է նաև «...մեծ վարդապետ Յոհան Ծործորեցին»[17]:

1318 թ. Մխիթար գրիչը նշում է. «...բնակութիւնս Ծործորու վանք... եւ վարժապետ եւ ուսուցիչ Յոհաննէս...»[18]:

1321 թ. վանքում Հովհաննես Ծործորեցին «հրամանաւ պապին Հռոմայ» թարգմանում է Թովմա Աքվինացու «Յաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աշխատությունը, որն էլ 1325 թ. գրվում է Գլաձորում Թորոս գրչի կողմից. «...թարգմանեալ և գրեալ ի դուռն Ծործրու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, որոյ շնորհօք եղև կատարումն սորին»[19]:

Ծործորի վանքի վրա մեծ ազդեցություն են գործել կաթոլիկե հոգևորականները, որոնք ԺԴ դ. սկզբից քարոզչական եռանդուն գործունեություն էին ծավալում ոչ միայն Նախիջևանում, այլև Արտազում (ֆրա Պողիոս վարդապետ և ուրիշներ)[20]: Արտազում կաթոլիկեության տարածմանն են նպաստել նաև Հովհաննես Երզնկացի-Ծործորեցին և Արտազի թեմի առաջնորդ Զաքարիա Ա եպիսկոպոս Ծործորեցին:

Հետագայում վանքը հիշվում է միայն ԺԷ դ. 40-70-ական թվականներին կաթոլիկե վարդապետ ֆրա Գրիգոր Ծործորեցու գործունեության առիթով[21]: 1676 թ., երբ բարձրացվում է Նախիջևանի

9 **Asadollah Mousavi Makuei,** History of Maku, Tehran, 1997, p. 18 (պարսկերեն):

10 **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, h. 2, Երեւան, 1944, էջ 352:

11 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 144, 168: Ծործորի մասին տե՛ս նաև “Documenti di Architettura Armena”, vol. 20, Sorhul, pp. 94-95 (ըստ հրատարակիչների՝ եկեղեցին կառուցվել է Թ-Ժ դդ. և նշանավոր դարձել ԺԴ դ.):

12 Միջնադարյան այս նշանավոր գործչի գործունեության վերաբերյալ մանրամասն տե՛ս **Օրմանյան Մ.,** Ազգապատում, h. Բ, էջ 2098-2103: **Սրապյան Ա.**, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958: **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 173-204:

13 ԺԴ, էջ 111: 1318 թ. Գլաձորում ստեղծված Աստվածաշնչի հիշատակարանում նշվել է. «...զՅոհաննէս սպասաւոր բանի Երզնկայեցի, որ և Ծործորեցի...» (ԺԴ, էջ 146):

14 **Ալիշան Ղ.**, Հայապատում, h. Բ, էջ 512-513: Տե՛ս նաև ԺԴ, էջ 125: ԺԵԲ, էջ 410:

15 **Գրիգոր Կամախեցի**, էջ 401-402:

16 **Խաչերեան Լ.**, նշվ. աշխ., h. երկրորդ, էջ 121:

17 Նշվ. աշխ., էջ 126, 127:

18 Նշվ. աշխ., էջ 121:

19 ԺԴ, էջ 173-174: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, h. Բ, Երեւան, 2004, էջ 1268:

20 **Խաչիկյան Լ.,** նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 204-207:

21 **Ճեմճեմեան Ս.**, Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ, 2000, էջ 165-174, 212-214 (Արտազի և Նախիջևանի հայ կաթոլիկների մասին աշխատությունը հոդվածաշարի տեսքով Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբայահայրը նախապես հրատարակել է «Բազմավէպ» հանդեսի 1990-1996 թթ. համարներում): Տե՛ս նաև **Խաչիկյան Լ.,** նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 208:



**Ծործորի վանք. ընդհանուր տեսքն արևմուտքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**





**Դեպի Ծործորի վանք և ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**

հայ կաթոլիկների առաջնորդի ընտրության հարցը, ի նպաստ ֆրա Գրիգորի՝ գավառի հոգևոր, նաև դոմինիկյան ու ազգային գործիչների հետ Հռոմի Հավատասփյուռ ժողովին նամակներ են հղում Արտազի թեմի առաջնորդ Իսահակ Արդար Մակվեցին (1676 թ. ապրիլի 20-ին) և նրա օգնական Սարգիս Կաֆայեցին (1676 թ. ապրիլի 24-ին)[22]: Գրիգոր Ծործորեցին հայտնի է իր թարգմանություններով, տաղերով ու կրոնական երգերով:

1676 թ. վանքում գրվում է «Քարոզգիրք Գրիգորի Ծործորեցւոյ, ՌՌՀՁ փրկչական թուին»[23]:

1981 թ. եկեղեցու վերաբերյալ նշվել է. «Խարխլուած է գմբէթը ու փլած է ծածկերի մեծ մասը. համեմատաբար շատ լաւ են մնացել մուտքի տաշուած քարերը: Փլածքները ներսում ու դրսում ցրուած են, մուտքի վերեւում երկու խաչի քանդակներ կան, մէկը համարեա լրացած, միւսը՝ անաւարտ...»[24]:

22 **Ճեմճեմեան Ս.**, նշվ. աշխ., էջ 173:

23 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 54:

24 «Այրուբեն», 1981, № 1, էջ 17:





**Ծործորի վանք. եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Ղազարյանի, 1969 թ.)**



**Ծործորի վանք. եկեղեցու տեսքը հարավից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**



**Ծործորի վանք. եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**



**Ծործորի վանք. եկեղեցու տեսքն արևելքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**



**Ծործորի վանք. եկեղեցու տեսքն արևմուտքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**





**Խաչքարանդակներ Ծործորի վանքի եկեղեցու մուտքի բարավորին, արձանագրության մնացորդ և ներքին ծավալները դեպի արևելք**

**Ծործորի դպրոցը.** եղել է Արտազի հայկական իշխանության հոգևոր և մշակութային կենտրոն, գրչության հայտնի օջախ, ունեցել է բարձրագույն դպրոց: Այստեղ գործել են ժամանակի հայտնի մտավորականներ: Նրանցից Հովհաննես Երզնկացի-Ծործորեցու մասին դեռևս 1316 թ. վկայվել է. «...ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան...»[25]:

1310-1311 թթ. րաբունի Հովհաննես Ծործորեցին Գլաձորի համալսարանից փոխադրվել է Ծործորի վանք՝ դպրոցի ղեկավարությունը ստանձնելու և ուսումնակրթական աշխատանքները կազմակերպելու նպատակով[26]:

Այստեղ նա դասավանդել է քերականություն և ճարտասանություն[27]:

Հովհաննես Ծործորեցուց հետո դպրոցում դասավանդել են ֆրա Պոնդիոսը, Իսրայել րաբունին: Այնուհետև այս հռչակավոր կենտրոնի մասին տեղեկությունները նվազում են:

Ծործորի բարձրագույն դպրոցն ավարտած սաներից հայտնի է Իսրայել րաբունին (կոչվել է նաև Իսրայել հայ վարդապետ), որը հիշվում է «ֆռանգաց դաւանութիւն ընդունած 12 վարդապետների» թվում[28]: Դպրոցի դերն առանձնապես կարևորվել է կաթողիկե եկեղեցու նշանավոր գաղափարախոսների՝ Թովմա Աքվինացու, Նիկողայոս Լյուրացու,

25 **Ալիշան Ղ.**, Հայապատում, h. Բ, էջ 512-513: Տե՛ս նաև ԺԴ, էջ 125:

26 **Խաչերեան Լ.**, նշվ. աշխ., h. երկրորդ, էջ 119:

27 Dictionnaire universel, historique, critique, et bibliographique, t. VI, publiй par **Louis Mayeul Chaudon**, Paris, 1810, p. 410.

28 **Խաչիկյան Լ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1973, № 11, էջ 201-202:









Ծործորի վանքի եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք, արևելք, հյուսիսարևելյան առագաստը և խորանից բացված լուսամուտը







**Հատվածներ Ծործորի վանքի եկեղեցու ներքին հարդարանքից (խաչաքանդակներ, որմնանկարի մնացորդ և մկրտության ավազանի խորշը հյուսիսային որմի մեջ. լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**





**Ծործորի վանքի եկեղեցին նոր վայր փոխադրելու նպատակով քանդելու պահին (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1985 թ.)**

Բռնավենտուրայի և այլոց աշխատությունների հայերեն թարգմանություններով:

**Ճարտարապետություն.** միախորան, խաչաձև գմբեթավոր փոքր շինություն է՝ կառուցված սրճագույն սրբատաշ քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 7,20 x 5,20 մ: Եկեղեցու հյուսիսային և հարավային խաչաթևերը նկատելիորեն կարճ են մյուս երկու թևերից, որի պատճառով էլ հատակագծում ստացել է արևելք-արևմուտք առանցքով ձգված խաչի տեսք: Կիսաշրջան խորանն արևելյան թևից առանձնացված է մեկ կամարով: Արևելյան թևում կան հանդիպակաց ուղղանկյուն երկու խորշեր: Հյուսիսային թևի արևելակողմում գտնվում է մկրտության ավազանը: Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթին իրականացված է առագաստների միջոցով:

Արևմտյան խաչաթևում շքամուտքն է՝ առնված սլաքաձև կամարով ավարտվող շրջանակի մեջ: Դեպի ներս լայնացող լուսամուտները չորսն են՝ զետեղված բոլոր ճակատների առանցքներում (1-ական):

Անկյունային տումբաներից վեր գմբեթը սկսվում է արտաքուստ ութանիստ հիմքով և ավարտվում ավելի փոքր տրամագծով 16 նիստանի թմբուկով: Թմբուկն ունի առանցքային չորս լուսամուտ: Գմբեթը պսակված է հովհարաձև վեղարով:

Հուշարձանի հարդարանքն են կազմում մուտքի բարավորին և պատերին քանդակված խաչերը:

Ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է Է դարի խաչաձև, գմբեթավոր ավելի փոքր եկեղեցու հիմքերի վրա[29]:

**Վանքի տեղափոխման և վերականգնման աշխատանքները 1985-2001 թթ.** դեռևս 1985 թ., երբ Իրանի էներգետիկայի նախարարության («Վեզարաթե-Նիրու») որոշմամբ նախատեսված էր վանքի մերձակա տարածքում կառուցել ջրամբար, հայ ճարտարապետության այս գողտրիկ կոթողը փրկելու և ավելի բարձր տեղանքում վերաշարելու և վերակառուցելու նպատակով նշյալ թվականից իրականացվում են նախագիծ կազմելու աշխատանքներ[30]:

Սեպտեմբերի 17-ին հնչած առաջին ահազանգից հետո եկեղեցին փրկելու նպատակով Թեհրանում և Թավրիզում անմիջապես կազմակերպվում են ժողովներ, իսկ «Մշակութային ժառանգություն» կազմակերպության (տնօրեն՝ դ-ր Այաթոլլահ-զադե Շիրազի) ձեռնարկած միջոցների շնորհիվ հուշարձանի քանդման աշխատանքները հետաձգվում են: Սկսվում է հուշարձանը տեղափոխելու և նոր ու ապահով վայրում՝ Բարոն գյուղի մերձակա բարձրադիր լեռնալանջին, նույնությամբ վերակառուցելու անհապաղ գործընթացը[31]:

1987-1988 թթ. ընթացքում մեր կողմից կազմվում է եկեղեցու վերականգնման նախագիծը[32]: Կիսավեր եկեղեցու չափագրման հետ մեկտեղ անցկացվում են նաև պեղման աշխատանքներ, որոնց ընթացքում բացվում են միաբանության խցերի և կից այլ շինությունների պատերի հիմքեր, գերեզմաններ, հայտնաբերվում հին դրամներ, կենցաղային

29 **Аракелян В.**, Архитектура монастыря Цорцор, “Четвертый международный симпозиум по армянскому искусству: Тезисы докладов”, Ереван, 1985, с. 22.

30 Նույն տեղում:

31 «Ալիք», 1987, № 190, սեպտ. 6, էջ 3:



**Ծործորի վանքի եկեղեցու բեկորները փոխադրված նոր վայր (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1985 թ.)**

առարկաներ, գմբեթի հովհարաձև վեղարի քարեր և այլն[33]: Հայտնաբերված գտածոները պահվում են Ուրմիայի պետական թանգարանում[34]: Ի դեպ, մինչ այդ եկեղեցին ենթարկվել էր գանձախուզության. ջարդոտվել էին նշանագրերով քարերը, վնասվել խորանը և այլն[35]: «Միրասե Ֆարհանգի»-ի՝ Թավրիզից եկած հնագետներն ու Շիրազից եկած քարտաշ վարպետները 25 օրվա ընթացքում եկեղեցու արտաքին քարերը սև գույնով, իսկ ներքին քարերը կարմիր գույնով համարակալելուց հետո եկեղեցին քանդում են և տեղափոխում նախօրոք որոշված մոտ 600 մ հեռու գտնվող 110 մ բարձրություն ունեցող լեռնալանջ: Աշխատանքների պատասխանատուն էր Մոսլեմ Մոհամադ-զադեն, իսկ իրագործողը՝ Սադրեդդին Շիրդելը:

1987 թ. աշնանը՝ եկեղեցու գմբեթի վեղարի հովհարաձև առաջին քարը հայտնաբերելուց հետո, երբ Ծործորն ամբողջությամբ վերականգնելու հարց է բարձրացվում, կազմվում է եկեղեցու խաչաթևերի ծածկերի և գմբեթի վերականգնման նախա-

32 Ծործորի վանքն առաջին անգամ չափագրել եմ 1968 թ. մայիսին, իսկ նյութերը հրատարակել 1973 թ. (տե՛ս **Haghnazarian A.**,նշվ. աշխ.):

33 «Միրասե Ֆարհանգի» պարբերական, № 2, Էբրահիմե Հեյդարի, էջ 30 (պարսկերեն):

34 **Առաքելեան Վ.**, Ծործորի դպրոցն ու վանքը եւ նրա Ս. Աստուածածին եկեղեցու տեղափոխութիւնն ու վերակառուցումը, «Ալիք», 2000, Յաւելված, էջ 6:

35 Նույն տեղում:





**Ծործորի վանքի եկեղեցին նոր վայրում վերականգնելու ընթացքում (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 2000 թ.)**








Ծործորի վանքի եկեղեցին նոր վայրում վերականգնելու ընթացքում, հատակագիծն ու հյուսիսային ճակատը





**Ծործորի վանքի եկեղեցին նոր վայրում վերականգնելու ընթացքում (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 2000 թ.)**











**Ծործորի վանքի եկեղեցին նոր վայրում վերականգնելու ընթացքում (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 2000 թ.)**

գիծը: Այն հավանության է արժանանում Խորհրդային Հայաստանում՝ Հուշարձանների պահպանության վարչությունում (այժմ՝ գործակալություն): Գործին մեծապես աջակցում է վարչության վերականգնման բաժնի վարիչ Թելման Գևորգյանը:

1988 թ. հուլիսին Թեհրանի թեմի առաջնորդ Արտակ արք. Մանուկյանը կատարում է Ծործորի Սբ. Աստվածածին եկեղեցու հիմնարկեքը[36], որի մասին 1989 թ. նշում է. «Իսլամական Հանրապետությունն օժանդակում է հնագույն կոթողների վերականգնման գործին: Բերեմ Ձորձորի վանքի օրինակը, որը հռչակավոր Թադեի վանքից հեռու չէ: Այդ վայրում ամբարտակ պետք է կառուցվեր, և Ձորձորի շքեղ վանքը մնալու էր ջրի տակ: Իշխանություններն մեզ պատվիրեցին, որ քարերը մեկ-մեկ ցուցակագրենք և տեղափոխենք բարձունքի վրա: Անցյալ ամռանը ես նոր վայրում հիմնօրհնեք կատարեցի: Այժմ սքանչելի դիրքի վրա սկսված է վանքի կառուցումը: Տաճարը գմբեթ ևս կունենա»[37]:

Վերականգնման աշխատանքները սկսվում են 1989 թ. Վարուժան և Օժենիկ Առաքելյանների մեկենասությամբ: Հիմնարկեքից հետո Ծործորը տարիների ընթացքում հիմքից վերաշարվում ու վերականգնվում է նոր վայրում՝ նույն լեռնալանջին:

Վերականգնումը, սակայն, կատարվում է որոշ սխալներով, որոնք աչքի են ընկնում առաջին իսկ հայացքից[38]:

Վանքի վերականգնման աշխատանքներն ամբողջանում են 2001 թ.: Նույն թվականի հուլիսի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն կատարում է օծման հանդիսավոր արարողությունը[39]:

2005 թ. օգոստոսի վերջին ՀՀ պատմության և հուշարձանների պահպանության գործակալության աշխատակիցների հետ մեկտեղ քննարկվում է Ծործորի Սբ. Աստվածածին եկեղեցու տանիքի ծածկասալերի տեղադրման առկա անհարթությունների շտկման հարցը[40]:





Ծործորի վանքը վերականգնման աշխատանքների ավարտից հետո (լուս.՝ ճարտ. Ս. Այվազյանի, 2010 թ.) և քարտեզ, որտեղ նշված են Ծործորի վանքի գտնվելու սկզբնական և ներկայիս վայրերը



Զանգեբար գետի վրա կառուցվելիք Բարոնի ամբարտակի պատճառով Ծոր-ծորի պատմական Սբ. Մարիամ հայկական եկեղեցին ընկղմվելու էր լճի ջրերի մեջ: Այսու, Իրանի պատմական հուշարձանների վարչությունը էներգետիկայի նախարարության և հայ համայնքի համագործակցությամբ 1988 թ. եկեղեցին քար առ քար հանելով՝ տեղափոխեցին 600 մ և շենքը վերաշարեցին՝ վերականգնելով իր նախկին շուքով: Կենդանի ապացույց Իրանի Իսլամական Հանրապետության ուշադրությանը՝ հանդեպ պատմական հուշարձանների և հարգանքը՝ հանդեպ հայ հայրենակիցների հավատքի և սրբությունների:

36 **Առաքելեան** նշվ. հոդվ., «Ալիք», 2000, հավելված, էջ 8:

37 **Սմբատյան Կ.**, Կատարենք առաջին քայլը, «Հայրենիքի ձայն», 1989, № 50 (1271):

38 Վերականգնման աշխատանքների մեջ ակնառու են հետևյալ սխալները.

ա) Սրճագույն քարերի փոխարեն եկեղեցու ճակատների վերնամասերում (տեղ-տեղ նաև միջին ու ստորին հատվածներում) և գմբեթում գործածվել են կառույցին բոլորովին անհարիր ճերմակ քարեր, որոնք խախտում են հուշարձանի ամբողջականությունը:

բ) Վերականգնված թմբուկը նախնականից (նաև նախագծվածից) ավելի բարձր է կառուցված և անհամաչափություն է մտցնում եկեղեցու միասնականության մեջ:

գ) Թմբուկի վերականգնված լուսամուտները նախնականից (նաև վերականգնման նախագծի համեմատ) բարձր են տեղադրված:

39 Նայիրի (պատի) օրացոյց (2001 թ. յաւելուած):

40 Տեղեկանք Իրանի հայկական եկեղեցիների և մշակութային յուշակոթողների պահպանման միջթեմական յանձնախմբի, «Լրաբեր», 2005, № 6, էջ 18:

# ՄԱՂԱՐԴԱ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ

**Տեղադրություն.** գտնվում է սահմանային Ջուլֆա քաղաքից շուրջ 22 կմ արևմուտք՝ Արաքս գետի աջ կողմում՝ գետեզրից 2 կմ հարավ, դեպի Արաքս թեքված հյուսիսահայաց ձորակում՝ Մաղարթ[1] լեռան (1787 մ) հյուսիսային փեշին, 45° 27′ արևելյան երկայնության և 38° 59′ հյուսիսային լայնության միջև, ծովի մակերևույթից 890-910 մ բարձրության վրա: Միջնադարում գտնվում էր պատմական Վասպուրական Մասյաց և Սյունիքի Գողթան գավառների սահմանին:

**Այլ անվանումներ և դրանց ծագումը.** Մաղարթավանք անվանումը կապվում է մոտակա Մաղարթ լեռան հետ:

Երբեմն հիշվում է Շամբի կամ Դարաշամբի վանք անունով և առնչվում է վանքից 3 կմ հեռու գտնվող նույնանուն գյուղի հետ:

Ստեփանոս նախավկայի անվամբ կոչվել է ի պատիվ քրիստոնեական կրոնի առաջին նահատակ սուրբ Ստեփանոսի, ով դարեր շարունակ անընկուն կամքի և խոր հավատի մարմնացում է եղել յուրաքանչյուր քրիստոնյայի համար:

Մահմեդականները վանքն անվանում են Դանիել մարգարե (Դանիել փեյղամբար)[2]:

Պարսկական աղբյուրներում հայտնի է Սբ. Դանիելի վանք անունով, իսկ սրահներից մեկն էլ կոչվում է Դանիելի օջախ[3]:

**Վանք տանող ճանապարհներ.** վանքին հասնելու տարբեր ճանապարհներ կան: Դրանցից մեկն անցնում է իրանական Ջուլֆա քաղաքից 10-12 կմ հարավ-արևմուտք ընկած Գուլֆարաջ գյուղով: Ապա ճանապարհը, թեքվելով դեպի հյուսիս, ձորեր ու բարձունքներ է կտրում և անցնելով Նախավկայի մենաստանը շրջապատող բարձրաբերձ լեռները՝ իջնում է դեպի վանք: Հետիոտն կամ գրաստով կարելի է միայն 7-8 ժամում կտրել լեռնային այդ դժվարանցանելի կածանները: 5-6 կմ մինչև վանք հասնելը լեռան լանջին ճամփորդը հանդիպում է մի ավերակ փոքր գյուղի, որը վանքի ու Դարաշամբ հայկական գյուղի երբեմնի ամառանոցն է՝ հայտնի վճիտ ու սառնորակ աղբյուրով:

Գուլֆարաջ գյուղով անցնող ճանապարհը բավականին երկար է ու անհարմար: Ճամփորդը ստիպված է մի մեծ շրջանցում կատարել: Լեռնային ուղին էլ դժվարամատչելի է ու հոգնեցուցիչ:

Նախավկայի վանքի հարավային կողմից գոյություն ունի մենաստան տանող մի այլ ճանապարհ, որը սկսվում է Մարաքենդ ավանից և Աղչայ գետի հոսանքի ուղղությամբ ձգվում մինչև Արաքս գետն ու Դարաշամբ գյուղը:

Մերձնայով վանք հասնելու համար պետք է գնալ Ջուլֆա, ապա Արաքսի իրանական ափով հոսանքին հակառակ անցնել 16 կմ՝ մինչև Հին Ջուղայի քանդված կամուրջը, ուր սահմանապահ պահակետն է: Այդտեղից վանք տանող շուրջ 20 կմ ճանապարհը ձգվում է անմիջապես Արաքսի ավազոտ, տեղ-տեղ եղեգնապատ ափերով, ապա թեքվում հարավ՝ դեպի լեռները և 2 կմ-ից հասնում վանք:

Արևելյան Հայաստանից և Կովկասից վանք եկող ուխտավորների ուղին նախկինում անցնում էր գետի հանդիպակաց ափին՝ փոքր-ինչ հյուսիս-արևմուտք գտնվող Աստապատ ավանով և Սբ. Ստեփանոս վանքով[4] ու Հին Ջուղայով[5]: Ուխտավորներին

1 Ենթադրվում է, որ Մաղարթ (Մղարթ) լեռնանունը հին է և ծագել է սեպագիր շրջանի Մելարդե դիցանունից՝ Մելարդ > Մեղարդ > Մաղարդ > Մաղարթ օրինաչափ անցումով: Մելարդեն հիշատակվում է Բիայնիլի երկրի Իշպուինե և Մինուա թագավորների Վան քաղաքի մոտ՝ Միհերի դուռ ժայռին թողած արձանագրության մեջ (մ. թ. ա. Թ դ. վերջին քառորդ): Այն արական աստվածների շարքում 12-րդն էր՝ Լուսնի աստվածը, և հետագայում իր անունն է տվել նախ Մաղարթա լեռանը, ապա նրա ստորոտում կառուցված վանքին: Ենթադրվում է նաև, որ Մելարդեն եղել է տարածաշրջանի գլխավոր աստվածը և այդ նկատառումով էլ ընդգրկվել է Վանի թագավորության աստվածների պանթեոնում (տե՛ս **Հմայակյան Ս. Գ.**, նշվ. աշխ., էջ 10, 48-50: **Կարագեոզեան Յովհ.**, Սեպագիր տեղանուններ, Երեւան, 1998, էջ 170-172, 267-268): Դիցանունը մեղարդ («լուսին») ձևով պահպանվել է հայոց լեզվի բառապաշարում և ներկայացվել է Երեմիա Մեղրեցու կազմած բառարանում (Բառգիրք հայոց արարեալ ՚ի Սուրբ Էջմիածին **Երեմիայ վարդապետէ**, Յալիկոռնայ, 1698, էջ 208):

2 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 27.

3 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. 3, էջ 17:

4 Արաքսի հյուսիսային ափին՝ բարձունքի վրա կառուցված Աստապատի Սբ. Ստեփանոս վանքը կարմրագույն շինաքարի պատճառով կոչվել է նաև Կարմիր վանք: Միտումնավոր կերպով ոչնչացվել է 1990-ական թվականներին:

5 Ճամփորդի համար ավելի տպավորիչ էր Անդրեորդու եկեղեցու դիմաց՝ Արաքս գետի ձախ ափը, որտեղ գտնվում էր երբեմնի բարգավաճ, բայց բազմիցս ավերված ու կրկին շենացած Հին

տեղափոխում էին մենաստանին պատկանող լաստերով ու նավակներով: Արաքսի վրայով անցնող այս ճանապարհը մասամբ բանուկ էր մինչև Առաջին աշխարհամարտը և նրան հաջորդող մի քանի տարի, երբ դեռ շեն ու բարգավաճ էին Գողթն և Երնջակ գավառների հայկական գյուղերը:

Թավրիզից դեպի սահման ձգվող երկաթուղու կառուցմամբ, իրանական Ջուլֆա[6] քաղաքի շենացնելով, ինչպես նաև այն ժամանակներից, երբ խորհրդային իշխանության հաստատումով անպաշտոն սահմանանցումներն անհնարին են դառնում, երբ 1918-1919 թթ.՝ թուրքական ու թաթարական (ադրբեջանական) զորախմբերի առաջխաղացման ժամանակ, ավերվում են Արաքսի հանդիպակաց ափի հայկական գյուղերն ու ավանները, վանքի և Ջուլֆայի միջև եղած վերոհիշյալ լեռնային կածանը Նախավկայի միաբանության ու Դարաշամբի հայ բնակչության համար դառնում է միակ կապը դրսի աշխարհի հետ մինչև մենաստանի ու բնակավայրի վերջնական լքումը: Այս ճանապարհին են ընտրում նաև այժմ վանք այցելող փոքրաթիվ ուխտավորներն ու զբոսաշրջիկները:

Վերոնշյալ պահակակետից փոքր-ինչ առաջանալով՝ ճամփորդը հանդիպում է հայկական մի գմբեթավոր եկեղեցու՝ Անդրեորդու մենաստանի կամ Հովվի եկեղեցու (ԺԳ դ.)[7] ավերակներին, որի գոյությունն արդեն ապացուցում է, որ նախկինում այստեղ գյուղ ու հոգևոր փոքր համալիր է եղել: Այդ մասին վկայում է նաև ֆրանսիացի գիտնական և ճանապարհորդ Սեն-Մարտենը: Ըստ նրա՝ Նախավկայի մոտակայքում է գտնվել Վարշամար[8] հայկական գյուղը, որը շեն էր դեռևս ԺԹ դարում:

1960-ական թվականներին Թավրիզի թեմական խորհուրդը որոշակի քայլեր է ձեռնարկում ավտոճանապարհի բացելու ուղղությամբ: Նոր ճանապարհի կառուցումը նպատակ ուներ դյուրացնել համաժողովրդական ուխտագնացությունը դեպի հինավուրց մենաստան, ամրապնդել հայության հոգևոր կապը Նախավկայի վանքի հետ և նպաստել վերականգնման աշխատանքների իրականացմանը:

1969 թ. խնդրո առթիվ գրվել է. «Թէև այդ ուղղութեամբ պետական պատկան հաստատութիւնների մօտ արուած դիմումները ցարդ մնացել են անհետևանք, բայց յոյս կայ, որ ի վերջոյ մի արդիւնք կստացուի: Մինչ այդ, անցնող տարուայ մէջ, Թեմական Խորհուրդը յատուկ պայմանագրով մի խումբ հայ երկրագործների արտօնեց օգտագործել վանքի ընդարձակ վարելահողերը, խոստում առնելով, որ նրանք արդիական մեքենայացուած միջոցներով ինքնաշարժների մի ճանապարհ բաց կանեն մինչև վանք: Համաձայն այդ պայմանի՝ մինչև 1968 թ. հոկտեմբերի վերջը այդ ճամբի շուրջ մեկ երրորդը բացուած էր»[9]:

Ջուլֆա սահմանային քաղաքից Արաքսի ափով դեպի Ստեփանոս նախավկայի վանք ձգվող 25 կմ լեռնային ճանապարհի կառուցման աշխատանքներն ամբողջանում են 1973 թ., որի բացումը տեղի է ունենում նույն թվականի մայիսի 17-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի գլխավորությամբ:

**Պատմություն.** Մաղարդավանքը (նաև՝ Մաղարթավանք) կամ Սբ. Ստեփանոս նախավկայի վանքը Ատրպատականի հայոց երկրորդ հռչակավոր հոգևոր ու մշակութային կենտրոնն է[10]:

**Վանքի հիմնադրումը.** դրա վերաբերյալ պատմական ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել:

Կառուցմանն առնչվող ամենահին ավանդությունը գտնում ենք Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (972-992) 976 թ. կոնդակում, ըստ որի՝ մենաստանը կառուցել է Հիսուսի տասներկու աշակերտներից Բարդուղիմեոս առաքյալը[11] Ա դարում՝ քրիստոնեական կրոնի նահատակ Ստեփանոս նախա-

---

Ջուղա քաղաքը՝ երեք բլուրների վրա տարածվող ընդարձակ գերեզմանոցով և ավելի քան 3000 գեղաքանդակ խաչքարերով: 1921 թ. Նախիջևանի տարածքը, որտեղ գտնվում էր նաև պատմական Ջուղան, Հայաստանից անջատվելով, կցվում է Ադրբեջանի Հանրապետությանը, իսկ համաշխարհային արժեք ներկայացնող հազարավոր նրբակերտ տապանաքարեր և խաչքարեր 1998-2005 թթ. ընթացքում Ադրբեջանի պետության վանդալական ծրագրով ոչնչացվում են:

Այս տարածքները, ինչպես նաև Գողթն ու Երնջակ գավառները, Նախիջևան պատմական քաղաքը դարեր շարունակ պատկանել են Նախավկայի թեմին:

6 Իրանական Ջուլֆա և նրա դիմաց գտնվող Ջուլֆա սահմանային քաղաքի անունը ցարական կառավարության ժամանակ վերցվել է հայկական Հին Ջուղայի անվանումից: Այս անունով է կոչվել նաև Սպահան (Իսֆահան) քաղաքին կից Շահ Աբաս Ա-ի հիմնած Նոր Ջուղա հայկական բնակավայրն այն պատճառով, որ մեծ ու վաճառաշատ Ջուղայից գաղթեցրած բնակչությունը մեծամասնություն է կազմել նոր վայրում:

7 1988 թ. պեղումների ժամանակ Անդրեորդու (Հովվի) եկեղեցուն կից երևան եկավ մի քանի սենյակներից բաղկացած փոքր համալիր: Եկեղեցու արձանագրությունները հրատարակվել են “Ricerca sull’architettura Armena”, 18, Iran, volume II, Milano, 1978, pp. 155-157.

8 **Հախնազարեան Յովի.**, Նախավկայի Ս. Ստեփանոս վանքը (պատմական համառօտ ակնարկ), «Հասկ», 1975, յունուար-փետրուար, էջ 53: Տե՛ս նաև **Saint - Martin M.**, Mйmoires, v. II, Paris, 1819, p. 422. «Մշակ», 1902, № 52, էջ 1: **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 527-528:

9 **Մամեան Ն.**, նշվ. հոդվ., «Րաֆֆի» տարեգիրք, Ա տարի. 1969, 395-396:

10 Սբ. Ստեփանոս նախավկայի վանքի մասին տե՛ս **Հախնազարեան Յովի.**, նշվ. հոդվ., «Հասկ», 1975, յունուար-փետրուար, էջ 46-59; մայիս-յունիս, էջ 197-206; յուլիս-օգոստոս, էջ 278-286; սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 358-362; 1976, յունուար-դեկտեմբեր, էջ 45-53; 1978, յունուար-մարտ, էջ 60-66: **Հախնազարյան Ա.**, Ատրպատականի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, «Էջմիածին», 1985, Ա, էջ 39-41: Նույնի՝ Սբ. Թադէոս առաքեալի եւ Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքերը, Երևան, 2000, էջ 19-31 (հայերեն-անգլերեն):

11 Ըստ ավանդության՝ Բարդուղիմեոս առաքյալը Ա դ. քրիստոնեություն է քարոզել Նախիջևան և Գողթն գավառներում, ապա անցել Վասպուրականի Աղբակ գավառ, որտեղ և սպանվել է Հայոց Սանատրուկ Արշակունի թագավորի կարգադրությամբ Հայոց Հայրենիքում անհարազատ և օտարոտի գաղափարներ տարածելու համար (այն նույն Սանատրուկի,





**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից և հյուսիսից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**

վկա երեցի յիշատակը հավերժացնելու նպատակով. «...որ էր սայ շինեալ սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի...»[12]: Առաքյալը շինության հիմքում, իբրև հին ու նոր շնորհների խորհրդանիշ, դնում է իր հետ Հայաստան բերած մանանայով տուփ. «Եւ ասեն նշան շնորհաց հին եւ նոր բերեալ ի Հայս, Գ (3) հատ Մանանայի Բարդողովմէոսէ, եւ եդեալ տփով ի հիմն եկեղեցւոյ, որ հանդէպ, հայի Գողթան գաւառին, առ Երասխ գետով ի տեղւոջն զոր Մաղարթն կոչեն»[13]:

Կաթողիկոսի 976 թ. կոնդակով դեռևս Դ դարի կեսերին՝ Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Ներսես Ա Պարթև Մեծ կաթողիկոսի (353-373) օրոք, ստեղծվում է Նախավկայի եպիսկոպոսական թեմը[14]:

Վանքի կառուցումը կապելով Բարդուղիմեոս առաքյալի անվան հետ՝ կոնդակը Խաչիկ կաթողիկոսի անունից ներկայացնում է այստեղ պահվող սուրբ մասունքները. «Եւ ի սուրբ տաճարիս կայ հանգուցեալ սեւեռեալ բեւեռն բազկացն Յիսուսի և արքայական թագից փուշ պսակէն ճիւղ մի եւ ի Քրիստոսի ձեռաց Գ (3) հատ մանանայն եւ բազմահաւաք սրբութեանցս, որ աստ կան հաւաքեալ»[15]:

Խաչիկ կաթողիկոսը վերահաստատում է նաև թեմի սահմանները, նրան ենթակա գավառները, քաղաքներն ու գյուղերը, կարևոր վայրերը՝ առաջնորդ նշանակելով Բաբկեն եպիսկոպոսին: Հորդորում է Նախավկային ենթակա հայ համայնքներին, վանքերին ու եկեղեցիներին ամենայն ճշտությամբ կատարել առաջնորդարանի հանդեպ ունեցած պարտականությունները: Վերջում կաթողիկոսը սպառնում է բանադրանքի ենթարկել անհնազանդներին ու պարտականությունների կատարման մեջ թերացողներին. «Եւ ետու հնձէքս և հայրենիքս և դաստակերտ և ընծայսն հին Մաղարդայ վանից սուրբ Ստեփաննոս նախավկային, տիրամայր Աստուածածնին և սուրբ Գէորգ զօրավարին անդառնալի և բարձր հրամանաւ մերով՝ թէմ և վիճակ. որ և սահմանեալ էր ի նախնեաց մերոց և ի սուրբ հայրապետացն մերոց տեառն Ներսիսէ թոռին մերոյ սուրբ Լուսաւորչին. նախ և առաջին հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախչուան. Կոկ (Կոգ) գաւառն բոլորովին, Խոյ՝ որ է Զարևանդ գաւառն և ամենայն վիճակ իւր բոլորովին մինչ ի Նուան, ի Ղարադարան՝ որ բաժանի ի Սալմաստայ. ի յԵրասխայ մինչ ի Մարանդայ գրիւէն, Մարանդ իւր վիճակովն, Շիրինթալն իւր վիճակովն գնայ մինչ ի դղեակն Խոսրովու, ի Յազատ և ի Գիրան, ի Ջուղա և իւր վանքն, յԱստապատ և իւր վանքն, ի Շամբ և իւր վանքն, ի Ջաղաց տեղն և իւր վանքն, յԱրարք և իւր վանքն... տուաք ընծայ և հայրենիք անդառնալի և բարձր հրամանաւ մինչեւ ի գալուստն Քրիստոսի և ահեղ դատաստանն, և մի՛ ոք իշխեսցէ ի մեծաց և ի փոքունց արգել առնուլ...»[16]:

Խաչիկ Արշարունու վերոհիշյալ կոնդակի բնագիրը չի պահպանվել: Նախավկայի վանքի «աւելածու (եկեղեցու սպասավոր) եւ տեսուչ» Ստեփանոս վարդապետը վկայում է, որ Ամենայն Հայոց Աբրահամ կաթողիկոսի (1734-1737) հրամանով Մաղարդավանքում 1736 թ. դեկտեմբերին արտագրում է նախկին դարերից մնացած կաթողիկոսական կոնդակները, այդ թվում նաև 976 թ. կոնդակը[17]: Ենթադրվում է, որ նպատակ է ունեցել ցույց տալ առաքելաշեն մենաստանի և եպիսկոպոսական աթոռի հնությունը, բարձրացնել վանքի հեղինակությունը և կրկին հիշեցնել նրա թեմակալ-առաջնորդական իրավասությունները Արաքս գետի երկու կողմում տարածվող թեմի ու նրանում եղած կրոնական մի շարք նշանավոր հաստատությունների նկատմամբ[18]:

---

ով տարիներ առաջ նույն պատճառով սպանել էր Թադեոս առաքյալին և հարազատ դստերը՝ Սանդուխտին): Բարդուղիմեոս առաքյալի սպանվելու վայրում հետագայում կառուցվել է նույնանուն վանքը:

12 **Շահխաթունեանց Յովh.**, նշվ. աշխ., h. Բ, էջ 305: Տե՛ս նաև **Ուղեւոր Ա. Ե.**, Ուղեւորութիւն ի Սուրբ Էջմիածին. 1876 Յուլիս 20, «Սիոն», 1877, էջ 211-213 (նույնությամբ վերահրատարակել է Շահխաթունյանցի հրատարակած կոնդակը): **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, յուլիս-դեկտեմբեր, էջ 231: Նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, էջ 578: **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 5:
Ըստ Հովh. Շահխաթունյանցի հրատարակած կոնդակի՝ վանքը կառուցել են Բարդուղիմեոս և Թադեոս առաքյալները. «...որ էր սայ շինեալ սուրբ առաքելոցն Բարդուղիմէոսի և Թադէոսի...» (տե՛ս **Շահխաթունեանց Յովh.**, նշվ. աշխ., h. Բ, էջ 305-307): Կոնդակի հետագա հրատարակություններում Թադեոս առաքյալի անունը բացակայում է:

13 Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային-եկեղեցական թանգարանի, կազմեց՝ **Վ. ծայրագ. վրդպ. Տէ-միրճեան,** Անթիլիաս, 1977, էջ 68: Հմմտ. Ե-ԺԲ, էջ 312:

14 **Շահխաթունեանց Յովh.,** նշվ. աշխ., h. Բ, էջ 306: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 231: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 578:

15 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 231:

16 **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ 131 (կոնդակն ամբողջությամբ տե՛ս նշվ. աշխ., էջ 129-132): Տե՛ս նաև **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 410-412: Խաչիկ կաթողիկոսի կոնդակի մասին տեսակետները տե՛ս **Ալիշան Ղ.,** Սիսական, էջ 516, ծնթ. 1: **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 230-231: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 577: **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, h. Բ, էջ 494:

17 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 229-230: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 574-576:

18 Սրանցից հատկապես Աստապատի Սբ. Ստեփանոս վանքի միաբանությունն ու վանահայրերը հաճախ անտեսում էին Մաղարդավանքի առաջնությունը և ժխտում իրենցից եկեղեցական տասնորդ կամ այլ հարկեր գանձելու նրա իրավունքը: Այս երկու հեղինակավոր վանքերի միջև եղած վեճերը երբեմն այնքան սուր բնույթ են ստացել, որ նրանց հաշտեցնելու համար անհրաժեշտ է եղել Էջմիածնի կաթողիկոսների միջամտությունը:



**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի գլխավոր կառույցների տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի, 1969 թ.)**

Նախավկայի վանքի մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Աշոտ Գ Ողորմածի (953-977) ընծայագիրը, ըստ որի՝ հայոց Բագրատունի թագավորը 976 թ. ուխտի է գալիս մենաստան և թեմի առաջնորդությանն է նվիրում բազմաթիվ կալվածքներ Արաքս գետի երկու կողմերում՝ Նախիջևանում, Գողթնում և Ատրպատականում[19]:

Նախավկայի վանքի հետ է կապվում նաև Հռիփսիմե արքայադստեր կտակ-ընծայագիրը: Ըստ այս վավերագրի՝ Հռիփսիմեն 981 թ. ուխտի է գալիս Մաղարդավանք, սակայն ճանապարհին՝ Աստապատ գյուղում, հիվանդանում է և իր մոտ հրավիրելով թեմի առաջնորդ Բաբկեն եպիսկոպոսին՝ գրել է տալիս իր կտակը: Կտակում արքայադուստրը հաստատագրում է, որ իր հայրը՝ Աշոտ Շահնշահը, հինգ տարի առաջ վանք գալով, նույն Բաբկեն եպիսկոպոսի օրոք հիմնական վերակառուցման է ենթարկել մենաստանը, բազում նվիրատվություններ է կատարել վանքին, և ինքն էլ իր կողմից է հողատարածք ընծայում թեմին. «Նոյնպէս և ես Հռիփսիմէս, սիրական դուստր հաւրն իմոյ թագաւորի, ...զայս դաստակերտս գնեցի յԱստապատ և ետու յիշատակ հոգոյ իմոյ և ընծայ անքակտելի ի դուռն սուրբ Նախավկային Մաղերդայ... գնեցի և ետու ընծայ սուրբ ուխտին Մաղերդայ և տեղի շիրիմի իմոյ, զի մի թաղեսցեն աւտար ժա-

19 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 3: Աշոտ Գ թագավորի հրովարտակի մասին տե՛ս նաև **Փափազյան Հ.**, Երկու նորահայտ իշխանական յառլիղներ, «ԲՄ», 1962, № 6, էջ 391, 394-395: **Գարեգին Ա կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 133-134: **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 418-421:

ռանգութեան և գերեզմանի, այլ ի միջի ագարակիս թաղեսցեն զապականացու մարմինս...»[20]:

Աշոտ Ողորմածի՝ Նախավկա գալու մասին ժամանակակից ու հետագա դարերի պատմիչներից և ոչ մեկը հիշատակություն չի թողել: Ա. Տեր-Ղևոնդյանն այս առնչությամբ գրել է. «Հավանական է, որ Աշոտ Գ-ն (Ողորմած) 953 թվի անհաջող հարձակումից հետո փորձած լիներ Դվինին տիրել: Այդ մասին են ակնարկում Նախճավանի մոտ Մաղարքա (Ստեփանոս նախավկայի) վանքի հետ կապված մի քանի ...փաստաթղթերը, որոնք են՝ մի կոնդակ, Աշոտ Գ-ի դուստր Հռիփսիմե տիկնոջ կտակը, ինչպես նաև Էջմիածնի թանգարանում պահվող մի խաչ, որ կրում է հայոց ՆԺԵ (= 966) թվականը» *(տե՛ս սույն աշխ., էջ 243-244, արձ. ԺԴ )*[21]: Եվ անհավանական չէ, որ Աշոտ Գ-ն, լինելով իրոք «ողորմած, արդարամիտ ու մեծագործ» թագավոր, միաժամանակ մեծ ռազմագետ, Արաքս գետի հովիտն էր եկել՝ թերևս կրկին արաբներից Դվինի հետ առնելը ձեռնարկելու համար և ստվար զորքով բանակել էր Մաղարքա լեռների բնական ամրությունների մոտ: Շատ հավանական է նաև, որ այդ այցի կապակցությամբ Բագրատունյաց շինարար թագավորը, որ բազում եկեղեցիներ ու վանքեր էր կառուցել երկրի տարբեր մասերում և Անի մայրաքաղաքում, անհրաժեշտ կարգադրություն արած լիներ հիմնովին վերակառուցելու նաև Նախավկայի վանքը, որը մինչ այդ, անշուշտ, գոյություն է ունեցել այլ կառուցվածքով:

**Մաղարդավանքը Է դարում**. Մաղարդավանքի՝ թեկուզև փոքրածավալ կառույցը գոյություն ուներ դեռևս Է դարում: Այդ է հուշում «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» վերնագիրը կրող ձեռագիր-պատառիկի տեղեկությունը: Այն վերցվել է Հովհաննես կրոնավորի՝ 649 թ. հեղինակած շարադրանքից, որտեղ էլ հանդիպում է վանքի անվան առաջին հիշատակությունը. «...ի հին յիշատակարանէ միոջ, որ էր գրեալ (ի) ՂԸ (649) թուական[ին] Հայոց, ձեռամբ Յօհաննէս սպասաւորէ, ի սուրբ ուխտէն Մաղարթայ»[22]:

**Մաղարդավանքը Ժ դարում**. վանքը հիմնական վերակառուցման է ենթարկվել 976 թ. Աշոտ Բագրատունու կարգադրությամբ և նրա նյութական աջակցությամբ: Այդ մասին վկայություն ենք գտնում ԺԲ դ. գրավոր նյութերում, մասնավորապես Հոռոմայրում Առաքել գրչի ընդօրինակած «Տօնապատճառ»-ի անթվակիր հիշատակարանում, ուր վկայված է նաև վանքի առաջնորդ Գրիգորեսի՝ Ապիրատի որդու անունը. «...Եւ ետ գրել զսա ի յարդար և ի քրտնախոնջ վաստակոց և ոչ ամենևին ի պարգևաց այլոց, և յետ զսա սրտի յաւժար կամաւք ընձա աստուածաբնակ սուրբ ուխտին, որ կոչի Մաղարթէ վանք՝ հիմնացեալ ի սուրբ առաքելոյն Բարթողոմեոսի, և կրկին նորոգեալ հրամանաւ մեծ թագաւորէն Աշոտ անուն, զոր կանգնեալ եկեղեցին յանուն նախավկային Սրբոյն Ստեփաննոսի և սուրբ զաւրավարն Գէորգա, և այժմ ունի զառաջնորդութիւն սուրբ ուխտին տէր Գրիգորէս, որդի Ապիրատին, այր հեզ, սրբասէր, հաճոյ Աստուծոյ...»[23]: Այս գրության ժամանակը, իրոք, համապատասխանում է Ապիրատի որդու՝ Գրիգորես եպիսկոպոսի՝ Նախավկայի թեմի առաջնորդության շրջանին, ուստի ավելի արժանահավատ է[24]: Գրիգորեսի առաջնորդ լինելը հաստատվում է նաև «Էջմիածնի ավետարան»[25] կոչված ծաղկազարդ ձեռագրի (մանրամասն տե՛ս սույն աշխատության Մաղարդավանքի ձեռագրերի հավաքածուի բաժնում) 1173 թ. հիշատակարանում, որը Վահրամի որդու՝ Գուրժիի (այլ տարբերակ՝ Գուրջի) պատվերով գրել է տեր Ստեփանոս գրիչը: Նրանում կարևոր տեղեկություններ կան Նախավկայի վանքի մասին, որոնք ցույց են տալիս, որ սրբավայրն այդ տարիներին, «...ի հայրութեանս Գրիգո[րո]յ» ծաղկուն վիճակում է եղել և մեծ հռչակ է ունեցել հայության մեջ: Վանքն ուղղակի հիշվում է «...մեծահռչակ վանքս Մաղարդիս՝ ի Սուրբ Նախայվկայս...» ձևով[26]:

**Մաղարդավանքը ԺԲ դարում.** 1148 թ. Նախավկայի վանքում է ամփոփվում Սյունյաց առաջնորդ Բարսեղ Մեղրեցու (պաշտոնավարել է 1143-1148 թթ.) աճյունը. «...Տեր Բարսեղը, որը կարճ ժամանակ ապրելով մի պատահմունքով Աստապատ գյուղի մոտ Երասխ գետն է ընկնում՝ իր հեծած ձիու հետ միասին: Լողորդները մտնելով հանում են,

20 **Գարեգին Ա կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 137-142: Տե՛ս նաև **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 9-11: **Սմբատեանց Մ.**,Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 422-425:

21 **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 176: Վավերագրերի մասին Հ. Ոսկյանը գրել է. «Ինչպէս Հռիփսիմէի այս կտակագիրը, նաեւ Աշոտ թագաւորի նուիրագիրն ու Բաբգէնեան (կամ Խաչիկ Կաթողիկոսի) կոնդակն ...ունին պատմական որոշ հիմքեր եւ անոնց վրայ բարձրացած [են]» (տե՛ս նրա նշվ. աշխ., Բ մաս, էջ 567-569, ծանոթ. 44):

22 Ե-ԺԲ, էջ 14:

23 Ե-ԺԲ, էջ 312: Տե՛ս նաև **Գարեգին Ա կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 654: Հարություն Քյուրտյանն առանց հիմնավոր փաստի հիշատակարանը համարում է ԺԳ դ. գործ (տե՛ս **Քիւրտեան Յ.**, Ստեփաննոս Նախավկայի վանքը, «Հուր», 1974, № 36, յունիս, էջ 50): Ի դեպ, Մաղարդավանքի պատմության մասին Քյուրտյանի հոդվածը հրատարակվել է մի փոքր մասով (13 մեքենագիր էջ)՝ սկզբից մինչև 1563 թ. ներառյալ («Հուր», 1974, № 36, յունիս, էջ 44-50 և № 37-38, յուլիս-օգոստոս, էջ 37-42): Մեր ձեռքին է հոդվածի ամբողջական շարադրանքը (55 մեքենագիր էջ), որը ժամանակին մեզ է տրամադրել գնդապետ Էմիլ Հակոբյանը, և որի մեծագույն մասը մինչ օրս մնացել է անտիպ: Հ. Քյուրտյանը ուսումնասիրել է վանքի պատմությունը սկզբից մինչև 1790 թ. և կազմել է թեմակալ առաջնորդների գավազանագիրքը:

24 **Ոսկեան Հ.** , նշվ. աշխ., Բ մաս, էջ 537:

25 **Ստրժիգովսկի Յ.**, Էջմիածնի Աւետարանը, թարգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1892, էջ 15-21: Հայկական մանրանկարչություն, ներածական հոդվածը **Լ. Ա. Դուռնովոյի**, Երևան, 1967, էջ 201-202:

26 Ե-ԺԲ, էջ 213:

և ջրի վրա մեծ լույս է ճառագում: Նրան տանում, թաղում են Մաղարթա վանքում, որը կառուցվել էր սուրբ Բարդուղիմեոսի կողմից: Եվ պահվեց եկեղեցու պատի մեջ խորայելացիների երեք մանանայի նման, որը հաստատում է Միխայել պատմագիրը»[27]: ԺԲ դարի ձեռագիր անթվակիր հիշատակարաններից մեկում (պատվիրատու՝ Գուրժի) նշվում է, որ թեմակալ առաջնորդի թույլտվությամբ շինարարական որոշ աշխատանքներ են կատարվել Նախավկայի վանքում[28]:

**Մաղարդավանքը ԺԳ դարում.** մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ մենաստանը հավանաբար ծանր օրեր է ապրել: Այս շրջանից վանքի մասին միակ վկայությունը, որ գտնում ենք Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ում, տեղանքի հակիրճ նկարագրությունն է: Երկի համառոտ խմբագրության մեջ կարդում ենք. «...եւ Շամբի ձորն է առ ափն Երասխայ, ուր կայ նախավկայն սուրբ Ստեփանոսն, նորոգեալ ի Բարգէնայ»[29]: Ընդարձակ խմբագրության մեջ այն ունի հետևյալ ձևակերպումը. «Խրամ քաղաք Շամբի ձորն է, ուր կայ նախավկայ սուրբ Ստեփանոսն»[30]:

**Մաղարդավանքը ԺԴ դարում.** Աբու Սայիդ սուլթանը (1316-1335) երկու անգամ՝ 1330 թ. օգոստոսին և նոյեմբերին, հրովարտակ է շնորհում վանահայր Վարդան կրոնավորին և վանքի միաբանությանը՝ hoգուտ վերջինիս կարգավորելով Մակվի դատավորի հետ ունեցած հողային վեճերը *(վավերագրերը տե՛ս սույն աշխ., էջ 229):*

Հայ միարարական շարժման նշանավոր գործիչ, մատենագիր Մխիթար Ապարանեցու վկայությամբ՝ 1376 թ. Երնջակ գավառի Ապրակունյաց Վերին վանքում կաթողիկեամետ մի շարք հոգևորականների մասնակցությամբ տեղի ունեցած ժողովում որոշվում է բացահայտ հարել կաթողիկե դավանանքին: Կաթողիկեությունն ընդունածների թվում հիշվում են նաև Շամբիձորի մենաստանից Ղուկաս առաջնորդը և նրա հորեղբայր Սարգիս ճգնավորը. «...ի գաւառն յԵրնջակա, ի վերին վանքն Ապրակունեաց, ոմն քաջ վարդապետ եւ առաքինի ըստ Հայոց որպիսութեանց, որ կոչիւր Սարգիս ...ամենայն համանման աշակերտօք իւրովք ...եղեւ տեղեակ ճշմարտութեան: Վասն որոյ ամենեքեան ի միասին եղին ուխտ եւ դաշինս ուղղափառութեան ...Ընդ որս հիացեալ ոմն ճգնաւոր Սարգիս անուն, որ բնակէր ի յանապատս Շամբի ձորոյն, ասէր ընդ եղբօրորդին իւր Ղուկաս քահանայն, որ էր առաջնորդ ամենայն կարգաւորաց Շամբի ձորին... ճշմարիտ է միաբանութիւնն եւ ուղղափառ դաւանութիւնն կաթոլիկէ սուրբ եկեղեցոյ, վասն զի ոչ որ չար, այլ ամենայն որ ազգիս Հայոց, վարդապետք եւ առաքինիք, հետեւեցան եւ եղեն միաբան եւ հնազանդ սուրբ եկեղեցոյն Հռոմա...»[31]:

1381 թ. վանքը հիշատակվում է իբրև մեծ և հռչակավոր հաստատություն, ուր պահվում են բազում սուրբ մասունքներ. «...ի մեծ և ի հռչակաւոր վանքս Մաղարդու, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոս նախավկախս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Գէորգա զաւրավարիս և այլ բազում մասանց, որ կա ի սմայ, ի յառաջնորդութիւն տէր Գրիգորի...»[32]:

Վանքի մասին մի վկայություն էլ պահպանվել է ԺԴ դարավերջին: Ստեփանոս Ջուղայեցին վկայում է, որ 1736 թ. արտագրել է Կարապետ Կեղեցի (1392-1404) կաթողիկոսի՝ 1395 թ. Մաղարդավանքին ուղղված կոնդակը. «...զկոնդակն Տեառն Կարապետի ի ՊԽԴ (թուականէ)»[33], որը, ցավոք, մեզ չի հասել:

**Մաղարդավանքը ԺԵ դարում**. Երուսաղեմի նախկին պատրիարք, Պողոս Բ Գառնեցի կաթողիկոսի (1418-1430) կոնդակը, որն Ամենայն Հայոց հայրապետն ուղարկել է Մաղարդավանք 1418 թ.[34], չի պահպանվել:

1428 թ. Մաղարդավանքը հիշվում է Ռշտունյաց Նկարենո կամ Սբ. Հարության վանքի միաբան Ավետիս աբեղայի մահվան առնչությամբ. «Աւետիս աբեղայն ի Նկարենոյ վանիցն, բազում աշխատութեամբ շրջեալ ի գերափրկանք ճանապարհ, հանդիպեցաւ ի սուրբ ուխտս Նախավկայս, հանգեաւ խաղաղութեամբ առ Քրիստոս ի թվ ՊՀԷ (1428) ահկի ամսոյ Է (7)»[35]:

Մաղարդավանքի՝ առ այսօր հայագիտությանը հայտնի կոնդակներից երեքը կապվում են Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի անվան հետ: Դրանք թվա-

27 **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 283: Պատմիչը նկատի ունի Միքայել Ասորու տեղեկությունը Մաղարդավանքի հիմքում դրված երեք մանանայի ավանդության մասին:

28 «Ծաղիկ», 1891-1892, էջ 435: Տե՛ս նաև **Macler F.**, Rapport sur une mission scientifique en Armйnie Russe et et en Armйnie turque (Juillet-Octobre 1909), Paris, 1911, p. 27-28.

29 Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, էջ 16:

30 Նշվ. աշխ., էջ 32:

31 **Մխիթար Ապարանեցի,** Գիրք ուղղափառաց (տե՛ս **Marcus Antonius v. d. Oudenrijn O. P.**, նշվ. աշխ., էջ 218): Կարգաւոր բառը «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում (հ. Ա, Վենետիկ, 1836, վերահրատ.՝ Երևան, 1979, էջ 1066) բացատրված է՝ «Ունօղ զկարգ եկեղեցական, քահանայ»:

32 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետ վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, էջ 180: Տե՛ս նաև ԺԴ, էջ 537:

33 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 229, 234: Տե՛ս նաև **նույնի**՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 583:

34 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 234-235: Տե՛ս նաև **նույնի**՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 584: Ըստ աշխատասիրողի՝ Պողոս Գառնեցին գահակալել է 1416-1429 թթ.:

35 ԺԵԱ, էջ 389:

36 Հ. Ոսկյանը, որ հրատարակել ու հատուկ քննության է ենթարկել Նախավկայի վանքի կոնդակները, մատնանշում է, որ կոնդակներից առաջինում (Մխիթար եպիսկոպոսի առաջնորդ նշանակելու մասին) պակասում է տարեթվի տասնավորը, և այն վերականգնում է Զ, այսինքն՝ ՊԶԹ, որ է 1440 թ., մանավանդ, որ նույն կոնդակն ունի նաև Փրկչական թվական՝

գրված են Հայոց Պ[.]Թ[36], ՋԾԵ (1506)[37], ՋԱ (1452)[38] թվականներով: Արտագրել է 1736 թ. վանքի միաբան Ստեփանոս Ջուղայեցին[39] Աբրահամ Կրետացու պահանջով:

1475 թ. հոկտեմբերին ակ-կոյունլու տիրակալ Ուզուն Հասանի հրովարտակով վանքի միաբանությունն ազատվում է խարաջ և ջիզյա հարկերից[40]:

**Մաղարդավանքը ԺԶ դարում**. դարասկզբին Մաղարդավանքը հիշվում է 1504 թ. Եղիշե Բ աթոռակից կաթողիկոսի (1504-1506)՝ Մաղարդավանքին ուղարկած կոնդակում, որն ընդօրինակել է Ստեփանոս Ջուղայեցին: Այն ժամանակին տեսել է Էջմիածնի միաբան Հովհ. Շահխաթունյանցը[41]:

Վանքը հիշվում է նաև Սարգիս Գ Մյուսայլ աթոռակից կաթողիկոսի (1484-1515)՝ տեղի միաբանությանը 1506 թ. ուղարկած կոնդակում, որը ևս ընդօրինակել է Ստեփանոս Ջուղայեցին: Դրա բովանդակությունը մինչև օրս ևս անհայտ է[42]:

1541 թ. Գրիգոր ԺԱ կաթողիկոսը կոնդակով հորդորում է թեմապատկան բնակչությանը կանոնավորապես վճարել առաջնորդարանին հասանելիք եկեղեցական տուրքերը և առատաձեռն լինել նվիրատվության հարցում[43]:

Մաղարդավանքի միաբանությանն է ուղղված նաև Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոսին վերագրվող 1545 թ. կոնդակը, որի բովանդակությունն անհայտ է, սակայն Հ. Ոսկյանը հնարավոր է համարում նման փաստաթղթի գոյությունը, քանի որ կաթողիկոսի անունը համապատասխանում է նշված տարեթվին[44]:

1564 թ. Նախավկայի վանքի և մոտակա Շամբ գյուղի միջև պայքար է սկսվում նոր կառուցվելիք ջրաղացի կապակցությամբ: Միաբանությունը հանդես է գալիս իր վտանգված շահերի պաշտպանությամբ և վկայակոչելով Աշոտ Գ Ողորմածի 976 թ. նվիրագիրը՝ խափանում է շինարարությունը (*այս մասին մանրամասն տե՛ս սույն աշխ., էջ 228*):

Թեև 1587 թ. կոնդակում վանքի վերաշինությունը մատնանշվում է իբրև նոր առաջնորդ նշանակելու շարժառիթներից մեկը, սակայն Մարտիրոս եպիսկոպոսի իրականացրած կառուցողական աշխատանքների մասին որևէ տեղեկություն հայտնի չէ. «Կարելի չէ եզրակացնել, որ իրապէս վանքը շինութեան, վերաշինութեան կարիք ունէր եւ ատոր համար Տէր Մարտիրոս կը նշանակուէր, թէ պարզապէս ասացւածքի ձև մըն է կոնդակին մէջ գործածուած: Ամէն պարագայի տակ մեզի արձանագրութիւն կը պակսի վանքին մէջ Տէր Մարտիրոսի օրով կատարուած շինարարութեան համար»[45]:

**Մաղարդավանքը ԺԷ դարում**. Ստեփանոս նախավկայի՝ համեմատաբար խաղաղ, ստեղծագործական կյանքը հիմնովին խաթարվում է ԺԷ դարի սկզբին Շահ Աբաս Ա-ի բռնագաղթի հետևանքով:

ԺԶ-ԺԷ դարերում իրանա-օսմանյան ավերիչ պատերազմներն ու Նախիջևանի հայության բռնագաղթը ծանր հետևանքներ են ունենում Նախավկայի վանքի համար. մենաստանը զրկվում է իր հավատացյալ ու հարկատու ժողովրդից և ընկնում տնտեսական դժվարին կացություն մեջ:

**Սուրբ Կարապետի նշխարների գյուտը**. բռնագաղթի և Մաղարդավանքի հետ կապված է մի հետաքրքիր ավանդություն[46], որում, անշուշտ, կարելի

ՌԴՃԽԱ, այսինքն՝ 1441թ.: Վավերագրի 1440-1441 թվագրումը հայր Ոսկյանը բացատրում է երկու հանգամանքով. «կամ ... Գրիգոր Մակուեցին, որ... թէպէտ ...ամէնէն կաթողիկոս չէր ճանչցուած, սակայն ինքզինքը Էջմիածնի օրինաւոր կաթողիկոսը կը համարեր եւ կամ Կիրակոսի ընտրութեան մէջ պէտք է սրբագրութիւն կատարել» (**Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 235-236: Հմմտ. «Արարատ», 1904, էջ 38):

37 Գրիգոր Արտազեցու երկրորդ կոնդակն ունի թվագրման անճշտություն՝ ՋԾԵ (1506 թ.), որը, հավանաբար, Ստեփանոս Ջուղայեցու գրչական սխալի արդյունք է: Հ. Ոսկյանը տարեթվի տասնավորը ճշտում է Ժ, այսինքն՝ ոչ թե ՋԾԵ, այլ՝ ՋԺԵ (1466)՝ միաժամանակ նշելով, որ փաստաթղթի բովանդակությունն անծանոթ է (**Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 237): Ի դեպ, Հ. Ոսկյանը Գրիգոր Ժ-ի գահակալության տարիներ է համարում 1441՞-1466 թթ.:

38 Անհայտ է մնում նաև Մակվեցու երրորդ (1452 թ.) և Արիստակես Բ աթոռակալ կաթողիկոսի (1465-1469)՝ 1466 թվակիր կոնդակների բովանդակությունը (**Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 237-238: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 587-589):

39 Որոշ բանասերների կարծիքով՝ սա այն նույն Ստեփանոսն է, որը բանաստեղծական շեշտով նկարագրել է հայերի բռնագաղթը Շահ Աբաս Ա-ի օրերում («Բազմավէպ», 1847, էջ 94-95: Տե՛ս նաև **Առաքելեան Հ.**, Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մասն Ա, Վիեննա, 1911, էջ 66-67): Հ. Ոսկյանը ենթադրում է, որ այս Ստեփանոս վարդապետն է, որ 1729 թ. Կարապետ կաթողիկոսից հօգուտ Մաղարդավանքի հանգանակության իրավունք է ստացել (**Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 559-560):

40 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 49-50:

41 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Ա, Էջմիածին, 1842, էջ 53-54: Ի դեպ, կոնդակի բովանդակությունը հայտնի չէ (տե՛ս **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, յունուար-յունիս, էջ 87: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 604):

42 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 229, 238: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. աշխ., Բ մաս, էջ 590:

43 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, 1941, յուլիս-դեկտեմբեր, էջ 240: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. աշխ., Բ մաս, էջ 592:

44 **Ոսկեան Հ.**, նշվ. հոդվածը, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 229 և 1942, էջ 88: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. աշխ., Բ մաս, էջ 575, 605:

45 **Քիւրտեան Յ.,** նշվ. հոդվ., էջ 15 (անտիպ):

46 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 398-400: Հովհաննես Մկրտչի նշխարների գյուտի պատմությանն անդրադարձել են նաև՝ **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 646-647: **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 318-319: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 519: **Քիւրտեան Յ.,** նշվ. հոդվ., էջ 18-20 (անտիպ): Մ. Օրմանյանը գրում է, որ «Ջուղայի գաղութը 1605-ին կատարուած ըլլալով, մերձաւորաբար 1608-ին կրնանք դնել այդ մասունքներուն գիւտը, որուն վրայ բաւական ատեն կ’անցնի մինչև 1654-ին նորէն անոնց յիշատակութիւնը կ’ըլլայ» (տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, էջ 2909):

է գտնել ժամանակակից դեպքերին առնչվող որոշ հավաստի փաստեր:

Ըստ այդ ավանդության՝ Շահ Աբաս Ա-ի բռնագաղթից հետո, երբ մերձակա գյուղերի մահմեդականները սկսում են փնտրել հինջուղայեցիների թաքցրած իրերը, ոմն նեհրամցի Հին Ջուղայի Վերին Կաթան եկեղեցու խորանում գտնում է կավե մի աման, որի մեջ՝ փայտե տուփ՝ մագաղաթի պատառիկով և մի քանի ոսկորներով: Տուփից արձակվող անուշահոտությունը հուշում է, որ նրանում պահվում են քրիստոնյա սրբի նշխարներ: Մահմեդականն իր գտածոն թաքցնում է տանը, սակայն դրան հաջորդող շարունակական անհաջողությունները հարկադրում են նրան գնալ «...ի հռչակաւոր ուխտն ի վանքն սրբոյ Նախավկային, որ ի Դարաշամբ կոչեցեալ գեղջն է, և անդ յայտնեաց զամենայն որպիսութիւնն եպիսկոպոսի ումեմն, որում անունն էր Շմաւօն[47], որ էր նախածանօթ այլազգւոյն այնորիկ ի վաղ ժամանակաց...»[48]: Մագաղաթի ընթերցումից պարզվում է, որ տուփի մեջ պահվում են Հովհաննես Մկրտչի նշխարները, որոնք իր հետ Հայաստան էր բերել Գրիգոր Լուսավորիչը Դ դարում և պահ տվել Խրամ քաղաքում, իսկ վերջինիս ավերումից (972 թ.) հետո մասունքները տեղափոխել էին Ջուղա[49]:

Սուրբ Կարապետի նշխարների գյուտի լուրը հասնում է մինչև Նոր Ջուղա՝ խոջա Նազարին, որն էլ եպիսկոպոսից պահանջում է նշխարներն իրեն ուղարկել: Խոջայից վախենալով՝ եպիսկոպոսը մասնատուփն ու մագաղաթը փոխանցում է Նոր Ջուղայից եկած պատվիրակներին, սակայն նշխարներից մի մեծ կտոր, «որ էր գլուխ թիակին», թաքցնում ու պահում է մինչև 1654 թվականը: Նշյալ թվականին էլ Շմավոն եպիսկոպոսն իր թաքցրած նշխարի մասին տեղյակ է պահում Նախավկայի վանքում շինարարական աշխատանքներ իրականացնող Հակոբ վարդապետ Ջուղայեցուն (հետագայում՝ կաթողիկոս Հակոբ Դ, 1655-1680): Այնուհետև սուրբ Հովհաննեսի նշխարն ամփոփում են թանկագին քարերով ընդելուզված «աղիւսաձև» ոսկեզօծ արծաթե մի արկղիկի մեջ, համառոտագրում գյուտի պատմությունը և արկղիկը պահում մենաստանում՝ մյուս սրբությունների հետ[50]: Պատմիչի վկայությամբ՝ ամեն տարի բազմաթիվ ուխտավորներ են գալիս վանք և սրբություններից խնդրում բժշկել իրենց ցավերն ու հիվանդությունները:

Շահ Աբաս Ա-ի բռնագաղթի հետևանքով տնտեսապես քայքայված և պետական ծանր հարկերի տակ հեծող Հին Ջուղայի և Աստապատ գյուղաքաղաքի բնակիչները, որոնք խուսափել էին 1605 թ. տարագրությունից կամ էլ կարողացել էին հայրենի երկիր վերադառնալ, մերժում են վճարել Նախավկայի վանքին հասանելիք տուրքերն ու տասնորդները: Թերևս այս երկու բնակավայրերի և Ստեփանոս վանքի (Աստապատի Կարմիր վանք) հոգևորականությունն առաջարկում է Մայր Աթոռին անջատել իրենց Նախավկայի թեմից և անկախ վիճակ շնորհել, քանի որ կոնդակում նշվում է, որ Էջմիածինն իրավասու չէ խախտել նախկին դարերից հաստատված կարգն ու օրենքները և հիշյալ բնակավայրերին կտրել իրենց օրինական թեմից: Հավանաբար այդ է պատճառը, որ Ամենայն Հայոց Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսը (1629-1632) 1631 թ. նոյեմբերի 11-ին ուղարկած կոնդակով Հին Ջուղայի և Աստապատի համայնքներին հորդորում է ենթարկվել նախնյաց օրենքներին, բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները Նախավկայի վանքի հանդեպ և ետ կանգնել անմիաբան ընթացքից[51]:

Մի քանի տարի անց՝ 1636 թ., վանքի միաբանները հիշվում են անապատական շարժման նշանավոր գործիչ Արիստակես վարդապետ Շամբեցու պատվերով Սյունիքի Բռնակոթ գյուղում ընդօրինակված ավետարանի (գրիչ՝ Կարապետ, սրբագրիչ՝ Աստվածատուր երեց) հիշատակարանում[52]:

ԺԷ դարը Ստեփանոս նախավկայի վանքի համար նշանավորվում է որպես վերաշինության աննախադեպ ժամանակաշրջան: Մեծածավալ շինարարական աշխատանքների նախաձեռնողը Հակոբ վարդապետ Ջուղայեցին էր[53]. «Եւ յետ բազում ժամանակաց մնալոյ նորա ի սուրբ Էջմիածինն՝ գնաց

47 Շմավոն եպիսկոպոսի անունը վկայված է 1601 թ. «Յայսմաւուրք»-ի հիշատակարանում: Անշուշտ, այդ ժամանակ նա արդեն մեծ տարիքում էր, քանի որ արքեպիսկոպոսական աստիճան ուներ: Ուստի հազիվ թե մինչև 1654 թ. ողջ լիներ ու հանդիպեր Հակոբ Ջուղայեցուն: Մնում է ենթադրել, որ սբ. Կարապետի նշխարների գյուտի հետ առնչվող Շմավոն եպիսկոպոսն այլ անձնավորություն է (**Հախնազարեան Յովհ**., նշվ. հոդվ., «Հասկ», 1976, յունուար-դեկտեմբեր, էջ 49) և երբեք էլ Նախավկայի վանքի առաջնորդ չի եղել:

48 **Առաքել Դաւրիժեցի,** էջ 399:

49 Նշվ. աշխ., էջ 281:

50 Ստեփանոս նախավկայի վանքում պահվող սրբությունների մասին շինարարության ավարտման տարում չափածո ոճով գրել է Աստապատից վանք այցելած Թովմաս Վանանդեցին: Բանաստեղծությունը նախկինում քանիցս հրատարակվել է («Ճռաքաղ», 1860, տետրակ Թ, էջ 136-137: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521: «Բիւզանդիոն», 1897, № 355: **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 565-566 և այլն):

51 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 99-100: Տե՛ս նաև **նույնի**՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 624-625:

52 ԺԷԲ, էջ 660:

53 Հակոբ Ջուղայեցու՝ Մաղարդավանքում անցկացրած տարիների և գործունեության մասին տեսակետներն առանձնանում են: Ղ. Ալիշանը, Հ. Քյուրտյանը և այլք չեն ընդունում նրա առաջնորդ լինելու հանգամանքը: Ղ. Ալիշանը սոսկ մատնանշում է վանքի վերաշինությունը և Հովհաննես Մկրտչի նշխարների գյուտը և ոչինչ չի գրում Հակոբ Ջուղայեցու առաջնորդության մասին (**Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 519): Հարցի առնչությամբ Հ. Քյուրտյանը գրում է. «...պետք է խորհիլ, որ Յակոբ Ջուղայեցի, որ գնէ 1643էն ի վեր վանքին վերաշինութեամբ զբաղուած էր մինչեւ 1654, վանքին առաջնորդը չէր, այլ լոկ վանքին շինարարը» (**Քիւրտեան Յ.,** նշվ.

ի սուրբ Նախավկայի վանքն՝ որ է ի Շամբի-ձորգեղ. և քակեալ զհին և խարխալեալ եկեղեցին, և շինեաց գեղեցիկ յօրինմամբ. զպարիսպն, զխոհանոցն, և զխցերն շինեալ աւարտեաց: Եւ մինչ էր նա (իմա՛ Հակոբ Ջուղայեցին, Ա. Հ.) անդ ի սուրբ Նախավկայի վանքն, մեռաւ Փիլիպպոս Կաթուղիկոսն ի սուրբ Էջմիածին ի ՌՃԴ թուին: Եւ առաքեցին սուրհանդակ, և բերեալ զնա, և օրհնեցին Կաթուղիկոս ի Ծաղկազարդի կիւրակէն»[54]:

Շինարարական աշխատանքների վերաբերյալ ուշագրավ է նաև հետևյալ տեղեկությունը. «...մեծ և անուանի վանքն սրբոյն Ստեփաննոսի նախավկային, որ ի Դարաշամբի ձորին է, որ յառաջագոյն էր անպարիսպ, նա և շինուածք տանցն և յարկացն խարխալեալ և բլրկեալ, և դիրք շինուածոցն յոռի և անպիտան: Իսկ Ջուղայեցի Յակովբ վարդապետն, որ յետ Փիլիպպոսի նա եղև կաթուղիկոս, սա ի ժամանակս կաթուղիկոսութեան Փիլիպպոսի սկսաւ նորոգել, և միանգամայն զամենայն շինուածսն քակեաց ի հիմանց, զեկեղեցին և զտներն, և զխցերն, և զայլն ամենայն, ապա ինքն զհիմն էարկ եկեղեցւոյն և շինեաց խաչանման եկեղեցի սրբատաշ վիմօք, վերամբարձ կաթուղիկէին, գեղեցկաշէն և զանազան արուեստակեալ նկարակերտութեամբ զարդարեալ: Սոյնպէս և զպարիսպն շուրջանակի, և զտներն և զխցերն ամուր և հաստահեղոյս վիմօք շինեալ, որոց ձևն և դիրքն և յարմարութիւնքն կարի ըմբռն և պատշաճաւոր, զոր բազում աշխատութեամբ և յոլով ծախիւք յամս տասն ապա կատարեցաւ. զի զքարն և զկղմինտրն ի գեղջէն Աստապատայ բերէին տփով զերեսօք ջուրց Երասխ գետոյն. և մասն ինչ ի քարանցն յԱրարգ գեղջէն բերին ձիով. սոյնպէս և զկիրն և զփայտն և զհացն ի հեռու վայրաց բերէին մեծաւ աշխատութեամբ և յոլով ջանիւ, կատարեալ յաւարտ ածին...»[55]:

Վանքի շինարարական աշխատանքների վերաբերյալ գրվել է նաև սուրբ Կարապետի նշխարների գյուտի առնչությամբ. «Իսկ եպիսկոպոսն Շմաւօն պահեաց զնշխարն զայս առ ինքն մինչ ի ժամանակս յայս, յորում է թուականն մեր Հայոցս ՌՃԳ (1654) և ի սոյն ժամանակի մեծ վարդապետին Յակոբ, որ էր և սա Ջուղայեցի, նորոգէր զնոյն վանքն սրբոյն Ստեփաննոսի նախավկային, բազում և անթիւ ծախիւք և մեծաւ աշխատութեամբ. սկիզբն արար եկեղեցւոյն ի հիմանէ մինչև ցկատարումն կոփածու վիմօք, այլ և զպարիսպն ամենայն և զամենայն շինուածսն որք ի նմա, զամենեսեան ի հիմանէ ձեռնարկեալ վերստին նորոգեաց»[56]:

Շինարարական աշխատանքները տևում են 12 տարի՝ 1643 թ.-ից մինչև 1655 թ. *(տե՛ս սույն աշխ., էջ 285, արձ. Ա)*:

Դրանց հպանցիկ անդրադարձ ենք գտնում նաև 1653 թ. Էջմիածնում ընդօրինակված ձեռագիր Ժողովածուի հիշատակարանում (ստացող՝ Հովհաննես). «...սրբազան րաբունապետն Յակովբ, որ է փոխանորդ տեառն Փիլիպպոսի ...զտաճար Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, որ ի ձորն Շամբի անուանեալ, շքեղազարդ յօրինու[ա]ծով կառոյց...»[57]:

Նույն թվականին Գողթան գավառի Փառակա գյուղում Ղազար երեցի ընդօրինակած «Յայսմաւուրք»-ի հիշատակարանից պարզվում է, որ վանքի վերակառուցման գործում մեծ ավանդ է ներդրել տեղի Ջերմկու վանքի միաբան Սիմոն կրոնավորը. «Դարձեալ յիշեցէք ի բարին զտէր Սիմոն կրօնաւորն, որ բազում աշխատանք ունի ի վերայ Ս. Նախավկայի վանացս, զի աւերեալ էր և անբնակ մնացեալ: Սա եղև պատճառ շինութեան վանացս...»[58]:

Այն, որ 1655 թ. վանքի վերաշինության աշխատանքներն ավարտվել են, և մենաստանն էլ օծվել է, հաստատվում է նույն թվականին այստեղ ստեղծ-

---

հոդվ., էջ 21 (անտիպ): Մինչդեռ Հ. Ոսկյանը Ջուղայեցուն համարում է Փիլիպոս Աղբակեցու օրերում (1632-1655) Շմավոն եպիսկոպոսի հետ աթոռակալած առաջնորդ (**Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 545): Հր. Աճառյանի կարծիքով Ջուղայեցին եղել է Նախավկայի վանքի վանահայր (**Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 513-514): Հակոբ Ջուղայեցուն Մաղարդավանքի առաջնորդ է համարում նաև Մովսիսյան Հուսիկ վարդապետը. «Փիլիպպոսին յաջորդեց Յակովբ Դ. Ջուղայեցի, որ աշակերտելով Նոր-Ջուղայու առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացուն, նորանից աբեղայ ձեռնադրուեց. 1646 թուին եկաւ Էջմիածին, մեծամեծ ծառայութիւններ կատարեց և Փիլիպպոս կաթուղիկոսից եպիսկոպոս ձեռնադրուեց, կարգուեց Մաղարթայ Ս. Ստեփաննոսի վանաց առաջնորդ և ի հիմանէ վերաշինեց նոյն վանքը, որ առաջ փոքր մենաստան էր» (**Յ. Վ. Մ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1886, փետրուար, էջ 67): Տարեթվի հարցում այստեղ ակնհայտ շփոթություն կա, քանի որ, արձանագրության համաձայն, 1643 թ. մենաստանի վերականգնման աշխատանքներն արդեն սկսվել էին: Բայց եթե դա այդպես է, ուրեմն նա առաջնորդությունը ևս պետք է վարեր, քանի որ այս երկու պաշտոնները միշտ էլ կենտրոնացած են եղել միևնույն անձի ձեռքում: Մինչդեռ Հակոբ Ջուղայեցու՝ թեմակալ առաջնորդ լինելու մասին մատենագրական տեղեկությունները բացակայում են: Չկան նաև առաջնորդության փաստը հաստատող վիմագրական տվյալներ: Մնում է ենթադրել, որ Հակոբ Ջուղայեցին երբեք էլ չի եղել Նախավկայի վանքի առաջնորդ: Իսկ թե ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում է նա եկել Մաղարդավանք՝ հայտնի չէ:

Հ. Քյուրտյանը որոշ վերապահումով է անդրադառնում վանքի կառույցները հիմնովին վերաշինելու պատմիչների տեղեկությանը. «Կարելի չէ կասկածիլ, որ Յակոբ Ջուղայեցի կարեւոր նորոգութիւններ կատարած ըլլայ Մաղարթի վանքին զանազան մասերուն վրայ, սակայն անհաւատալի է Առաքել Դաւրիժեցիի հաւաստումը, որ Յակոբ Ջուղայեցի «սկսաւ վանքը նորոգել, եւ զամենայն շինուածսն քակեաց ի հիմանց, զեկեղեցին եւ զտներն եւ զխցերն, եւ զայլ ամենայն (Զաքարիայ սարկաւագ կը յիշէ խոհանոցն ալ: Յ. Ք.), ապա ինքն զհիմն էարկ եկեղեցւոյն...»: Ցաւալի է, որ հին արձանագրութիւններ կը պակսին կամ անծանօթ մնացած են ստուգելու համար Յակոբ Ջուղայեցիէ առաջ գոնէ եկեղեցւոյն վիճակը...» (**Քիւրտեան Յ.,** նշվ. հոդվ., էջ 22-23 (անտիպ):

54 **Զաքարիա սարկաւագ**, հ. Բ, էջ 60:

55 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 281:

56 Նշվ. աշխ., էջ 400:

57 ԺԷԳ, էջ 538-539:

58 ԺԷԳ, էջ 547:

ված Ժամագրքի հիշատակարանով. «Թվին ՌՃԴ (1655) ի դուռն Ս. Ըստեփանոս նորաքնու[ն]ք Նախավկային զվերջին նորոգումն»[59]:

1660-1670-ական թվականները Մաղարդավանքի համար մշակութային-տնտեսական գործունեության առումով ծաղկման տարիներ են և կապվում են Միքայել Բ Շամբեցի առաջնորդի պաշտոնավարության հետ:

1675 թ. վանքում ստեղծված ձեռագրերից մեկի հիշատակարանում չափածո գրվել է.

«...Ի Սուրբ ուխտս Նախավկայի,
Զոր Մաղարթավանք վերաձայնեալ կոչի,
Որ է հռչակել ամենայն աշխարհի,
Զոր Շամբի ձոր որջորջի,
Ի երկիրս Գողտն կոչեցեալ ասի,
Ի գաւառն Նախչաւանի...»[60]:

Նույն ձեռագրում վանքն անվանվում է որպես «ի մեծահռչակ եւ յաստուածաբնակ եւ յակ[ա]նաւոր եւ երեւելի եւ ի մայրաքաղաքն ամենայն վանորէից»[61]:

1668 թ. փետրվարին Մաղարդավանք է այցելում ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Թավերնիեն (J. B.Tavernier, 1605-1689)[62]. «Երբ քարավանն ուղևորվում է Նախիջևանից Ջուղա, որ մեկ օրվա ճանապարհ է, սովորաբար (քարավանի) գլխավոր հայերը շեղվում են երթուղուց՝ հարավում գտնվող Սբ. Ստեփանոս վանքը գնալու համար: Ես այնտեղ եղել եմ երկու անգամ. առաջին անգամ՝ Պարսկաստանից վերադառնալիս, իմ չորրորդ ճանապարհորդության ժամանակ՝ չցանկանալով մերժել այն հայերին, որոնց հետ էի, և որոնք կամենում էին գնալ վանք՝ տոնախմբության (carnaval): Մենք կցված չէինք քարավանին և գնում էինք ձիերով մեր ցանկացած ձևով:

Երկրորդ անգամ ես Սբ. Ստեփանոսում եղա 1668 թ. փետրվարի 12-ին, երբ վերադառնում էի Հնդկաստան կատարած իմ վերջին ճամփորդությունից: Կարծում էի, որ այնտեղ կտեսնեմ մի լեհ եպիսկոպոսի, որի հետ գործ ունեի: Եվ թեև նա այլևս վանքում չէր, արքեպիսկոպոսն ինձ առաջարկեց հանգստանալ մեկ-երկու օր, բայց ես այնտեղ կանգ առա մի քանի ժամ և կեսգիշերին ուղևորվեցի Նախիջևան...

Սբ. Ստեփանոս վանքը սկսել են կառուցել երեսուն տարի առաջ: Այն գտնվում է լեռներում, լերկ և դժվարամատչելի վայրում: Պատճառը, որ հայերն ընտրել են այս վայրը, ըստ ավանդության այն է, որ այստեղ են Սբ. Մատթեոսն ու Սբ. Բարդուղիմեոսն ապաստանել, երբ իրենց հալածում էին: Նրանք (հայերը) ավելացնում են, որ Սբ. Մատթեոսն այստեղ մի հրաշք է գործել, երբ այս վայրում այլևս ջուր չունենալով, իր գավազանով հարվածել է գետնին և աղբյուր է բխեցրել[63]: Այս աղբյուրը վանքից կես քառորդ լյո հեռու է գտնվում, ծածկված է մի կամարով և ամուր դռնով, այնպես, որ ոչ ոք չի կարող ջուրը կեղտոտել: Հայերը մեծ նվիրումով են գնում տեսնելու այս աղբյուրը, իսկ ջուրը ստորգետնյա խողովակով (canal) բերում են վանք:

...Առաջին անգամ Սբ. Ստեփանոս եկեղեցի այցելեցի մի քանի հայերի ուղեկցությամբ, որոնց հետ վերադառնում էի Իսպահանից: Երկու եպիսկոպոս, որոնց հետևում էին բազմաթիվ վանականներ, եկան մեզ դիմավորելու և տարան մի մեծ դահլիճ, որտեղ մենք շատ լավ վերաբերմունքի արժանացանք»[64]:

1668 թ. Սուլեյման շահն արձակում է մի հրովարտակ, որով փաստվում է Մաղարդավանքի հայ-

59 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ, էջ 1403: Տե՛ս նաև ԺԷԳ, էջ 645:

60 **Սմբատյանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 141, 184-185: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 548: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 27 (անտիպ): Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1642:

61 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 550: Տե՛ս նաև **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 29 (անտիպ): Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1644:

62 ԺԷ դարի նշանավոր ճանապարհորդ և առևտրական Ժան Բատիստ Թավերնիեն իր վեց ճանապարհորդությունների ընթացքում եղել է Արևելքի մի շարք երկրներում, այդ թվում նաև Թուրքիայում և Իրանում: Ուղեգրություններում նա հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ է թողել իր այցելած հայկական բնակավայրերի ու հոգևոր կենտրոնների (Էրզրում, Կարս, Էջմիածին, Երևան, Նախիջևան, Ջուղա և այլն), առևտրի ու արհեստների, ինչպես նաև հայերի նիստուկացի, բարքերի, սովորույթների, դավանանքի և այլնի մասին:

63 Ղ. Ալիշանը նկատել է, որ Թավերնիեն շփոթում է՝ աղբյուր բխեցնելու ավանդությունը կապելով ոչ թե Բարդուղիմեոսի, այլ Մատթեոսի առաքյալի (որը Հայաստանում չի եղել) անվան հետ (**Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521, ծանոթ. 1):

64 Les six voyages de **Jean Bapt. Tavernier,** Ecuyer Baron d'Aubonne, en Turquie, en Perse, et aux Indes, tome premier, la Haye, 1718, p. 47-48 (բնագրում՝ “Quand la Caravane est sur son de'part de Naksivan pour Zulfa qui n'en est e'loigne' que d'une journe'e, les principaux Armeniens se detournent d'ordinaire de la route pour aller au convent de saint Estienne qui est au midy. J'y ay este' deux fois ; la premiere au retour de mon quatrie'me voyage de Perse, ne voulant pas desobliger les Armeniens avec qui j'estois, & qui souhaitoient d'y aller passer le carnaval: Joint que nous n'estions pas alors en Caravane, & que nous avions fait une compagnie pour marcher a nostre aise sur nos chevaux. La seconde fois fut in 1668. le 12 de Fevrier au retour de mon dernier voyage des Indes, croyant y trouver un Evкque Polonois avec qui j'avois affaire & comme il n'y estoit plus, quelques instances que l'Archevкque me fit pour m'obliger de m'y reposer un jour ou deux, je ne m'y arrestay que quelques heures, & en partis a mynuit pour Naksivan...
Saint Estienne est un convent que l'on n'a commencй a bвtir, que depuis trente ans. Il est dans les montagnes en un lieu desert & de difficile accez; & la raison qui a portй les Armeniens a choisir ce lieu-la plutфt qu'un autre, est qu'ils ont par tradition que ce fut oщ saint Matthieu & saint Barthelemy se retirerent quand on les persecutoit. ils ajoыtent que saint Matthieu y fit un miraele, & que n'y ayant point d'eau en ce lieu-la, il frappa de son baston en terre d'ou il sortit d'abord une source d'eau. Elle est environ a un demi quart de lieue de convent, cachee sous une voute avec une bonne porte, de maniere que l'on ne peut gвter l'eau. Les Armeniens vont voir cette source en grande devotion, & on mene l'eau au couvent par un canal qu'on a fait sous terre...

կականությունը և արգելվում է հոգևորականներին նեղություն պատճառել. «...պարզվեց Թուման-ե Նախիջևանի Դարաշամբ վայրում գտնվող Նախավկա անունով հայտնի Մաղարդա վանքի քահանաների ու մյուս վանականների մոտ գտնվող նախկին թագավորների ռաղամների, հոքմերի ու այլ փաստաթղթերի քննությունից, վերոհիշյալ եկեղեցին հին ժամանակներից ի վեր եղել է և այժմ էլ է քրիստոնեաների վանք: Նախկին տիրակալները այդ մահալի բնակիչներին որոշ իխրաջաթից մու’աֆ ու մուսալլամ էին ճանաչել: Տեղեկացրեցին, որ սրանից առաջ նախկին սադր Միրզա Ջալալ Օրդուբադիի դիվանին էին դիմել հետևյալ պահանջով, թե` «Այդ մահալում է գտնվում Դանիել մարգարեի գերեզմանը, որը վակֆեր ու եկամուտներ ունի», և այդ մասին միսալ էին անցկացրել, որ եթե այդ վայրում մարգարեի գերեզմանը կա, և այն վակֆեր ևս ունի, ապա հիշյալը [միսալը ձեռք բերողը] նրա մութավալլին պետք է լինի ու զեկուցի նրա եկամուտների ու ծախսերի իրողության մասին: Միրզա Ջալալը այն կողմերը գնալուց հետո, քանի որ գերեզմանի ու վակֆերի որևէ նշան չի գտնում, այդ մասին գրառում է կատարում և Չուխուր Սաադի բարձրաստիճան բեկլարբեկը հաստատում է, որ վանքը կա, բայց գերեզմանը չկա: Երբ հիշյալ գրությունը բարձրագույն դիվան-ալ-սադարաթի վաքիլների քննությանն արժանացավ, կարգադրվեց, որ ոչ ոք առանց օրինական պատճառի վերոհիշյալ վանքի քահանաներին ու հոգևորականներին չնեղի: Եվ ինչպես որ հին ժամանակներից ի վեր վերոհիշյալ վանքը նրանց տնօրինության տակ է գտնվել, նորից ըստ հին կարգի պետք է նրանց ենթակայության տակ թողնեն և ... պետք է թույլ տան նրանց հանգիստ կերպով այնտեղ բնակել...»[65]:

Մաղարդավանքում անհրաժեշտ նորոգություններ իրականացնելու համար 1684 թ. նոյեմբերի 17-ին Ամենայն Հայոց Եղիազար Ա Այնթապցի կաթողիկոսը (1681-1691) կոնդակ է հղում Թիֆլիսի և շրջակա գյուղերի հայությանը. «...վկայարան սուրբ Ստեփաննոս Նախավկային, զոր եւ յետոյ նորոգեալ եղեւ ի Յակոբ կաթուղիկոսէն, բայց եթէ յինչ պատճառի փութով խարխալեալ եւ քայքայեալ եղեւ, զոր եւ այժմ կամին զգլուխն նորոգել, բայց տեսեալ մեր զթուղթ խնդրոյ ձերոյ եւ լուաք, թէ ասացեալ էք սուրբ Նախավկայի առաջնորդացէն մէկն գայ մեք օգնութիւն առնեմք... մեք հրաման տուաք Յոհան եւ Պետրոս վարդապետաց գալ առ ձեզ, եւ ով ոք երկոցունցն գայցեն առ ձեզ կամ Ոհան վարդապետն եւ կամ Պետրոս վարդապետն սիրով ընկալջիք եւ իւրաքանչիւր կարողութեան առատապէս ողորմութեամբ եւ արդիւնաւոր տրօք սատարեսջիք դմա... մէկ այնպէս արդիւնք ցուցէք, որ պատճառ լինիք նորա նորոգութեան...»[66]: Հովհան և Պետրոս վարդապետները նվիրատվությունների շնորհիվ Թիֆլիսում հավաքված որոշ գումարով ձեռնամուխ են լինում վանքի նորոգությանը: Սակայն շինարարությունն անավարտ է մնում նախ Պետրոսի, ապա ութ ամիս անց Հովհանի մահվան պատճառով: Միաբանների աջակցությամբ գործն իր ավարտին է հասցնում Հովհանին հաջորդած Հակոբ Շամբեցի առաջնորդը` թերի թողնելով միայն ներքին հարդարանքի որոշ աշխատանքներ. «Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՇամբեցի հոգիընկալ Յոհան եւ Պետրոս վարդապետքն, որք ձեռն արկին նորոգման զխախտեալ եւ զքայքայեալ եկեղեցին սրբոյն Ստ. Նախավկային, զոր բազում ջանիւք եւ աշխատութեամբ նորոգեցին յոլով ծախիւք առաւել պայծառ քան զառաջինն, բայց չեւ եւս էր կատարումն գործոյն եհաս վախճանն Պետրոս վարդապետին, զոր փոխեցաւ առ Տէր եւ զկնի Ը ամսոյ Յոհան վարդապետն եւս փոխեցաւ առ Տէր եւ մնաց եկեղեցին անկատար եւ Յակոբ վարդապետ որ յաջորդեաց զկնի նոցա յաթոռ սուրբ Նախավկային միաբանութեամբ հանդերձ ժրաջան եւ աշխատավոր եղբարց ամենեցուն նորոգեալ կատարումն հասոյց բազում երանգօք, բայց ի ներքոյ բազում պարտուց կան...»[67]:

1695 թ. սեպտեմբերի 20-ին արձակած կոնդակով Նահապետ Ա Եղեսիացի[68] կաթողիկոսը (1691-1705) վերստին հաստատում է Մաղարդավանքի իրավասությունն Աստապատ գյուղաքաղաքի և տեղի Սբ. Ստեփանոս վանքի նկատմամբ: Փաստաթղթից ակնհայտ է դառնում, որ Մովսես Տաթևացու 1631 թ. կոնդակից հետո էլ աստապատցիները շարունակում են ընդվզել Նախավկայի աթոռի դեմ` պահանջելով ստեղծել Մաղարդավանքից անկախ թեմ: Երկու կողմերի հարաբերությունները կարգավորելու նպատակով, ինչպես նաև ի պաշտպանություն առաջնորդարանի, հանդես են գալիս

---

La premiere fois que je fus a saint Estienne en la compagnie de quelques Armeniens avec qui je revenois d'Ispahan, deux Evкques suivis de plusieurs moines vinrent nous recevoir, & nous menerent dans une grande sale oщ nous fыmes bien traitez”).

65 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. 3, էջ 64:

66 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 102: Նույնի` նշվ. աշխ., Բ մաս, էջ 628-629: Եղիազար Ա Այնթապցու այս կոնդակը հիմք է տվել Հ. Քյուրտյանին եզրակացնելու, որ Հակոբ Ջուղայեցին իրականում արմատական վերաշինություն չի կատարել Մաղարդավանքում, ինչպես ազդարարում են վերոհիշյալ սկզբնաղբյուրները, մանավանդ որ «...կը պակսի վերաշինութեան (1654 ի) մասին հարկ եղած արձանագրութիւն, որ յաճախ կը գտնանք, ուր նորոգութեան մասին մանրամասնութիւններ կը տրուին» (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 31 (անտիպ):

67 **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 557:

68 Կոնդակի սկզբնամասը, ուր հիշատակվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի անունը, անընթեռնելի է: Սակայն ՌՃԽԴ (1695) տարեթվի առկայությունը վկայում է, որ այն գրվել է Նահապետ Ա Եղեսացու անունից (**Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 103):

Փիլիպպոս Աղբակեցին և Հակոբ Ջուղայեցին: Նահապետ կաթողիկոսը, մեկ անգամ ևս հստակեցնելով Էջմիածնի դիրքորոշումը վիճահարույց հարցում, վճռականորեն հայտարարում է, որ Նախավկայի թեմն անբաժանելի է և պահանջում է հնազանդվել հնուց հաստատված կարգին. «...կրկին եւ վերստին կարգեալ հաստատեցաք զօրհնեալ գիւղ ձեր Աստապատ սեպհական եւ հաստատուն թէմ եւ վիճակ սրբոյ աթոռոյն սուրբ Ստեփաննոսի Նախավկային Քրիստոսի, որ ոչ երբէք գոյ անդրադարձութիւն ...նզովիւք կապեցաք եւ փակեցաք. որ ոչ ի հայրապետաց եւ ոչ ի վարդապետաց եւ ոչ յայլոց ոչ ումի իշխանութիւն որոշել զձեզ ի սեպհական աթոռոյն ձերմէ սրբոյ վանիցն Նախավկային...»[69]:

Տեղյակ լինելով, որ վեճերի գլխավոր պատճառը եկեղեցական տուրքերն են, կաթողիկոսը կարգադրում է աստապատցիներին հասույթների միայն կեսն ուղարկել Մաղարդավանք, իսկ մյուս կեսը հատկացնել Աստապատի Սբ. Ստեփանոս վանքին. «Նաեւ զամենայն հոգեւորական արդիւնսն ձեր ...զպտղի, զսրբադրամն, զժամուցն, քառասնիցն, զհոգեբաժինն, զկողոպուտն, զտօնականն եւ զայլ ամենայն իրաւունս ...կիսաբաժին արասջիք, ուղիղ դատաստանաւ զկէսն առցէք ի դրունս Նախավկային եւ զկէսն տայցէք սուրբ Ստեփաննոսին»[70]:

Հատկանշական է, որ Սբ. Ստեփանոսի անունը կրող երկու նշանավոր հոգևոր կենտրոնների միջև ընթացող երկարամյա պայքարում Էջմիածինը՝ որպես կանոն, պաշտպանել է առաջնորդարանի շահերը: Հասկանալի է, որ եթե հայոց կաթողիկոսներն ընդառաջեին և Աստապատ գյուղն ու վանքը առանձնացնեին Դարաշամբի թեմից, ապա վաճառաշատ Ջուղան, Նախիջևանի ու Գողթան գավառները կհետևեին նրանց օրինակին, և Նախավկայի վանքը կզրկվեր Արաքս գետի ձախափնյա ընդարձակ ու հարուստ կալվածքներից, թեմին ենթակա բնակչությունից, ինչը լուրջ հարված կհասցներ վանքի հեղինակությանն ու տնտեսությանը:

**Մաղարդավանքը ԺԸ դարում.** 1704 թ. Նախիջևանցի Աղամալի մեկենասությամբ նորոգվում է Սբ. Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատը, 1711 թ. էլ կառուցվում է զանգակատունը[71]:

Աղեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը (1706-1714) Նախավկայի վանքը տնտեսական ծանր կացությունից դուրս բերելու և անհրաժեշտ նորոգություններ իրականացնելու համար արձակում է երկու կոնդակ, որոնցից առաջինով հանդիմանում է Գողթանի, Երնջակի և Նախիջևանի գավառների բնակչությանն իրենց պարտականությունների մեջ թերանալու հարցում, ապա կարգադրում հնարավորինս աջակցել վանքի բարեկարգման և նորոգության գործին[72]:

Երկրորդ կոնդակով կաթողիկոսը, դիմելով «ամենայն երկրի քաղաքաց եւ գեօղորէից» բնակչությանը, կրկին հորդորում է օժանդակել «վասն շինութեան սուրբ եկեղեցւոյ եւ պայծառութեան սուրբ Նախավկային», քանի որ «...սուրբ Նախավկայի վանքն ձեզ ամենեցուն յայտնի է այն վանիցն խարձն չքաւորութիւնն, պարտքն եւ նեղութիւնն եւս առաւել զանգակատունն նորոգեալ են եկեղեցոյն...»[73]:

Անհանգստացած Մաղարդավանքի տնտեսական իրավիճակի շարունակվող վատթարացմամբ՝ Կարապետ Ուլնեցի կաթողիկոսը 1729 թ. մարտի 25-ին դիմում է թեմի բնակչությանը: Վանքի ծանր դրությունն ու բազմաթիվ պարտքերը վերագրելով վաղօրոք տեղի ունեցած կողոպուտին ու այլազգիների խստագույն հարկապահանջությանը՝ վեհափառը հորդորում է ժողովրդին նվերներով և այլ միջոցներով մեծապես աջակից լինել նշանավոր մենաստանին և հանգանակություն հավաքելու իրավունք է տալիս տեղի միաբան Ստեփանոս վարդապետին. «Բայց այժմ ի սաստիկ եւ ի խստագոյն հարկապահանջութենէ այլասեռից, նաեւ յառաջագոյն կողոպուտ եւ աւար լինելոյ սուրբ ուխտն այն անկեալ կայ ի ներքոյ անհուն պարտուց եւ դատարկացեալ ամենայն բարեզարդութեանց եկեղեցական անօթից եւ այլ ամենայն պիտոյից իւրոց, մանաւանդ քանիցս անգամ ստայօղ բանիւ զրպարտեցին սուրբ ուխտն այն առնելով՝ տուգանս յոլովս, որ մեք տեղեակ իսկ եմք եւ ըստ կարի մերում օգնութիւն հասեալ եմք սուրբ ուխտին յայնոսիկ. վասն որոյ շնորհեցաք նամակս զայս ի ձեռն մեր հոգեւոր որդի եւ նորին վանաց միաբան Ստեփաննոս վարդապետին զալ եւ շրջիլ ի դրունս աստուածասիրացդ եւ խնդրել կամաւոր ողորմութիւն եւ քանզի այն սուրբ վանիցն ոչ գոյ այնքան յատուկ թէմ եւ վիճակ, ուստի կարիցեն զլեառնացեալ պարտսն վճարել եւ զքանդեալսն նորոգել եւ զմիաբանից եւ երբ եւ եկողաց կարիսն լցուցանել...: ...սուրբ տանն հասարակաց լիալիր եւ առատաձեռն եւ արդիւնարար տուրք եւ նուէրք, ընծայք եւ ողորմութիւն շնորհէք ի ձեռն դորա, որով կարասցեն զլեռնացեալ պարտսն վճարել, զքանդեալսն նորոգել եւ զկարիս միաբանիցն եւ երբ եւ եկողացն լցուցանել, նա եւս եկեղեցականաց անօթից եւ զգեստուց եւս օժանդակ լինիմք դմա, որով պայծառացուցեալ զարդարեսցեն

69 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 105-107: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 634-636:

70 **Ոսկեան Հ.,** նշվ. հոդվածը, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 107: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 636:

71 Տե՛ս սույն աշխ., էջ 285, արձ. Դ, էջ 294, արձ. ԿԵ:

72 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 110-112: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. աշխ., Բ մաս, էջ 644-646:

73 **Ոսկեան Հ.,** նշվ. հոդվածը, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 113-115: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. աշխ., Բ մաս, էջ 647-649:

զսուրբ տաճարն...»[74]: Կոնդակում չի հստակեցվում, թե ինչ դեպքերի մասին է խոսքը: Ենթադրվում է, որ Նախավկայի մենաստանը կարող էր ավերված լինել Թավրիզի 1721 թ. երկրաշարժից, ինչպես նաև թուրքական արշավանքի ժամանակ. «Հոն (կոնդակում) ակնարկութիւն չիկայ 1721ին Թաւրիզը կործանող երկրաշարժին մասին, որ կրնար մինչեւ Մաղարդավանք երկարած ըլլալ: Ոչ ալ խօսք կայ Աղուանական ապստամբութեան Սպահանի մօտ Կիւլնապատի յաղթանակէն վերջ 1722ին վիճակին, շատ հաւանաբար 1724ին թրքական արշաւանքին ատեն դէպի Թաւրիզ վանքը ենթարկուեցաւ կողոպուտի, ինչպէս 1725ին ամառը, երբ թուրքերը դարձեալ հարձակեցան Թաւրիզի վրայ եւ գրաւեցին»[75]:

Նախավկայի վանքին մեծ վնաս է հասցնում 1759 թ. նոյեմբերի 13-ի երկրաշարժը[76]: Ավերվում է համալիրի շրջապարսպի հարավային հատվածը, վնասվում են միաբանության խարխլված խցերն ու գլխավոր եկեղեցու տանիքը: Նույն թվականի նոյեմբերի 26-ին Հակոբ Շամախեցին Միքայել վանահորը հանձնարարում է նորոգել վնասված կառույցները՝ տալով նրան հանգանակության իրավունք, հորդորելով թեմի բնակչությանը մասնակից լինել այդ գործին. «...հռչակաւոր վանք սրբոյն Ստեփաննոսի Նախավկային Քրիստոսի եւ առաջին մարտիրոսին: Որ շնորհօքն Քրիստոսի կառուցեալ կայ յերկրին արևելից ի նահանգին Նախիջեւանու եւ ի գիւղն Շամբ. արդեանս ձեզ հայտնի է, որ սուրբ Ստեփաննոսի վանքն վաղնջուց գոլով՝ տանիք եկեղեցւոյն պարիսպն եւ կամ խցերն ամէն քայքայեալ են, մինչ զի վասն մեղաց մերոց այսմ ամի մեծ շարժ լեալ հարաւային կողմն պարսպին փլեալ եւ քակեալ եղեւ ի շարժից. վասն որոյ ոչ ունելով նոցա կարողութիւն եւ ոչ յատուկ թեմս, որ շինիցեն զքակեալն, որ եւ ծանուցեալ մեզ յիրաւի աղաւաղեցաք եւ զայս օրհնութեան կոնդակս տուաք ի ձեռն մեր սիրելի եւ հոգեւոր որդի եւ նորին առաջնորդ Մուսայէլ խոհեմամիտ վարդապետին գալ եւ շրջիլ ի դրունս աստուածասէր ողորմածացդ եւ խնդրել զկամաւոր ողորմութիւնս...»[77]:

Առաջին կոնդակից մեկ օր անց՝ նոյեմբերի 27-ին, Հակոբ կաթողիկոսը Նախավկայի թեմի բնակչության խնդրանքով վանքի միաբան Գրիգոր վարդապետին Էջմիածնում ձեռնադրում է եպիսկոպոս, կարգադրում ընդունել նրան «մեծաւ սիրով» և այդ ամենի մասին ծանուցում Մաղարդավանք ուղարկած երկրորդ կոնդակով[78]: Մինչ այդ՝ 1750 թ., Գրիգոր վարդապետը՝ իբրև վաքիլ (ներկայացուցիչ), իրականացնում է Ատենց Սամվելի որդիների հետ վանքի կնքած առուծախի գործարքը[79]:

1765 թ. հունվարին Գրիգոր վարդապետն արեղաներից մեկին Սարգիս վարդապետ Աստապատցու հետ երկրորդ անգամ է ուղարկում Էջմիածին՝ Սիմեոն Երևանցուց ժողովարարության կոնդակ ձեռք բերելու առաքելությամբ: Կաթողիկոսը զայրացած, որ վանքի առաջնորդը շարունակում է անտեսել Մայր Աթոռի առջև ունեցած պարտականությունները ու խախտել առաջնորդների գործելակերպի՝ հնուց սահմանված կարգը, ոչ միայն կոնդակ չի տալիս, այլև չի պատասխանում առաջնորդի դիմումին: Սրանից հետո Գրիգոր վարդապետը Մաղարդավանքի միաբան Հովհան վարդապետի ուղեկցությամբ, ստիպված անձամբ գնում է Էջմիածին: 1766 թ. դեկտեմբերին վերահաստատվում է իր պաշտոնում՝ կաթողիկոսից ստանալով և՛ առաջնորդության թուղթ, և՛ ընդհանրական ժողովարարության կոնդակ. «Եւ ապա վերստին զքացեալ ի նա հայրական խնամով շնորհեաց ինքեան զԱռաջնորդութիւն. վասնորոյ՝ և զթուղթ գրեալ ի վերայ վիճակի նորին վասն հաստատութեան վերստին տալոյ Առաջնորդութեանն՝ ետ նմա: Ետ ևս նմա վասն վանիցն զընդհանրական ժողովարարութեան կոնդակ...»[80]: Գրիգոր վարդապետը թուղթը Հովհանի հետ ուղարկում է թեմ, իսկ ինքը մեկնում է Կարս՝ Նախավկայի համար հանգանակություն կատարելու նպատակով:

Կարսից տունդարձի ճանապարհին հանդիպում է կաթողիկոսին և մեկնում Թավրիզ (1767 թ.). «Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի վանիցն որ ի Շամբ՝ Առաջնորդ Գրիգոր վարդապետն, դարձեալ ի ժողովարարութենէ եկն ի սուրբ Աթոռս եւ կամէր երթալ ի վանսն իւր: Այլ սրբազան Վեհն զնուիրակական կոնդակ գրեալ վասն նորա ետ նմա զնուիրակութիւն Թարվիզու: Եւ զվեց յանձնարարութիւն եւս ետ նմա առանց անուան»[81]: Միաժամանակ կաթողիկոսը գրավոր դիմում է Նախիջևանի Քյարիմ և Խոյի Ահմադ խաներին՝ խնդրելով նրանց օժանդակել Նախավկայի թեմին, ինչպես նաև կոնդակ է հղում վանքի միաբանությանն ու ժողովրդին՝ պատվիրելով նրանց «հնազանդիլ Գրիգոր վարդապետին» և նրա հետ համագործակցել Նախավկայի վերաշինության հարցում («վանիցն շինութեան լինիլ հոգածու»)[82]:

---

74 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 120-121: Տե՛ս նաև **նույնի**՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 658-659:

75 **Քիւրտեան Յ.,** նշվ. հոդվ., էջ 41 (անտիպ): Թավրիզի 1721 թ. ապրիլի 15-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի մասին քանիցս վկայում են ժամանակագիրները (տե՛ս ՄԺԱ, էջ 305, էջ 328: ՄԺԲ, 430):

76 «Թվին ՌՄԸ (1759) նոյեմբերի ԺԳ (13) մեծ շարժ եկաւ Նախչվան երկիր» (ՄԺԲ, 526):

77 **Ոսկեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 123-124: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 664-665:

78 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 124-126:

79 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 23-24:

80 ԴՀՊ, գիրք Գ, էջ 409-410:

81 Նշվ. աշխ., էջ 615:

82 Նշվ. աշխ., էջ 615-616:

1767 թ. օգնության խնդրանքով մի գրություն է հղվում Մաղարդավանքի միաբան Հովհան վարդապետին. «Խանն՝ զիւզբաշի Ալլահվէրտին յղէր ի Նախիջևան, բերել ի հին Ջուղայու զջրաղացաքարինս. եւ սրբազանն ևս կամելով բերել տալ, գրեաց զթուղթ մի առ Ալլահվէրտին, զի և վասն մեր բերցէ: Եւս առ Շամբայ սրբոյ նախավկայի վէքիլ Յօհան վարդապետն, զի օգնեսցէ Ալլահվէրտուն պիտոյիւք փայտից: Որք բերեալք եղեն, բայց խանն զաւթեաց և մեզ չետ...»[83]:

1780 թ. Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը (1780-1799) «սբ. Նախավկայի վանից Առաջնորդ Գրիգոր վարդապետն» ծանուցում է Սիմեոն Երևանցու մահը, հայրապետական ընտրությունն ու իր օծումը[84]:

1782 թ. կաթողիկոսը ևս մի կոնդակ է հղում «առ Նախավկայի վանից ծերունի Գրիգոր վարդապետն»[85]:

Գրիգոր վարդապետի երկարատև պաշտոնավարության տարիներին Դարաշամբի վանքը հասնում է տնտեսական որոշ ձեռքբերումների՝ վանքապատկան կալվածքներն ավելացնելով առուծախի գործարքների շնորհիվ (1765, 1772, 1777, 1780 թվականներին և այլն):

1787 թ. հուլիսին գրվել է, որ «Արդ, այնպիսի անուանի վանօրէիցն մի էր հրաշազարդ եւ չքնաղակերտ վանքն սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի Քրիստոսի եւ առաջին մարտիրոսի, որ շնորհիւն Աստուծոյ կառուցեալ կայ ի յերկիրն Նախիջեւանու եւ ի ձորն Շամպայ, յայնկոյս Երասխ գետոյ, յանդիման հին Ջուղայու: Յուրում գոն ամփոփեալք մասն մի ի փուշս պսակէն Քրիստոսի եւ այլ քանի սրբութիւնք եւ մասունք ի սրբոյն Ստեփաննոսէ Նախավկայէն եւ ի քանեաց անուանի եւ գերահրաշ սրբոց, այլեւ բազմաց սրբոց վկայից եւ մարտիրոսաց նշխարք, որք միջնորդք եւ բարեխօս են առ Քրիստոս վասն ամենայն հաւատացելոց, մանաւանդ վասն օրհնեալ ազգի մերոյ: Իսկ սուրբ ուխտն այն յայսմ չարաշատ ժամանակիս ենթարկեալ է ի ներքոյ ծանր պարտուց եւ յոլով պակասութեանց յամենայն կողմանէ, եւ դատարկացեալ է յամենայն պիտոյից: Որոյ պատճառն յայտնի է ամենեցունց, քանզի գիտէք ահա, որ բոլոր տունն Նախիջեւանու այս քանի ամ է, զի կայ ի մէջ մեծի վրդովման եւ խառնակութեան, որոյ բնակչացն ոչ գոյ հանգստութիւն, ուստի եւ սրբոյ վանիցն այնմիկ եւ ոչ գոյ ապահովութիւն, եւ մուտք եւ արդիւնք նորին եւս նուազեալ են իսպառ: Քանզի սուրբ վանքն այն ոչ ունի ըստ բաւականին զթեմ եւ վիճակ, որպէս զի նորօք կառաւարեսցի»[86]:

**Մաղարդավանքը ԺԹ դարում**. 1819 թ. այցելուն գրել է. «Քարաշէն է և բարձրակառոյց, որոյ սեամք, բարաւորք դրանց, և առընթեր նոցա յատակն՝ երևեցուցին ինձ սեաւ կճեայ սալս մեծամեծս, որք թուէին արտադրեալս 'ի մերձակայ լեռնէ անտի»[87]:

Գ. Շերմազանյանցը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև վանքի ընդհանուր կացության, մահմեդական բնակչության շրջանում, մասնավորապես պարսից արքունիքում նրա ունեցած մեծ հեղինակության մասին. «Վանքումս կային չորս վարդապետք բաց ի վանահօրէն (որոյ անունն էր Յովհաննէս), մին քահանայ, մի ժամկոչ և մին տնտես իւրեանց ընտանեօքն և հինգ աշխարհական գերդաստանք, որք կատարում են Մենաստանի վերաբերեալ ամենայն մշակութիւնքն: Ունի ցանելոյ հողեր և քանի մի հարիւր ոչխար, եզներ և գոմէշներ վարելոյ և հերկելոյ համար: Վարդապետներն երբեմն երբեմն կերթան նուիրակութեան Խօյ, Սալմաստ, Որմի, Նախիջևան և Ագուլիս, որ տեղաց շատ ուխտաւորներ կը գան ամենայն տարի: Որպէս ասաց, մինչև Ռուսաց պատերազմն շատ արդիւնք է ունեցած վանքն ուխտաւորներիցն, բայց հիմի տասն և հինգ օր արգելանոցի (կարանթինի) համար շատ նուազել է: Չորս կողմի Պարսիկներն ևս կգան ուխտ, մանաւանդ նրանք, որոց երեխայ չէ ծնում: Մահմետականներն ինքեանք վկայում էին, թէ շատ կան մեր մէջն Դանըղկուլի անուամբ, ըստ որում որոնք եկած են ուխտ, որդի ծնելուց յետը՝ ծնողքն նորա անուանած են Դանըղկուլի, այս ինքն ծառայ Ստեփաննոսի Նախավկային. զի նոքա Ստեփաննոս Նախավկային Դանըղ փեղէմբէր ասեն, այս ինքն Մարգարէ ...Որքան ամանեղէն կայ վանքումն՝ բոլորն էլ պղնձից է, որք ժողոված են որդեծննդութեան համար ուխտաւորածներէն. որդեծննդութեան ուխտաւորքն վերադառնալիս իւրեանց տունը՝ մին կամ աւելի կտոր աման կը գողանան, այս ինքն ծածուկ հետերնին կտանեն ...Գողացած աման տանողն էնքան ժամանակ կպահէ, որ մինչև երեխայ ծնանելն, երբ և միևնոյն ծանրութեամբ պետք է շինել տայ, իւր յիշատակարանը, Հայն՝ հայերէն, թուրքն՝ պարսկերէն, գրել տայ վրէն, ու ուղարկէ կամ ինքն գալիս՝ բերէ վանքն ...Ինձ մարանումը ցոյց տուին հազարաւոր մեծամեծ պղնձէ ամաններ ոսկեզօծ և հասարակ տառերով յիշատակարաններով, որոց միջին ամենագովելին էր Աբբաս-Միրզայ Շահզատայինը, ժառանգին Ֆատալի Շահի, և նորա որդուց Ջհանգիր և Խօսրով միրզայիցն:

Որպէս ասացին՝ վերջնոցս մայրն, որ զաւակ չէր ծնում, ուխտում է Նախավկային և գալիս վանքն, վերադառնալիս ամաններէն գողանալ է տալիս տանում: Քանի մի տարից յետն ծնում է Ջհանգիր միրզին. ինքն և իւր ամուսինը՝ այս ինքն Աբբաս-

83 ԴՀՊ, գիրք Գ, էջ 712:

84 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 458:

85 Նույն տեղում, էջ 461: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 128:

86 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 268-269:

87 **Թաղիադեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 244-245:

Միրզայն՝ մեծամեծ պարգևօք և պղնձեղէնօք գալիս են վանքն: Քանի տարուց յետն ծնում է Խօսրով-Միրզայն և սրա համար նս գալիս են վանքն ուխտ: Երբ որդիքը մեծանում են, նոքա նոյնպէս յաճախում են վանքն: Աբբաս-Միրզէն Մայրականու կողմերքն շատ որսորդութիւն է գալիս լինում, զարմանք չէր, այնքան հովանաւորութիւնն որ ունեցել է Սարգիս վարդապետի վրայ, որպէս լսած եմ, պատճառն այն էր, որ շատ անգամ օթաղայած լինի մենաստանումս»[88]:

1826-1827 թթ. Թիֆլիս քաղաքի բնակիչ (հետագայում՝ քաղաքագլուխ), ծնունդով ջուղայեցի աղա Շերմազանի միջոցներով վերստին նորոգվում է եկեղեցին («նորոգեցաւ տունս կրկին»), վերականգնվում են ԺԷ դարի 90-ական թվականներին Նաղաշ Հովնաթանի ստեղծած որմնանկարները[89]:

**Ռուս-պարսկական պատերազմը և Թուրքմենչայի պայմանագիրը.** 1826-1828 թթ. պատերազմը ծանր հարված է հասցնում նաև Նախավկայի վանքին: Թուրքմենչայի պայմանագրի հետևանքով վանքը կորցնում է Արաքս գետի ձախ ափին ընկած իր կալվածքները, Նախիջևանի և Գողթան գավառներում թեմին ենթակա գյուղերը: Բացի այդ, պայմանագրի համաձայն, տասնյակ հազարավոր հայեր, լքելով իրենց բնակության վայրերը, ստիպողաբար ներգաղթում են Արևելյան Հայաստան և Կովկաս: Ատրպատականի փոխարքա թագաժառանգ Աբաս-Միրզան, որոշ արտոնություններ տալով, բնակիչների մի մասին (օրինակ՝ Սալմաստ գավառի հայությանը), կարողանում է հետ պահել գաղթելու մտքից:

**Մաղարդավանքը 1830-1890-ական թվականներին.** հետպատերազմյան առաջին տարիներին զիջումները շարունակվում են: Երբ 1831 թ. վանահայր Սարգիս Դավթյանը 300 թումանով գնում է Շամբ գյուղն ու նվիրում մենաստանին[90], Աբաս-Միրզան հրովարտակով արքունական հարկից ազատում է գյուղացիներին և այդ մասին վկայող պարսկերեն արձանագրությունը փորագրել տալիս վանքի գլխավոր եկեղեցու շքամուտքից վեր: Գյուղի նվիրատվության վերաբերյալ գրվել է նաև, որ «նորին բարձրությունը այն մտքով չնվիրեց այս գյուղը վանքին, որ նորա արդյունքը Էջմիածինը տանե. նա նվիրեց պարսից տերության մեջ գտնված մի վանք և Պարսկաստանի հայ ժողովրդի պետքի համար գործածելու»[91]:

Զրկվելով հավատացյալների ծանրակշիռ մասից, եկամտի աղբյուրներից (եկեղեցական տուրքեր, ուխտավորների նվիրատվություններ և այլն) ու տնտեսապես խեղճանալով՝ փոքրաթիվ միաբանությունը, որ բաղկացած էր 10-15 հոգուց, փակում է դպրոցը: Վանքում պահվող ձեռագրերի մի մասը կաթողիկոսի կարգադրությամբ փոխադրվում է Էջմիածին:

1830-ական թվականներին վանքի տարածքում տակավին նշմարվում էին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ձեռնարկած և նրա մահվանպատճառով անավարտ մնացած երկու՝ հյուսիսային և արևմտյան զանգակատների հիմքերը[92]:

Նույն ժամանակաշրջանում քանդված էր նաև Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու ծածկը. «Կից յայս տաճար (իմա՛ Սբ. Ստեփանոս եկեղեցի, Ա. Հ.) ի հիւսիսակողմն է փոքրիկ եկեղեցի ընդ երկայնութիւն մեծի եկեղեցւոյն՝ յանուն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, բայց օրորոցաձև կամարայարկն խոնարհ»[93]:

1840 թ. հունիսի 20-ի հզոր երկրաշարժը նոր հարված է հասցնում մենաստանին. «...Նախավկայի վանքն յերկիրն Պարսից... հաղորդեցան նոյնպէս վերատառեալ վնասուց...»[94]: Հիմնականում ավերվում է համալիրի զանգակատունը: «...Զանգակատունն, որոյ գմբէթն 1840 ամի երկրաշարժութենէն խոնարհուած էր եւ երեք սիւներն մնացած էին»[95]:

Ստեղծված անբարենպաստ վիճակի պատճառով Թադեոս առաքյալի և Ստեփանոս նախավկայի թեմերը միավորվում են: Կազմվում է Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդությունը՝ կենտրոն ունենալով հայաշատ և օրեցօր ծաղկող Թավրիզը:

Վանքի հիշատակությանը հանդիպում ենք 1840-ական թվականներին[96]:

Երկրաշարժից ավելի քան մեկ տասնամյակ անց՝ 1854 թ., ագուլեցի մահտեսի Գալուստ և Մկրտիչ Տեր-Մկրտչյանց եղբայրների մեկենասությամբ նորոգվում է վանքի զանգակատունը[97]: Ի դեպ, երկրորդ անգամ այն վերակառուցվում է 1879 թ.՝ հիննախիջևանցի Կարապետի միջոցներով[98]:

1864 թ. հունիսին Մ. Սմբատյանցը, որպես վանահայր, իր պաշտոնավայրում հանդիպում է Ատրպատականի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանցին (վանքը ծառայում էր որպես

88 **Շերմազանեանց Գ.**, Ճանապարհորդութիւն Հայաստանումը. 1842 թիւ, 12 օգոստոսի, Մաղարթու Նախավկայի վանքումը, «Արարատ», 1877, էջ 58-59: Տեղեկություններից մեկի համաձայն՝ նույնիսկ օտարազգի չբեր կանայք էին ուխտի գալիս վանք. նրանց նվիրած պղնձեղենը հավաքված էր ավանդատան մեջ (տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521):

89 **Հախնազարեան Ա.**, Իրանում գտնվող հայկական վանքերի պատմութիւնը. Ս. Ստեփանոս Նախավկայ, «Ալիք», 1983, № 164, էջ 6: Տե՛ս նաև **Այվազյան Ա.**, Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998, էջ 33-35: Վերականգնման աշխատանքների մասին տե՛ս նույն աշխ., էջ 301-302, արձ. ՃՁ:

90 Արձանագրությունը տե՛ս նույն աշխ., էջ 169, արձ. ԿԹ:

91 **Րաֆֆի**, Պարսկաստան, ԵԺ, հ. 10, Երևան, 1991, էջ 378:

92 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 313-315:

93 Նշվ. աշխ., հ. Բ, էջ 316:

94 «Արարատ», 1917, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 760:

95 **Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 26:

96 **Rev. John. Mason Neale**, A History of the Holy Eastern Church, part I, p. 106.

97 Վիմագիրը տե՛ս նույն աշխ., էջ 317, արձ. ՄԷ:

98 Վիմագիրը տե՛ս նույն աշխ., էջ 318, արձ. ՄԹ:

ամառանոց): Թեմի առաջնորդը հուլիսին Սմբատյանցին վանքի նորոգության ծախսը հոգալու նպատակով հանձնարարում է Նախիջևանի գավառում անցկացնել հանգանակություն, սակայն «Օգոստոսի վերջերումը վերադարձայ Սբ. Նախավկայի վանքը, գրուածքս մնաց ինձ, իսկ նուիրադրամը հասաւ առաջնորդին, որով իբր թէ վանքը պէտք է նորոգեր, բայց ձեռք չտուեց, միայն` ներքևը` ծառերի միջի փոքր աւազանը հաճեցաւ նորոգել, այն էլ թողուց թերի և հոկտեմբերի սկզբներում գնաց Խոյ և Սալմաստ: Ինձ էլ հետը տարաւ Խոյ և Սալմաստ, և այնտեղից ուղարկեց Որմի` նուիրակութեան պաշտօնով: Երբ որ նուիրակութիւնից 1865 թւին (մարտին) վերադարձայ Սբ. Նախավկայի վանքը` վանահայրութեան պաշտօնիս, սկսեցի պատրաստութիւն տեսնել վանքի տանեաց նորոգութեան համար»[99]:

1865-1866 թթ. նորոգվում են եկեղեցու տանիքը և հյուսիսային կողմի խցերը[100]:

1889 թ. Նախավկայի վանք այցելած ուխտավորները ենթարկվում են շրջակայքի քուրդ և թաթար բնակչության զինված հարձակումներին: Ուխտավորներից շատերը վիրավորվում և կողոպտվում են: Նույն թվականի հոկտեմբերի 14-ին Էջմիածնի սինոդի անդամ Սարգիս եպիսկոպոսը հատուկ գրությամբ դիմում է Թեհրանում Ռուսական կայսրության ներկայացուցչությանը` խնդրելով չարագործներին պատժելու համար միջնորդել իրանական կառավարության առջև: Հարցերը կարգավորելու նպատակով վանք է այցելում Միրզա Մամեդ խանը և տեսակցում վանահայր Հակոբ վարդապետ Նորատունկյանի հետ: Սակայն վերջինս հայտարարում է, որ ուխտավորների հանդեպ որևէ բռնություն չի գործադրվել, և արյունահեղություն էլ չի եղել: Այս մասին 1890 թ. հունվարի 11-ին Սարգիս եպիսկոպոսին ուղարկած նամակում հայտնում է կայսրության ներկայացուցչության գործերի կառավարիչ Իվան Գրիգորովիչը և դժգոհությամբ հավելում, որ իր նմանօրինակ վարքագծով Հակոբ վարդապետը կառավարության առջև ներկայացուցչությանն անհարմար դրության մեջ է դրել, քանի որ վերջինս, հիմնվելով Սինոդից ստացված գրության վրա, դեպքերի մասին հայտարարել էր իբրև հաստատապես կատարված իրողություն[101]:

1890 թ. օգոստոսի 18-ի տվյալներից մեկի համաձայն` Ստեփանոս նախավկայի վանքը «...արդի վանքերի մէջ ...առաջնակարգ դիրք է բռնում իր հոյակապութեամբ և հնութեամբ: Այս վաղեմի, հոչակաւոր վանքը մեծ է, սրբատաշ քարերից շինած և լի բազմաթիւ արձանագրութիւններով: Նրա չորս կողմը բերդ է, բարձր քարէ պարիսպներով և բուրգերով, ուխտաւորների համար ունի անթիւ սենեակներ, թէ մեծ և թէ փոքր: Սենեակների մեծ մասը մութ են, որպէս մեր բոլոր վանքերում և ծառայել են միաբանների համար իբրև խուցեր... սենեակները խիստ կեղտոտ են պահվում և տարէնը մի անգամ գոնէ չեն մաքրվում: Տեղ-տեղ կտուրները խոնարհած են և բացված են նրանց մէջ ահագին ծակեր... Մնացած սենեակները շատ էլ լաւ չեն, և եթէ չը նորոգվեն, մեծ վտանգ է սպառնում ուխտաւորներին: Վանքի մէջ, սեղանի աջակողմեան խորանում, զետեղված է գեղեցիկ թանգարանը: ...վանքը... 1100 տարվայ շինութիւն է: Նրա առաջն ընկած է ընդարձակ անտառ ընկուզենիներով, փշատի և թթի ծառերով: ...Վանքի առջև վազում է մի աղբիւր, սառ և վճիտ ջրով... Աղբիւրը հոսում է քարեղէն լճի մէջ. լճակը բաւական մեծ է, խոր և քառակուսի ձևով շինած. նրա յատակը հաւասար է և նոյնպէս սրբատաշ քարից... Հրաշալի տեսարան է պատկերացում վանքը իր շրջակայքով, կանգնած սարի լանջի վրա, իր չորս կողմը ունենալով բարձրաբերձ և մերկ լեռներ...»[102]:

1890 թ. վանքը տակավին խարխլված վիճակում էր և կարոտ նորոգության: Դեկտեմբերի 25-ին Ջուղա գյուղի բնակիչներ Ավի, Գալուստ, Գուլգուլ Մելիք-Պապյան Մելիք-Ստեփանյանցները և Մարտիրոս Պետրոսյանն առաջարկում են «...Նախավկայի վանքի արևելեան աւերակ հին սենեակների դիմաց կապեն պատշգամներ սեփական ծախքով...»[103]: Մակար Թ Թեղուտցի կաթողիկոսը (1885-1891) ոչ միայն ընդունում է բարեգործ անձանց առաջարկը, այլև խոստանում աշխատանքների հաջող ավարտման դեպքում խրախուսական կոնդակ հղել նորոգումների հանձնառուներին: Կոնդակը գրվել է 1891 թ. մարտի 24-ին, ուր մասնավորապես ասված է. «...ըստ խոստման իւրեանց փութացին այժմէն իսկ առնել շինուածս ի գերահռչակ վանս Ստեփաննոսի Նախավկայի և յաւարտ շինութեանցն այնցիկ տալ տեղեկութիւն նորին օծութեան զի ի տրիտուր ա(ստու)ծահաճոյ գործոց նոցին առաքեսցի յանուն յիշեալ բարեպաշտ յարանցն Հայրապետական կոնդակ օրհնութեան»[104]:

1891 թ. նոյեմբերին վանքն այցելուին երևացել է «...իւր գեղեցիկ դիրքով: Բայց դա աւելի ամրոցի է նման, քան վանքի: Նա ընկած է խոր ձորի մէջ, մի փոքրիկ հարթութեան վրայ: Վանքը գեղեցիկ շենք ունի, միայն կաթուղիկէն ցածր է: Չորս կողմի ահագին, հաստ պարիսպը 2-5 սաժէն բարձրութիւն ունի: Վանքին կից կայ և մի ուրիշ շինութիւն, որն ունի 20-ի չափ սենեակներ: Ինչպէս երևում է, հնումը դա ունեցել է մի ամբողջ միաբանութիւն, իսկ հիմայ ամայի դրութեան մէջ է: Միայն երեք ամիս է, որ այդ-

99 ՀԱԴ, ֆ. 429, ց. 1, գ. 228, թ. 4:

100 Վիմագիրը տե՛ս սույն աշխ., էջ 318, արձ. ՄԸ:

101 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 177ա, թ. 5-6:

102 **Ա. Ե.**, Նամակ Հին-Նախիջևանից, «Մշակ», 1890, № 100, էջ 2:

103 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 141, թ. 5:

104 Նշվ. գործը, թ. 7:

տեղ վանահայր նշանակված է մի երիտասարդ վարդապետ, Վահան անունով: Արդէն սկսել է վանքի տնտեսական մասը հոգատարութեամբ բարելաւել, մի քանի կով ու առջառներ է ձեռք բերել, փոքրիկ անտառը, որի ծառերը, իւր նախորդի օրով կտրատել, փչացրել են, կարգաւորում է: Տարէնը մի անգամ մեծ ուխտագնացութիւն է լինում այդ վանքը, ուր գալիս են մինչև անգամ պարսիկ խաներ...

Գերապատիւ Վահան վարդապետի նախորդը թույլ, ագահ մարդ է եղել, այնպէս որ իւր դուրս վռնտելու ժամանակ վանքն ամայութեան է հասցրել: Այս տեղեկութիւններն ինձ հաղորդեց ժողովուրդը»[105]:

1893 թ. դրությամբ վանքը «...օրէցօր քայքայում է վանահօր և նրա նախորդների անհոգութիւնից»[106]:

1895 թ. հունվարի սկզբին Ատրպատականի թեմի առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսը գրություն է հղում Խաչիկ վարդապետին, որում անդրադառնում է Վարմազիար գյուղի բնակիչներին, որոնք իրենց ավազակաբարո գործողություններով մշտապես «նեղութիւն են պատճառած Նախավկայի սուրբ Ստեփաննոսի վանուց վանահայր Աբրահամ Ռշտունիին»[107]:

ԺԹ դարավերջին վանքի տնտեսական դրությունը շարունակում էր մնալ անմխիթար: Եկամտի հիմնական աղբյուրներից զրկված միաբանության միակ ապրուստը Դարաշամբ գյուղի բնակչության տված չնչին հասույթն էր, որն էլ վանքը ստանում էր մեծ դժվարությամբ: 1899 թ. սեպտեմբերի 26-ին Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսին ուղարկած գրության մեջ Աբրահամ վարդապետը հայտնում էր, որ «...վանքն զրկուած է իւր հասոյթներից ...և համարեա ոչինչ ցորեն չունի..., որ կարողանայ ծառայից ապրուստն հոգալ», որ «վանքի դրութիւնն խիստ աննախանձելի է ի նկատի ունելով ներկայ աղքատիկ և դառն, անտանելի վիճակը»[108]: Վանահայրը ցավով նշում է, որ դարաշամբցիները «մտադիր են խպառ դադարեցնիլ վանքի հասոյթն, ...և գիշեր ու ցերէկ ջանքն են անում վանքն զրկել՝ իրենք շահել, աջակից ունենալով և վարմազիարցւոց ...պարսիկներին... Այս գրածս ոչ թէ զրպարտութիւն է և բողոք, այլ իրաւացի է, որովհետև նախկին վանահայրերու հետն ալ այս տեսակ խառնակութիւններ միշտ արել են: Առաջ էլ Պողոս Նաթանեանի հետ, Մեսրոբ արքեպիսկոպոսի, ջահուկեցի Յովհաննէս վարդապետի, Թաթէոս վարդապետի հետ. վանքի հասոյթների համար ամենքի հետ վատութիւն արել են մշտական... Մինչև այժմ չեն տուել և չեն ուզում էլ տալ: Նախիջևանի փոխանորդ բարձրապատիւ Սիոն վարդապետ գրաւ, որ տային իրենց հասոյթներն և պտուղներն. ոչինչ նշանակութիւն չտուին գրածին. այժմ մենք առանց ապրուստի և սնունդի մնացել ենք վանքի մէջ դատարկ»: Գրության վերջում Աբրահամ Ռշտունին խնդրում է կաթողիկոսին՝ դարաշամբցիներից «խստիվ պահանջել իւրեանց հասոյթներն և պտուղներն, որպէսզի չմնայ իրենց վրայ, մի վատ սովորութիւն դառնայ իւրեանց»[109]:

Հայտնի է, որ ինչպես Թադեոս առաքյալի վանքը, այնպես էլ Մաղարդավանքը զինատար խմբերի համար ծառայում էին զենք անցկացնելու կարևորագույն կետերից մեկը. «Նախավկայի վանքը ինկած է Արաքսի ափին մէն-մինակ, շրջապատուած թուրք գիւղերով. իր կողքին ունի հայաբնակ գիւղ մը՝ Դարաշամբը: Դեռ 90ական թուականներէն սկսած այդ հինաւուրց վանքը եւ գիւղը կ'օգտագործուէին յեղափոխական նպատակներով, տրուած ըլլալով որ այդտեղէն փոխադրական ճանապարհ կը բացուէր Անդրկովկասէն դէպի Թաւրիզ, Խոյ, Սալմաստ եւ Թադէոս Առաքեալի վանքը»[110]:

**Մաղարդավանքը Ի դարասկզբին**. 1900 թ. վանքի վերաբերյալ, որը խիստ նորոգության կարոտ էր, գրվել է. «Եկեղեցիի տանիքի սալաքարերը թափուել են, որ ձիւնի հալոցի և անձրևի ջուրը ծծելով տանիքը փուլ է գալու. նորոգութեան պէտք ունի: Զանգակատունը երևում է, որ օրըստօրէ խախխլում է, փուխր քարից է, սիւները և գմբէթի վարի շրջապատը, նորոգւելու է և այժմ փոքր ծախքով կարելի է նորոգել: Վանքի հարաւային կողմում առանձին շինութիւններ կան մի փոքրիկ բակով, շուրջը կրկնայարկ շինութիւններ 40-ի չափ սենեակներով. այստեղ են հացատունը, խոհարանը, միաբանաց սեղանատունը, ամբարը, մառանը և այլն: ...Այս վերոգրեալ սենեակները կիսաքանդ և անհաստատ են, որոնցմէ 30-ից աւելին դուռ և պատուհան չունեն. փոխանակ այս՝ քանդուածներու թիւը քչացնել և մնացածները կանոնաւորելով հաստատել պէտք է: Վերոգրեալ 3 շինութիւնների, այն է՝ եկեղեցւոյ տանիքը, զանգակատունը և քարուքանդ և անհաստատ սենեակների նորոգութեանց համար մօտաւորապէս 4 հազար ռուպլու ծախքի կարիք կայ»[111]:

1903 թ. նոյեմբերի 11-ին վանահայր Ղևոնդ վարդապետը դիմում է Մկրտիչ Ա կաթողիկոսին «...Մեսրոպ վ-ից ստացված 4 որբերը վանքում պատսպարելու...» խնդրանքով[112]:

1904 թ. վանքը տակավին նույն անմխիթար վիճակում էր. «Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, որ իր փառահեղ անցեալի միայն մի խղճուկ մնացորդն է ներկայացնում, ուղղակի ողբում է իր դրու-

105 Ճանապարհորդական յիշողութիւններ **Պետոյի** (**Պետյան Կ.**), «Մուրճ», 1891, № 11, էջ 1312:

106 «Արաքս», 1893, Ա, էջ 11:

107 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 179, թ. 26 շրջ.:

108 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 346, թ. 116:

109 Նույն տեղում:

110 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Թեհրան, 1982, էջ 11:

111 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 417, թ. 59:

112 Մատենադարան, ց. 46բ, Խրիմյան կաթողիկոսի արխիվ, թղթ. 113, վավ. 205:

թյունը: Զրկւած է նա իր անցեալ հարստութիւններից, ամայացած է գեղեցիկ շրջակայքը, խլւած կալւածները և թողնւած մի յեղաթիւրւած բեկոր: Բայց նա ասես իր դրութիւնը թեթևացնելու համար ամուր կպցրել է կրծքին իր մի քանի հարազատներին և չի ուզում հեշտութեամբ զատւել, պոկ գալ: Դա իր՝ վանքի գիւղն է...»[113]:

1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ և հետագա տարիներին Նախավկայի վանքը եղել է անօթևան հայ գաղթականների ապաստանը: Դեպքերի ժամանակակից Մուսավի Մակվեցին գրել է. «Ականատես էի, թե ինչպես 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Սբ. Ստեփանոսի վանքի, որին տեղացի խլամ բնակչությունը «Սբ. Դանիել» է կոչում, պարիսպներին էին ապավինել Նախիջևանի և Դարաշամբի փախստական հայերը»[114]: Մեկ այլ վկայությամբ՝ «...վանքի ամբողջ ընդարձակ բակը լի էր Նախիջևանի գավառից և հայերով բնակեցված հարևան Դարաշամբ պարսկական գյուղից [եկած] փախստականներով»[115]:

Նույն թվականին նշվել է նաև, որ «Վանքը իրենից ներկայացնում է հսկայական մի շինություն՝ շրջափակված անկյուններում աշտարակներ ունեցող միջնադարին բնորոշ պարսպապատով: Այնտեղ ես գտա խեղճ, տանջված տեսքով կանանց, երեխաների մեծ կույտ»[116]:

1906 թ. գանձակեցի Նիկոլ Օղաբաշյանն ուղևորվում է «...Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքը, Հ.Յ.Դ-եան Կեդրոնի կարգադրութեամբ պահեստներ պատրաստելու՝ զէնքի փոխադրութեան համար: Վանքը ռուս-պարսկական սահմանումն է գտնւում, պարսից կողմը, բարձր բլուրի վերայ, Ջուլֆայից ոչ շատ հեռու: Ես ուղարկւած էի կաթողիկոսից իբր ուսուցիչ վանքի գիւղի երեխաների համար: Իմ բուն նպատակը գիտէր միայն վանքի վարդապետը...»[117]: Սակայն «Սուրբ Ստեփաննոս նախավկայի պահեստները թէև պատրաստ էին, բայց այդ գիծը անյարմար հարմարուեց»[118]:

Ի դեպ, ըստ նրա՝ Մաղարդավանքը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն հայերի, այլև մահմեդականների շրջանում. «Հայերի չափ թուրքերն էլ կը հաւատային այդ վանքի ուժին եւ ընտանիքով ուխտի կուգային, մատաղներ կը մորթէին, գիշերը հոն կը մնային եւ կ'երթային»[119]:

1908 թ. Մեսրոպ Մակվեցին վկայել է. «...միւս օրն իսկ մեկնէի Ջուլֆա կամ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը՝ Մուրատի խմբի համար՝ Արաքսի ռուսական ափը սպասող զէնքերը Սալմաստ փոխադրելու համար»[120]:

1910 թ. հիննախիջևանցի Խաչատուր Վարդանյանը, «ձեռամբ Ջուղայեցի Ալի Մելիք-Ստեփանեանցի», հինգ հարյուր ռուբլի գումարով նորոգում է գլխավոր եկեղեցու տանիքը և այդ մասին թողնում արձանագրություն զանգակատան առաջին հարկում *(տե՛ս սույն աշխ., էջ 318, տե՛ս արձ. ՄԺ)*:

**Մաղարդավանքը 1914-1921 թթ.** 1914 թ. ապրիլի 30-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոսը մի գրություն է հղում Գևորգ Ե կաթողիկոսին՝ նկարագրելով վանքի անմխիթար վիճակը վանահայր Ղևոնդ վարդապետի ապաշնորհության պատճառով. «Ղևոնդ վարդապետ նշանակուած է վանահայր Նախավկայի՝ 1903-ին Խրիմեան հանգուցեալ հայրապետի կոնդակով. ստացել է Դարաշամբ հայ գիւղի և վանքի վարելահողերից տարեկան ամենաքիչը 500 րուբլի և Աստապատի հողերից 500-600 րուբլի, ընդ ամենայն տարեկան ստացել է 1000-1200 րուբլի, ունի 100 ոչխար, 5 կով, մի տնտես, մի ծառայ, երկու անասնապահ-հովիւ: Առաջնորդութեանս առաջին ամիսներում մի շաբթով եղայ վանքում ծանօթանալու նրա կացութեան հետ. գտայ վանքը աւերակ, առանց ապրելու որևէ հնարաւորութեան, կեղտոտ երկու սենեակ, առանց աթոռի, նստարանի, սեղանի, հացի պարագաների, անկողնի, տաճարի ձեռագիրները և 50-աչափ հին խաչեր թափած խոնաւ խորանի մի անկիւնում-առանց պահարանի: Տասը տարի շարունակ 1000 րուբլի ստացել է և առանց ծախսի ապրել վանքում, վճարելով ծառաներին միասին վերցրած 200-250 րուբլի և չի արել ոչինչ, նստել, կերել, քնել: Երբ ամեն բան նկատեցի և յանդիմանեցի, սպառնացի կտրել Աստապատի եկամուտները, 815 րուբլին և թողնել նրան 500 րուբլի ներքին եկամուտները, խնդրեց, որ առաջնորդարանը վերցնի 200 րուբլի, մնացածը շարունակի տալ վանքին, խոստանալով սենեակները կառուցանել, ամեն յարմարութիւն ստեղծել, դպրոցը բանալ, ուսուցիչը վանքում պահել: Թաւրիզի թեմական խորհրդին ծանօթացնելով վանքի կացութեան հետ, համաձայնեց վանահոր պայմանները ընդունել, նշանակելով ամեն տարի հսկողութիւն, այն է՝ Աստապատի արդիւնքներից

113 **Ֆրանգեան Ե.**, նշվ. աշխ., էջ 9:

114 **Մուսավի Մակուի**, նշվ. աշխ., էջ 17 (պարսկերեն):

115 **Минорский В.**, Древности Маку, с. 11 (բնագրում՝ "...вся обширная ограда монастыря было набита беженцами из Нахичеванскаго уезда и соседняго персидскаго селения Дарашам, населеннаго армянами"). «Պարսկական գյուղ» ասելով հեղինակը նկատի ունի Դարաշամբի վարչաքաղաքական ենթակայությունը Իրանի պետությանը:

116 **Минорский В.**, Отчет о поездке в Макинское ханство, с. 27 (բնագրում՝ "Монастырь представляет собою громадное, обнесенное стенами здание средневекового типа с башнями по углам, и я застал там большое скопление женщин, детей, имевших жалкий измученный вид").

117 **Օղաբաշեան Ն.**, Իմ կեանքի պատմութիւնը, «Հայրենիք», 1941, № 9, էջ 165:

118 Նշվ. հոդվ., էջ 166:

119 Նշվ. հոդվ., էջ 165:

120 **Վարանդեան Մ.**, նշվ. աշխ., էջ 127:

815 րուբլուց, վերցնել առաջնորդարանին 200 րուբլի, մնացած 615 ր. և վանքի ու Դարաշամբի 500 րուբլին՝ ընդամենը 1115 րուբլի թողնել վանքին, այն պայմանով որ բարեկարգի և դպրոցի ուսուցչին պահի՝ մի սենեակ յատկացնելով դասարանի: Անցեալ սեպտեմբերին ուսուցիչ հետս բերայ Էջմիածնից և ուղարկեցի վանք, երկու ամսից յետոյ ստիպուած եղայ նրան փոխադրել Ուրմիա: Նախավկայի հողերի դատ ունենք թուրքերի հետ, դատական ծախք եղել է մօտ հարիւր րուբլի, նա խնդրում է որ այդ ծախսը անի ո՛չ թէ վանքը, այլ առաջնորդարանը, որ կոպէկնէրով է ապրում: Այսպէս լինելուց յետոյ այդպիսի անպետք մարդուն պահել չեմ կարող, գրել եմ Մուշ և Վան, որ շնորհալի վարդապետ ուղարկեն Նախավկայի համար»[121]:

Առաջին աշխարհամարտի տարիներին և հատկապես հայ-թաթարական ընդհարումների ժամանակ՝ 1917-1921 թթ., Նախավկայի վանքը թալանվում է: Այրվում են վանքում պահվող գրքերը[122]: Ղևոնդ վարդապետը 1918 թ. ամռանը դարաշամբցիների հետ տեղափոխվում է Արաքսի ռուսական ափ՝ Ջուլֆա, ապա Նախիջևանի հայության հետ գաղթում Ղարաբաղ[123]: Խաղաղություն հաստատվելուց հետո՝ 1921 թ., վերադառնում է վանք և մինչև կյանքի վերջը հովվում վանքում ապաստանած դարաշամբցիներին:

1921 թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Նախավկայի վանքում ապաստան են գտնում Խորհրդային Հայաստանից Պարսկաստան անցած դաշնակցականներ և իրենց մակագրությունները թողնում վանքի պատերին, հատկապես Սբ. Ստեփանոս գլխավոր եկեղեցու ներսում՝ ծեփի վրա: Դրանցից շատերն այսօր անընթեռնելի են:

**Մաղարդավանքը 1941 թվականից ի վեր.** 1941 թ. Իրան մտած խորհրդային բանակի ռուս զինվորները ձերբակալում են վանահայր Թորգոմ Մելիքյանին ու մի քանի դարաշամբցիների և տեղափոխում Արաքսի ձախ ափը՝ Ջուլֆա: Մնացած բնակիչներն առժամանակ լքում են վանքը: Թորգոմ աբեղան տարվում է Երևան, իսկ մյուս բանտարկյալներն ազատ են արձակվում և վերադառնում Մաղարդավանք, ուր տեր ու տնօրինություն էր անում Իրանի Համադան քաղաքից 1923 թ. այստեղ տեղափոխված բնիկ շամբեցի Զաքարիա Նավասարդյանը:

1942 թ. հունվարի 5-ին առաջնորդական փոխանորդ Կարապետ ավագ քահանա Մանուկյանն Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսին զեկուցում է, որ Ստեփանոս Նախավկայի վանքի վանահայր Թորգոմ վարդապետը «...յայտնում է իր գոհունակութիւնը Հայաստանի կառավարութիւնից վերաբերմունքի և Ձերդ ամենապատուութեան միջամտութեան համար: ...Վանահօր հետ տարել են վանքի կալուածական փաստաթղթեր, հայերէն գրքեր, Ս. Ստեփաննոս վանքի անուանական կնիքը, ժամացոյց, 350 րիալ դրամ, մաշտոց և ուրիշ եկեղեցական գրքեր, վանքի ել և մտից ցուցակներ և այլն: Նաև վանահօր ինքնութեան թուղթը...: ...խնդրում ենք Ձերդ միջամտութիւնը վերագրեալ իրերի վերադարձնելու համար, այլապէս առանց այդ փաստաթղթերի վանքի հողերը հակառակորդները կը գրաւեն»[124]:

1942 թ. Թորգոմ աբեղա Մելիքյանը վերահաստատվում է իր պաշտոնում և փորձում շտկել ստեղծված կացությունը: Գործին միջամտում է նաև Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը[125]: Զաքարիան հեռացվում է վանքից[126]:

Ստեփանոս նախավկայի վանքն ու տեղում ապրող դարաշամբցիները մեծ զրկանքներ են կրում

---

121 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1947, թ. 24-25:

122 **Հախնազարեան Ա.**, Իրանում գտնւող հայկական վանքերի պատմութիւնը. Ս. Ստեփանոս Նախավկայ, «Ալիք», 1983, № 164, օգոստոսի 3, էջ 6:

123 Այդ մասին մանրամասն տե՛ս **Յակոբեան Է.**, Ս. Ստեփանոս Նախավկայ վանքի վանահայր Ղեւոնդ վարդ. Բարսեղեանի նամակը յղուած Ատրպատականի Հայոց թեմի օրուայ առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգեանին - 1918 դեկտ. 21-ին, «Հասկ», Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 413-414:

124 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4188, թ. 2:

125 Ատրպատականի հայոց թեմի երկարամյա առաջնորդ Ներսես (մկրտությամբ՝ Նիկողայոս) Մելիք-Թանգյանը ծնվել է 1866 թ. մարտի 16 (22)-ին Զանգեզուրի գավառի (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզ) Բռնակոթ գյուղում՝ Պետրոս բեկ Մելիք-Թանգյանի իշխանական ընտանիքում: 1877 թ. ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ավարտելուց հետո (1886 թ.) զբաղվում է մատաղ սերնդի կրթությամբ նախ ծննդավայրում, ապա Շուշիում (1888 թ.-ից) և Բաքվում (1894 թ.-ից): 1896 թ., երբ ռուսական կառավարության հրամանով փակվում են հայկական դպրոցները, Մելիք-Թանգյանը մեկնում է Պետերբուրգ և 1900 թ. ավարտում համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նույն թվականին էլ ընդունում է կուսակրոնություն, իսկ երեք տարի անց ձեռնադրվում է վարդապետ և աշխույժ գործունեություն ծավալում Էջմիածնի բարօրության և Հայ առաքելական եկեղեցու ամրապնդման համար: 1907 թ. հակացարական, ազգապահպան գործունեության համար Մելիք-Թանգյանն աքսորվում է Ղրիմի Սբ. Խաչ վանք: Էջմիածին է վերադառնում միայն 1909 թ. Մատթեոս Բ Իզմիրլյան Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի (1908-1910) միջնորդության շնորհիվ: Մինչև 1912 թ. ստանձնում է Մայր Աթոռի վանական կառավարության նախագահի պաշտոնը: 1912 թ. ամռանը՝ հայ եկեղեցու նշանավոր գործիչ և անվանի հայագետ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի հրաժարականից հետո, Ատրպատականի հայոց թեմի պատգամավորական ժողովի խնդրանքով նշանակվում է թեմի առաջնորդ և իր գործունեության ամբողջ ընթացքում (մինչև 1948 թ.) եռանդով պաշտպանում իրանահայության շահերը (հատկապես համաշխարհային երկու պատերազմների տարիներին): 1917 թ. նշանակվում է նաև Վասպուրականի թեմի առաջնորդ և ձեռնադրվում արքեպիսկոպոս: Իրանի հայ և իսլամ համայնքների միջև համերաշխություն պահպանելու համար 1919 թ. պարգևատրվում է Շիր-Խորշիդի զույգ շքանշաններով: Խորհրդային կառավարությունն ու Էջմիածնի Մայր Աթոռը, դժգոհ Ներսես արքեպիսկոպոսի ազգանվեր քաղաքականությունից, 1930-1940-ական թվականներին Իրանում իրենց գործակալների և խորհրդային դեսպանատան միջոցով ամեն ինչ անում էին ժողովրդի մեջ նրան վարկաբեկելու, Իրա-

շրջակայքի թաթար ու քուրդ բնակչության պատճառով, որոնք զավթում են վանքի արոտավայրերը (ինչպես «Կիւնէյ Քիլիսէի ոչխարի օդէն, որը հայկական Անդրէաս Առաքեալի հնադարեան վանքն էր»), գողանում են անասունները, երբեմն էլ զինված ընդհարումներ են ունենում հայերի հետ և այլն[127]:

Երկրորդ աշխարհամարտից հետո Դարաշամբ գյուղում հաստատվում է սահմանապահ զինվորների մի փոքրիկ գունդ, որի պետը նախ բնակվում է Նախավկայի վանքի նախկին առաջնորդարանի սենյակներից մեկում, ապա Արաքսի ափին պետության կողմից կառուցված շենքում:

1947 թ.՝ Թորգոմ աբեղա Մելիքյանի մահից (մարտի 18) հետո, Ներսես սրբազանը սարկավագ է ձեռնադրում և Նախավկայի վանքի վանահայր նշանակում Տիգրան Դարբինյանին, որը մինչ այդ երկու տարի վանքի դպրոցի ուսուցիչն էր[128]: Ցավոք, վերջինիս գործած անօրինությունների պատճառով դարաշամբցի փոքրաթիվ բնակչության (15 ընտանիք) առանց այն էլ վատ վիճակն էլ ավելի է վատթարանում: 1948 թ. փակվում է նաև վանքում գործող դպրոցը[129]: Նույն թվականի հոկտեմբերի 20-ին վանահայրը Էջմիածնի Գևորգ Զ Չորեքչյան կաթողիկոսին (1945-1954) հայտնում է «...դարաւոր վանքի փլուզումին և անոր գիւղացիների չարքաշ և սովալլուկ կենցաղին...» մասին[130]: Բազմաթիվ բողոքներից հետո Տիգրան Դարբինյանը 1949 թ. հեռացվում է պաշտոնից, իսկ վանքը հանձնվում է հոգաբարձությանը (նախագահ՝ Լևոն Բարսեղյան):

1951 թ. ընտրվում է նոր հոգաբարձություն (նախագահ՝ Ղազար Հակոբյան): Թավրիզաբնակ Հայկ Ստեփանյանի ջանքերով վանք է ուղարկվում նոր ուսուցիչ՝ Ներսես Ներսիսյանը, որը դասավանդում է երեք տարի: Սակայն այս և մյուս միջոցառումները չեն կարողանում բարելավել ծանր իրավիճակը: Դարաշամբցի Սարգիս Միսակյանը, որ 1921 թ.-ից ի վեր տասնամյակներ շարունակ ապրում է վանքում և ընկերոջ՝ Ղազար Հակոբյանի հետ փաստորեն պահակություն անում և պահպանում հինավուրց սրբավայրը, իբրև դեպքերին քաջատեղյակ մարդ և ակտիվ մասնակից, հետագա իրադարձությունների մասին գրում է. «Վանքի դրութիւնը գնալով ծանրացաւ սակայն: Երեխաները մեծացան ամուսնութեան համար, բոլորն էլ բարեկամ մէկ մէկու: Հոգևորական չկար, որ կարենար բաւարարութիւն տալ. մարդիկ իրենց երեխաներին սկսան Թաւրիզ փոխադրել: Մնացին ամեն տնում երեք չորս հոգի: Երեխայ էլ չեղաւ որ պրն. Ներսէսը դասաւանդէր: Առաջնորդարանից լիազօրւած, Ներսէսը կառաւարութեան հետ լաւ լեզու էր ճարել, և յարգւում էր: Վանքի իրաւունքները պաշտպանեց: ...Մի 7 տուն, որ առանձին չէին կարող ապրել, գիւղից դուրս եկան, և Թաւրիզ փոխադրւեցին: Ներսէսը վանքում մնաց: Վանքի նոր լիազօր ընտրւեց Շահէն Յովսէփեանը, Թաւրիզում, 1957 թւին: 7 տուն մնացինք վանքումը. 20 տունի տուրքը ծանրացաւ էդ 7 տունի վրայ, և մենք չկարողացանք այդ տուրքը տալ: Մի կողմից էլ յուսահատութիւնը պատճառ եղաւ մնացեալների տեղափոխմանը: Պրն. Շահէնն էլ կրկնում էր, որ վանքի տուրքը անպայման պիտի յանձնել, թեմական խորհուրդը պահանջում է: ...1958 թւին պրն. Ներսէսին յետ կանչեցին իրա պաշտօնից: Մենք բոլորովին մնացինք անտէր: 1959 թւի աշնանը մեր 5 տունից երկուսն էլ դուրս եկան ...և 3 տուն մնացինք»[131]:

Ստեփանոս նախավկայի վանքում հանգրվանած դարաշամբցի վերջին երեքի՝ Սարգիս Միսակ-

---

նի կառավարության առջև հեղինակազրկելու համար: Սակայն ապարդյուն. Իրանի կառավարությունը պատկառանքով ու վստահությամբ էր վերաբերվում հայոց առաջնորդի ամեն մի առաջարկին և բազմաթիվ առիթներով ապավինում նրա խորհուրդներին: Մելիք-Թանգյանն օգնում է հայկական ջարդերից մազապուրծ եղած գաղթականներին, 1921 թ. փետրվարյան դեպքերից հետո Հայաստանից Պարսկաստան անցածներին: Նրա շնորհիվ շուրջ 15.000 հայ գաղթականներ պատսպարվում ու փոխադրվում են երկրի ապահով վայրեր, հատկապես հարավային նահանգներ: Մելիք-Թանգյանը հովանավորում է Ատրպատականի հայոց կրթական և ազգային հաստատություններին: Նա է հիմնել Արամյան թատրոնը, Թավրիզի հայոց մշակութային միությունը (1916 թ.), Ատրպատականի հայ կանանց միությունը, Հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղը և այլն: Իր ազգանվեր գործունեության համար Մելիք-Թանգյանը մեծ ժողովրդականություն էր վայելում և ասորի ու մահմեդական բնակչության կողմից անվանվել է Հայոց Խալիֆա:
Հեղինակ է բազմաթիվ հոդվածների ու մենագրությունների: Դեռևս 1890-ական թվականներին աշխատակցում էր արևելահայ մամուլին, մասնավորապես Մայր Աթոռի «Արարատ» ամսագրին: Հրատարակվել են նրա «Աշխարհաբարի քերականությունը» (Շուշի, 1893), «Մշակ» և «Նոր Դար» կուսակցություններ և մի քանի խնդիրներ» (Մոսկվա, 1894), «Հայոց եկեղեցական իրավունքը» (երկու հատորով, Շուշի, 1903-1905) մեծածավալ աշխատությունները:
Վախճանվել է 1948 թ. սեպտեմբերի 26-ին, Թավրիզում: Համազգային սիրո և ժողովրդականության արժանացած առաջնորդի թաղման արարողությանը ներկա էին ոչ միայն հազարավոր հայեր, այլև Իրանի բարձրաստիճան պաշտոնյաներ, անգլիական, ֆրանսիական, Խորհրդային Միության հյուպատոսները և Հռոմի պապի նվիրակը: Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնական «Հասկ» ամսագիրը գրել է. «Ատրպատականի Հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Ներսէս Մելիք Թանգյանի ցաւառիթ մահով՝ Հայոց եկեղեցին կը կորսնցնէ իր ամենէն պատկառելի և գործունեայ մշակներէն մէկը... Անիկա եղաւ այն հոգևորականը, որ ամենէն շատ ինքզինքը բաշխեց իր ժողովրդի համար» («Հասկ», 1948, նոյեմբեր, էջ 302-303): Տե՛ս նաև ԴԱՀՊ, h. Ա, էջ 133-159: ՀՍՀ, h. 7, Երևան, 1981, էջ 387: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, h. Բ, Երևան, 1981, էջ 325):

126 ԴԱՀՊ, h. Ա, էջ 104-112:

127 Նշվ. աշխ., էջ 113, 118: Անդրեաս առաքյալի վանքը նույն Անդրեորդու վանքն է:

128 Նշվ. աշխ., էջ 118-121:

129 Նշվ. աշխ., էջ 121-123:

130 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4243, թ. 4-5:

131 ԴԱՀՊ, h. Ա, 127-128:

յանի, Ղազար Հակոբյանի և Հայկ Պետրոսյանի ընտանիքները վանքից հեռանում են 1959 թ. նոյեմբերին, սակայն հետագա տարիներին շարունակում են տարվա մի զգալի մասն անցկացնել վանքում[132]: Ս. Միսակյանը հիշում է. «Ամեն տարի մարտին գնում ենք, դեկտ[եմբերին] վերադառնում, բամբակ, ցորեն և բանջարեղէն ցանում մեզ համար[133]:

1960 թւին Մեշեդի Ղասումը Խալալին եկաւ և կապալով վերցրեց 5 տարով, տարեկան 5000 թումանի... Էդ մարդը երկու տարի աշխատեց... Ղասումը վնասւաւ հեռացաւ և մի տարի վերցնող չեղաւ: 1964 թւին էլ ժամանակաւոր տւան Ազիզին և Մաշադի Ռզային: Բայց դժբախտաբար վանքի հասանելիքից ոչ մի կոպէկ չեն տւել: Երբ պրն. Հայկը նկատեց երկուսի ծուլութիւնն ու անկարողութիւնը, 1964 թւի աշնանը՝ արօտատեղիները վարձու տւաւ Թաղիզադէին՝ 2500 թումանի, որի կէսը գանձւել է»[134]:

1960-ական թվականներին վանքը կարոտ էր նորոգության:

1968 թ. Թադեոս առաքյալի վանքի ուխտագնացության հասույթից 50.000 ռիալ հատկացվում է Ստեփանոս նախավկայի վանքի՝ անհրաժեշտ նորոգության որոշ աշխատանքների համար, որոնք էլ սկսվում են աշնանը[135]:

Սակայն 1971 թ. մտահոգությամբ գրվել է. «...Ս. Ստեփանոս նախավկայ վանքի կոթողական կառոյցը քանդւում է եւ պէտք ունի անմիջական նորոգութեան: Ահաւասիկ ահազանգ ենք հնչեցնում՝ պէտք է հասնել օգնութեան, քանզի բնութեան տարերքի ազդեցութեան հետևանքով եկեղեցին վտանգաւոր ճեղքւածքներ է ստացել, զանգակատունը աւելի քան, և մէկ տարին անգամ կարող է ուշ լինել և անսրբագրելի հարւած հասցնել մեր այդ սրբութեան»[136]:

Վանքի պարսպապատի չորս կամարակապ պատուհանները քանդվել են 1975 թ. երկրաշարժից:

1985-1988 թթ. Իրանի հուշարձանների պետական վարչությունը («Միրասե Ֆարհանգի»), ունենալով «Երկիր և մշակույթ» կազմակերպության տնտեսական հովանավորությունը, վերականգնում է եկեղեցու տանիքը (1968 թ. դրությամբ եկեղեցու տանիքը շատ վնասված, բուսածածկ էր, նույնիսկ որոշ մասերում լրիվ խարխլված էր):

1996 թ. հուլիսին Մաղարդավանքի վիճակի և նորոգության ընթացքի վերաբերյալ գրվել է. «Յաւելեալ կառոյցները կապ չունին մայր շէնքին հետ, ժամանակի ընթացքին փուլ եկած են եւ վնաս հասցուցած՝ մայր շէնքին: Աւելին, կառույցը սկզբնական շրջանին ունեցած է 7-8 մեթր խորութեամբ յատուկ ջրանցքներ, որոնք անձրև-ջուրը կը հեռացնէին կառոյցէն, ժամանակի ընթացքին, այդ անցքերը խցուած են ու անձրեւ-ջուրը վնասած է բուն կառոյցին: Բարձունքի մը գագաթին կառուցուած շէնքը կը գտնուի նաեւ հողի սահանքի վտանգի տակ, թէեւ անոր ենթակառոյցի ամրացման համար յենակներ հաստատուած են: Նոյն մտահոգութիւնները կարելի է արձանագրել նաեւ պարիսպին մասին: Նորոգուած են տանիքը, արևմտեան ճակատը, հիւսիսային ճակատը և հիւսիսի Պօղոս-Պետրոս եկեղեցին: Թուագրուած են վար առնուած եւ արեւելեան երեսպատուած քարերը: Նորոգութեան համար պատրաստ է նաեւ զանգակատունը: Վանքին տանիքներէն եւ խուցերէն հեռացուած է մեծ քանակութեամբ հող ու թափօն»[137]:

2005 թ. օգոստոսի 17-ին Իրանի հայկական հուշարձանների պահպանության հարցերի քննարկման նպատակով Թեհրանում հրավիրվում է ժողով, որին մասնակցում են Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Նշան ծ. վրդ. Թոփուզյանը, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանը, Սպահանի և Ատրպատականի հայոց թեմերի ներկայացուցիչները: Ժողովի ընթացքում Նշան ծ. վրդ. Թոփուզյանը մտահոգությամբ հայտնում է «...Սբ. Ստեփանոս Նախավկայի Վանքում առանց նախապէս կատարած համաձայնութեամբ տեղի ունեցած պեղումների ու զանգակատան վար իջեցման...» մասին[138]: Նույն թվականի օգոստոսի 24-ին ՀՀ պատմության և հուշարձանների պահպանության գործակալության աշխատակիցների, Միջթեմական հանձնախմբի անդամների և «Միրասե Ֆարհանգի» փոխտնօրենի ու վերանորոգման պատասխանատու ճարտարապետի հետ հանդիպման ընթացքում քննարկվում է Սբ. Ստեփանոս եկեղեցու

132 1968 թ. ամռանն առաջին անգամ այցելեցի Նախավկայի վանք: Ատրպատականի հայոց թեմական խորհրդի կողմից նշանակված երկու պահապանները՝ Ղազար Հակոբյանն ու Սարգիս Միսակյանը, իրենց կանանց հետ այնտեղ էին ապրում: Երկուսն էլ ինձ համար կենդանի հուշարձաններ էին, քանի որ ծնվել ու մեծացել էին այդ վայրում, գիտեին տեղի ամեն մի քարը, դեպքերն ու պատմությունը, անբաժան էին հայրենի հողից ու հինավուրց մենաստանից: Սարգիսը շատ «գրոց-բրոց» մարդ էր և հետաքրքիր հուշեր էր պատմում վանքի գլխով անցած-գնացածի մասին: Մենք մտերմացանք: Ինձ համար Սարգիսն ու վանքի քարերն անբաժան էին: Կարծես այդ քարերն էին պատմում, երբ նա խոսում էր: Ղազարը Նժդեհի բանակի սուրհանդակն էր եղել: Շրջում էր տրեխներով, բայց հարուստ էր հոգով ու հուշերով:

133 ԴԱՀՊ, հ. Ա, 130: Երկրորդ աշխարհամարտից հետո դարաշամբցի մի քանի ընտանիքներ ներգաղթում են Խորհրդային Հայաստան:

134 ԴԱՀՊ, հ. Ա, էջ 130:

135 **Մամեան Ն.**, նշվ. հոդվ., «Րաֆֆի» տարեգիրք, Ա տարի. 1969, էջ 392:

136 **Ս. Ս.**, Ս. Թադէից յետոյ այց Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին, «Ալիք», 1971, № 179, էջ 5:

137 **Առաքելեան Վ.**, Իրանի հայկական կոթողներու վերականգնումի աշխատանքը, «Յառաջ», 1996, յուլիս 27, 28, էջ 3 և յուլիս 30, էջ 2:

138 **Դաւթեան Վ.**, Իրանի հայկական յուշակոթողների պահպանման համար համահայկական կամք է հարկաւոր, «Լրաբեր», 2005, № 4-5, էջ 56:

զանգակատան (նախագիծը՝ ճարտ. Մերի Դանիելյանի և Ռազմիկ Դավթյանի), ինչպես նաև վանքում անհրաժեշտ վերանորոգումներ իրականացնելու հարցը[139]:

Վանքի հանդեպ իրանական իշխանությունների հոգածու վերաբերմունքի վկայությունն է այն, որ երբ «...Ս. Ստեփանոս Նախավկայի վանքէն խաչքարեր գողցուեցան, եւ Իրանի ոստիկանութիւնը զանոնք գտնելով՝ վերադարձուց տեղը»[140]:

**Մաղարդավանքի ուխտագնացությունները.** յուրաքանչյուր ժողովրդի կյանքում ավանդույթներն ու սովորույթները մեծ դեր են խաղում: Հոգևոր ու բարոյական գործոնների համադրյալ դերը, անշուշտ, նույնքան զորեղ է, որքան նյութական արժեքների ստեղծումը: Այս տեսակետից չափազանց գնահատելի է, որ իրանահայությունը մի քանի սրտացավ անձնավորությունների՝ տարիներ տևած հետևողական աշխատանքի շնորհիվ, կարողացավ վերակենդանացնել Թադեոս առաքյալի և Ստեփանոս նախավկայի վանքերի ուխտագնացության ավանդույթը, տարեցտարի ավելի ու ավելի ժողովրդականացնել այն և վերածել ազգային ու կրոնական զգացումները ոգեկոչող հսկայական ցույցի, որն արժանացել է նույնիսկ օտարների հատուկ ուշադրությանն ու գնահատանքին:

1997 թ. հուլիսի 20-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ն Ատրպատական իր երկրորդ այցելության ժամանակ՝ 2001 թ. հուլիսի վերջերին՝ Թադեոս առաքյալի վանքի 46-րդ ուխտագնացության օրերին (այն նվիրված էր Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին[141]), այցի է գնում նաև Մաղարդավանք[142]:

**Մաղարդավանքի կալվածքներն ու տնտեսությունը.** վանքը մշտապես արժանացել է ժողովրդի, աշխարհիկ և հոգևոր ավատական վերնախավի հոգածությանը, որն էլ ապահովել է նրա արդյունավետ գործունեության և միաբանության բարեկեցիկ կյանքի նյութական հիմքերը: Տարբեր առիթներով վանքին նվիրաբերվել են հողային ընդարձակ տիրույթներ, գյուղեր, ագարակներ, վարելահողեր, հանդամասեր, տարատեսակ շինություններ և այլն: Բացի այդ՝ վանքը տնտեսական ձեռքբերումներ է ունեցել առք ու վաճառքի, փոխանակումների և այլ ճանապարհներով: Վանքապատկան այս կալվածքները բազմիցս ամրագրվել են թագավորական հրովարտակներով, կաթողիկոսական կոնդակներով, առուծախի և նվիրատվական բնույթի բազմաթիվ կալվածագրերով, հայերեն և պարսկերեն այլ վավերագրերով: Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում մենաստանի պատմության, տնտեսական վիճակի, պաշտոնավարած թեմակալ առաջնորդների մասին: Առկա է նաև տեղանվանական (հատկապես մանրատեղանունների մասին) հարուստ նյութ:

Հայկական հոգևոր ոչ մի կենտրոնի մասին (Էջմիածնից բացի) այնքան շատ վավերագրեր չեն պահպանվել, որքան Նախավկայի վանքի մասին, ինչն «ինքնին խորհել է տալիս, որ միշտ էլ առավել մեծ են եղել այդ վանքի ազդեցությունն ու նյութական հնարավորությունները և անհամեմատ ավելի մեծ՝ նրա վայելած արտոնությունները»[143]:

Մաղարդավանքի կալվածքների մասին առաջին տեղեկությունները վերաբերում են Ժ դարին:

Աշոտ թագավորի 976 թ. կոնդակում արձանագրված են Մաղարդավանքին ընծայված կալվածքները. «Յաւուրս հայրապետութեան Խաչկայ հայոց կաթուղիկոսի և ըստ մեծ ի մերոյ տէրութեան Արևելից և հարաւոյ հայոց Սահակայ Աշոտ յորջորջեալ անուամբ բարեպաշտ և մեծ շահնշահի եղև կատարումն շինութեան աստուածաբնակ Սուրբ նախավկայի... աշխատութեամբ... տեառն Բաբգենի...: Արդ ես՝ Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերացս, երկրպագեալ սուրբ տաճարիս դարձեալ յերթալն իմում հանդերձ զաւրաւքս, թագաւորաւք և իշխանաւք, հասայ ի տեղւոջս, որ կոչի անուն գեղոյն Շամբ: Եւ տեսի ատ մի ի գետեզր հանդէպ եկեղեցւոյն, առեալ զայն Դ (4) հատովն, Ա (1) հատն ի գեղն, Ա (1) գետն, Ա (10) Խոտորավանք, Ա (1) ի շարվենիք առեալ եւ գեղին ներքև ջաղաց Բ (2) ակնի և հանդէպ ջաղացացն՝ հանդ մի, որոյ անուն Ջաղաց հորջորջի սերմանց մաւտ, Ա (1) գրվիով առեալ զայն այլ, Դ (4) հատով, Ա (1) հատն ի քարն, Ա (1) ի գետն, Ա (1) ի Հասանանք, Ա (1) ի ջաղացքն: Զայս առեալ անցայ և յուղի անկեալ զաւրաւքս երթայի յաւան ամրոց ի Ճվաշ, և տեսայ Շամբի վերն, Արարուցն ներքև տեղի մի տափարակ, տեղի առեալ աւթևանս արարի, և առեալ զհանդն զայն սերմաց մաւտ Ժ (10) գրվոյ, ո՛չ առեալ հարկաւ, այլ սիրով, և բարի պարգեւաւք առի Դ (4) հատով, Ա (1) հատն հանդին ի վերին կարմիր քարն կարմիր, Ա (1) հատն ի ներքև հանդին ի մեծ քարն, մինն ի գետն, և միւսն հեղեղագնաց հեղեղատն: Եւ առեալ զընծէքս և հայրենիքս ետու դաստակերտ և ընծայ անհին Մաղարդեվանաց Սուրբ Ստեփաննոս նախավկային և Սուրբ Գէորգայ զաւրաւարին... Եւ աւարտումն եղև բանիս և գրիս ձեռամբ մեծանուն տէր Բաբգենի և մեծի իշխանացն Ապլղարիպ իշխանի Հայոց և Վրաց, Վասակ իշխանի Սիւնեաց, Գրիգոր իշխանի Ռշտունեաց, Գէորգ իշխանի Գնունեաց, Շապուհ իշխանի Արծրունեաց»[144]:

139 «Լրաբեր», 2005, № 6, էջ 11-12:

140 **Թոփուզեան Նշան եպս.**, Այս տարուայ յուլիսին իւրահատուկ կերպով պիտի նշուի Ս. Թադէի վանքի ուխտագնացութեան 55-ամեակը, «Ալիք», 7.4.2009, էջ 4:

141 Նայիրի (պատի) օրացոյց (2001 թ. յաւելուած):

142 **Յակոբեան Է.**, նշվ. աշխ., էջ 36:

143 **Փափազյան Հ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1962, № 6, էջ 391-392:

144 **Աբէլ արքեպիսկոպոս Ատրպատականի**, Ճանապարհորդութիւն ի Դաւրէժ, «Կռունկ հայոց աշխարհին», 1861, էջ 636-637:

Մենաստանում երկար տարիներ պահված ապակե խաչի հիշատակագրության համաձայն՝ 976 թ. ևս հայոց Աշոտ թագավորը վանքին նվիրում է «...Ծամբա ջաղացներն, Երասխի նաւն և Աստապատու հողն...»[145]:

Իլխանության շրջանում Մաղարդավանքն իր հողային տիրույթների վերաբերյալ քանիցս հրովարտակներ է ստանում մոնղոլ տիրակալներից: Միայն 1330 թ.՝ Աբու Սայիդ սուլթանի օրոք, երկու անգամ (օգոստոսին և նոյեմբերին) վանքին շնորհվում են հաստատագրված հրովարտակներ, որոնք «գալիս են ապացուցելու, որ Նախավկայի վանքը ամբողջ մոնղոլական տիրապետության շրջանում և ավելի առաջ վակֆային և մուաֆության լայն իրավունքներ է վայելել» և, «...որ այդ արտոնությունները հաստատված և փաստագրված են եղել նաև մոնղոլներին նախորդող Էլտկուզյան աթաբեկների ու Սելջուկյան սուլթանների օրոք...»[146]:

Առաջին վավերագիրը գրվել է Հարավային Ատրպատականում (Հարավային Ադրբեջանում)՝ Ուջանի արքունի ամառանոցում, վանքի և Մակվի դատավորի միջև եղած հողային վեճերի առնչությամբ, երբ դատավորը (փաստաթղթում նրա անունը չի հիշատակվում) ապօրինաբար տիրել է հնուց վանքին պատկանող Ախտաբլուրի ագարակին: Աբու Սայիդ սուլթանը ոչ միայն մենաստանին է վերադարձնում զավթած ագարակը, այլև կարգադրում է Մակվի մուսուլմաններին այսուհետև չմիջամտել վանքի վակֆային գործերին և հողատարածքը թողնել վանահայր Վարդանի տնօրինության տակ. «...Ախտաբլուրի ագարակը (մազրա՚է) ըստ վակֆային փաստաթղթերի, հրամանագիր-յառլիղների ու ալթամղայի Մղարթի եկեղեցու վակֆերն են և հին ժամանակներից ի վեր մինչև այժմ պատկանում են նրան:

Այժմ մեծ մեվլանա և ամենաարդարադատ կազի, Մակվի մուսուլմանների առաջնորդը, ...ապօրինի և անհարկի... տիրում է այս վակֆին: Եթե այդպես է՝ ապօրինի է:

Դրա համար էլ սույն գրությունը գրի առնվեց, որպեսզի այսուհետև հակառակ վակֆային փաստաթղթի և հրամանագրի հիշյալ մեվլանան եկեղեցու վակֆում չմիջամտի, և եթե նշված կարգով մինչ այժմ վակֆ է եղել, հին փաստաթղթերի (բարաթներ) բովանդակության համաձայն, թողնի Վարդան կրոնավորի տնօրինության տակ, որպեսզի վերջինս վարվի համաձայն վակֆ անողի [սահմանած] պայմանների և ըստ Մեծ դիվանի կրկին անգամ հրապարակված ալթամղա-հրամանագրի: Նրանից չշեղվի և նրան չգերազանցի»[147]:

Աբու Սայիդ սուլթանի երկրորդ հրովարտակը գրվել է 1330 թ. նոյեմբերի 28-ին Ղարաբաղում (գյուղանունը չի հիշատակված): Սկզբնամասը թերի է, ուստի և անհայտ է մնում վիճելի այն հողատարածքը, որի վերաբերյալ տրվել է ներքոհիշյալ հրամանագիրը. «...Վակֆային է, բռնություն և ոտնձգություն չանեն, նրանց տներն ու այգիները չավերեն: Այն հոգևորականները, որոնք Մղարթի վանքում են նստում, իրենց ձեռքում գտնվող հրամանագրերի պատճառով, Ծամլուի և նրան մերձակա ու սահմանակից կամ այլ գյուղերի համայնքներին, որոնք այս վայրերում կան, իրենց հովանավորության տակ չվերցնեն և չմիջամտեն իրենց չպատկանող մուլքերի [գործերում]:

Դրա համար էլ սույն գրությունը գրի առնվեց, որ եթե այսպես է՝

I. Վարվեն ըստ իրենց ձեռքում գտնվող հրամանագիր-յառլիղի և Մեծ դիվանի որոշման, և եթե որևէ վեճ լինի դիմեն Մեծ դիվանին:

II. Վարվեն ըստ իրենց ձեռքում գտնվող հրամանագիր-յառլիղի, նրանից չշեղվեն և նրան չգերազանցեն: Թող այս կարգով ընթանան և վստահություն տածեն»[148]:

Ուզուն-Հասանի՝ 1475 թ. հոկտեմբերի 8-ի հրովարտակով Դարաշամբի հոգևորականներն ազատվել են խարաջ և ջիզյա հարկերից. «...Դարաշամբի դարուղան և քալանթարները թող իմանան, որ հայ կրոնավոր Վարդանը և ուրիշները եկան աշխարհի ապավենի դուռը և խնդրարկու եղան այն մասին, որ հին ժամանակներից ի վեր մինչև օրս երբեք այնպիսի օրենք չի եղել, որ Ուչքիլիսայի (Էջմիածին) կրոնավորներից ու սևագլուխներից խարաջ ու ջիզյա պահանջեն: [Այդ մասին] նրանք նախկին թագավորներից հրովարտակներ ունեն իրենց ձեռքին:

Անհրաժեշտ է, որ նույն կարգով որոշված ու հաստատված ճանաչելով՝ այդտեղի կրոնավորներին ու սևագլուխներին անհանգստություն չպատճառեն, նրանցից ոչինչ չպահանջեն և նախկին կարգը անտես չառնեն, որովհետև հիշյալ կրոնավորները Ուչքիլիսայի (Էջմիածին) կրոնավորների [կարգին] են պատկանում»[149]:

1541 թ. կոնդակում Ամենայն Հայոց Գրիգոր ԺԱ կաթողիկոսը մատնանշում է թեմի սահմանները. «Գրիգոր ծառայիցն Աստուծոյ..., զոր գրեմք ի դրանէ...սուրբ Էջմիածնի... եւ առաքեմք նախ ի սուրբ Նախավկայի վանքն եւ յիւր սեպհական թէմն եւ վիճակն, նախ ի յամենաւրհնեալ եւ յաստուածապահ

145 **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 516-517: Տե՛ս նաև **Բասմաջեան Կ.**, Մեր հնութիւնները, «Բանասէր», 1902, ապրիլ, էջ 97-101: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 569, 577: **Փափազյան Հ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1962, № 6, էջ 391 և այլն: **Ուղեւոր Ա. Ե.**, նշվ. հոդվ., «Սիօն», 1877, էջ 211: Ի դեպ, ապակե խաչը ԺԹ դ. տեղափոխել են Էջմիածին *(հիշատակագրությունն ամբողջությամբ տե՛ս սույն աշխ. էջ 243-244, արձ. ԺԴ)*:

146 **Փափազյան Հ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1962, № 6, էջ 395:

147 Նշվ. հոդվ., էջ 397:

148 Նույն տեղում:

149 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 49-50:

յանուանի եւ յականաւոր մայրաքաղաքն ի Խոյ, որ է Զերեւանդ գաւառ եւ յամենայն վիճակն իւր բոլորովին ի Ղարադաղէն որ բաժանի յառաքելոց յերկրէն եւ գնայ մինչեւ ի Ղարաթափայն եւ բաժանի ի Սալմաստայ յԵրասխայ մինչեւ ի Մարանդայ գրիւէն ի Շիրինթալն իւր երկրովն ի յաստուածախնամ գիւղաքաղաքն Ջուղայ, ի յԱստապատ, ի մեծ քաղաքն Նախչուանն եւ ի Շամբունձորն բոլորովին...»[150]:

1556-1557 թթ. վերահաստատվում են 1505-1506 թթ. զինվորական դատավորի հրամանով Դիբքյանդ և Դարաշամբ գյուղերի՝ Մաղարդավանքի ենթակայության ներքո գտնվելը[151]:

1562 թ. Թադեոս առաքյալի վանքի և Մաղարդավանքի միջև հողային վեճ է ծագում, որն ավարտվում է հօգուտ առաջինի[152]:

Երկու տարի անց՝ 1564 թ., Նախավկայի վանքի միաբանությունը նոր վեճ է սկսում այս անգամ Շամբ գյուղի բնակչության հետ ջրաղացի շինարարության առիթով: Տանուտերերից մեկը կամենում է գյուղի համար ջրաղաց կառուցել՝ չկասկածելով անգամ, որ այն կարող է խոչընդոտել թագավորական ջրաղացների գործունեությունը: Նախավկայի միաբանները հանդես են գալիս հօգուտ վանքի վտանգված շահերի պաշտպանության և ձգտելով խափանել շինարարությունը՝ շամբեցիների մոտ ընթերցում են Աշոտ Գ թագավորի նվիրագիրը: Գյուղի մյուս տանուտերերը՝ Դանիելը, Բաշխին, Խաչատուրն ու Փանոսը, քահանաները, ամբողջ բնակչությունը, արքայական նզովքից վախեցած, հատուկ համախոսականով միակամ արգելում են նոր ջրաղացի կառուցումը («...չթողին շինելոյ զջրաղաց, թէ՝ որովհետև չէ եղեալ և այլ մի լիցի. չենք կամենար մենք ...Չիք հրաման ջաղաց շինելոյ»), նաև պայմանադրում են ներկա և հետագա սերունդներին չգրավել կամ չծախել վանքապատկան ջրաղացները և չխախտել սահմանված կարգը[153]:

1567 թ. ջրաղացի կառուցման համար վերստին վեճ է ծագում գյուղի հասարակության և վանքի միաբանության միջև. «Ի վերջին ժամանակիս ՌԺԶ (1567) եղև գժտութիւն ի մէջ ժողովրդեան վասն շինելոյ ջաղացաց, էր շինող Բարսեղ տանուտէրն, և մեք միաբան սուրբ ուխտիս՝ ես՝ Մարտիրոս վարդապետս, Մատթէոս եպիսկոպոս, փակակալ տէր Բաներեգէսն, Սիմէոնն և այլ միաբան մեծ և փոքր և տանուտէրք, ըռայիս Դանիէլն, ըռայիս Բաշխին, Խաչատուրն, առհասարակ ժողովուրդն կարդացաք զկոնդակս, և ոչ թողաք շինելոյ, թէ չէ եղեալ»[154]:

1604 թ. Շահ Աբաս Ա-ի հրովարտակով կարգավորվում են Ստեփանոս նախավկայի վանքից գանձվող պետական հարկերը. «...Թումանն-ե Նախիջևանի Դարաշամբի մելիքները, քալանթարները, քյաթխուդաները ու ռայաթները մալի, ջիզյայի և թավութ-ե ջիզյայի գանձման հարցում տեղի կրոնավորներ ու սևագլուխների հետ վարվեն հին ժամանակներից հաստատված ու մինչև օրս ընդունված կարգով...»[155]:

Աշոտ թագավորի՝ վանքին նվիրաբերած տիրույթների մասին խոսվում է նաև 1614 թ. կալվածագրում, որը կազմվել է շամբեցիների հետ առաջնորդարանի հերթական վեճի կապակցությամբ. «...Մեք վերոյ գրեալ Շամբա եղեալքս, որ Աշոտ Հայոց թագաւորն որ եկեալ էր Սուրբ Նախավկայն ուխտ, մեր վանքին տվել էր Դ (4) ջաղաց և ջաղացի մօտի քավշանի արտերն, Սուրբ Յակոբի ներքի այգին վախուպ արաւ Սուրբ Նախավկային. օրհնանք, անեց էր դրել, թէ՝ ոչ ով խարճ, մալ ու ջիաթ չառնու: Մենք մեր հօրէն, պապէն լսած չինք, թե՝ ջաղացներէն, մօտի արտերէն, այգուցն մալ ջիաթ կամ խարճ առնուն»[156]: Սակայն Շամբ գյուղի բնակիչներից «մին քանի չարաճճի սատանայի որդիք», անտեսելով հնուց ամրագրված այս կարգը, փորձում են տիրանալ Նախավկայի վանքի օգտին մաս հանվող «մալ»-ին և նույնիսկ յուրացնում են եկամտահարկը: Մեկ ամիս անց գյուղում բռնկվում է ջերմախտ, որին զոհ է գնում 250 մարդ[157]: Միաբանները համաճարակը մեկնաբանում են իբրև սուրբ Ստեփանոսի գործած հրաշք: «Աստուածային բարկութիւնը» մեղմելու նպատակով շամբեցիները վերադարձնում են «մալ»-ը և ուխտում են այլևս ոտնձգություններ չանել մենաստանի, նրան ենթակա հողատարածությունների ու դրանցից գանձվող հարկերի նկատմամբ: Կազմվել է համապատասխան խոստումնագիր-կալվածագիր, որի ներքո իրենց ստորագրությունն են դնում քահանաների հետ մեկտեղ 85 բնակիչ[158]:

Հարկերի գանձման կարգավորման խնդրին առնչվող հերթական հրովարտակը հրապարակում

150 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 240: Տե՛ս նաև **նույնի**՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 592:

151 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 4:

152 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 61-62, նաև էջ 93-94:

153 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 11-12: Դարասկզբին կալվածագիրը հրատարակել է Մ. արքեպ. Սմբատյանցը («Երնջակ», էջ 420-421), սակայն միավորի (Գ=3) տպագրական վրիպակի պատճառով ՌԺԳ տարեթվի վերծանությունը ներկայացվել է ոչ թե 1564 (ինչպես որ է իրականում), այլ՝ 1563: Վրիպակը նույնությամբ կրկնված է՝ **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 542, ծանոթ. 23:

154 **Աբէլ արքեպիսկոպոս Ատրպատականի**, նշվ. հոդվ., «Կռունկ հայոց աշխարհին», 1861, էջ 637:

155 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ I, էջ 81:

156 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 157-158:

157 Նշվ. աշխ., էջ 158:

158 Նշվ. աշխ., էջ 157: Հիշատակված քահանաները վկայված են նաև 1636 թ. Բռնակոթ գյուղում ընդօրինակված ավետարանի հիշատակարանում (ԺԷԲ, էջ 660):

է Սեֆին շահը 1631 թ. «...Պետրոս կրոնավորը զեկուցեց, որ հին ժամանակներից մինչև այժմ, նա և իր կարգակից կրոնավորները բնակվում են Դարաշամբում, և ժամանակին դրախտաբնակ աշխարհակալ արքայի կողմից հրամանագիր է տրվել, որ տեղի մելիքները մալոջհաթի և ջիզյայի գանձման հարցում, ինչ կարգով, որ հին ժամանակներից սկսած վարվել են այդտեղի կրոնավորների հետ, նրանց հետ էլ նույն ձևով վարվեն: Նրանք նորից խնդրեցին, որ արքայական ստորագրությամբ վերահաստատվի այդ. ուստի որոշեցինք, որ Թուման-ե Նախիջևանի Դարաշամբի մելիքներն ու քալանթարները մալոջհաթի և թաֆավութ-ե ջիզյայի հարցում նրանց հետ վարվեն այնպես, ինչպես որ հին ժամանակներից սկսած վարվել են հիշյալ կրոնավորների հետ...»[159]:

1667 թ. Միքայել վարդապետը երեք թումանով ձեռք է բերում աստապատցի Ամիր խոջայի դուստր Աղանանեի վաճառած «...մայրենիք Ընձանափակի արտն, որ է չորս սօմարէն տեղ»[160]:

Ընձանափակի արտի առք ու վաճառքի երկրորդ գործարքը Մաղարդավանքի առաջնորդը կնքում է 1680 թ., երբ Քարենց Մարգարի դուստրերը՝ Համասփյուռն ու Հուռիկը, այս ընդարձակ տեղամասում իրենց ունեցած բաժինը հինգ թումանով վաճառում են մենաստանին: Նրանք նաև այս գումարից մեկ թուման հոժարակամ նվիրում են Նախավկայի վանքին՝ ծնողների հիշատակին երկու պատարագամատ ստանալու նպատակով[161]:

1670 թ. նոյեմբերի 20-ին Միքայել վարդապետը «զին և ծախ ութ թումանի» գնում է Ջաղացտեղ գյուղի «Սրբոյ Սարգսի ջրաղացն» ու նվիրում վանքին[162]:

1676 թ. Մելիքի կին Օղլանն ու որդիները՝ Նիկողոսը, Մաղաքեն ու Մկրտիչը, Թաքոսի որդի Ավետիքի հետ 6000 դիան կանխիկ գումարով «Ծոլիկէնց գահրէզ» կոչված աղբյուրի ջրի իրենց մեկ բաժինը («մին գլուխ ջուրն... այս ջրիս աւրն հինգ շաբաթ աւրն») վաճառում են Միքայել վարդապետին, որն արդեն տեր էր նույն ջրի երեք բաժնին[163]:

Երկու տարի անց՝ 1678 թ. փետրվարի 25-ին, Նախավկայի վանքի համար Ջաքարի դուստրերից ու թոռներից գնվում է «Մակարի գահրեզ» աղբյուրի սեփական վեց բաժին («գլուխ») ջրից երկու բաժին[164]: Միքայել վարդապետի անունից գործարքը կատարվում է Պետրոս վարդապետի (ապագա առաջնորդը) կողմից[165]: Քյահրիզի մնացած վեց բաժին ջուրն Անանի և եղբոր՝ Սիմոնի սեփականությունն էր: 1681 թ. Սիմոնի որդի Մալխասը մոր՝ Նունուֆարի հետ կամովին վանքին է վաճառում իրենց տնօրինած մեկ գլուխ ջուրը և փոխարենը ստանում 16.000 դիան կանխիկ գումար[166]:

1680 թ. աստապատցի Այվազը նույն Միքայել վարդապետին է վաճառում համագյուղացի Կոստանդի որդիներ Բազումից և Աղամալից գնած շուկայի խանութի (դուքան) կեսը, որի մյուս մասը նախկինում ընծայվել էր վանքին: Փաստաթղթում հստակեցվում են նաև վաճառվող տարածքի սահմանները. «...Դալվաքիարէնց Այվազս, որ ես Ծոլկէնց Կոստանդի որդոց իւրեանց հայրենիք բազարի դուքանի կէսն գնել էի. այս դուքանիս կէսն Սուրբ Նախավկային վախմ էր: Եւ յորժամ եղև թվականն ՌՃԻԹ (1680), ես՝ վերոյ գրեալ Այվազս իմ կամաց յօժարութեամբն և իմ ոազութեամբ իմ առած դուքանի կէսն այլ ծախեցի Սուրբ Նախավկայի առաջնորդ Միքայէլ վարդապետին՝ երեք թուման. որոյ կէսն կանէ ԺԵՌ (15.000) դեկան. բէղսուր առի և ծախեցի իւր չորս սարհատովն. առաջին սարհատն է բազարն. երկու սարհատն է Ղօչին. երեք սարհատն է Մարգարէն և չորս սարհատն է փողրակն»[167]:

ԺԷ դ. երկրորդ կեսին՝ հավանաբար 1667-1680 թվականներն ընկած ժամանակահատվածին[168] վերաբերող մի կալվածագրի համաձայն՝ Բաշխումի որդի Խոջումը 10 թումանով վանքի առաջնորդ Միքայել վարդապետին է վաճառում Էդիլենց Խաչատուրից գնած Աստենց ջրաղացի մեկ չարեքը[169]:

1681 թ. հունվարի 15-ին աստապատցի Ֆրմնենց Հայրապետի որդի Գալուստը վանքին է նվիրում սեփական ջրաղացի 15 օրվա «շահատը»՝ պարտավորեցնելով, որ «Այն ժամանակին ով որ առաջնորդ լինի, մարդ ուղարկէ, գայ այն ԺԵ (15) օրի շահատն հաւաքեյ տանի ի Սուրբ Նախավկայն, յարաժամ աղօթեսցեն, որ այս ջաղացս շէն մնայ մինչև յաւի-

159 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ, պրակ II, կազմեց **Հ. Դ. Փափազյան** (այսուհետև՝ **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ II, համապատասխան էջերով), Երևան, 1959, էջ 106-107:

160 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 29:

161 Նշվ. աշխ., էջ 30:

162 Նշվ. աշխ., էջ 122-123:

163 Նշվ. աշխ., էջ 111: Գլուխ ջուրը ջրի չափման միավոր է և բազմիցս հանդիպում է միջնադարյան հայերեն կալվածագրերում:

164 Նույն տեղում:

165 Նշվ. աշխ., էջ 112:

166 Նշվ. աշխ., էջ 112-113:

167 Նշվ. աշխ., էջ 127:

168 Նշվ. աշխ., էջ 149:

169 Նշվ. աշխ. էջ 148: Չարեք (չարեկ) հարկային տերմինը քանիցս վկայված է Ժ-ԺԴ դդ. հայերեն վիմական արձանագրություններում (Կարբի, Կեչառիս, Ցաղաց քար, Անիի Մայր տաճար, Գանձասար և այլն): Հր. Աճառյանի կարծիքով այն փոխառություն է պարսկերենից և նշանակում է չորսից մեկը, ամբողջի քառորդ մասը (**Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 625-626): Ս. Ավագյանի համոզմամբ տերմինը նաև «հողի տարածության միավոր է, բայց ինչքան տարածության, դժվար է ասել: Անշուշտ, այստեղ ևս չարեկ պետք է առաջացած լինի ամբողջի, միավորի մեկ քառորդի, չորրորդ մասի իմաստից, սակայն աղբյուրներում պակասում են ցուցումները, թե որ տարածության քառորդի մասին է խոսքը տվյալ դեպքում» (մանրամասն տե՛ս **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 268-274):

տեանս յաւիտենից»[170]: Ջրաղացի եկամուտը հնարավոր ոտնձգություններից զերծ պահելու համար նվիրատուն պայման է դնում անհրաժեշտության դեպքում բռնի ուժ կիրառել, քանի որ «...մեք մեր յօժար կամօքն տվաք և վախմ արարաք ի Սուրբ Նախավկային, անջինջ յիշատակ մնաց»[171]: Կալվածագիրը կազմել է Մովսես երեցը:

1682 թ. Սուքիասը՝ Դավութենց Սուլթանի որդին, Նորահանի արտի իրեն հասանելիք հատվածը («վեց սօմարէն տեղս») 15.000 դիանով վաճառել է Նախավկայի առաջնորդ Պետրոս վարդապետին[172]: Վկայագիրը կազմել է տեր Մարգարեն:

1688 թ. ապրիլի 20-ին աստապատցի Ղոչիկենց Հայրապետի որդի Հակոբը Սալաղունիսի արտից, «...որ է Ը (8) սօմարէն, տվի Սուրբ Նախավկայի վանիցն վախմ, յիշատակ իմ ծնօղաց և եղբարց հոգւոյն: Տւի իւր չորս սարհատովն. առաջին սարհատն է՝ Դիլանջու Բունիաթի արտն. երկու սարհատն է՝ Դօլվաթխօջէնց Նազարի արտն. երեք սարհատն է՝ Ամիրի արտն. չորս սարհատն է՝ քանտալն, որ և կատարեալ եղև չորս կողմի սարհատքն»[173]:

Երկու տարի անց՝ 1690 թ. փետրվարի 2-ին, նույն արտից իրենց բաժնի սեփականության իրավունքը Նախավկայի վանքին՝ «Յոհանի և Պետրոսի վարդապետի առաջնորդ ժամանակին», «...անփէշման...» նվիրում են աստապատցի Առոմն ու կինը՝ Թելին[174]:

Նույն թվականին նշյալ արտից Մաղարդավանքին տասնվեց սոմար վարելահող են նվիրում նաև աստապատցի Փանոսը, Թասալին, Հայրապետը, Ավազը և Խաչերեսը[175]:

1691 թ. Հովհան վարդապետը ետ է գնում Միքայել վարդապետի վաճառած «Ջաղացանու արտերն, որ Նախավկային վախմ էր», սակայն հաշվի առնելով մենաստանի տնտեսական դժվարությունները՝ վերստին վաճառում է այն ոմն Կիրակոսի որդիներին՝ Պետրոսին և Ավագին[176]:

1692 թ. ապրիլի 23-ին Հերիջանի որդի Բունիաթը Նորահանի արտում իր սեփական վարելահողն ընծայում է վանքին իր և ծնողների փրկության համար[177]:

1693 թ. «ի ձեռն առաջնորդ Յոհան վարդապետին» Սալաղունիսի արտից վանքին հողակտոր է նվիրում Փլորենց Մովսեսի կին Բեկին[178]:

1697 թ. Գազըչենց Դիլանչու որդի Անդրեասը Սալաղունիսի արտի իր սեփական «...վեց սօմարի տեղ» հողակտորը նվիրում է Նախավկայի վանքին և պայման կապում, «...եթէ ազգականէ կամ յետու, որդէ կամ դստերէ հակառակ խօսի, Սուրբ Նախավկայի օրհնութենէն զրկեալ լինի»[179]:

1706 թ. նոյեմբերին աստապատցի Էվազի որդի Հայրապետը Ֆրմնենց Հայրապետի որդի պարոն Գալուստին մեկ թումանով վաճառում է սեփական «Դարի արտն» իր չորս սահմանով («հատ»-ով). «...մէկ հատն՝ դարի յառուն. մէկ հատն՝ Առէնց Աբրահամի արտն. մէկ հատն՝ Նախավկայի արտն. մէկ հատն էլ Նախավկայի և Բէջանի արտն, որ եղև կատարեալ այս իմ ծախած արտիս չորս հ.քն թամամ»[180]:

Տարիներ անց՝ 1739 թ. հոկտեմբերին, Գալուստի որդի Սուլեյմանը նույն վարելահողը նվիրաբերում է Նախավկայի վանքին[181]:

1708 թ. օգոստոսին Սոյբաթալենց Ասատուրը «Դարի արտի Դ (4) սօմարէն տեղ» վաճառում է վանքի առաջնորդ Հակոբ վարդապետին[182]:

1714 թ. Գլփանենց Հակոբի որդի Ստեփանը Սալաղունիսի արտի հինգ սոմար բաժինը նվիրում է վանքին՝ նշելով. «Այս եղև Աստապատու մեծամենծաց գիտութեամբն»[183]:

1718 թ. վանքը հիշվում է արարքեցի Հարությունի կտակի առնչությամբ, ըստ որի՝ Արավաքսի այգին նվիրում է Ստեփանոս նախավկայի վանքին. «Ի յարարքեցի Գրիգորէս, Այդինէս, Գիրումէս, Աստուածատուրէս... Աստուած լուսաւորէ Յարութիւնի հոգին, որ մեռանելիս ժամանակին կտակ է արել և իւր խօրօր տղա Աստուածատուրն վաքիլ է արել և այն կտակագիրն բերեալ էր տեղս և մեք տեսաք և կարդացինք վերահասու եղանք, թէ ինչ էր գրած կտակագրումն և մեք այն կտակագրի սուրաթն վեր առինք տվինք մեր առաջնորդ՝ Սուրբ Նախավկայի Գալուստ վարդապետին. յերոր որ կու գայ տեղդ և զոր ինչ որ Նախավկային հոգէբաժին է խոստացեալ Արաւաքսի այգին, տայք մեր առաջնորդ Գալուստ վարդապետին, այլ և այլ չանէք այդ այգին տայք իւրեանն»[184]:

1722 թ. հոկտեմբերին «Դարի արտից» Նախավկայի վանքին 12 սոմար տեղ է նվիրում Բեջանի որդի Բունիաթը[185]: Նվիրագիրը երկլեզվյան է. գրված է նախ հայերեն, ապա պարսկերեն: Ի դեպ, պարսկերեն հատվածում որոշ լրացուցիչ մանրամասներ են հաղորդվում գործարքի ու նրան մասնակից անձանց մասին. «Այս գրության (վախուպնամա) հաստատման ժամանակ մենք՝ հանգուցյալ, նոր մահմետական (իմա՛ հավատափոխ եղած և

170 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 128:

171 Նույն տեղում:

172 Նշվ. աշխ., էջ 32-33:

173 Նշվ. աշխ., էջ 33:

174 Նշվ. աշխ., էջ 34:

175 Նշվ. աշխ., էջ 35:

176 Նշվ. աշխ., էջ 37:

177 Նշվ. աշխ., էջ 37-38:

178 Նշվ. աշխ., էջ 38-39:

179 Նշվ. աշխ., էջ 41:

180 Նշվ. աշխ., էջ 43:

181 Նշվ. աշխ., էջ 44:

182 Նշվ. աշխ., էջ 45:

183 Նշվ. աշխ., էջ 47:

184 Նշվ. աշխ., էջ 75:

185 Նշվ. աշխ., էջ 51:

մահմեդականություն ընդունած հավանաբար կաթողիկե հայ, Ա. Հ.) Բէջանի որդիք Բունիաթս և Մահամատս ներկա եղանք, ինչպես նաև ներկա էինք ղապուլագրի շարադրմանը, որով մենք հողը նվիրեցինք Դանիէլ մարգարեի վանքի (իմա՛ Ստեփանոս նախավկա, Ա. Հ.) միաբանին. շարիաթով հաստատելու համար վերոգրեալ նվիրառուները ի տրիտուր մեզ տվեցին 100 դինար Թավրիզի կանխիկ դրամ և մեկ լիտր ցորեն:

Կողմերիս ներկայութեամբ շարիատի սիղան (ակտ) կարդացվեց և ավարտվեց. նվերը ամբողջովին հանձնվեց նվիրառուների օգտագործմանը. նվիրառուները պարտավոր են ճշտութեամբ օգտագործել հողը, այն փոքր գումարի դիմաց, որ մենք նվիրողներս ստացանք, այս փախուպնամեն շարիաթով հաստատել տալու համար»[186]:

1724 թ. աստապատցի ուստա Պողոսն ու նրա որդին՝ Մկրտիչը, Մաղարդավանքին են նվիրում «Գալուստի գետի ջաղացի» իրենց բաժին ութ օրվա եկամուտը, և այդ կապակցությամբ վանքում թողնում են արձանագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 298-299, արձ. ԴԱ)*[187]:

1728 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Կարապետ Ուլնեցու արձակած կոնդակում նշված են Մաղարդավանքի թեմապատկան բնակավայրերը. «...բոլոր թէմի եւ վիճակի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային. այսինքն՝ Հին Ջուղայոյ, Շամբայ, Ջաղացտեղու, Արարքայ, Մահլազանայ, Կրէրիցոյ, Ղորղնոյ, Օզպընոյ, Տիկնոյ եւ Ազադակայ...»[188]:

1732 թ. օգոստոսին հինջուղայեցի Սաֆարի որդի Հովհաննեսը չորս թումանով վանքի առաջնորդ Հովհան վարդապետին է վաճառում Շամբ գյուղի բնակիչ Էլիբեկենց Միքայելից (բնագրում՝ Մուքիլ) գնած ջրաղացն ու արտը, «որ է ԺԷ (17) չվան»[189]: Վանքի սեփականատիրական իրավունքը խախտողներն իբրև պատիժ պարտավոր էին տեղի իշխանավորին (հաքիմին) վճարել 12000 դիան[190]:

1739 թ. հունիսի 3-ին ոմն Ճիլազի կողակից Սանդուխտը Նախավկայի վանքին կատարում է մի նվիրատվություն. «...Սանդուխտս յետ իմոյ Աղիս և սկեսրս, այսինքն Առուխին, Ախանումուղին... ինչ որ իւրեանք տվել են իւրեանց հոգոյն ...վախուր արի... ս. Աքոռին Ստեփաննոսի նախավկային... տվեցի իմ հոգևոր հայր և մեր առաջնորդ Ազարիայ վարդապետին, որ մեզ մէկ քանի ժամի մէջ յիշէ...»: Փաստաթուղթը կազմել է վանքի միաբան Արիստակես վարդապետը[191]:

Միքայել վարդապետի առաջնորդության տարիներին Խուռումի դուստր Եղիսեն մոր հոգու փրկության համար վանքին նվիրում է սեփական այգու մի կեսը, իսկ մյուս կեսը երեք թումանով վաճառում է նույն մենաստանին[192]: Կալվածագիրը տարեթիվ չունի: Հրատարակիչն այն զետեղել է ԺԸ դարի 30-40-ականներով թվագրված վավերագրերի շարքում:

1746 թ. Մանգասարենց Հարիկի որդի Սողոմոնը Մաղարդավանքի առաջնորդ Միքայել (Մուքել) վարդապետին 6000 դիան 10 շահի գումարով վաճառում է իր հայրենի տունը[193]:

1748 թ. մահտեսի Ավագի որդի Հայրապետը չորս թուման պարտքի դիմաց, որը նրա հայրը վերցրել էր Նախավկայի վանքի լուսարար Ստեփանոս վարդապետից (վավերաթուղթը կնքելու պահին՝ 1748 թ. հունվարի 13-ին, երկուսն էլ վախճանվել էին), և պարտքը ետ էին պահանջում Միքել (Միքայել) առաջնորդն ու միաբանության անդամները), վաճառում է արտը և վճարում պարտատիրոջը հասանելիք գումարը. «...Նախավկայի առաջնորդ Միքել վարդապետն, միաբանք կանգնեցան, Ստեփաննոս վարդապետին թամասունկն հանեցին, ինձանից իմ հայր Մուղտուսի Ավաքի պարտքն ուզելոյ. փող չունի որ իմ հայր Մուղդուսուն պարտքն տվելի. զին ու ծախ արի իմ հայր Մուղտուսու առած արտն ջաղացանու, որ հայրս առել էր Վանացէ. առած էր Ը չվան Ա չարեք: Գին ու ծախ արիք, վերստին չվանն ԵՌ (5000) դիան, որ զինն կանէ Ռ թուման, Գ ապասի, կէս շահի: Տվի Սուրբ Նախավկայի առաջնորդ մեր հայր Միքայէլ վարդապետին Դ հատօվն վասն իմ հայր Միղտիսի Ավաքի պարտի ջանիպէն, որ պարտք էի(ն)ք տալոյ լուսարար Ստեփաննոս վարդապետին. տվի իմ հօր հոգին պարտուց ազատեցի»[194]: Փաստաթուղթը հաստատել են արարքեցի պարոն Հովհաննեսը, շամբեցի Մալիջանը, աստապատցի Աբգարը և այլք[195]:

1750 թ. մարտին Աւեճց Սամվելի որդիները՝ Աբրահամը, Ավետիքը և Ստեփանը, Ստեփանոս նախավկայի վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետին են վաճառում իրենց պապենական մուլքը՝ այգին տնով, ինչպես նաև «Սատաղու քարիէզէն կես գլուխ ջուր, ջրի օրն ուրբաթ»[196]:

1765 թ. մարտի 20-ի առուծախի վավերագրով՝ Քուսանենց Աստվածատուրի որդի Ստեփանը երեք թումանով վանահայր Գրիգոր վարդապետին է վաճառում իրեն հասանելիք «Բաղլումէնց ջաղացի մին օր կէս»-ը[197]: Գործարքը հաստատող վկաների

186 Նշվ. աշխ., էջ 52:

187 **Uluhogian G.**, Silloge delle epigrafi Armene di S. Stefano di Giulfa, "Ricerca sull'architettura Armena", vol. 22, Milano, 1981, p. 60.

188 **Ոսկեան Հ.**, նշվ. հոդվ., հ. Բ, էջ 651:

189 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 54:

190 Նույն տեղում, էջ 54-55:

191 **Թոփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 14: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 490, ծանոթ. 20:

192 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 65:

193 Նշվ. աշխ., էջ 145:

194 Նշվ. աշխ., էջ 65-66:

195 Նշվ. աշխ., էջ 66:

196 Նշվ. աշխ., էջ 23:

197 Նշվ. աշխ., էջ 147-148:

թվում հիշվում է նաև Աստապատի Սբ. Ստեփանոս վանքի առաջնորդ Սարգիս վարդապետը[198]:

1769 թ. դեկտեմբերի 29-1770 թ. հունվարի 28-ին Ստեփանոս նախավկայի վանքի վրա տեղի ունեցած հարձակման ժամանակ հացահատիկ են գողանում: Դրա առնչությամբ Քերիմ խանը մի հրամանագիր է արձակում, որով կարգադրվում է քննել գործը և պատժել մեղավորներին. «...քրիստոնյաներից լավագույն Տեր Մաղաքիան և Դանիել վանքի [մյուս] սևագլուխները իմանան, որ գերագույնին զեկուցվեց, որ մի քանի բեռ հացահատիկը որոշ անձինք Նախիջևանի կողմերն են տարել, սակայն հայտնի չէ, որ նրանք որ ցեղից են: Պետք է ...պարզեն հացահատիկը տանող անձանց անունները, ցեղային պատկանելությունն ու զեկուցեն և այսուհետև թույլ չտան, որպեսզի որևէ մեկը ման հացահատիկ տանի այն կողմերը»[199]:

1772 թ. սեպտեմբերին Բալասանի որդի Էվումը երկու թումանով Գրիգոր վարդապետին է վաճառում «Տէր Վարդանէն առած արտն, որ է մալում տասնութ սոմարէն տէղ»[200], և մեկ թումանով «Մակարի գահրեզից» իրեն հասանելիք ջուրը՝ պայման դնելով. «Դարձեալ ես Բալասանի որդի Էվումս ծախեցի երկու գլուխ ջուր Մակարի գարհեզէն և ջրի օրն է Գ (3) շաբթի, ամենայն համփենց գիտութեամբն և վկայութեամբն. ծախեցի Սուրբ Նախավկայի առաջնորդ Գրիգոր վարդապետին մեկ թուման. ոչ ում խօսք և իլաղա չունի... եթէ ժամանակաւ այս իմ ծախած Բ գլուխ ջրին դաւիչի դուրս գայ, իմ հայրենիք Ղաջարի գարհէզէն Բ գլուխ ջուր սորա բատալ լինի»[201]:

1774 թ. հոկտեմբերի 10-ին մահտեսի Ղազարի որդի Աստվածատուրը կամովին 8000 դիանով Նախավկայի վանքի առաջնորդին վաճառում է հիշյալ «Մակարի գահրեզից» իր սեփական երկու գլուխ ջուրը: Առուծախի գործարքը վիճարկման ենթակա չէր նրա զավակների կողմից, հակառակ դեպքում փոխարենը վանքը ստանում էր «Ծըլկի գահրէզի» չորս գլուխ ջուրը[202]:

1774-1775 թթ. ջուղայեցի թնդանոթաձիգ (թոփչի) Նիկողոսի որդի խոջա Հովհաննեսը Մաղարդավանքին է կտակում Իսպահանում գտնվող իր շարժական և անշարժ ողջ ունեցվածքը[203]:

1776 թ. օգոստոսին Գրիգոր վարդապետի կնքած առուծախի մեկ այլ փաստաթղթի համաձայն՝ վանքը Մովսեսի որդի Խաչատուրից ձեռք է բերում «ասարխանուցն երկու պոզ» (կամ որ նույնն է՝ «Բ պոզ ասարխանէս»)[204]:

1779 թ. դեկտեմբերի 17-ին Ազիզի որդիները՝ Հովսեփն ու Սարգիսը, Գրիգոր վարդապետին հինգ դիանով վաճառում են իրենց «հայրենիք Կուսանի գահրէզէն մէկ գլուխ ջուր. և ջրի օրն է ուրբաթ»[205]:

1780 թ. փետրվարի 1-ին Մարտումի որդի Մահմատը երկու թումանով նույն «Կուսանի գահրէզէն չորս գլուխ ջուր. օրն է ուրբաթ» վաճառել է Նախավկայի վանքի Գրիգոր առաջնորդին[206]:

Ստեփանոս նախավկայի վանքին վաճառված մեկ այլ կալվածքի մասին է վկայում նույն թվականի սեպտեմբերի 20-ին կազմված հետևյալ վկայագիրը. «Ես՝ Բունիաթի որդի Ստեփանս իմ յօժար կամաւ ծախեցի իմ հայրենիք սէվ արտն, որ է մալում Զ (6) սօմար. ծախեցի Սուրբ Նախավկայի առաջնորդ Գրիգոր վարդապետին գինն չորս Ռ (4000) դիան. դապալով ծախեցի իւր չորից հատերովն»[207]: Կալվածագիրը կազմել է վանքի լուսարար Հովհաննես երեցը:

1794 թ. Նախավկայի վանքի առաջնորդ Անանիա վարդապետը չորսուկես թուման գումարով ձեռք է բերում Ավետիքի որդի Մովսեսի սեփական տները, որոնք տասնամյակներ առաջ՝ 1730 թ. մայիսի 1-ին կնքված գործարքով նրա պապը՝ Իսրայելի որդի Հովհաննեսը, ինը թուման վեց հազար դիանով գնել էր Աղպալի որդի Ղաճարից[208]:

1818-1819 թթ. վանքի առաջնորդ Սարգիս վարդապետին ուղղված հրամանագրով վերստին հաստատվում է Դարաշամբ գյուղի՝ վանքապատկան նվիրատվական հողատարածություն լինելը[209]: Նույնն է հրամանագրվում նաև 1828-1829 թթ.[210]:

1819 թ. նշվել է, որ վանքի տնտեսական դրությունը բավական վատթարացել էր, քանի որ «Վարմազիարք՝ ցեղ ինչ Տաճկաց Պարսկաստանի, բնակեալ շուրջ զլերամբք և ’ի դաշտավայրի գիւղօրէս՝ մինչև ’ի քաղաքն Խօյ, բռնանան միշտ վանաց այսմիկ, զանդս սորա հատանելով, զիրաւունս Դարաշամբայ իւրելով և զվանքն գոյաթափ առնելով և կեղեքելով»[211]:

1828 թ. կազմված և 1830 թ. Նախիջևանում վավերացված կալվածագրերից մեկով՝ Դարաշամբ գյուղի մի մասը վաճառվել է և նվիրվել Սբ. Ստեփանոս նախավկայի վանքին. «Ես Սուրբ Նախավկայի Առաջնոր(դ) Սարգիս վարդապետս այս դաբալայի եղեալ Շամբայ մուլքին վերոյ գրեալ հայի և թ(ու)րքի վկայութեամբն...: ...Ես Մկրտիչ Սարքսեան Սա-

198 Նշվ. աշխ., էջ 148: Աստապատի Սբ. Ստեփանոս վանքի առաջնորդ Սարգիս վարդապետի ստորագրությունը փաստաթղթի ներքո ենթադրել է տալիս, որ Քուսանենց Ստեփանը Աստապատ գյուղաքաղաքից էր:

199 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. չորրորդ, էջ 95:

200 Նշվ. աշխ., էջ 69:

201 Նույն տեղում:

202 Նշվ. աշխ., էջ 116:

203 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 4:

204 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. չորրորդ, էջ 150-151:

205 Նշվ. աշխ., էջ 116-117:

206 Նշվ. աշխ., էջ 117-118:

207 Նշվ. աշխ., էջ 71:

208 Նվ. աշխ., էջ 137-138:

209 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 3:

210 Նույն տեղում:

211 **Թաղիադեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 245:

հակեանս վկայեմ, որ Ղազար Սարքսեանըն Շամբայ գիւղի կէսն իւր ղաբալօվն ծախեց Սրբոյ Նախավկայի վանուց առաջնորդ Սարգիս աստուածաբեալ վարդապետի 1830-ին սեպտեմբերի 4-ին ի Նախիջևան քաղաք...»[212]:

1828 թ. կազմված առուծախի մեկ այլ կալվածագրի համաձայն՝ «...Սուրբ Նախավկայի վարդապետս այս թարղիս (իմա՛ պարսկական գլխանոց, Ա. Հ.), որ է 1825 այս ղաբալայիս մուլքն Շամբայ Մօհպալի բէկից առիմ ճԼ (130) թումանն և ծախեցիմ Պրն. Գասպարեանին Նախջվնցոյ իւր ղաբալօվն»[213]:

1828-1829 թթ. Սարգիս վարդապետի շնորհիվ վանքապատկան կալվածքներն ավելի են ընդարձակվում. «...Մոհբալի աղա Քեանքեառլու Ֆաթալի բէկի որդին ծախել է Դիբքեանըդ և Օրթաքեանըդ Դարաշամբ անուն գեղերից տասից և մէկ կէս բաժինը ամենայն պատկանեալը՝ սար, ձոր, ջուր և բացի չորս աչք ջրաղացից և ձիթհանքից և նրանց կպած հողերից և բացի վանքի տակի բաղից, որոնք վանքի մալ են (ջրաղացը, ձիթհանքը և այգին): Ծախուած տեղի սահմաններն են՝ մի կողմից Բաշքեանըդի եկեղեցին, մի կողմը Շէյխքեանըդի և Եարմգայայի վերի կողմից, միև կողմն էլ Ջուլֆա գիւղը և Օրան Շամբի (աւեր քաղաք) և Ղըլվանքը (Կարմիր վանք), մի կողմն էլ Գիւլֆարաջ և Վարմազիարի հողերը առել և գնել է Սարգիս խալիֆան՝ Դանիէլ օջաղի խալիֆան, 260 թումանի...»[214]:

1830 թ. սեպտեմբերի 4-ին հաստատված առուծախի մեկ այլ գործարքից պարզվում է, որ Դարաշամբ գյուղը (հավանաբար մյուս կեսը) նս վաճառվում է Ստեփանոս նախավկայի վանքին. «Ես՝ Պետրոս Գասպարեանս, որ Դարաշամբ գյուղն գնեալ եմ սոյն ղաբայալիւն ծախեցիմ Սբ. Ըստեփանոս Նախավկյին. Առաջնորդ Սարքիս ած.արաբեալ վրդպետին, ինչպէս գնեայէյիմ, որ հայտէ ղաբալայի միջին ղրամնա»[215]:

1830-1831 թթ. վանքին է նվիրվում Քեոըլու գյուղը[216]:

1831-1832 թթ. շահի հրամանով արգելվում է վանքապատկան վարելահողերից ու այգիներից հարկ վերցնելը[217]:

Նույն թվականին կազմված մեկ այլ հրամանագրով հաստատվում է Սարգիս վանահոր գնած Դիբքյանդ և Դարաշամբ գյուղերի ամբողջությամբ վանքապատկան լինելը[218]:

1847-1848 թթ. հրաման է արձակվում, որ նշյալ գյուղերի հասույթը պետք է տնօրինի միայն Դարաշամբի վանքը. «...թագաւորի հրաման է եղել, այսպէս Դիբքեանդ և Դարաշամբ գիւղերը Դանիէլ մարգարէ օջաղի տեսուչ Սարգիս խալիֆան Շարիաթի ղաբալայով գնել է և օջաղին կտակել է. որքան որ նա ողջ էր յիշեալ գիւղերի հասոյթը օջաղի վերայ ծախսում էր: Մեռնելոց զկնի Օհանէս խալիֆային հասաւ և ...ոչ ոք նրա գործերին չխառնուի»[219]:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից ու պարսկահայերի գաղթից և հատկապես Թավրիզում Ատրպատականի հայոց առաջնորդարան ստեղծելուց հետո մենաստանի՝ առանց այն էլ անկայուն տնտեսական վիճակն ավելի է վատանում: 1850-1860-ական թվականներին վանք այցելած ականատեսն ընդգծում է «...վանական միաբանության անտարբերությունը և նրանց անհոգությունը դեպի վանքի սեփականությունները»[220]:

Թուրքմենչայի դաշնագրով Ստեփանոս նախավկայի վանքապատկան հողերի մի մասը հայտնվում է Նախիջևանի գավառի Աստապատ գյուղի տարածքում, և թեև ԺԹ դարի կեսերին «...նրանց եկամուտը ստանում է վանքը, բայց մի կաթողիկոսի մահից հետո այն հողերի կալվածագրերն ընկնելով մի բարեսիրտ էջմիածնականի ձեռքում, գաղտնի վաճառեց թուրք իշխաններին նրանց մի մասը...»[221]:

1870 թ. Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսի և Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի կազմած Երևանի նահանգի վանքերի և կալվածքների վերաբերյալ ցուցակում նշվել է, որ Դարաշամբի վանքն ունի «...1. մի այգի, որ բերէ միայն ծառապտուղս. 2. պարտէզ 3, բերեն նոյնպէս մասնաւոր ծառապտուղս: 3. կալուած Դարաշամբ գեղջն 20 տուն հայ ժողովրդովք, լերամբն և դաշտիւ պատկանի նոյն իսկ վանիցն՝ ըստ պարգևագրոյն Աշուռ թագաւորին հայոց, որ յամի Տեառն 976, որ տայ 'ի տարին երբեմն ցորեան 10 խալվար, գարի 5 խալվար, հաճար 3 խալվար, իսկ ծխահարկ դրամ առ մի տուն 3 մանէթ. ընդամէն 60 րուբլի: 4. Ջրաղաց երեք աչք, որք բերեն տարին 3 խալվար ցորեան: 5. Վարելահող 50 խալվարաչափ 'ի կալուածս Աստապատ գեղջ, ըստ պարգևագրոյ Աշուռ թագաւորի Հայոց, որ բերէ երբեմն 'ի տարին ցորեան 25 խալվար, և գարի 10 խալվար»[222]:

---

212 Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «Էջմիածին», 1976, Է, էջ 63 և Ը-Թ, էջ 63, 64:

213 Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «Էջմիածին», 1976, Ը-Թ, էջ 64:

214 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 5:

215 Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «Էջմիածին», 1976, Ը-Թ, էջ 64:

216 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 3:

217 Նույն տեղում:

218 Նույն տեղում:

219 Նույն տեղում:

220 **Րաֆֆի**, Ճանապարհորդություն Պարսկաստանում, տե՛ս ԵԺ, հ. 8, էջ 326:

221 Նշվ. աշխ., էջ 323, ծան. 1:

222 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 487:

Մեկ տարի անց՝ նոյեմբերի 20-ին կազմված եկեղեցապատկան կալվածքների ցուցակի համաձայն՝ վանքի ենթակայության ներքո գտնվում էին Դարաշամբ գյուղն իր 40 խալվար հողով և 4 ջրաղացով (2-ն ավերակ), վանքի մոտ՝ մի ջրաղաց և մի մեծ պարտեզ, վանքից հյուսիս՝ ձորի մեջ՝ այգիներ և 2 արտ, 7 ձմեռանոց, ոչխարանոց և Աստապատի տարածքում՝ 30 խալվար հող[223]:

1889 թ. ամռանը Հակոբ վարդապետ Տեր-Աբրահամյանը Հին Նախիջևանի հոգևոր կառավարությանն ուղարկած գրության մեջ հայտնում է, որ Նախավկայի վանքն ունի տասնվեց կտոր (30 խալվար) վարելահող Աստապատում, որից տասը կտորը գտնվում է Սբ. Վարդան եկեղեցու շրջակայքում[224]:

1890 թ. նշվել է, որ վանքը հիմնականում կորցրել էր իր մեծաքանակ կալվածքները[225]:

1900 թ. Սահակ եպիսկոպոսը վանքի կալվածքների և եկամուտի վերաբերյալ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանին մարտի 20-ին հղած նամակի մեջ մտահոգված գրում է. «...վանքն ունի բաւական եկամուտ, որ գոյանում է 30 խալւարի չափ հողեր Ռուսաց հողի վրայ Աստապատ գիւղում, վանքի առջև մի քանի արտեր, որոնք եթէ կանոնաւոր մշակելու լինեն գուցէ թէ մի աւելի բան տայ. Տարաշամբ գիւղը, որ վանքի կալւածքն է և Ս. Ստեփաննոսի աջն երբեմն տանում են Հին-Նախիջևան և գիւղօրայք շրջեցնում, որից բաւական հասոյթ են քաղում: Բացի այս, վանքի պարսպից դուրս, դէմուդէմը գտնւում է մի ջրաղաց՝ քարով, ուր ամեն պարագաներ կան, մի փոքրիկ ծախքով հարկաւոր է նորոգել գործածելու համար: Եթէ խելքը գլխին մի տեսուչ կարգւի, թերևս կարողանայ բաւականին կառավարիլ»[226]:

1903 թ. ամռանը Էջմիածնի սինոդը Երևանի հայոց վիճակագրական կոնսիստորիային հանձնարարում է պայմանագիր կնքել Նախավկայի վանքի վարելահողերը վարձակալության տալու մասին[227]: Մի քանի ամիս անց՝ դեկտեմբեր-հունվար ամիսներին, Մկրտիչ Ա կաթողիկոսը Հին Նախիջևանի փոխանորդ Իսահակ վարդապետին, ինչպես նաև բնակիչներ Ստեփան Կարապետյանին ու Մնացական Մանասերյանին հանձնարարում է կարգավորել Նախավկայի հողային խնդիրը Մակվի խանի հետ[228]:

1904 թ. հունվարին Հին Նախիջևանի հոգևոր կառավարությանը հանձնարարվում է «...զվարելահողս վանուցն ս. Նախավկայի Դարաշամբայ, որ յԱստաբատ, թողուլ ի վերայ եղբօր նախկին կապալառուի հանգուցեալ Սարգսի Առաքելեան»[229]:

1909 թ. վերջերին Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը դատական գործ է հարուցում Հասան աղա Մամեդովի դեմ: Վերջինս Արաքս գետի ջրից օգտվելու նպատակով ապօրինաբար առու էր անցկացրել վանքապատկան հողատարածքի միջով[230]:

1910 թ. հունվարի 16-ին հայոց թեմի առաջնորդն Էջմիածին ուղարկած գրությամբ խնդրում է Խաչիկ [Դադյան] վարդապետին ուղարկել Նախավկայի վանք[231]: Հունվարի 22-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանը (1908-1910), ընդառաջելով Կարապետ եպիսկոպոսի խնդրանքին, Սինոդին հրահանգում է Խաչիկ վարդապետին ուղարկել Ատրպատական՝ տալով նրան դատական գործընթացի ժամանակ մենաստանի շահերը պաշտպանելու լիազորություն[232]:

1911 թ. նոյեմբերին հողային վիճելի խնդիրը կարգավորելու նպատակով վանք է այցելում նաև Կարապետ Տեր-Մկրտչյանը: Ի վերջո, դատական գործը վճռվում է հօգուտ վանքի: Այդ մասին 1912 թ. հուլիսի 12-ին Կարապետ եպիսկոպոսը գրություն է հղում Գևորգ Ե կաթողիկոսին. «Դարաշամբի Ս. Ստեփաննոս նախավկայի վանքի Մ. Աթոռում պահող կալուածագրերի պատճէններն ստանալով Ատրպատականի հայոց Առաջնորդարանում՝ պաշտպանեցինք վանքի կալուածական իրաւունքները ռուսահպատակ Մամեդովների դէմ և Թաւրիզի ռուսաց հիւպատոսարանում հաստատեցինք, որ վանքից Երասխի ստորին հոսանքով դէպի արևելք ընկնող տարածութիւնը՝ մօտ 180 վերստ տեղ, մինչև Հին Ջուղայի կամուրջի մնացորդները, որի մէջ նաև Մամեդովների գրաւած մօտ 8 վերստ տարածութեամբ տեղը՝ վանքին է պատկանում: Արդ, նոյն կալուածագրերի մէջ վանքի կալուածքի մի սահմանակէտը դէպի արևմուտք, Երասխի վերին հոսանքով, ցոյց է տրուած Կարմիր վանքը՝ Ռուսաց ափում, որով այդ կալուածքը տարածւում է մինչև Հին Նախիջևանի դաշտի հանդէպը: Այստեղ ահա Պարսից մասում, դեռ Կարմիր վանքին չհասած՝ Երասխի ապառաժուտ նեղ ձորը լայնանում է և կազմում է «Ղազանգիան կոչուած» լեռնադաշտը: Այժմ մի խումբ աստապատցիներ ցանկութիւն են յայտնում կապալով վերցնել այդ լեռնադաշտը, անասնապահութեամբ պարապելու այնտեղ և մշակելու գետափնյա մասերը. մինչև իսկ մօտ 30 ընտանիք Աստապատից պատրաստ են փոխադրուել և բնակութիւն հաստատել այնտեղ: Սակայն Մակուի

223 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 1477, թ. 5:
224 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 189, թ. 15:
225 **Ա. Ե.**, Նամակ Հին-Նախիջևանից, «Մշակ», 1890, № 100, էջ 2:
226 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 417, թ. 59:
227 «Արարատ», 1903, յունիս, էջ 485:
228 «Արարատ», 1904, փետրուար, էջ 101:
229 «Արարատ», 1904, էջ 917:
230 «Արարատ», 1910, էջ 110: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, էջ 636:
231 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, էջ 636 և Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 161:
232 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, էջ 636:

Սարդարի հրամանով մօտ 60 տուն քրդեր կան բնակեցրած այնտեղ, որոնք և նրան են տուրք վճարում իբրև կալուածատիրոջ. անցեալի բռնութեան օրերում, երբ Ս. Նախավկայի վանահայրերը վանքի պարիսպներում անգամ ազատ չէին ամէն տեսակ ճնշումներից և կեղեքումներից, ըստ մեծի մասին խեղճ անճարակ մարդիկ լինելով՝ չէին կարող այսքան ընդարձակ տարածութեան վերայ հսկողութիւն ունենալ և տիրել, որով Մակուի սարդարները շատ ընդարձակ տեղ վանքի կալուածքից գրաւել և իւրացրել են: Մինչդեռ ոչ միայն վանքի կալուածագրերը հաստատում են յիշեալ լեռնադաշտի վանքի սեփականութիւն լինելը, այլ և Երասխի երկու ափի բնակիչները կվկայեն, որ թէ այդ լեռնադաշտը և թէ ամբողջ շրջակայքը՝ նաև թրքաբնակ Վարմազիար, Դողայ և Քելեք գիւղերը Ս. Նախավկայի վանքին են պատկանում»[233]:

Դեռևս 1911 թ. հուլիսի 27-ին Էջմիածնի սինոդը պատվիրում է Երևանի կոնսիստորիային հանձնարարել Հին Նախիջևանի հոգևոր կառավարությանը Հակոբ քահանա Տեր-Մինասյանից վերցնել Նախավկայի վանքին հասանելիք պարտքը և վանքի հետ կապված ծախսերը հոգալուց հետո մնացած գումարն ուղարկել Թավրիզ՝ թեմական խորհրդին: Բացի այդ՝ հոգևոր կառավարությանն առաջարկվում է թեմական խորհրդի գիտությամբ ու նրա ներկայացուցչի մասնակցությամբ վարձակալության տալ Մաղարդավանքի՝ ռուսական սահմանում եղած կալվածքները (անունները չեն հիշատակվում) և պետական հարկերը վճարելուց ու վանքի համար անհրաժեշտ ծախսերը կատարելուց հետո ավելացած գումարն ուղարկել թեմական խորհրդին[234]:

1960-ական թվականներին վանքի կալվածքների վիճակի վերաբերյալ գրվել է. «Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի գիւղը եւ վանքապատկան Դարաշամբ գիւղն եւս երկար տարիներ երեսի վրայ ձգուած ըլլալով, պատճառ էր դարձեր, որ տարիներու ընթացքին Դարաշամբ գիւղին կէսը (3 դանգը) սեփականացուի հարեւան պարսիկ գիւղատէրերու կողմէ, նկատի ունենալով, որ անոնց սեփականատիրութեան թուղթերը Ազգ. Առաջնորդարանիս անուան առնուած չէին տակաւին:

Թեմական Խորհուրդին տարած աշխատանքներուն շնորհիւ, ի վերջոյ կարելի եղաւ ստանալ սոյն վանքին եւ յարակից կալուածներուն սեփականաթուղթերը՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի գիւղը՝ Ղըզըլ Վանք անունով եւ Դարաշամբ... իբրեւ վաքֆ եղած ազգապատկան կալուածներ, իսկ Դարաշամբ գիւղին միայն կէսը (երեք դանգ) կարելի եղաւ հրիտակուած կալուած որպէս՝ ազգային կալուածի օրինական վիճակին դարձնել: Մնացեալ միւս կէսը պարսիկ գիւղատէրերուն սեփականութիւնը մնաց: 380.000 ռիալի գումարը այսպիսով կորսուեցաւ: ...Սոյն կալուածները պաշտօնապէս սկսան օգտագործուիլ 1960 թուին: ...այս հարցին քննութիւնը փոխանցուած է Մակուի ֆարմանտարին (զաւառապետութեան), որպէս զի իր պաշտօնեաները ղրկելով Ս. Ստեփաննոս վանքը, քննեն վարելահողերը եւ ըստ այնմ վճիռ մը արձակեն, այլապէս ազգապատկան հողերը պիտի ազգայնացուին...»[235]:

**Մաղարդավանքի ձեռագրերի հավաքածուն.** հայոց գրչության ամենահին ու ամենահայտնի կենտրոններից է: Դարեր շարունակ այստեղ ստեղծվել, նկարազարդվել ու կազմվել են ձեռագիր մատյաններ:

1819 թ. այցելուն նշում է. «Գրադարան վանացս առատ է հին ձեռագիր մատենիւք. այլ՝ ՚ի սակս ընդհանուր պակասութեան ուսմանց ՚ի սոսա՝ ամենայն ընդ փոշւովք թաղին»[236]:

Նախավկայի առաջնորդական թեմի վերացումից հետո՝ 1848 թ., վանքի ձեռագրերը կորստից փրկելու նպատակով կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հանձնարարությամբ Էջմիածնի միաբան Հովհ. Շահխաթունյանցը և Սինոդի ատենակալ Մակար վարդապետ Տեր-Պետրոսյանը 4 ամսով գործուղվում են Ստեփանոս նախավայի վանք, որպեսզի տեղում վանահայր Հովհաննես վանահոր աջակցությամբ «...բարւոք հետազօտութեան հաւաքել զգտանեցեալ գրեանսն...» և կազմակերպեն արժեքավոր ձեռագրերի տեղափոխումը Սբ. Էջմիածին[237]: Նրանց հաջողվում է Դարաշամբի վանքի ձեռագրաց հավաքածուի մի մասը՝ շուրջ 25 ձեռագիր և 98 տպագիր մատյաններ, տեղափոխել Մայր Աթոռ[238]:

1871 թ. վանքում պահվում էին ձեռագիր ու տպագիր 302 գիրք, կաթողիկոսական 43 կոնդակ, հայերեն 80 և պարսկերեն ու թուրքերեն 38 կալվածագիր[239]:

1870-ական թվականներին վանքի ավետարաններից մեկը փոխադրվում է Սբ. Էջմիածնի մատենադարան: Այդ մասին 1876 թ. գրվել է. «Գովելի յարստութեամբ կը ճոխանայ Ս. Էջմիածնի մատենադարանը... որոց մէջ աչքի զարնող գեղեցիկ Աւետարան մի կայ երկաթագիր մագաղաթի վերայ գրուած, եւ երեսի կազմը փղոսկրեայ և երկու կողմը քանդակագործ պատկերներ Յունական ձեւով, որոյ թուականն է այսպէս. «Յամի թուոյ Հայկազանց ՆԼԸ (989): Եւ ըստ թուոյ Հոռոմոսի ՉԽԲ (742), յԽմայելական բռնակալութեան ՅՀԹ (379):

233 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 278:
234 «Արարատ», 1911, օգոստոս, էջ 621:

235 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 265:
236 **Թաղիադեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 245:
237 Մատենադարան, ֆ. 49բ, թղթ. 154, վավ. 203ա:
238 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 68:
239 Յուցակն ամբողջությամբ տե՛ս ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 1477, թ. 12-14:

Այս աւետարանը մօտ ժամանակներս Մաղարթայ լերին Նախավկայի վանքէն բերուած է»[240]:

1904 թ. Սմբատ Տեր-Ավետիսյանը Ռուսական հնագիտական հանձնաժողովի կողմից գործուղվում է Ատրպատական՝ ուսումնասիրելու Մաղարդավանքում պահվող ձեռագրերը[241]: Վանքում նկարագրում է 124 ձեռագիր և դրանց մասին 1910 թ. մարտին մանրամասն զեկույց է ներկայացնում Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության կովկասյան մասնաճյուղում[242]:

1911 թ. դեկտեմբերին կաթողիկոսական տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսը, մտահոգված Մակվի և Ղարադաղի խանությունններում տիրող խառնակ վիճակից, պատվիրում է Նախավկայի վանքի ձեռագրերը տեղափոխել Մայր Աթոռ[243]: Նշյալ թվականի դեկտեմբերի 20-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը դիմում է Գևորգ արքեպիսկոպոսին՝ խնդրելով «...կարգադրել մի առանձին գրութեամբ յանուն վանահօր Ս. Նախավկայի վանուց՝ Տ. Ղևոնդ վարդապետի Բարսեղեան, որ վանքում մնացած բոլոր ձեռագիրները Կարսից Ջուլֆա փոխադրէ՝ ապահով արկղերի մէջ դնելով ուղարկէ Ս. Էջմիածին...»[244]:

Կարճ ժամանակ անց Թավրիզի, Խոյի, Սալմաստի հայկական ձեռագրերի հետ Նախավկայի վանքի ձեռագիր մատյանները ևս ուղարկվում են Էջմիածին[245]:

Մաղարդավանքի գրչության կենտրոնի ձեռագրերն այժմ պահվում են Երևանում, Թավրիզում, Նոր Ջուղայում և այլուր:

**Մաղարդավանքը գրչօջախ.** վանքում գրված ամենահինը «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» ձեռագիրն է, որն արժեքավոր սկզբնաղբյուր է հայոց եկեղեցու և Ա-Գ դարերում (Գրիգոր Լուսավորչից առաջ) Արտազում գահակալած եպիսկոպոսների պատմության ուսումնասիրության համար: Այն գրել է Հովհաննես Մաղարդեցի վարդապետը 649 թ. «...ի հին յիշատակարանէ միոջ, որ էր գրեալ (ի) ՂԸ (649) թուականն[ին] Հայոց, ձեռամբ Յօհաննէս սպասաւորէ, ի սուրբ ուխտէն Մաղարթայ»[246]: Արդեն նշել ենք, որ Հովհաննես Մաղարդեցին Արտազի եպիսկոպոսների ցանկը (Գավազանագիրքը) ավարտել է Ղևոնդիոսով, քանի որ չի կարողացել գտնել վերջինիս հաջորդած առաջնորդների անունները[247]: Անվանացանկի շարունակությունը փորձել է գտնել նաև Արտազի Զաքարիա Ա Ծործորեցի արքեպիսկոպոսը (ԺԴ դ.), սակայն ապարդյուն ջանքերից հետո ձեռագիրը կորստից փրկելու համար նորոգել է տալիս 1329 թ.[248]:

Մաղարդավանքում ստեղծված ԺԴ դարից մեզ հասած ձեռագրերը քիչ են: Բացի Զաքարիա Ծործորեցու հիշատակագրած վերոհիշյալ ձեռագրից՝ ցայսօր հայտնի է ևս երեք ձեռագիր:

1363 թ. Պետրոս գրիչը «...ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային» ստեղծում է ավետարան[249]:

1381 թ. Աստոմ գրիչը ոմն Սիմեոնի պատվերով Մաղարդավանքում ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը և խնդրում հիշել «...նախ և առաջին զմեծ րաբունապետն Սարգիս, որ զաւրինակս շնորհեաց, և զստացող սուրբ գրոյս զՍիմէոն, և զիւրսն ամենայն...»[250]:

1427 թ. գրիչ Գրիգոր Արծկեցին, «որ մականունամբ Էլմէլիքենց կոչի» (պատվիրատու՝ Դանիել կրոնավոր), «...գրեցաւ և աւարտեցաւ քրիստոսախօս աւետարանս ի գաւառիս Շամբի-Ձորոյ, ի մենաստանիս՝ որ մականուամբ Մաղարդայ վանք կոչի, ընդ հովանեաւ քրիստոսաիիմն և առաքելաշնորհ սուրբ խորանացս՝ սուրբ Աստուածածնի, և



Մաղարդա վանքում 1427 թ. ստեղծված ավետարանի հիշատակարանը

240 **Ուղեւոր Ա. Ե.**, նշվ. հոդվ., «Սիօն», 1877, էջ 258:

241 Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի (կազմ. **Ս. Տէր-Աւետիսեան**), Վիեննա, 1970, էջ Ե:

242 **Կնիք հաւատոյ** ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ, Էջմիածին, 1914, նախաբան, էջ I:

243 «Արարատ», 1912, յունուար, էջ 6; ապրիլ, էջ 292:

244 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 245, վավ. 140:

245 ԴԱՀՊ, հ. Բ, էջ 68:

246 Ե-ԺԲ, էջ 14: Հիշատակարանն առաջին անգամ հրատարակվել է՝ «Արարատ», 1868, էջ 102-104: Տե՛ս նաև **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 134, ձեռագրաց ցուցակ-ներդիր՝ 316-317 էջերի միջև՝ թիվ 183: **Գարեգին Ա կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 45:

247 Ե-ԺԲ, էջ 14-15: Տե՛ս նաև **Գարեգին Ա կաթողիկոս,** նշվ. աշխ., էջ 45-46:

248 Ե-ԺԲ, էջ 15, ծանոթ. 1:

249 ԺԴ, էջ 458:

250 ԺԴ, էջ 536-537: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 539: **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 123, 180: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան**, Երևան, 1965, էջ 584:





**Մաղարդավանքում 1427 թ. ստեղծված ավետարանի մանրանկարներից**

սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, և սրբոյն Գէորգեայ զօրավարին, որ կառուցեալ կան ի հարաւակոյս կողմանէ, հանդէպ Երասխ գետոյ»[251]:

1430 թ. ստեղծված Գանձարանի հեղինակը գրիչ Մխիթարն է. «...գրեցաւ սայ ի վայելուչ տեղս, որ կոչի Մաղարդի վանս, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոս նախավկայիս և յայլ սուրբ նշխարացս, ի յառաջնորդութիւն տէր Աւագի և Յակոբ վարդապետի, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ Շահռուղ ղանն էրեկ, բազում աւեր էած աշխարհիս մեր...»[252]:

1440 թ. «Կոչումն ընծայութեան Կիւրեղի Երուսաղէմացւոյ» (ժամանակը՝ 1316 թ., տեղը՝ Վան, նորոգող՝ Մխիթար եպիսկոպոս) «...ետ նորոգել զսա յիշատակ ոգոյ իւրոյ... Կազմեցաւ ...ընդ հովանեաւ Նախավկայիս...»[253]:

1484 թ. գրիչ Բարդուղիմեոս կրոնավորը հեղինակում է Սաղմոսարան. «...ի տեղս որ կոչի, Մաղար[դու] վանք ընդ հովանեաւ սուրբ Ստեփա[նոս] Նախավկայի, առ ոտս երջանիկ ///պս, և զվարպետն իմ զտէր Գրիգոր Բերկրեցին, և զուսուցիչն իմ զտէր Պետրոս մահդասին. թուին ՋԼԳ (1484)»[254]:

Գրիչ Բարդուղիմեոսը ևս մեկ Սաղմոսարանի հեղինակ է՝ ստեղծված 1485 թ. (պատվիրատու՝ Մելիքսեթ աբեղա, նկարազարդող՝ Աթանաս ծաղկող), որի հիշատակարանի սկզբնամասը չափածո է, շարունակությունը՝ արձակ.

«...Ծաղկեցաւ Սաղմոսարանս
Ի հռչակաւոր վանքս Ստեփաննոսի...:
...գրեցաւ ...ի տեղիս, որ կոչի աստուածաբնակ Մաղարթէվանք, առ ոտս երջանիկ և առաջնորդ սուրբ ուխտիս զտէր Վարդան արհեպիսկոպոսի, և զվարպետն իմ զտէր Յակովբ փիլիսոփային և զուսուցիչն իմ զտէր Պետրոս մահդասին»[255]:

1507 թ. տէր Ազարիան գրում է ավետարան[256]:

1545 թ. ևս մեկ Սաղմոսարան է հեղինակում Բարդուղիմեոս գրիչը (ծաղկող՝ Աթանաս). «Ծաղկեցաւ Սաղմոսարանս ի հռչակաւոր վանքս Ստեփաննոսի, ձեռամբ ախմար նկարողի, որ Աթանաս անուն կոչի...»[257]:

1551 թ. ստեղծվում է «Բնաբան քարոզիչ վարդապետաց» երկը գրիչ Մովսես վարդապետի կողմից[258]:

1562 թ. գրիչ Ավետիս Հիզանցին հեղինակում է «Մաշտոց ձեռաց» (ստացող՝ տեր Պետրոս Դարաշամբեցի)[259]:

251 ԺԵԱ, էջ 365: Տե՛ս նաև **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 155; ձեռագրաց ցուցակ-ներդիր 316-317 էջերի միջև՝ թիվ 50: «Բազմավէպ», 1935, էջ 436:

252 ԺԵԱ, է ջ 396:

253 ԺԵԱ, էջ 504: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 540-541: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., «Հուր», 1974, № 37-38, էջ 39:

254 ԺԵԳ, էջ 58:

255 Նշվ. աշխ., էջ 73:

256 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 541:

257 **Գէորգեան Ա.**, նշվ. աշխ., էջ 28:

258 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 140: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 542: Ի դեպ, 1893 թ. այս ձեռագիրը 11 այլ ձեռագրերի հետ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մատենադարանին է նվիրում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը:

259 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1047:

1594 թ. գրիչ Անանիա վարդապետը հեղինակում է ավետարան (պատվիրատու՝ ոմն Մելեք Մեհեր)[260]:

1601 թ. Հովհան երեց Դարքամարքեցին խոջա Մարգարեի պատվերով վանքում նորոգում է «Յայսմաւուրք»[261]:

1625 թ. գրիչ Թումա աբեղան գրում է Մաշտոց. «Եւ գրեցաւ սա... ի վանքս Մաղարդայ, ընդ հովանեաւ Ս. Նախավկային և ի Տիրամայր Ս. Աստուածածնի[ն], և մերոյ առաջնորդի սբ. ուխտիս տէր Պետրոս արքեպիսկոպոսի...»[262]:

1627 թ. ստեղծվում է «Խազտետր» (ժամանակը՝ ԺԴ դ., պատվիրատու՝ ոմն տեր Ստեփանոս, կազմող՝ Պողոս միաբան). «...ի դուռն Ս. Ըստեփաննոս Նախավկային, որ կոչի Մաղարդավանք»[263]:

1648 թ. ստեղծված ավետարանում (ժամանակը՝ ԺԶ դ., կազմող՝ Ավետիս երեց) նշվել է. «Յիշատակ է Աւետարանս ի դուռն Ս. Ստեփաննոս Նախավկային...»[264]:

1655 թ. Միքայել գրիչը հեղինակում է Ժամագիրք, որի պատվիրատուն էր Խանումը՝ ի հիշատակ շամբեցի Կիրակոսի որդի Հովհաննեսի. «Արդ՝ գրեցաւ ի դուռն Ս. Ըստեփաննոս Նախավկային և ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, և Ս. Գրիգոր Լուսորչի, և Ս. Յովաննէս Մկրտչին...» կամ «ի դուռն սուրբ Ըստեփանոս նորաքնունք Նախավկային...»[265]:

1663 թ. ստեղծվում է Աստվածաշունչ գրիչ Գասպարի կողմից (պատվիրատու՝ վանքի առաջնորդ Միքայել վարդապետ)[266]:

1670 թ. ստեղծված «Մանրուսում»-ի հեղինակը գրիչ և ծաղկող Իսահակ Ասպահանցին է, իսկ ստացողը՝ Թորոս կրոնավոր Ասպահանցին[267]:

1671 թ. ստեղծվում է Ժողովածու (գրիչ՝ Արիստակես)[268], իսկ 1672 թ.՝ ևս մեկ Ժողովածու (գրիչ՝ Պետրոս վարդապետ)[269]:

1675 թ. գրիչ, ծաղկող և կազմող Մարութ Սյունեցին (ստացող՝ Մարտիրոս վարդապետ) վանքի առաջնորդ Միքայել վարդապետի պատվերով ընդօրինակում է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» երկը. «...մեծ րաբունապետն Միքայէլ զեռափափագ սէր սրտի նորո եւ զցանկութիւն հոգւոր, որ կամի ստանալ գիրս իւրն հոգեւոր զաւակ, յայնժամ իբր բռնութեամբ հարկ ի վերայ եղեալ Մարտիրոս բանի սպասաւորին... հեզահոգի Մարտիրոս ինքնայօժար կամօք յանձն էառ զի գրել տացէ: Բայց մեծ րաբունապետն Միքայէլ զամենայն արտաքին հոգսն ինքն յանձն էառ հուզալ եւ վճարել: Բերեալ զքարտուղարն ի յերկրէն Սիւնեաց եւ զօրինակն ի Վայոց ձորէն, ի յանապատէն Շատիկ կոչեցելոյ, տուեալ զչափ եւ զգաղափար գրքին... գրեցաւ հոգեղի սուրբ գիրքս ի մեծահռչակ եւ յաստուածաբնակ եւ յակ[ա]նաւոր եւ երեւելի եւ ի մայրաքաղաքն ամենայն վանօրէից ի Սուրբ ուխտս սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի եւ այլ բազմահաւաք սրբոց նշխարացս, որք աստ կան գումարեալ, ի պահպանութիւն տանս Թորգոմեան...»[270]:

1675 թ. ստեղծվում է ավետարան, որի պատվիրատուն Հակոբ սարկավագ Ջուղայեցին է[271]:

1670-ական թվականներին ստեղծվում են «Խազգիրք» (1677)[272], «Մեկնիչ խորհրդոյ» (ստացող՝ Մարտիրոս, 1677)[273], «Վարք հարանց» (1679, ստացող՝ Միքայել վարդապետ)[274] և այլ աշխատություններ:

1685 թ. ստեղծված Խորհրդատետրի հեղինակը Մովսես գրիչն է[275]:

1686 թ. ստեղծվում է «Յայսմաւուրք» (գրիչ և ծաղկող՝ Ստեփանոս Ջուղայեցի, պատվիրատու՝ չորսեցի Մարկոս). «ի ձորն Շամբայ, ի սուրբ ուխտն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին»[276]: Մատյանը ձեռքից ձեռք անցնելով՝ ԺԹ դ. ընծայաբերվում է Թեհրանի Սբ. Թադեոս-Բարդուղիմեոս եկեղեցուն:

1690-ական թթ. ստեղծված Ժողովածուի հեղինակը գրիչ Մելիքն է (ստացողներ՝ Ովան և Գալուստ վարդապետներ): Ըստ որում, աշխատանքները սկսվում են Նախավկայի վանքում (1691 թ.), ապա շարունակվում Երուսաղեմում և այնտեղ էլ ավարտվում 1697 թ.[277]:

260 Նշվ. աշխ., էջ 1039: Ձեռագիրն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում 3552 թվահամարի տակ:

261 ԺԷԱ, էջ 14-15: Տե՛ս նաև Ոսկեան Հ., նշվ. աշխ., Բ մաս, էջ 543-544:

262 ԺԷԲ, էջ 189:

263 Նշվ. աշխ., էջ 246: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 545: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 634:

264 ԺԷԳ, էջ 310: Տե՛ս նաև **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 314: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 546:

265 ԺԷԳ, էջ 645: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 356-357 և հ. Բ, էջ 1404-1405:

266 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 547:

267 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 549-550: Տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 402:

268 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 549:

269 Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 50: Տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1207:

270 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 453: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1643-1644:

271 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 141, 184-185:

272 Նշվ. աշխ., էջ 121:

273 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 550-552:

274 «Արարատ», 1899, էջ 356: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 518-519:

275 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 343:

276 Ցուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի, կազմեց **Հր. Անասեան**, Վիեննա, 1936, էջ 7-8:

277 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 441:

278 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 270, ցուցակ-ներդիր 316-317 էջերի միջև՝ թիվ 181:

1703 թ. գրիչ Հակոբ վարդապետ Շամբեցին «ի Նախավկայի վանս Դարաշամբայ» ստեղծում է «Յայսմաւուրք»[278]:

1705 թ. գրիչ Ստեփանոս Ջուղայեցի սարկավագի հեղինակած «Յայսմաւուրք»-ի հիշատակարանն արժեքավոր տեղեկություններ է պարունակում ԺԷ դարավերջին վանքում Պետրոս և Հովհան Շամբեցի առաջնորդների իրականացրած նորոգչական աշխատանքների մասին[279]:

1711 թ. ստեղծված Խորհրդատետրի հեղինակը գրիչ Եզեկիելն է[280]:

1724 թ. գրիչ Մելքոն երեց Ջուղայեցի «ի վանս սուրբ Նախավկային, որ ի Մաղարդայ ձորն Շամբայ» ընդօրինակում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը[281]:

1736 թ. գրիչ Ստեփանոս Ջուղայեցին Աբրահամ Կրետացի կաթողիկոսի պատվերով ընդօրինակում է «Պատճէնք կոնդակաց Մաղարդավանից» (ձեռագիրն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում, 8017 թվահամարի տակ)[282]:

Ենթադրվում է, որ Ստեփանոս նախավկայի վանքում է ստեղծվել նաև 1710-1720 թթ. վերաբերող Շարակնոցը: 1914 թ.՝ թուրքական զորքերի ներխուժման օրերին, միաբանները ձեռագիրը թաքցնում են հողի տակ, ուր այն մնում է կես դար և խիստ վնասվում. թերթերը խունանում են ու քարանում: Ձեռագիրը հայտնաբերվում է 1967 թ.: Փոխադրվում և Թավրիզի Մելիք-Թանգյան ազգային թանգարանին է հանձնվում նորջուղայեցի Լևոն Մինասյանի միջոցով, որտեղ և պահվում է մինչ օրս[283]:

1758 թ. վանքում ստեղծվում է «Քարոզգիրք Տիրատուր վարդապետի» երկը գրիչ Հակոբ սարկավագի կողմից[284]:

1807-1812 թթ. գրիչ Սուքիաս քահանան ստեղծում է Ժողովածու[285]:

Մաղարդավանքի հողային վիճահարույց խնդիրները կարգավորելու նպատակով 1911 թ. նոյեմբերին վանք է այցելում Ատրպատականի հայոց առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը: Տեղի ձեռագրերի հավաքածուն ուսումնասիրելիս նա հայտնաբերում և 1914 թ. հրատարակում է հայոց եկեղեցու դավանաբանական խնդիրներին վերաբերող «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ» խիստ արժեքավոր ժողովածուն, որը կազմվել է Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի օրոք (615-628)[286]: Հիշատակարաններից դատելով՝ ձեռագիրը քանիցս ընդօրինակվել է, ձեռքից ձեռք անցել և նորոգվել նախ 1629 թ. Պետրոս երեցի ձեռքով, ապա «...բարեմիտ, ընթերցաս(էր), հեզահոգի» Բաղդասարի՝ նորջուղայեցի մահտեսի խոջա Նազարի (նշանավոր խոջա Նազարը չէ) որդու պատվերով հավանաբար ԺԷ դ. 30-40-ական թվականներին[287]: 1648 թ. Բաղդասարի որդի Մաթեոսի պատվերով ոմն տեր Յոհան վերստին արտագրում է մատյանը[288]: Կարապետ եպիսկոպոսը հնարավոր է համարում, որ «Կնիք հաւատոյ»-ի իր հրատարակած օրինակը հենց ա՛յս պատվիրատուն է ընծայել Նախավկայի վանքին, որն այդ ժամանակ սկսել էր չենանալ, իսկ մյուս օրինակը պահել է Նոր Ջուղայում[289]:

**Ձեռագրերի նվիրատվություններ.** վանքի ձեռագրատան հավաքածուն հարստացել է նաև նվիրատվությունների շնորհիվ: Ստորև ներկայացնում ենք հետևյալը.

1173 թ., Ավետարան, գրիչ՝ Հովհաննես, վայրը՝ Սյունյաց Բղենո Նորավանք, ժամանակը՝ 989 թ., նվիրատու՝ Վահրամի որդի Գուրժի[290]:

1332 թ., ձեռագիր մատյան, նվիրատու՝ ոմն Եսայի. «Տուի զգիրքս (Եսայի) ի սուրբ Ստեփանոս Նախավկայս. տէր Սարգիս եւ այլ եղբարքս ընկալան զմիաբանութիւնս մեր եւ խոստացան ի տարին երկու աւր պատարագ ...ՉՁԱ ընձայեցաւ գիրքս այս»[291]:

279 **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 556-557:

280 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 558, ծանոթ. 37:

281 **Սմբատեանց Մ.,** նշվ. աշխ., էջ 128: Տե՛ս նաև Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 134:

282 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 655: Թիվ 9366 համարակալումն ունի նույն հավաքածուի մաս կազմող «Յիշատակարանք կոնդակաց» (1667-1852 թթ.) ձեռագիրը, որը կազմվել է Նախավկայի վանքում, և որտեղ մեկտեղված են տեղեկություններ մենաստանին կատարված նվիրատվությունների վերաբերյալ. «Թէ ով որ իցեն կամ զինչ ընծայեցին սուրբ ուխտիս» (տե՛ս նշվ. աշխ., էջ 917):

283 **Վարդան ծ. վարդապետ**, Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային թանգարան հայերէն ձեռագիրները, ԴԱՀՊ, հ. Բ, էջ 73: Տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային-եկեղեցական թանգարանի, էջ 105:

284 **Սմբատեանց Մ.,** նշվ. աշխ., էջ 128:

285 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 508:

286 Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, Էջմիածին, 1914, էջ IX-X (Հիշատակարանը վերահրատարակվել է ԺԷԲ, էջ 323-324): Տե՛ս նաև **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 442; 592, ծանոթ.1:

287 Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, Էջմիածին, 1914, էջ IV-V, 372: Հիշատակարանը վերահրատարակվել է ԺԷԲ, էջ 323-324:

288 Նշվ. աշխ, էջ VII, 372:

289 Նշվ. աշխ., էջ VII:

290 Ե-ԺԲ, էջ 71-72, 213-214: Տե՛ս նաև **Գարեգին Ա կաթողիկոս,** նշվ. աշխ., էջ 449-452: **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 538-539: Ձեռագիրն այստեղ մնում է մինչև 1848 թ., որից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու (1843-1857) հրամանով տեղափոխվում է Էջմիածին: Այնուհետև բերվում է Մատենադարան և պահվում 2374 թվահամարի տակ: Հարկ է նշել, որ սա հետագայում «Էջմիածնի Ավետարան» անվանված հռչակավոր ձեռագիրն է՝ փղոսկրյա կազմով (Զ դ.), երկու նկարազարդ թերթերով (Զ-Է դդ.), ԺԲ դ. կատարված մանրանկարներով և այլն: Ավետարանը հայ միջնադարյան գրչության և զարդարվեստի ամենանշանավոր գործերից է և այսօր էլ իր վրա է հրավիրում հայագետների ուշադրությունը: Նրա ուսումնասիրությամբ զբաղվել են Գ. Հովսեփյանը, Մ. Բրոսսեն, Ֆ. Մակլերը, Յո. Ստրժիգովսկին, Կ. Վայցմանը, Ս. Տեր-Ներսեսյանը, Լ. Ա. Դուռնովոն և այլք:

291 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 539:

1440 թ., «Կոչումն ընծայութեան Կիւրեղի Երուսաղէմացւոյ», նվիրատու՝ Հակոբ վարդապետ. «...յիշեցէք... զստացւող սուրբ գրոցս զՅակոբ վարդապետ, որ յոյժ փափաքանաւք հանդիպաւ սուրբ գանձուցս ի Խօ[յ] քաղաք, և խնդրեալ զսա ի հաւատարիմ կնոջէ մի, և բերեալ զսա ի սուրբ ուխտս ի վանքս Մաղարտէ, ընծա սուրբ Նախավկայ վկայիս, եւ ետ նորոգել զսա յիշատակ ոգոյ իւրոյ...»[292]:

1454 թ., Մաշտոց, վայրը՝ Վան, գրիչ՝ Կարապետ երեց, ստացող և նվիրատու՝ տեր Ավետիս. «...եդ ի դուռն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային...»[293]:

1459 թ., Ճաշոց, գրիչ՝ Կարապետ, վայրը՝ Ոստան, ստացող և նվիրատու՝ խոջա Արղըլ-Ազիզ. «...(Եւ ստացաւ խոջայ Արղլ-Ազիզն)... և ետուր ի դուռն սուրբ Ստեփաննոսի նախավկային...»[294]:

1615 թ., Աստվածաշունչ, նորոգման վայրը՝ Տաթև, ժամանակը՝ 1317 թ. «...Ռըստակէս... նորոգել տուի Աստուածաշունչս, թվին ՌԿԴ (1615), զի անշարժ կացցէ սայ ի դուռն Մաղարդա վանից Ս. Ստեփանոս Նախավկային...»[295]:

1660 թ., ավետարան, գրիչ՝ Մարտիրոս երեց, նվիրատու՝ սրջվացի Նազար. «...առի հալալ զսա. վաստակոց իմոց և ետու վախմ եկեղեցոյն մերոյ Ս. Ստեփաննոսի Նախավկային»[296]:

1671 թ., «Մասունք նորոյ կտակարանի», վայրը՝ Տիրոջ (Գռներ) գյուղ, ժամանակը՝ ԺԳ դ. «Յիշատակ է սուրբ գիրքս Արիստակէս վարդապետին ի դուռն Սուրբ Ստեփաննոս Նախավկային, որ Շամբի Ձոր վերաձայնի, առաջնորդութիւն Միքայէլի աստուածաբան վարդապետին»[297]:

1679 թ., Գրիգոր Նարեկացի, «Մատեան Ողբերգութեան», ստացող և նվիրատու՝ Միքայել վարդապետ Աստապատցի. «Յիշատակ է Նարեկ գիրքս ի դուռն [Սր]բոյն Ստեփաննոսի Նախավկային: ...զոր ետ Միքայել վարդապետն յիշատակ հոգւոյ իւրոյ»[298]:

1697 թ., «Կանոնագիրք առաքելական», գրիչ՝ Ավետիք քահանա, պատվիրատու և նվիրատու՝ Գալուստ վարդապետ (հետագայում՝ առաջնորդ), վայրը՝ Հալեպ (Բերիա): Կտակել է Նախավկայի վանքին ու նրա առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոսին՝ իր քեռուն ու հոգևոր հորը. «...Ես՝ ամենից նուաստ Գալուստ վարդապետս, բորբոքեցայ ի սէր Աստուածային մատենիս. այս վարքափիքիր կանոն գիրքս զսա ստացայ հալալ արդեանց իմոց. որքան կենդանի եմ՝ վայելեմ, և յետ իմոյ յելանելոյ յաշխարհէս յիշատակ սրբոյ Նախավկային լիցի...»[299]:

1775 թ., «Տօնացոյց», նվիրատու՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոս[300]:

**Մասունքներ.** 1668 թ. ականատեսը մասունքների մասին գրել է. «Ասում են նաև, որ այդ վայրում գտել են բազմաթիվ մասունքներ, որոնք բերել են Սբ. Բարդուղիմեոսն ու Սբ. Մատթեոսը, և որոնց նրանք (հայերը) ավելացրել են նաև այլ մասունքներ: Ահա այդ հիմնական մասունքները, որոնց հանդեպ նրանք լցված են հավատով.

– մի խաչ՝ շինված այն ամանից, որի մեջ Հիսուս Քրիստոսը լվաց իր աշակերտների ոտքերը: Այդ խաչի կենտրոնում կա մի սպիտակ քար: Նրանք ասում են, որ այդ քարը դնում են մահամերձի վրա, եթե հիվանդը պետք է մեռնի, քարը սևանում է, իսկ նրա մահից հետո վերստին սպիտակում է:

– Սբ. Ստեփանոս նահատակի (martyr) ծնոտից մի կտոր:

– Սբ. Մատթեոսի զանգոսկրը:

– Սբ. Հովհաննես Մկրտչի վզից և մատից մի ոսկոր:

– Սբ. Դիոնիսիոս Արիոպագացու աշակերտ Սբ. Գրիգորի աջը:

– Մի փոքր տուփ, որտեղ կան ոսկորի մանր կտորներ, որոնք նրանց (հայերի) կարծիքով 72 աշակերտների մասունքներն են»[301]:

**Մաղարդավանքի շարժական կայքը.** 1871 թ. նոյեմբերի 20-ին կազմվում է վանքապատկան 583 իրերի ցուցակը[302]: Ըստ այդ ցուցակի՝ վանքում են պահվել նաև հիշատակագրություններ ունեցող հետևյալ իրերը.

**Ա** «Արծաթե ոսկեզօծ գոտի.

*...յիշատակ Դաւիթ Գուրջեան, ՌՊԺԷ (1817) թվին Հայոց*:

**Բ** «Թագ եպիսկոպոսական ասեղնագործ ոսկեղենիւք զարդարեալ, ոսպնաչափ անպակաս մարգարտիւք և գոյնզգոյն մինայիւք և տասն հատ ակամբք երկու հատ, մին.

*Յիշատակ Պօղոսին և մօրն՝ Գիւլփարին և Խանումին.*

*միւսն.*

*Պր. Ա(ստուա)ծատրին և կողակցոյն Մարիամ տատին:*

292 ԺԵԱ, էջ 504: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 540-541: **Քիւրտեան Յ.,** նշվ. հոդվ., «Հուր», 1974, № 37-38, էջ 39: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1552:

293 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1175:

294 ԺԵԲ, էջ 118:

295 ԺԷԱ, էջ 542: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 544: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երեւան, 2004, էջ 227:

296 ԺԷԳ, էջ 920:

297 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 844:

298 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երեւան, 2007, էջ 116:

299 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 265-266:

300 ԴՀՊ, գիրք Ը, էջ 424, նաև էջ 625:

301 **Tavernir J. B.,** Les six voyages en Turquie et en Perse, Introduction et notes de Stéphane Yerasimos, Paris, 1981, pp. 92-94.

302 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 1477, թ. 5-11:

**Գ** Արծաթե 2 սկիհ՝ ոսկեզօծ մաղզմաններով մին.

*Նախիջևանցի տէր Գալուստի որդի Եղիսաբէթին.*

*և միւսն. Ալլահվերդոյ որդի Պետրոսին, թվին ՌՊԾԱ (1852):*

**Դ** Թագ եպիսկոպոսական փրկչական և Աստուածամօր պատկերօք, որոց պսակքն մարգարտապատ ոսկեայ մավթուլիւք և հինգ կարմիր եաղութ քարամբք՝ *Խաչատուր կաթողիկոսին*:

**Ե** Թագ եպիսկոպոսական ասեղնագործ յարութեան և խաչելութեան պատկերօք...

*Տաքևացի Մինաս վարդապետի. թվին ՌճԻ (1671):*

**Զ** Աղաւնիք միւռոնի արծաթի, գեղեցկաձևք մի զոյգ.

*Յիշ(ա)տ(ա)կ մ(ա)հտ(ես)ի Կրամի թոռ մ(ա)հտ(ես)ի Ստեփաննին:*

**Է** Բուրվառ արծաթեայ մի հատ.

*Յիշատակ նախիջևանցի մ(ա)հտ(ես)ի Մկրտչի Թունե(ա)նց:*

**Ը** Բուրվառ պղնձեայ մի հատ.

*Էյվազայ Դաւթեան Աստապատից:*

**Թ** Բուրվառք դեղնապղնձեայ չորս հատ.

*Երևանցի Պետրոսի:*

**Ժ** Խաչ արծաթի հինգ ճողաւոր մեծադիր, մի աղեղ քարամբ մի հատ.

*Ստեփանի Տէր-Յովսեփեան, Տնակերտից, ՌՊԾԱ (1851) թվին:*

**ԺԱ** Խաչ արծաթի մի հատ.

*Յղնեցի Ստեփանի Սահակեան. ՌՊԿԱ (1861):*

**ԺԲ** Խաչվառ կարմիր աթլասի վերայ ոսկեզօծ խաչիւ ոսկեթել փունջերով, Ռուսաստանու, մի հատ.

*Ագուլեցի մահտեսի Հարութիւն Մարգարեան:*

**ԺԳ** Ծածկոց ասեղնագործ հասարակ ատլասից մի հատ.

*Ոսկերիչ Եսայիէ Թարվիզեանց:*

**ԺԴ** Կնիք արծաթեայ փորագրեալ յանուն և ի պատկեր վանուց Նախավկայի, մի հատ.

*Սեսրովբ վարդապետի Սմբատեանց:*

**ԺԵ** Շալովնի շուրջառ կանաչ պլիս աստառով արծաթի...

*Թարվիզցի Սահակայ Կոստանեանց:*

**ԺԶ** Չթեայ շապիկ մի հատ.

*Աստուածատուր Ստեփանեան Ագուլեցւոյ:*

**ԺԷ** Պատկեր Ռուսաստանու մեծադիր Աստուածամօրն արծաթապատ գեղեցիկ շրջանակօք, մի հատ.

*Յիշատակ նախիջևանցի Բուղտանայ Խուդավերդեանից:*

**ԺԸ** Ջահ կիսարծաթ Վարշավի, երկու կարգ մոմակալօք, մի հատ.

*Ստեփանայ Արմազանեանից Քիլքափեցւոյ:*

**ԺԹ** Սկիհ արծաթեայ ոսկեզօծ մաղզմանիւքն իւրեանց երկու հատ.

*Մին նախիջևանցի տէր Գալուստի որդի Եղիսաբեթին և միւսն Ալահվերդոյ որդի Պետրոսին, թվին ՌՊԾԱ (1851):*

**Ի** Վարագոյրք սեղանի, խորանի խորհրդանոցի, չթեայ, մին կարմիր մախմուտ, հին և նոր քսաներեք հատ: Կարմիր մախմուտն սեղանի է.

*Յիշատակ Ագուլեցի Ղուկասայ Ասմարեանց:*

**ԻԱ** Տապանակ կամ խնկատուփ արծաթեայ ի պետս սարկաւագի մի հատ.

*Պարոն Կարապետի Պետրոսեան Գասպարեանց Նախիջևանցւոյ:*

**ԺԲ** Քշոց արծաթի պատուական ձևով երկու հատ.

*Յարութիւն Մարգարեան Ագուլեցւոյ:*

**ԺԳ** Քօղք սկիւոյ երկու հատ.

*Աստուածատուր Ստեփանեան...»:*

1911 թ. նոյեմբերի 17-ին Մաղարդավանք է այցելում Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը և եկեղեցական մի քանի իր վերցնում Մայր Աթոռի թանգարանին հանձնելու նպատակով (այդ իրերն էին՝ «1. Երկու եպիսկոպոսական թագ, մինը մարքարտաշար ու միւսը սև կտորի վրայ ասեղնագործ

2. մի հատ եմիփորոն եպիսկոպոսական
3. մի զոյգ արտախուրակ
4. մի փորուրայր
5. մի գոտի մարգարտաշար
6. հինգ հատ վակաս
7. մի հատ սեղանի ծածկոց
8. երկու հատ այլ հնոտի՝ մինը վարագոյրի յիշատակ, ու միւսը ժամաշապիկի վզնոց»)[303]: Սակայն ջուղայեցիների և դարաշամբցի մի ներկայացուցչի բողոքի պատճառով դրանք դեկտեմբերի 5-ին ի պահ են տրվում Ավի Մելիք-Ստեփանյանցին[304]: Տասն օր անց Հին Ջուղայի հասարակությունը խնդրագիր է հղում կաթողիկոսական տեղապահին նշյալ իրերի Մայր Աթոռ տանելու փորձի և դրանք վերադարձնելու վերաբերյալ: Վավերագրում մասնավորապես նշվել է, որ «...պ. Աւի Մելիք-Ստեփանեանցը լինելով ջերմեռանդ աստուածավախ անձնաւորութիւն՝ չի կամենում այդ նւիրական իրեղէնները պահել իր մօտ, ուստի աղերսում ենք ...զիճել մեր աղաչանքներին կարգադրելու շուտափոյթ տեղափոխել այդ նւիրական հնութիւնները կրկին Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը»[305]: 1911 թ. դեկտեմբերի 21-ին կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսը, նկատի ունենալով արժեքավոր հնությունները Սբ. Էջմիածնի թան-

303 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 238:
304 Նույն տեղում:
305 Նշվ. աշխ., էջ 244:

զարանում պահելու վերաբերյալ Մատթեոս Բ կաթողիկոսի՝ 1909 թ. հոկտեմբերի 21-ի կոնդակը, կարգադրում է դրանք տեղափոխել Մայր Աթոռ[306]:

Ստորև ներկայացնում ենք Ստեփանոս նախավկայի վանքում պահված, ապա Սբ. Էջմիածին տեղափոխված իրերի արձանագրությունները.

**ԺԴ** Ապակյա խաչի արծաթյա պատվանդանին. «...երկաթի վրայ տասն անկիւնաւոր ապակիք են հազցրած և ութն հատ ևս երկու թևի վրայ: Պատուանդանի ծայրն էր թզաչափ արծաթ, որոյ վրայ գրած էր...: Պոչին ստորին ծայրն էր ծակ դրոշակ անցուցանելոյ համար, նոյնպէս և փոքր օղ էր կպցրած, որ ...դրօշակի ձողի վրայ ժապաւինով անցուցանելոյ համար է եղած...» (**Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 25).

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Յովանէս թ(ա)գ(աւո)ր(ի)ն Հայոց եւ կ(ո)ղ(ա)կ(ի)ց Շուշ(ա)ն տ(ի)կ(նոջ)ն. եւ որդ(ի) Աշոտ թ(ա)գ(աւո)րն բ(ա)զում զօրօք եկի ս(ուր)բ ուխտս, եղու Շամբա ջ(ա)ղ(ա)ցներն, Երասխի նաւն, Ա(ս)տ(ա)պ(ա)տու հողն ս(ուր)բ Նախ(ա)վկ(այի)ն յ(ի)շ(ա)տ(ա)կ մեզ և ծն(ո)ղ(ա)ց մերոց, թվ(ի)ն ՆԺԵ (966):*

Հրատ. **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 307: **Շերմազանեանց Գ.**, Ճանապարհորդութիւն Հայաստանումը, էջ 25: **Ալիշան Ղ.**, էջ 518: **Բասմաջեան Կ.**, Մեր հնութիւնները, էջ 98-99: **Կոստանեանց Կ.**, նշվ. աշխ., էջ 8: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 531:

Ծանոթ. 1614 թ. կալվածագրի համաձայն՝ Աշոտ Գ թագավորի՝ վանքին նվիրած ջրաղացները թվով 4-ն էին (**Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 157):

**ԺԵ** Եպիսկոպոսական խույր. «...առաջին երեսի վրայ խաչեցեալ Յիսուսի պատկերն է, խաչափայտի երկու կողմին մի մի սգաւոր կին, որոնցից մինը թերևս Աստուածամայրը լինի, միւսը Մարիամ Մագթաղենացին, իսկ կանանցից բարձր երկու հրեշտակներ ամպերի մէջ, իւրաքանչիւրի ձեռին մի մի սկիհ, որոնց մէջ հաւաքուում է Յիսուսի ձեռների գամատեղերից հոսած արիւնը: Հրեշտակներից բարձր խաչափայտի վրայ՝ մի կողմը արեգակ, միւս կողմը լիալուսին: Խաչեցեալ Յիսուսի կողքից արիւն և ջուր է հոսում. Փրկիչը գլխիկոր. լուսոյ պսակը գլխին, կարմրագոյն զենջակը կամ սփածանելին կապած: Սգաւոր կանայք լուսոյ պսակով ոսկեթել դեղնագոյն վերնազգեստով, բաց վարդագոյն պատմուճանով, կանանց մինի ձեռքերը խաչած կողքին, միւսը ցաւակցաբար երկու ձեռքերի մատները իրար մէջ անցկացրած: Խաչափայտի տակ նկատուում է գանգ և ոսկրներ: Թագի այս երեսի լուսանցազարդը գործուած է ոսկէ և արծաթեայ թելերով՝ ժապաւինաձև, փռուած վարդեր և տերևներ: Յիշատակագրութիւնն է՝ խաչափայտի գլխի տախտակի գրերը, «Յ.Ն.Թ.Հ»: Իսկ խաչափայտի տակ երկու տողից բաղկացած յիշատակագրութիւնն այս է.

*Շինեցաւ թագս արդեամբ Մկրտիչ վարդապետիս Բաղիշեցոյ ի վայելումն անձին իմոյ:*

Սոյն երեսի քարերն են՝ հինգ կարմիր, տասը կանաչ, 8 սպիտակ. զանազան մեծութեամբ կիսաթանկագին քարեր: Կանաչ քարերից մինը ընկած է: Միւս երեսի ասեղնագործ նկարը ներկայացնում է Աստուածամօրը գրկած Յիսուսին, բազմած աթոռի վերայ, երկուքի գլխին լուսոյ պսակ. Աստուածածնայ վերնազգեստը ոսկեթել դեղնագոյն, իսկ պատմուճանը բաց վարդագոյն: Աստուածամօրից բարձր մի զոյգ չոքած հրեշտակներ, թագը բռնած, իսկ թագից բարձր Հոգին սուրբ աղաւնակերպ: Աթոռի երկու կողմին մի մի զոյգ փոքրաղիր հրեշտակներ: Լուսանցազարդը նոյն, ինչ որ միւս երեսին: Յիշատակագրութիւնն է՝

*Եւ յետ վճարման կենացս լիցի յիշատակ ի դուռն Դարաշամբու սուրբ Ստեփանոսի նախավկային:*

Հրատ. **Դատեան Խ.**, Պարսկաստանից բերած հնութիւնները, էջ 313-314:

Ծանոթ. ըստ Խ. Դադյանի՝ առաջին հիշատակագրության մեջ հիշվող Մկրտիչ վարդապետ Բաղիշեցին ԺԵ դարի բանաստեղծ, գրիչ Մկրտիչ Նաղաշն է:

1894 թ. Խաչիկ վարդապետն Էջմիածին է բերում Թավրիզի Բերդաթաղի Սբ. Աստվածամոր եկեղեցուց:

**Մաղարդավանքի թեմի առաջնորդների և վանահայրերի գավազանագիրք.** գավազանագիրք կազմելու առաջին փորձը կատարել է Հովհաննես Շահխաթունյանցը: Այն ընդգրկում է մինչև ԺԷ դարը գործած ընդամենը 7 վանահոր անուն, ըստ որում, վկայակոչելով Առաքել Դավրիժեցուն, ցանկում սխալմամբ մտցնում է նաև Արիստակես վարդապետ Շամբեցու անունը[307]:

Հ. Ոսկյանը ևս վանքի առաջնորդների ցանկը սկսում է Բաբկեն արքեպիսկոպոսից՝ հասցնելով մինչև տեր Թորգոմը[308]:

Այնուհետև Ն. եպիսկոպոս Ծովականը, մատենագրական նյութերի հիման վրա կազմում և 1959 թ. հրատարակում է Մաղարդավանքում պաշտոնավարած առաջնորդների գավազանագիրքը: Հեղինակն առաջնորդների ցանկը սկսում է Գրիգորես Ապիրատով (ԺԲ դար) և որոշ ընդմիջումներով հասցնում մինչև ԺԹ դարի 60-ական թվականները (Մեսրոպ վարդապետ Սմբատյանց)[309]:

Երրորդ գավազանագիրքը կազմում է Հարություն Քյուրտյանը՝ որոշակի ընդմիջումներով ընդգրկելով 976-1790 թթ. ընթացքում պաշտոնավարած վանքի առաջնորդների ցանկը[310]:

Ստորև ներկայացվող նոր գավազանագիրքը կազմել ենք՝ համադրելով և համեմատական քննության ենթարկելով հրապարակի վրա եղած հայ և օտար աղբյուրների (պատմիչներ, ժամանակագիրներ, հրովարտակներ, կալվածագրեր, արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ և այլն) հաղորդած տվյալները: Սրանք թեև սպառիչ և վերջնական պատասխան չեն տալիս քննարկվող

306 Նշվ. աշխ., էջ 245:

307 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 318-319: Մինչդեռ ձեռագիր հիշատակարաններից և Դավրիժեցու վկայակոչած տեղեկություններից հայտնի է, որ, թեև ԺԷ դ. առաջին տարիներին Շամբեցին եղել է Մաղարդավանքի միաբան, սակայն հետագայում թողնելով Նախավկայի միաբանությունը, հարել է անապատական շարժմանը, դարձել նրա ակնառու գործիչներից մեկը, Սյունյաց (Հարանց) անապատի երկրորդ առաջնորդը (1620 թվականից) և մինչև կյանքի վերջն ապրել այդ մենաստանում:

308 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 533-564:

309 **Ծովական Ն. եպս.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, «Սիոն», 1959, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 262-264:

310 **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ): Ցանկը կցված էր վանքի միջնադարյան պատմությանը նվիրված հեղինակի հոդվածին և ցայսօր մնացել է անտիպ (ձեռագիրը մեզ է տրամադրել գնդապետ Էմիլ Հակոբյանը Թավրիզից):

հարցին, և դեռևս մնում են բացթողումներ, սակայն հնարավորություն են ընձեռում որոշակիացնել վանքի առաջնորդների անունները, ճշտել նրանց պաշտոնավարման ժամանակահատվածը:

**Բաբկեն արքեպիսկոպոս (976-981)**. «...սուրբ տաճարիս հին Մաղարդա վանից երանելի կրո-ն(աւ)որս աստուածայմեծար մեծանուն Տեառն Բաբգենի հայկազնոյ նախաշինաւղ և ի Քրիստոս ծնաւղ հոգևոր գառանց, մանկանց եկեղեցոյ...» հիշվում է որպես վանքի առաջին առաջնորդ, որը պաշտոնավարել է 976-981 թվականների ընթացքում[311]:

Ըստ Խաչիկ կաթողիկոսի կոնդակի՝ Ստեփանոս նախավկայի վանք է ուղարկվում «...զմեծանուն երջանիկ տէր Բաբգէն արքեպիսկոպոսն գալ ձեզ եւ առաքելաբար շրջիլ ի միջի ձերում վարդապետել, խրատել եւ ուսուցանել...»[312]:

**Գրիգորես՝ որդի Ապիրատի**. միակ հիշատակությունը վերաբերում է 1173 թ. «...զառաջնորդութիւն սուրբ ուխտին տէր Գրիգորէս, որդի Ապիրատին, այր հեզ և սրբասէր...»[313]:

**Գրիգորես**. տվյալներից մեկի համաձայն՝ որպես վանքի առաջնորդ է հիշատակվում ԺԳ դարում, սակայն ստույգ ո՞ր թվականին՝ անհայտ է[314]:

**Վարդան կրոնավոր.** հիշվում է 1330 թ. Աբու Սաջիդ սուլթանից հրովարտակ է ստանալու առնչությամբ[315]:

**Տեր Սարգիս.** հիշվում է 1332 թ.[316]:

**Տեր Ղուկաս.** հիշվում է 1376 թ. կաթողիկեությունն ընդունած հայ հոգևորականների թվում[317]:

**Տեր Գրիգոր.** 1381 թ. վանքի առաջնորդն էր[318]:

**Ավագ եպիսկոպոս.** հիշվում է 1430-1440 թթ.[319]: Ավագ եպիսկոպոսն աչքի է ընկել մշակութային գործունեությամբ և «...վանքին մէջ իբրև լուսատու կը փայլէր»[320]:

**Մխիթար եպիսկոպոս.** 1440 թ. վանքի առաջնորդ է նշանակվել Գրիգոր Արտազեցու կողմից[321]: Ըստ ամենայնի՝ 1440 թ.՝ զառամյալ Ավագ եպիսկոպոսի կենդանության օրոք, բնակչության պահանջով Մխիթար գրիչը նշանակվում է Նախավկայի վանքի վանահայր ու թեմի առաջնորդ: Այդ մասին տեղի միաբանությանը տեղեկացնում է Գրիգոր Մակվեցի Ջալալբեկյանցը Նախավկայի վանքին ուղղած կոնդակում, որտեղ Թադեոս առաքյալի վանքի առաջնորդն իրեն անվանում է Ամենայն Հայոց կաթողիկոս. «...[ձեռնադրեցի] աբեղայս զՄխիթարտ, հռչակաւոր վանիցդ սուրբ Ստեփաննոս Նախավկայիդ եպիսկոպոս եւ ձեզ հոգեւոր առաջնորդ եղբայր եւ ընկեր»[322]: Նույն թվականին էլ հիշվում է որպես 1316 թ. Աղթամարի վանքում Դանիել եպիսկոպոսի ընդօրինակած Ժողովածուի «զվերջին կազմողս»[323]:

**Տեր Վարդան.** պաշտոնավարել է առնվազն մինչև 1485 թ., ինչը հաստատվում է Բարդուղիմեոս գրչի ընդօրինակած Սաղմոսարանի հիշատակարանում. «...գրեցաւ Սաղմոսարանս ...ի տեղիս որ կոչի աստուածաբնակ Մաղարթէվանք, առ ոտս երջանիկ և առաջնորդ սուրբ ուխտիս զտէր Վարդան արհեպիսկոպոսի, և զվարպետն իմ զտէր Յակովբ փիլիսոփայն...»[324]:

**Մարկոս վարդապետ.** մեզ հայտնի միակ տեղեկությունը վերաբերում է 1505-1506 թթ., երբ զինվորական դատավորի հրամանով հաստատվել են Դիբքյանդ և Դարաշամբ գյուղերի վանքապատկան լինելը[325]:

**Տեր Անտոն.** հիշվում է 1507 թ.՝ «...ի հայրապետութեան մերում ուխտին Նախավկայի տէր Անտոնին»[326]:

**Աթանաս եպիսկոպոս (1541-1562՞).** 1541 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր ԺԱ Բյուզանդացու (1536-1545) կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում Նախավկայի վանքի վանահայր ու Նախիջևանի թեմի առաջնորդ[327]: Այնուհետև կաթո-

311 **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ): Տե՛ս նաև **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 5:

312 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 533:

313 Ե-ԺԲ, էջ 312: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 537: **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: Նշյալ թվականին հիշատակվում է որպես վանքի առաջնորդ (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

314 **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

315 **Փափազյան Հ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1962, № 6, էջ 395:

316 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 539: Տե՛ս նաև **Փափազյան Հ.**, նշվ. հոդվ., «ԲՄ», 1962, № 6, էջ 395: **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262:

317 **Marcus Antonius v. d. Oudenrijn O. P.**, նշվ. աշխ., էջ 218:

318 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 180: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 539: ԺԴ, էջ 537: **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

319 ԺԵԱ, էջ 396, 504: Տե՛ս նաև **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

320 **Ծովական Ն. եպս.,** Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: Տե՛ս նաև ԺԵԱ, էջ 396:

321 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 236: Տե՛ս նաև **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

322 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 236: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 586:

323 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1552:

324 ԺԵԳ, էջ 73: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ տեր Վարդանը պաշտոնավարել է 1484-1485 թվականների ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

325 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 4:

326 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 541: Տե՛ս նաև **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: Նշյալ թվականին հիշվում է որպես վանքի առաջնորդ (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

327 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 309-313: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 518-519: **Սմբատեանց Մ.**, Նկարագիր

ղիկոսը, հիմնավորելով նշանակման հանգամանքները, գրում է. «...վարդապետ տէր Աթանասդ, որ է սնեալ և վարժեալ ի սուրբ Նախավկայի վանքն և ուսեալ էր զիմաստս կրթական ի ձեռն Ստեփաննոսի քաջ րաբունապետի Սալմաստեցւոյ, որ եկն ի սուրբ աթոռս (Աթանաս) ձեր ամենայն միաբանից վկայութեամբ, մանաւանդ բոլորեցունց ձեր թեմովդ վկայած... պատշաճ և իրաւունք համարեցաք զԱթանաս վարդապետդ լինել եպիսկոպոս սուրբ Նախավկայիդ և իւր սեպհական վիճակին և զոչ այլ ոք օտար...: Եւ ձեռնադրեցաք զԱթանաս վարդապետդ եպիսկոպոս...: Եւ պարգևեցաք դմա յականաւոր սուրբ ուխտն Նախավկային բոլորովին բնական և սահմանեալ վիճակ իւր զոր վերագրեցաք դմա թեմ, աթոռ և հանգստեան տեղի... առաքեցաք զԱթանաս վարդապետդ՝ սրբազան եպիսկոպոսն առ ձեզ մերով առաքելական և հայրապետական իշխանութեամբ՝ հովուել զձեզ...»[328]: Այնուհետև դիմելով վանքի Մկրտիչ և Հերապետ (Հայրապետ) եպիսկոպոսներին, Հովհաննես վարդապետին, մյուս «մեծ ու փոքր» միաբաններին, հանձնարարում է նրանց «սիրով ընկալարուք զԱթանաս վարդապետդ ձեզ եպիսկոպոս, որպէս արժանաժառանգ այդմ աթոռի եւ գահի»[329]:

**Հովհաննես վանահայր.** հիշվում է 1562-1563 թվականներին, երբ «...Դարաշամլուդի Մաղարդա վանքի միաբանների ու ժողովրդի առաջնորդի դիրքը ժառանգաբար փոխանցվել է Օվանես վանահոր...»[330]:

**Մատթեոս եպիսկոպոս.** 1563 թ. «...կուսակրօն արքեպիսկոպոս զտէր Մատթէոս, որ է սնեալ և վարժեալ ի սուրբ Նախավկայի վանքն...» նշանակվում է առաջնորդ[331]: Մեկ այլ տեղեկությամբ՝ «հեզահոգի, բարեմիտ եւ սրբասէր կուսակրօն արքեպիսկոպոսդ (զ)տէր Մատթէոս»-ը Նախավկայի վանահայր է նշանակվում 1564 թ. կաթողիկոսական ընդարձակ կոնդակով[332]: Կոնդակը գրել է Միքայել Ա Սեբաստացին հավանաբար Ստեփանոս Ե Սալմաստեցուն աթոռակից եղած ժամանակ:

**Մարտիրոս եպիսկոպոս.** 1587 թ. Նախավկայի վանահայր և թեմի առաջնորդ է նշանակվում Մարտիրոս «քաջ րաբունի վարդապետը»[333]: Կաթողիկոսական կոնդակում ընդգծվում է, որ ընդառաջելով միաբանության և բնակչության խնդրանքին, նկատի ունենալով թեկնածուի մտավոր ու հոգևոր արժանիքները, ինչպես նաև Նախավկայի վանքը վերաշինելու ցանկությունը, Էջմիածնում Մարտիրոսին մեծ շուքով արքեպիսկոպոսության աստիճան են շնորհում և ուղարկում այս թեմի առաջնորդ. «Զի քանի որ ձեր առաջի եպիսկոպոսունք մեռան, դուք մնացիք առանց հոգեւոր առաջնորդի, թէպէտ որ կայր քորեպիսկոպոսունք, այլ ոչ տեսուչ եւ առաջնորդ եւ հովիւ ոչխարաց, ...մեր սուրբնուէր քահանայդ տէր Մարտիրոս քաջ րաբունի վարդապետդ, որ եկն առ մեզ վկայական թղթով ձերով... վասն այդ մեծահռչակ Նախավկայի սուրբ վանաց շինութեան եւ ձեր յոյժ սիրուտ հարկեցաք զմեր որդի Մարտիրոս վարդապետդ լինել ձեզ եպիսկոպոս արք, եւ տեսաք զբարեոք վարս դորա. եւ հաւանեցաք իմաստութեան եւ արիութեան դորա. ընտրութամբ Աստուծոյ եւ հաճութեամբ ամենեցուն ձեռնադրեցաք մեծաւ հանդիսիւ ...զսրբասէր եւ զպատուելի քահանայդ զտէր Մարտիրոս քաջ րաբունապետդ հոգեւոր առաջնորդ ձեզ»[334]:

Մարտիրոս եպիսկոպոսը հավանաբար վախճանվել է 1590 թ. և թաղվել Դարաշամբ գյուղում: Նման ենթադրության հիմք է տալիս այն խաչքարը, որը Դարաշամբ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու շինարարության ժամանակ՝ 1628 թ., տեղափոխել են գերեզմանոցից և ագուցել խորանում:

---

Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 413-417: Նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 541-542: **Ծովական Ն.**, Մաղարդայ Ս. Նախավկայի վանք, էջ 262: **Քիւրտեան Յ.**, Ստեփաննոս Նախավկայի վանքը, «Հուր», 1974, № 37-38, յուլիս-օգոստոս, էջ 40-42: Մեկ այլ տվյալով՝ Աթանաս եպիսկոպոսը վանքի առաջնորդությունը վարել է 1541 թ. (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

328 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 240-241: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. աշխ., Բ մաս, էջ 593-594: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 41:

329 **Շահխաթունեանց Յովհ.,** նշվ. աշխ., հ. Բ, էջ 312: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 242: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 596: **Քիւրտեան Յ.**, Ստեփաննոս Նախավկայի վանքը, «Հուր», 1974, № 37-38, յուլիս-օգոստոս, էջ 41:

330 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. 3, էջ 135:

331 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 318: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 519: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 542-543: Նույն թվականին Մատթեոս եպիսկոպոսին՝ որպես վանքի առաջանորդ է հիշատակում նաև Հ. Քյուրտյանը (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

332 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 85: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 600: Փաստաթուղթն իր ձևով և բովանդակությամբ շատ նման է Գրիգոր ԺԱ Բյուզանդացու 1541 թվակիր կոնդակին. ենթադրվում է, «թէ որոշ յաւելումներ իր կողմից կատարել է հետագային (1736 թուին) այս կոնդակները բնագրից ընդօրինակող Ստեփանոս Ջուղայեցին» (**Հախնազարեան Յովհ.,** նշվ. հոդվ., «Հասկ», 1975, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 361-362):

333 **Շահխաթունեանց Յովհ.**, նույն տեղում: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 543 (տրված է համառոտ): **Հախնազարեան Յովհ.**, նշվ. հոդվ., «Հասկ», 1975, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 362: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 13-14, 55 (անտիպ): Ն. Ծովականը Մարտիրոսի աթոռակալության շրջանն է համարում 1589-1601 (՞) թթ. (տե՛ս նրա՝ նշվ. հոդվ., էջ 262):

334 **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 95-96: Կոնդակի սկզբնամասը գրված է Դավիթ Դ Վաղարշապատցի և Մելքիսեդեկ Գառնեցի կաթողիկոսների անունից, սակայն վերջում ունի միայն Մելքիսեդեկի ստորագրությունը («Արարատ», 1905, էջ 308):

**Տեր Անանիա**[335]. որպես վանքի առաջնորդ՝ հիշատակվում է 1594 թ.[336]:

**Շմավոն արքեպիսկոպոս.** հիշվում է 1601-1614 թթ.[337]: Նրա անունն առաջին անգամ հանդիպում է 1601 թ. «...առաջնորդութիւն Ս. Նախավկային տէր Շմաւոն արքեպիսկոպոսին»[338]:

**Պետրոս արքեպիսկոպոս.** 1614-1631՞ թթ. վանքի առաջնորդն էր[339]:

Շմավոն արքեպիսկոպոսից հետո թեմի ղեկավարությունն ստանձնում է «սրբասնեալ տէր Պետրոս արհեպիսկոպոս»-ը, որին Էջմիածնի Մելքիսեդեկ կաթողիկոսը կոնդակ է տալիս 1613 կամ 1614 թ.՝ հանձնարարելով բնակչությանը՝ «Զամենայն աւրինաւոր հաս եւ իրաւունքն լիով եւ անթերի տուք ի ձեռն Պետրոս արհեպիսկոպոսիդ զմահու եւ զկենաց»[340]:

Կոնդակում Պետրոսի՝ առաջնորդ լինելը չի հստակեցվում: Սա առիթ է տվել որոշ ուսումնասիրողների ժխտել նրա պաշտոնավարելու հանգամանքը. «Հոն սակայն Պետրոս արքեպիսկոպոս Նախավկային վանքին առաջնորդ նշանակած ըլլալու խօսք չկայ, ինչպէս որ տեսանք, այլ պարզապէս պտղի հաւաքելու եւ նուիրակաութեան խօսք կայ: Ուրեմն Շմաւոն արքեպիսկոպոսի Նախավկայի վանքին առաջնորդութիւնը չէ ընդհատւած 1614-ին: ...Հոս ոչ մէկ ակնարկութիւն Պետրոս արքեպիսկոպոսին Նախավկայի վանքին առաջնորդ ըլլալուն մասին, որով Շմաւոն կը գործակցէր Մելիքսեդեկին ընչաքաղցութիւնը գոհացնելու համար, որով կաթողիկոսը հարկ տեսաւ մասնաւոր մէկը ղրկել, այսինքն Պետրոս արքեպիսկոպոսը, անոր տալով անիծելու, կապելու եւ արձակելու գերագոյն իշխանութիւն...»[341]:

ԺԷ դարի առաջին տասնամյակներից մեզ հասած կալվածագրերն ու այլ սկզբնաղբյուրներ, սակայն, հաստատում են, որ Պետրոս արքեպիսկոպոսը ստանձնել է Նախավկայի թեմի առաջնորդությունը 1613-1614 թթ.-ից և պաշտոնավարել առնվազն մինչև 1631 թ.: Առաջնորդի անունը հիշատակվում է 1614 թ. վանքի և Շամբ գյուղի միջև ընթացող վեճի առնչությամբ կազմված կալվածագրում («...ի թվին ՌԿԳ ամին Հայոց (1614), առաջնորդութեան Տեառն Պետրոս եպիսկոպոսին և Ջուղայեցի Յակոբ վարդապետին, ամսեանն յունիսի Ի. և Ա. (21)-ին»)[342], 1625 թ. Մաղարդավանքում ստեղծված Մաշտոցի հիշատակարանում[343], Դարաշամբ գյուղի եկեղեցու՝ 1628 թ. շինարարական արձանագրության մեջ, 1630-1631 թթ. հարկերից ազատ լինելու հարցի առնչությամբ[344], 1631 թ. Սեֆի շահի (1629-1642) հրապարակած հրովարտակում («...ընտրյալ քրիստոնյա խոջա Նազարը հաստատել է, որ այդ վայրի հայերի ու կրոնավորների առաջնորդությունը պատկանում է Պետրոս եպիսկոպոսին, թող այդ տեղի հայերի սևագլուխները նախկին կարգով նրան իրենց առաջնորդը ճանաչեն...»)[345]:

**Միքայել Ա րաբունապետ.** ակնհայտ է, որ «զՄիքայէլ քաջ րաբունապետ»-ը հաջորդել է Պետրոս արքեպիսկոպոսին 1631 թ. կամ փոքր-ինչ ավելի ուշ:

Հիշվում է 1636 թ. «...Դարձեալ յիշեցէք զառաջնորդ Ս. Ստեփանոս Նախավկայիս զՄիքայէլ քաջ րաբունապետն»[346]:

**Միքայել (Մուքել) Բ վարդապետ Շամբեցի.** 1663[347]-1680[348] թթ.: Ծնունդով Շամբ (Դարաշամբ) գյուղից էր[349]: Հռչակվել է իբրև «սրբամիտ եւ հեզահոգի, բարեբարոյ եւ բարեհամբաւ, աստուածաբան եւ քաջ վարդապետ»[350], «մեծ րաբունեաց պետ, ...որ էր այր ընտիր եւ տիեզերալուր»[351], «գերափառ եւ մեծապատիւ հրաշազան ամէնիմաստ հզօր իմաստասեր եւ բանիբուն րաբունապետ եւ արհիական քաւչապետ եւ վերադիտող... աստուածաբան վարդապետ»[352]: Ժամանակակիցը նրա մասին գրել է. «Շատ աշխատաւոր, լև մարդ էր»[353]: 1668 թ. նո-

335 Հ. Քյուրտյանի կողմից Անանիա վարդապետ գրչի անունը առաջնորդական գավազանագրքում զետեղելն ակնհայտ շփոթություն է (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդված, էջ 55 (անտիպ): Իրականում Անանիան 1594 թ. Նախավկայի վանքում ընդօրինակել է ավետարան ոմն Մելք Մեհերի պատվերով (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, h. Ա, էջ 1039): Անանիայի առաջնորդությունը չեն մատնանշում նաև Հովհ. Շահխաթունյանցը, Ղ. Ալիշանը, Հովհ. Հախնազարյանը և Ծովական եպիսկոպոսը:

336 **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդված, էջ 55 (անտիպ):

337 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 543-544: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ Շմավոն արքեպիսկոպոսը պաշտոնավարել է 1601-1654 թվականների ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 21, 55 (անտիպ), իսկ ըստ մեկ այլ աղբյուրի՝ պաշտոնավարել է երկու անգամ՝ 1601-1613՞ և 1633-1655 թթ. (**Ծովական Ն.,** նշվ. հոդվ., էջ 262):

338 ԺԷԱ, էջ 14-15:

339 Ծովական եպիսկոպոսը գտնում է, որ Պետրոս արքեպիսկոպոսը պաշտոնավարել է 1614-1633՞ թթ. (տե՛ս նրա՝ նշվ. հոդվ., էջ 262):

340 Իր ընդօրինակած կոնդակների ցանկում Ստեփանոս Ջուղայեցին նշում է Հայոց ՌԿԲ (= 1613) թվականը (**Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, էջ 229: Տե՛ս նաև **նույնի**՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 575), իսկ բնագրում ներկայացրել է ՌԿԳ (= 1614) տարեթիվը (տե՛ս **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 91: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 611):

341 **Քիւրտեան Յ.,** նշվ. հոդվ., էջ 15-16 (անտիպ):

342 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 158:

343 ԺԷԲ, էջ 189:

344 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 2:

345 **Փափազյան Հ.**, Հրովարտակներ, պրակ II, էջ 106-107:

346 ԺԷԲ, էջ 660:

347 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 547: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ Միքայել վարդապետը պաշտոնավարել է 1663-1677 թվականների ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

348 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 127:

349 **Զաքարեայ Ագուլեցու** օրագրութիւնը, Երևան, 1938, էջ 145:

350 **Ոսկեան Հ.,** նշվ. աշխ., Բ մաս, էջ 547, ծանոթ. 31:

351 Նշվ. աշխ., Բ մաս, էջ 551:

352 Նշվ. աշխ., Բ մաս, էջ 554:

353 **Զաքարիա Ագուլեցի**, էջ 148:

յեմբերի 6-ից դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակամիջոցում շահի անմիջական կարգադրությամբ տրված հրովարտակում հիշվում է «...Թուման-ե Նախիջևանի Դարաշամլուղի Մաղարդա վանքի Միքայել վանահայրը...»[354]:

1675 թ. Միքայել վարդապետի պատվերով Մաղարդավանքում գրված ձեռագրի հիշատակարանում ժամանակակիցն այսպիսի խոսքեր է ձոնում առաջնորդին. «...առաջնորդութեան Սրբոյ վանիցս Նախավկային, գերափառ եւ մեծապատիւ, հրաշազան, ամէնիմաստ, հզօր իմաստասիրի եւ բանիբուն րաբունապետի, եւ ահրիական քաւչապետի եւ վերադիտողի՝ տեառն Միքայէլի աստուածաբան վարդապետի, որ եւ ի ժամանակիս այսմիկ էր աթոռակալ եւ փոխանորդ տեառն Յակոբայ հայրապետին Հայոց ի գահն Մեծին Էջմիածնայ...»[355]:

1676 թ. նշանակվում է Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի տեղապահ[356] և «...իւր տէղն, որ էր Նախավկայն, տված էր իւր ախպէր որդոյ Պէտրոս վարդապետին...»[357]: Քանիցս զբաղեցրել է այդ պաշտոնը («Էջմիածնայ աթոռակալ»՝ 1668, 1669, 1671, 1678)[358]: Չնայած դրան՝ իբրև առաջնորդ՝ հիշվում է մինչև 1680 թ.: 1679 թ. ստանում և վանքին է նվիրում Նարեկ, որի հիշատակարանում դրված կնքադրոշմին գրված է. «Քրիստոսի ծառա Միքայէլ վարդապետ Աստապատցի, թվ[ին] ՌՃԻԲ (1673)»[359]:

1680 թ. Գողթան գավառում կաթողիկոսարանի օգտին հանգանակություն է իրականացնում: Վախճանվել է նույն թվականի մարտի 7-ին՝ կիրակի օրը 67 տարեկան հասակում. «...եկեալ էր Գոխտան տունն նվիրակ, ժողովեց, գնաց Նախավկայն, մինչի Ի (20) օրի յիվանդացաւ, անդ հանգեաւ»[360]:

Ամփոփվել է վանքի պարսպից դուրս՝ արևելյան կողմի բլրի վրա[361]:

**Պետրոս Շամբեցի.** հիշվում է 1677-1703 թթ.[362]: Միքայել Բ վարդապետի եղբորորդին էր:

Առնվազն 1690 թվականից աթոռակիցն էր Հովհան Շամբեցին. «...Յոհանի և Պետրոսի առաջնորդ ժամանակին, որք են սպասաւորք Սուրբ Նախավկային»[363]:

1693 թ. Իսմայիլ շահը հաստատում է, իսկ 1696 թ. սուլթան Հյուսեինի հրովարտակով Պետրոս վարդապետը վերահաստատվում է վանքի առաջնորդի պաշտոնում[364]:

Մաղարդավանքի Պետրոս արքեպիսկոպոսի անունը հանդիպում ենք նաև 1697 թ. Հալեպ (Բերիա) քաղաքում Ավետիք քահանայի ընդօրինակած «Կանոնագիրք առաքելական» ձեռագրի ստացողի հիշատակարանում. «...յիշեցէք... միւս հոգևոր ծնօղն իմ և դաստիարակն, որ էր եղբօր որդի Միքայէլ վարդապետին, զՊետրոս Արհի Եպիսկոպոսն, որ էր առաջնորդ սբ. ուխտիս Նախավկային, և ես Գալուստ վարդապետս քեռորդի գոլով նորին ստացայ զսբ. գիրքս...»[365]:

**Հովհան վարդապետ Շամբեցի.** առնվազն 1690 թ.-ից եղել է Պետրոս Շամբեցու աթոռակիցը[366], որի մահից հետո էլ՝ շուրջ ութ ամիս, ղեկավարել է թեմը:

**Ներսես վարդապետ Դարաշամբեցի.** հիշվում է 1699-1700 թվականներին վանքը պետական հարկի վճարումից ազատելու խնդրի առնչությամբ[367]:

**Հակոբ վարդապետ Շամբեցի.** 1703-1712 թթ. վանքի առաջնորդն էր[368]: Այս և նախորդ երկու առաջնորդների օրոք մենաստանում իրականացվում են մասնակի նորոգչական աշխատանքներ:

**Գալուստ վարդապետ.** պաշտոնավարել է 1712-1732՞ թ. ընթացքում[369]: 1712 թ. նոյեմբերի 17-ին Աղեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը «Նախավկա-

354 **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. 3, էջ 135:

355 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, էջ 1644:

356 Միքայել արքեպիսկոպոսի՝ կաթողիկոսական աթոռապահ նշանակվելը կարևոր երևույթ է վանքի պատմության համար: Մի կողմից այն հաստատում է, որ վանքն այնքան բարձր դիրք է ունեցել, որ նրա առաջնորդն արժանի է եղել կաթողիկոսական տեղապահ դառնալու, մանավանդ Միքայել Շամբեցու նման գիտուն, գործունյա և հեղինակավոր առաջնորդ: Մյուս կողմից ակներև է, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը շահագրգռված է եղել բարձր պահելու Նախավկայի հեղինակությունն իր ընդարձակ և հարուստ թեմի հանդեպ, ուստի թեմակալ առաջնորդի և կաթողիկոսական աթոռակալի պաշտոնները հաճախ մեկտեղվել են միևնույն անձի ձեռքում: Վերջինիս ներկայությունն այստեղ, անշուշտ, նպատակ ուներ կանխել Աստապատի և որևէ այլ վանքի՝ Նախավկայի մենաստանի դեմ ծառանալու ձգտումները և միաժամանակ հնարավորություն ընձեռել ավելի ամուր հիմքերի վրա դնելու մենաստանում իրականացվող շինարարական, կրթամշակութային և այլ բնույթի աշխատանքներ:

357 **Զաքարիա Ագուլեցի**, էջ 148:

358 Նշվ. աշխ., էջ 78, 84-86, 101, 120, 139, 145:

359 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երեւան, 2007, էջ 116:

360 **Զաքարիա Ագուլեցի**, էջ 148:

361 Նույն տեղում:

362 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 550: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ Պետրոս արքեպիսկոպոսն իր աթոռակից Հովհան վարդապետի հետ միասին պաշտոնավարել է 1677-1704 թվականների ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

363 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 34-35: Տե՛ս նաև **Ծովական Ն. եպս.**, նշվ. հոդվ., էջ 262:

364 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, ֆ. 48, թղթ. 139, վավ. 113, թ. 1: **Կոստիկյան Ք.**, Հրովարտակներ, պր. 3, էջ 135-138:

365 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 265-266:

366 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 34-35: Տե՛ս նաև **Ծովական Ն. եպս.**, նշվ. հոդվ., էջ 262:

367 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 1:

368 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 270: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ Հակոբ վարդապետը պաշտոնավարել է 1705-1712 թվականների ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

369 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 75: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ պաշտոնավարել է 1712-1728 թվականներին ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

յի վանից բոլոր թէմի եւ վիճակի» առաջնորդ է նշանակում Գալուստ վարդապետին և Մաղարդավանքի միաբանության ու թեմի բնակչությանը պատվիրում «սիրով եւ մեծաւ պատուօք» ընդունել նրան և աջակից լինել իր գործերում[370]:

1728 թ. հունվարի 22-ին Կարապետ Ուլնեցի կաթողիկոսը (1726-1729) կոնդակով վերահաստատում է Գալուստ վարդապետի առաջնորդությունը Ստեփանոս նախավկայի թեմում. «...վերստին հրամանաւ եւ հաստատուն կոնտակաւ կարգեցի զԳալուստ վարդապետդ Առաջնորդ ձեզ, որոյ եւ դուք պարտիք ամենայնիւ սիրով եւ հնազանդութեամբ ծառայել դմա եւ մանաւանդ օգնական լինելով եւ ի թիկունս հասանելով տրօք եւ արեամբք, զի թերեւս կարասցէ այսպիսի դառն եւ տաժանելի ժամանակւոջս այդ աղքատ տունդ կառաւարել...»[371]:

**Հովհան վարդապետ.** հիշվում է 1732 թ.[372]:

**Ազարիա վարդապետ Շամբեցի.** 1739՞-1740 թթ. վանահայրն էր[373]: Վերջինս 1740 թ. հատուկ «թղթով» վարդապետական աստիճան է շնորհում Ստեփանոս միաբանին, նրան տալիս է քարոզելու իրավունք «ուր եւ կամեսցի», և կենսագրական որոշ տվյալներ է հաղորդում իր մասին: Գրությունից պարզվում է, որ Ազարիայի ծնողները վանքապատկան Շամբ գյուղի բնակիչներ էին, և ինքն էլ մանուկ հասակից դաստիարակվել էր վանքում: Դրվատելով նորընծա վարդապետի մտավոր ու հոգևոր արժանիքները՝ Ազարիա Շամբեցին ավելացնում է. «...հոգեւոր որդիդ մեր Ստեփաննոս խոյեմազարդ վարդապետդ որ է ի վիճակէս մեր եւ որդի տանն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ ի գեղէն Շամբ անուանելոյ, ի մանկական տիս սնեալ առ ոտս մեր եւ կրթեալ ի հրահանգս մեծի աթոռոյս սրբոյն Ստեփաննոսի Նախավկային...»[374]:

1739 թ. հունիսի 3-ին կազմված մի կալվածագրի համաձայն՝ «...Ճիլազի կողակից Սանդուխտս, յետ իմոյ Աղիս և սկեսրս, այսինքն՝ Առուխին, Ախանումուղին... ինչ որ իւրեանք տվել են իւրեանց հոգոյն... վախուբ արի... ս. աթոռին Ստեփաննոսի նախավկային... տվեցի իմ հոգևոր հայր և մեր առաջնորդ Ազարիայ վարդապետին...»[375]: Այս վավերագրի ներքո ստորագրել է նաև Ստեփանոս նախավկայի վանքի միաբան Արիստակես վարդապետը:

**Միքայել (Մուքէլ) Գ վարդապետ.** 1746-1763[376] թթ. վանքի առաջնորդն էր:

1746 թ. Ստեփանոս նախավկայի թեմի առաջնորդ է հիշատակվում Միքայել Գ վարդապետը[377]: Վերջինիս օրոք կնքվում են վանքի առուծախի համար մի քանի շահավետ գործարքներ (1746, 1748), ընդօրինակվում են ձեռագիր մատյաններ (1758) և այլն:

**Գրիգոր վարդապետ.** պաշտոնավարել է 1763[378]-1787 թթ.: Հակոբ Շամախեցի կաթողիկոսի կողմից եպիսկոպոս է ձեռնադրվել 1759 թ. նոյեմբերի 27-ին[379]: Հակոբ Շամախեցուն հաջորդած Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը (1763-1780) 1766 թ. դեկտեմբերի 27-ին Գրիգոր վարդապետին նշանակում է Ստեփանոս նախավկայի առաջնորդ: Չի բացառվում, որ վերջինիս և թեմի միջև որոշ տարաձայնություններ են եղել, քանի որ Վեհափառը կոնդակում պատժի սպառնալիքով խստիվ պահանջում է թեմի բնակչության հոգևոր ու աշխարհիկ բոլոր դասերին ցուցաբերել որդիական հնազանդություն, անթերի կատարել սեփական պարտականություններն ու առաջնորդի բոլոր պատվերները, աջակցել նրան մենաստանը տնտեսական ծանր կացությունից հանելու գործում. «Արդ ահա ի սէր սրբոյ Նախավկայի մեծազօր վանիցն ձերոց զվաղեմի միաբան եւ զբազմաշխատ որդին դորին զԳրիգոր վարդապետ առաջնորդ արարեալ յղեցաք յայդր. նախ պատուիրեմ բոլոր միաբանիցդ սրբոյ Նախավկային պարտիք որդիական հնազանդութեամբ եւ թարց հակառակութեան հլու եւ հնազանդ լինիլ յոգնաշխատ առաջնորդիդ ձերոյ Գրիգոր խոհեմազարդ եւ աստուածաբան վարդապետիդ եւ զհոգեւոր հրամանս դորին գլխովին կատարել եւ զօգուտն սրբոց վանիցն ձերոց ջանալ եւ առնել զգուշութեամբ մեծաւ»[380]:

Թեև կոնդակում խոսվում է նոր առաջնորդի նշանակման մասին, բայց խոսքն իրականում Գրիգոր վարդապետին նույն պաշտոնում վերահաս-

370 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 108-110: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 638-641:

371 **Ոսկեան Հ.,** նշվ. հոդվածը, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 116-117: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 652-653:

372 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 54-55:

373 **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 14: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 560-562: **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ): Ծովական եպիսկոպոսի կարծիքով՝ Ազարիան պաշտոնավարել է 1739-1759՞ թթ. (տե՛ս նրա՝ նշվ. հոդվ., էջ 262-263):

374 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 561, ծանոթ.: Տե՛ս նաև **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 42:

375 **Թօփճեան Յ.**, Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 14:

376 ԴՀՊ, գիրք Գ, էջ 126-127: Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ Միքայել վարդապետը վանքի առաջնորդությունը վարել է 1759 թ. (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

377 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 145:

378 Հ. Ոսկյանն ու Ն. եպս. Ծովականը, հիմք ընդունելով Սիմեոն Երևանցի կաթողիկոսի՝ 1766 թվակիր կոնդակը (տե՛ս ԴՀՊ, գիրք Գ, էջ 409-410, 615-616), այդ թվականը սխալմամբ համարում են Գրիգոր վարդապետի պաշտոնավարության սկիզբը (**Ծովական Ն. եպս.**, նշվ. հոդվ., էջ 263: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 126-128: Նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 563, 669-671): Սակայն մեկ այլ տվյալի համաձայն՝ պաշտոնավարել է 1759-1780 թվականների ընթացքում (**Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

379 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 666-668:

380 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1942, էջ 127: Տե՛ս նաև նույնի՝ նշվ. աշխ., Բ մաս, էջ 670:

տատելու մասին է: Եվ, իրոք, Սիմեոն Երևանցու «Յիշատակարան»-ից պարզվում է, որ կաթողիկոսը նրան հեռակա կարգով առաջնորդ է նշանակել 1763 թ. ամռանը Սարգիս քալանթար Ջուղայեցու միջնորդությամբ Բագրևանդի Սբ. Հովհաննու վանքում[381]: Հավանաբար կաթողիկոսարանի և առաջնորդական աթոռի հավակնորդի միջև լուրջ տարաձայնություններ են եղել, կամ էլ Գրիգոր վարդապետն օգտվել է երկրում տիրող խառնակ իրավիճակից՝ Մայր Աթոռին չենթարկվելու համար, քանի որ նա ոչ թե անձամբ է գնացել Էջմիածին՝ նշանակումն ստանալու, ինչպես պահանջում էր ընդունված կարգը, այլ ուղարկել է վանքի աբեղաներից մեկին (վերջինիս անունը չի հիշատակվում): Չկարողանալով մերժել անվանի մեծահարուստի խնդրանքը՝ Սիմեոն Երևանցին Գրիգորին նշանակում է ակնկալած պաշտոնում և առաջնորդության թուղթ է ուղարկում, սակայն ժողովարարության կոնդակ չի տալիս[382]:

1766 թ. հիշվում է «Շամբայ սրբոյ Նախավկայի վանից առաջնորդ Գրիգոր վարդապետն...»[383]: Նույն թվականի մայիսի 7-ին վանք այցելած Երուսաղեմի նվիրակ Իսահակ վարդապետ Նախիջևանցին գրում է, որ վանքի «...էր առաջնորդ Գրիգոր վարդապետն հեզահոգի»[384]:

Նույն թվականին աստապատցիները վանքի միաբան Միքայել վարդապետին առաջադրում են ձեռնադրելու եպիսկոպոս և այդ առթիվ տալիս են համաձայնագիր: Սակայն Սիմեոն կաթողիկոսը մերժում է՝ նշելով, որ «...Միքայել վարդապետն թէ-պէտ էր միաբան վանիցն, այլ զորպիսութիւն վանից ո՛չ գիտէր բնաւ, զի ՚ի բազում ամաց հետէ ելեալ ՚ի վանիցն ՚ի հետաւոր տեղիս զժողով առնէր: Ուստի՝ պարտէր նախապէս տիրել վանիցն և զշինութիւն և զանշինութիւնն գիտել և հոգալ և ապա յայս խնդիր համարձակիլ»: Բացի այդ՝ «...թէմ այնմ վանից Աստապատ միայն էր և այն ևս նուազեալ, մինչև Ժ կամ ԺԵ տուն հազիւ գտանիլ կարէր այժմ: Վասնորոյ չէր պատշաճ թէ ՚ի վերայ նոցին յատկապէս եպիսկոպոս մի ձեռնադրիցի»[385]:

Գրիգոր վարդապետի անվան հիշատակությունը հանդիպում ենք նաև 1767 թ.[386], 1774-1775 թթ.[387]:

1782 թ. կաթողիկոսը կոնդակ է հղում «...առ Նախավկայի վանից ծերունի Գրիգոր վարդապետն»[388]:

Գրիգոր վարդապետը վախճանվել է 1787 թ.: Նույն թվականի հոկտեմբերին նշվել է. «Թուղթ առ Նախավկայի սրբոյ վանից միաբանսն եւ թեմից ժողովուրդսն վասն վախճանման առաջնորդին իւրեանց՝ Գրիգոր վարդապետին»[389]:

**Օհան վարդապետ.** պաշտոնավարել է բավական կարճ, ըստ ամենայնի, 1787-1790 թթ.: Անվան առաջին հիշատակությանը հանդիպում ենք 1788 թ. հոկտեմբերին. «...սրբոյն Նախավկայի առաջնորդ ծերունի Յօհան պետին»[390]:

Վախճանվել է 1790 թ.: Կայքը փոխանցվել է Էջմիածնին[391]:

**Մաղաքիա վարդապետ.** շամբեցիների խնդրանքով 1791 թ. Ղուկաս կաթողիկոսը նշանակել է Նախավկայի առաջնորդ[392]: Երկար չի պաշտոնավարել:

Մեկ այլ տվյալի համաձայն՝ վանքի առաջնորդի պաշտոնում հիշվում է 1790 թ.[393]:

**Անանիա վարդապետ.** հաջորդել է Մաղաքիա վարդապետին: Վանքի առաջնորդ է հիշվում 1794-1798 թթ.[394]: 1794 թ. հիշվում է «վերատեսուչ Աթոռոյն Սուրբ Նախավկային Անանիա վարդապետն»[395]:

**Խաչատուր վարդապետ.** 1813 թ. «Հրաման Խաչատուր վարդապետի պատճառով. Իւչքիլիսէի Էջմիածնի Աբրահամ խալիֆի խնդրանօք, որ Դանիէլ վանքի իրաւունքը նրան լինի 1228-ին (1813)»[396]:

**Սարգիս եպիսկոպոս Դավթյան.** 1819-1840 թթ. վանքի վանահայրն էր ու թեմի առաջնորդը[397]:

Առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1819 թ. «...ընդ զառիվեր Մաղտեաց լերին՝ հասաք ՚ի մեծ վանքն Նախավկայի կոչեցեալ. ուր առաջնորդ էր Սարգիս վարդապետ, „քաղցրութիւն բարուց„ կարդացեալ յամենայն ծանօթից իւրոց»[398]:

381 1763 թ. հուլիսին Սիմեոն Երևանցին կաթողիկոսական օծումն ընդունելուց (ապրիլի 20-ին) շատ չանցած Երևանի Հյուսեին խանից իմանալով, որ Իրանի Քարիմխան Զանդ նոր տիրակալը (1762-ից) պատրաստվում է արշավել քաղաքի վրա, Էջմիածնի մի քանի բարձրաստիճան միաբանների հետ անցնում է օսմանյան տարածք՝ Բագրևանդի Սբ. Հովհաննու վանքը (Ուչքիլիսա), ուր ապաստանում է մինչև նույն տարվա սեպտեմբեր ամիսը: Հենց այստեղ էլ նա Նախավկայի վանքի առաջնորդ է նշանակում Գրիգոր վարդապետին: Վեհափառը Մայր Աթոռ է վերադառնում 1763 թ. սեպտեմբերի 21-ին (այս դեպքերի շարադրանքը մանրամասն տե՛ս ԴՀՊ, գիրք Գ, մասն I, էջ ՉԱ-ՉԳ (կենսագրական մաս): Տե՛ս նաև **Օրմանեան Մ,** Ազգապատում, հ. Բ, էջ 3498-3499):

382 ԴՀՊ, գիրք Գ, էջ 126-127:

383 Նշվ. աշխ., էջ 409:

384 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երեւան, 2007, էջ 1648:

385 ԴՀՊ, գիրք Գ, էջ 469:

386 Նշվ. աշխ., էջ 615:

387 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 4:

388 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 461:

389 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, Երևան, 2003, էջ 295:

390 ԴՀՊ, գիրք առաջին, հ. Բ, էջ 401:

391 Նշվ. աշխ., էջ 559:

392 **Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 462: Ծովականը Մաղաքիայի առաջնորդության շրջան է համարում 1791-1820՞ թթ. և իր կազմած անվանացանկում չունի Անանիայի անունը (տե՛ս նրա նշվ. հոդվ., էջ 263):

393 **Քիւրտեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 55 (անտիպ):

394 **Աբրահամյան Հար.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 118-119, 138:

395 Նշվ. աշխ., էջ 138:

396 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 2:

397 Աղբյուրներից մեկի համաձայն՝ Սարգիս եպիսկոպոսը պաշտոնավարել է 1820-1840 թվականների ընթացքում (**Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 564):

398 **Թաղիադեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 244:

Վանահոր անվան հիշատակությանը հանդիպում ենք նաև 1828-1830 թթ. ընթացքում կնքված տնտեսական մի շարք գործարքների առնչությամբ:

1831 թ. հիշվում է «...Նիկողայոս վարդապետ առաջնորդ գաղթական բնակչացն Նախիջևանայ. և Սարգիս վարդապետ առաջնորդ վանաց Նախավկային՝ որ անդ ի Նախիջևան»[399]:

Նրանից հետո վերացվում է Նախավկայի առաջնորդական թեմը, իսկ մենաստանն անցնում է վանահայրերի հսկողության տակ:

Սարգիս եպիսկոպոսը Նախավկայի վանքի վերջին ներկայացուցիչն էր, ով ձայնի իրավունքով մասնակցում է Հովհաննես Ը Կարբեցու (1831-1842) կաթողիկոսական ընտրությանը[400]: 1842 թ. օգոստոսյան մի քանի օր վանքում հյուրընկալված այցելուն, հենվելով Սարգիս եպիսկոպոսին հաջորդած վանահայր Հովհաննես Գալստյանի պատմածի վրա, որոշ տվյալներ է հաղորդում Նախավկայի թեմի այս առաջնորդի կյանքի ու գործունեության մասին. «Էս Սարգիս վարդապետն Դաւթեան, ասութեամբ Վանահօրն, ծնած էր հին Ջուղայ և ընծայված Մենաստանին, ուր և Քահանայութեան կարգն ստացած, յետոյ վանահայր և ապա առաջնորդ եկած 1820 թուէն ց1840 թիւն, երբ և գնացած Էջմիածին և առաջնորդ նշանակուած Մենաստանին և Նախիջևանու: Սա նախ քան զվերջին պատրազմն Պարսից և Ռուսաց՝ շատ նեղութեանց և չարչարանաց է համբերած Պարսից գործակալներէն և չորս կողմի Մահմետական կալուածատէրներէն ամենը վանքին համար, քանի՛ անգամ Թէհրան է գնացած Ֆաթալի Շահի դուռն և հրովարտակներ ստացած: Մինչև ցայսօր Պարսիկներն, որոնք կը ճանաչէին հանգուցելոյն, շատ գովասանութեամբ կը խօսան նրա վրայ: Որպէս ասեց վանահայրն, մինչև իր մահն՝ մեր չորս կողմի մահմետական երևելեաց համար Նախիջևանու պարգևներ կը ղրկէր, որպէս զի թոյլ չտան վնաս տալ այլոց մեր վանքին կամ կալուածոցն»[401]:

Սարգիս Դավթյանին հաջորդել է վանահայր **Հովհաննես Գալստյանը**[402]:

**Հովհաննես Շամբեցի Ավետյան.** պաշտոնավարման առաջին տարին հայտնի չէ: 1848 թ. լավագույն ծառայության համար Ներսես Աշտարակեցի կաթողիկոսից ստանում է վարդապետական խաչ. «...Յովհաննէս վարդապետս Շամբեցի Աւէտեան, վանահայր սուրբ ուխտիս Նախավկայիս սոյն թարղիս ստացայ վարդապետական խաչ ի Տէր Ներսէս սրբազան կաթողիկոսէն...»[403]: Հիշվում է 1855-1856 թթ., երբ վանքապատկան Դիբքյանդ և Դարաշամբ գյուղերի հասարակության բողոքների մասին տեղյակ էր պահել պետական վերին ատյաններին[404]:

**Մեսրոպ Սմբատյանց.** վանահայր է նշանակվում 1864 թ. հունիսի 1-ին և պաշտոնավարում մինչև 1866 թ. հունվարի 15-ը[405]: Նրա օրոք վանքում կատարվում են մասնակի նորոգումներ:

**Մկրտիչ վարդապետ Տեր-Գալստյանց Դարաշամբեցի.** հիշվում է 1870 թ.[406]:

**Իգնատիոս վարդապետ.** հիշվում է 1882 թ.: Անփութության պատճառով հեռացվում է վանքից[407]:

**Հովհաննես վարդապետ Աշտարակեցի.** առաջնորդ է նշանակվում 1882 թ.[408]:

**Հակոբ վարդապետ Նորատունկյան Ախալցխացի.** հիշվում է 1889-1890 թթ.[409]: 1890 թ. օգոստոսի 18-ի տեղեկության համաձայն՝ «Ս. Ստեփաննոս Նախավկայի վանահայրը՝ Յակոբ վ. Ախալցխեցի զրկվեց նորերումս իր պաշտօնից, որովհետև խիստ անտարբեր էր դէպի վանքի պայծառութիւնը...»[410]:

**Վահան վարդապետ Գևորգյան.** վանահայր է նշանակվում 1891 թ. ամռանը[411]: Սակայն 1890 թ. օգոստոսի 18-ի տվյալներից մեկի համաձայն՝ «...այժմ վանքի վանահայր կարգված է նորբայազետցի Վահան վ. Գէորգեանց...»[412]:

Կարճ ժամանակ անց՝ 1893 թ., Սինոդին բազմիցս գրություններ է հղում՝ պաշտոնից հրաժարվելու և Ռուսաստանի վանքերից մեկում աշխատելու խնդիրքով: Ստանում է մերժողական պատասխան[413]: Վանահայրը ծագումով Նոր Բայազետից էր[414]:

Վահան վարդապետի մասին բավական բացասական է արտահայտվել 1892 թ. վանքում մի քանի օր ապաստանած դաշնակցական գործիչ Արամայիս Ազնավուրյանը (ի դեպ, նույն ժամանակ այնտեղ էին նաև Քեռին, Սևքարեցի Սաքոն, Արշակը և Հունոն)[415]:

399 ԴՀՊ, գիրք Ժ, էջ 485:

400 ԴՀՊ, գիրք Ա, էջ 267: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 564:

401 **Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 57-58:

402 Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 50: Տե՛ս նաև **Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 58: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 564:

403 **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 549, 564:

404 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 139, վավ. 113, թ. 4:

405 «Արարատ», 1911, էջ 88: Աղբյուրներից մեկի համաձայն՝ վանահայր է հիշվում 1864 թ. (**Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 564):

406 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 487:

407 **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 564:

408 **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 564:

409 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 177ա, թ. 56:

410 **Ա. Ե.**, Նամակ Հին-Նախիջևանից, էջ 2:

411 Ճանապարհորդական յիշողութիւններ **Պետօյի**, «Մուրճ», 1891, № 11, էջ 1312: Տե՛ս նաև «Բիւզանդիոն», 1897, էջ 355:

412 **Ա. Ե.**, Նամակ Հին-Նախիջևանից, էջ 2:

413 «Արաքս», 1893, Ա, էջ 11:

414 **Արամայիս Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք», 1937, № 8, էջ 134:

415 Մանրամասն տե՛ս **Արամայիս Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք», 1937, № 8, էջ 134-137: Ականատեսը գրում է, որ երբ իրենք վանքի մոտ գտել են այրված մարդու ազդրեր (հետա-

**Արսեն վարդապետ Թոխմախյան.** 1891 թ. թողնելով Դերիկի վանքի վանահայրությունը՝ Արսեն վարդապետը նշանակվում է Ստեփանոս նախավկայի վանքի առաջնորդ[416]:

Ծնունդով Վանի Շահբաղի գյուղից էր, հայրն էր տեր Մարտիրոսը[417]: Ծնվել է 1843 թ., զոհվել 1892 թ. Ստեփանոս նախավկայի վանքում Սարգիս Կուկունյանի խմբի երկրորդ խմբապետ շահբաղցի Հունոյի ձեռքով:

Արմենական կուսակցության հիմնադիր Արմենակ Եկարյանի վկայությամբ՝ Արսեն «...վարդապետը... բնիկ վանեցի էր, Վարագայ ժառանգաւորացի ամենանշանաւոր սաներէն, որուն գործունէութեան մասին՝ թէ՛ Հայրենիքի մէջ եւ թէ՛ արտասահման, միշտ գովեստով իմացած էինք: Թուրք կառավարութենէն միշտ հալածուած, բանտարկուած եւ խաչի վայ տառապած, այս անշահախնդիր մարդը Էջմիածնէն Ս. Նախավկայի վանքին վրայով Թաւրիզ անցած պահուն, նոյն վանքին մէջ, ամենաքստմնելի կերպով եւ մեզի ցարդ անծանօթ պատճառներով կը սպաննուի դաշնակցականներէ եւ կայրուի օճախի մը մէջ»[418]:

**Ստեփան վարդապետ Տեր-Գրիգորյան.** վանքի առաջնորդ է նշանակվում Մկրտիչ Ա Խրիմյան (Խրիմյան Հայրիկ) Վեհափառի՝ 1894 թ. հոկտեմբերի 24-ի կոնդակով[419]:

**Աբրահամ վարդապետ Ռշտունի (1895-1901).** 1895 թ. հաջորդել է Ստեփան վարդապետին:

1899 թ. վանահայրը հիշվում է Աստապատի Սբ. Ստեփանոս վանքի օժանդակ շինությունները նորոգելու առնչությամբ[420]:

Պաշտոնանկ է արվել 1901 թ. օգոստոսին[421]:

**Տրիփոն վարդապետ Սեբաստացի.** 1901 թ. օգոստոսին նշանակվում է Նախավկայի վանքի վանահայր[422] և նույն տարում էլ ականակուռ լանջախաչ ստանում Խրիմյան Հայրիկից[423]: Տրիփոն վարդապետի անվան հիշատակությանը հանդիպում ենք նաև 1902 թ.[424]:

**Ղևոնդ վարդապետ Բարսեղյան.** 1903 թ. Մկրտիչ Ա կաթողիկոսի հերթական կոնդակով վանահայր է նշանակվում Ղևոնդ վարդապետը[425]: Պաշտոնավարում է 1 տարի, որից հետո փոխադրվում է Վան: 1910[426]-1918[427] թթ. կրկին վանահայրն էր Ղևոնդ վարդապետը: 1912 թ. մայիսի 3-ի գրություններից մեկից պարզ է դառնում, որ Ղևոնդ վարդապետը հրաժարարական է ներկայացնում վանահոր պաշտոնից ազատվելու համար[428]:

1914 թ. ապրիլի 30-ին թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոսը ցավով անդրադառնում է Ղևոնդ վարդապետի ապաշնորհ գործունեության հետևանքով վանքի ծայրահեղ ծանր վիճակին և այդ մասին տեղյակ պահելով Գևորգ Ե կաթողիկոսին՝ նշում է, որ նրան փոխարինող «շնորհալի վարդապետ» գտնելու համար գրություններ է ուղարկել Մուշ և Վան[429]:

Ղևոնդ վարդապետը հիշվում է 1915 թ. Ջուղայում կատարված Ջորիների հանդեսի մասնակիցների թվում[430]:

Կարճ ժամանակով հեռանալով վանքից՝ 1921 թ. վերստին վերադառնում է մենաստան և մինչև մահ ապրում վանքում:

1924 թ. վանահայրն էր Ղևոնդ վարդապետ Բարսեղյանը[431]:

---

գայում պարզվել է, որ դրանք պատկանել են Հունոյի ձեռքով սպանված և այրված Արսեն վարդապետ Թոխմախյանին) և բացատրություն պահանջել, Վահան վարդապետը, վախենալով Հունոյի պատժից, մի պատմություն է մոգոնել, որ իբր «Մի քանի անգամ այդ ազդրերով Նախիջևանի շրջանն եմ անցել եւ ժողովրդին ցոյց տուել, որ այդ ազդրերը սպաննուած դաւաճանների ազդրերն են, որոնց մենք ոչնչացնում ենք: Ժողովուրդն էլ այդ պատճառով նիւթական եւ բարոյական աջակցութիւն պիտի ցոյց տայ: Եւ ինձ այդ ճանապարհով յաջողուել է վանքի մէկ երկու տարուան ծախքերը հոգալ»: Դրանից հետո սարսափելով, որ Հունոն և նրա ընկերները իրեն կսպանեն, վանահայրն առաջարկում է Դարաշամբի հայերին սպանել նրանց, ապա մերժողական պատասխան ստանալուց հետո դիմում է Վարմազիարի պարսիկ բեկերին ու աղաներին, որոնց էլ չի հաջողվում իրագործել սպանությունը:

416 **Տեր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 366:

417 **Արամայիս Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք», 1937, № 8, էջ 139:

418 Յուշեր **Արմենակ Եկարեանի**, Պէյրութ, 1985, էջ 35-36: Հարկ է նշել, որ Արսեն Թոխմախյանի սպանության վերաբերյալ մեկ այլ տեսակետ է գրել Հունոյի մտերիմ ընկերներից Ա. Ազնավուրյանը: Ըստ որի՝ Արսեն վարդապետը դարձել է թուրք կառավարության լրտեսը, այդ իսկ պատճառով էլ արժանացել է նման մահվան (**Արամայիս Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք», 1937, № 8, էջ 138-139): Մեկ այլ հեղինակ էլ նշյալ դեպքի մասին գրել է. «Երբ Վանում հալածանքներ սկսուեցին, տաճիկ կառավարութիւնը բանտարկեց նաև Արսէն վարդապետ Թոխմախեանին:... Երկար տառապելուց յետոյ, նա վերջապէս ազատուել էր բանտից: Սակայն, այս անձնաւորութեան անուան հետ կապուած է մի ծանր մեղադրանք, որ իբր թէ նա բանտից ելնելուց յետոյ ստիպուած է դառնալ «տեղեկատու» տաճիկ կառավարութեան եւ իբր թէ նա կանոնաւորապէս տեղեկութիւններ է հաղորդել Վանի մէջ եղած անցուդարձերի մասին:
Թէ որքան հիմք կար այդպիսի մեղադրանքի համար, անյայտ է: Ոչ ոք մինչեւ այժմ չկարողացաւ ասել թէ՝ ե՞րբ եւ ո՞ւմ է մատնել Արսէն Թոխմախեանը: ...Յունոյի անձնակա՞ն գործն էր այդ, թէ կուսակցութեան հրահանգ, վճիռ կա՞ր այդ մասին, նոյնպէս անյայտ է: Դաշնակցութեան արխիւի մէջ յամենայն դէպս ոչ մի հետ չկայ այդ սպանութեան եւ ընդհանրապէս Թոխմախեանի լրտես լինելու մասին» (**Գիւլխանդեան Ա.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1939, № 7, էջ 143-144):

419 «Արարատ», 1895, էջ 37:

420 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 417, թ. 47:

421 «Արարատ», 1901, էջ 428:

422 «Արարատ», 1901, էջ 428, 477:

423 «Արարատ», 1901, էջ 480:

424 «Արարատ» 1902, էջ 412:

425 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1947, թ. 24-25: Մեկ այլ տվյալի համաձայն՝ վանահայր է նշանակվել 1904 թ. («Արարատ», 1904, էջ 4-5):

426 Տե՛ս Մաղարդավանքի վիմագրերում, արձ. № 36:

427 **Յակոբեան Է.**, նշվ. հոդվ., «Հասկ», Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 413:

428 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, էջ 267, վավ. 160:

429 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1947, թ. 24-25:

430 ՀԱԴ, ֆ. 314, ց. 1, գ. 113, թ. 52-53:

431 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4079, թ. 1:

Վախճանվել է 1935 թ. 70 տարեկան հասակում և թաղվել վանքի բակում Կարապետ ավագ քահանա Մանուկյանի ձեռքով[432]: Ի դեպ, նրա մահից հետո՝ շուրջ երկու ամիս, վանքում պահապան է եղել տիրացու Սարգիս Միսակյանը[433]:

**Մատթեոս աբեղա Ալոյան**. 1905 թ. հաջորդել է Ղևոնդ վարդապետին[434]:

**Տեր Ստեփան Հովհաննիսյան.** պաշտոնավարել է Ղևոնդ վարդապետից հետո՝ 1935 թ. կարճ ժամանակ: Եղել է Թավրիզի Ղալայի եկեղեցու քահանան[435]:

**Թորգոմ աբեղա Մելիքյան.** պաշտոնավարել է մինչև վախճանը՝ 1947 թ. մարտի 18-ը[436]: Աշխարհիկ անունը Զաքեոս էր, արմատներով՝ Արևմտյան Հայաստանից:

Հայտնի է, որ 1941 թ., երբ խորհրդային բանակը մտնում է Իրան, վանքում ապաստանած դաշնակցականների մի քանիսի հետ որպես «թէ հա՛մ դաշնակցական ա հա՛մ պարսկական ազգնտ» ձերբակալվում է նաև վանահայրը[437]: Ազատ է արձակվում միայն 7 ամիս անց: Սեպուհի զինվորներից էր:

Թորգոմ վարդապետը հիշվում է նաև 1942 թ.[438]:

**Տիգրան սարկավագ Դարբինյան** (1947-1949). վանքի վերջին վանահայրն էր[439]:

1948 թ. հոկտեմբերի 20-ին Ստեփանոս նախավկայի վանքի վանահայր Տիգրան սարկավագ Դարբինյանը Գևորգ Զ կաթողիկոսին իրազեկում է վանքի անմխիթար և ծորոգության կարոտ վիճակի մասին. «...իմ նպատակս է ...իրազէկ դարձնել մեր դարաւոր վանքի փլուզումին և անոր գիւղացիների չարքաշ ու սովալլուկ կենցաղին...: ...նախքան իմ վանահայրական պաշտօնին անցնելը, կանխօրոք, ես, Ատրպատականի թէմական խորհուրդին մի տեղեկագիր տուած էի գաղութահայութեան միահամուռ ջանքերով վանքի վերաշինութեան ձեռնարկել, անտարակոյս, Ամենայն Հայոց կաթողիկոսի հսկողութեան տակ, և ուրախ եմ ըսելու, անոնց հաւանութեան արժանացած էի, սպասելով բախտորոշ օրերին, և սակայն... ձգձգումը զմեզ այսօրուայ անորոշութեան առջև դրեց»[440]: Ի դեպ, գրության վերջում Տիգրան սարկավագը խնդրում է իր «վարդապետացումը»՝ ելնելով պաշտոնի պատասխանատվությունից[441]:

**Միաբանություն.** Մխիթար գրիչը, 1440 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնելով նաև միաբանության անդամներից մի քանիսի անունները, հորդորում է ընթերցողին ի բարին հիշել նրանց. «Այլ և յիշել յաղաւթս ձեր զսուրբ Նախավկայիս կրօնաւորքն և զսրբասնունդ քահանայքս՝ զՄաթէոս, զՈհանէս, զԲարսեղ, զԹումա, զՍտեփանոս, զՅակոբ, զԽաչատուր, զԳրիգոր, զԱւետիս, զՂուկաս, զՍիմէոն, զԹադէոս, զՄեսրոպ, զՊետրոս, և զտառապեալ ոգիս Մխիթար եպիսկոպոս, և Աւագ եպիսկոպոս, և զայլ միաբան սուրբ ուխտիս՝ զսարկաւագունս և զայլ ուսումնականքս և զսպասաւորքս յիշել ուղիղ սրտիւ...»[442]:

1675 թ. Մաղարդավանքում ստեղծված ձեռագրերից մեկում հիշվում են վանքի միաբանության անդամները. «...միաբանք մեծի վանիցս, առաջնորդ երջանիկ եւ աստուածարեալ գլուխն մեր՝ սրբազան արգեպիսկոպոսն Միքայէլ վարդապետն վերադիտող ուխտիս, զի կամօք եւ ձեռնտուութեամբ սորին եղեալ սուրբ գիրքս այս... զմեծարքոյ զեղբայրն իմ Յոհան սրբասէր վարդապետն, զԱրիստակէս վարդապետն եւ զծերունի հայր մեր զտէր Եսային, որ ունի բազում երախտիք ի վերայ իմ, զՊետրոս վարդապետն՝ եղբօրորդի տեառն Միքայէլի, եւ զփոքրն Միքայէլ վարդապետն, եւ զհայր հասարակաց՝ զտէր Թորոսն, որ ունի բազում աշխատանք ի վերայ վանիցս: Նաեւ յիշեսջիք զհանգուցեալք եղբայրքն մեր՝ զԴանիէլ վարդապետն եւ զտէր Սամուէլն, որ ի տիս երիտասարդական հասակի փոխեցան ի մէնջ... Եւս առաւել զկուսակրօն աբեղայքն՝ զտէր Մովսէսն, զտէր Մարտիրոսն, զտէր Աղէքսանդրն, զտէր Գրիգորն, զտէր Ղազարն, զտէր Աստուածատուրն եւ զտէր Աւետիս՝ օրհնող յիշատակարանիս, եւ զնախայսարկաւագունքն՝ զՅակոբ փականակալն, Աստուածատուրն, Մարութայն, Յակոբն, այլեւ դպիրք եւ ջահընկալք, զփոքրասուն աշակերտեալ մանկունք սրբոյ վանացս՝ զԲարաղամն, զՅակոբն, Գալուստն, զԱւաքն, զԿիրակոսն, Բաղտասարն, եւ զայլ ԲԺ-ն կղերիկոսքն... նաեւ զծերունի պապն մեր՝ Աբէրն, եւ զմահդասիքն՝ Կիրակոսն, Սարգիսն եւ զՂազարն, որք խաղաղութեամբ հանգեան ի Քրիստոս, եւ զտնտեսքն մեր՝ զԳրիգորեանցն եւ զԱդամն, եւ զդռնապահ Յովանէսն, եւ զայլսն ամենայն, որք կան ի ծառայութիւն եւ ի սպասաւորութիւն վանիցս...»[443]:

1679 թ. ստեղծված ձեռագրերից մեկի հիշատակարանից հայտնի են դառնում վանահոր և միաբանության անդամների անունները. «...զմեծ Միքայէլ վարդապետն, որ է... եւ առաջնորդ սուրբ ուխտիս,

432 ԴԱՀՊ, հ. Ա, էջ 104:
433 Նույն տեղում:
434 «Արարատ», 1905, էջ 308:
435 ԴԱՀՊ, հ. Ա, էջ 104: Տե՛ս նաև «Յուսաբեր», 1939, № 21-22: «Յառաջ», 1939, № 3977: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 565:
436 ԴԱՀՊ, հ. Ա, էջ 119:
437 Նույն տեղում, էջ 105, 106:
438 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4188, թ. 2:
439 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4243, թ. 4-5: Տե՛ս նաև ԴԱՀՊ, հ. Ա, էջ 121:
440 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4243, թ. 4-5:
441 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4243, թ. 5:
442 ԺԵԱ, էջ 504: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 540-541: **Քիւրտեան Յ.**, Ստեփաննոս Նախավկայի վանքը, «Հոր», 1974, № 37-38, էջ 39: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1552:
443 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1646:

Ն[երսէս] եւ Յոհան եւ Պետրոս, Մարտիրոս եւ Արիստակէս, Մովսէս եւ Աւետիք վարդապետքն, տէր Եսային, տէր Թորոսն՝ հայր վանիցս, զԴանիէլ վարդապետն եւ տէր Սամուէլ՝ հանգուցեալք, զտէր Ստեփանոսն, զտէր Ղազարն, զտէր Յովանէսն, զտէր Գրիգորն, զտէր Անդրեասն, Բ (2) տէր Աստուածատուրքն, զտէր Յակոբն եւ այլ միաբանք Սուրբ Մաղարթայ վանքիս: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զհոգեւոր ծնողն իմ եւ զեղբարսն իմ, զսուրբ Ստեփանոսի միաբանքն՝ մեծ Յակոբ րաբունապետն, զԶաքարիա, զԱհարոն, զՆերսէս եւ զՄելիքսէթ եւ զՅովսէփ վարդապետքն, զտէր Յովանէսն, տէր Պօղոսն, զտէր Մկրտիչն, զտէր Փիլիպոսն, զտէր Սիմէոն, զտէր Երեմիայն, զտէր Անդրեասն...»[444]:

1697 թ. միաբանության անդամներից հիշվում են «...Յովաննէս վարդապետն, զՅակոբն, զՄաղաքիէն, զԳրիգորն, զՇմաւօնն, զՊօղոսն, զՓիլիպպոսն, և աբեղայքն զՏր. Գրիգորն և զՏր. Մարտիրոսն, զՏր. Գասպարն, զՏր. Դաւիթն, զՏր. Մարգարէն, զՏր. Ստեփաննոսն, և սարկաւագունքն Ստեփաննոսն, զԽաչիկն, զՄանասէրն, զՂուքասարն, զՅովհաննէսն, յիշեցէք և ողորմի ասացէք...»[445]:

Վանահայր Հովհաննես Շամբեցի Ավետյանի օրոք՝ 1840-50-ական թվականներին, հիշվում են նաև Դանիել, Գաբրիել և Մկրտիչ միաբանները[446]:

444 Նշվ. աշխ., էջ 116: Տե՛ս նաև «Արարատ», 1899, էջ 356: **Ոսկեան Հ.**, հ. Բ, էջ 519:

445 **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 265-266:

446 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 521: Տե՛ս նաև Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 50: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 549:

# ՍԱՂԱՐԴԱՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

**Վանքի ճարտարապետության առաջին անդրադարձները.** 1668 թ. ֆրանսիացի հեղինակը վանքի մասին նշել է. «Եկեղեցին խաչաձև է, ինչպես բոլոր հայկական եկեղեցիները, և կենտրոնում բարձրանում է գեղեցիկ գմբեթը, որի շուրջը [կանգնած] են տասներկու առաքյալները: Ե՛վ եկեղեցին, և՛ վանքը համակ սրբատաշ քարից են, ու, թեև ամբողջ շինությունը շատ մեծ չէ, այնտեղ ծախսվել է մեծ քանակությամբ ոսկի և արծաթ: Բազմաթիվ հայ ընտանիքներ կան, որոնք այդ պատճառով շատ են վնասվել, քանի որ նրանք այս վայրերի հանդեպ այնպիսի նվիրվածություն են ներշնչել, որ մեծաթիվ կանայք ամուսիններից գաղտնի վաճառել են իրենց զարդերը, մինչև իսկ հագուստները, որպեսզի հոգան շինության ծախսերը»[1]:

1830-ական թթ. հայ հեղինակը վանքի ճարտարապետության առթիվ նշել է. «Եկեղեցին միջակ մեծութեամբ կառուցեալ ի կոփածոյ քարանց ուղիղ քառակուսի ի վերայ երկուց սեանց. ունի զմի սեղան պատարագելոյ և զերկուս աւանդատունս և զվերնատուն յարևմտեան բաժնի՝ ի միջոցս սեանցն և արևմտեան որմոյն ի կոփեալ քարանց և ի թրծեալ աղիւսոյ. այս վերնատուն՝ որ է տեղի աղօթից ուխտաւոր կանանց, ունի զերկուս ելանելիս (նէրտիվան) յերկոսին արևմտեան անկիւնս եկեղեցւոյն ի նոյն քարեայ շինուածոց. ի միջոցս այսց ելանելաց, սեանցն և որմոց են երկու փոքրիկ մատռունք՝ որք են ընդ վերնատամբն. ՚ի մէջ հիւսիսային մատրան ամփոփեալ կան մասունք՝ նշխարք հազար սրբոց...: ...Ճակատ բեմին սեղանոյ և կիսաշրջանակն կամարի նորին բարձր իբրև մարդաչափ յարդարեալ են թափանցիկ սպիտակ և սեաւ մարմարոնեայ վիմօք. և արևմտեան մեծի դրան յատակի վէմն է միապաղաղ սեաւ մարմարիոն իբրև չորից կանգնոց երկայնութեամբ, երից լայնութեամբ և երկուց թզաց թանձրութեամբ:

Կաթուղիկէ տաճարիս՝ որ ի վերայ արևելեան բաժնին, է կարի գեղեցկաձև բազմանկիւնի՝ վայելչապէս զարդարեալ երկոտասան Առաքելոց, և չորիցն՝ Տիրամօր կուսի, Յովհաննու Կարապետի, Ստեփաննոսի Նախավկայի և սուրբ Լուսաւորչի պատկերօք եղելովք քանդակեալ ի վէմ ՚ի վեշտասան անկիւնսն արտաքուստ. և նոյնաթիւ այլովք պատկերօք զանազան կենդանեաց ի գագաթսն անկեանց՝ յորոց իւրաքանչիւրոց բերանաց հոսին ջուրք անձրևացն իջելոց ի սեպացեալ և սրացեալ տանեաց կաթուղիկէին:

Ի հարաւակողմն եկեղեցւոյս ընդ որմն արտաքուստ բարձրացեալ երկյարկօք է զանգակատուն վայելուչ՝ որոյ կրկին յարկն է գմբէթն ՚ի վերայ չորից սեանց»[2]:

1842 թ. օգոստոսին վանք այցելած մեկ այլ ականատես (Տփղիսի ապագա քաղաքագլուխը), անդրադառնալով ճարտարապետությանը, գրել է. «Եկեղեցին... բաւական մեծութեամբ քառակուսի է՝ շինած կոփածոյ քարից երկու սիւների վրայ: Ունի մէկ սեղան իւր երկու աւանդատուններովն, որոց յանդիման է կանանց վերնատունը, բոլորն տաշած քարից և երկու կողմից աստիճաններ ունի նեղ և մութն: Յոյց տուաւ վանահայրն ձախակողմեան աստիճանի մէջն բարձր պատի վրայ մին քար կպցրած, որոյ մէջին, ասաց, հազար սրբոց աւանդատունն է, ամփոփուած է Յակոբ Ջուղայեցի Կաթուղիկոսի ժամանակուանից: ...Վերնատան հարաւակողմիցն փոքրիկ դուռն բացին, էս տեղաց դուրս եկինք զանգակատունն...: Բեմի ճակատն և նրա կամարի կէսն սև և սպիտակ մարմարից էր շինուած: Հարցրի վանահօրն ուստի՞ց է եկած էն մարմարներն.–ասեց – սպիտակն Գարզար նահանգի Սուջայ գիւղի հանքէն...: ...Կաթուղիկէն Հայաստանի եկեղեցեաց նման սուր է: Արևելեան կողմի վրայ արտաքուստ շինածն կոփածոյ քարով զարդարած է պատկերներով Աստուածածնայ, տասներկու առաքելոց, Յովհաննու Կարապետի, Ստեփաննոսի Նախավկայի, սուրբ Լուսաւորչի, և այլ և այլ կենդանեաց: Վերջնոցս բերաններն շռնօթակ է շինած անձրևի ջրերն թափվելու համար: Դուրս եկինք ներսի գաւթէն, անցանք երկու դուռն պարսպին, յորոց մինը մեծամեծ տաշած քարերից, երկաթի երկփեղկ ունէր, կանգնած հպարտ քարոզող հնութեանն: Վանքի պարիսպներն շինած են հասարակ քարից՝ զարմանալի հաստութեամբ, այնպէս որ խուցերն համարեա պատերի միջին է: Դրսի պարսպի միջին էին, տնտեսատունն բաւական

1 **Tavernir J. B.,** Les six voyages en Turquie et en Perse, Introduction et notes de Stéphane Yerasimos, Paris, 1981, pp. 92-94.

2 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 313-314:

ընդարձակ, բայց մութն – ախոռատունն, ուր հարիւրից աւելի ձիանք կարելի էր կապել – սրա հարաւակողմն էր վանահօր և միաբանից խցերն, որք նայում են ուխտաւորաց խցերի գաւիթին»[3]:

1860 թ. նշվել է. «Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի եկեղեցին խաչաձև քառակուսի է, անսիւն և կիսախորանաւոր չորս կողմից, որոնք ձևացուցած են խաչի թևերը: Այս չորս թևերի վրայ կիսախորանների գլխին կառուցած է կաթուղիկէն ութ լուսամտով և միջի կողմէն կաթուղիկէի ներքի բոլորակ կամարի վրայ շրջապատ ճանապարհի կայ, ընդ որ մէկ մարդ հազիւ կդառնայ: Տաճարն ունի մէկ սեղան պատարագի. հիւսիսային և հարաւային կիսախորանների մէջը առանձին խորաններով շինուած են նա մէկ մէկ սեղան: Մի դուռն ունի միայն արևմտից, և արևմտեան ճակատի լայնութեանը մէջը շինած են չորս կամարաւոր սիւներ, և սոցա վրայ տեղի կանանց: Տաճարի միջի լայնութիւնը սեղանէն մինչև դուռը տասն և վեց քայլ է, նոյնչափ և հիւսիսէն հարաւ: Մեծ սեղանի երկու կողմին կան երկու խորան վերնայարկերով, որոց դռները բացւում են սեղանի կիսաբոլորակի մէջ: Հիւսիսային և հարաւային կիսախորանների արևմտեան թևերի մէջը կան առանձին դռներ, որոց ճանապարհը կանանց վերնայարկէն բացւում է. այս դարանների դռները կրով ծածկուած են գետնի հաւասարութեան հետ: Եկեղեցւոյ հարաւային կողմը շինուած է հոյակապ զանգակատունը, որի հին կաթուղիկէն 1840 թուականի շարժովը քանդուել էր, որ 1856 թուին Աղայ Աւետիս տէր Մկրտչեան Ագուլեցի իշխանը շինել տուաւ, իր նախնեացը յիշատակ թողլով, բայց դեռ նս զանգակատան ամբողջ նորոգութիւնը նրա բարեպաշտութեան յաւսվն է մնում: Եկեղեցւոյ կաթուղիկէի շրջապատը լուսամտաց վերէն միալար խաչքարով զարդարուած է և իւրաքանչիւրոց ներքև շինել տուողի յիշատակը գրուած է...: Այս խաչքարերի ներքև, նոյն շրջապատի մէջ, առանձին քարերի վրայ քանդակուած են երկոտասան առաքելոց պատկերները քարաշարէն դուրս. նրանց կարգումն է և Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը: Մենաստանի շէնքերը, որոնք բոլորը հին ժամանակից են մնացել, կամարայարկ ծածկով են և երկու առանձին բակերով բաժանուած: Եկեղեցին արտաքուստ, ըստ որում, ամբողջ նորոգուած է, շինութեան թւի չկայ վրան...»[4]:

Հ. Ոսկյանը հավաքել և ի մի է բերել վանքին վերաբերող մատենագիտական տեղեկություններն ու վիմագրերը և դրանք հրատարակել նախ հոդվածաշարով, ապա Վասպուրական-Վանին նվիրված առանձին աշխատությամբ[5]:

3 **Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 26:

4 **Աբէլ արքեպիսկոպոս Ատրպատականի**, նշվ. հոդվ., «Կռունկ հայոց աշխարհի», 1861, № Ը, էջ 634-635:

5 **Ոսկեան Հ.,** Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդէս Ամսօրեայ», 1941, 1942: Տե՛ս նաև նույնի՝ Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942:

1967 թ. վանք է այցելել Լևոն Մինասյանը և իր տպավորությունները ամփոփել առանձին հոդվածաշարում[6]:

1974 թ. Աբդոլ Ալի Քարանգը և Ջամալ Թորաբի Թաբաթաբային հեղինակել են Ստեփանոս նախավկայի վանքին վերաբերող մի հոդված[7]:

Վանքի վերաբերյալ հիմնական ուսումնասիրությունները պատկանում են գերմանացի ճարտարապետ Հարտմութ Հոֆրիխտերին (ի դեպ, նրա դոկտորական թեզը նվիրված է Մաղարդավանքին, որն էլ պաշտպանել է 1971 թ. Գերմանիայի Աախեն քաղաքում)[8]:

Մաղարդավանքի պատմական անցքերի ժամանակագրական ցանկը կազմել է հայրս՝ Հովհաննես Հախնազարյանը[9], իսկ տողերիս հեղինակը՝ վանքին առնչվող գրականության ցանկը[10]:

Ստեփանոս նախավկա եկեղեցու թմբուկ-վեղարի քանդակների խորհրդանշանային մեկնությանը նվիրված հոդված է հրատարակել Աշոտ Հայկազունը[11]:

**Մաղարդավանքի ճարտարապետությունը.** համալիրը, որն ունի ուղղանկյուն հատակագիծ, կարելի է բաժանել երեք գլխավոր մասի. հյուսիսում եկեղեցական մասն է՝ իր բակով, կենտրոնում՝ վանքի մուտքը՝ կից տնտեսական բաժնին, հարավում միաբանության մասն է (ի դեպ, վանքը շրջապատող տարբեր թեքություն ունեցող սարալանջերի պատճառով շենքերն ունեն տարբեր մակարդակներ, ինչպես՝ վանքի հարավում գտնվող բակը հյուսիսային բակից մոտ 1,80 մ բարձր է, և արևելյան կողմում գտնվող սենյակները տեղավորված են լանջի կտրվածքներում): Եկեղեցիներն ու զանգակատունը կառուցված են սրբատաշ, իսկ մյուս կառույցները՝ կոպտատաշ շարվածքով: Վանական համալիրն ամբողջությամբ պարսպափակ է:

**Եկեղեցիներ.** հյուսիսային բակի կենտրոնում բարձրանում է սրբատաշ քարով կառուցված Սբ. Ստեփանոս գլխավոր եկեղեցին, որին հարավից կից է եռահարկ զանգակատունը, իսկ հյուսիսից՝

6 **Մինասեան Լ.**, Ճամբորդական տպաւորութիւններ Ս. Ստեփանոս նախավկայի վանքից եւ Թաւրիզ ու Թեհրան քաղաքներից, «Ալիք», 1967: Նույնի՝ Իրանի հայկական վանքերը:

7 **Աբդոլ Ալի Քարանգ և Ջամալ Թորաբի Թաբաթաբայի**, Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին, Պատմության ուսումնասիրություններ, 1353 (1974), № 1 (պարսկերեն):

8 **Hofrichter H.**, Das Kloster Sdepannos Nachawega in der Iranishen Provinz Aserbaidschan (Dissertation, RWTH Aachen, 1971). Նույնի՝ Das Kloster Sdepannos Nachawega in der Iranishen Provinz Aserbaidschan, “Revue des Etudes Armeniennes”, 1972, vol. IX, pp. 193-239. Նույնի՝ “Documenti di Architettura Armena”, vol. 10, S. Stepanos, Milano, 1980, pp. 5-8, 54, 66-69.

9 “Documenti di Architettura Armena”, vol. 10, S. Stepanos, pp.18-19.

10 Նշվ. աշխ., էջ 20:

11 **Հայկազուն Ա.**, Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Երևան, 2005, էջ 75-77:







**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի գլխավոր հատակագիծը (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**




Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի գլխավոր հատակագիծը (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)

պարսպի և եկեղեցու միջև հետագայում ավելացված նեղ ու երկար Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին:

**Սբ. Ստեփանոս եկեղեցի.** ուղղանկյուն, խաչաձև եռախորան, կենտրոնագմբեթ, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով կառույց է: Մուտքը բացված է արևմտյան ճակատի կենտրոնից: Եկեղեցու խաչաթևերի կենտրոնը պսակված է 16 նիստանի գմբեթով:

Եկեղեցին ունի անվանակոչված երեք խորան. «...քրիստոսաhիմն և առաքելաշնորհ սուրբ խորանացս՝ սուրբ Աստուածածնի, և սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, և սրբոյն Գէորգեայ զօրավարին, որ կառուցեալ կան ի հարաւակոյս կողմանէ, հանդէպ Երասխ գետոյ»[12]:

Հատկանշական է, որ եկեղեցու ավագ և փոքր խորաններն օծվել են Սբ. Աստվածածնի, Սբ. Գրի-

12 ԺԵԱ, էջ 365:




Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի զույգ եկեղեցիների և հարակից կառույցների հատակագիծը (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)




**Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու և հարակից կառույցների երկրորդ հարկի և տանիքի հատակագծերը (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**

գոր Լուսավորչի և Սբ. Հովհաննես Մկրտչի անուններով[13]:

Հարավային և հյուսիսային հնգանիստ խորանների խորությունն ավելի փոքր է, քան յոթանիստ արևելյանինը:

Ավագ խորանի յոթը նիստերը զարդարված են միահյուսվող սլաքաձև կամարներով ավարտվող երկհարկ կամարաշարով: Առաջին հարկի կամարաշարի մեջ՝ նիստերի կենտրոններում, չորս վեցանկյուն և երեք քառանկյուն որմնախորշեր են, իսկ երկրորդ հարկի կենտրոնում բացված է խաչաձև մեկ լուսամուտ: Խորանի կենտրոնում՝ սեղանի վրա, բարձրանում է ութանիստ չորս սյուներով խաչկալը:

Բեմը հինգ աստիճանով բարձր է դասից, որը սրահից բաժանված է փայտե բազրիքով: Բեմի ճակատը զարդարված է սև մարմարե 5 շրջանակներում պատկերված սև-սպիտակ քարի համադրությամբ զարդանախշերով: Այստեղ զետեղված է 1656 թ. արձանագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 285, արձ. Բ):* Դասի անկյուններից բացվում են ավանդատների մուտքերը:

Հյուսիսային խորանի կենտրոնական նիստում բացված է խաչաձև լուսամուտ, իսկ հարավային խորանի լուսամուտը ծառայում է որպես եկեղեցուց դեպի զանգակատան երկրորդ հարկ տանող մուտք: Երկու խորանների արևելյան անկյուններում կան սեղաններ՝ ամփոփված չորս ութանիստ սյուներով խաչկալների ներքո: Հյուսիսային խորանում է գտնվում մկրտության ավազանը՝ պսակված շթաքարե ծածկով:

Գմբեթատակ քառակուսուց անցումը թմբուկին իրականացված է միահյուսվող սլաքաձև կամարներով մշակված առագաստներով: Նման կամարներով է հարդարված նաև թմբուկից գմբեթ անցման գոտին: Թմբուկը ներսից զարդարված է կամարաշարով:

Եկեղեցին արևելյան և արևմտյան անկյուններում ունի կրկնահարկ, ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ երկուական ավանդատուն: Ընդ որում, արևելյան անկյունների ավանդատներն ավելի մեծ են, քան արևմտյան անկյուններինը:

Ավանդատների արևմտյան պատերի մեջ վերին հարկ տանող աստիճաններն են: Արևմտյան երկրորդ հարկի ավանդատները պատշգամբով միանում են և ուխտագնացության ժամանակ ծառայում

13 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 1403:




**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի եկեղեցիների և զանգակատան արևմտյան ճակատը (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**

որպես կանանց օթյակ: Պատշգամբը հենվում է ութանիստ երկու սյուների վրա, որոնք իրար կապող սլաքաձև կամարների միջոցով ստեղծում են նախասրահ:

Չորս ավանդատներից հյուսիսարևմտյանի առաջին հարկը հատուկ կարևորություն ունի: Ըստ ավանդության՝ այդտեղ են պահվել Վարդանանց պատերազմի նահատակ զինվորների մասունքները: Այս ավանդատանն է գտնվում 1643 թ. կերտված սպիտակ մարմարե մի տապանաքար *(տե՛ս սույն աշխ., էջ 285, արձ. Ա)*:

Արևելյան երկու ավանդատներն ունեցել են մեծ պատուհաններ, որոնք հետագայում փակվել են: Հարավարևմտյան ավանդատան կամարածածկի փոքր բացվածքից երևում է եկեղեցու տանիքի կրկնածածկը, որի շնորհիվ շենքն ավելի մեկուսացված է խոնավությունից, և պաշտպանված են որմնանկարները: Այս ավանդատան արևելյան պատին բացված մուտքը տանում է հարավային խորանի պատշգամբ, որտեղից էլ՝ լուսամուտ-մուտքով զանգակատան երկրորդ հարկ:

Եկեղեցու մուտքից ներս հատակը սալածածկ է (սալերից մի քանիսն արձանագիր տապանաքարեր են): Սալածածկ է նաև բեմի հատակը: Սրահի հատակը սվաղված է, իսկ դասինը պատված է աղյուսե սալիկներով:

*Ներքին հարդարանք.* եկեղեցու ներքին պատերը շարված են աղյուսով (հին եկեղեցու պահպանված շերտն է), իսկ արտաքինից սրբատաշ քարով (ԺԷ դարի վերակառուցման արդյունքն է) եկեղեցու ներքին պատերն ու կամարածածկերը շարված են աղյուսից՝ պատված գաջե սվաղով: Հյուսիսային և հարավային խորաններում հորիզոնական քիվագոտին պատը բարձրությամբ բաժանում է երկու հատվածի:

Որմնանկարները հիմնականում զարդարում են գմբեթը և ավագ խորանը: Այսպես, գմբեթի կենտրոնում պատկերված է մեծ վարդյակ, որից սկսվում և դեպի պատուհաններն են ձգվում ութ ծաղկաշղթաներ: Թմբուկատակ քիվը, որը զարդարված է մա-




**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի եկեղեցիների և զանգակատան արևելյան ճակատը (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**

սամբ պահպանված ծաղկագոտիով և թռչուններով, ունի 1826 թ. հիշատակագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 286, արձ. Է):* Գմբեթատակ առագաստներին պատկերված են վեցթևյան հրեշտակներ (սերովբեներ) և բուսազարդեր:

Բացի որմնանկարներից՝ եկեղեցու պատերը ժամանակին ծածկված են եղել նաև շրջանակված պատկերներով, որոնց հետքերը մինչ այսօր նշմարելի են[14]: Որմնանկարներն ու երեսպատման սվաղը խոնավությունից վնասված են հիմնականում առագաստներում, խորաններում և թաղերում:

*Արտաքին ճակատներ.* եկեղեցու երեք ճակատները, բացառությամբ արևմտյանի, մոտ 2 մ բարձրությամբ շրջանցում են հորիզոնական հյուսածո զարդագոտին, որից վեր պատի մակերեսը մշակված է կամարածածկ և ուղղանկյուն հատվածների ռիթմիկ շարքով:

*Արևմտյան ճակատ.* կենտրոնում շեշտված է խոր ընկած շքամուտքը, որն ունի շթաքարե շարվածքով սրածայր ավարտ: Դռան բարավորը հարդարված է նախշազարդ կամարունքով: Մուտքի երեք կողմերում փորագրված են հայերեն և պարսկերեն արձանագրություններ:

Սբ. Ստեփանոս նախավկայի վանքի գլխավոր մուտքի փայտյա դուռն ուշագրավ է որպես փայտամշակության նմուշ. «Դռան կենտրոնում, շրջագծի մեջ, բարդ երկրաչափական զարդանախշ է: Դռան մակերեսի վրա շարված են երկու տեսակ ութ պսակաթերթիկ աստղածաղիկներ, յուրաքանչյուրն առնված է ութկողանի շրջանակի մեջ, նրանց արանքներում, քառակուսիների մեջ թեք խաչ է:

14 Վանքի պահակ Սարգիս Միսակյանը մեր այցելության ժամանակ՝ 1968 թ., վկայել է, որ մինչև Առաջին աշխարհամարտը եկեղեցին զարդարված է եղել «անհամար պատկերներով»: Դրանց և ձեռագրերի մի մասը 1918 թ. թալանվել են, մյուս մասն էլ, եկեղեցու մեջ հավաքած, «շաբաթներ վառվում էր»:




**Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու հարավային և հյուսիսային ճակատները (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**




**Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու կտրվածքը դեպի հարավ և արևելք (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**








**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի լայնակի կտրվածքները դեպի հյուսիս, արևելք և հարավ (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**




**Մաղարդա Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի շրջապարսպի և օժանդակ շինությունների ճակատները դեպի հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք (չափ.՝ ճարտ. դր. Հարթմուտ Հոֆրիխտերի)**

Դուռն ունի շրջանակ, որի կրկնվող նախշը կազմված է կետերից, նման դաջազարդ գործվածքի»[15]:

Շքամուտքի երկու կողմերում միանման երկու մեծ որմնախորշեր են, որոնք ավարտվում են երեքնուկի տերև հիշեցնող կամարներով: Այստեղ ագուցված են փոքր խաչքարեր:

Արևմտյան ճակատում հորիզոնական զարդագոտին պսակում է որմնախորշերն ու շքամուտքն իրենց ուրվագծերով: Զարդագոտուց վեր՝ հարթ պատի մակերևույթին, բացված են երեք ուղղանկյուն լուսամուտներ, որոնցից կենտրոնականն ավելի մեծ է և առնված է զարդանախշ շրջանակի մեջ: Այս ճակատի եզրերին բացված են ավանդատների կամարաձև բավական փոքր երկու լուսամուտներ:

Կենտրոնական լուսամուտից վեր՝ ուղղանկյուն շրջանակի մեջ, խաչելության տեսարանն է: Խաչի հորիզոնական թևերին պատկերված են մարդկանց դեմքերով արևն ու լուսինը, խաչի հիմքում՝ Ադամի գլուխը, իսկ վերին խաչաթևին փորագրված է ՅՆԹՀ: Խաչի երկու կողմերում քանդակված են Մարիամ Աստվածածինը և Հովհաննես առաքյալը:

*Հարավային ճակատ.* այս ճակատի կենտրոնում հյուսածո ժապավենը քառակուսի շրջանակ է ստեղծում, ուր և տեղադրված է 1742 թ. խաչքար: Դրանից վեր Ծննդյան տեսարանն է. քանդակված են Տիրամայրը՝ մանուկ Քրիստոսը գրկում, աջում՝ Հովսեփը, ձախում՝ ոչխարներն ու հովիվը:

Հորիզոնական զարդագոտուց վեր պատի մակերեսը մշակված է կամարածածկ և ուղղանկյուն հատվածների ռիթմիկ շարքով: Այս ճակատին ագուցված է արձանագիր 31 խաչքար, որոնցից ամենավաղը վերաբերում է 1740 թ. (№ 20), իսկ ամենաուշը՝ 1917 թ. (№ 49):

Մուտքից վեր՝ կենտրոնում, ուղղանկյուն շրջանակի մեջ առնված Ավետման տեսարանն է, ուր պատկերված են Մարիամ Աստվածածինը՝ ավետարանը ձեռքին, դիմացը՝ Գաբրիել հրեշտակապետը՝ ծաղիկը ձեռքին, և ավետաբեր աղավնին: Շրջանակից վեր քանդակված են բուսազարդ երեք վարդյակներ, իսկ ներքևում ագուցված են երեք խաչքարեր:

Հարավային ճակատին կից է զանգակատունը:

*Արևելյան ճակատ.* այս ճակատի կենտրոնում՝ ներդաշնակ շարքից վեր, աչքի է ընկնում զարդանախշ խաչքարանդակ-շրջանակը, որի մեջ ներգծված է արևելյան խորանի խաչաձև լուսամուտը: Լուսամուտի շուրջ պատկերված են արծիվ՝ որսը ճիրաններում, երկու ձուկ, օձ և առյուծ: Խաչքարանդակ-շրջանակի երկու կողմերում արձանագիր խաչքարեր են, իսկ վերևում քանդակված է Սբ. Ստեփանոս նախավկայի քարկոծման տեսարանը: Կենտրոնում ծնկաչոք, աջ ձեռքում բուրվառը բռնած Ստեփանոս նախավկան է, որը քարկոծվում է երկու կողմից: Տեսարանի վերին ձախ անկյունում Սբ. Երրորդության պատկերն է՝ խաչը ձեռքին Քրիստոսը, աղավնու տեսքով Սուրբ Հոգին և Հայր Աստվածը, որը ձախ ձեռքում պահում է երկրագունդը, իսկ աջով օրհնում նահատակվողին: Վերին աջ անկյունում Ստեփանոս նախավկային նահատակության պսակը հանձնող հրեշտակն է: Նախավկայի ուրարին տեղադրված են փայլուն ապակիներ:

Այս պատկերաքանդակից մի փոքր բարձր երկու համանման վարդյակներ են: Դրանք, քանդակազարդված լինելուց բացի, ծառայում են որպես օդանցք խորանի առաստաղի և երկթեք տանիքի միջև գտնվող տարածության համար:

Ճակտոնի գագաթին՝ քիվատակին, ճանկերով գառ բռնած թևատարած արծվի բարձրաքանդակն է, որի երկու կողմերում կան մեկական վարդյակներ: Արծվաքանդակից ներքև՝ դեպի աջ, տանիքի 1865 թ. նորոգման արձանագրությունն է *(տե՛ս սույն աշխ., էջ 312, արձ. ՃՀԹ):*

Ճակատի եզրերին երկհարկ ավանդատների չորս լուսամուտներն են, որոնցից ներքևինները կիսով չափ, իսկ վերևիններն ամբողջությամբ շրջագծված են շքաքարե զարդաքանդակներով:

*Հյուսիսային ճակատ.* հետագայում ավելացված Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու պատճառով գլխավոր եկեղեցու հյուսիսային ճակատի միայն վերին մասն է դրսից տեսանելի: Հորիզոնական զարդագոտուց վեր ավանդատների կողային լուսամուտներն են, որոնցից արևելյանը շեշտված է շքաքարե շրջանակով: Ճակատի այս հատվածում տեղադրված են 11 խաչքարեր, որոնցից միայն մի քանիսի արձանագրություններն են ընթեռնելի և արձանագիր երեք քար:

Ինչպես եկեղեցու արևելյան ճակատին, այնպես էլ այս ճակատի կենտրոնում լուսամուտը խաչաձև է՝ առնված զարդաքանդակ ուղղանկյուն շրջանակի մեջ (ներքևի մասը ծածկված է Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու հողե տանիքով): Շրջանակի ներսում՝ լուսամուտի շուրջը, քանդակված են երկու հովազ, արջառ և գիշատիչ թռչուն, իսկ վերևում կիսակոր հիմքով փոքր խաչքարանդակն է:

Ճակտոնի կենտրոնում Հարության տեսարանն է: Մեջտեղում հարություն առած Հիսուս Քրիստոսն է, ներքևում երկու վախեցած զինվորներն են՝ մեկի ձեռքին կեռ թուր, մյուսի ձեռքին՝ նիզակ: Տեսարանից վեր քանդակված է երեք գեղազարդ վարդյակ: Ճակտոնի գագաթին՝ քիվատակին, արծվի բարձրաքանդակն է, որի երկու կողմերում մեկական հրեշտակներ են պատկերված, իսկ վերևում՝ վարդյակ:

*Գմբեթ.* եկեղեցին ավարտվում է վանքի զարդը կազմող 16 նիստանի գմբեթով, որն ունի քանդակազարդ թմբուկ և հովհարաձև վեղար: Թմբուկի պա-

15 **Դավթյան Ս.**, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1981, էջ 154:



**Սաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու և զանգակատան տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Յախնազարյանի)**

տերին մեկընդմեջ բացված են կամարակապ ութ լուսամուտներ:

Թմբուկը շրջանցում է 16 սյունակամարաշար: Նիստերի անկյուններում զալարահյուս սյուներն ավարտվում են երկգլխանի վիշապներով, որոնցից վեր սկսվում է հյուսածո սլաքաձև կամարաշարը: Կամարների միջև՝ նիստերի անկյուններում, վեցթևյան սերովբեներն են: Բոլոր նիստերին՝ լուսամուտից վեր, միևնույն բարձրությամբ սրբերի քանդակներն են՝ ամփոփված ուղղանկյուն շրջանակների մեջ: Շրջանակներից վեր քանդակված են գեղազարդ վարդյակներ: Արևմտյան լուսամուտից վեր Հիսուս Քրիստոսն է՝ բազմած երկնային գահին: Աջով օրհնում է, իսկ ձախ ձեռքում բռնել է երկրագունդը: Ներքևում չորս ավետարանիչների խորհրդանիշերն են՝ արծվի, առյուծի, եզան և մարդու քանդակներով:

Յուրաքանչյուր նիստի ճակտոնին մեկական խաչքարեր են, կողքերին՝ վարդյակներ, վերևում՝ թռչնաքանդակներ: Թմբուկն ավարտվում է հովհարաձև վեղարով, որի ջրհորդանները կենդանիների գլուխներ են, իսկ նիստերի կենտրոններում՝ վեղարի եզրերին, կանգնեցված են խաչեր:

Թմբուկի չորս անկյուններում, տամբաների երկթեք տանիքներին կան կենդանիների քանդակներ:

**Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի.** Սբ. Ստեփանոս եկեղեցու և հյուսիսային պարսպի միջև հետագայում սրբատաշ քարով կառուցվել է նեղ ու երկար սյունասրահ, որին էլ արևմուտքից և արևելքից հավելելով կոպտատաշ շարվածքով պատեր՝ վերածել են միանավ եկեղեցու և կոչել Սբ. Պողոս-Պետրոս:

Բեմի ճակատին կա 1726 թ. արձանագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 313, արձ. ՃՁՁ):*



**Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու թմբուկը հյուսիս-արևմուտքից**

Սբ. Ստեփանոս եկեղեցու ճակատները երիզող հորիզոնական զարդագոտին շրջանցում է նաև Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին ներսից:

Եկեղեցու առաստաղը կամարների միջև իրականացված է խաչվող թաղերի միջոցով:

Վեց զույգ որմնասյուներն ու իրար միացնող սլաքաձև կամարները եկեղեցին բաժանում են հինգ մասի, որոնցից արևմտյանը ծառայում է որպես բաց նախամուտք, իսկ արևելյանը՝ ուղղանկյուն խորան: Եկեղեցու չորս զույգ եզրային որմնասյուներն ավելի նեղ են, քան կենտրոնականի երկու զույգ որմնասյուները, որոնք իրենց չափերով համընկնում են հարավային զանգակատան առաջին հարկի որմնասյուներին: Կենտրոնական մասի խաչվող թաղերով սրբատաշ ծածկն ունի նույնպիսի հյուսածո զարդանախշ խաչ, ինչպիսին կա հարավային զանգակատան առաջին հարկի առաստաղին: Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու մնացած ուղղանկյուն մասերը, ի տարբերություն կենտրոնականի, ծածկված են խաչվող աղյուսաշար թաղերով: Այս ամենը և Հովհ. Շահխաթունյանցի վկայությունը («Թէպէտ հոգացեալ են տալ կառուցանել և զայլ երկուս զանգակատունս ՚ի վերայ արևմտեան դրանն և ՚ի հիւսիսակողմն հանդէպ հարաւային զանգակատանն, այլ որպէս երևի պանդխտութիւն նորին Յակոբայ կաթուղիկոսի և վախճանն իսկ անդ ՚ի Կոստանդինուպօլիս եթող զայնս կիսակատար (իմա՛ 1680, Ա. Հ.), քանզի երկոցունց հիմունք ևս լցեալ և յարդարեալ՝ կան այնպէս թերի»)[16] հիմք ընդունելով՝ կարելի է ենթադրել, որ նախ կառուցվել է կենտրոնական մասը հարավային զանգակատանը սիմետրիկ (հավանաբար պետք է լիներ հյուսի-







**Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու արևմտյան ճակատից բացված մուտքը և հատվածներ նույն ճակատից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**



Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու արևմտյան ճակատից բացված մուտքը (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)



Դրվագներ Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու արտաքին հարդարանքից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)







**Հատվածներ Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**







**Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու և խաչկալի գմբեթարդները (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**







**Հատվածներ Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցուն հյուսիսից կից Պողոս-Պետրոս եկեղեցու վերածված սրահից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**

սային զանգակատուն), իսկ մնացած չորս մասերը կցվել են հետագայում՝ վերածվելով սյունասրահի:

Ունի հարթ հողածածկ տանիք:

**Զանգակատուն.** եռահարկ է: Եկեղեցուն կից է հարավից:

Առաջին հարկն ունի քառակուսի հատակագիծ: Չորս անկյուններից բարձրանում են երկու հզոր որմնասյուն և երկու սյուն, որոնց սլաքաձև կամարներին հենված է խաչվող թաղերով ծածկը: Սյուները ու որմնասյուները շրջանցում են եկեղեցու հորիզոնական զարդագոտին: Խոյակները շքաքարե մշակում ունեն: Հատակին գտնվում են վանքի ութ առաջնորդների տապանաքարերը (ի դեպ, արձանագրությունները անընթեռնելի են): Արևմտյան ճակատին երկու խաչքար կա, որոնցից մեկն ունի 1696 թ. արձանագրություն *(տե՛ս սույն աշխ., էջ 315, արձ. ՃՂԷ),* իսկ մյուսի գիրն անընթեռնելի է: Հարավարևմտյան որմնասյան արևմտյան նիստին զանգակատան 1854 թ. նորոգությունն իրականացնող ազուլիսցի Գալուստ և Մկրտիչ Տեր-Մկրտչյան եղբայրների արձանագրությունն է *(տե՛ս սույն աշխ., էջ 317, արձ. ՄԷ):*

Հարավային պատին փորագրված է զանգակատան վերակառուցմանը վերաբերող 1879 թվակիր արձանագրությունը *(տե՛ս սույն աշխ., էջ 318, ՄԹ):*

Երկրորդ հարկը նման է առաջինին, միայն այն տարբերությամբ, որ առաստաղի փոխարեն առագաստներով իրականացված է անցում դեպի զանգակատան ռոտոնդայի կլոր բացվածքը, իսկ ճակատներն էլ ավարտվում են մեղմ թեքությամբ ճակտոններով: Խոյակները զարդարված են երկրաչափական նախշերով: Հարավային ճակատում կա երկու խաչքար:

Ռոտոնդայի ութ կլոր սյուների խարիսխներն ունեն քառակուսի հիմք, իսկ երկշար շքաքարե խոյակները վեցանիստ են: Կիսակլոր կամարները նստում են խոյակներին՝ ստեղծելով զանգակատան ութանիստ թմբուկը, որն ավարտվում է ութանիստ բրգաձև աղյուսածածկ վեղարով: Կամարները միացած են զանգակատան կայունությունն ապահովող երկաթե ձողերով[17]: Ռոտոնդայի թմբուկին քանդակված են վարդյակներ և հրեշտակներ:

Եկեղեցին ունեցել է երկու զանգ՝ մեկը ձուլված 1595 թ., մյուսը՝ 1886 թ., որոնք տակավին 1968 թ. գտնվում էին եկեղեցում:

**Եկեղեցական մասի օժանդակ կառույցներ.** Սբ. Ստեփանոս եկեղեցուց արևելք՝ պարսպին կից, միաշար երկհարկ սենյակներ են: Առաջին հարկում զետեղված է ուղղանկյուն, թաղակապ հինգ սենյակ, իսկ երկրորդ հարկում՝ հարավային երկու սենյակների վրա, կառուցված է զույգ փայտե սյուներին հենված գերանածածկ առաստաղով մեծ սրահ:



Սաղարդավանքի զանգակատան տեսքն արևելքից (լուս.՝ ճարտ. դր. Արծեն Յախնազարյանի)

Եկեղեցուց հյուսիս-արևմուտք աշտարակը վերածված է միահարկ ուղղանկյուն սենյակի, իսկ հարավարևմտյան աշտարակին կից են ուղղանկյուն հատակագծով երկհարկ երկու սենյակներ: Երկրորդ հարկի սենյակի աստիճանները կից են հարավային պարսպին:

**Օժանդակ շինություններ.** տարածվում են վանքի շուրջը՝ պարսպին կից. «...միջոց երկոցունցն են (իմա՛ կրկնակի պարսպի, Ա. Հ.) աւելի որմունք սենեկաց քան պարիսպ, որոց շինուածք և որմունք կացուցանեն զպարիսպն յերկուս բաժինս. յայս մի-

16 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 313-315:

17 Երկաթե գոտին հավանաբար 1998-2000 թթ. անջատվել է (կտրվել է), ինչը վտանգավոր դրություն է ստեղծել արդեն իսկ թեքված զանգակատան համար:







**Մաղարդավանքի զանգակատան տեսքը հարավից և հատվածներ (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**







**Հատվածներ Մաղարդավանքի զանգակատնից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**

ջոցում են տնտեսատունք և ձիանոցք՝ ե՛ն որ քարայարկք, և ե՛ն որ փայտածածք. ՚ի հարաւակողման պարսպի են մեծ և փոքր սենեակք առաջնորդին կամ վանահօրն և միաբանից, նմանապէս քարայարկք և փայտածածք, կրկնայարկք և եռայարկք. բովանդակ շրջապատ պարսպն հանդերձ բրգամբքն հիւսեալ է ՚ի հասարակ քարանց և է բաւականաչափ բարձր...»[18]:

Համալիրն ունի երկու մուտք՝ գլխավոր և երկրորդական: Գլխավորը բացված է արևմտյան պարսպի կենտրոնում՝ շուրջ 8 մ ներս ընկած հատվածում, իսկ երկրորդը՝ հյուսիսային պարսպի արևելյան հատվածում և տանում է դեպի Սբ. Ստեփանոս եկեղեցու արևելյան բակ:

Գլխավոր մուտքն իր սրբատաշ շարվածքով ակնառու է կոպտատաշ քարերով պարիսպների մեջ: Ունի սլաքաձև կամարով ավարտ: Բարավորի վերին մասում քանդակված է Մարիամ Աստվածածինը մանուկ Հիսուսի հետ: Բացվում է դեպի եռամաս նախասրահ, որի հարավային մուտքը մի քանի աստիճան բարձրանալով տանում է միաբանության խցերի բակ, հյուսիսայինը՝ եկեղեցու բակ, իսկ մուտքի հանդեպ սկսվող աստիճանները բարձրանում են տնտեսական բաժնի երկրորդ հարկ և ուղիղ միջանցքով հասնում խոհանոց:

Երկհարկ տնտեսական բաժինը կից է գլխավոր մուտքի նախասրահին արևելքից: Առաջին հարկում թաղածածկ մառաններն ու ախոռն են: Երկրորդ հարկում միջանցքի երկու կողմերում մառաններն են, որոնցից արևելքը քառասյուն խոհանոցն է: Սյուների վրա նստած գմբեթաձև ծածկն ունի երդիկ, չորս անկյուններում՝ թեք օդանցքներ, արևելքում՝ ևս երկու օդանցք, մի քանի մեծ և փոքր որմնախորշեր, երեք թոնիր: Հարավից ունեցել է սեղանատուն տանող առանձին մուտք, որն այժմ փակված է:

Պարիսպների մեջ ամփոփված ուղղանկյուն այս հատվածը կառուցապատված է ներքին բակի շուրջը երեք կողմերից: Բակի կենտրոնում քառակուսի ջրավազանն է:

Այս կառույցները սկզբունքորեն կարելի է բաժանել երկու մասի՝ սրահայինի և միաբանության խցերի: Սրահային մասը զբաղեցնում է ներքին բակի արևելյան կողմը և հարավարևելյան կեսը, իսկ միաբանության խցերը՝ արևմտյան կողմը և հարավարևմտյան կեսը:

*Սրահային մասի* առաջին հարկը բուն կառույցից առաջ է ընկած և տեղանքի թեքության պատճառով կիսագետնափոր է: Բաղկացած է իրար մեջ բացվող 6 անկանոն սենյակներից և նրանցից հյուսիս գտնվող սեղանատնից: Սեղանատունն ունի փոքր նախամուտք և թաղածածկ, փայտե հատակով երկար սրահ, որի հյուսիսային պատի կենտրոնից բացված մուտքով (այժմ փակված է) և ա-



Հատվածներ վանքի բնակելի և տնտեսական կառույցներից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)

18 **Տաշեան Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 316-317:







**Հատվածներ վանքի բնակելի, տնտեսական կառույցներից և դարպասն արտաքուստ և ներքուստ (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**



**Հատված վանքի գլխավոր մուտքի ներքին ծավալներից (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**

տիճաններով հաղորդակցվում է խոհանոցի հետ:

Երկրորդ հարկը կից է պարիսպներին և բաղկացած է կանոնավոր սենյակներից: Առաջին հարկի առաջ եկած սենյակների հողե հարթ տանիքը երկրորդ հարկի սենյակների համար ծառայում է որպես հարթակ: Սեղանատան վրա՝ երկրորդ հարկում, կառուցված են երկու ուղղանկյուն սենյակներ, ուր բարձրանում են նեղ աստիճաններով: Այս սենյակները հավանաբար եղել են վանահոր բնակարանը:

Երրորդ հարկում արևելյան պարսպի երկայնքով ձգվում է սլաքաձև կամարներով, աղյուսաշեն թաղով ծածկված դահլիճ-սրահը[19], իսկ հարավային պարսպին կից՝ բաց նախամուտքով ուղղանկյուն փոքր սրահը: Բաց նախամուտքի և դահլիճ-սրահի միջև՝ հարավարևելյան աշտարակին կից, երկու հարկերը միացնող աստիճաններն են: Դահլիճ-սրահի ողջ երկայնքով և բաց նախամուտքի լայնությամբ երրորդ հարկի փայտաշեն պատշգամբն էր, որը հյուսիսում հենվում էր հյուսիսային պատի դուրս եկած մասի վրա: Երկրորդ և

19 Սրահը հավանաբար 1900-ական թթ. բաժանվում էր երկու հարկերի ու սենյակների, իսկ 1930-ականներին գործածվում էր իբրև մետաքսի արհեստանոց: 1989-1990 թթ. վերանորոգվել է և ստացել իր նախկին տեսքը: Ավանդաբար կոչել են Աշոտ Երկաթի անունով՝ համարելով, որ այն կառուցել է Աշոտ Բ Բագրատունի հայոց թագավորը (914-928): Ճանապարհորդ Ժ. Բ. Թավերնիեն 1668 թ. եղել է Ստեփանոս նախավկայի վանքում և ընդունվել այս սրահում (**Tavernier J. B.**, նշվ. աշխ., էջ 94-95):









**Հատվածներ վանքի օժանդակ կառույցներից և ջրհորդաններից մեկը (լուս.՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի)**



**Հատված վանքի բուրգերով հզորացված շրջապարսպից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)**

երրորդ հարկերի սրահների հարավային ճակատը մշակված է նախամուտքի սլաքաձև մեծ բացվածքով և լուսամուտների երեք շարքով, իսկ արևելյանը՝ նեղ լուսամուտների ներդաշնակ շարքով, որի կենտրոնում դահլիճ-սրահի սլաքաձև ավարտով մուտքն է: Մուտքի վերևում ագուցված է երեք խաչքար:

Երկրորդ հարկի լուսամուտներն ուղղանկյուն են, իսկ երրորդ հարկինը՝ սլաքաձև:

Սրահային մասի հարավային թևի շարունակությունն են կազմում միաշարք երկհարկ սենյակները, որոնք էլ միանում են միաբանության՝ նույնպես երկհարկ խցերի արևմտյան թևին: Առաջին հարկում՝ արևմտյան պարսպին կից, կան միաչափ ութ խցեր, որոնք երկար միջանցքով բաժանված են դեպի բակ նայող հինգ խցերից: Երկար միջանցքը բակին է միանում կենտրոնից և եզրերից կարճ անցուղիների միջոցով:

Առաջին հարկի խցերը քարաշեն են, թաղածածկ, ունեն մեկական փոքր լուսամուտներ և որմնախորշեր: Սվաղված են գաջով, տեղ-տեղ նշմարվում են որմնանկարի հետքեր:

Երկու հարկերը իրար միանում են հյուսիսային աշտարակին կից աստիճաններով: Աշտարակի մեջ կա խուց, որի պատերի սվաղի մի մասը դեռևս պահպանվում է, իսկ քիվից բարձր մասում երևում է հրեշտակի և վիշապի հետ պայքարող հերոսի պատկերով որմնանկարը:

Երկրորդ հարկի կանգուն կամ կիսավեր սենյակները, որոնք տարբեր ժամանակաշրջանների կառույցներ են, ըստ իրենց շինանյութի՝ բաժանվում են քարաշեն և քահգելաշեն[20] տեսակների: Այս հարկի կառույցները հիմնականում հարթ գերանածածկ են: Հարավում՝ մեծ սենյակի կողքերին, փոքր սենյակներ են, որոնց հյուսիսում ընդհանուր փայտե պատշգամբով զույգ սենյակներ են: Սրանցից էլ հյուսիս՝ վանքի գլխավոր մուտքի վերևում, առանձին կառուցված քահգելաշեն սենյակն է:

**Պարիսպ.** վանքն ունի «...կրկին պարիսպս՝ զմին շուրջ զտաճարաւն և զմիւսն ի հարաւակողման կից նմին... յարևմտից կողմանէ պարիսպ տաճարին ունի դուռն մեծ երկփեղկեան պարսպապատ»[21]:

Պարսպապատը շրջափակում է վանքն ամբողջությամբ: Անկյուններում հզորացված է կլոր աշտարակներով: Եկեղեցական հատվածի հյուսիսային և արևմտյան պատերն ամրացված են երկուական կիսակլոր որմնահեծերով: Արևմտյան պատն ունի դեպի դուրս նայող չորս հրակնատ: Այս հատվածի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան աշտարակները միացած են ստորգետնյա թաղակապ միջանցքով, որն օգտագործվել է որպես թաքստոց:

---

20 Քահգելը կավահողին դարման ավելացրած շաղախն է:

21 **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 316-317:

Պարսպի բոլոր աշտարակների մեջ կան խորշեր, իսկ եկեղեցական և միաբանության մասերի հյուսիսարևմտյան աշտարակներում զետեղված են սենյակներ: Լուսամուտներ բացված են հիմնականում աշտարակներում և արևմտյան պարսպապատից:

**Աղբյուր.** մենաստանից փոքր-ինչ հեռու՝ քարափի տակից բխում է հորդ աղբյուր, որը խողովակներով հասնում էր վանք: Դրա շնորհիվ դեռևս ԺԹ դ. կեսերին աշխատում էր պարսպի գլխավոր մուտքի մոտ եղած ջրաղացը, ապա լցվում էր հողերը ոռոգող մեծ ավազանի մեջ[22]: Ավանդության համաձայն՝ այս աղբյուրն առաջացել է Բարդուղիմեոս առաքյալի արցունքներից: Աղբյուրի ակունքի մոտ պահպանվել է քարայր, դեպի ուր տանում են աստիճանները: Նրա պատին ագուցված միակ երկաթե խաչը՝ իբրև նույն առաքյալի ձեռակերտ, երկրպագության առարկա է եղել ուխտավորների համար[23]:

**Մաղարդավանքի վերականգնման աշխատանքները.** վանքի վերականգնման աշխատանքները սկսվեցին 1973 թ.-ից և ընդհատումներով շարունակվում են մոտ երեսուն տարի: Ամրակայվել են հարավային պարսպի հիմքերը, նորոգվել համալիրի գլխավոր եկեղեցու տանիքը և փլատակված մասերը, Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին, միաբանների խցերի մի մասը, զանգակատան առաջին հարկը, բարեկարգվել է տարածքը[24]:

Սբ. Ստեփանոս եկեղեցուց արևելք՝ պարսպին կից գտնվող երկհարկ կառույցի առաջին հարկի երեք ավերված սենյակները նորոգվել են 1986-1987 թթ.:





**Վանքի օժանդակ կառույցների ներքին տեսքը վերականգնումից հետո (լուս.՝ ճարտ. Սարգիս Դախնազարյան, 2009 թ.)**

22 **Թաղիդեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 245:

23 **Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 26-27: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 521: **Թաքարեան Յ.**, Ս. Բարթուղիմէոս առաքեալի գերեզմանն ու վանքը, «Բիւզանդիոն», 1897, № 332, նոյեմբեր 28/10 դեկտեմբեր: **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 20-21:
Ստեփանոս նախավկայի վանքի ճարտարապետության ու բնական միջավայրի անզուգական պատկերը ներշնչանքի աղբյուր է եղել Հովհաննես ծայրագույն վարդապետ Հուսյանի համար, որը, 1925 թ. Հնդկաստանի Կալկաթա քաղաքից գալով, երեք ամիս ապրել է վանքում և սրբավայրին ձոնել մի գողտրիկ բանաստեղծություն (ԴԱՀՊ, հ. Ա, էջ 131-132):

24 Ստեփանոս նախավկայի վանքում վերաշինության աշխատանքների ընթացքի մասին տե՛ս «Ալիք» օրաթերթի հավելված, 2000, յուլիս:

# ՍԱՂԱՐԴԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Հնավայրում առկա վիմագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են դեռևս ԺԹ դարի առաջին կեսից: Առաջին հետազոտողն էր Հովհաննես Շահխաթունյանցը, որը գրի է առել և հրատարակել ընդամենը 6 արձանագրություն: Այնուհետև 1842 թ. վանք այցելած Գալուստ Շերմազանյանցը տասնամյակներ անց հրատարակել է վանքի միայն շինարարական արձանագրությունը:

Ղևոնդ Ալիշանը հրատարակել է 7, Հ. Ոսկյանը՝ 6, Կ. Կոստանյանցը՝ 5, Լ. Մինասյանը՝ 8, Մ. Փափազյանը՝ 4, Կ. Ամատունին և Ա. Այվազյանը՝ 1-ական արձանագրություններ:

Խիստ շահեկան աշխատությամբ ոլորտն էապես բարելավվել է Գաբրիելա Ուլուհոջյանը, ով վերծանել և հրատարակել է 161 վիմագիր:

Ստորև ներկայացվող հավաքածուն կազմում է 231 վիմագիր:

### Սբ. Ստեփանոս նախավկա եկեղեցու ներսում

**Ա** Արձանագրություն, գլխավոր եկեղեցում՝ սպիտակ մարմարից տապանաքարին, 14 տող.

*Թու(ին) ՌՂ եր/կի (1643) հիմնարկո/ւթիւն այսմ տ/աճարի սրբոց հա/զարաց ն2/խարքն յա/յտնի, ձեռամբ / Յ(ա)կ(ո)բ վ(ա)րդ(ա)պ(ե)տի, / որ յետ իննե/ակ եռեակ (1655) ամի կ/(ա)թ(ո)-ղ(ի)կ(ո)սն Հայոց / լինի, դ(ա)րձ(եա)լ ի / տ(ե)ղ-ւ(ո)ոջս ամփոփի. / թվ(ի)ն ՌՃԷ (1658) ամի:*

Հրատ. **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 313-314: **Շերմազանեանց Գ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1877, էջ 26: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 520: **Կոստանեանց Կ.**, նշվ. աշխ., էջ 183: **Մինասեան Լ.**, նշվ. հոդվ., «Ալիք», 1967, № 224, հոկտեմբերի 10, էջ 2: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 29: **Ոսկեան Հ.**, Վանի-Վասպուրականի վանքերը, Բ մաս, էջ 529: “Documenti di Architettura Armena”, vol. 10, S. Stepanos, p. 12. **Uluhogian G.**, Silloge delle epigrafi Armene di S. Stefano di Giulfa, “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, Milano, 1981, էջ 96-97: **Ամատունի Կ.**, Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս Էջմիածնի (1600-1680), «Բազմավէպ», 1992, 1-4, էջ 34:

**Բ** Գլխավոր եկեղեցու բեմի ճակատին, 1 տող.

*Յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(րիստո)ս զԱստ(ա)պ(ա)-տ(ե)ցի եր(ե)սփոխան Բշխեմ(ին) եւ ծնողն Ամ(ի)ր խ(օ)ջէն եւ զկեն(ա)կիցն իր զՍայիպն եւ զդուստրն իւր զՀոռոմն, որ ետ մարմարել զս(ուր)բ սեղանս, թվ(ին) ՌՃԵ (1656):*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշվ. հոդվ., «Ալիք», 1967, № 224, հոկտեմբերի 10, էջ 2: “Documenti di Architettura Armena”, vol. 10, S. Stepanos, p. 12. **Uluhogian G.,** նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 98:

Ծանոթ. Մինասյանի մոտ՝ Ամիրխոջա անձնանունից հետո՝ «եւ Գուլստանն»:

**Գ** Արձանագրություն, շքամուտքի դիմաց՝ հարավային կողմում բարձրացող սյան երկու նիստերին, 3-ական տող.

*Յի()շ(ա)տ(ակ) է ս(ուր)բ սեղանս / ազտապատցի Քարէնց / Զաքարին եւ իւր որդոցն / Մարգարին, Վ(ա)րդանի(ն), Գալու/ստին եւ ծնօղացն: ՌՃ/ԾԲ (1703)ին:*

Հրատ. առաջին անգամ:

**Դ** Արձանագրություն, գլխավոր եկեղեցու ավանդատան մեջ պահվող մարմարե խաչքարի վրա, 5 տող.

*[Կամ]օքն Ա(ստուծո)յ շինեցաւ զան/կակատունս: ՌՃԿ (1711) թվին: / Յիշատակ Յո-*



*վան(է)սի որդի մա/հտեսի Մարութին, ծ(ն)օ-ղացն, Գօզ/ալին է, Սունեաց գեղջէն Աղանձու:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Աղանձը գյուղատեղի է Սյունիքի մարզի Սվարանց գյուղի մերձակայքում:

**Ե** Արձանագրություն, շքամուտքի դիմաց` հյուսիսային կողմում բարձրացող սյան զույգ նիստերին, 2-ական տող.

*Յ(ի)շ(ա)տ(ակ) է կաթուղիկէս տ(է)ր (՞) Մէ-(լի)քջանի որդոցն / Մակարի(ն) եւ Էվումին: / ՌՃԿԴ (1715) թվին:*

Հրատ. առաջին անգամ:

**Զ** Արձանագրություն, շքամուտքի դիմացի սյուներն իրար կապող կամարի և հարավային սյան վրա, 4 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է կաթ(ու)ղ(ի)կէս աստապատցի Պետրոս վարդ(ա)պետին եւ ծնօղացն իւր, ՌՃՀԲ (1723), / եւ հոգեւոր հօրն / Խ(ա)չատուր վ(ա)րդ/(ա)պետին:*

Հրատ. առաջին անգամ:

**Է** Արձանագրություն, գլխավոր եկեղեցում` գմբեթատակ քառակուսու վրա` որմնանկար-զարդագոտու մեջ, 6 ներկագիր տող, տարեթիվը գրված է նաև պարսկերեն.

*[Ողոր]մութ(եամ)բն ա(ստուծո)յ նորոգեցաւ ս(ուր)բ /...ն բոլոր ծաղկեցաւ ի ժամանակս Բ(ա)ր(ա)խան շ(ա)հ(ի)ն, / [Աբա]ս Միրզա(յ)ին եւ աքոռուն ս(ր)բ(ո)յ Էջմիածնա կերընդիր*



*Եփրեմ/[ին], [մեծաստ]աննիս առաջնորդ Սարգիս ծայրագու(յ)ն... /...ամբ եւ գ(աւա)ռի Ջո(ւ)-ղա(յ)եցի աղա Շէրմ/ա[զա]նեանի, թվ(ին) ՌՄՀԵ (1826)ին ۱۲۳٦ (թարգ.` 1236):*

Հրատ. “Documenti di architettura Armena”, vol. 10, S. Stepanos, p. 13. **Uluhogian G.,** նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 98-99: **Այվազյան Ա.**, Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998, էջ 35:

Ծանոթ. տողերի սկզբնամասերը ջնջված են: Իրանի շահորդու անվան առաջին բաղադրիչը` «Աբաս», լրացնում ենք` «Աբաս-Միրզա»: Ատրպատականի փոխարքան էր և պարսկական զորքերի ընդհանուր հրամանատարը 1826-1828 թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմում:

**Ը** Սալատապան երկլեզվյան (հայերեն-վրացերեն) արձանագրությամբ գլխավոր եկեղեցու ներսում, հայերեն տապանագիրը` 6 տող.

*Այս է տապան թիֆլիզեցի / Արտեմ Սիմօնիչ Զօհրապո/վի, որ վախճանեաց զկեանս / յերիդասարդական հասակի / իւրում խոլերայ ախտիւ, ի / 24 օգոստոսի, 1866 ամի:*



Հրատ. Հնութիւնք վանօրէից Էջմիածին և իւր շրջակայք, գիրք 4, կազմ. **Փափազեանց Մ.**, Վաղարշապատ, 1891, № 290: “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 100:

Ծանոթ. ըստ Գ. Ուլուհոջյանի` տապանաքարը եկեղեցի է տեղափոխվել մոտակա գերեզմանոցից: Տապանագրի բովանդակությունն արձանագրված է նաև վրացերենով (4 տող):

**Թ** Սալատապան, գլխավոր եկեղեցու ներսում, 6 տող.

*Այս է տապան ջահ/րեցի Ջավահիր Վար/դանովի, որ 13 տարի հա/ւատարիմ ծառայեց /*



*վանքիս եւ հանգեաւ | ի տէր 1914 թ(վին), յ(ու)ն(ի)ս(ի) 16(ին):*

Հրատ. **Uluhogian G.,** նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 101:

Ծանոթ. Զ. Վարդանովի անունը կրող երկրորդ՝ ուղղանկյունաձև և ավելի ընդարձակ արձանագրությամբ տապանաքարը գտնվում է վանքի գերեզմանոցում:

**Ժ** Խաչքար, գլխավոր եկեղեցու ներսում՝ խաչաքեների միջանկյալ հատվածներում, 2 տող.

*Տ(է)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս:*

Հրատ. առաջին անգամ:

**ԺԱ** Արձանագրություն, գլխավոր եկեղեցու խորանի արևելյան խորշի վերևում, 1 տող.

*Յիշա{կ}տակ է խորհուրդանոցս ագուլեցի Ղուկասի որդի Պետրոսին:*

Հրատ. առաջին անգամ:

**ԺԲ** Արձանագրություն, շքամուտքի դիմաց՝ հյուսիսային կողմում բարձրացող սյան վրա, 2 տող.

*Ս(ուր)բ խաչ(ս) յիշ(ա)տ(ակ) վանէցի | տնտես Նազ(ար)էթին:*

Հրատ. առաջին անգամ:

**ԺԳ** Արձանագիր քար (62,5 x 37 x 6 սմ), եկեղեցու հարավարևելյան ավանդատանը. հայերեն տեքստը (3 տող)՝ պարսկերեն երկու հատվածների (8-ական տող) արանքում.

*Ղարջ(ա)|թարս (՞) | իշեայ:*

Հրատ. առաջին անգամ:

**ԺԴ** Արձանագրություն, սև ներկով, եկեղեցու ներսում՝ ծեփի վրա.

*Մի խումբ տարագիրներ, շրջելով Հայաստանը, վերջը մեր բախտը գլորեց մեզ Զանգեզուրի լեռների գագաթներից դէպի Պարսկաստան, որտեղ գտանք ապաստան և հանգիստ մեր տարիներով տանջուած և հալածուած մեր սուրբ Հայրենիքի պաշտպանութեան համար: Բայց այդ խաղաղ և լի վայրերը մեզ խորդ դարձաւ և մենք դարձեալ մեր նախնիքներին չմոռացանք և չմոռացանք Հ.Յ.Դ. սուրբ նպատակները, զոհերին և որոշեցինք մեռնել Հայրենիքի համար: Այս թողնում ենք յիշատակ մեզնից յետոյ: Ով որ գայ այստեղ՝ հետևի մեր նպատակներին և յիշի մեզ և մեր սուրբ գաղափարներին: Թող կորչեն և մեռնեն Հայրենիքի դաւաճան զավակները: Կեցցէ Հայրենիք սուրբ, և հաւատարիմ զաւակները, որոնք իրենց Հայրենիքի համար կզոհեն իրենց կեանքը:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ժամանակը՝ Ի դարի սկիզբ:

## Սբ. Ստեփանոս նախավկա եկեղեցու հյուսիսային ճակատին

**ԺԵ** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատի վերնամասում, խաչապատկերի շուրջը և ստորին մասում՝ 8 տող.

*Տ(է)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս, | թվին | ՌՂԹ (1650), | ս(ուր)բ խ(ա)չս յիշ(ա)տ|(ա)կ է Շուշանին, կեն(ա)կցին Գիւ|լամիրին, ծնող(ա)ց ...ին | եւ Նալխունին:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 104:

**ԺԶ** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին, ստորին մասում՝ 5 տող.

*Թվ(ին) ՌՃԾԱ (1702), | յիշատակ է ս(ուր)բ խ(ա)չս Աղա | եւ ... [կո]ղ(ա)կցին՝ Յուստիկին | եւ հօրն՝ ...նսին, մօրն՝ Ս|անան եւ որդուն Հալպին:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 106:

**ԺԷ** Արձանագիր քար՝ ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին, 4 տող.

*Յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(րիստո)ս Ղարղեցի | Ներսես(ի)ն՝ ծ(ա)ռ(ա)յ ս(ուր)բ | տանս, եւ հանգուցե(ա)լ ծ|նօղքն, | ՌՃԿԸ (1719) թվին:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 103-104:

**ԺԸ** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին, ստորին մասում՝ 4 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս աստ(ա)պ(ա)տցի Աղաջանի | որդի Աւդալին, Թասալուն, Ըստ|եփանին եւ Գրիգորին, մօրն՝ Շահում(ի)ն, | ՌՃՀԵ (1726):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 105:

Ծանոթ. Գ. Ուլուհոջյանի մոտ տարեթիվը չկա:

**ԺԹ** Խաչքար՝ ագուցված «հիւսիսային պատի մի փոքր դռնակի մէջ».

*Այս է նշան տ(է)րունական եւ բարեխաւս առ Ք(րիստո)ս մահդասի Մարտիրոս վարդապետին հ(ո)գ(ու)ն:*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշվ. հոդվ., «Ալիք», 1967, № 223, էջ 2:

Ծանոթ. Մինասյանը «հ(ո)գ(ու)ն» բառը՝ «հգն» ձևով, սխալմամբ համարել է տարեթիվ և նշել. «Խաչքարի թւականը կամ սխալ է գրւած, այսինքն պիտի լինի «ՆՀԳ» (1024), կամ գրւած է Ազարիայի թւականով «ՀԳՆ» (1688)»:

**Ի** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հյուսիսային ճակատին՝ որմնակամարի ներքո, վերնամասում՝ 2 կիսաեղծ տող.

*Ս(ուր)բ խ[աչս] ... մ(ա)հտ(ե)սի Նէ|... ղր... ... ...ին ...:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 105:

## Հարավային ճակատին

**ԻԱ** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հարավային պատին՝ զանգակատանը կից, հորիզոնական խաչաքևերի տակ և ստորին մասում՝ 1-ական տող.

*Թվ(ին) ՌՃԾԷ (1708), յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս Աս(ա)տո(ւ)րի(ն՞):*



Հրատ. առաջին անգամ:

**ԻԲ** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հարավային ճակատին, ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս | դաշտ(ե)ցի Պիլում | Յակոբե(ա)նին եւ ծն|(ո)ղ(ա)ց նորին՝ Մարիամին, | ...(Ռ)ՃՁԹ (1740):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 82:

**ԻԳ** Խաչքար՝ ագուցված եկեղեցու հարավային ճակատին, ներքևից չորրորդ գծում՝ խաչապատկերի տակ, քայքայված 7 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չ|ս խօյեցի Օվ|անէսի որդի Մ|կ(ր)տիչին, կ(ո)ղ(ակ)ցի|ն Մինային, | թ(վին) ՌՃՂԹ (1750)|ին:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 77:

**ԻԴ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս շամբեց|ի Ավէտիկ(ի)ն, ծն(ո)ղ(ա)ցն Թո|րոսին, մայր Նազլիխա|նին, դուստ(ր)ն Նազու|խանին, թվ(ին) ՌԲՃԱ (1752), կ(ո)ղ(ա)կց(ին) Մար(ի)ամ(ին):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 76:

Ծանոթ. տարեթիվը սխալմամբ՝ ՌԲԾԱ (1652):

**ԻԵ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս արարք|եցի Թօրումին, Ապ|րիամին, եղբօրն Պօղ|ոսի(ն), իւր ծն(ո)ղացն, թվ(ին) ՌԲ|ՃԵ (1756):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 77-78:

Ծանոթ. տարեթիվը սխալմամբ՝ ՌԲԾԵ (1656):

**ԻԶ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յիշատ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս շամբ|եցի Մկրտումի ... որ|դի Աւա...|ին, ...թվ(ին) ՌԲ|ՃԶ (1757):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 80:

**ԻԷ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 6 տող.

*Յիշատ(ակ) է ս(ուր)բ {Դա} խ(ա)չս վա|նեցի Միրզային եւ | ուր կողակից Հուրի|զատին*

*եւ ուր որդի Յ/արութ(իւնի)ն եւ դստերն / Սոնային, թվ(ին) ՌԲՃԻ (1771):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 79:

**ԻԸ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 7 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խ(ա)չս դաշտեցի Եսայի / որդի մ(ա)հտ(ե)սի Իշխանին եւ եղբար/ցն՝ Ծատուրին եւ մ(ա)հտ(ե)սի Հազարա/պետին, մ(ա)հտ(ե)սի Բինաթին, Օվ/անէսին, որդի Կարապետին եւ Ես/այուն, Մկրտչին, ...ի/ն եւ Մօվսէսին, թվ(ին) ՌԲՃԻԶ (1777):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 80:

**ԻԹ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 7 տող.

*Յիշատ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս դաշտեցի / Գալուստի որդի մահտես/ի Մկրտչին եւ եղբօրն Օվա/սափին, Նիկողոսի(ն) եւ որ/դի Մէլքումին, Ղազարին, Առ/աքելին, Գրիգորին, Գալստին, / Օվանէսին: Թվ ՌԲՃԻԶ (1777):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 78:

**Լ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վեր՝ առաջին գծում, 5 տող (տեղ-տեղ քայքայված).

*Յիշ(ա)տ(ա)կ է խ(ա)չս Յաւտվ/անցի մահտ(ե)սի Սարգիս/ին, ծնողացն՝ մահտ(ե)սի*



*Ա/վէտին, Խանբէկուն, կողակցուն՝ Նարի/աւշանի(ն), ՌՄԿԹ (1820)ին:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 75:

**ԼԱ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վեր՝ առաջին գծում, 4 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս շ/ամբեցի մահտեսի Գալ/ու(ս)տին, ծնողացն, Յարու/մին: ՌՄԿԹ (1820)ին:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 76:

**ԼԲ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս / դաշ[տե]ցի Պետ/րոս [Սա]րգիսեա/նին եւ ծն(ո)ղ(ա)ցն ն(ո)րին՝ / Ոսկի(ն), թվին (Ռ)ՄՀԹ (1830):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 81:

**ԼԳ** Որմնախաչ գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, ստորին մասում՝ 4 տող.

*Յիշ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս թոբոլցի յան-*

*գ|ո(ւ)ցեալ Դաւթի որդի լուսա|հոգի Աբրահամին, |1833 ամի փ(ե)տ(ր)վարի 18ի(ն):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 70:

Ծանոթ. հայերեն վերծանության մեջ ամսաթիվը (18) վրիպմամբ չի հրատարակվել:

**ԼԴ** Նախորդի մոտ, 5 տող.

*Յիշ(ատա)կ է ս(ուր)բ խա(չ)ս | սալմ(ա)ստցի | Բաբու Խո(ւ)տ|ավ(ե)րդիու(ն), | 1833 ամի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 70:

**ԼԵ** Նախորդի մոտ, 6 տող.

*Յիշ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս թ|արվիզցի Օսէփխ|անին որդի Ռափա|էլ աղաին եւ ծնող|ա{ն}ցն նորին, | 1833 | ամի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 71:

**ԼԶ** Որմնախաչ գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև՝ առաջին շարքում, ստորին մասում՝ 5 տող.

*Յիշ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս | բա(յ)ազ(ետ)ցի Յար|ութինի որդի լուսայ(ո)գի Մի|քաէ(լ)ի(ն) եւ Գիր|իգորին: |1855 ամի:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 74:

Տարընթերցում. հրատարակված տեքստի «Բաազցի» (՞) վերծանությունը ճշտում ենք՝ «Բա(յ)ազ(ետ)ցի», «Դիրիղոր» անձնանունը՝ «Գիրիգոր» (ինչպես և կա բնագրում): Լրացնում ենք բացակայող «որդի լուսայ(ո)գի» բառերը, տարեթիվը՝ ոչ թե 1933, այլ՝ 1855:

**ԼԷ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, 5 տող.

*Յիշատ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս ն|որնախչուվանցի Ակուբ|ջանի դո(ւ)ստր Ն(ո)րակու|զալին: |1854:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 72:



Տարընթերցում. Գ. Ուլուհոջյանի մոտ անձնանունը՝ «Տորակուզալ», իսկ տարեթիվը սխալմամբ՝ «1834»:

**ԼԸ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է | քաղ(աքի)կցի Նէրսէսի | դուստր Խանում|ին եւ ծնողաց | նորին, 1834ին:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 83:

**ԼԹ** Նախորդին կից, 6 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս | փայաջուկցի | Ստեփանի դուս|տր Մարիամին եւ | ծնողաց նոր|ին, 1834:*

Հրատ. առաջին անգամ:



**ԽՍ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, 6 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ու)րբ խ(ա)չս շամբե/ցի Սարգիսի որդի տիր/ացու Պետրոսին եւ կո-*



*ղա/կից Շազամանին եւ ծն/ողացն նոցին, / 1851 / ամի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 73:

**ԽԱ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ խաչապատկերի տակ, 7 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է շամ/բեցի Աւէտին եւ կող/ակից Թուխծամին եւ / որդոցն՝*



*Օհանէս խաչ/աղիր վարդապետին, Ղազ/արին, Մարգարաին եւ դուս/տրն՝ Նուբարին, 1851 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

**ԽԲ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում (ծայրարևելյանը), 5 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս դաշտիցի / Մէքայէլի որդի / Կէւորէքին եւ մայր ն(ո)րա / Թումաջաի Սամվէլ/եանց, 1852 / ամի նոյ(եմբե-ր)ի 25:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 84:

**ԽԳ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յ(ի)շ(ա)տակ է ս(ուր)բ խ(ա)չս / դաշտիցի մ(ա)հ(տե)սի / Օհանջանի որդ/ի Աղամ(ա)լին եւ ծն/ողաց ն(ո)րին: 1857 / ամի:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 84:

**ԽԴ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, 5 տող.

*Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Սալ/մաս(տ)ու կ(ա)լ(ա)սարցի / բ(ա)րօն Բ(ա)տալ Արզ/էմանե(ա)նի եւ ծն/օղացն, 1865:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 72:

**ԽԵ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից երկրորդ գծում՝ զանգակատան հյուսիսարևմտյան որմնասյան մոտ, 5 տող.

*Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Սալ/մաս-(տ)ու փա(յա)ճոկցի / Բ(ու)տաղին (ե)ւ ծնող/աց նորին, / 1865 ամի:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 85:

**ԽԶ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին, ներքևից երկրորդ գծում, հողմնահարված, 5 տող.

*Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չս / Սալմաս(տ)ու փայ/աճո(ւ)կցի Դոս/տին եւ ծն(ո)ղաց / ն(ո)րին, / 1865 ամի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 86:

**ԽԷ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, 6 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարեխօ/ս է շամբ(ե)ցի Առու/խին, ծնող(ա)ցն, Գ/ալուստին, Մար/իոն-*



*սին, կ(ո)ղ(ա)կից Խանումա/ղին, եղբօրն՝ Սաղաթ/էլին, Ճիլազին:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 74:

Տարընթերցում. Գ. Ուլուհոջյանի մոտ՝ «*Առուխին*» բառն ընթերցվել է «*Սառուխին*», «*Մար(ի)նոսին*»՝ «*...նոսին*», «*Խանումաղին*»՝ «*Խանում*», «*Ճիլազին*»՝ «*Թվին...*»:

**ԽԸ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, 7 տող.

*1842, / ս(ուր)բ խ(ա)չս է տէրունա/կան, բարեխօս է / միշտ յաւիտեան / Թիֆլիզ քաղաքի / բնակին ի Վան, / որ կոչի Յօսէփեան:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 75:

Տարընթերցում. Գ. Ուլուհոջյանի մոտ՝ «*ի Վան*»-ի փոխարեն՝ «*.Ա.*»:

**ԽԹ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 5 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս / ղաշտէցի Յարա/պետ Օվանէսեա/նին եւ ծն(ո)ղ(ա)ց ն(ո)րին՝ / Հազայվարթին:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 81-82:

**Ծ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զանգակատան մերձավորությամբ, 4 տող.

*Յուն(իս) 1, 1908, / Սարգիս / Սարուխանեանց / սալմաստեցի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 87:

**ԾԱ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից երկրորդ գծում, 4 տող.

*Աստապատցի Ղա/զար Առաքելեան / Ղազարեանց: / 1909 ամի, 10 մայ(ի)ս(ի):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 86:

**ԾԲ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից երկրորդ գծում, 4 տող.

*Աստապատցի / Մարտիրոս / Մուրադեան, / 1911:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 87:

**ԾԳ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ զարդագոտուց վերև, 4 տող.

*Շուշեցի / Օհաննէս / Պողոսեանց, / 8.13. 1911 թ.:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 75:

Ծանոթ. նախորդ հրատարակության մեջ ամիս-ամսաթիվը բացակայում է:

**ԾԴ** Գլխավոր եկեղեցու հարավային ճակատին՝ ներքևից չորրորդ գծում, 4 տող.

*Արշակ Մ., / Տիգրան Կ. / Աստապատցի: / 1917 ամի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 83:

### Արևելյան ճակատին

**ԾԵ** Խաչապատկեր գլխավոր եկեղեցու արևելյան ճակատին՝ զարդագոտուց վերև: Նրանից ձախ և ներքև՝ 8 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ | խ(ա)չս շամբ(ե)|ցի Փահրա|տի որդի մահ|տ(ե)սի Շմաւոն|ին եւ ծն|ողացն, | ՌՃՀԳ (1724):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 89:

**ԾԶ** Որմնախաչ գլխավոր եկեղեցու արևելյան ճակատին՝ զարդագոտուց վերև, ստորին մասում՝ 6 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս խօյ|եցի Օհանէսի որդի Ա|վաքին, Պաղտասարի որ|դի Աբապակին, Եսա(յ)ի որ|դի Մար(ի)ամին, Գէորքին, | թվ(ին) ՌՄԿԵ (1816):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 89:

**ԾԷ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևելյան ճակատի կենտրոնական մեծ պատուհանից հարավ (շրջանակի մեջ), ստորին մասում՝ կապգրերով 4 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Ղա|րսա եղե(ա)լ ք(րիստո)սասէր վ(ա)ճ(ա)ռ(ա)կ(ա)-*



*ն(ա)ց. | օժ(ա)նդ(ա)կ եղեն նոր(ո)գ(ո)ւթե(ան) | ս(ուր)բ եկ(ե)ղեցո(յ)ս:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 87-88:

**ԾԸ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևելյան ճակատի կենտրոնական մեծ պատուհանից հյուսիս (շրջանակի մեջ), ստորին մասում՝ 6 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Թ|օղաք եղե(ա)լ ք(րիստո)սա|սէր վ(ա)ճ(ա)ռ(ա)կ(ա)ն(ա)ց, որ | օժ(ա)նդ(ա)կ եղեն նոր(ո)գ|ման | ս(ուր)բ եկ(ե)ղեցյս:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 88-89:

**ԾԹ** Գլխավոր եկեղեցու արևելյան ճակատի հյուսիսային մասում՝ զարդագոտուց վերև, 6 տող.

*Բարեխօս է արձ[ա]|նս աստ(ա)պ(ա)տցի | Թասալուն, | Եսա(յ)ուն, Իսրում|ին, ծն(ո)ղ(ա)ց եւ ըն|տանեացն:*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 90:

**Կ** Գլխավոր եկեղեցու արևելյան ճակատին, 4 տող.



*...այ Անանի | [որդ]ոցն Վէլուն, |...ոսին: Խաչս|...րի:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 90:

**ԿԱ** Խաչքար եկեղեցու արևելյան ճակատին, ստորին մասում՝ անավարտ արձանագրություն.

*Ս(ուր)բ խաչս բարեխ(օ)ս է...*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ներկագիր արձանագրությունից հազիվ հետքերն են նշմարվում:

## Արևմտյան ճակատին

**ԿԲ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշի վերևում, աջ կողմում՝ 4 տող.

*Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խ(ա)չ(ս) ոս/կերիչ Պետրո/սին, հօրն՝ Պօղոս/ին, աղբօրն՝ Ուղ...:*



Հրատ. **Uluhogian G.,** նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 47: Նույնի՝ Epigraphic Documents (Inscriptions) as a Source for Study on the Socio-Political Life of the Armenians in Northern Iran, 17th-19th centuries, UCLA (University of California, Los Angeles), Saturday, May 15, 2004, արձ. 3:

Ծանոթ. հրատարակիչը արձանագրության վերջում թերի թողնված անձնանվան «Ուղ» տառերը սխալմամբ դիտարկել է իբրև տարեթիվ (Ռ-Ղ=1641):

**ԿԳ** Գլխավոր եկեղեցու շքամուտքից վերև և աջ, 5 տող.

*Ս(ուր)բ խաչս յիշատա/կ է ջուղա(յ)եցի Բաբ/աջանի որդի խօճ/ա Ուռուփլուն, | թվ(ին) ՌՃԺԷ (1668):*

Հրատ. "Documenti di Architettura Armena", vol. 10, S. Stepanos, p. 17. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 37:

**ԿԴ** Գլխավոր եկեղեցու շքամուտքի հյուսիսային կողմում.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է դուռս | ագուլ(ե)ցի խ(օ)ճ(ա)յ | Ն(ի)կուղայոսին եւ | կ(ո)ղ(ա)կցացն Մարիա/մին եւ Մ(ա)րգ(ա)րիտին եւ | պապին՝ Բ(ա)րթ(ո)ղլուն | եւ ծն(ո)ղ(ա)ցն Ղարղ(ա)շ/լուն եւ Չիչակի(ն), | եղբօրն՝ Նազ(ա)րին | եւ որդոց սոցին:*

Շարունակությունը հարավային կողմում.

*Տէրունին, Յ(ա)րութ(իւ)/նին, Ահարոնին, | Սամուէլին, Եղիա/յին, Խ(ա)չ(ա)տուրին, | Պօղոսին, Մօվս(է)սին, | Եղիազարին եւ միւս | Նազարին եւ քվեր(ն) {Ե}/Եղիսաբեթին, | թվ(ին) ՌՃԻԹ (1680):*

Հրատ. **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 316: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 520: **Կոստանեանց Կ.**, նշվ. աշխ., էջ 194: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 532: **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 33: "Documenti di Architettura Armena", vol. 10, S. Stepanos, p. 12. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 28-29: Նույնի՝ նշվ. հոդվ., UCLA, May 15, 2004, արձ. 9:



Ծանոթ. Ղ. Ալիշանի և Կ. Կոստանյանցի մոտ «Բ(ա)րթողլու» բառի փոխարեն՝ «Բարդողիմէոս»:

Հրատարակիչների մոտ չկա «*Պօղոսին, Մօվս(է)սին*» հատվածը:

**ԿԵ** Գլխավոր եկեղեցու շքամուտքից վերև՝ պարսկերեն արձանագրության տակ, 3 տող.

*Կամօք եւ ողորմութ(եամ)բն ա(ստուծո)յ նորոգեաց սրբոյն Ստեփ(ա)նոս Նախավկային եկ(ե)ղ(ե)ցոյս | յարեւմտեան կողմիս դրսի երեսն նախչեւանցի Աղամալն յիշ(ա)տ(ա)կ իւրն եւ կողա/կցուն՝ Մարիամին եւ ծնօղացն՝ Աղաջանին եւ Նանագուլին, թվ(ին) ՌՃԾԳ (1704):*

Հրատ. **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 315: **Աբէլ արքեպիսկոպոս Մխիթարեանց**, նշվ. հոդվ., էջ 635: **Փափազեանց Մ.**, նշվ. աշխ., գիրք չորրորդ, № 290: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 520: **Կոստանեանց Կ.**, նշվ. աշխ., էջ 202: **Ոսկեան Հ.**, էջ 531-532: **Մինասեան Լ.**, նշվ. աշխ., էջ 33: "Documenti di Architettura Armena", vol. 10, S. Stepanos, p. 12. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 26:

Տարընթերցում. Կ. Կոստանյանցի մոտ տարեթիվն է՝ 1694 թ.: Փափազյանցի ընթերցումը թերի է:

Ծանոթ. Աբել արքեպիսկոպոսը տարեթիվը չունի, կան նաև մանր տարընթերցումներ:

**ԿԶ** Գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատի հարավային պատուհանի տակ, արտաքուստ, խիստ քայքայված՝ 6 տող.

*Յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(րիստո)ս. ս(ուր)բ խ(ա)չս | թարվէժէցի Տ(է)ր Ըստ|եփանոսին, հօրն՝ Յօ-հ|աննէսին, մօրն՝ Գա[յան]|ին, կող(ա)կցին Բու-նեաթ|ին, թվ(ին) ՌՃԾԳ (1704):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 48:

Տարընթերցում. Գ. Ուլուհոջյանի մոտ «Բունեաթ|ին» բառի փոխարեն՝ «Բունութ|ին»:

**ԿԷ** Գլխավոր եկեղեցու շքամուտքի կամարից վերև, 9 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է եւ բարեխօս է | ս(ուր)բ խ(ա)չս նախջվանեցի | Աղամալին եւ կո-ղ(ա)կցի|ն՝ Մարիամին եւ ծնօղ(ա)ցն՝ Աղա-ջանին, Նանագուլի|ն, որ սայ է պատճառ ա-րեւ|մտեան պատիս նորոգ|ութե(ա)ն, թվ(ին) ՌՃ|ԾԳ (1704):*



Հրատ. **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 315: **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 520: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 531: “Documenti di Architettura Armena”, vol. 10, S. Stepanos, p. 13. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 27:

Ծանոթ. իտալերեն թարգմանության մեջ վիմագրի թվագրերը սխալմամբ վերծանվել են՝ «1705»: Արձանագրությունը պատ-մողաբար հրատարակվել է նաև՝ **Աբէլ արքեպիսկոպոս Ատրպատականի**, Ճանապարհորդութիւն ի Դաւրէժ, «Կռունկ հայոց աշխարհին», 1861, Բ տարի, թիվ 8, էջ 635:

Տարընթերցում. Ոսկյանի մոտ՝ «պատիս» բառի փոխարեն՝ «պարսպիս»:

**ԿԸ** Գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշից աջ՝ զարդագոտուց վերև, 5 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է աս|տա-պ(ա)տեցի Պօղոսի | որդի Բաբին, Բունիա|թին,*



*Խաչիկ(ին) եւ մօր | նորայ, թվ(ին) ՌՃԾԳ (1704):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 44:

**ԿԹ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հյուսիսային մեծ խորշում, ստորին մասում՝ 6 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է քարս շամ|բեցի Նաւայ-սա|րթի որդի Մին|ասին, կող(ա)կցին | Վար-դօյին, թվ(ին) Ռ|ՃԾԳ (1704):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 53:

**Հ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշում, ստորին մասում՝ 7 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս շամ|բ(ե)ցի Մարտ(ի)րոսի որդի | Ամլիկին, մօրն՝ | Սառին, կող(ա)կ|ցին Մարիամին, | որդոյն Մարտ|ի-րոսին, թվ(ին) ՌՃԾԳ (1704):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 64:

**ՀԱ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշում, ստորին մասում՝ 4 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս շամբեցի | Մարտիրոսի որդի Կիրա|կոսին, մօրն՝ Սա-ռին, կողակցին՝ | Նուբարին, թվ(ի)ն ՌՃԾԳ (1704):*

Հրատ. առաջին անգամ:

**ՀԲ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշում՝ նախորդից ներքև, ստորին մասում՝ 9 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս | շամ-բ(ե)ցի Միքա|էլին, ծնօղացն՝ | Մարտիրոսին, Սա|ռին, կ(ո)ղ(ա)կցին Անթ|առանին, որդ[ո]յն Յար|ութիւնին, | ...պա|, թվ(ին) ՌՃԾԳ (1704):*

Հրատ. առաջին անգամ:

**ՀԳ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշում, ստորին մասում՝ 6 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խ(ա)չս Խուռու|մի դուստրն Նուբար|ին, կող(ա)կցին Բաղտ(ա)սարին, | դստերն Մա|հփարուն, | թվ(ին) ՌՃԾԳ (1704):*



Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 66:

**ՀԴ** Խաչքար գլխավոր եկեղեցու շքամուտքից հարավ՝ որմնախորշից վերև, ստորին մասում՝ 6 տող.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս | աստայպատեցի Կոս|տանտի որդի Աս{տ}ատ|ուրին եւ կո-ղա(կ)ցուն | Անախաթունին եւ որդի [Վ]ար-դանին, Նաւռուզ|ին, Այտին[ին, թվին] ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 39:

Տարընթերցում. Ուլուհոջյանի մոտ «Նաւռուզ»-ը՝ «Ն...ռ», տարեթիվն էլ՝ «ՌՃԾԳ» (1704):

**ՀԵ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ շքամուտքից աջ (հարավ)՝ անկյունային հատվածում զետեղված կամարակապ որմնախորշից վերև, կիսագլանաձև երիզի մոտ, ստորին մասում՝ 5 տող.

*Ս(ուր)բ խաչս բարէխօս է | աստապ(ա)տցի Ֆրմնէ|նց Գալուստին եւ ծն|օղացն Հէրա-պետին, | Գատրին, թվ(ին) ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 42:

Ծանոթ. հայտնի է, որ վիմագրում հիշվող Հայրապետի որդի պարոն Գալուստը 1706 թ. նույնմբերին Էվազի որդի Հայրա-



պետից մեկ թումանով գնել է հողակտոր «Դարի արտ» տեղամա-սում (**Աբրահամյան Հ.**, Կալվածագրեր, պրակ I, էջ 43):

**ՀԶ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հյուսիսային մեծ խորշի ներքևում, ստորին մասում՝ 7 տող.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է | Պարսամի որդի Խաչա|տրին եւ իւր կողակցին | Խուռումին եւ իւր որ|դոցն Պարսամին եւ Բ(ու)ն|իաթին, թվ(ին) ՌՃԾԴ (1705), | Հեղինին:*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 49-50:

**ՀԷ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշի վերին ձախ անկյունում, ստորին մասում՝ 6 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է Կ(ի)րակո-սին, | որդոցն Յովանիս|ին, մուղտսի {ն}Աւա|-քին եւ կող(ա)կցին Եթ|արին, որդուն Էվա|զին, թվ(ին) ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 64:

**ՀԸ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հյուսիսային մեծ խորշի վերին ձախ հատվածում, կամարի տակ, ստորին մասում՝ 3 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բարէխօս է դա[շտեցի] ...ն...շթն (՞) | [Հ]ապետի որդի Աբրահամին եւ ծնո|ղացն՝ Ոսկուն, թվ(ին) ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 50:

**ՀԹ** Խաչքար գլխավոր եկեղեցու շքամուտքի ձախ կողմում, ստորին մասում՝ 9 տող.

*Ս(ուր)բ խաչս բարէխօ|ս է աստայպա-տեց(ի)| Մատղաշին եւ կող|ակցուն Գարանին, | որդոյն Սարգ|իսին, դուստր | Մարիամին, | եւ եղբորն Միրանին, եւ որդուն՝ | Վարդանին, թվ(ին) ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., “Ricerca sull’architettura Armena”, vol. 22, էջ 37:

Ծանոթ. Գ. Ուլուհոջյանի ընթերցումը թերի է:

**Ձ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հյուսիսային մեծ խորշի վերին աջ հատվածում, կամարի տակ, ստորին մասում՝ 4 տող.

*Ս(ուր)բ խ(ա)չս բ(ա)ր(ե)խ(օ)ս է դ(ա)շ-տ(ե)ցի Մ(ա)րգ(ա)րի[ն], | կ(ո)ղ(ա)կից Խունդամին եւ իւր [որդի] | Ստ(ե)փ(ա)նին, որ է իւր(եա)նց յ(ի)շ(ա)տ(ա)կ, | թվ(ին) ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 51: Նույնի՝ նշվ. հոդվ., UCLA, May 15, 2004, արձ. 7:

**ՉԱ** Խաչքար նույն խորշում, ստորին մասում՝ 6 տող.

*Ս(ուր)բ խաչս բարեխօս է ա|ստապատեցի Քուսա|նէնց Վարդանին եւ | իւր ծնօղացն եւ եղբ|արցն՝ Արզիմանին, Բ(ու)նիաթին | եւ Մէհրապին, թվ(ին) ՌՃԾԴ (1705):*

Հրատ. **Uluhogian G.**, նշվ. աշխ., "Ricerca sull'architettura Armena", vol. 22, էջ 52:

**ՉԲ** Խաչքար գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին՝ հարավային մեծ խորշում, ստորին մասում՝ 10 տող.

